

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ

# ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ

Թարգմանությամբ՝ Մաքսիմ Ոսկանյանի



Հռոմի պապը Գրիգոր Նարեկացուն հռչակեց  
Տիեզերական եկեղեցու վարդապետ

**ՆՈՐ-ԴԱՐ**

Համահայկական հանդես  
2015, N 1-2

# ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ

Թարգմանություն՝ Մաքսիմ Ոսկանյանի



**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏԾՈՒՆ  
ԲԱՆ Ա**

Ա

**Հառաչանքներին**, Հեծեծանքներին ձայները ահա, աղաղակները սրտիս ողբերի, ի վերին երկինք՝ Քեզ եմ ընծայում, գաղտնիքներ՝ Տեսնող: Անձս տոչորող թախծութեան հրի վրա դնելով՝ սասանված մտքիս ըղձանքի պտուղ արդյունքներն ամբողջ՝ կամքիս բուրվառով առաքում եմ Քեզ: Որ Դու Հոռոտես, Հավանես, Գթած, քան պատարագն այն բոլորանվեր, որ մատուցվում է բարդբարդվող ծխով: Ընդունի՛ր, օրհնյալ, կարճառոտ արած հյուսվածքը խոսքիս բարեհաճությունս, ո՛չ թե բարկությունս: Որովհետև որ՝ խոսքս է վեր ելնում իմ զգայության խորերից, ինչպես՝ Քո սուրբ տաճարին խորհրդապատկեր անձիս սենյակից, որ վայրկյան առաջ բանական զոհիս կամավոր ընծան գա՛ ու Հասնի՛ Քեզ, որպես ողջակեզ ճարպի լիությունս, որով դարձել եմ ես պարարտացած: Եվ երբ որ ինձ հետ դատի մեջ մտնես, Հզորդ ամենա, զոհն այս խառնվի իմ աղերսներին, որ չլինի թե անիրավորեն ձեռքերս դեպի երկինք կարկառեմ՝ ամբարշտացած Հակոբի ցեղին վերհիշեցնելով, որի մասին է մարգարեներից Նսային արդար բողոքով խոսում: Եվ իմ վարմունքը չհիշեցնի Քեզ անիրավ բարքերը Բաբելոնի, որ տաղտկալի երևաց աչքիդ, և այդ մասին է յոթնաստուներկուերորդ սաղմոսում ազբը առակի: Այլ թող որ լինի խոսքս բուրավետ խունկ հաճոյական, որ Սելովամի խորանի մեջ էր ելնում տարածվում, այն խորանի, որ՝ վերականգնեց մեծ Դավիթ արքան, ուր հանգրվանեց տապանակն ուխտի, երբ գերությունից դարձվեց կրկին ժողովրդիդ մեջ, որ

նույն առակն է՝ կորսյալ Հոգուս գտնելու մասին, որ ընդունելի՛ լինի Քո՛ կամքով:

Բ

Սակայն քանի որ ձայնիդ շեփորն է մեծ ու ահավոր Քո դատաստանի Հատուցման մասին ուժեղությունս Հնչում վրեժխնդրության ձորի խորքերում, կրկին դրդում ինձ ելնելու ահեղ պատերազմների, և այժմվանից իսկ արդեն տեսնում եմ միմյանց ներհակ շարժվող ուժերն՝ իրենց հուզումով, որ իմ անձի մեջ ի հայտ են բերում խռովությունները ամբոխների, որոնք միմյանց վրա են հասնում գեներ ու սուսերով: Հար խորհուրդների խմբերը այդպես բարիների դեմ ահեղ հարձակվում, և ինձ բռնելով ըստ հին օրենքի՝ գերում են ի մահ, մինչև շնորհդ սուրբ ու գորավոր և ազատարար ինձ կժամաներ. և այս մասին էլ առաքյալներից ընտրյալ Պողոսը օրինակ բերեց Մովսեսին, ապա, բացատրելով, մեզ Քրիստոսի գերազանցության փրկությունն այդպես ցուցանեց Հաղթող: Եվ որովհետև առավել է մոտ Տիրոջ օրն արդեն, որպես որ Գիրն է այդ մասին խոսում, թե պիտի իջնի անձուկ հովտի մեջ, մի տարածություն, որ Հովսափաթի անունով գիտենք, կամ պիտի իջնի Հեղեղատի մեջ Կեղրոնի ձորի, ուր պիտի լինի ժամադրավայր արժանավոր մի փոքր խմբի հետ, որում ամենքն էլ իրենց կենցաղով հավիտյան սպրող հանդերձյալներին են կերպավորում: Եվ ապա, հետո, հավիտենապես իջավ ինձ վրա՝ Արքայությունը Աստծո, որ արդեն Մարմին ստացավ, եկավ գտավ ինձ՝ մեծ վտանգների վնասների մեջ և տոկոսների բեռան տակ կքած, ճշմարտապատում ու բազմապիսի հանդիմանություն իմ վիճակներում, և դատաստանս է ավելի՛ սաստիկ ցուցադրվում ինձ, քան հարվածներն այն, որ եղո-

մացոց և Փղշտացոց նաև այլևայլ բարբարոս ազգաց, Տիրոջ Ձեռքն՝ արդա՛ր մի վերակացու, դատաստան տեսա՛վ պատժապարտելով: Քանի որ նրանց պատժաչափերը ըստ տարիների՝ Հարվածի Հաշվվեց, իսկ պարտքերին դեմ պատուհասները ինձ սպասվելիք՝ վերջ-ավարտ չունեն՛ն և ո՛չ էլ սահման: Միայն ա՛հ և փոս, և որոգայթնե՛ր, որոնցից Հնար չունեն՛մ փախչելու. ըստ մարգարեի և առակողի խոսքերի Հանգուլն՝ մեծ տագնապնդերով եկավ ու ահա դուանս կանգնեց, այստեղից ամո՛թս մշտնջենական գծադրելով: Որից միայն Դո՛ւ կարող ես փրկել և բժշկել ինձ՝ կյանքի դեղերի Քո՛ պտուղներով, Հնարանքներով՝ Հրաշագործող, Դո՛ւ, ամեն բանից վարանող Հոգուն տարակույսներից ու վտանգներից իսպա՛ն ազատող, Քավի՛չդ ամենքի, Դո՛ւ, որ գովված ես անճառ փառքերից, անսահմանելի բարձրություններում. Հավիտյա՛նս Հավեստ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր Հավելված  
նույն իսկ Հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՕՌՆ  
ԲԱՆ Բ**

**Ա**

Ե՛վ արդ, քանի որ բարձրյալն Աստծուն քո Հոգավորված շրթուներով ես աղոթքդ կարդում, որ գործերով է միայն գրավվում և չի կաշառվում բանաստեղծությամբ, երբ սրտիդ աչքը միշտ դեպի ետ է՝ անհավատության Եգիպտոսն ուղղված, ի՛նչ օրինակի նմանեցնեմ քեզ, որ պատկերն իսկ քո՝ դու ինքդ տեսնես, ա՛նձն իմ հանցավոր: Պատժակի՛ցն ես դու մեծ կործանումով ընկած Սողոմին, դատախազին ես նման Նինվեի՛, երբ խոսել է պետք՝ բերանն է փակում, քո վախկոտությունքը նման ես դարձել բարբարոսներին և առավել, քան՝ տիլինն Հարավի, վատթարագույնն ես անգամ Քանանից՞, պիղծ մի ցեղ, որի Հայրը անիվից արդար Նոյ Հորից, ավելի համառ, քան Ամադեկն էր՞, ում մասին ասվեց՝ կոտորի՛ր դրան, որ այդ անուը բնավ չհիշվի, մի քաղաք ես դու, որ բժշկության հենարան չունի, և լի է բազում սարքա՛ծ կուռքերով, հին Իսրայելի ապստամբ գործից մա՛ս ես մնացած, Հիշատակարա՛ն, ուր պահպանվում է ուխ-

տագանցության չարիքն Հուդայի, Մուրից ավելի՛ կշտամբման արժան և առավել, քան տարամերժյալ ես, քան էր՝ Մայադին՞, որ թալանելով սրբավայրերը՝ տարան լցրեցին մեհյաններն իրենց, աններելի, քան՝ Կափառնայում՞, որ աչքով տեսավ, բայց չհավատաց Տիրոջ գործերին: Քորագիլի պես՝ արժան ես միայն պարսավանքների, և նմանվում ես Բեթսայիդայի բամբասողներին, անպարկեշտության մեջ սպիտակած մագերն Եփրեմի՛ ա՛յդ ես հիշեցնում: Աղավին ես, բայց՝ միշտ հիմարության հետևորդելով, ո՛չ խաղաղության, որ կոչո՛ւմն է քո. օ՛ճ ես, մի սև՝ օճ և եղեռային, օ՛ճ, որ առյուծի ձագերից ծնվեց, և հիշեցնում ես քո տեսքով ահա՛ քարբի ձվերին՝ լցված ժանտությունք, ըստ Տէրունական խոսքերի, նաև՝ ձայնի համեմատ տեսանողների՝ Երուսաղեմի վերջին պատկերն ես՝ նախախնամյալ Հարվածների տակ: Ամենքի՛ց մերժված տաղավար ես մի, ում կործանումն է Հասվեհաս արդեն, կրկնակի՛ աղտոտ շինվածք ես խոսուն՝ ապահովության ժառանգությունդ թողած մի կողմի, Աստվածակե՛րտ տուն, բայց մոռացության՝ արդեն մատնված, ըստ այն խոսքի, որ նախագրեցին՝ Մովսեսը, Դավիթը, նաև՝ Երեմիան, բանական շեք մի, ուր բորոտության ախտն է բնակվում. ախտիդ քերվելով՝ դու պիտի միայն խրատն ընդունես, որ առողջություն գտնես օրենքով: Օձյալ կա՛վ ես մի, ում որ հեղուկո՛ւնն է ողորական՝ անճարակ արդեն գտնել Հնարներ կյանքի ելքերի, և Կառուցողի ձեռքով կրկին ես ահա քանդվում ու Հրամանով Հզորի տված, նետվում անսուրբ տեղ՝ իրավացի ու արդա՛ր Հատուցմամբ: Ե՛վ այսպես հերքվա՛ծ, տարագրված մեծ խտրականությամբ, առանց որևէ՛ մի խնայումի՛ Հողի տակ թաղված դրա՛մ ես անպետք, ավանդակորույս ըստ ա՛յն ժխտողի, ում անմիտ վարքը մատնացույց արվեց Ավետարանում:

**Բ**

Սակայն, Դո՛ւ, Աստվա՛ծ, Երկայնամի՛տ ես և բազմաաղո՛րմ, որ Հոգիների Աստվածն ես. նաև՝ ամենա՛յն մարմնի. Աստվածաշնորհ դավանությունդ է իմաստնացնում մեզ այդ Հարցերի մեջ: Ըստ Քո վարվելու սուրբ Հովնանի հետ՝ ե՛կ, ի՛նձ էլ ահա՛ շնորհի՛ր գործել լուկ Քե՛զ հաճելին, ըստ օրհնյա՛լ Կամքիդ՝ այս ողբերգության ու մաղթանքների մատյանին այսօր սկիզբ դնելով: Ե՛վ արցունքով եմ խոսքս սերմանում, որպեսզի

ի վեր չվերուց առաջ՝ պատրաստված լինեմ օթևաններին աստիճաններին, որպեսզի երբ որ հնձի հավաքման ժամանակը գա, ես իմ քաղաքի լիցենզիայի ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը հավաքեմ, և երանուկությամբ ստանամ պտղի բարի խրճերով: Չլինի՞ որ տաս սրտիս այնպիսի՝ անպտուղ արգանդ, որ Խարայի ժողովուրդն առավ, կամ չլինի՞ տաս՝ աչքերիս լինել ցամաք ստինքներ, ո՞վ Ամենագու՞լթ: Լսի՛ր բանական մաղթանք ասողիս, Հզո՛ր-Ողորմա՛ծ. նախքան երկնքին և երկինքն երկրին և սա ցորենին, գինուն և ձեթին և նրանք բուրբուն էլ՝ Խարայի: Երկնավորների աղերսն ուղղված Քեզ ավելի վա՛ղ են իմ հոգուն ազդում, քան թե տարրերին ապականացու: Դու՛ Ստեղծի՛չն իմ, ես՝ կա՛մ Քո ձեռքում, տարակուսածիս առաջ մի ե՛լք բաց, որ մաղթանքներիս հեծուկներն արդ՝ ու հասնեն՝ Քեզ: Թող որ քաղցրությունը կամքով գործանամ այստե՛ղ իսկ՝ երկրում, մինչև որ արդեն իմ առջև բացվի վերնայի՛նն երկնի: Անընտրի՛ր եղա Լույսի կրթության վայելումի մեջ, իբրև մոմի նյութ՝ սպառվեցի՛ ես և ջնջվեցի՛, ելա՛ մեջտեղից: Զրկվածիս ոգի՛ շնորհաձեռնիր, ըստ մաղթանքներն իր գոչմամբ ասողի վարձի համաձայն, ո՛ւժ թալկացածիս, և կյա՛նք մտքերից արդեն մաշվածիս՝ Քո խղճի՛ մտոք և ո՛չ բարկության, և ո՛չ թե միայն՝ իմ տաժանակիր աշխատանքով Քեզ խնդրելուս համար: Վերցրո՛ւ ահա իմ մաղթանքների ավանդները ողջ և փոխարենը՝ ողորմություն տուր Քո շնորհներից: Տկարիցս այս փոքրի՛կը վերցրու և փոխարենը մե՛ծը շնորհի՛ր Հզորի՛դ կամքով: Զորացրո՛ւ իմ մեջ խոսքերս զղջման՝ առաքելով մեզ Հոգիդ բարձունքից, որ պատգամները Քո Աստվածաշունչ դնեմ իմ գրած ա՛յս մաղթանքներում: Բարերարի՛ր ինձ առական Եսայու, որ լուսավորվեմ Քո՛՞ ճշմարտությանը, և մատուցանի՛ր մահու արժանուս ոսկե՛ շնորհներ: Պղնձի նման գոյավիճակիս ու անարգ ձայնիս, անզարգ երկաթիս, սևացած գուլյնիս՝ նո՛ր մի Պղինձ տուր, սակայն թե՛ արդեն գարդանախ զարված, գտված հրերի՛ մեջ Լիբանանի, որ ամփոփում է խորհրդանիշ ցո՛լքն առաքինության:

Գ

Անճա՛ռ Ահավոր, ինչո՞ւ կարծրացնես սիրտը եղկելուս՝ չերկնչել Քեզից: Մշակությունս փոքր է, մի՛ թող, որպես անբերրի հողում սերմանվող՝ իզո՛ւր ջանքերով անպտուղ մնա: Թող

չլինի՛ ինձ՝ երկնել, սակայն ծնունդ չունենալ, ողբա՛լ-չարտասովել, խորհո՛ւրդդ խորհել և չհառաչել, ամպե՛լ-չանձրել, առա՛ջ ընթանալ, սակայն չհասնել, Քե՛զ ձայնել, ձայնդ լսե՛լ չուզենալ, պաղատե՛լ, սակայն, թողնվել անտես, կո՛ւրծք ձեռել, սակայն, ողորմությունից մնալ ձեռնունայն, աղաչե՛լ, սակայն, ոչի՛նչ չհաչել, գոհե՛լ-չծխա՛լ, և Քեզ տեսնե՛ր՝ վ չի՛ մնալ դատար՛կ: Նախապե՛ս լսիր, քանի դեռ աղոթք չեմ կարդացել Քեզ, Դու, որ Հզո՛րն ես, Միա՛յնդ ամենա, ինձ ահա այսպես առանց վճարի՛ մի՛ շտապեցնիր տանջանքի տույժեր, օրերիս թվով մեղքով ապրածիս ու չարագործիս՝ մի՛ շտապիր տալ պատժի հատուցում...

Դ

Կյանք տուր ինձ, Գթա՛ծ, լսի՛ր, Ողորմա՛ծ, Մարդասիրի՛ր ինձ. Ներո՞ղ, Խնայո՞ղ և Երկայնամի՛տ: Պաշտպանի՛ր՝ Ապպե՛ն, Բարերարի՛ր՝ Հզո՛ր, Ազատի՛ր՝ Ամենակա՛լ, Կենսագործի՛ր՝ Նորոգո՞ղ, Վերականգնի՛ր՝ Ահավո՛ր, Լուսավորի՛ր՝ Երկնայի՛ն, Բժշկի՛ր՝ Ամենահա՛մար, Քաղի՛ր՝ Անքննելի՛, Պարգևատրի՛ր՝ Առատաձե՛ռն, Շնորհագարդի՛ր՝ Աննախա՛նձ, Հաշտեցրո՛ւ Անախտակի՛ր, Ընդունի՛ր՝ Անոխակա՛լ, և իմ պարտքերից Ազատի՛ր, Սրբի՛ր՝ Օրհնյա՛լը ամենա: Թե աչքերս հառեմ հայեցվածներին՝ օր թշվառության պիտի հանդիպեմ երկու վտանգի: Քո հայտնությանը է փրկությունը ողջ, հոգածությունը և հույսը լման Քեզից է ծագում: Եվ երբ որ երևեմ ամենագրավ ի վերն ընթացող ուղին սոսկալի, Քո խաղաղության հրեշտա՛կը թող լի քաղցրությանը ինձ դիմավորի: Շնչիս արձակման օրն ինձ ցո՛ւյց տուր, Տէ՛ր, մաքրության ոգով, ուղեկից լույսով՝ երջանիկների մոտ երկնային բարձրանալն իմ թող՝ նախապե՛ս տեսնեմ՝ Միրուդ պարգևով եկած տեղ հասած: Նահատակ եղած Քո արդարներից առանձին մեկին ուղարկիր ինձ մոտ. այդ ընկերության ապահովությանը ժամանեմ երկինք: Հուսահատության ու չար օրվա մեջ շնորհես ինձ, Տէ՛ր, բարի և օրհնյա՛լ անակնկալներ: Քա՛վ լիցի, Քեզ, Տէ՛ր, երբ բարեբանյալ, փրկության Արմատն ես ամենայնի, եթե ախտացյալ ոչխարի՛դ հենց ինձ, դժուրա՛կ գազան դնես ուղեկից: Այլ՝ մեղքերի մեջ արդեն մեռածիս, կամեցի՛ր արդեն միայն անախտ կյանք, և մեծ պարտքերի մեջ կործանվածիս՝ արդեն՝ փրկություն:



Արդյոք ինձ համար պիտի մոռանա՞ս Բարերարելւոյ, ակնկալութիւնս. Գթասիրելւոյ միթե ինձ համար պիտի անտեսե՞ս, բարի՛ ինամող. Մարդասիրելւոյ պիտի փոփոխե՞ս, անփոփոխոյ հավետ. Կենսագործելոյ պիտի դադարե՞ս տաս, Դու՛ անվախճան՝ կյանք. կամ միթե պիտի Ողորմութիւններ անելոյ ինձ համար թողնե՞ս, վա՛յր դնես, Երջանի՛կ Պտուղ. պիտ աղափաղե՞ս Քո քաղցրութեան բարեհնորճ ծաղկի բույրը ինձ համար. պիտի անպատկե՞ս նյութը պանծանքիդ այդքան ճոխութեան. այդքան փառավոր վարսերի տեսքը պիտի փոփոխե՞ս, Բարձրութեանդ մեջ չպահե՞ս պիտի վայելուչ զարդի պայծառութիւնը Քո իսկ պսակի: Ողորմածներինն է թե երանութիւնը, Դու ամբողջովին արքայութիւնն ես՝ լիուլի լցված մեր փափազներով, ո՛չ բոլորին ես պարգև ընծայում փրկութիւնը Քո, չե՞ս մատուցելու դեղ իմ վերքերին, սպեղանիներ չե՞ս տա խոցերիս, տկարութեանս դարման չե՞ս անի, չե՞ս ծագեցնելու Լուսոյ Խավարում և զորութեանդ հուսացողներին՝ չե՞ս կամենալու, որ արժանացնես Կյանքիդ պարգևին Տիեզերական: Որ Միայնդ ունես Փա՛ռք Քո Ինքնութեամբ և հարակա ես մշտնջենապես և վկայված ես Ինքդ Քեզանից, զի Քեզանից դուրս այլ մեկը չկա ու ամեն բան է պարփակվում Քեզնով: Եվ օրհնոյ՜՛ն ես Դու և փառավորոյ՜՛ն երիցս հավիտյան, փառավորոյ՜՛ն ես ավելի՛՛ այն կողմ, քան թե պայմանն է հավիտենական իմացումների սահմանների մեջ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՕՈՒՆ  
ԲԱՆ Գ**

Ա

**Տե՛ր իմ, Տե՛ր Աստված, պարգևներ բաշխող, ինքնաբուն բարի, ամենքին տիրող հավասարապես, անգոյությունից կյանք գոյավորող միա՛կ Արարիչ, փառավորվա՛ծ ես, ահարկո՛ւ, ահե՛ղ, սոսկալի՛, հզո՛ր, նաև խստամբե՛ր և անտանելի՛, անմերձենալի՛, անըմբռնելի՛, անիմանալի՛, անքննելի՛. անճառելի՛ ես, անտեսանելի՛,**

անզննելի՛, անշոշափելի՛, անորոնելի՛, առանց սկզբի և հա՛ր անվախճան: Անմո՛ւթ գիտութիւն, աներկմի՛տ տեսութիւն, էպիանութիւն ճշմարիտ, նաև բարձր և խոնարհ, գոյութիւն անվե՛րջ օրհնաբանելի, անսովե՛ր ծագում, և ամեն կողմից փայլող ճառագայթ, խոստովանվա՛ծ լույս, անտարակուսելի՛ վստահութիւն, անտարտամ հանգիստ, անփոփոխ կնիք, անսահման տեսիլ, վկայվա՛ծ Անուն, ճաշա՛կ քաղցրութեան, Բաժա՛կ բերկրութեան, հոգի հաստող Հա՛ց, Սե՛ր, որ՝ օտար է մթութիւններին, աներկբայելի ու վստահ խոստում, ծածկո՛ւլթ ցանկալի, զգե՛ստ անկապուտ, օթո՛ց բաղձալի և փառքերի զարդ, ձեռք բռնող Դու Մե՛ծ, գովյա՛լ ապավեն, անվա՛զ չնորճ, և դա՛նճ անպակաս, անապա՛կ անձրև, արփիացնցող ցո՛ղ, և Դե՛ղ՝ տեղացող ամեն կողմերից, բժշկութիւնն ես, և սակայն՝ ճրի, և՛ առողջութիւնն Դու կրկնածիք, Վեհագո՛ւյն խրախույս, անպատրա՛նք կոչում, հանո՛ւր ավետիս: Եվ ստրկամեծար Թագավո՛ր ես Դու, և աղքատասեր, Պաշտպա՛նն աղքատի, մշտապես Հարուստ, որ բաշխո՛ւմ է միշտ. Քեզ դիմողների համար անխափան ներկայութիւնն ես, հրամաններդ են աննահանջելի, Հո՛ւյս ես անպակաս, և Տեսողութիւն՝ ժամանակների այն կողմից էլ դուրս: Անզի՛ղջ պարզևող, Ամենաբա՛շխ աջ, Արդարակշի՛ռ ձեռք, Աչք ես՝ ամեն բան անաչառ տեսնող, Մխիթարո՛ղ ձայն և լո՛ւր ամենայն սիրտանքների, Բերկրաբե՛ր Հոգի, Կենդանի՛ Անուն, Մա՛տ նախախնամ, Անգայթակղելի՛ ելք, Անխարդա՛խ ընթացք, Կենդանարա՛ր կամք, Աննե՛նգ խրատող, Աննախանձելի՛, մշտասո՛ւրբ Պատիվ, Լայնական հնարք, Անձկական պայման, Անզտնելի՛ հետք, Աներևո՛ւլթ շափիղ, Անչափազի՛ր պատկեր, և որքանութիւնն Անսահմանութեան, և Քո տեսակով՝ Աննմանելի՛, Անզուգական գուլթ, և Ողորմութեան բազմագե՛ղ հեղում, Խոնարհութիւնն ես տոնելի, նաև Համբո՛ւր փրկարար: Եվ ավելին էլ կարող ենք ասել, քան թե իմ թիված խորապես ազդող հատկանիշները Քո վայելչական, որ Աստվածութեանդ պարգևներն են մեզ. Օրհնվա՛ծ, Գովվա՛ծ և Բարեբանվա՛ծ, Քարոզվա՛ծ, նաև՝ Ավետարանվա՛ծ, Հոչակվա՛ծ, նաև Բա՛րճ հնչեցված, Պատմվա՛ծ, նաև՝ Քո անխաբելի Կամքով աղաչվա՛ծ, և այն, ինչ որ մեզ պարգևներ բերին Հանդերձայնները՝ իրենց ճառերում լուսաբանելով նկարագիրը Քո Բազմաճառագ, այդ Քեզանից էր քաղցրութեամբ հոսում ու հասնում էր մեզ, և որոնցով էլ իմ

փրկութիւնն Ես տեսցրել զվարթ ու երանական, իբրև թե լիներ իմ արժանութեան պարարտութեամբ լի և իմ ախորժի տենչանոք լեցուն, քանի որ ոչ թե փառավորվում Ես մտտիապատվաստ երգիս միջոցով, այլ ա՛յն պատճառով, որ վերցնում Ես աղերսը փոքրիս և Հագեցնում Ես խոսածս խոսքը Մեծիդ փրկութեամբ:

Բ

Եվ որովհետև երկրում եղած բոլոր ազգերին, որ տնկվեցին որպես բանական նման այգիներ, որոնք ամենքն էլ ենթակա դարձան նույն իսկ կրքերի պատահմունքներին՝ որոնց մասին որ հիշատակվում է նոր այս մատյանի ողբաձայն Հնչող նվագների մեջ, այս նույն պատվերն է Հանձնարարական թե նշավակված նույն իսկ վիճակն է յուրաքանչյուրին և որպես Համայն նույն կարիքները Մեծիդ Գիտութեամբ առնելով կցորդ, դրանք բոլորն էլ Հավաք դարձրած ու միագումար՝ ուղղում եմ ահա ողջ տիեզերքի քրիստոնյաներին՝ ինչ լեզվով էլ որ խոսելիս լինեն, նրանց եմ Հղում, ովքեր կյանքի մեջ նոր են ժամանել, և ապա նրանց, ովքեր արբունքի Հասակն են ապրում, և նրանց, ովքեր մահվան օրվանն են սպասում իրենց, անկար ձերութեան մեջ ընկածներին, և նրանց, ովքեր որ պարտքեր ունեն, և՛ արդարներին, բարձրահոններին, որ գոժում են իրենց, սխալվածներին, ովքեր որ իրենց անձերն են դատում, եղեռնագործին և բարիններին, նկուններին և քաղաքիներին, ստրուկներին և՛ իրենց տեղերից վա՛յր ընկածներին, սեպուհներին և գերաշխարհիկներին, միջակներին և պայազատներին, շինականներին և տոհմիկ մարդկանց, թե՛ արուններին և թե՛ էգերին, նրանց, ովքեր որ հրամայո՛ւմ են: Հնագանդներին: Նրանց, ովքեր որ՝ գերի՛ են տանում և՛ գերվածներին, նրանց, ովքեր որ վե՛հ են մարդկանց մեջ, նաև փոքրերին, պատվականներին, ռամիկ մարդկանց, ձիավորներին և Հետիոտներին, քաղաքների մեջ բնակվողներին և նրանց, ովքեր գյուղո՛ւմ են ապրում, և արքաների մեծ գոռոզութեան ահավո՛ր սանձով բռնված մարդկանց. մենակյացներին, որ Վերնային՝ Հետ են խոսակցում, մաքուր կենցաղով բնակվողներին, որ զգա՛ստ են միշտ ու տիրանվեր, քահանաներին՝ երջանակարոն ընտրվածութեամբ, և բարեգեեստ դիտորդներին, որ այցելում գործե՛րն են գնահատում, և գահի ներքո ա՛յն աթոռներին, որ տեսողութեամբ սրբանվե՛ր են ու հավատարի՛մ,

նրանցից ոմանց աղե՛րս-աղաչանք, ոմանց Համար էլ բարի՛ խրատներ՝ իմ աղոթքների այս մատյանո՛վ եմ մատակարարում, որ ձեռնարկեցի Հոգու գորութեամբ, թե՛ ամեն՝ մեկի Համար պիտանի մաղթանքներ կարգեմ, և թող նրանցից յուրաքանչյու՛րն էլ այս խնդրանքներով, Մեծիդ Գիթութեամբ՝ Առջևդ ելնեն ու խոսե՛ն Քեզ Հետ:

Գ

Եվ մատյանը այս ովքեր ընթերցեն, դարձնեն նրանց սրտերով Հատակ, ու բժշկութիո՛ւն տաս Հոգիներին և Հանցանքներից իսպա՛ն մաքրութիւն, և տա՛ս պարտքերին թողութեան պարգև ու արձակումե՛ր մեղքի կապանքից: Եվ թող որ լինի արցունքի բխում՝ սրա՛ միջոցով, սրա միջոցով պարգևվի թող ի՛ղձն ապաշխարութեան: Եվ շնորհի՛ր, Տէ՛ր, ի՛նձ էլ նրանց Հետ մեղքից զղջման կամք, իսկ նրանց Համար ձայնիս միջոցով՝ շո՛ւնչ բարեհամբու՛յր, նրանց խնդրանք ու պաղատանքները իմ այս մատյանով ընծայում եմ Քե՛զ, Հեծութիւնները նրանց Քո առջև՝ խունկի՛ պես լինեն թող ի՛մ խոսքերով. և այն ժամանակ, երբ որ Համբու՛յրով ողբերգութիւնն այս մարդիկ ճաշակեն, Լույսի՛դ Շնորհը մտնի նրանց մեջ ի բնակութիւն: Եվ եթե ելնեն բարեպաշտները իմ այս մատյանով աղոթքի ընծա մատուցելու Քեզ, Հանուն Քեզ եղած նրանց կենդանի Հոգիների Հետ՝ ի՛նձ էլ ընդունիր գթառատութեամբ: Ախտավորների աչքերից եթե սրա միջոցով արդեն սրբութեան արցունքներ կաթնեն, թող որ Քո՛ կամքով, ո՛վ Ոնամակալ, անձրևես դրանք նաև ի՛նձ վրա: Թե իմ գրվածքի կենդանի խոսքով Հաղորդողները փրկութեան Հասնեն, Դու ի՛նձ էլ Հաշվես նրանց Հետ փրկված՝ օրհնյա՛լ Քո Կամքով: Թե խոսքիս ձեռքով ոմանց սրտերի գաղտնարաններից Հեծե՛ծա՛նք դուրս գա, և ընդունելի՛ լինեն Քեզանից ու Դու ողորմե՛ս, ի՛նձ էլ ողորմիր նրանց Հետ մեկտեղ: Թե մաքուր մի ձեռք անուշ խնկարկմամբ վե՛ր բարձրանա Քեզ և իմ խոսքերով նրա աղոթքը լինի լսելի, աղաչանքների այս աղերսներս էլ ընդունիր, Բարձրյա՛լ: Թե բազմապիսի տառապանքներից իմ խոսքով ոմանք ազատում գտնեն, թող ի՛նձ էլ լինի կրկնակի շնորհ: Եվ եթե մեկը անձն իր սրանով Բանի Պատարագ առջև գործի՛ Քեզ ի՛ Հաճութեան, ի՛նձ Հետ միացած թող ընծայի Քեզ: Թե տխրութիւնից ու ճանճրույթից մեկը նվաղի, վերստին առողջ ոտքի՛ կանգնի թող Հառաչանքների այս իմ խոսքերով Հուսա-

լով առ Քեզ: Եթե ամբարտակը վստահության մեղքով խորտակվի, Աջո՛վը արարած այս պատ- նեհներով կառուցվի՝ դարձյալ: Եթե հանցանքի սուսերով հուսի լարը կտրվի, կրկին միանա՝ այս անգամ արդեն՝ Ամենակալիդ գորավոր կամ- քով բարվո՛ք պատվաստված:

Դ

Մահվան ցավերի վտանգով եթե մեկը պա- չարվի, թող որ սրանո՛վ փրկություն գտնի՝ ար- դեն ապրելու հույս ստանալով, և իր աղոթքը արդեն անարգել բարձրացնի Քեզ՝ ապրեցնող Աստված: Թե մեկի սիրտը խոցվի տազնապի տարակուսներով, թող այս մատյանով ողջանա՛ դարձյալ՝ Քո քաղցրության բարեհաճությամբ: Եթե պարտքերն իր արդեն վճարել չկարենալով մեկը գլորվի խորքն անդունդների, փրկության կարթի այս մի հնարով ելնի՝ դեպի լույս՝ Քեզնո՛վ պաշտպանված: Եթե թմրության խավար գործե- րով մեկը վնասվի, կրկին սրանո՛վ թող որ գորա- նա՝ արդեն ապրելով միայն հանո՛ւն Քո, իր ա- պաստանը գտնելով Քո՝ մեջ, Միա՛կը Ապավեն: Եթե պահապանը վստահության որևէ մեկին էքի հեռանա, այս միջնորդությամբ Քո Ձեռքը նրան կրկին ամրացնի՝ նո՛ւյն հաստատությանբ: Թե զգուշություն պահպանողներից մեկը ամայի վայրում դեգերի, թող այս մատյանի՝ ընթերցա- նությանբ սպասի դարձիդ՝ Նորոգող Աստված: Եթե սարսուռը դիպալին ջերմի դողահարուց- ամբ խռովի մեկին, թող որ սթափվի՝ այս նույն նշանով կյանքի մատյանի՝ խոստովանությանբ երկրպագելով Խաչի՛դ Խորհրդին: Թե անօրե- նության խորտակիչ հողմը հանկարծ բարձրանա և բախվի մարդու մարմնի կառույցին՝ երկրային ծովում, թող Քեզ պատկանող այս մատյան դե- կով հանդարտվի՝ դարձյալ:

Ե

Մատյանն այս, Տէ՛ր իմ, դարձնես Կենաց դեղ, և՛ հոգիների, և՛ մարմինների ցավերն հոգա- լու՛ Քո Կամքի՛ Ձեռքով ստեղծածներիդ: Այդ ա- մենն է, որ սահման կարգեցի ողբի մատյանում, սկսելով այն՝ հանո՛ւն Քո, Բարձրյա՛լ: Սկսածս Ի՛նքդ ավարտին հասցնես, և թող Հոգի՛ն Քո խառնվի սրան, Մեծի՛դ գորություն շո՛ւնչը միա- նա՝ Քո շնորհած իմ բանաստեղծության ասելիք- ներին: Որովհետև որ վհատ սրտերին Դու Ի՛նքդ ես տալիս շնորհ գորության՝ ամեն կողմերից ար- ժանիրեն փա՛ռք ընդունելով: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղբերաներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ Դ**

Ա

Եվ քանզի արդեն ես սկսեցի զրուցել Քեզ հետ, Քեզ, որ ձեռքումդ է բազմամեղ հոգուս շունչը կենդանի, հիրավի արդեն սարսուռում եմ ես և տազնապանների ահազնությունից դողահա- րությունմբ երկնում Քո դեմ, որովհետև որ՝ և՛ ա- հավոր է և՛ անտանելի, և Աստծուդ Բանի սահ- մանումից դուրս՝ փախչեն անհնա՛ր: Ո՛ւր պիտի ծլկեմ Քո հիշատակած անաչառ դատի բացված ատյանից, երբ որ Քո՝ կողմից, որ արարել ես եր- կինք ու երկիր, կշտամբանքներ են այնտեղ սպասվում պարտքերիս դիմաց: Չկա՞ այլևս բժշ- կության ինձ որևէ հնար՝ բազում վտանգներ ի- րենց մեջ կրող բոլորք վերքերիցս անողջանալի, որոնք ստացա ժանիքներից այն, ով որ մահաբեր լայն բերան ունի, որ խայթվածքներով ու խած- վածքներով իմ անձն է որսում, և ինձ քարչ տա- լիս կործանումի մեջ: Եվ մանավանդ, որ մեղքե- րիս դիմաց պատասխան չունեմ, ինչպես այդ մասին առակ տվողն է նախօրոք ասել՝ երբ պա- տերազմի օրը վրա դա՞՝ ո՛չ պաշտպանվելու մի միջոց գիտեմ, ո՛չ էլ կարող եմ խոսքով դուրս բե- րել ինձ իրավացի, ո՛չ պատասպարվել վերարկուի տակ, ո՛չ կեղծավորվել դիմակ դնելով, ո՛չ Քեզ հետ խոսել երես առ երես, ո՛չ կերպարանված խաբել երբեք, ո՛չ խոսքս ստել կմկմոցներով, և ո՛չ էլ փախչել՝ հույսս դնելով իմ արագավազ ոտքերի վրա, ո՛չ ետ շուռ գալով թիկունք դարձ- նել, ո՛չ պառկել գետնին որ թե՛ չերևամ, ո՛չ բե- րանովն իմ կառչել ու այդպես հաստատվել հո- ղին, ո՛չ էլ երկիր խորքերը իջնել ու անհետանալ, Քանզի Քո առջև միշտ բաց են ու մերկ՝ որ կան ծածուկում և աներևույթ բաներն առջև՛դ են հրապարակված:

Բ

Արդարությունս է արդեն նվազել և դեռ ավելին, եղած քիչ չափն էլ դարձել է ունայն: Մեղքերս, որոնք չէի էլ հիշում՝ հայտնվել են խմբո՛վ, առավելացել քա՛ն էին առաջ: Մնացա-

կան են չարիքները իմ, ես՝ կորստակա՛ն: Իրավունքներիս նժարն է ահա սաստիկ նվազել, և զորացել է անիրավության նժարը իսկուհւն: Բարի բերքերս են սառուլցի նման հալվել ու ցնդել, իսկ սխալներս կարծրացել են արձանների պես: Ավա՛նդս է կորել և գտնվել է դատակնի՛քս՝ նույն իսկ վայրկյանին: Մահվան մուրհակս է ամրորեն գրվել, և եղծվել է ինձ համար կտակն ավետիաների: Բարերարներս են խոր տխրության մեջ, սակայն բանասրկուն շրջում է իմ դեմ ուրախանալով: Հրեշտակների գունդն է թախժալուռ, և պար է բռնել սատանան իր չար խնդինդուկներով: Վերին գործերն են ողբում ինձ համար, ստոր գործերը բերկրանքի մեջ են, թե՛ հաղթեցին ինձ: Ինձ սպանողի պահէ՛ստն է լցվել, և ով պահում էր իմ գանձարանը՝ կողոպտվել է նա՛: Օտարի կողմը կանգնել է ոտքի, սակայն մշակիս պարզեն է ահա կորստի՛ մատնված: Ինձ հաստատողի ձիրե՛րն են գրվել մոռացության տակ, բայց իմ կորստի խաբեութի՛ւնն է ահա պահպանվել: Իմ Փրկիչ Աստծո երախտիքներն են չարերը հեզնում, և՛ Բելիա՛րն է զլարթացել: Կյանքի աղբյուրն է փակվել իմ առաջ, սակայն դռոզն է շտապ ժամանել ժանգ ու ժանտերով:

Գ

Ավելի լավ չէ՞ր, ինչպես որ Գիրքն է նախօրոք ասել, ո՛չ սաղմնավորվել երբեք արգանդում, ո՛չ ձևավորվել որովայնի մեջ, ո՛չ ծնունդ առնել և լույս աշխարհ գալ, ո՛չ գրվել մարդկանց թվալին կարգում, ո՛չ հասակ առնել՝ աճել-մեծանալ, և ո՛չ գեղեցիկ դեմքով զարդարվել, ո՛չ էլ հագնվել խոսքի հանդերձանք, քան թե այսպիսի՛ պարտքեր ունենայ, որ սաստկաբույն ու սարսափելի են ըմբռնելն անգամ, որոնք ժայռե՛րն էլ իրենց կարծրությամբ չեն կարող տանել, էլ ու՞ր մնաց թե տկար ու փափուկ մարմինը մարդու, որ օրից մի օր լուծվում է հողին:

Դ

Եվ արդ, Բարեգո՛ւթ, աղաչո՛ւմ եմ Քեզ, տո՛ւր ողորմություն, որ այս ամենին որպես դեղատոմս Քո խոսքերով մեզ ա՛յս սահմանեցիր. «Մատուցե՛ք, հանձնե՛ք ձեր անձերն Աստծուն որպես նվերներ՝ հանուն այն բանի, որ փրկո՛ւմ է ձեզ, և սրբե՛ր եղեք, որովհետև ես ողորմություն եմ կամենում ո՛չ թե զոհաբերություն»: Ահա բարձրացիր վերստին խնկյալ այս հիշատակով, Դո՛ւ որ ամենայն ունես Քո ձեռքում և ա-

մենայն իսկ ծագում է Քեզից և ամենայնից Քեզ փա՛ռք ու պատի՛վ հավիտենաբար: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերաներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ Ե**

Ա

Եվ ես, որ ահա մարդ եմ երկրածին, անկաշուն գոյիս կենցաղով տարված, և պատրող գիտուց թմբել եմ ահա՛ հիմարութի՛ւնս արտահայտելով, որ ամեն բանի մեջ եմ ստախոս ու ճշմարիտ չե՛մ և ո՛չ մի բանում, քանի որ վերում իմ գրածների ո՞ր մեկի համար, դրանցից որի՞ աղարտ նշանով պիտի հանդգնեմ կանգնել առջևը Քո Դատաստանին, ո՛վ Իրավաբան, Ահալո՛ր, Անճա՛ռ, Անպատո՛ւմ, Հզո՛ր, Աստված բուրբի, քանի որ այստեղ ապերախտության մեղքերն են անձիս, որոնք գործեցի՛ երախտիքները Քո ուրանալով: Այս մատյանով ես Իրավունքներդ ի ցույց դրեցի, որոնք ավելի՛ են զորավորվում իմ խոնարհվելով, և հավիտյան Քեզ պարտավորվածիս անիրավությունը ամոթալի խոստովանեցի՛:

Բ

Որ արարեցիր ինձ Քո պանծալի պատկերի հանդուհյն, Վեհի՛ր ձեռքով ինձ օժանդակելով Քո նմանության տալավորությամբ. զարդարեցիր ինձ խոսքիդ պարզևուր, պայծառացնելով փշմամբ Քո Հոգու, ճոխացրի՛ր ինձ մտածողությամբ և աճեցրի՛ր կենսասիրության Քո՛ իմաստությամբ, հաստատեցի՛ր ինձ՝ հանճարով իշխան շնչավորների կարգին դնելով, Հոգով իմանալն ինձ հետ խառնեցիր և պճնեցի՛ր ինձ լինելու տիրո՞ղ, ծնեցի՛ր ինչպես հայրն իր գավակին և սնուցեցի՛ր դայակի՛ նման, և ամբարիշտիս ապա տնկեցիր Քո գավիթի մեջ, ոռոգելով ինձ կենացդ ջրով, ցողո՞վ մաքրեցիր սուրբ Ավագանիդ, արմատացնելով վտակով կյանքի և ջամբեցիր ինձ երկնային հաց, ինձ արբեցնելով Քո Աստվածային սրբազան արյամբ: Ընտանի արիւր նրանց մեջ, ովքեր՛ անհպելի՛ են, անհասանելի՛, համարձակություն

ընձեռեցիր, որ՝ աչքերս երկրեղեն նայեն դեպի Քեզ, վերածածկեցիր փառքիդ լույսերով, որ իմ անմաքուր ձեռքերով, հողից սարքած մատներով՝ Քեզ մատուցանեմ ծառայություններ: Անարգ մոխիրիս և մահացուիս, իբրև մի լույսի նշույլ՝ հարգեցիր: Եվ Քո Հորն Հզո՞ր, Ահա՛վո՞ր, Օրհնյա՛լ, անարժան անձիս մարդասիրտըն չա՛յր Կնիքեցիր:

Գ

Եվ չկիզեցիր՝ նանրությամբ լցված իմ բերանը, երբ՝ ինձ ժառանգակից ընդունեցի Քեզ, հանդգնությունս չկտամբեցիր, երբ ինձ Մեծիդ հետ տեսա կցորդված, չստվերացրի՞ր աչքերս, երբ որ ակնկալեցի աչքերիդ նայել, չչղթայեցիր՝ մահապարտության դատված իմքի հետ՝ անձս մատնելով տարագրության, ո՛չ խորտակեցիր դատակը բազկիս, որ անմաքրապես երևում էր դեպ Քեզ, ո՛չ էլ մատներս ջարդուխորդ արի՞ր Քո Կենաց Բանը երբ շոչափեցի: Ո՛չ մառախուղներ պատեցին իմ շուրջ, երբ ահավորիդ խոսք էի ձոնում, ո՛չ փշրտեցիր ատամնաշարս՝ Քեզ ըմբոշխնելիս, և ո՛չ բարկությամբ հակառակեցիր հակառակությամբ Քեզ հետևողիս, բան, որ շարունակ կատարում էիր շեղընթաց բայլող Իսրայելի հետ: Խայտառակ չարի՞ր հարսնարանիդ մեջ՝ Քեզ անարժան իմ պարերգությունը նայել տեսնելով, ո՛չ իմ հանդերձի անպիտան տեսքով անօրինվածիս հանդիմանեցիր, ո՛չ էլ իմ ոտք ու ձեռքը կապելով՝ դուրս նետեցիր ինձ խավա՛րն արտաքին:

Դ

Բարերա՛ր, Օրհնյա՛լ ամենքի հանդեպ՝ և Համբերատա՛ր, միշտ Հեռո՛ւն Դիտող, Քո բարությունից ինձ պարզև տրված մատուցները այս, նաև ներելու հեռուն դիտումը, որ՝ առա՛ Քեզնից, ո՛ղջը փոխեցի իմ վնասակար, անթի՛վ պարտքերով և բազմօրինակ անօրինությամբ թե՛ մարմնական և թե՛ հոգևոր, թե՛ վնասակար իմ խորհուրդների պեկոծությամբ, թե՛ երկարաբարչ հուզումների հետ: Ա՛յս ամենով Քեզ, Աստվա՛ծ իմ և Տէ՛ր, Բարիքիդ այդքա՛ն պարզե՛ի փոխան իմ չարիքներո՛վ փոխհատուցեցի: Ըստ Մովսեսական հանդիմանության առակի հանգույն՝ իմաստությունս մոռացման տված՝ հիմարությա՛նը դարձա սիրահար: Ես, որ Աստվա՛ծ իմ, պիտի լինեի երախտիքների բարի մի կաճա՞ռ ընդունայնությա՛ն ճամփով գնացի,

և ինչ տվեցիր՝ ո՛ղջը վատնեցի չարաչար վարքով: Անեղբայելի լուսավորության շնորհները Քո, որ Բարձրալիդ խնամքով վրաս էր ավելանում՝ խելագարությա՛ն ահեղ փոթորկով՝ ո՛ղջը ցնդեցրի:

Ե

Եվ թեպետ բազում-բազո՞ւմ անգամներ, Ձեռքդ երկարեցիր, որ ինձ կենդանի՛ Քո այցելությամբ ձգես դեպի Քեզ, ո՛ւշք չդրեցի Իսրայելի պես, և այդ մասին է մարդարեն պատմում՝ դատելով վարքն այդ խստասրտության: Թեպետ խոստացա հաշտվել Քեզ հետ, Քեզ հաճո կյանքով այլևս ապրելու, բայց կապած ուխտիս չեղա՛ հետևողդ, այլ դառնալով ետ՝ Հի՛ն չարիքներս սկսեցի նյութել: Տվածդ առաջին Բարիքը այդպես բարձիթող արած, ես դաշտավայրը սրտիս հերկեցի՝ մեղքերի փշե՛ր այնտեղ ցանելով, որպեսզի որո՞մ արդյունահանեմ: Ի՛նձ են հարմարվում առաձնները սուրբ մարդարենների, քանի որ ինձնից արդա՛ր խաղողի բերք սպասեցիր, բայց ես իմ այգում շառավիղեցի անպիտան՝ փշեր: Այդիս Քո կյանքից օտարանալով, անախո՛րժ հոտով՝ դառնությա՛ն պտուղ տվեց Քո առաջ: Ինձ ուժգին ցնցե՛ց և հողմն անհաստատ, որով անընդհատ տարուբերվո՞ւմ եմ այս ու այն կողմի: Հոք Երանելու խոսքի համաձայն՝ մի ճանապարհով ելա գնացի, որտեղից արդեն էլ ետդա՛րձ չկա: Իմ հիմարությամբ՝ ավազի՛ վրա տուն կառուցեցի: Եվ լա՛յն հետքերով խաբվեցի գնալ՝ փրկության Վեմիդ նեղ արահետով հասնելու տեղակ: Փակեցի՞ իմ դեմ ելքերը կյանքի, և հե՛նց, ի՛մ կամքով՝ կորստյան տանող խորխորատների՛ դռներով մտա: Իմ ականջների պատուհանները խցկեցի՛ ամուր, որ Կյանքի՛ խոսքդ ընդունելություն չգտնե՛ր իմ մեջ: Հոգուս դեպի Քեզ հայեցվածության աչքը գոցեցի՛, որպեսզի Կյանքի դեղն իմ չտեսնեմ: Պատգամի ձայնից ահավոր փողի չցնցվեցի՛, քանի որ թմրած իմ միտքն ինձ լքե՛ց: Ո՛չ զգաստացա հրափորձարան օրվա մեծ Դատի բողոքող գուժից, և ո՛չ արթնացա նիրհի կապանքից մահաբեր քնի, որ տպավորիչ կորստի գնալն էր նախաձայնում: Ո՛չ հանգիստ տվի Հոգուդ՝ մարմնեղեն իմ տաղավարում, և ո՛չ բնական շնչիս խառնեցի Քո պարզեղենից շնորհի մի մաս: Եվ իմ կորուստն իմ ձեռքո՞վ բերեցի, ըստ առակողի խոսքի համաձայն՝ կենդանի հոգիս՝ մահվան մատնելով:

Եվ ի՞նչ օգուտ ինձ այս կսկծալի բանաստեղծութեան չափաբերական սահմանների մեջ նվազագույնն ու սակավը հողել, երբ որ մեղքերիս քանակն անցել է չա՛փ ու սահմանից և բժշկո՛ւմս է դարձել անհնար: Արդ՝ Քե՛զ է մնում հոգով մեռելիս նո՛ր կյանք պարգևել և անոխակալ մատներովդ հպվե՛լ դատապարտյալիս, Կենդանի՛ Աստծո Միածին Որդի, Քեզ է վայել Փա՛ռքն Հավիտյա՛նս Հավետ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՅ ԽՈՍՔ  
ՈՒՂ ՂՎԱԾ ԱՍՏԾՈՒՆ  
ՔԱՆ Զ**

Ա

Եվ արդ, մեղքերից ի՞նչ բարի բան կա և կամ սրանից ո՞րն է օգուտն իմ, երբ իմ Հեծության ձայնից վհատվե՛մ ու հուսալքվե՛մ՝ ախտաժետությո՛ւմս լուկ թվարկելով, այլ օգուտ է, երբ մահացու վերքիս շարափն ամբարված՝ խոսքիս խարանով դո՛ւրս հանեմ իսպառ, մերժելով՝ դժբանք, կամ ծանրությունն այս՝ հոգեկան խիթի բազո՛ւմ ցավերով, որ մթերել եմ սրտիս տարածքում, իբրև շարունակ ինձ տաղտկացնող զզվանքի դրդում՝ մատնամուխ արած՝ դո՛ւրս փսխեմ ինձնից:

Բ

Քանզի արժանի չգտա՛ ինքս ինձ սրբերի դասի մեջ գտնվելուն, որ փառավոր ես, նաև պանծալի՛, նրանց բերանը լի՛ է ծիծաղով, իսկ շրթունքներն են սուրբ ցնծութեան մեջ: Երբ հերթն հասավ ինձ, ըստ առակողի և Սաղմոսողի տված խորհրդի՝ դիմեցի արդեն այս երկրորդ կարգին, որ հիշատակեմ այս իմ մատյանում՝ բոլոր նրանց, որ՝ նմանվում են ինձ, թեպետև նրանց թերությունները իմի համեմատ՝ առավել ևս են բարի կամքի մեջ, և նրանք նույնպես հայտնի են իրենց հաղթանակներով, և տարբերվում են ինձնից, ինչպես որ՝ ապաշխարողը չապաշխարողից: Հաղթանակ տոնեց նաև Սանասեն. նրա մեղքերը թե համեմատենք իմ պարտքերի հետ, իմոնք առավել՝ ծանր են կշիռով: Պա-

տիվ ստացավ և փարիսեցի՛ն, թե նրա մեղքը համեմատենք իմ ամբարիշտ բարքին, որ դժնե՛ս գործեց: Եվ գովվե՛ց անգամ անառակ որդին, թե համեմատենք նրա դարձը իմ ուխտագանցութեան գնացքների հետ. հիշատակելի ու առավել է և Ամասիայի կեղծավոր որդին, թե համեմատենք շնորհներ դրժող ապախտավորի՛ս: Եվ համեմատ ինձ՝ օրհնաբանված է ավագին անգամ, որ դատախա՛զն է անհավատների, և պոռնի՛կ կինն էլ պատիվ ստացավ, դառնալով արդեն սկզբնամայրը ապաշխարողաց:

Գ

Ես փարավոնից ո՛չ պակաս սիրտն իմ խտացրեցի. ավելի՛ն էին իմ հուզումները՝ դարձիս հակառակ, քան եբրայական խուժանի դրած կատաղությունը ամենքին հայտնի, որ բարձրացրեց Արարչիդ ընդդեմ: Աստվածամարտներից պակաս չէի՛ ես և ո՛չ էլ բնավ խորշանք զգացի, երբ Ստեղծողիդ նրանց հանդեսում ի՛նքս էլ ուրացա, ըստ օրինակի խռովված ծովի՝ մրրիկների հետ ի՛նքս էլ ծփացի: Ո՛չ պատշաճ չափի սարսեցի և ո՛չ էլ պատկառեցի՛ խստութեամբ տրված Քո հրամանից, երբ ալիքները կամբղ պահելով՝ ծովի եզրերից չե՛ն գնում հեռու: Գործած մեղքերիս թիվ ու կշիռը չափելու համար կշռաչափ են և կույտե՛րն ավազի, սակայն դրանք էլ անբավ շեղջերով՝ ավելի՛ պակաս թվով դուրս եկան, քան այն անօրեն գործերը, որոնք ի՛նքս գործեցի:

Դ

Թեպետ բազում են ու անհաշվելի ծովի փերին համահավաքված ավազները ողջ, բայց նրանք ուրո՛ւյն են, առանձնակի՛, գո՛ւրկ են ծննդյան աճելությունից: Իսկ իմ մեղքերն ու հանցանքներն ամեն՝ անթի՛վ են այնքան, որ անհնար է մտքի մեջ պահել. մե՛կն իր ծնունդով, և մեկ ուրիշն իր շառավիղներով, մե՛կն իր բծերով, և մեկ ուրիշը՝ իր արկածներով, մե՛կն իր փշերով, և մեկ ուրիշը՝ իր արմատներով, մե՛կն իր կազմութեամբ, և մեկ ուրիշը՝ իր պտուղներով, մե՛կն իր նշխարով, և մեկ ուրիշը՝ իր պարզած ճյուղերով, մե՛կն իր ոստերով, և մեկ ուրիշը՝ իր ընձյուղներով, մե՛կն իր ճիրանով, և մեկ ուրիշը՝ իր սուր մատներով, մե՛կն իր խլրտմամբ, և մեկ ուրիշը՝ իր գորությունով, մե՛կն իր ազդումով, և մեկ ուրիշը՝ իր օրինակով, մե՛կն իր կերպարով, և մեկ ուրիշն՝ իր մնացորդներով, մե՛կն իր ստվերով, և մեկ ուրիշն՝ իր մթություններով, մե՛կն իր

Հարձակմամբ, և մեկ ուրիշը՝ իր Հնարներով, մե՛կն իր պատրանքով, և մեկ ուրիշն իր դիտավորութեամբ, մե՛կն իր դիմելով, և մեկ ուրիշն իր չափ ու կշիռով, մե՛կը իր խորքով, և մեկ ուրիշն իր բարոյութիւններով, մե՛կն իր շանթերով, և մեկ ուրիշն իր ելման կրքերով, մե՛կն իր մթերքով, և մեկ ուրիշը՝ իր մեծ գանձերով, մե՛կն իր ցնցուղով, և մեկ ուրիշը՝ իր աղբյուրներով, մե՛կն իր գետերով, և մեկ ուրիշը՝ իր կայծակներով, մե՛կն իր տարածած հրդեհումներով, և մեկ ուրիշն իր մեծ ամոթներով, մե՛կն իր վիհերով, և մեկ ուրիշը՝ իր անդունդներով, մե՛կն իր բորբոքմամբ, և մեկ ուրիշն իր աղջամուղջներով, մե՛կն իր ամպոտով, և մեկ ուրիշը՝ իր կայլակներով, մե՛կն՝ Հոսումներով, և մեկ ուրիշը՝ իր հեղեղներով, մե՛կն իր ունեցած սառնամանիքով, և մեկ ուրիշը՝ իր փակ դռներով, մե՛կն իր շափիղով, և մեկ ուրիշը՝ իր ճամփաներով. Հնոցն իր տապով, եռացող ջուրն իր գորշիւններով, Հայոցն իր ճարպով, ճենձերումներով, և օշինդրն է՛լ իր խիստ դառնութեամբ, կործանողը իր Հնազանդներով, բռնավորը իր ելուզակներով, գոռոզացածն իր սպառագեներով, ավազակապետն իր գումարտակներով, ամեհի առլուծն իր կորյուններով, խածնողն՝ Հասցրած ծակոտվածքներով, ապակահնադործն իր նմաներով:

Ե

Գլխավորները սրանք են ահա, իրե՛նց դասերով, իրե՛նց մասերով, որ ապականո՛ւմ ու փշացնո՛ւմ են Հոգիներն Համայն, և յուրաքանչ-յուրն իր կազմում ունի բյուր Հագարավոր տարատեսակներ, իսկ ամբողջ թիվը Նա՛ գիտի միայն, Ով որ տեսնում է հուլթյունները բոլոր գործերի, անգամ ամենն այն, որոնք մեր կողմից չեղյալ ենք կարծում: Եվ, արդ, եթե ոք անձն իր չխաբի՛ ու չձևանա՛, չկեղծավորվի՛ անհավատութեամբ, և ինքը իրեն ճանաչի որպէս մահկանացու՛ մարդ, և Հասարակաց բնութեամբ ապրի ու՝ երկրածին՝ դիտի ինքն իրեն, և իր չափի մեջ ապրի կանոնով, պատշաճութեամբ մեջ, ճանաչողութեամբ կիմանա՛ բոլոր արկածներն այն, որ վերում գրեցինք, և ոչինչ չկա նրանցում հիշված, որ լինի ունայն, և ամեն բան չէ, որոնց իսկութիւնն ի Հայտ արեցի, որ մեր մարդկային բնութեան մեջ է ազգեազգ անցնում և գալարվում է ու պտույտ տալիս վրիպումների այդ լեգեոններով: Ես Հագարավոր չար պտուղներից միայն որո՛չ չափ ի ցույց հանեցի, որպէսզի

սրանց և սրանց նման այլ Հանցանքների ձե՛ր ճանաչումով՝ իմաստասիրե՛ք, թեկուզև դեռ ո՛չ լիարժեքորեն:



**Հեծեծանքների մի նոր Հավելված**  
**Նուէն իսկ Հսկողից, նուէն աղերս-**  
**Ներով և մաղթանքների խոսքով**  
**միջնորդած**

**ՄՄՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ**  
**ՈՒՂ ՂՎԱԾ ԱՍՄՍՈՒՆ**  
**ԲԱՆ Է**

Ա

Որպէսզի Հանկարծ ինքս իմ փրկութեան վստահութիւնը իսպա՛ռ չկտրեմ՝ Հոգիս պահպանող գեներս դնելով, որ չլինի՛ թե իմ անձը մատնեմ իր անբերույթ բանակն ունեցող ընդդիմամարտին, որը այլ բան չէ, քան թե թշնամի մի պի՛ղծ ընտանիք, որ ինքնածին է իր ծագմամբ բուսել, ում դիմագիծը վերևում գրված գլուխների մեջ մենք սահմանեցինք, թե որքա՛ն բազում ձև ու կերպ առած՝ ահարկուն են նուէն. սակայն ես այստեղ նրանց բռնութեան բազմազարանոց ձևերի վրա, պիտի ցույց տամ և նրանց վայր գետնող խոյոյաններին՝ և ամենահա՛ղթ և անպարտելի՛ Բանակը վերին. թեպէտ կսկիծ ու ցավ է մեզ Համար, երբ ծառի պտուղն է անհասանելի կամ դժվար քաղվող, և ճանապարհն այն, ուր չի կպել ոտք, տաժանելի է դրանով քայլել, բայց բանասրկուի չարութեան գորք ու գնդերի վրա, աչքերից իջած մի՛ քանի կաթիլ արցունքն էլ բա՛վ է՝ նրանք խորտակվեն, կամ ինչպէս ասենք ճիճո՛ւ ու գեռուն բազմատոտանի, որ խլրտում են տկար Հողի մեջ, և նրանց վրա թե ձե՛թ է ծորում և կամ փոքր-ինչ դեղ սատակեցնող՝ նրանք ցամաքո՛ւմ են, ոչնչանո՛ւմ: Եվ կամ փոքր մի Հառաչանք Հոգու, որ երևում է վեր սրտի Հեծութեամբ, և իբրև ջերմ շունչը Հարավային՝ արևին խառնված, սառնամանիքներն է սաստկութեամբ Հայում. որովհետև որ՝ բոլոր մեղքերը մեկ նմանութեամբ հեշտածին են, բայց, դիմադրութեան այն մյուս կողմից՝ դյուրամե՛ռ են միշտ:

Բ

Սակայն ես երբե՛ք չդադարեցրի ինքըս ինձ դատել, ցավեցնող խոսքի քարեր նետելով դատապարտոյալիս, պարտավորիս, որ՝ վնասակա՛ր է, անհամոզելի՛, փրկութիւններից զո՛ւրկ, և թեպէտ

բերած վերն օրինակով՝ մեղքի մեջ գցող իմ նեղիչներից ոմանց սատակման տվեցի իսպառ, սակայն ոմանց էլ՝ հոգիս կորստյան մատնելու համար՝ հենց ինքս իմ ձեռքով գորուծելուն տվի, որ կենդանանան: Տո՛ւնկ եմ դառնաոտս, տունկ, որ ծաղկեցի գարշուծյան բերած անառակ վարքից, խաղողի ո՛րթ եմ ապականաբեր, և մահ ներկրող իմ ողկույզներով հենց ինքս ինձ համար՝ երկնեցի ահա կորստյան գինին, և ըստ այդմ էլ, մեծ Դանիելի խոսքի համաձայն՝ Քանանի գավաին եմ ապականացու և ո՛չ թե որդին Հուդայի ցեղի, ահա դարձել եմ գեհենի՝ որդի, ո՛չ արքայուծյան, ժառանգ դժոխքի, և ո՛չ փառքերի, որ փափագվում են սրբերի կողմից, նյո՛ւթ եմ տանջանքի և ո՛չ հանգստյան: Երախտավորիդ առջև գտնվող՝ ապերախտ եմ մի, ապաշնորհ էլ մնացի այսպես, երբ պարզենե՞րդ են լի ու բազմաթիվ, և ահա մի՛շտ եմ ես մեղավորված՝ հեռատեսորեն Համբերողիդ դեմ: Վեհ Բարերարիդ քաղցրուծյան հանդեպ մա՛րդ եմ դառնացնող, ըստ Տէրունական հանդիմանության՝ ծառաս՝ չա՛ր և վա՛տ՝ և ըստ Եսայու նախասացության՝ իմաստուն եմ ես՝ չա՛ր գործելու մեջ: Դարձել եմ աշխու՛յժ ժանտագործության զազի՛րն անելուն, և փութաջա՛ն եմ ամեն մի բանում, որոնք Տէր Աստծուն բարկացնում են խիստ, միշտ ժիր ու շարժուն՝ սատանայական դյուռ գտնելու մեջ՝ հանապազորդյան Մշակիդ անվերջ պատճառելով վիրտ: Ես թո՛ւյլ եմ՝ բարի թուխքիդ համար, և ծո՛ւյլ, որ հասնեմ՝ Քո ընտանուծյան երանիներին արժանանալուն: Ինչ խոստացել եմ՝ դանդաղեցնո՛ւմ եմ դրանք կատարել: Մարդ եմ անարի՛՝ երբ անհրաժեշտ է ինձ օգտակարն ու պիտանին գործել: Ե՛ս՝ Տիրադրո՛ւժ պաշտոնյա եմ մի և երախտամո՛ռ:

Գ

Վա՛յ է մեղավոր իմ հոգու համար, որովհետև որ բարկացրեցի՝ Տիրոջ՝ Արարչին, և վա՛յ է ահա կորստյան որդուս, որովհետև որ կենդանի՛ պահող ձիրքը մոռացա. վա՛յ պարտապանիս, որովհետև որ պա՛րտք եմ անհամար Քո քանքարներին, որոնք չեմ կարող երբեք հատուցել... Դժնի մեղքերի ծանրության ներքո մինչ գետին կքած բեռնակրիս՝ վա՛յ, որովհետև որ հանգստարանը դարձի միտք չունե՛մ. Տէրունի պարտքում վնասարարիս՝ վա՛յ է ճշմարիտ, որ ոչնչությո՛ւն դուրս եկա այսպես՝ Հզորիդ առջև: Եղեգնախու՛րվ, դյուրավառ նյութիս եռակի՛ է

վայ, որ պիտ այրվե՛մ գեհենի բոցում, և վա՛յ ինձ նաև այն բանի համար, որ լավ հիշում եմ՝ Աստծո բարկության նետերը այրող ու չե՛մ խրատվում: Հիմարությանս վա՛յ է իսկապես, որ մտի չառա, թե ինչ ծածուկում, որ կատարվում են ի հա՛յտ պիտի գան ի տես ամենքի. վա՛յ ամբարիշտիս, որ չարիքների ոստայն հյուսեցի մի՛շտ ու անդադար: Վա՛յ, որ մարմինն եմ իմ պարարտացնում՝ անմահ որդերին որպես կերակուր, և ինչպե՛ս պիտի ինքս համբերեմ և կամ դիմանամ կտտողացն այդ, որոնք բացի որ քրքրո՛ւմ են քեզ՝ թունավորո՛ւմ են գուգընթաց նաև: Վա՛յ է, երբ արբեմ մահվան բաժակով, ինչպե՛ս պիտի ես հավիտենական այդ տու՛յժով տուժեմ. վա՛յ, այն ժամանակ անարժան հոգուս, երբ որ եղկելի մարմնիցս ելնի, ինչպե՛ս պիտ կանգնեմ Դատավորիդ դեմ հանդիմանվելու: Վա՛յ է ինձ նաև, որ իմ լապտերի յուղն է նվազել, որովհետև որ, եթե սպառվի, չունե՛մ այլևս պահուստ պահած յուղ. և վայս ավելի սաստիկ պիտ լինի, երբ որ սկսվի ա՛հը տազնապի ու հապճեպության՝ այն պահին, երբ որ մուտքն առաջաստի փակվի՛ իմ առաջ: Վա՛յ է ինձ համար, որ պիտի լսեմ Ձայնն այն որպես ինձ ահավորություն, որ ամեն բանից դողդողացնող է և սարսափելի, Երկնավոր Արքայի վճռով կնքված. «քեզ չե՛մ ճանաչում»:



**Հեծեճանքների մի նոր հավելված**  
**Նույն իսկ հակողից, նույն աղերասներով և մաղթանքների խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍԻՔ**  
**ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ**  
**ԲԱՆ Ը**

Ա

Ե՛վ այժմ՝ ահա, ի՛նչ պիտի անես, ա՛նձն իմ կորուսյալ, կամ ո՛ւր թաքնվես, կամ ինչպե՛ս ապրես, կամ ինչպե՛ս պիտի մեղքերիդ բանտից այժմ ելնես դուրս, որովհետև որ՝ պարտքե՛րդ են բազում, հատուցումներդ՝ անթի՛վ անհամար, կշտամբանքներդ սաստիկ ու ճնշող, նախատինքներդ՝ անվախճանակա՛ն, հրեշտակներն են անողո՛րմ կանգնել, և դատավո՛րն է այստեղ անկաչառ, Ատյա՛նն է Հզոր, և բեմն՝ անաչա՛ռ, սպառնալիքներն են քրստըմնելի՛, հատուցումներում չե՛ս գտնի դուզդ-ինչ ողորմածություն, Հրամանն այստեղ՝ ահարկո՛ւ է և անբեկանելի՛,



Հանդիմանությունը՝ մերկապարանոց, գետերի միջով կրահ է հոսում, և վտակներն են անանցանելի՛, խի՛տ է խավարը, իսկ մառախուղը անթափանցելի՛, գուբը լեցուն է ապականությամբ, և տագնապները վերջ չունեն այստեղ, և տարտարոսը ամենայն ի՛նչ է կյանում իր մեջ, սառնամանիքին չկա՛ թուլացում: Եվ արբ, արդարև դառնություններն այս քե՛զ են սպասում իրենց ահարկու պատուհասներով՝ օթևաններում, որ դժնդակ են և տաժանելի՛: Ով դու անարժան անձն իմ մեղավոր, չարագործ, պոռնի՛կ, մեղքի բազմաթիվ բծերով ծածկված և անմաքրության լեցուն անդաստան: Ահա ձեռքերիդ գործած գործերի արդյունքներն են դու այսօր ժառանգում, ով շեղընթաց ուղիղ ճամփեքում և մաքրությունից խայտառակորեն՝ հեռացած հոգիդ, տարագրյալը՝ արդարությունից և քրտորյալը՝ կարգերից պարկեշտ, ունայնացածը՝ լի հոգեպարզ և բոլոր գանձերից, և նախանձարկու՜ղ քեզ բարերարող ամենայնի Տէ՛ր ու Թագավորի՛ն:

Բ

Եվ քանզի ահա կառուցեցիր քեզ մի արգելարան՝, որը ե՛լք չունի, և մի որոգա՛յթ, որից չե՛ս կարող երբեք փախչել՝ խոստովանելով, թե քո վերքերին առողջանալու արդեն ճա՛ր չկա, և անօրինակ քո հարվածներով, թե՛ անձե՛ք է արդեն մահվան պարտական, և բեկում չկա՛ բժշկմանը համար, չարըդ չի՛ կարող ամբովել բարուց. ո՛վ դու, դառնություն՝ քաղցրության մեջ, լուսազարմերի շարքում՝ ո՛վ խավար, պճնվածների մեջ՝ զարդից կողոպտված, գովվածների մեջ՝ պախարակելի՛, ո՛վ ամբարիշտը՝ բարեպաշտներից, բանականների մեջ՝ շնչավոր միայն, ո՛վ դու, անմի՛տդ՝ մտավոր մարդկանց խելացի դասում, իմաստունների մեջ՝ հանճար չունեցող, ընտրյալների մեջ՝ մեկն են անմաքո՛ւր, կենդանիների մեջ՝ արդեն մահացող, ո՛վ դու, որ ահա՛ անսո՛ւրբ մեկն եղար սրբերի շարքում, և պարկեշտների խմբավորման մեջ՝ արբ՝ շիռո՛վ լցված, արդարների մեջ՝ միշտ կեղծավորվող, պիտանիների մեջ՝ անպիտանացու՜ղ, ո՛վ դու, անարգը՛դ՝ փառավորների ընթացակարգում, առավելություն ունեցող խմբում՝ նվա՛զդ ամենա, գերագույնների մեջ՝ միշտ միայն գերի՛, ունևորների մեջ՝ ամենաաղքատ, ով անարժանը՛դ փրկության համար. Վերն ապրողների մեջ՝ միայն տնանկ, և ընկած նաև

հոգևոր ամե՛ն հարստությունից, որ կա՛ լիությամբ, այդ օրհնանքներից կտրվա՛ծ, զատվա՛ծ, հեռացա՛ծ ես դու:



Հեծեծանքների մի նոր հավելված  
Նու՛ն իսկ հսկողից, նու՛ն աղերս-  
ներով և մաղթանքների խոսքով  
միջնորդված

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍԲ  
ՈՒՂ ՂՎԱՄ ԱՍՄՈՒՆ  
ԲԱՆ Թ**

Ա

Եվ արբ, քեզ արժան բամբասանքների ի՛նչ խոսքեր կրկին են շարագրեմ՝ այս ողբերգության ու մաղթանքների կտակ մատյանում, ով անձն իմ թշվա՛ռ, իսպա՛ռ վայր ընկած պատկառու վարքից, որ պատասխանի չունես ո՛չ մի խոսք, անպիտանը Աստծո և սրբոց դասի մեջ մասնակցություն: Քանի որ եթե մի լիճ և կամ թե՛ ծովի ջրերը թանաքի փոխեմ և դաշտերն արձակ անսահմանությունս տարածեմ՝ ինչպես գրելու համար պատրաստ մագաղաթ, և եղեգների պուրակ ու անտառ՝ բոլո՛րը հատեմ՝ գրիչ սարքելով, անկարող եմ իմ անօրինությունները լրիվ թվարկել, դրանց մի մա՛սն իսկ սահմանել գրով: Եվ նաև եթե Լիբանանի ո՛ղջ մայրիներն հատեմ, զոգե՛մ իրարու ու դարձնեմ մի կշեռքի լծա՛կ, և մի նժարին որպես կշռաքար վերն արդարության՝ Արարատ լե՛նը դնելու լինեմ, կրկի՛ն չի կարող հավասար կանգնել մյուս նժարի՛ իմ հանցանքների՝ ծանրության հետ:

Բ

Ծա՛ռ ես բարձրուղե՛շ՝ ստվար ճյուղերով ու տերևալից, սակայն պողպատե՛րկ, նմանակի՛ցը բարիք չունեցող այն թփե՛նուն, որ՝ Տիրոջ անեծքից իսպառ չորացա՛վ: Թեպետ, ճմարիտ, քո սաղարթների փարթամ վարսերով, արտաքին տեսքով կե՛րպ ես բարեշուք, իբրև զարդարված շքե՛ղ պսակով, հեռվից դիտողի համար բաղձալի՛, սակայն Տնկողը եթե մոտենա պտուղ փնտրելու, Նա կտեսնի քեզ, որ դատարկ ես դու, և գարշելի՛ ես քո գեղեցկությամբ, իսկ տեսնողների համար՝ ծաղրատե՛ղ, նախատողների նշավակներն էլ՝ վրա՛դ են իջնում: Քանի որ, եթե՛ փարթամ ճյուղերով տունկը պարծենա,

բայց անպտղութեամբ մնա անկենդան, երբ նույն պատճառով անեծքի սաստով իսպա՛ն չորացայ, նա պիտ հիշեցնի Տիրոջ գալուստի չսպասված ժամում՝ անպատրաստ բոլոր մեղավորներին: Կամ, ով երկիրն է վարում ու ցանում, ողորձ մտով, որպեսզի բազում արդյունք ստանա, բայց երբ ջանքերը չեն վարձատրվում, հողը մնում է կրկին անբերրի, նման հողն այդ ժամ լքվում է, դառնում արդեն մոռացված: Իսկ դու էլ ահա՛ անձն իմ եղկելի, որ սահմանված ես բանավոր լինել և տո՛ւնի կենդանի, և քեզ պարզևս ժամանակի մեջ չե՛ս տալիս պտուղ, նախկին առակի պատիժը մի՞թե պիտի չկրես: Որովհետև դու առաջին մարդուց մինչև ավարտը նոր ծնունդների քե՛զ ներառեցիր, այն էլ՝ անպակաս առավելութեամբ՝ նանրութեան բերքի անբարի գործեր, դյուստեր՝ նորանոր, որոնք ատելի և անախորժ են Արարիչ Աստծուդ քե՛զ Հաստատողին:

Գ

Որովհետև որ՝ բոլոր մտքերիս տեսության առջև քե՛զ դարձրեցի ինձ նպատակ ու նշանակակետ, անձն իմ անպիտան, իբրև անընտել վայրի գազանի՝ խոսքերի ժայռեր՝ նետելով վրադ՝ անողորմաբար՝ քեզ քարկոծելով: Որպեսզի եթե չկարողանամ՝ էլ արդար անվանվել, սակայն առաջին պատասխանը ես արդեն կունենամ, թե՛ ոսոխի՛ պես եմ վերաբերվել քեզ, երբ հոժարամիտ իմ անձի կամքով՝ ո՛ղջը ոգորեմ, ըստ իմաստութեան նախաձայն խոսքի, որ իմ մտքերի և խորհուրդների հուզվելը թաքուն, իբրև գլխավոր հիմք ու պատճառներ իմ չար գործերի, խոստովանելով՝ Քո առջև բացեմ, ո՛ղջը տարածեմ, Աստված իմ, և՛ Տէ՛ր: Որովհետև, որ ի՛նչ չափով չափեմ վիճակն իմ անձի՛ ա՛յդ իսկ չափով էլ պիտ չափված լինեն՝ Գթություններդ աննվազական, այդպես ավելի՛ հաճախագույն էլ արժանացնելով պարտքերիս հանդեպ Քո շնորհներին: Որքան վերքերիս դառն հարվածները անբժկելի անհնարավոր թվացող չափով անձս ճարակեն, այդքան՝ իսկ չափով և կրկնակի՛ խոսքիս նայելով, Բարձրյալ՝ Բիշկիդ բարեհուշակված, Քո արվեստների վերն իմաստներով՝ պիտի Գթա՛ս ինձ և լուսավորես Քո առավելով, քան թե պարտքերս են իրենց չափերով. նույնչափ Փոխտուկդ առատությունը բարեբանութեամբ պիտի պսակվի, ըստ Քո խնկելի առակի հանդույն:

Դ

Որովհետև, Տէ՛ր, փրկությունը ողջ՝ Քեզ նո՛վ է միայն և քավությունը Քեզնո՛վ է պարզև, և Քո Աջո՛վ է լինում նորոգում, և զորեղություն՝ Աստծո՛ւղ մատներով, և հրամանովդ՝ արդարություն, և ողորմութեամբդ՝ ազատություն, Երեսիդ փայլով՝ լուսավորություն, և զվարճացո՛ւմ Դեմքիդ երևմամբ, և Սուրբ Հոգովդ՝ անհո՛ւն բարություն, և Յուզի՛դ օժմամբ՝ քա՛ղցր սփոփանք, Յողո՛վ շնորհիդ՝ խի՛նդ զվարթություն, մխիթարություն՝ Ձեռքիդ պարզևս, վհատությունն ես տալիս մոռացման՝ մեզինց հանելով՝ վշտերը խավար, ողբասացութեան մեր հեծեծանքը՝ փոխում ծիծաղի՛: Նախահայրերից՝ իրենց սերընդով, լուրջ և քե՛զ են վայել օրհնությունները՝ վերն երկինքներում՝ գովութեամբ հանդերձ, հավիտյանըս հավետ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հակողից, նույն  
աղբերներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՌԻՂՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ Ժ**

Ա

Ե՛վ արդ, քանի որ, թե զղջումն ուժգին և թե մեղանչելը մոլեգնորեն՝ միաման են մատնում կորստյան, քանի որ սրանք, թեպետ օտար են միմյանց այնքան, անգամ հակառակ, սակայն ունեն այլ մի նմանություն՝ ծնունդ են դառնում նո՛ւյն վհատության: Թե զղջումն ուժգին և թե մեղանչելը մոլեգնորեն. քանի որ մեկը ձեռքն է չզորի թերահավատում՝ համարելով այն ապիկար, պատժո՛ղ, անգո՛ր փրկելու, իսկ մյուսն ահա՛ մի չորքոտանի կճղակավորի հար նմանութեամբ, անզգայորեն՝ հույսի պարանն է ձգելով կտրում, և որի համար, առաջին դեպքում, փաղաքելով՝ քաղալերում է, խնդում սատանան, իսկ երկրորդ դեպքում, դժոխորովայն գազանի նման, որպես կերակուր՝ պարարտանում է արյան լափլիզմամբ:

Բ

Ե՛վ արդ, ինքըս ինձ մահակի փոխան գերանի բազում հարվածներ տալով, մահվան ափն

Հասած, չունչն իմ փոքր ինչ վերադարձավ ինձ և եղա այդժամ Հոգի՛ կենդանի, և կազդուրվեցի, պատասպարվեցի ու ելա՛ ոտքի, անկենդանություն իմ կորստից կրկին հարուժյո՛ւն առա՛ օծանդակությունս Բրիտանո Աստծո գլխառատ ձեռքի, որ ամենքի՛ն է ողորմած, երբ որ՛ դիմում են Իրեն խոստովանությունս, և Բարերա՛րն է Երկնավոր Հորից ուղարկված աշխարհ, որ Իր փրկությունս և բժշկությունս դարձնի ինձ բերրի՛, ինձ՛ մեղանշածիս և ախտացյալիս և մահացածիս՝ կրկին՝ կյանք տալով: Եվ սկսելով ողբերգությունն այս աղերսանքների, ես կառուցեցի Հավատի մի շենք, որովհետև որ նախահայրերից մեկը Հար նման իմ վիճակներին, այս իմ գեներեթով ինքն իրեն գինած՝ իսկո՛ւյն փոխվեց և արժանի՛ դարձավ վերն անմահության կյանքի վիճակին, ապաշխարությունն իր դարձնելով դեղ, և գղժո՛ւմն իր մեծ, դարձնելով արդեն վստա՛հ մի թոշակ, և դրավականն իր անեղծության այստե՛ղ ժառանգեց, դեռ երկրի՛ վրա: Աստծուն դիմելու այս եղանակը ավելին է, քան պաս՛վը նրանց, որոնց մասին է առաքյալը մի օրինակ բերում, թե. «Հանդեսի մեջ ովքեր երկրում մրցանակ տարան օրենքի դժվար կատարումներով՝ Երկնավոր Լույսին, Ապագայի՛ն էր, որ Հավատացին, և անտեսեցին աշխարհը անցնող ու փարթամացան կյանքի՛ ճոխությունս»:

Գ

Եվ ով՛ մինչ մահ է մեղքի մեջ ընկել, և ով կրկին է բռնվել դիվաց մետաղյա ցանցում, և ով սուզվել է անդունդը չարաց, կյանքի փրկությունն շուրջն այս ունի՛ որ քավությունն ելք գտնի սրանով, ինչպես որ բազում պարտքեր ունեցողն աչքի անձրևով՝ Ամենակալիդ գլխության առաջ, որով կրկին է երկիրը աճում ու բարգավաճում Աստծո Սուրբ Հոգուն իր նվիրվելով՝ ամենահրաշ ծաղկավետությունս: Իսկ մենք Տէրունի պաշտելի Բանի ասելիքն հիշենք որպես խրախույս, թե ամենայն ինչ հնարավոր է այն մարդու համար, ով որ՛ Հավատա՛, մի բան, որ չափն է և ընտրյալների բարեմասնության՝ և երբ որ մենք էլ Աստծուն հաճելի մարդկանց վարքերն ենք դիտում՝ քննարկում, նրանք մոտեցան սրբություններին՝ հավատ հափնելով: Եվ ո՛չ էլ անգամ Տէրը փառքերի, երբ որ տեսնում էր, թե հավատ չունեն, յուրայինների շրջապատում էլ հրաշք չգործեց, այլ՝ Նա նախօրո՛ք յուրաքանչյուրիս խնդրեց հավատով լծակից լինել, որ բարերարումն Իր

երկնահամ մեզ համար գործի՛ մե՛ր իսկ հավատով: Ուստի գորու է Հավատն ընձեռել և կյանք և շնորհ՝ միացած Աստծո ներկայություն հետ, և հավատն այսպես՝ ինքնիշխան է իր բավարարումով, որովհետև որ՛ հա՛ր օրհնաբանյալ Աստծո Բերանը մեզ ա՛յս վկայեց. «Հենց քո՛ հավատն է ապրեցնողը քեզ»:

Դ

Քանզի արդարև տեսությունն հստակ, իմաստությունը կատարելության և ընտանություն գիրկն ընդունվելը, մտնելն Աստծո Տան արդարության մեջ, ծանոթությունը Բարձրյալի հետ՝ հավատի մաս են միասին կազմում՝ դարձնելով մարդուն և թե՛ երջանիկ, թե՛ ընտրյալ անուն, հավերժությունը ձգել-մղելով՝ պարզ և բերում անվճար մի կյանք, ազատում՝ փակող սահմանումներից՝ պատվականակից դարձնելով նրան՝ սիրոն և Հույսին: Որովհետև, թե՛ ամենափոքր սերմնահատիկի, մանանեխի չափ պղտիկ հավատ էլ մարդը ունենա, փոքր այդ հավատով՝ հսկա լեռնե՛րն էլ կարող է շարժել ու նետե՛լ անգամ խորքերը ծովի, ապա հիրավի պիտի ընդունենք՝ հավատը որպես սկզբնաշավիկ կյանքի առաջնորդ, որն և աներկմի՛տ պաշտոն է մարդուն՝ Տէ՛ր Աստծո առաջ, հավատով է, որ լինելիքները և այն ամենը՝ ինչ ծածուկում են՝ աներկբայորեն մարդը տեսնում է հոգո՛ւ աչքերով, և Երրորդություն փառաբանելի անվամբ է պատվված Հավատքը ինքնին, և դասվում է նա Սիրո՛ և Հույսի՛ ընտրանի շարքում: Որովհետև, թե՛ ընտրյալ երեքն այս միաբանված նույն խորհրդում դիտես, դրանցով պիտի հավիտենապես՝ աճես-մեծանաս քո Աստծու առջև, որովհետև որ, եթե դու Նրան հավատաս, այդժամ՝ կսիրես՝ Նրան, որով էլ արդեն դու Հույս կունենաս ա՛յն աներևույթ լի պարզեցնելին, որ՛ Նրանի՛ց են շնորհումներ քեզ: Այդ Նրա՛նն է փառքն հավիտենական: Ամէ՛ն:





**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հակողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂ ՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ԺԱ**

**Ա**

**Եվ արդ,** Հետի՛նս դավանողներից, դատարկաձե՛նս՝ բարիների մեջ, մտքիս խորհրդով նայեցի ինքս ինձ և քննեցի եղելությունն իմ սկզբից եկած, անհուշությունից առաջ եկա՛ծս Արարչի ձեռքով, ողջ Հույսերովն իմ ես հավատում եմ Տէ՛ր Քրիստոսին, որ Նա՛ Կարող է ամեն բան անել, ինչ որ կամենա: Որովհետև որ ես հավատացի՛, այդ բանի համար՝ բերանն իմ խոսե՛ց: Ես՝ խրատվա՛ծս Պողոսի խոսքով և ուսանա՛ծս՝ Դավիթ արքայից, քանի որ նրանց մաղթանքները, որ կենդանի են հար՛ ինձ են այցելում քաջալերությամբ, որ հավատարմ՛ով ճանաչեմ Աստծուն: Ըստ առաքյալի՛ այդժամ է միայն տեսանելի մեզ և գորուծությունը Տիրոջ Հարուստյան, և մասնակիցն եմ դառնում ես Նրա չարչարանքներին, և այն ամենին, որ առաքյալը Հայտնի է անում Հաջորդ խոսքերում: Կցորդ է սրան Հույժ նմանատիպ, հավատն իսկական, որ նորոգում է, իրականացնում փոփոխությունն այս, թե՛ Նրանով է քավություն լինում մեղքերի դիմաց, արդարագործ է փոխվում Նրանով չարագործն անգամ, և քայլում է նա անմաքրությունից դեպի սբեություն, և անքավելի իր հանցանքների մահացու պարտքից Հայտնվում մի օրվե՛հ, Հանդարտապա՛տ երանություն մեջ, և ծառայական իր կապանքներից վերափոխվո՛ւմ է Վերն երկնավորի Գի՛րկն ազատության:

**Բ**

Քանզի արդյոք կա՞ չքնաղ մեկ այլ բան, երբ որ մթու՛թյան տարակուսանքից և խարխափումից զտվում է սիրտը մեղավոր մարդու՝ օժանդակություն առնելով Աստծուց, և մարմնապես ծիծաղելով էլ, միևնույն ժամին՝ Հեծեծանքներ են հոգուց դուրս ելնում, և թեպետև նա Տիրոջ օգնությամբ վե՛ր բարձրանալով՝ գերագույնների դասն է Հայտնվել, սակայն իր ներքին ծանրությամբ դեռ՝ խո՛ր անդունդների խորքերը սուզված՝ կործանումների մեջ է թավալվում՝

դեռևս անջրդի նորանոր մեղքեր ներսն իր տեսնելով, բայց, այդ ամենով՝ իր անձին հաված կենաց փրկության սուրբ նշխարն ունի, որը նման է իր միտքն ու հոգին պահող պահպանող Հույսի՛ կայծակի կամ թե կրակի մի նշանակի՛ր՝ իր զարմանալի թանձրամածությունը՝ Հրաշքով մարդու ներսում մակարդվա՛ծ, նրա ներքինում նիրհած ջրհորի մինչ հատա՛կն իջած՝ ըստ Վեհից առած իր հրամանի: Ուստի և նա իր մեղքերի համար՝ իսպա՛ն թախձի մեջ, որ գրկվել է շնորհ պարգևի համարձակության դրսևորումից, ակնկալության հայացքն իր ուղղած Բարձրյալ Աստծո՛ւ անհուն բարության ու սիրո՛՛ վրա, կրկի՛ն հույս ունի՛ այս երկրո՛րդ անգամ դարձյալ Հասնելու ա՛յն նախապարգև փառքերի զարդին, որ կորցրե՛լ էր մեղքի պատճառով: Քանզի Աստծուց է՛ այն կողմից տրված կրկին նորոգմամբ, որ հենց Սրանո՛վ ներգործի մարդուն, քանի որ Սա՛ է Ավետարանում գորուծությունն այն, որ՝ անհնարավոր բաներն է արդեն դարձնում ակնհայտ հնարավորներ, և ա՛յս խոնարհման մոտեցնումն է, որ՝ որպես հաճելի խնկափետություն՝ Հոտոտո՛ւմ է Նա, Ինքը՝ Տէ՛րն Աստված, բոլոր բույրերից ամենաանուշն ա՛յդ ընդունելով, քան թե խորանի համար աղացված սպասավորության խունկի բույրն անգամ և այս ա՛յն անձանց խոնարհումներն է նկարագրում, ովքեր որ իրենց բեկվա՛ծ սրտերով Տիրոջ առջև են նո՛ւյն նմանությունը: Ըստ որում Փրկչին, երբ որ խնդրեցին աչքերի ախտով մի շարք հիվանդներ, նրանցից ոմանց այս բանն հարցրեց՝ հավատո՞ւմ եք ինձ, որ ես Կարող եմ ձեզ մաքրե՛լ, բուժե՛լ: և հիվանդներին չբուժե՛ց, մինչև, նախ որպես գրավ՝ նրանց հավատը չառավ իրենցից. և կամ կա՞ մի բան բժշկման համար դժվար ավելի, քան թե չորս օրվա մեռա՛ծ մարդու դին անհուսագույն այդ վիճակից հանել՝ կենդանացնելով. բայց ա՛յն ժամանակ այդ գործը արեց, երբ որ Արարչի ոտն եկան կանայք՝ հագնված արգա՛ր հավատի հանդերձ, այդժամ էլ միայն ակնհայտորեն տեսա՛ն փառքն Աստծո, և մեռած եղբոր կենդանանալը բույրերը տեսան՝ իրե՛նց աչքերով:

**Գ**

Այս կողմում է, որ՝ մեղանշածին էլ շնո՛րհ է մնում անկողողպտելի, և հզորագույն վկաներ ունենք այդ մասին փաստող. նախ՝ Ենովթն, ապա և Ահարոնը, նրանցից հետո՝ Դավիթ մարգարեն, ապա՝ Պետրոսը, և Եղիազարը՝ կրտսե՛րն ավելի,

նա, որ մեծապես ողորմություններ ստացավ Աստծուց և այդ վկայեց մեծագույններին: Եվ ավելորդ է անգամ հիշեցնել առակը նաև անառակ որդու. թողնե՛մ պոռնիկին, որը Տիրոջից գովեստ ստացավ, և մաքսավորին, որին Բարեգործը հիշատակեց, և երջանկության գազաթը գտած ա՛յն ավագակին, որ վերջին չնչու՛մ հավատո՛վ կյանքի պսակն ընդունեց, և նրանք, ովքեր իրենց պարտքերով, առանց քավության ակնկալիքի՝ երբ հաղորդվեցին մեռած ու հառնած Հայտնությանն Աստծու, որոնցից էր և, գլխավորներից, Պողո՛սը ընտրյալ, որ մի ժամանակ անօրենների նախնի՛ն էր դարձել. նրանցից ոմանք ծանոթ լինելով օրենքին, սակայն՝ գլորվեցի՛ն վար, բայց թե Տիրոջով այդ գլորումից կրկի՛ն կանգնեցին՝ դեռ բյուրապատի՛կ գերազանցությամբ, քան նախնիների կրոնից առած առավելության նվաճումներով: Իսկ Նա, որ մինչև Իր օրինակը վերին տվչության՝ ավանդն Հայրենի պա՛հեց կատարյալ, Մերձավորագույնը լինելով Նա Հոր դավանությանն ու պատվիրաններին, Նա նախնիների բո՛յր պարտքերը առավ Իր վրա և պատվի Նորով Հենց Ի՛նքը տուժեց ու տաժանելի չարչարանքները կրեց Ի՛ր վրա. ո՛չ թե քավություն գտավ Նա երկրի հողում ծածկվելով, այլ Իր մարմնի չարչարանքներով Հաղթեց զորապես ու Տիրե՛ց մահվան բռնության վրա և կենդանացած՝ վե՛ր ելավ երկինք՝ լինելով այդպես բանականների կյանքի բնության մարդը առաջին:

Դ

Իսկ ոմանք էլ, որ դեռ խակ հասակից անցին իրենց անմիտ չարությամբ, երբ վրա հասավ ժամանակն իրենց և հասունացան, ո՛չ թե հոսեցին բարձրություններից ու ընկան ներքև, այլ դժնի՛ կյանքով, ապրելով թշվա՛ռ ու ստորացվա՛ծ՝ այդպե՛ս վեր ելան՝ հասնելով մինչև կամա՛րն երկնքի: Եվ թե չարի մեջ զորացածներին կանխապե՛ս եղավ ետդարձի Հնար, մինչև իսկ այնքան, որ մեր հողեղեն շինվածքը փոխվեց ոսկեղեն՝ նյութի, և որ պատկերը արքունի տեսքի՛ ի պատիվ որպես նախ նկարվելով՝ քանդակվե՛ց մեր մեջ, որպես բնությո՛ւն առանց կորստի՝ արդեն անփոփոխ, հաղթելով այդպես դավաճանական բնությանը մեր, առավե՛լ ևս է այժմ հուսալի ու հասանելի լուսավորության չափ ու կշիռն այն, որ առանց քողի ու չծածկված՝ Քրիստոս Տիրոջ Անվա՛մբ է ուխտյալ, որով մեր ներսում

հաստատ է պահում Բանը Տէրունի, ըստ մարգարեի հայտնության ձայնի, թե՛ Նա՛ է մեր մեջ Ուխտ Խաղաղության և մեր հաստատման կնիքը նաև՝ Ինքն իսկ լինելով հաշտարա՛ր Միջնորդ, Երկնայի՛նն անմահ՝ հավերժ կենդանի և մշտնջենավոր Բարեխոսը մեր: Ապա ուրեմն այս ճշմարտագույն կանոնի կարգով, որ անփոփոխ է սահմանված մարդուն, այս արարչականը դրված պայմանով՝ իմ հավատացող շուրթերով՝ ահա համբուրում եմ Քո պատկերը Խոսքի՛ փառաց չնորհներդ ակնկալելով, քանզի, արդարև, երբ Աստված Ի՛նքն է արդարացնում մեզ՝ ո՛չ ոք գորու է մեզ դատապարտել՝ ըստ առաքյալի խոսած սահմանի:

Ե

Անստվերագիր վստահությունն այս պատասա՛ն է ինձ և կործանյալիս Նա՛ է բժշկում, կանգնեցնում ոտքի՛. թշվառացյալիս՝ դարձնում հաղթո՛ղ, կենդանությո՛ւն է տալիս շեղվածիս, ամենարնկած չարագործ մարդուն՝ Հո՛ւյս է ներդնում, մահվան մատնվածիս՝ չնորհում է կյա՛նք, ապականության մեջ վաճառվածիս՝ պարզեւում ձիւրե՛ր, դժոխքի արժան մահվան գործերով դեռ զբավվածիս՝ դեպի Լո՛ւյս հանում, անասնակենցաղ, ստոր ապրողիս՝ բարձրացնում երկի՛նք, կրկին ու կրկին դալթակղվածիս՝ արժանացնում է կրկին փրկության, մեղքով կապվածիս՝ Նա՛ է պարզեւում հանգստյան խոստում, անբժշկելի վերքով հաշմվածիս՝ դե՛ղն անմահացնող, վայրագության մեջ ստամբակվածիս՝ սա՛նձը հանդարտման, կամակորուցյամբ միշտ դժնդակիս՝ կա՛մքը հեզության, ընդդիմաբանող լուտանք տվողիս՝ հասցնում արդեն արժանի՛ ներման: Ուստի ամենն այս մեզ պարզև բերած Հիսո՛ւս Քրիստոսին և Հո՛րը Նրա՛ն հավոր Հզո՛ր, Անվամբ և Կամքով Բարերարության՝ ճշմարիտ Հոգուն, հա՛ր օրհնաբանված մեկ Աստվածությամբ, հավերժ Նրանցն է թե՛՛ գորություններ, թե՛՛ արքայություն, մեծություն և փա՛ռքն հավիտենական: Ամէ՛ն:





**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂ ՂՎԱՍ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ԺԲ**

Ա

Եվ արդ, քանի որ գղջման նախընթաց մաղթանքներին մեջ հուսահատության խոսքով լքվեցի, և տարակույսի գերանը առած մինչև մահու դուռ գարկեցի՝ ինքս ինձ, ուստի այդտեղից հույսի կերպարանք ներսս ստանալով և ինքս ինձ կրկի՛ն արգահատելով՝ համարձակվում եմ Սուրբ Երրորդությանն աղոթքներ կարգալ, որ օգնության գա ինձ՝ մեղավորին: Որ այս վիճակիցս օրհնաբանելը և դավանելը՝ ա՛յդ է սիրելի Կենդանարարին՝ ամենա՛յնն Աստծուն. ընտանի ձայնին իսկույն հնչելն իսկ՝ Նրա հավոր, շնորհապարգև և մեծ Բարերար Անվան կանչելով՝ մեռնողին պիտի կենդանություն տա, ըստ մարգարեի նախաձևության, թե՛ ո՛վ որ կանչի Տիրոջ անունը՝ նա՛ պիտի ապրի:

Բ

Իսկ ես ո՛չ միայն աղոթքներով եմ կանչում շարունակ, այլ նախ և առաջ հավատում եմ, որ Մե՛ծն է ամենա, ո՛չ թե պարզևի համար եմ կրկին ինքս ինձ դատելով շուրջը դեգերում, այլ, որովհետև կենդանությունն է Նրա ճշմարիտ տուրևառության շնչով հավաստի՝ երբ առանց որի որևէ շարժում չի՛ կարող լինել և ո՛չ էլ ընթացք: Ո՛չ այնքան հույսի հանգույցներով եմ շղթայված Նրան, որքան որ Նրա սիրո՛ կապանքի մասին եմ խոսում: Ո՛չ տվածներին, այլ՝ կարոտ եմ միշտ դրանք Տվողին: Ո՛չ թե այնքան ինձ Նրա փառքերն են թվում անձկալի, այլ՝ Փառավորյալն է համբուրելի, և ո՛չ թե այնքան կյանք եմ փափագում, այլ՝ Կենարարի հիշատակո՛վ եմ տոչորվում անվերջ: Ո՛չ թե հեծում եմ երկնային վայելք ապրելու համար, այլ Պատրաստողի տենչանքներո՛վ եմ՝ երկկամներեցս լաց ու կականներ բարձրացնում վեր: Ո՛չ թե փնտրում եմ, թե հանգի՛ստ գտնեմ, այլ, որ աղաչեմ՝ Հանգստացնողի երեսի առջև: Եվ ո՛չ թե Նրա սուրբ հարմարանի խնջուքին ներկա լինե՛լս եմ ձգտում, այլ՝ կարոտից եմ մաշվում Փեսայի: Եվ

որի ձեռքի գորության վրա վստահ հույս ունեմ, որ իմ հանցանքի բեռներն այս դաժան՝ Նա գորավո՛ր է ինձնից վերցնել: Աներկմիտ հույսով հավատում եմ, որ՝ Կարողի՛ ձեռքն է պատասպարում ինձ, և ապաստարանսս ինձ Նա՛ է տալիս. Ո՛չ թե ձգտում եմ միայն միմիայն հասնել քավության, այլ քավության հետ՝ Քավողին տեսնել, մասնակից լինել՝ ողորմությանն ու գթություններին, ժառանգությանը երկնային կյանքի, թեպետ և սաստիկ տարագրելի՛ մարդ եմ իսկապես:

**Ձորավոր մաղթանք  
ընդուն գիշերային արհավիրքների**

Գ

Եվ արդ կորացած իմ ամոթալի գործերից բազում, մեծ պատկառանքով կանգնած Աստծու դեմ, իմ շրթունքների կափկափունները որպես երկակի միջնորդ՝ Քո առջև, և անհամարձակ շարժումով լեզվիս հառաչանքներին, պաղատանքներին երգերը կրկի՛ն ես նորոգեցի՝ եղանակելով, և աղիողորմ հեծեծանքներս բարձունքներն ի վե՛ր աղաղակեցի. Քո քաղցրությանմբ ընդունիր դրանք, Տէ՛ր Աստված, Հզո՛ր, աղաչանքներս այս, որ դառնացածիս խորքից են ելնում. իմ պատկառանքով Առջևդ ելածիս մոտեցիր անհո՛ւն գթությունով Քո, այս ամոթալի տխրությունս ինձնից Ի՛նքդ փարատիր, Ամենապարզև՝ և բեռներիցս այս անկրելի, Ի՛նքդ փրկիր ինձ, Ի՛նքդ անջրպետիր ա՛յն կրթությունից, որը ինձ համար եղավ մահացո՛ւ, Մշտապե՛ս Հաղթող: Ավերի՛ր իմ մեջ հաճություններս այն, որոնք խաբողն է ներդրել իմ մեջ, ինձ մոլորեցնող մառախուղները քշի՛ր, Վերնային, կնքի՛ր, Կեցուցի՛չ, ընթացումներս դեպի Կորսչին, ցրի՛ր, Մածկատե՛ս, ըմբռնումներ՝ չար կամքի համար ինձ գտնողների, խորտակի՛ր, Անքննի՛ն, ինձ հետ մարտողի դիմեցումներն ինձ և Տյառնագրի՛ր Քո օրհնյալ Անվամբ՝ միակ լուսամո՛ւտն իմ տան երգիկի, և Քո սուրբ Ձեռքով պարփակի՛ր, Աստվա՛ծ, առաստաղը իմ հոգու տաճարի, սենյակիս մուտքի սեմին նշա՛ն դիր արյունովդ արդար, ուր էլ որ գնամ՝ կերպավորի՛ր այդ նշանդ ինձ վրա՛ իմ մաղթանքներով, ամբարցո՛ւ Աջովդ՝ հանգստյան խշտիս, և ծածկարանը անկողնուս՝ մաքրի՛ր վարմ ու թակարդից, պահի՛ր Կամքովդ հոգիս տառապյալ, մարմնիս տված շունչը շնորհիդ՝ առհավե՛ս

փոխիր անխարդախութեան, երկնային գորքովդ ինձ շրջափակիր և դետեր կարգեր՝ ընդդեմ դեերի:

Գ

Եվ իմ գիշերի խորութեան հովտում, ինձ մահահանգողն նրահածիս, տո՛ւր, Տէ՛ր, բերկրալի՛ հանգիստ՝ բարեխոսութեան հայեցումներով սուրբ Աստվածածնի և նաև բոլո՛ր Քո ընտրյալների: Եվ ամփոփելով՝ պարուրի՛ր, Աստված, պատուհանները իմ տեսողութեան, զգայարաններս՝ յուրաքանչյուրին իր իմաստի մեջ, նորագի՛ր այնպես՝ արդեն անգարհուր լինեն այսուհետ, այլևս ազատվե՛ն իրենց ծիպացող խռովութեաններ առաջացնողից, և կենցաղային զբաղումներ ու հոգսերից բոլոր, և երազներից՝ իրենց անուրջով սի՛ն դատարկաբա՛ն, և ցնորքներից խե՛նթ ու խղեկան, հուշիկ հարատև հիշատակումով թող լինեն արդեն անվնասելի՛, ամո՛ւր պաշտպանված: Եվ թող այլևս արթնանա՛մ արդեն ծանրացող քնից՝ ամենազգա՛ստ մի զգոնություն և զվարթություն և հոգի նորոգող: Այս մաղթանքներիս հավատի բուրմամբ՝ ձա՛յնս է ուղղված Քեզ, Ամենօրհնյա՛լ, Անվիճարկելի՛ Փառաց Թագավոր: Երկնքի առջև գումարված իմբի փառք տվողներիդ դարձած երգակից՝ իմ աղոթքներն եմ առաքում ինքս էլ, որովհետև Դու փառավորվում ես Քո բոլո՛ր բոլոր արարածներից՝ այժմ և՛ հավիտյա՛նս հավիտենից: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՄՈՒՆ  
ԲԱՆ ԺԳ**

Ա

Աստված՝ բարերար, հզո՛ր, ահավո՛ր, որ Հայրն ես բարի Քո ողորմության կամեցողութեան ու շնորհների, և Անուղղ արդեն Մեծիդ Գթութեան ընտանությունն է ավետարանում, և քա՛ղցր ես անգամ Դու նրա՛նց հանդեպ, ովքեր դժնեհ են ու անգուհացող, Քեզ հետ և Որդի՛դ, որ Դո՛ւ ես որպես, և Նրա Ձեռքն էլ զորավոր է միշտ՝ որպես Ձե՛ռքը Քո, և անժամանակ Տէրութեան

յամբդ ահեղ, արարչութեանդ սկզբից Քեզ հետ՝ գործով բարձրացած, մեկ ու միաբան և ճշմարտության Սուրբ Հոգիդ նաև, որ Քեզանից է բխում, ուր կամես անսպառություն, և Կատարյալ է Նա գոյավորում և էությունն է մշտնջենավոր, և ամեն բանում հավասար է Քեզ ու իշխանությունամբ՝ Որդո՛ւդ փառակից: Երեք անձերով և ընդհանրապես անքննելի, տրոհված իրենց ուրյուն գատումով, և միավորված համագուգութեամբ, և իշխանության բնությունամբ իրենց՝ նույնագոյություն, անշփոթելի՛ և անանջրպետ՝ մեկ իրենց կամքով և կցորդությունամբ: Ո՛չ մեկն ավագ է մյուս երկուսից, և ո՛չ էլ նվագ, և միասին են սկիզբ ու պատճառ՝ երկնքից իջնող անստվեր Հուշիկն, այս իսկ ճանաչմամբ մեզ են առնչվում՝ սրբասացության մեկ իսկ պակով՝ առա՛նց սկզբի աստվածաբանված:

Բ

Քանզի, արդարև, Եռյակ փառքերիդ խոստովանությունամբ հավատի վեմը՝ Պետրոսը մտավ երանության մեջ, իսկ իմ մեղքերի պատճառով արդեն դատապարտյալիս, և դերյալիս, որ փնտրում ես գտնել, բարեհրաման ակնարկութեամբդ ես ինձ արդարացնում մի հրաշալի ու նո՛ր նորգամբ: Քանզի թեպետև՝ Քե՛զ են պատկանում պարզեները ողջ և ողորմություն անելը Քո՛նն է հավիտենապես, սակայն ո՛չ այնքան պարզեներովդ ես Ինքդ հռչակված, քան ողորմությամբ, որովհետև որ՝ երկրորդով Քո փառքն է ավելանում, իսկ առաջինով՝ ճգնավորների առաքինության գործերն են Հայտնի, որովհետև որ՝ պարզե տրվում է աշխատանքների արդյունքի դիմաց, իսկ ողորմությունը մեղավորվածիս՝ արվում է որպես բարերարություն:

Գ

Եվ արդ մարդկային գործերը բոլոր իրենց գործությամբ չեն գերազանցում Քո շնորհներին, Աստված գթութեան, եթե մինչև իսկ դրանք ամենքն էլ ավելին լինեն, քան օրենքները ժամանակի մեջ հոսող բնության, նվա՛զ ու ցած են երկրածինների ընթացքները ողջ՝ Քո երկայնամիտ գթութեանդ առաջ՝ իրենց հաղթության կատարելությունամբ: Քանի որ նրանք, ովքեր մաքրությունամբ իրենց պարծեցան վստահություններն իրենց հիմնելով օրենքի վրա, երբ լուսավորեց Քո արդարության Արեգակն, այդժամ, հրեությունը իր օրենքներով լքվեց, նվազեց, դարձավ

տաղտկալի՛ ու դարձավ Հետին, և ավելի, քան տարագիրները գլխության պապակ, մարդասիրութեանդ առջև՝ նրա՛նք էլ կարոտ մնացին: Քանի որ արդեն Որդուդ Հայտնութեամբ, բարերա՛ր Աստված, ճանաչվեց ահա, թե ամեն՛ բան է Հնարավոր Քեզ: Լսի՛ր ողբաձայն պաղատանքներին գոչումները, Տէ՛ր, որոնք Քո առջև ընթերցում եմ իմ այս աղոթքներով, և ողորմութիւնը՛դ ցուցաբերիր, և մարդասիրի՛ր կյանք պարգևելով, քանի որ Քո՛նն են քաղցրութիւնները մեծ Համբերութեամբ, փրկութիւնը՛ մեր, քափութիւնը՛ ողջ և փառքերն՛ ամեն՛ Հավիտյան՝ ապրող բոլոր ազգերի: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ԺԴ**

**Ա**

**Քեզ եմ պաղատում, Լուսի՛ր՝ ճառագայթ, Արքա՛՝ երկնավոր, գովյա՛լ անպատում, անվիճարկելի Մե՛ծդ Աստծո Որդի, խոնարհեցրո՛ւ ունկըդ դեպի ինձ, Բարձրյա՛լ բարեգութ, կյանքի՛ ապավեն, վիրավորվածիս այսօ՛ր էլ, կրկի՛ն, Քո նորոգութեամբ մերձավորվիր ինձ, դարձյա՛լ լսելու Հառաչանքները նվաղած ձայնիս:**

**Բ**

Երբե՛ք, ոչ մի տեղ չի՛ հիշատակվել, ավագանիների սրով խողխողված մի մարդու մասին, որ կարող լինե՛ր Քեզ աղոթք ուղղել՝ աղաչանքներով, որովհետև որ, հարվածի պահին՝ կարկամա՛ծ էր նա. Քեզ պաղատելու ձա՛յն իսկ չհանեց, որովհետև որ՝ ձայն հունե՛ր իր մեջ, ո՛չ էլ կարող էր թեկուզ մատների արված նշանով վտանգի մասին հայտնել Տեսնողիդ, որովհետև որ՝ մա՛րդ էր խորտակված, ո՛չ էլ աչքերից ողբի արտասուք նա կարողացավ մեծ Բարերարիդ ուղղելով հեղել, քանի որ, գիտե՛ր, վնասապա՛րտ էր, դատի՛ ենթակա, ո՛չ էլ կարող էր Քո պատգամները միջնորդ դարձնել, որ լինե՛ր այդպես մեծ Ողորմածիդ կամքին հաճելի, որովհետև որ դեռ դարձ չէր արել խոսքդ լսելու, և ո՛չ էլ արդեն խորտակված մարմնի արյունով ներկված իր հագուստներով

դով ձգտեց Գթածիդ Մեծ սիրտը շարժել, որովհետև որ՝ հույս հունե՛ր իսպառ, ո՛չ էլ ծնկներով, որպես թե ոտքի թաթերի վրա հաստատուն քայլով Քո կողմը եկավ, որովհետև որ՝ անկարող էր նա նման բան անել. նա կիսամեռ էր կենդանարարիդ ըմբռնելու մեջ, փոքր ինչ էր մնում, որ դառնար՝ դիա՛կ: Եվ ճանապարհն էր այդպես ավարտում, մանավանդ ո՛չ թե խրատով խոսքիդ և բարերարող ողորմութեանդ մեջ հաստատվելով, լուսազարդվելով Քո փառքերի մեջ, այլ ստահակի ապստամբութեամբ՝ թշնամիների՛ թիպն էր հավելում, և ինքն էլ այդպես՝ միաբանվեց իր թշնամիներին, ատելիներիդ շարքերն իրենո՛վ էլ լրացնելով:

**Գ**

Բայց Դո՛ւ, Բարերա՛ր և Բազմապարզե՛, և Անոխակա՛լ, Ամենակեցո՛ւյց, ո՛չ թե հիշեցիր այդ չարագործի մեղքերը Քո դեմ, այլ նախատինքի խո՛սք իսկ չասացիր: Ընկածին ո՛չ թե առար ոտքիդ տակ, այլ կարեկցելով՝ ծայրագույն խնամք ցույց տվիր նրան: Եվ ո՛չ թե նրան քահանայապես գորավոր մահվան պաշտոնյա եղար, ըստ ահարոնյան տկար օրենքի՛ դատապարտելով խիստ անեծքների, բռնի քարկոծման. ո՛չ թե փութացիր խոցելով նրան խորտակման մատնել, ո՛չ էլ ղետական անկատարագործ կարապետի պես հետը վարկեցիր, որ երկու մասի բաժանվածի մեջ՝ Հնի լրումն էր, սկիզբը՝ Նորի, այլ՝ դատարկ հոգու ապաշխարանքը Ի՛նքդ հանդիսացար՝ տեսնելով վտանգ, որ վիրավորի վրա էր գալիս, որպեսզի հանկարծ սպանդ անողը օրենքի՛ ձեռքով՛ իր արմատ կտրող տապալը առած՝ մահվան պաշտոնը Քո մեջ չտեսներ, չմեռնե՛ր վախից՝ ավելի՛ առաջ, քան փորձութիւններն առաջիկայի՛ հաղթահարելու հույսը ունենար... Եվ հեթանոսներն ասորեստանցի, որ օրենքն առան հրեաներից՝ ամբողջութեամբ էլ պահեցին դրանք, բայց տվողները իրեն՛ք մոռացան, և ապա հազան մարմնիդ վերարկուն՝ իրենց խառնութեամբ նմանվելով մեզ, և ինչ փրկութեան ավետիսը, որ գծագրեցիր օտար ազգերին և աստվածաբար անապակ դարձնող Քո ներգործութեամբ՝ Ձեռքդ երկարեցիր՝ նախնի հին մարդուն կենդանացնելու, որ մեղքով մեռնող ծնունդ էր արդեն՝ սերնդեսերունդ, և տրամաճների սիրտը լցրեցիր անհուն բերկրանքով, և հաստատեցիր վհատյալներին կենդանութեան մեջ, թշվառացածին մեկ անգամ ևս գվարթացնելով, և ավագանիդ կենարար օծմամբ,



և բաժակիրդ մեջ Լույսդ լցնելով, և արարչական ու երկնային մարմնի Քո Հացով՝ այդպես՝ Նո՛ր Կտակը եղանակեցիր, և երջանիկ ու ընտրյալ ազգերի վերակացուլթյամբ գտա՛ր թշվառին, գրկեցի՛ր նրան, խնամարկեցի՛ր: Եվ Հանդարտընթաց գրաստի վրա դնելով նրան՝ փորձուլթյուններից պահեցիր Հեռու՝ մինչև որ մտավ Հարկը լուսեղեն, թե՛ նախնիների, թե՛ երկրորդների՝ յուրաքանչյուրի ձեռքը դնելով Աստուծու տվչուլթյան՝ կենդանի կայքի կամքով ապրելու կտակներդ երկու, որոնցով նրա բոլոր վերքերին մարդասիրտեն դարման դրեցիր: Եվ մի ժամանակ, ինչպես մոտ էիր Մովսես ծառայիդ, Թևերդ Արծվենի Դու տարածելով և Հանդարտ երկիրն առաջնորդեցիր՝ պահեցի՛ր նրան՝ բարերարուլթյան և Հանգստի մեջ, և առաքեցի՛ր Քո Խոսքը նրան, որպես ուսուցիչ՝ Հրամայելով վարդապետներին, որ նրան սնեն երկնի ա՛յդ Հացով:

Գ

Եվ արդ, ծայրագույն Բարուլթյան Լույսով Հրաշք գործերդ ամենքի Համար՝ բովանդակապես՝ Հենց Ի՛նքդ արեցիր, Հին օժտողի գողացած դանձր սեփականելով՝ վերադարձրի՛ր Քո աշխատանքի արդյունքներն այդպես. ապրեցրու ի՛նձ էլ՝ մեղքիս պարտքերից մաքրելով՝ ի՛նձ էլ: Որ ոչ թե արած գործերիս դիմաց, այլ՝ անպատրաստիս ձրի՛ պարզե տաս՝ խոստովանուլթյուններս Հաշվի առնելով, տա՛ս ինձ քավուլթյո՛ւն և բժշկուլթյո՛ւն, Բարեգո՛ւլթ, Զորե՛ղ, Անքնի՛ն, Անե՛ղծ, Դու, որ Օրհնյալն Ես Հավիտյաններից Հավիտյա՛նս: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր Հավելված  
նույն իսկ Հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻԾ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍԾՄՈՒՆ  
ԲԱՆ ԺԵ**

Ա

Այստեղից դարձյալ սրտիս վտանգի նույն Հեծուլթյունով, ինձնից մատուցվող նո՛ւյն իսկ նվազով, խոսքո՛վ նույն ոճի, ամենապարզև մեծ Միրուդ առաջ վերստին իմ անձն եմ արգահատում, ոգուս վտանգից իսպառ տազնապած, իբրև մի մեռյալ՝ անմահ կենդանի Աստուծու եմ

աՀա կրկին պաղատում՝ փառքերիդ առջև անարգուլթյունս խոստովանելով, և թվարկելով իմ չարիքները՝ բարուլթյանդ Հանդեպ, և որոնցով ես՝ առավել ինքս ինձ Հաղթվա՛ծ գտա, քան թե բժշկված, և առավել շատ՝ իմ անարգ վարքից ի՛նքս ամաչեցի, քան թե ստացա Համարձակուլթյուն, և առավել շատ ինքքս ի՛նձ տեսա՝ ավանդամոռաց և ուխտակորո՛ւյս: Երկրորդ առակը ոչխարի մասին ինձ է ցույց տալիս, որ մոլորվելով՝ մատնվել էր արդեն անզգայուլթյան ու շրջում էր լեռի լեռների վրա, ուր չուներ փնտրող. գազանների մեջ, դե ու կուռքերի, վայրի տեղերում թափառում էր նա և սակավի՛կ իսկ մտտիկ չէր Հոտին: Ո՛չ խոսք ունեի, որով պատմեի ցավեր ու աղետ, ո՛չ ձեռք ունեի, որ ըմբռնումներ է արտահայտում՝ Համբերի նման, որ նշանացի Հասկացնում են մեզ խոսքերը իրենց: Իսկ Դու, մարդասե՛ր, սկզբից ևեթ, Հավիտյանների և նրանց Համար, որ նոր են ծնվել, իր մաղթանքները գոչմամբ երգողի խոսքի Համաձայն, որոնեցիր և՛ եկար-գտա՛ր ինձ՝ մոլորումների ցանցում բռնված, և Քո խնամող Հոգատար ձեռքով, Կամքով տեսչուլթյան՝ Հովի՛վ դարձար ինձ, և ո՛չ միայն թե Հոգացիր կյանքն իմ, այլև մինչև այդ՝ փնտրեցիր-գտա՛ր, ո՛չ միայն գտար, այլ Հրաշագործ, անվիճարկելի բարերարուլթյան օրհնյալ Քո սիրով՝ վերքս կապեցի՛ր, և մոլորյալիս՝ Կենդանարա՛րըդ առար ուսերիդ, տարարդեցիր Քո Երկնային գորքերի՛ դասում և Քո Հայրենի՛ ժառանգուլթյան մեջ:

Բ

Եվ արդ, Դու Հգո՛ր, Կենարա՛ր, Օրհնյա՛լ, Որոնո՛ղ, Գտնո՛ղ, և ողորմուլթյամբ անչա՛փ Գթառատ. և Դո՛ւ, որ աՀա նրանց լսեցիր, որոնց աղերսն էր առանց խոսքերի, որոնցից մեկը մահվան սահմանի մեջ էր չարչարվում, մյուսն իր անբան անզգայուլթյամբ և վտարանդի, ամենքի կողմից բացամերժուլթյամբ՝ դեգերում էր լոկ՝ վայրի՛, անբնակ անապատներում, և բառաչում էր՝ անկերպավոր ու աննշանական ձայներ Հանելով: Բայց Աստվածային բարի խնամքով, տիեզերահրաշ կամեցողուլթյամբ՝ Դու չանտեսեցի՛ր այս թշվառներին, որ ընկել էին մեծ կորստի մեջ: Նրանց վերստին՝ Հայտնի արեցիր՝ խորուլթյունները գթուլթյուններիդ, որ սահման չուներ, և Քո գետերը բարերարուլթյան՝ Դու Հոսեցիր՛ր նրանց ընդառաջ, և անօրենիս՝ առավելուլթյա՛մբ վերագրեցիր օրինական վարք, և բազմատեսակ մահ-

վան պարտքերում խորասուզվածիս, և բարութ-  
յանդ ու քաղցրությանդ հետ՝ ինձհատուկ կեր-  
պի՝ չարաչար համերը խառանակողիս, մարմնի  
արդեն փթած անդամիս, որ արժան էր լոկ հա-  
տե՛լ-հեռացնել, և ախտացյալ ու վիրավոր հո-  
գուս, ամեն կողմ ցանվող համաճարակի՛ս, անգ-  
գայությամբ՝ անասնո՛ց կարգին հավասարվա-  
ծիս, իմաստունների ընտանությունից օտարա-  
ցածի՛ս, ի՛նձ, որ նման ու ընկերակից չե՛մ բանա-  
կաններին, որովհետև որ, թե տարբերություն  
ինքս ունենայի՝ պիտի ասեի՛, թե նմանակից՝ պի-  
տի պատմեի՛, թե՛ մեկ բնություն՝ պիտի ճառեի՛,  
թե արժանորեն մեկին հավասար՝ պիտի գրեի՛, թե  
ինձ գուզընթաց՝ պիտի ցո՛ւյց տայի, թե հար և  
նման իմ օրինակին՝ այդ մասին պիտի ազդարա-  
րեի՛, եթե անցյալիս մեջ եղած լինե՛ր՝ կհայթայ-  
թեի՛, թե ներկայումս կամ այս իսկ պահին՝ պիտի  
հուսայի՛: Սակայն քանի որ անցյալ է արդեն մեկ  
իսկ օրինակ բերելն ինձ համար՝ հրաժարվեցի՛  
ինձ նմանեցնել որևէ մեկին, և այս վիճակում ե-  
ղածիս համար՝ լոկ Դո՛ւ Կարող ես քավե՛լ,  
բժշկե՛լ և Քո հրաշքով վերականգնե՛լ ինձ՝ Կեն-  
դանարարը՛դ համայն մեռելոց և Նորոգողը՛դ  
տիեզերքներին:

Գ

Քանի որ եթե սուրբ սիրտ ունեցող Դա-  
վիթն երջանիկ՝ հոգու տեսությունամբ. «անօրի-  
նությունն իմ չարքների գլխիցս էլ վերև բարձ-  
րացան» սասց, և թե. «մեղքերի ու հանցանքնե-  
րի դժվարակիր ու ծանր բեռներով կքեցի ես  
վար», ապա ի՛նչ պիտի ինքս բարբառեմ, երբ  
սխալներիս կրքերը ահա գերազանցո՛ւմ են, մե՛ծ  
են ավելի, քան կուտակները ջրհեղեղների բերած  
ջրերի՛ տիեզերասուզյ, ամեն ինչ ասես իր մեջ  
սպառող ծովի հորդությունամբ, որ ելնո՛ւմ լերանց  
գլուխն է ծածկում: Այլ քաղցրությամբդ թող օ-  
ղը շնչի, ինչպես որ եղավ այդ Նոյյա՛ն համար,  
քաղցրություն, որից լեռներն են հալվում՝ ցա-  
մաքեցնելով ջրակույտերը բազմաալիքովդ, երկ-  
րակործան բոլոր պարտքերիս, և լեռների պես ի  
վեր կարկառված մեղքերս, որոնք՝ իրար վրա են  
եկել ու դիզվել՝ բոլորն էլ՝ հավեն:


Դ

Եվ համառոտված Սոսքո՛վ Քո Հզոր՝ Ամե-  
նակարող Քո՛ հնարների հակիրճ հատուցմամբ՝  
ըստ մարգարեի հայտնության խոսքի՝ քավութ-  
յան ելքե՛ր պարզիր իմ առաջ, որ ես դա՛րձ ապ-

րեմ՝ անօրենությունիցս այս երկարաճիք: Եվ նե-  
րելով իմ համառությունը, ո՛վ Երկայնամիտ, Ո-  
ղորմած, Օրհնյալ՝ կատարելապես՝ մեղքերն իմ  
թողնես և Բարեգործե՛ս Քո ճշմարտությամբ՝  
անվճարելի պարտքերս ինձանից իսպա՛ն ջնջե-  
լով, որ տոկոսների տույժերից փրկե՛ս տաժա-  
նակրիս: Որովհետև որ՝ Քո սրտում ցատում չկա՛  
իմ հանդեպ, և չկա՛ նաև բարկություն բորբոք.  
ո՛չ Դու կրքերի նենգություն ունես, ո՛չ էլ  
մթություն անգամ մի նշմար, քանզի Կամքի՛ցդ  
են Կյանք ու Լույս ծագում: Մահ չե՛ս արարում,  
և երբե՛հ Քեզ չի՛ ուրախացնում կորուստը մար-  
դու, ու այս ամենը մեզ վկայեցին՝ Դավիթ՝ մար-  
գարեն և Սողոմոնն իր իմաստության մեջ:

Ե

Եվ մարդկանց առջև Կամքովդ ապրելու  
սահման կարգեցիր, բարեվիճակիդ պայման ու  
կանոն, որ՝ չարը չարով չփոխանակվի՛, այլ յո-  
թանասուն և յոթ անգամներ, յուրաքանչյուր օր՝  
թողնել եղբորը պարտքն իր մեղքերի, խոսքն այդ  
հատկապես մեզ է հասցելված, երբ բնությունից  
ուներք մեր ներսում բնավորության չարաչար  
բծեր, որ նորոգվում են անհամար թվով ու ավե-  
լանում, մարմնի օրենքով բուսնո՛ւմ են, աճո՛ւմ,  
այդպես՝ ամենքիս փշածին բնությո՞ն ի հայտ բե-  
րելով, ըստ ա՛յն ճշմարիտ Քո վկայության, թե՛  
մարդու մի՛տքն է չարիք խնամում իր մանկութ-  
յունից: Եվ Հովհաննեսը՝ Ավետարանիչը Կենացդ  
Բանի, նա, որ կատարյալ մաքրություն ուներ,  
սակայն լինելով մեր բնությանը լծակից կցորդ՝  
ճշմարտությունդ այս ի՛նքն էլ հաստատեց՝  
ստությունն իմ մեջ՝ մարմնի պատճառով գտնե-  
լով անգամ հույժ արդարացված, և այս է ասում.  
«Եթե ասե՛ք, թե՛ ո՛չ մի մեղք չունենք, այդ  
մե՛նք ենք՝ Նրան սուտ հայտարարում»: Տէ՛ր,  
Կատարյալ է Քո խոսքը խնկյալ և Գլխավոր է  
ու անպակաս իր ստուգության մեջ՝ մոլորում-  
ներս ու անիրավ կամքը դժդոակ վարքիս՝ Հենց  
ի՛նձ ցույց տալով: Այդ բանի համար Քո Ողոր-  
մությունամբ՝ Խնայիր ինձ էլ, Դո՛ւ՝ Քաղցրությա՛ն  
ճաշակման աղբյուր, Միա՛յն Օրհնյալը՝ այժմ,  
հավիտյաննե՛ր: Ամէ՛ն:





**Հեծեծանքների մի նոր հավելված  
Նույն իսկ հսկողից, նույն աղերս-  
ներով և մաղթանքների խոսքով  
միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍԿ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՄՈՒՆ  
ԲԱՆ ԺԶ**

Ա

Ճ՛վ արգ, Դու միայն Աստված Երկնա-  
վոր, Բարձրյա՛լ, Բարեգո՛րծ. գորությունները  
Քե՛զ են պատկանում, ներողամիտը Դո՛ւ ես  
միմիայն, բժշկությունն ու առատությո՛ւնն են  
Քո ձեռքով լինում, և Քեզանո՛վ են  
պարգևներն արդար, ձրի ձիրքերը Քեզնի՛ց են  
ծագում, քավություն՝ միայն Դո՛ւ Կարող ես  
տալ, պաշտպանությունը՝ հաստատ է Քեզ-  
նո՛վ, Քո՛նն են հնարքներն անիմանալի և  
անգտնելի արվեստները ողջ և անչափելի չա-  
փերը բոլոր, Դո՛ւ ես Սկիզբը՝ և Ավա՛րտն ես  
Դու: Քանզի երբեք խավարի բերած բար-  
կություն ու մեզ՝ չե՛ն ստվերացնում Ողոր-  
մությանդ Լույսը կենդանի, և անգա՛մ մա-  
սամբ Դու չես զրավվում որևէ ախտից. վե՛ր  
ես, քան Խոսքն է և կամ պատկերը աննկարե-  
լի, ավելի՛ վեր, քան՝ որքանությունն է  
կշռության, և անչափելի լայնության մեջ ես  
Քո իսկ փառքերի, ընդարձակությունդ հա-  
տու գորության՝ երբե՛ք չի փակվում տարրե-  
րի կողմից, Անամփոփելի առավելությո՛ւն  
բացարձակության, և գթությամբդ բարերա-  
րելով՝ հավե՛րժ Անտկար: Ըստ մարգարեի մեզ  
հայտնած խոսքի՝ Ինքդ Կարո՛ղ ես մահվան  
ստվերը վերածել արդեն նոր ծագող Լույսի,  
Դո՛ւ, որ կամովին տարտարոսն իջար՝ այնտեղ  
բանտարկված փակվածների մոտ, ուր դուռը  
գոց էր անգամ աղոթք ու մաղթանքի առաջ,  
և այնտեղ գերված ու վտարանդի հոգիներին  
ողջ, որ գողացված ու արգելված էին կողո-  
պուտի պես, Հաղթական Բանիդ սուսերի  
զարկի հրամանելով՝ մահվամբ սատակման  
կապը Կտրեցի՛ր, հեռու վանելով՝ կարծրութ-  
յունները նրանց մեղքերի: Դարձի՛ր իմ կողմն  
էլ, որ այդ գնդանի խո՛ր վիհն եմ ընկել, ես՝  
տղմո՛տ բույսս՝ մեղքի երկաթով շղթայակապ-  
ված, հին բանսարկուի արձակած նետի բյուր  
սլաքներից՝ վիրավորվա՛ծըս ու խոցվա՛ծըս  
խոր:

Բ

Դո՛ւ՛ ամենայնի Տէրրդ բարերար, Լո՛ւյս  
խավարի մեջ, Օրհնությամբդ՝ գա՛նձ, Ողորմա՛ծ,  
Գթա՛ծ, Մարդասե՛ր, Կարո՛ղ, Ամենագորե՛ղ, Ան-  
պատո՛ւմ, նաև՝ Անքննելի՛ և Անպատմելի՛, ըստ  
սուրբ Հակոբի՝ յուրաքանչյուրին բավականաց-  
նող, անգամ անհնար դեպքերի համար՝ դյու-  
րությամբ պատրաստ փրկարար հնարք, մեղքի  
խռիվներ մոխրացնող կրա՛կ, ընդհանրական ճա-  
ճա՛նչ կիզանող, որ մեծ Խորհրդով, ուր որ կամե-  
նա՛ ներս է թափանցում: Քո Ողորմությո՛ւնն հի-  
շիբ ինձ համար, և ո՛չ թե արդար իրավունքնե-  
րը ինձ դատապարտող, ներողությունը՛դ գոր-  
ծիր ինձ վրա, ո՛չ թե հատուցիր իմ հանցանքնե-  
րին. արդեն հավաստի պատժի փոխարեն՝ Համ-  
բերությամբդ ինձ խնամարկիր: Եթե մեղքերիս  
ծանրությունները դնես-կշռես, Քո Քաղցրութ-  
յա՛մբ այդ արա և ո՛չ Քո Արդարությամբ, քան-  
զի առաջին ուխտի համեմատ՝ թեթև են դրանք,  
սակայն երկրորդով՝ հավե՛տ ծանրակիր:

Գ

Արդ, մոտեցի՛ր ինձ բարերարությամբ, մո-  
տեցիր այնպես՝ ինչպես ականջը վերականգնե-  
ցիր հակառակորդիդ, մեղանչածիցըս հեռու՛ և հա-  
լածիր հողմերը մահի ու խռովության, թո՛ղ իմ  
ներսում էլ իջնի ու հանգչի Քո Խաղաղության  
Հոգի՛դ Զորավոր, փառաբանումնե՛ր բարձրա-  
նան Քեզ բոլո՛ր կողմերից, այժմ և հավիտյա՛նս  
հավիտենից: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
Նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍԿ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՄՈՒՆ  
ԲԱՆ ԺԶ**

Ա

Ո՞վ Խնամակալ՝ վտանգների մեջ գտնվող-  
ների, թախծության հոգով վշտացածների, և  
նրանց, ովքեր՝ իրենց ուսերին կրում են ծանր  
տաժանքի բեռներ, աղաչո՛ւմ եմ Քեզ, հեծութ-  
յուններիս ցավ Մի՛ Հավելիր, վիրավորվածիս՝  
Մի՛ Խոցիր այդպես, և արդեն պատժի մեջ  
գտնվողիս՝ Մի՛ Դատապարտիր, չարչարանքնե-  
րի մեջ կապկպվածիս՝ Մի՛ Տանջիր այդքան, և

Հարվածվածին՝ Մի՛ Գանահարիւր, Վար Մի՛ Գլորիւր արդեն ընկածին, գայթակղվածին Կործանման Մի՛ Տար, հեռու ընկածին՝ Մի՛ Մերժիր այդչափ, և Հալածանքի մեջ գտնվողին՝ Մի՛ Մասնիր արդեն տարագրութեան, որ պատկառում եմ Քեզնից մշտապես՝ Մի՛ Ամաչեցնիր. արդեն խրտնածին էլ Մի՛ Կշտամբիր խստասիրտ կերպով, մինչ վերջ բեկվածին՝ Մի՛ Տար խորտակման, ամբոխ դարձածին՝ Մի՛ Դիր կործանող խռովքների մեջ, և արդեն բուքի մեջ գտնվողին՝ Մի՛ Այեկոծիր, դղրդուկներից արդեն ցնցվածին՝ Մի՛ Սասանիր էլ, մրկով ընկածին՝ Մի՛ Թող Հավելյալ շփոթութեան մեջ, և գիշատվածին Մի՛ Տուր կեղեքման, սիրտս է կտորված՝ Մի՛ Զախախտիր էլ որպես Հավելում, և մորմոքվածին Մի՛ Տար Փորձանքի, Մի՛ Կուրացրու, երբ որ արդեն իսկ խավար եմ տեսնում, երբ ավիբերան ապշած եմ արդեն՝ Մի՛ Բեր Զարհուրում, խորշակահալում եմ, Մի՛ խորովիր ինձ, հիվանդ եմ արդեն՝ Մահ Մի՛ Բեր վրաս, սաստիկ տկարիս ծանր բեռների պարտքեր Մի՛ Դնիր, իմ ընդարմացած թիկունքի վրա Մի՛ Ավելացրու և Անտանելի՛ն, դառն Հեծութունս Մի՛ Դարձնիր արդեն կրկնակի ողբ, Հողի՛ս՝ Մի՛ Վարիր այդքան Ուժգնորեն, մոխրացածին դեմ՝ Մի՛ Սաստկացիր, և ստեղծվածին Մի՛ Քննադատիր Անաչառութեամբ, և արդեն փռուս վրա բարկացած՝ Դու Վրա Մի՛ Եկ Ահարկու Դատով:

Բ

Մեծերին արժան մեծ չափանիշով այդքան խստութեամբ փոքրին Մի՛ ձնչիր, Դու, որ Հենց Լույսն ես՝ ստվերիս առջև, Բնութեամբ Բարիդ՝ ի բնե չարիս, Ողկույզդ՝ Օրհնութեան՝ անեծքի պտղիս, Հա՛մըդ Քաղցրութեան՝ դառնութեանս Համակ, Անփոփոխորեն Փառավորյալը՝ փոփոխական ու ընկած անարգի՛ս, Նշխարդ՝ Կյանքի կավե զանգվածի՛ս, Տէ՛րդ տերերի՛ երկրային տիղմի՛ս, և Լիությունըդ Աննվագելի՛ սարկի՛ս Հանդեպ, որ տոչորվում եմ չքավորութեամբ: Անկողոպտելի ձոխությունը Քո՛ խեղճ տառապալիս, որ պատապարման մի՛ տեղ իսկ չունի, Կարիք չունեցող Բարությունը Քո՛ ամենաթշվառ տնանկ աղքատի՛ս: Քանի որ մի՛թե խելամիտ է նա, ով գալիս Հասնում է Առավոտին, բայց Լույսի ծագմամբ՝ ի՛նքն է մթանում, և կամ թե Կյանքի խոսքը կարդալով՝ ընկնում է մահվա՛մբ, կամ թեպետ Հասնում է ազատութեան՝ բայց շղթայվում է նոր նոր պարտքերով, կամ շնորհների

պարգևների մեջ՝ դատապարտութեան տակ է Հայտնվում, և կամ ի վերջո Հասած փրկութեան՝ դառնում է մասնի՛չ, կամ նորոգութեան՝ և եղծանվում է ու ապականվում, և կամ օրհնութեան ու՝ տարագրվում, դեռ նոր բժշկված՝ ստանում վերքե՛ր, և կամ լիութեան՝ բայց եղա՛ծն էլ է նրա նվազում, ալելի հաճախ Հայ ստանալով՝ մնում է քաղցա՛ծ, և կամ Հասնում է բարութեան գետի Հորդ Հոսանքների՛ն և... մնում ծարավ, և կամ մայրական անամպ գթութեան՝ ու նենգվում է Հանկարծ նրանից, և կամ խնամքին Աստուղ Սուրբ Աջի... ու խնամքից փախչում է Հեռո՛ւ:

Գ

Եվ արդ ինքս ահա նրանց Հետ ովքեր, մարմնին ունեն սաստիկ բորի ախտ, Հոգուս վտանգից խռովքով լցված՝ ե՛ս էլ նրանց Հետ պաղատում եմ, Տէ՛ր, եթե կամենաս՝ ի՛նձ էլ Կարող ես մաքրել ու սրբել: Նաև նրանց Հետ, որ աչքացավից մշտագիշերի մեջ են խարխափում՝ նրանց պես ի՛նքս էլ, Հսկայի ձայնով՝ վե՛ր եմ Հառաչում, բայց նրանց նման Քեզ չեմ անվանում լոկ Դավթի Որդի, այլ՝ Ծնունդն է՛ի, և դավանում եմ Քեզ որպես՝ Աստո՛ն, միայն Ռաբբի չեմ անվանում Քեզ, որով կոչում են վարդապետներին որպես թե պատիվ՝ որպեսզի իրենք իրենց ճանաչեն, այլ Հավատում եմ, որ Տէ՛րն ես երկնի և Համա՛յն երկրի: Եվ Դու ո՛չ միայն կողքիս լինելով Կարող ես Զեռքդ պարգել, Հպե՛լ ինձ, ինչպես որ նրանց, ո՛վ Դու Բարեգութ, Մերձավոր Աստված, այլ գտնվելով Երկնային անհուն մեծ տարածութեան Հեռու մի վայրում՝ գորո՛ւ ես խոսքովդ, եթե՛ կամենաս իմ բոլոր ախտ ու ցավերը բուժե՛լ: Ողորմութեանըդ և Կամքիդ միջև խտրություն չկա, կասկածներ չունե՛մ, որ երկմտութեան նշան կլինեք, այլ Կամենում ես, որպես Բարեգութ և Իրագործում, որպես Արարի՛չ: Խոսքո՛վդ Ասա և՛ պիտի բժշկվե՛մ: Հարյուրապետի Հավատին ի՛նքս էլ լինեմ լծակից, ո՛չ միայն, եթե խորանից խորան Հեռու լինիր, այլ Հավատում եմ, որ Դու կարո՛ղ ես և՛ Հարություն տալ, և՛ բժշկություն՝ անգամ երկնքում բազմած լինելով. և ողջ երկրով մեկ՝ Քո սքանչելի՛-մե՛ծ Հրաչքներն ես ամեն ժամ գործում, որոնց փոխարեն ես չունե՛մ ոչ մի Հատուցելու բան:

Դ

Շնորհիր ի՛նձ էլ, ինչպես արեցիր խոսքիդ վճիռով՝ բանդել Հանելով դատակնիքը անգամ

պոռնիկի՝ հինգհայրուր դինար նրա պարտքն իրեն իսկ չնորհելով: Աստված բարուծյան, Տէր երանության, որ հաճախորեն ամենուր բաշխում, փառավորվում են բոլոր կողմերից՝ բազում անգամներ, և որքան շատ են պարզ և շնորհում սիրվում են նույնչափ, որքան առավել են ողորմությամբ՝ բարգավաճում են այդքան ապվելի, և այդքան բարի բաների համար գովվում իրավամբ, և յուրաքանչյուր գոյության, որոնք Քեզանով եղան, ճանաչեցնում են՝ իբր հավասար Քեզ: Եվ ամենայն բան, որ մեր ներսում կան՝ Քեզնով են արժեք. Անվիճարկելի՞դ՝ այդ ամենը մեզ տալիս են ձրի՞, որ Քո՛ տվածով մեր իսկ միջոցով վճարում անես, պարտքն երկրավորիս այդպես մարելով՝ անվախճանական Քո վարկերի մեջ: Եվ գոհանում են՝ մեր արդյունքները գնահատելով և ավելացնում մեզ կրկնակի՛ն, իսկ ով տալիս է քիչը ամենա՛ փառավորում են, ո՛չ թե նախատում: Մեծ պարգևներիդ երախտիքներով՝ ինձ համար էլ նույն գթությունն արա՛՛ վճարելով իմ պարտքերն անհամար: Եվ այս Նո՛ր կարգով կրկի՛ն, նորից նոր՝ Միրենի հաստատվեց: Եվ ամեն բանում թող լինի Քեզ փա՛ռք: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՕՈՒՆ  
ՔԱՆ ԺԸ**

**Ա**

Արդ, ես՝ ծնունդս անդարձ մեղքերի, որդի՛ս՝ մահացու երկունքից ծնված, բյուր քանքարների տուճի ենթակա՛ս, որ պարտավոր եմ մեկ օրվա մեջ իսկ ողջը հատուցել լիարժեքորեն, սակայն ես ո՛չ թե մարդկային մտքի փոքրիկությամբ եմ ներումն իմ հայցում, այլ հույսս դրած աննվազելի Լիությանը Քո, Հիսու՛ս Քրիստոս, այդպե՛ս եմ միայն պաղատում Քեզից Մարդասիրություն: Չկայի երբեմն և՛ Ստեղծեցի՛ր, ես չաղաչեցի՛, որ լույս աշխարհ գամ՝ Դո՛ւ Արարեցի՛ր, լույս աշխարհ չեկած՝ Տեսա՛ր ինձ արդեն, չէի հայտնվել՝ արդեն՝ Գթացի՛ր, դեռ չէի խնդրել՝ Խնամարկեցի՛ր, ձեռքերս չէի բարձրացրել Քեզ՝ արդեն Նայե-

ցի՛ր Բարերարելո՛ւ, չէի հասցրել պաղատանքս անել՝ ողորմությունը՛դ իջավ ինձ վրա, իմ ձայնը դեռ չէ՛ր էլ ձևավորվել, սակայն՝ Լսեցի՛ր, չէի՛ հեծեծել՝ բայց Ունկընդրեցի՛ր, և գիտենալով գրավածների ողջ արդյունքը դժվար՝ ինձ Չանտեսեցի՛ր: Սկզբից ևեթ իմ՝ պատժապարտիս չարագործությունը բազմատեսակ, Քո նախահայաց աչքով տեսնելով, այնուամենայն, Կարևո՛ր գտար, որ ինձ Ստեղծես:

**Բ**

Եվ արդ, որ Քեզնով՝ ես արարվեցի, փրկվեցի Քեզնով՝ Քո խնամարկու հոգատար ձեռքը մշտապես վրաս, նայիր, որ իսպա՛ռ չկորցնես ինձ՝ թույլ տալով իմ մեջ Բանը սակարկող չարի գյուտերին. թող համառության իմ մառախուղը երբեք չհաղթի՛ ներողությանդ փրկարար Լույսին, և ո՛չ էլ սրտիս կարծրությունը մեծ՝ Բարությանը Քո, որ մշտապե՛ս են հեռուն դիտարկում, ո՛չ էլ մահացու մտեղս երբեք՝ ամենակատար Լրությանդ անհուն, ո՛չ էլ նյութական տկարությունը՝ Բարձրությանդ՝ հանդեպ՝ հա՛ր անպարտելի:

**Գ**

Եվ արդ իմ հոգու բազուկներն ահա Քեզ՝ եմ երկարում, Քո Անվա՛նն չզոր, որ ինձ վերատի՛ն ձևակերտելով դարձնես առջևդ այն նախկինը, որ՝ կայի դրախտի փափկության այգում, ուր քաղում էի պտուղը կյանքի: Եվ ուր կաշկանդված և խոր կործանմամբ արդեն գոսացած կնոջ տագնապով՝ հոգիս հայտնվեց մի անուղղելի թշվառության մեջ, սատանայական բուռն կապանքով՝ մեղքի բեռան տակ հակվեցի երկրին, և ամոթի մեջ թաքնվեցի այնտեղ, ամաչո՛ւմ էի, որ չլինի թե՛ Երկնայինիցըդ ինձ ողջույնն առնեմ: Բայց Խոնարհվեցի՛ր, Միա՛յն Ողորմած, որ բարձրացնես արդեն վայր ընկած, փայտի վերածված բանավոր ծառիս, և չորացածիս կրկի՛ն ծաղկեցնես՝ բարի կրոնի վայելչության մեջ, ըստ աստվածաբան սուրբ մարգարեի մեզ խոսած խոսքի:

**Դ**

Որպես ի ծնե լուսազուրկ մի կույր՝ չունեմ՝ այնպիսի մի տեսողություն, որով Արարչիդ դեմքը տեսնելով՝ այդպե՛ս դիմեմ Քեզ՝ Հզո՛ր, Բարեգո՛ւթ, Միա՛կ Պաշտպան իմ, որ դեռ սկզբից՝ շնչավորական խոսուն անոթիս ի հայտ

ես լինում՝ անվիճարկելի Քո անամպ սիրով ու խնամքներով մխիթարություն, որ այդպես անէ անկերպությունից՝ գոյավորություն կարգի բերես ինձ և ապա արդեն՝ Լույսով Հաստատես: Ծանր վշտի տեր այն կնոջ նման, ով որ տասներկու տարի շարունակ չարից չարչարված՝ ինքս էլ մեղքերիս գետերով ահա, մեղքերից ծագած արյան Հեղեղով՝ Քեզ եմ դիմում, Տէ՛ր. Քո բարձունքներից Հայացքդ ի՛նձ ուղղիր՝ անմատուցյց Լույսովդ պարածածկյալ, ուր ձեռաստեղծ Քո վերարկուի քղանցքը չկա, որ կարողանամ ձեռքովս ի՛նքս էլ փեշերիդ դիպչել, այլ տարածումն է Քո Հրաչքների՝ ամեն կողմերի Հզորանալով:

Ե

Ես՝ պատժապարտս՝ չմատուցեցի՝ Քեզ օծություն յուզ՝ չկարողացա՝ Քո կենդանաձիր ոտքերը օծել՝ Ավետարանի մեղավոր կնոջ Հար նմանությունամբ, ո՛չ էլ աչքերիս կաթիլներն ընկան ոտքերիդ վրա, որ մագերթով սրբի դրանք՝ որպես Քեզ ինձնից ընծա խոնարհում, սակայն ես ահա բարձրացնո՞ւմ եմ Քեզ բազուկներըս վեր՝ անբի՛ծ Հավատով, ստո՛ւյգ դավանմամբ, Հոգուս ողջունո՞ւմ՝ երկրպագո՞ւմ եմ՝ իմ Հեծությունը խառնելով աղբյուրն արտասուքներին՝ այդպես եմ Հոգուս բժշկությունը աղերսում Քեզնից:

Զ

Գոյությունն Հոգուս մեղքերով վատնել, քայքայել եմ ինձ մեղկություն վարքով, և ոտքերս երկու նույն կողմն են գնում՝ անհաստատ ճամփով, իրենց ընթացքով՝ չարից նահանջման անկման Հետքերով, մարմնիս շինվածքը կրել տանելով դեպի կործանում՝ այդպես այն պահից, երբ կյանքի ծառի կենսատու պողին արժանի չեղա, բայց պատրաստեցիր այդտեղից կրկին՝ իմ փրկությունը՝ դեպի Քեզ բերող: Փառաբանություն խորան էի ես Քեզնով Հաստատված, ամրափակ խցմամբ, ե՛կ, արգելակիր Հողմերն այն բուրբ, որ բանասերուն է բերում չորս կողմից ու լցնում իմ մեջ, սակայն Քո Հողին լեցուն է անհուն ողորմությամբ Քո, մե՛ծ ու կատարյալ գթառատությունամբ, որով էր, որ Տէ՛ր, Դու բժշկեցիր Ավետարանում հիշատակվածին, ի՛նձ էլ շնորհք տուր՝ Բարեգործությամբ Քո հրաշափառ, որ ե՛ս էլ խոսեմ անսայթաքելի՝ Կենդանի Բանիդ տված պարգևով:

Ե

Արդեն ընկածի կամ չարի դրդմամբ մեղքի ախտերի մահիճն եմ ընկել, դի՛ եմ կենդանի և խոսող մեռյալ, կարեկի՛ց եղիր թշվառությանն իմ, Միածին՝ Որդիդ, Բարերարն Աստծո, Լսի՛ր ողբերգող ձայներն իմ, որոնք՝ իմ տանջանքների խորքից են ելնում, Քո օրհնաբանյալ աչքերի ցողով, իբրև սիրելուդ՝ ում անչնչական մեռելությունից կյանքի կոչեցիր, վերականգնեի՛ր, ի՛նձ էլ կոչեիր կենդանության մեջ: Որ Հաստատապես խիստ դառնացած եմ մեղքերի գբում կամ տարակուսած. Ձե՛ւքդ երկարիր ինձ՝ կյանք մատուցելու՝ Արև՝ անստվեր, Որդի՛ Բարձրյալի. Հանի՛ր այստեղից ինձ Քո Լույսի մեջ՝ թեկուզ նշո՛ւյլ մի:

Ը

Նայինի այրուն միացած ես էլ, որ աղիորմ թշվառ կականով իր միամորիկ որդուն էր ողբում՝ ձեռք ու մատները ի վեր ճոճելով, կրճքի կոծերով, արցունքի Հոսմամբ, տվայտանքներով դեմքի տիրություն՝ ես էլ նրա պես վերջին Հեծությունամբ պաղատում եմ, Տէ՛ր, Հուսահատվածիս Քաջալերանք տուր, Մխիթարություն՝ Բանիդ գթությունամբ, ո՞վ Բարի գովյալ և Ստեղծիչը նաև աշխարհի, ի՛նձ էլ ասա, թե՛ էլ լաց մի՛ լինիր այդքան ողբալի, և Դու, որ գթով, մեռած պատանուն կենդանացրի՛ր՝ Հանձնելով նրան իր ծնողներին որպես սիտփանք, ամեն բանի մեջ պարտավոր ողուս, այդ պատանու պես, Կենդանությունամբ ոտքի՛ Հանիր, Տէ՛ր:

Թ

Եվ այն այսահար անգգամներին, և՛ դիվալլուկ և՛ քարակոչիճ, և՛ գիսախոփ մագերթով իրենց, և՛ Հեղձամաղձուկ, և՛ քստմենլի, եղկելի՛ անձանց, որ առջևդ էին, ինչպես վայրադեմ բանդագուշակներ, սակայն Դու նրանց ողորմեցի՛ր, Տէ՛ր, ապաքինեցի՛ր, Փրկի՛չ բուրբի, իբրև նրանցից մեկն եմ դիմում Քեզ. Հերքելով՝ մերժի՛ր գունդը չարերի, որ ինձ՝ Քո խորանն են ապակառում, որ մաքրագործվեմ և լինեմ արժան Հողուն Քո Բարի, որ Գա ու այլևս Հանգչի իմ ներսում, լցնի մարմինս մաքրություն չնչով և անդամներս կյանքով կենդանի՝ ամենաթշվառ խեղագարվածիս զգաստացնելով:

Ժ

Դժոխաբնակ գերվածների Հետ ա՛յն Հոգիների, որ՝ վտարանդի, որ՝ արգելված են, կամ

վտանգի մեջ՝ Քեզ եմ աղերսում, որ ողորմութեան Քո ճառագայթը և Փառքիդ Լո՛ւյսը ծագի ինձ վրա: Ե՛կ ու ազատի՛ր ինձ օժոտողի նենգ կապանքներից, ապրեցրո՛ւ ինձ էլ, Լո՛ւյս իմ անձկալի: Գաղտնաորոգայթ, աներևութիան հայտ, չեղ արահետով, մեղքիս ջրգողով հիվանդութեան մեջ՝ գարշութեամբ լցված, ոգուս տեսքն ահա խոր տագնապնեռում, տեսողությունից ծածկված խածմունքով հին չարագործի, որի թուլնից եմ ահա այտուցվել, Ե՛կ, Որդի՛դ Աստծո, Քո Ինքնանապորդ մե՛ծ գորեղություն, Գլխարտություն, որ ղեկավարում է ինձ էլ: Ինչպես որ բազում ցեղերը ունեն տարբեր տարազներ, այդպես մեղքերս են գանազանակերպ՝ ամենքն էլ մահվան իրենց ախտերով, յուրաքանչյուրն իր կորուստն է բերում՝ դժոխակարմատ և նաև իրենց շառավիղներով, որ հաստատվել են անդաստանի մեջ անօրեն մարմնիս. Տէ՛ր, տարակորզի՛ր մարդասեր Ձեռքովդ ամենակալի՛ մեղքերից բոլոր, ախտերից նրանց: Որ հոգիներն Ես հերկում-մշակում իրենց սահմանում, Խոսքիդ արորով իմ դա՛շան էլ հերկիր, որ լինեմ արդեն Քեզ արդյունավե՛տ, թող Բանիդ սերմով՝ այլևս արդեն կյանքի՛ արդյունք տամ:

ԺԱ

Եվ քանզի ահա, ըստ օրենքների ցույց տված մեղքի՝ Հանցանքներն իմ ողջ ի դերև ելան՝ քաղցկեղի նման ճարակելով ինձ՝ մարմնիս բոլոր անդամներին էլ ախտ տարածելով, և ինձ էլ, ինչպես որ Խարայելին՝ ասացին՝ չկա՛ էլ սպեղանի, և խարաններին վերքերիս արդեն՝ թիվ-համար չկար, ոտքերիցս էին վերքերն սկսվում՝ մինչև կառույցը մարմնիս մյուս անդամներին էլ, ո՛չ մի առողջ տեղ չունիի արդեն, և դարձել էր ողջն անբժկելի: Իսկ Դո՛ւ, Ողորմա՛ծ, Բարերա՛ր, Օրհնյալ՝ և Երկայնամիտ անմահ Թագավոր, ունկընդի՛ր եղիր պաղատանքներիս՝ սրտիս վտանգի արգահատություն, որոնք պատմում եմ իմ նեղություն մեջ, Տէ՛ր ամենայնի, որ սպեղանի՛ դնես վերքերիս:



**Հեծեծանքների մի նոր հավելված**  
**Նույն իսկ հսկողից, նույն աղերսներով և մաղթանքների խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ**  
**ՈՒՂՂՎԱԾ ԱՍԾՈՒՆ**  
**ԱԱՆ ԺԹ**

Ա

**Ամենահայաց տեսություն** կյանքի, հույսի՛ բարություն, ուշադիր՝ եղիր հոգուս ցավերի աղաղակներին, Հեծեծանքներին, որոնք բերում եմ մեծ բարբառումով: Անհաս՝ մեծություն, Անո՛ւն ահավոր, Բարբա՛ւ կենդանի, և Ցանկալի՛ լուր և նաև ճաշակ հույժ ախորժելի, Կոչո՛ւմ պաշտելի, Խոստովանելի՛ բարերարություն, Ազդո՛ւմ խնկելի, նաև Իսկություն հար դավանելի, Միա՛կ էություն փառք տալու արժան, Միա՛կ գոյություն օրհնաբանելի, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, գոյվա՛ծ Քո Հոր հետ և երկրպագվա՛ծ, և Սուրբ Հոգուդ հետ բարձրացա՛ծ վեր և վերաճայնվա՛ծ: Որ մարմնացար ըստ մեր կերպարի հանուն այն բանի, որ՝ կենդանության առաջնորդես մեզ, որպեսզի կերտե՛ս, վերանորոգե՛ս Քո՛ նմանություն, Լո՛ւյս ամենայնի, և ամենայնի Ողորմա՛ծ Աստված, Հզո՛ր, Երկնային: Այժմ հողանյութ այս անտիս, որ՝ քանդվել է արդեն, խորտակվել՝ իսպառ, աղաչո՛ւմ եմ Քեզ՝ զթառատություն կրկին՝ նորոգիր, կրկին՝ հաստատիր՝ հրաշակերտող Քո աստվածային արարչություն մեջ: Նախքին պատկերը, որ տվել էիր, և որ դարձրեցի մեղքով հնացած՝ հալի՛ր քուրաշուկ կայծակող խոսքիդ, և վերստի՛ն ինձ ձուլի՛ր նորից նոր: Պաղատո՛ւմ եմ Քեզ. արդեն խախտված, բանի պետք չեկող շինվածքիս, ո՛վ Տէ՛ր, դարձրու արդեն մարմնե՛ խորան՝ հանգստյանդ համար, որտեղ որ հոգիս լինի՝ Քո հզոր պահպանություն տակ՝ շարունակական բարերարություն և մաղթանքների լի հոգածություն: Մաքրագործի՛ր ինձ կատարելապես, որ արժան գտնես իմ մեջ Բնակիչ: Իմ չարիքների դիմաց նույն չափով չար մի՛ հատուցիր: Հարբա՛ծ եմ ահա, ըստ մարգարեից լսած խոսքերի և ո՛չ թե գինուց. մահվան բաժակիս անօրենություն թմրությունը ողջ՝ Հրամաններով՝ Քո ազատարար ամենակեցույց, թափիր՝ մինչ հատակ, որպեսզի վերջին օրը հատուցման՝ դատից ինձ փրկե՛ս:

Բ

Միշտ արդար ես Քո իրավունքներում, իսկ դատաստանում՝ հաղթո՞ղ ես և ճի՛շտ. թե մահ-վա՛ն մատնես, միևնույնն է, Քո՛ գործն է ճշմարիտ, եթե այստեղից սկսած դատես կշտամբուլթյան ու դառն տանջանքի՛ հատուցումները՝ դե ստույգ ու արդա՛ր. թե անդուռդների մեջ խորասուզես, կենդանությունը, որը և հի՛մքն է ողջ շարժումների, եթե վերցնես, եթե խոսքերիս ուժը գորավոր դարձնես դատա՛րկ, եթե աչքերիս պատուհանները պատես ստվերո՛վ. կյանքի ճաշակը, որ Քեզնով ունեմ՝ եթե գրկելով՝ Քո մեջ ամփոփե՛ս, թե հասարակաց կերակուրները, որ դարման են մեզ՝ վերացնե՛ս մեզնից, եթե ապրելուս օրերը առատ համառոտեցնե՛ս, եթե քաղցրության ցողիդ հետ մեկտեղ՝ Հո՛ւր տեղաս վրաս, և եթե Բանիդ կենդանի հացից գցես սուլի՛ մեջ, թե ականջներիս դռները խցկե՛ս, շնորհիւ ձեռք թե կտրե՛ս ինձնից, թե ոտքերիս տակ գետինը ցնցե՛ս սասանումներով, եթե երեսիդ Լույսի կարտոից վանե՛ս ինձ հեռու, թե այս աշխարհից դո՛ւրս հանես իսպառ՝ ահավոր հրի փայլատակումով ինձ գետնի՛ն նետես, եթե ցավերով անբժշկելի դատաստանի՛ մեջ դնես շարունակ, եթե ինձ մատնե՛ս չարք ու դեերին, թե դազանների ժանիքներով ինձ փշրես ու մանրե՛ս, թե ցասման հողմե՛ր հոսեցնես վրաս, և կամ թե սրանց նմանությունով այլ տանջանքների հարվածո՛վ զարկես՝ տարտարոսից էլ չար պատիժներով, գեհնի՛ց սաստիկ և առավել՛ս թունավորագույն, քան երբ որդերն են մարմինդ խժռում, անգամ ավելի՛ տարակուսելի, քան թե խավարը՝ ո՞ղջ տարակուսանք, և կամ ավելի՛ էլ երկյուղագին, քան խորխորա՛տը խոր անդուռդների, և առավելագո՛ւնյն ողորմելի, քան երբ՝ մե՛րկ է մարդ։ Եվ այս ամենը ի՛նքս եմ վկայում, ամեն պատժիդ հետ՝ Քե՛զ իսկ պարտական ինքս մնալով։

Գ

Քանի որ հավետ սպավորվում են մեղքերը իրենց ազգակցության մեջ և բազմատեսակ նմանություններ ունեն իրար հետ՝ մեկը մյուսին փոխակերպվելով, և տալով իրենց խոսքերը իրար՝ մեկը մյուսին պատկերակից են կամ նույն տեսակի, կամ զուգաշավիղ՝ իրենց խորհրդի հենց նույն նշանը իրար ցույց տալով, և հատուցումն էլ դրանց ամենքի՛ նո՛ւյնն են ու նման, ա՛յդ բանի համար խիստ կարևոր է, որ խոստովանենք և հանդիմանենք այն ամենը որ՝ ունենք

երեսի ծածկույթների տակ, և այդ ամենին մենք ծանոթացնենք՝ մեզ Որոնողին։ Որ չլինի թե մեր իսկ ընկերոջ կարիքի պահին՝ առանց ջերմության պետքերը հոգանք, որ հին վտանգի նման սառնություն ու տազնապ ունի։ Եվ եթե հանկարծ չկարողանամ ինձ ցանկականի խորխոսացնողին ի՛նքս իմ մեջ սանձել, այդժամ եղկելիս պիտ արժանանամ անզովանալի՛ կրակով այրման։ Եվ որովհետև որքան որ ինքս իսկ չսիրեցի Քո Լույսը ավետող, այդքան իսկ պիտի արդար հատուցամբ ընկնեմ մթության բռնատեր միգու՛ւմ և այդ կորստյամբ Լույսից վրիպած պիտի դանչդանչեմ։ Եվ որովհետև խորականություն չդրեցի ես փոքր մեղքերին, իբր անվնաս են՝ դրանք կոչելով, բայց ահա դրանք, որ խածնող իսկ են իրենց բնույթով, խթաններ դարձան, որ գեռուներին զազիր հարձակմամբ՝ խոցեր ստանամ։ Սակայն, քանի որ՝ ձեռք չերկարեցի՝ կրքի վտանգով գլորված մեկին, այս օրինակի համաձայն ինքս էլ՝ դարչ ապականման փոսին նվիրյալ՝ ինքս ինձ ակամա՛ դրան եմ մատնել։

Դ

Եվ արդ, ո՛չ թե Քո՛ ամենաբարի Աստուղ գանձերից չարիքներս եղան, և ո՛չ էլ Լույսիդ ճառագայթներից՝ գործերս խավար, ո՛չ էլ երբևէ ինձ կյանքով լցնող Քո գորությանը ապավինելուց՝ գայթակղություն, այլ ես՝ ի՛նքս ինձնից՝ կորստյան որդիս՝ այդ չարիքներն իմ մեղքերո՛վ գտա։ Անօրենության մեղքե՛րն ինձ համար դանձերն իմ եղան, որոնք նյութեցին, պահեստս լցրին՝ այնքա՛ն ու այնքան բարկության մթերք։ Որովհետև որ՝ հոգին մոլորող իշխանի՛ն եղա ես հնազանդված, և նրան թողի՛ Քո՛ տեղն հատկացված՝ ինչպես որ Գիրքն է հանդիմանությամբ խոսքն այդ խրատում։

Ե

Եվ քանզի արդեն հայտնի դարձվեց մարմնիս անդամոց գաղտնիքները ո՞ղջ խայտառակությամբ, և անվայելուչ ստվերն ամոթի երեսս պատեց, ըստ մարգարեի ասած առախի՛ տգեղությո՛ւնս ցուցադրելով, որ հար և նո՛ւյնն է, ինչ պոռնիկինը, ում խայտառակ բարքն ի հայտ է լինում։ Ծագեցրո՛ւ վրաս Լույսը քավության, Արքա՛ երկնավոր, որ թոթափե՛մ իմ մեղքերի փոշին, ինչպես ավետյաց ձայնն է մեզ հայտնել Բաբելոնից ետ դարձողաց մասին, ի՛նձ էլ նրանց պես ընկաժս տեղից նստեցրո՛ւ կրկին և հողից



կրկին ոտքի՝ վեր հանիր, և ընդունի՛ր ինձ Լույսով հիմնածղ անասանելի հաստատության մեջ՝ Եսայու ասած խոսքի համաձայն, Ձորությամբ Բազիլի՛ նախնի մաքրությանը՝ ս արժանացրու հանո՛ւն Քո փառքի քաղցր մեծության և աստվածությանը ամենապարզև՝ հավիտյա՛նս Օրհնյալ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՕՈՒՆ  
ԲԱՆ Ի**

**Ա**

**Տե՛ր, Տե՛ր** իմ Աստված, և Անոխակա՛լ և Երկայնամի՛տ, Ներո՛ղ, Բարեգո՛ւլի, Հզո՛ր, Ողորմա՛ծ, ճշմարտությամբ են ողջ գործերը Քո, դատաստաններդ՝ մի՛շտ խոստովանված, ընտրություններդ են արդեն վկայված, և Դու տեսնում ես ծածուկներից՝ ներս: Երեք երջանիկ այն մանկանց նման, որ փորձվեցին Բաբելոնի մեջ կիզանող բոցով, սակայն ոչնչո՛վ չվնասվեցին. նրա՛նց թախծության երգն եմ հառաչում. «Մեղավորվեցի՛, անօրինացա՛, հանցա՛նք գործեցի, ապստամբվեցա՛, ցավոք, չանսացի՛ պատվիրաններիդ»: Քանի որ նրանք մաքուր լինելով այդ վնասներից, սակայն նրանք էլ բանն այս գոչեցին խոստովանությամբ, իսկ ես նրանց հետ նոր աղերսանքով՝ նույնն եմ ձայնակցում այս ողբերգության երգերի շարքով, բայց հավելելով մահվան արժանի բոլո՛ր պարտքերն իմ: Դանիելի հետ՝ սուրբ ու երանյալ մե՛ծ մարգարեի, որը իր ծագման հարազատությամբ ազգակա՛նն է Քո՛ Հուդայի ընտրյալ շառավիղներից, նրա ընդունած ու նվիրական խոսքերի աղերսն ի՛նքս էլ վերցնելով, պատժականության իմ գոչումներով, հեծեծանքներով՝ նո՛ւյնն եմ կրկնում ահա Քո ատջև:

**Բ**

Գիտությունը մեջ անպատշաճակա՛ն կամքով գնացի՛ դժոգակապես զարտուղի սխալ գործադրելով, և մեղանչելն իմ դրանք իսկ էին՝ ամենուրեք և ամենա՛յն բանում: Ըստ Քո հաստատած չափ ու կշռի դրած սահմանից՝ մի՛շտ դուրս

վազեցի, որն էլ ինձ համար դարձավ հավաստի անօրենության բասի՛ր կերպարանք: Անգետների չափ չարության գործեր՝ մեծ հաճախությամբ ի՛նքս էլ նյութեցի՛ մի՛նչ դրանց լրում, որ և ճշգրիտ պատկե՛րն եղավ իմ հանցավորության: Սպառնացի՛ր ինձ՝ չզարհուրեցի՛, արգահատեցի՛ր՝ ունկընդիր չեղա՛, և դարձա այսպես իմ խեղաթյուրմամբ՝ ապստամբության հայտնի՛ նշանակ:

**Գ**

Արդարության վեհ հանդերձանքները Քո՛նն են, Բարերա՛ր, իմը՝ ամոթն ու պատկառանքը խոր, Քե՛զ են արժանի բոլոր վայելուչ փառքերն հավիտյան, իսկ ինձ արժան է՝ նախատինքները՛դ խոնարհ ընդունել: Քեզ քաղցրության հիշատակներն են Քո իսկ գործերի բարի ընթացքի, իսկ իմ արածից մա՛ղձ է քացախված՝ որպես ինձ արդյունք: Քե՛զ են արժանի գոհության ձայն ու բարեբանություն, իսկ ինձ, որ՝ ողբի աղաղակներս բարձրացնեմ Քեզ, և բարձրացնեմ այնքա՛ն, որքան որ՝ բարի կամքիցդ հեռու ապրեցի: Քե՛զ են արժանի երգերն օրհնության խնկի բուլբուլի հետ, իսկ ինձ՝ մերժում և տարագրություն: Քե՛զ են արժանի իրավունքները բոլոր պատվական, ի՛նձ՝ պատասխան տա՛լն ամենավարան: Անվիճարկելի գովեստներն են Քեզ միայն պատշաճում, իսկ ի՛նձ՝ մոխի՛րը լիզելու պատիժ և ձաղկումներն իմ գործած մեղքերի:

**Դ**

Եվ արդ, Քեզնից է բարու ընտրության սահմանն անկշիռ և խնկի պտղի բույրն ախորժալի՛ ըստ Քո կամքի է բարձրանում Քեզ, իսկ ես, ունեցած իմ արժանիքի՛ ստանում եմ դեռ հոգս ու պարսավանք, այն էլ՝ կրկնակի՛ բարդված ինձ վրա: Իսկ թե անարատ վարքերի համար հանձնառությունն էր այս տարանջատմամբ, հապա էլ ինչո՞ւ հյուսեցի տողեր, խոսք, որ պատշաճ է լուկ դրսիներին, որոնցով ահա ամենազօնի բարք պարողների ճակատագրով՝ հավիտենապես՝ դարձա վրիպող: Եվ ինչո՞ւ պիտի ես մոլորվեի անառակության ընթացքների մեջ՝ վայրենի՛ մտքով, և կամ ինձ տված Քո շրթունքներով, ինչո՞ւ խոսեի երկրավոր բաներ, ինչո՞ւ զրկեցի ինքս ինձ գործերից, որոնցում կյանք կա, սեր ու պատկառանք, ինչո՞ւ վիզվեցի իմ դատարկությամբ մեծամտելով, երբ քիչ ժամանակ՝ ու պիտի իջնեմ մահվա՛ն հողի մեջ, գոռոզացա՛, Տե՛ր, և

Հանիրավի՛ բարձրացրի ինձ վեր, երբ գրավական չունեմ ինքս ինձնից՝ չո՛ւնչս իսկ պահելու:

Ե

Ամբարտավանեցի՛ փոշիս շնչավոր, անբարեհաճեցի՛ կալս ճայնավոր, և հպարտացա՛ հոդս անարգության, և վե՛ր խոյացա, երբ այլ բան չեմ, քան՝ մոխի՛ր մերժելի, բազո՛ւկ բարձրացրի՛ երբ այլ բան չեմ, քան՝ բաժա՛կ փշրելի, և տարածվեցի ինքս առավելով, որպես վե՛ս ու վե՛հ, սակայն հերքված ու չընդունվելի՛, կրկի՛ն ինձ դարձա ու ամփոփվեցի կրկի՛ն իմ ներսում, տի՛ղմս բանավոր. բարկության՝ բոցով, ցավոք, ցուլացի, իբր անմե՛ռ մեկը՝ մեծամտեցի՛, ես, որ՝ մահվամբ եմ չլթայված-փակված չորքոտանո՛ւ պես: Ձեռք երկարելով իմ գիրկը առա կորստի՛ կենցաղ, թիկո՛ւնք դարձրի, երբ որ դեմ դիմաց Քե՛զ գայն էր ինձ կյանք, մտքիս թոխչըը գործադրեցի՛ խավա՛ր խորհրդոց մեծ սլանալու, մարմնիս փափկությամբ հավե՛տ հյուծեցի անարատ հոգիս, տկարացրի՛ գորությունն աջիս՝ ձախի՛ս ուժ տալով, ինքս ինձ պարտությա՛ն առաջնորդեցի, սակայն Քեզ տեսա միշտ ինձ հոգացող և անպատմելի, այնքա՛ն մարդասեր, որ այստեղ գրել չեմ կարողանա, և այդ ամենից հետո էլ՝ կրկի՛ն չպատակառեցի:

Զ

Վայրի հավքի պես կրկին սլացա արդեն իմ թողած սովորութիւններին, ինչպես Օլիսն է Եփրեմին հիշող նուէն բանը ասել: Աղոթքի վայրում պատահունքներին՝ համակ ուշադիր՝ խորհեցի միայն կենցաղիս մասին: Բանականության երասանակով՝ մտքիս ձիերին չկարողացա՛ ոտքի բարձրացնել, այլ հին ունեցած չարությունները իմ նորոգելով՝ ավելացրի՛ նորե՛րը նորից: Ըստ Հոբի խոսքի, ծա՛նր-անտանելի՛ վերքերը վրաս՝ սաստակացրի՛ գրանք իսկ՝ ինձնո՛վ: Ըստ Երեմիայի՛ դարձրի ինձ հագո՛ւստ անկարկատելի, դարձրի ինձ՝ վիժվա՛ծք, մի անգրելի՛ կոչման հետևորդ, որ առակողն է այդ մասին խոսել: Ես համարվեցի մարդկանց կարգից դո՛ւրս, ինչպես Եսայի՛ն հայտնի արեց, թե՛ ինձ կերպարեցի դաշտանից արդեն ապական դարձած զազրահագուստի՛ հար նմանությամբ: Որպես թրժված խեցեղեն աման՝ այնքա՛ն մեծ թափով փշրվեցի, որ չե՛ն էլ տարբերվում իմ անդամները մեկը մյուսից, ըստ մարգարեի՛ Եղովի՛ մասին մեղադրական խոսքերով, ի՛նքս էլ՝ անօրենությամբ սա-

տակման համար՝ չորրո՛րդ աստիճանն ինձ պատրաստեցի: Եվ ի՞նչ ստույգուն կա այս բանի մեջ, որ հավելում եմ սրանք իմ խոսքին, քանզի Մոդոքի դեւերին զոհող վրա՛նն ինձ առա, որտեղից միայն ծառանգությո՛ւնն է լափող դժոխքի: Այսպես, լքելով երկնայի՛նը իմ օրինակով և նմանագիր ձևակերպությամբ՝ նմանվեցի ես բաբելոնացի ե՛ղծ Ռեփանի աստղի պատկերին, որն էլ մոլորված Իսրայել ազգից բարձրացվեց վեր, պատվովեց, ապա՝ ցուցադրվեց և Սինայի վրա:

Ե

Այժմ այսպես դատենք. նախնի շնորհից, որ Հին Կտակն է, նրա պարզեւած համարձակության ընթացականից՝ ի՛նքքս ետ դարձա, փոխվեցի՛ ահա և զրկվեցի՛, ելա՛-հեռացա՛, անպատվաստելի դարձա՞՞ վանվեցի՛: Արդ, ընդունի՛ր, Տէ՛ր, նորի՛ց նոր, կրկի՛ն իմ կերպարանվող պատկերը հոգու կյանքին անարժան, իբրև՝ մահապարտ, իբրև՝ չարագործ, վայր գլորողի հանդեպ մի անմիտ պատկառ ունեցող, իբրև մեկը, որ՝ ոտքի կոխան է բանսարկուի մեծ որոգայթներին, ես մատնվեցի, որպես մեկը, որ՝ բժշկման ո՛չ մի հենարան չունի, և այդպես հասա մահո՛ւ հատակին, որպես մեկը, որ՝ դա՛րչ է Քեզ համար, որպես խոտանվա՛ծ՝ Քո կոչումների արժանիքներին: Որպես մեկը, որ՝ հուշս չունի արդեն, որպես մեկը, որ՝ դեպի կորո՛ւստն է ընթացքն իր ուղղել, որպես մեկը, որ՝ դեգերման մեջ է ու ե՛տ է վանված առողջ վայրերից, որպես մեկը՝ որ՝ տարակուսած իր թշվառությունից՝ խո՛ր վհատության անդունդն է հասել, որպես մեկը, որ՝ արդեն կործանվա՛ծ, խորտակվա՛ծ արդեն՝ բեկվա՛ծ է սրտով, ես որպես թախժի ապշանքին հլու՛ տրտմա՛ծ մի հոգի՛ և անխեղամիտ իմ վարմունքներով՝ որպես թշնամի՛:

Ը

Եվ դարձյա՛լ, կրկին՝ Քեզ ակնարկելով, Գթա՛ծ, Մարդասե՛ր, Հզո՛րդ ամենից, իմ աղերսանքի խոսքերն ընդունես, որպես որ՝ խոսքե՛րն են զղջացողի, որպես խոսքե՛րն են խոստովանողի, որպես Քո ոտքը՝ եկած-ընկածի, որ դիմում է Քեզ՝ գորավի՛զ լինել, որպես մեկը, որ՝ ապաշխարությա՛ն մեջ է գտնվում: Որ կշռում ես չափ ու կշիռով ու գրի առնում՝ մեծ համարելով հառաչներն հոգու և ազդումները շնչի հեծության, կսկիծը չրթանց և լեզվի պահած պահքե՛րը բոլոր և տիրությո՛ւնը դեմքին հաստատված: Ողջ խոր-

Հուրդները Քեզանով են, Տե՛ր, և Հոժարության խորությունները սրտի տարածքում, որ փրկությունը ես բոլոր ա՛յն անձանց, որ Քե՛զ են դիմում, և Տեսանողն ես բոլոր նրանց, որ Հնարներն առան, գործ չդարձրի՛ն. ամե՛ն ամենքի Ստեղծի՛չն ես Դու և աներևույթ վերքերին Բժի՛շկ, Հուսացողների Պաշտպանն ես անպարտ, Բարեխնամ՝ ամե՛ն ամենքի: Եվ ամենայնի փառքերը բոլոր՝ Քո՛նն են միմիայն, Հավիտյա՛նս: Ամէ՛ն:



**ՀՅՅԺԾԱՆՔՆԵՐԻ ՄԻ ՆՈՐ ՀԱՎԵՂՎԱԾ  
ՆՈՒՅՆ ԻՍԿ ՀԱՆՈՂԻՑ, ՆՈՒՅՆ  
ԱՂԵՐԱՆԵՐՈՎ և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՕՌՈՒՆ  
ՔԱՆ ԻԱ**

**Ա**

Քանի որ ինքս իմ անձնական կամքով իմ կյանքը գրավ դրեցի մահվան, չկարողացա երբե՛ք, ո՛չ մի ժամ, մարդո՛ւ պես ելնել ու կանգնել ոտքի, և ո՛չ ստացա մի սիրտ բանական, ըստ Գրի խոսքի, և քանզի երբեք ես չփոխվեցի՝ նախկին Կարգերիդ դրվածքի Հանգույն, և ո՛չ էլ բարի քայլողների Հետ ուղիղ ընթացա, ինչո՞ւ, ուրեմն, ցույց չտամ այստեղ՝ ընթերցվածներում խոտորվածների Հետքով գնացող խավարային իմ ընթացքները այլ: Որոնք մի՛ առ մի խոսքիդ Լույսի մեջ ի Հայտ բերելով՝ տարածե՛մ Քո դեմ, ըստ Քո Վերնագույն դրած սահմանը պահած անփոփոխ կրկի՛ն, վերստի՛ն խոստովանելով այս խոսքերիս մեջ՝ չարություններս մյուս մնացած, բժե՛րը դրանց, որոնք Հաջորդիվ պիտի թվարկեմ:

**Բ**

Ժանտագո՛րծս օտար, պատժի արժանի չարություններըս ի՛նքս աճեցրի անաստ քայլելով՝ նենգ Բեկխարի գնդերի շարքում. կաքավո՛ւմ էի ցուցադրաբար, վազո՛ւմ նրանց Հետ, խաղում գարշաթոր դիվաց Հետ մեկտեղ, որ խաբո՛ւմ էին ինձ ճարտարորեն, և այդ ամենին իմ ծուլությա՛մբ էր, որ էլք տվեցի, գանելի գաղտնի վիճակների մեջ իմ խառնվելով, դեերի անհայտ խոցերով պատված՝ ինձ դահիճների կործանումներին՝ ի՛նքս մատնեցի: Ո՛չ թե Հերքեցի այդ վանվածներին, որ Քրիստոսի խաչից Հեռացան, այլ Հակա-

ուակը՝ դրանց առավել՝ զորացրի ես: Անօրենություններն այն, որոնք գործեցի, դրանց պատճառով Անունդ Հիսուսի՛ այսերի գնդում դարձրի անարգ ու Հայհոյելի՛, ինչպես Իսրայելն իր Հերթին արեց Հեթանոսաց մեջ՝ Հայհոյել՝ տալով Անունը Աստծուդ: Եվ ապականող ու վնասակար Հարվածի Հարվածի Հետևից բերի ու Հակվեցի՝ ժանդ ու թրթուրներ և ուտիճներ այլ, որոնք վատնեցի՛ն ծաղիկը Հոգուս, ըստ սուրբ Հովելի, որ Հրաշալի իր ողբերի մեջ ցույց էր տալիս թե՛ երկիրն Իսրայել ի՛նչ չար գործեր էր նյութում-կատարում, նո՛ւյն իսկ բաները իմ մեջ տնկեցի՝ դրանց ստեղծել ու ծնունդ տալով, քան թե՛ սատակմամբ՝ անձա ազատելով ինձ խժողոններից: Իմ անձի Հանդեպ ե՛ս Հավաքեցի՛ բլո՛ւր-բլուր կույտերով Հակառակորդներ, որ զինված էին մահաբեր գեներով. իմ դեմ Հանցի կշտամբողներն մի ամբողջ բանակ՝ բոլորն անօրեն, անպատկառելի: Հակառակորդներ՝ զորացրեցի, իսկ ինձ ընկճեցի՝ դարձնելով նրանց դեմ՝ չպատերազմո՛ղ: Քաղցրությունների ճաշակման ժամին՝ դառնությունների՝ մասը ընտրեցի, ի՛նքս Աստծուդ առջև նենգավոր եղա, իսկ բանասարկուին Հա՛ր Հավատարիմ:

**Գ**

Ավա՛ղ աղետիս, վիշտ ու վտանգիս, խավա՛ր ամոթիս, մո՛ւթ պատկառանքիս, և ինչպե՞ս պիտի ես Համարձակվեմ Հանդիմանությունս մե ո՛ղջն Հայտնի անել, երբ մե՛ծ է այսքան գուշո՛ղ իմ ձայնով և բողոքներին աղաղակները՝ դժվար խոսելի: Քանզի իմ Հոգով երբ նայում եմ ինձ՝ տգե՛ղ եմ, նվա՛ղ և ներգրավված խառնակ բաներում, լեցո՛ւն Հեծության դժգույն ցավերով, որոնց մեջ էլ եմ վարանմամբ գնում՝ մրոտված այսպես, գույներս աղտոտած, գազրելի՛ ախտով, իբրև մեհյանի պաշտոնակատար և ո՛չ թե գավակ՝ Տիրոջդ՝ Աստծո՛ւն, որովհետև որ՝ Հար և նո՛ւյն բանն է՝ թե՛ ծառայելը կուռքի՛ ձուլվածքին, և թե՛ մեղքերի կործանող ախտին:

**Դ**

Արդ, ես գնացի ա՛յս ճանապարհով՝ Հետքո՛վ կորստի, Հետքո՛վ խավարի, և այն ցանկալի բաժինը, որ ինձ տվեցիր, ո՛վ Տէր, դարձրեցի ես անկո՛խ անասպատ, ըստ մարգարեի խոսքի Համաձայն, որ Իսրայելի քահանաների Հանցավորության մասին էր Հայտնում: Ես, որ տմա՛րդ եմ, ինչպե՞ս Համարեմ ինձ մարդկանց շարքում

գրվելիք անուն, ինչպե՞ս անվանեմ ինքս ինձ բանակա՛ն՝ անբանների մեջ, երբ հիմարուկեթյանն եմ այսչա՛փ կցորդված, և ինչպե՞ս կոչեմ ինքս ինձ տեսանող, երբ Լույսն իմ ներսի՛ ի՛նքս եմ դառնապես խավարեցրել, ինչո՞ւ համբավվեմ իբր զգայական, երբ իմաստուկեթյան դուները ի՛նքս եմ իմ դեմ պինդ փակել, կամ ինչո՞վ եմ ես անեղծ շնորհի տպավորուկեթյուն գործում ձեզ վրա, երբ ի՛նքս իմ կողմից, ի՛մ հարվածներով հոգի եմ մեռչալ՛: Նաև չե՛մ կարող և ո՛չ շարժվող և ո՛չ չնչավոր ինքս ինձ անվանել՝ ո՛չ հոգեւորում, ո՛չ իմաստուկեթյան բնագավառում:

**Ե**

Անոթների մեջ՝ անո՛թս անպիտան, և անա՛րգ քարս՝ որմնաքարերի շքախմբի մեջ, և կարգ ստացած արժանիների մեջ՝ արհամարհվա՛ծ, հրավիրածդ ազգերի շարքում՝ վատթա՛րս ամենա, արորով՝ մահվան հողի մեջ դրված, և ո՛չ մի կողմից քաջալերանքի խոսք չէի լսում՝ ցավ-տանջանքներով՝ Երուսաղեմի, ինչպես այդ մասին իր խրատի մեջ խոսեց Երեմիան: Իմ հեծուկեթյունից կյանքիս օրերի թի՛վը պակասեց, և տարիներս անցան՝ շարունակ հառաչանքներով, որի մասին որ՝ սաղմոս Երգողն է նվագով ասել: Ինչպես ասվին է ցեցից քայքայվում և փայտը՝ որդից, ըստ իմաստունի ասած խոսքերի՝ սրտիս խիթերից իմ սիրտը հալվե՛ց: Ինչպես սարդոստայն՝ այդպե՛ս մաշվեցի, խոտա՛ն գտա ինձ՝ ըստ սաղմոսողի խոսքի պատկերի, և ինչպես ա՛մպը առավոտ կանուխ, ցո՛ղը վաղորդյան ցնդեցի՝ իսպառ ու սպառվեցի՛, բան, որի մասին մարգարեուկեթյան ձա՛յնն էր նախազգել:

**Զ**

Նմա՛ն եղա ես մի մարդու, որը իր մեջ հո՛ւյս չունի, եթե անիծված եմ տեսանողից խոսք-դատաստանով, անհուսազրելի վհատվո՛ւմ եմ ես, սակայն ես Քե՛զ եմ հուսազրել, Տե՛ր, մարդասե՛ր Աստված, որ Քո գթուկեթյան անսահման բարի սիրով նայեցիր և խաչիդ վրա բեւեռված ժամին, Արարչի առջև՝ մեծ ողորմուկեթյունդ արտահայտեցիր չարչարողներիդ: Արդ, շնորհի՛ր ինձ Լույսը քավուկեթյան, և կյա՛նք ընձեռի, եղի՛ր ապավեն, և թշվառ չնչիս առիթ տուր լցվել Քո Բարի Հոգով: Եվ Քեզ հետ Հորը, Հոգո՛ւն Սրբուկեթյան՝ անվերջ գորուկեթյուն, հաղթուկեթյուն և փառք, հավիտյա՛նս: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հակողից, նույն  
աղերաներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ԻԲ**

**Ա**

Ֆրիկե՛ն նույն խոսքերն եմ շարունակում, ինչպես որ նախորդ գլուխների մեջ՝ այլաբանուկեթյան բարդուկեթյուններով, նույն պատկերներով և նո՛ւյն պայմանով, անձիս կորստի գործերի հանդեպ՝ կշտամբանքներո՛վ, թերևս այդպես Ամենագետը հաշվի մեջ առնի՛ հենց ի՛նքքս իմ ձեռքով զրած-հոչակած՝ դատակիթքներն հանդիմանուկեթյան և կակիծներն այն, թե ինչո՞ւ դժբանք ես կատարեցի, և այդ ամենը ընդունի ինձ նից գաղտնուկեթյամբ գործած չար արարքներիս՝ որպես ճշմարիտ խոստովանուկեթյուն:

**Բ**

Մի ձի՛ եմ խոսում՝ կա՛րծը երախով ու սանձը կտրա՛ծ, որ վրան չունի սաստող երասան, հովատա՛կ եմ մի անբարեհամբուկը՝ վայրենի՛ վարքով ու անկի՛րթ բարքով, դեռ կարգի չեկած ու չընտելացված խրտնչո՛ղ երինջ, մա՛րդ եմ մոլեգին ու տարագրված կորուստների մեջ, մեղանչո՛ղ մանուկ՝ խրատ չունեցող և թափառական, անիրա՛վ տնտես՝ արդեն մահապարտ, թե՛ տարտամ, թե՛ ծուլ, թե՛ անգործուկեթյուն: Բանական եմ, բայց, գազանուկեթյամբ ու անմաքո՛ւր վարքի կենցաղով լեցուն՝ անասունների՛ նման եմ դարձել: Ձիթենի եմ, բայց՝ ամայուկեթյան մեջ, որ տե՛սք է միայն՝ պտուղ չի՛ տալիս ու ենթակա է հավե՛տ կործանման: Մարմի՛ն եմ հոգուս թախիծ պատճառող, դատի՛ ենթարկող, տանջանքի՛ մատնող, և անբժշկելի՛ վերքերով խոցված և խնամքից զո՛ւրկ՝ չե՛մ գտնում հնար ոտքի կանգնելու. ես կայսերական ոսկու մի շա՛ր եմ, որոնք պոկելով վատնեցի՛ մեկ մեկ. այժմ չե՛մ գտնում, թե ո՞ւր կորցրի. սխալվող ծառա՛ս՝ մի՛շտ փախուստի մեջ ու թշվառակա՛ն:

**Գ**

Ահա ինքս ինձնից, կամավորապե՛ս մատնիչն եմ անձիս, հենց ի՛նքս իմ հանդեպ՝ մարմնակործան, ստո՛ր գործերով, հոգիս կորցնող ու միշտ մտախա՛բ, շեղճա՛ կամքով ու սրտով բեկ-

ված, ուշադրութեամբ կենտրոնանալուց մոռացմանն ընկած և գրոյական դարձած հանճարից, զգայազուրկ և իմաստասպառ, և արատատեն, և եղեռնալուր: Այս ու այն կողմից բորբոքմամբ լցված, և վնասվելով այս իմ մահաբեր երկունքի ցավից՝ ո՛չ մի բանի մեջ չտեսա ինքս ինձ՝ ընտիր գործերիդ մարդ պիտանացու, Տէ՛ր ամենայնի: Այն որովայնը ողբամ, որ ծնեց-աշխարհ բերեց ինձ, և ստինքները, որ ինձ սնեցին. ինչո՞ւ կաթի մեջ նաև մակարդված մաղձ չծծեցի, ինչո՞ւ դառնուեցի ինձ չմատուցվեց՝ քաղցրութեան հետ մեկտեղ:

Դ

Քանի որ եթե ինքս իմ անձի դեմ բարձրացա որպես դժնի դատախազ՝ այսքան ու այսքան մեղադրանքներ ներկայացնելով, և դեռևս ունեմ ասելու բաներ՝ բարկութեան սուրս անխոնարհելի իմ դեմ հանելով, ապա ո՞վ պիտի երկրածիններից սրանից ավել ինձ դատափետի: Երբ որ ամենայն խայտատակութիւն վե՛ր պիտի հանեմ, ողջ էութիւնս դատի դնելով՝ ենթարկե՛մ տույժի, և վնասակար բոլոր գնդերըս պիտ գանակոծե՛մ, և ցանկականի այն զինվորներին, որ ինձ խոցեցին՝ լինեմ դատախազ, իսկ զգայութեանս գլխավորներին՝ պիտի կշտամբե՛մ: Ամենայնի մեջ և ամենայնում՝ մեղա՛ Քեզ, Աստված, ողորմի՛ր, Դու որ գթառատ ես մեծ: Եվ հանցանքներիս, դառն պարտքերիս մառախուղն այս նոր՝ չե՛ որ Դո՛ւ գիտես, այլ՝ նո՛ւյնն եմ հավետ՝ պատահմունքով նո՛ւյն պարտավորութեան՝ անկարկատելի՛, քրքրված ձորձով, այլչա՛փ սխալված՝ միշտ առջևն եմ Քո, սակայն Դո՛ւ միայն իսկապե՛ս Գթած, Օրհնյալ՝ մարդասեր, կանխավ ու հաստատ Քո ներողութեամբ՝ փրկութեանս համար, եկար-կանգնեցիր իմ ա՛ջ թևի կողմ:

Ե

Արդ, Կատարյալն ես միշտ մատուցում ինձ, ի՛մ ինամակալ, Հզո՛ր, Երկնավոր, Ամենաբարի՛, որ ամեն բան ես անգոյութիւնից կյանքի վերածում, ինքնաբեր գորավոր և իմաստութեամբ լեցուն կայծակով՝ Ազգի՛ր լեզվիս էլ, որպեսզի դառնա առի՛թ մաքրութեան, զգայարաններն իմ, ամենքն էլ մաքրիր, և սրբացրո՛ւ այն ամենը, որ Քեզնո՛վ գոյացան՝ Քեզնից լինելով, և թող ամենքն էլ բժշկվեն Քեզնով և շնորհներով դեհանդերձավորվեն կրկի՛ն-նորից նոր, և ես, ո՛վ իմ Տէ՛ր՝ անպակաս ձայնով, անհատ բարբառով՝

Քե՛զ վերընծայեմ գոհաբանութիւնս՝ Հանուն փառքերի Քո Հո՛ր մեծութեան, որ Աստվածն է մեր. հավիտյա՛նս: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հակողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խուբով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՅ ԽՈՍՔ  
ՈՒՂ ՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ԻԳ**

Ա

Տէ՛ր Աստված, Հզոր, որ Արարի՛չն ես մեր ամենայնի և ամենայնի վրա գորավոր, որևէ սահման ու տարածութիւն չի՛ ներառի Քեզ, ամեն տեղ ես Դու, Քեզ մի վայրի մեջ անկարելի՛ է տեսնել ամփոփված կամ արգելքի տակ, ամեն տեղից ես ամենքին հայում, ամենուր ես Դու, սակայն սահմաններ չկան առանց Քեզ, և ո՛չ էլ երբեք որևէ բան է տեսնվում առանց Քո Լույսի ծագման: Փառքերի համար ահա վորութիւն կատարելութեամբ, Անուն՝ ամենքին էլ անհասութեան, Կոչո՛ւմ՝ մեծութեան, Ձայն՝ անբավութեան, և Ինքը իսկութիւնն անքննելի. մեր անմատչելի Հեռավորն ես Դու, և Մերձավորը անընդմիջելի, հեծեծանք տեսնող և Նկատողը մեր թշվառութեան, ով թախծի մեջ է՝ Մոտի՛կ ես նրան և անճարներին՝ բժշկումների բազում Հնարքներ, Գթութեան Հա՛յրն ես և Ողորմութեան Ակունքը առատ, Մխիթարութեան Տէ՛ր Աստվածն ես մեր:

Բ

Քո ողորմութեամբ հայիր, Տէ՛ր Աստված՝ վշտի դառնութիւն դարձած պատկերիս, բազում կրքերի վտանգաբերիս, որ Քո հանդեպ եմ հանել տարածել, կարեկցո՛ղ եղիր Քո բժշկութեամբ և ո՛չ թե կանչիր՝ դատալորի պես դատա տեսնելու: Արդարև մեծ է այն վտանգը, որ՝ տարակուսանքի ցավերից եղան, և պատճառը այս վարանումների, այն բանից է, որ՝ մարմինն է մեղքի գայթակղութեամբ գրավվում ընկնում, և որևէ անձ իր չար գործերից՝ հեռու, առանձին չի՛ մնում երբեք, և գործողները կապված են գործին արդեն սովորույթ դարձած կապանքով, զանգվածների շեղմբնումով, մահացու կրքի շաղխմամբ արդեն, սրտի իմաստի զգայութիւնը խեթով խոցոտած, ակնկալիքը բարի բաներից հանա՛ծ լիո-

վին, բանականության գործերում արդեն անասունների՝ Հետ դասակարգված, գոյութի կյանքում ծնած ու Հյուսած գազի՛ր գարշութիամբ, տեսականորեն եղած ելքերի իմացումները խի՛ստ վիրավորած, և Հանցանքների սաստկութիւնը հիշելո՛ւց անգամ՝ հավե՛տ հուսահատ, և այլ Հանցանքներ նախագործելու տագնապնների մեջ՝ տարակուսելով, աղերս անելու հատկութիւնը իսպա՛ն պղտորած, խղճի մտքերի հուզումների մեջ՝ ճարպի հայման պես հո՛ւսկ ճենճերելով, երբ ձեռքը մաճին՝ հետևում թողա՛ծն է Հետագոտում, երբ անհրաժեշտ է, որ առաջ գնա՛նոտքերը դեպի՛ ետ են ուղղորդում, գիտութիամբ է՛ր չէ՛րիցն է խաբւում, այն էլ՝ մշտապե՛ս, մտքի մարտերում հաղթահարվում է ամենափոքրից, սրտի թառանչից նրա կոկորդի դո՛ւսն է հրդեհվում, և քիմքին խոնավ մի գորութիւնից՝ ամբո՛ղջ մարմինն է տոչորում մեջ, առանց արևի մշուշը նրան ամե՛ն կողմից է ծածկում-պարսիակում, և լայնութիւնն է ակնկալութիան ամփոփվում մի նե՛ղ տարածութիան մեջ, անբերրիութիան տուլժն է գզալի ու տպավորված, և եղկութիւնն է արդեն կորստյան հուշերի միջով ետ վերադառնում, և դատախիճն հատուցումների մտքի դիվանտում գրված է արդեն, երբ բարերարի աչքի փոխարեն՝ ցասո՛ւմն է ահա առջևդ երևում, և Լույսն իր բնութիամբ հողե զանգվածիս վրա գայրացած, և ահալորութիւնը կատարյալ է՛ր ընդահարվել է փոքրիս բնույթին, և որտղնդո՛ստ Խոսքով մշտապես՝ բարկացել է Նա բանավոր մոխրիս, իրավունքների աներեր Վեմով կոճկվել է ես՝ մահվան արժանիս, քանի որ Տէրն ինձ երբ տաղանդ տվեց՝ անառակութիամբ տարա-կորցրի, պատվականորեն տված մեծ ձիւքը՛ իբրև անա՛րգ բան թաղեցի հողում, և տաժանքներով բարի արդունքի ձեռքբերումները ծուլութիան մթով ի՛նքըս ծածկեցի: Որպես վեր հանված մի ճրագ նշան՝ բայց չե՛մ երևում, և պատասխարանն իմ խոսք ու լեզվի՛ իրավունքներին օտա՛ր են արդեն, և այդ օտարին՝ ես կարեկցեցի, և շրթունքներիս վիճակն անհամբուլը օրինավոր դատ տեսած՝ լռեցին ու պապանձվեցին, և իմ մտքերի հուզումներն ելան՝ և զանազան թանկ մասունքների հետ ցնդեցի՛ն-կորան: Օգուտի համար, թե ինչպե՛ս ապրեմ, տեսա, որ արդեն չգիտեմ ոչինչ: Բարու ընտրութիան կշռութիւններում ես երևացի որպես մի հիմա՛ր, փրկվելու բոլոր ելքերս դեպի ազատում տանող՝ լռվեցի՛ն հանկարծ ու խափանվեցի՛ն, երբ նահանջեցի դե-

պի չարի կողմ, և վառարանս, որ յուզով էր գործում, լցված է միայն հնոցի մոխրո՛վ, անվանս գիրը կյանքի մատյանից եղծվել ջնջվել՝ ու չի՛ կարողացվում, և կշտամբա՛նքն է երանութիան տեղ արձանվել այնտեղ:

Գ

Եթե գիտվոր եմ ինչ որ տեղ տեսնում, ակնկալում եմ, թե՛ կապանի՛ ինձ, թե՛ պատգամավոր, որ խի՛ստ կվարվի, եթե գրագիր՝ մուհրակի՛ կորուստ, թե՛ օրինավոր՝ անեծք ու նգո՛վք, Ավետարանի խոսքի քարոզիչ թե՛ ինձ հանդիպի՛նոտքի փոշին է թափ տալիս վրաս, թե՛ բարեկրոն մեկն ելնի իմ դեմ, սպասում եմ լոկ հանդիմանութիան, եթե անբարի՛ որ ինձ պիտի տա կակիծ ու մորմո՛ք, ջրի ընտրութիամբ եթե փորձվեմ, պիտի խորտակվե՛մ, եթե որևէ դեղ խմեմ, ապա՛ պիտի սատակե՛մ: Եթե բարութիան բերքեր նկատեմ, դրանք ամենքը չարից կարծելով՝ փահսո՛ւմ եմ արագ, և եթե մի ձեռք տեսնեմ բարձրացած՝ պիտի կորանա՛մ, թե՛ ինձ փոքր ինչ փորձեն խրատել, պիտի սարսու՛մ, և եթե փոքրիկ թնդուն իսկ լսեմ՝ պիտի վե՛ր ցատկեմ սաստիկ ահագնած: Թե՛ խրախճանքում ուտել խմելու զան հրավիրեն՝ պիտի դողդողա՛մ, և եթե մեծիդ դեմ դիմաց կանգնեմ՝ պիտի սարսափե՛մ, թե՛ որևէ տեղ հարցմունքի կանչեն՝ պիտի կարկամե՛մ, իրավունքներով թե՛ ինձ քննեն՝ համարանա՛մ պիտի:

Դ

Եվ ահա այսբան ամենաթշվառ և ողորմագին տարակուսներս միայնաց վրա բերել բարդելով, որ հավաքվել են սրտիս գոյութիան ներքին տարածքում, անբժշկելի ցավերով իրենց, անտես նետերի դառն հարվածներից՝ խոցերով բազում, անարտաբերվող անվանումներով, որ մշտակիրն են նույն կակիճների, հարամնա և հանապազամուխ շարավով լցված, որ բեւեռվել են այդտեղից՝ հոգուս ու կրկնակի՛ ուժեղացնելով հարվածը իրենց՝ դարձել են իմ դեմ մահվան գուշակով սպանդի վտա՛նդ: Մթերված թարախ, որը պատված է գաղտնի ծածուկող երկաթ կեղևով, վրա՛ս են ազդում իրենց տագնապով, որպեսզի կրկին վերքերս մնան տուրևառութիան շնչիս միացած, առանց խնամքի, և այդ վերքերից չարաչար ճնշված՝ բարձրացնում եմ ձայնն աղաղակներիս՝ խառնելով դրանք արտասուքներին և կողկողազին թախճանքին հոգուս՝ բերում դնում

եմ Քո՛ Բարեգործիդ Հնարավորութեան ու սիրո առջև, և երկրաստեղծ նահատակներիդ աղոթքների հետ մեկ ու միաբան՝ դեպի վե՛րն Նրկի՛նք՝ Քե՛զ եմ առաքում: Նրանց ու նաև նվիրյալներիդ ամբողջ դասի հետ, ամենավերջին հեծեծանքներով, արցունքներով իմ բոլոր ողբերի, ըղձանք աղերսներն այս ներքեկներին՝ Քե՛զ եմ պարգում, Տէ՛ր, որ շնորհես մեզ երկրագործութեան մեր ողորմելի, հավետ ընդունայն սին վաստակներից՝ անդորրութիւնը կյանքի հանգստեան՝ Դու, որ Համայնդ Ես ամեն մեկի մեջ, և ամեն մեկից բարձրանում է Քեզ փառաբանութիւն: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏԾՈՒՆ  
ՔԱՆ ԻԴ**

Ա

**Արժանիքներին** ո՞ր մեկի համար աղերսս ուղղեմ Քեզ, արքայութեան՞ը, որին ընթացա, բայց վրիպեցի, վայելչութեան՞ը Փառքերիդ, որից մնացի զրկված, թե անմահներին տվածդ կյանքին, որից հերքվեցի՛, հրեշտակների հետ պարակցութեան՞ը, որից տրոհվված՝ արտազատվեցի, թե՞ արդարների խմբում քայլելուս, որից ջոկվեցի, Կենդանի Որթին իմ ճյուղ լինելո՞ւս, որից ջարդվեցի, թե՞ բերկրութեան տնկիին մի ոստ կազմելուս համար, որից գոսացա, կամ թե ծաղի՞կը փառքիդ շնորհի, որից թափվեցի, թե՞ պանծանքի մեջ մի ժառանգավոր, որից կորացա, թե՞ հայրական տան հարազատ ծոցին, դուրս ընկա որից:

Բ


Ինչպե՞ս պարծենամ պայծառ զգեստով, որից մերկացա, թե՞ հույսս դնեմ իմ դարձի վրա, որից խորթացա, թե՞ Լուսիի վրա իղձերս ուղղորդեմ, որից մեկնեցի, եթե Հիսուսի ոսկորներից ես մի հո՞գ եմ-ասեմ, սակայն՝ մերժվեցի՛, եթե թե Նրա աջ թևի՛ն եմ մոտ, որից օր օրի ի՛նքս օտարացա, կամ Նրա անձում ապաստանելուս ապավինութեան՞մբ պիտի պարծենամ, որի հանդեպ, որ խեղճ դարձա մի օր, և կամ փրկութեան՞ն նորո-

գութիւնը հենարան դարձնեմ, որից մահացա, զգաստ ապրելու գվարթութեան՞ը, որից լքվեցի, թե՞ կյանքի ուժատի կանոնին հենվեմ, որից փոխվեցի, թե՞ հաստատ դրված սուրբ սահմաններին, երբ դրանցից էլ ես վայր սահեցի, թե անշարժ վեմի ամրութեան՞ վրա, ուր հայտնվեցի սասանումի մեջ, կամ գումարտակի շարասյան՞ը, երբ, որից առվի պես ես դուրս հոսեցի, անդրանիկներին համար սարքավոր քաղաքի՞ վրա, գերվեցի որից, թե՞ հանապազորը հացի աղոթքիս, մի հաց, որ ինքս չվաստակեցի՛, թե՞ երկնայինի մեջ փոխադրվելուս, որի համար որ չչարճարվեցի՛, թե՞ պարգևների իմ պսակներին, որոնց որ ինքս արժանի չեղա՞մ, թե՞ հաստատորեն կյանքում գրվելուս, որից ջնջվեցի՛, թե՞ երախտիքիդ ձիւրերն հիշելուս, որ մի՛շտ մոռացա:

Գ

Ահա սպառվեց և կամ կտրվեց այն լարը, որով կյանքի՛ հույս կար ինձ, և բորոտութեան դարչութիւնն ահա տիրեց ինձ վրա, և ամբողջովին գարկվեցի՛ խիստով, և ողջ մարմինս սպառվում էր այդ ապականութեամբ, շրջապատվեցի նրանցով, որոնց մեռցրե՛ց Աստված: Եվ պալարները տգեղ, փայլունակ՝ վրաս դուրս տվեց, իսկ մնացածն իմ մարմնում մնաց, որպես արժան իմ երկրիմի կերպին, որ կրկնակի անմաքրութեանս մասին էր խոսում: Եվ պարծանքներին նշույներն անգամ իմ դեմ մարեցին, իմ փրկութիւնը մատնութեան՞ը դրվեց, բարին իր լույսով դարձավ լոկ ստվե՛ր, կյանքի ելքերը փակվեցին՝ իսպառ, մխիթարանքը վերացա՞վ-գնաց, և դատաստանի ատյանն ավելի՛ մերձեցավ հոգուս, մահվան թուլները եկան-գտան՝ ինձ, ինչ սպանված էր, որպես չար դրո՞ւմ հարու՞թիւն առավ, նավահանգստի մուտքը ինձ համար՝ վեմերո՞վ փակվեց, Լուսիի շավիղը փոխվեց խավարի՛, Շնորհի քողը հագեցս հեռացա՞վ մերկութիւնս այդպես ի հայտ բերելով, վայելչութիւնը անհուն փառքերիդ փոխվեց ստվեր ու դժնի՛ վիճակի, իսկ առաջնորդող հանձարն իր հրթրին՝ ահա խափանվեց, կշտամբանքների փուշը բազմացա՞վ, ծաղկեցին ճյուղերն անորինութեան՞ը, բոցը գեհնի բորբոքվեց-կլա՞վ, և ծառայութեան լուծը դրանից խստացա՞վ սաստիկ, և ստրկութեան կապն հզորացա՞վ, և տան կառույցի հենասյունն ընկավ, փլվեց-կործանվեց վստահարանը բարձր տանիքի, և ընտանեկան միավորման մեջ դրվեց անջրպե՛տ, սրբութիւնս սիրող Տէր Աստծո Ղոգին՝ Տրտմե՛ց մեծապես:

Քանի որ վերջին դառնությունն անգամ ես համբուրեցի՝ տանջանքներ, խեթեր և տիրություններ, վշտեր հոգեկան, անխնամարկվող կսկի՛ծ ու ցավեր, տարակուսանքներ՝ հույսերի հանդեպ, ամոթանքներ, որ չունեին ծածկոց, խայտառակություններ անպարտակելի, պատկառանքներ, որ անհամարձակ են դարձնում մարդուն, անդարձ փախուստներ և հալածանքներ՝ մարդասիրության հակընդեմությունամբ, ուղևորությունամբ իմ երկար անցման՝ ձեռնունայն եղա ու առանց վարձի: Սակայն, Դու, ո՛վ Տէր, որ փրկությունն ես և Տէրն ամենայն գործությունների, օգնությունների կայանը ամուր, շտեմարանն ես՝ Ողորմության և Լուսավորության, և քավությունն ես և անմահությունն՝ Տէ՛ր Հիսուս Քրիստոս, Որդի՛ն Հավիտյան Կենդանի Աստծո, Որդի՛ն Արարչի՛ Երկնի և երկրի: Դու, որ կամեցար ծարավածներին կենդանի՝ ջուր տալ չոր անապատում, Օրհնյա՛լ, Բարեգու՛թ, Հզո՛ր, Մարդասե՛ր, և Հեռո՛ւն դիտող, և Համբերատա՛ր, և Խնամակա՛լ, և Հնարավո՛ր, Երկնից Այցելու, Պաշտպան աննախանձ, Պահպան հաղթող և Անկորո՛ւստ կյանք, Միջնո՛րդ երկնային, Լիառատություն, որ չի՛ նվազում, Երանություն, որ՝ տոնելի՛ է հար, Քո Միտ աջի և ողորմության ձեռքն երկարի՛ր ինձ՝ քավի՛ր և սրբի՛ր ամենապարտիս, Բանըդ կենդանի, և ընդունի՛ր ինձ՝ ներկայացնելով հավասարապատիվ՝ Սուրբ Հոգուդ առջև, որպեսզի Քեզնով հաշտվի՛ ինձ հետ ի՛նձ դառնա կրկին, որ Նա Քո Ձեռքով և նվիրյալ Իր կամքի մաքրությունամբ՝ Ձորե՛ղ Ինքնությունամբ՝ ինձ Հո՛րն ընծայի, և որ Նրանցով անբաժանելի միանամ Քեզ հետ՝ շնչիս ողջունո՛ւմ կապված Ծնորհիդ: Որի համար Քեզ՝ Հո՛րդ հետ մեկտեղ, մեկտե՛ղ Սուրբ Հոգու, երեք անձերիդ՝ Մե՛կ բնության մեջ՝ Մե՛կ Աստվածությունամբ՝ Էիցդ ստեղծված, ամենքից՝ Քեզ փա՛ռք, գոհաբանություն: այժմ և հավիտյա՛նս հավիտենից: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ԻՆ**

Ա

Սափայն քանի որ՝ թվարկածս այսքան մեղքերին գերիս, որոնք էլ ահա մեկը մյուսին ավելանալով՝ ամենաթշվառ ու վտանգավոր իմ կերպարանքի միայն մասնակի՛ն են արտահայտում, որոնց մասին որ վերում խոսածս ճառերի շարքում ես գրի առա, ուստի և այժմ եղանակումը խոսքիս փոխելով՝ ավելի՛ պիտի լիարժեքացնեմ եղկություններն ինձ տիրող աղետի: Այն, որովհետև ծո՛ւլ է ծփացող, խիստ նմանագույն կենցաղիս ծագմանն՝ այս աշխարհի մեջ, որում բազմաթիվ կոհակներն ենո՛ւմ՝ տարուբերո՛ւմ են հոգիս իրենց հետ՝ անթիվ դիմեցմամբ, մարմնիս շինվածքը իբրև մի նավակ իրենց մեջ առած: Ժիշտեճիշտ նման այն հանկարծաղեպ եղելությունը, որի մասին որ նույն նմանությունամբ պատմեց Եսային, թե՛ պարսիկների հրոսակներով Երուսաղեմի և Սամարիայի կործանումն եղավ. նույն օրինակով և նմանությունամբ թե՛ դիտենք հոգու խորտակումը իմ համեմատումը չի՛ լինի սխալ:

Բ

Քանի որ առաջ մինչ չվում էի վստահության մեջ, իմ անհոգության տարակույսից դուրս, աշխատության և հանգստի միջև դո՛ւլզն ինչ արկած իսկ մտաբերելու, առանց կասկածի, իբրև թե ահա նավահանգիստն իմ ժամանած լինեմ, բայց ահա հանկարծ խոր ամառվա մեջ ձմռան բքաբեր հողմը ժամանեց և երեքայան դիմահարությունամբ հանդարտությունն իմ դարձրեց ամբո՛խ մի խոռվահույզ, ուստի վայրենի այդ ալիքներին երբ նային իմ բախվեց, խորտակվե՛ց-ընկավ, քայքայվե՛ց սարքը թիավարության, ամբարձման կայմը իր հենարանի տեղից դո՛ւրս թռավ, և թոհարանը վեհ առազաստի՛ ծվատվե՛ց, դարձավ անկարկատելի՛, և ողջ կառույցի վայելչությունն ու շուքը չբացա՛վ, ձգելու բոլոր առասանները խզվեցի՛ն մեկեն, և վա՛ր խոնարհվեց գլխի դիտակի տեսարանը ողջ,



կտրվե՛ց պարանն ապականդակի, քանդվե՛ց-  
գնա՛ց ապավինության խարխիւն իր Հերթին, և  
լծասարքը՝ Հաստաբե՛ստ-ամո՛ւր, միմյանց  
կցորդված իրենց մասերով՝ բաժանվեցին ու  
տխուր կախ ընկան, իսկ սամինները առաջ ուղ-  
ղորդող՝ ե՛տ գալարվեցին: Լաստը, որ ամբողջ  
կառուցն էր պահում ընկղմվում էր ցած՝ դեկի  
սարքերն էլ իր հետ սուզելով, և պակասեցին  
Հարմարություններն առաջանալու, բեկվեց իր  
Հերթին պատսպարանը և ողնափայտի, գոտա-  
կապերը խի՛ստ հոշոտվեցին, և նավագողի  
կազմվածքն ամբողջ դարձավ ավերա՛կ, եզրա-  
շուրթերը պատշաճատե՛ն խախտված թռա՛ն  
դուրս, և խառնշորովե՛ց Հանգստարանը գահա-  
վորակի, միաբանության տախտակամածը  
քանդվե՛ց լրիվ, ու անջատվեցին տախտակները  
ողջ, և հեղյուսները նրանց ամրացնող իրենց բ-  
եռեռոջ տեղերից մեկեն՝ ի դո՛ւրս քաշվեցին, և  
վայելչությունը ողջ այդ կառուցի՛ր՝ ավերակվե-  
լով՝ իջա՛վ ու Հասավ Հատակը ծովի:

Գ

Եվ արգասիքը նման է այս իմ Հիշատա-  
կարանի ողբերին և ինձ: Եվ նավապետը նավի  
դեմ դիմաց գնում գալիս ու ողբեր է ասում,  
ձեռքը ծնոտին հոսեցնում է վարձ արցունքի գե-  
տե՛ր, և բեկորները սակավ մնացած ճոճվում են  
ծովի ծփանքների հետ, իբրև խողխողվա՛ծ բա-  
նավոր մասեր, որոնք որ ասես հեծեծեանք լի-  
նեն՝ ողորմագի՛ն մի թախիժ ցուցանող: Որով-  
հետև որ՝ Հենց նույնի նման ամենաբարի Նա-  
վապետն է մեր, երկնավորների իր գործով  
կանգնած աշխարհի ծփուն ծովերից վերև և  
խորտակվածիս նույն այդ սիրով ու ցավով է  
նայում, թե իմ բանավոր նավիս գոյությունն  
ի՛նչ սխալներով Հարմարեցվելով անցնող աշ-  
խարհին՝ ընկավ ահռելի աղետների մեջ, որ ան-  
գամ փոքր ինչ՝ հեռու չէ՛ եղած ճշմարտությու-  
նից: Քանզի բարեգուժ Տէրը լա՛ց եղավ, երբ  
արդեն թաղված իր բարեկամի շիրմին այցելեց,  
նաև լա՛ց եղավ, երբ Երուսաղեմ քաղաքը տե-  
սավ մոլությամբ լցված, անգամ մոլեգնա՛ծ Հու-  
դայի Համար Տէրը լա՛ց եղավ, և այս երեքից եր-  
կուսի Համար վատահոլթյունը, թե կփրկվեն՝  
կորստի՛ գնաց, մի յուրօրինակ նմանությունով  
աղետյալ նավի, սակայն մյուսը, թեպետև Հա-  
սավ Հատակն անդունդի, բռնելով Հուլյսի Ձեռ-  
քը Երկարած՝ Հարություն առած շիրմից դո՛ւրս  
Հանվեց խաղաղության մեջ:

Դ

Կլինի՞ արդյոք, որ բազմախորտակ  
մարմնիս տապանը տեսնեմ նորոգված: Կլի-  
նի՞ արդյոք, փշրված նավը ողբալի հոգուս  
գտնեմ ողջացած: Կլինի՞ արդյոք, մեծ տարա-  
ծությամբ բաժանվածս էլի դառնամ միացած:  
Կլինի՞ արդյոք, որ հոգնաթախիժ սիրտս  
վշտացյալ տեսնեմ այլև՛ս բերկրանքի մեջ:  
Արդյո՞ք կարող եմ ես ակնկալել, որ կերպա-  
րանքն իմ Հավետ խաթարված բնավորութ-  
յան՝ վերստին գտնեմ կենդանությամբ լի:  
Կլինի՞ արդյոք, թշվառացյալիս տաղավարը,  
որ քանդվեց լրիվ՝ վերականգնված տեսնեմ  
նորի՛ց նոր: Կլինի՞ արդյոք հուսալով նայեմ,  
թե տարամերժյալ գերիս կազատվի, գուցե թե  
նաև ակնկալե՞մ էլ Շնորհիդ Լուսից վար  
խորտակվածիս՝ դարձյալ տեսնելու լրի՛վ  
կազուրկված: Արդյոք կտեսնե՞մ վայելչութ-  
յունը Քո ընտանիքի նորից Հայտնված՝ պայ-  
ծառությանդ ողորմությամբ ինձ, և պիտի  
տեսնե՞մ ամենատխուր կերպարանքն հոգուս  
կրկին ժպտալիս: Արդյոք կլսե՞մ ձայնիս  
գուլժի տեղ ավետյաց ձայներն ինձ մոտ ա-  
ռաքված, և Հագար կտոր փշրվածքներով  
վնասվածս, արդյո՞ք, կձեռավորվեմ որպես  
նո՛ր անոթ: Եվ իմ աչքերի պատուհանները  
մի օր պիտ տեսնե՞ն բազում պարտքերիս  
պարտմուրհակները իսպա՛ռ պատուված, անձ-  
կության օրում պիտի Հայտնվի՞ քավության  
չնորհչ՝ իմ անձի վրա բարությամբ ծագած, և  
արդյո՞ք պիտի ես արժանանամ ներս մտնել  
սրահը խրախճանքի՞ խորանը Լուսիդ, Ա-  
ռաջնորդությամբ Քո՛ շովի՛վ և Տէ՛ր: Եվ ե-  
րանի՛ թե «կենդանի լինեն իմ ոսկորները»,  
ըստ Եզեկիելի, երանի՛ կյանքից ցամաքացս  
արդեն Քո այցելության ներազդող շնչից զո-  
րանա՛մ-կանգնե՛մ, և երանի՛ թե՛ ես կրկի՛ն  
նայեմ Քո սուրբ տաճարին՝ մարգարեի պես,  
որ աղաղակե՛ց կետ ձկան փորից, ես, որ  
հերքվե՛լ եմ Քո Լուսի կողմից, ես որ  
առջևդ եմ՝ խո՛ր ամոթի մեջ: Կլինի՞ մի օր  
խավարասնունդ մթացյալիս էլ ծագման  
առավոտ, և պիտի տեսնի՞ տագնապյալս,  
արդյոք, որ մշտասառույց իմ եղանակը գար-  
նան չեմն Հասնի, արդյո՞ք կտեսնեմ ցողը  
անձրևիդ, որ կանաչեցնի արոտը հոգուս,  
կամ տեսնե՞մ պիտի գազանահարի՛ս, հերք-  
վա՛ծ ոչխարիս՝ վերստին կամքիդ գթության  
հոտում:

Քանի որ ահա, ըստ Հոբի խոսքի՝ շուրջն չարերի հնարանքներն են պատել-խտացել, որոնցից որ ես չկարողացա՝ անցնել երբևէ, սակայն եթե թե Քո Ողորմության կամքը երևա՛, եթե գթության Քո դուռը բացվի՛, եթե թե փառքիդ ճառագայթները իջնեն-ծավալվեն՝, ձեռքիդ խնամքը եթե հայտնվի՛, թե Արեգական Քո Կյանքի օրը չորս կողմ տարածվի՛, թե Առավոտիդ տեսիլքն ըզձայի Լույսն իր ծագեցնի՛, թե աղբյուրանա և քաղցրությո՛ւնը Քո առատության, թե վտա՛կ Հոսի Արարչիդ կողից, հեղվի՛ Քո սիրո ծորումն անապակ, եթե ավետյաց Քո սուրբ շնորհի ծագումն երևա՛, և պարզեաների Քո ծառը ծաղկի՛, եթե բաշխվի՛ օրհնյալ մարմնիդ մատուցքը մեր մեջ, ակնկալիքը, թեկուզև սակավ, եթե հանդիպի՛, ձայնիցդ թեկուզ ողջույնի հնչյուն եթե լսվի՛, Տէ՛ր, մեզինց հեռացած խաղաղությունը եթե մոտենա՛, և այդժամ արդեն հավիտենական ու երանելի այդ պայմաններով, լցված հավատով, հույսով հաստատուն, և ապավինած Քո իսկ Սուրբ Հոգուն, որ պաշտվում է Քո Հո՛ր հետ մեկտեղ՝ քաղցրության ձայնով, և նաև Քեզ հետ միաբանությունը՝ Լույսով անմատուցյ, որով կյանքն է և երանությունը՝ քավությունը հանդերձ, որ ընծայվում է ինձ՝ մեղապարտի՛ս: Անկորուստ ավանդն ինձ հետ պահելով, առհավատոյայով անեղծ ձրերի՛ Քո ճշմարտության հիշատակության, անվիճարկելի Անվա՛մբղ ահավոր, ամեն բանի մեջ՝ Ամենասո՛ւրբը և Հզո՛րդ ամենա, անքննելի Եռյակ տերության անձնավորությամբ, որ ճշմարտության էությունն են իսկ՝ հարակալության բարձրությամբ Քո, քաղցրությամբ Քո, ողորմությամբ Քո թագավորելով՝ պսակված անհո՛ւն մարդասիրությամբ հանդերձավորված: Այո՛, Կարո՛ղ ես ամենքի համար և ամեն բանում լինել Դու գթած, և Քե՛զ են վայել փառքերը բոլոր՝ հավիտյաններում, թե՛ այս երկրում, թե՛ հանդերձյալում՝ մշտնջենական, և Քե՛զ է վայել մեծ օրն՝ Հայտնություն, հավիտյա՛նս: Ամէ՛ն:



**Հեծեանքների մի նոր հավելված  
նույն իսկ հակողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻԾ ԽՈՍՔ  
ՌԻՂՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ԻԶ**

Ա

Արդ, առուգապես և իրավաբար, նրանց հետ, ովքեր, ըստ կողկողազին իրենց ձայների՝ հարմարեցնում են խոսքերը իրենց նույնահանգություն հանդերձավորմամբ՝ բանաստեղծություն տների վերջում նույն խոսքը անվերջ բերել-կրկնելով, որով ավելի սաստիկ մորմոք են մեզ եղանակում ու ճնշեցնում մեր իղձերը սրտի, և ցավ ու աղետ կարողանում են այնպես՝ մատուցել, որ պատճառում են արցունքի բխում, ուստի ես՝ ինքըս գլուխը բազմած նմանօրինակ երեխաների, ովքեր լաց բերող բանաստեղծություն են եղանակում, ես էլ նրանց հետ, նրանց հեծությունամբ, իմ ավաղական ձայնարկությունով՝ իմ անձի վշտերն եմ արտահայտում: Ո՛չ կարողացա աշխարհի համար լինել մի մեռյալ, և ո՛չ էլ լինել Տէր Աստծու համար կենդանի մի մարդ, ո՛չ կարողացա լիարժեքորեն ջերմ լինել, ո՛չ էլ՝ պաղ ու սառն եղա լիարժեքորեն, այլ՝ գո՛ւլ միմիայն՝ Ավետարանչի խոսած առակը ճիշտ կրկնելով, որը գրված կա Հայտնության գրքում: Երիցս ատելի՛ ես եղա Եռյակ Տէրությանդ համար՝ ամեն բան տեսնող արարչության սուրբ Հայացքիդ առաջ: Եվ այնպես, ինչպես թախձակիրներն են վիճակներն իրենց կրկնակի ևս ողորմելիությամբ մեզ երևացնում՝ միազիժ հանգի վերջավորությամբ, որ թշվառության օրինակն իրենց դարձնեն հայտնի, նույն կցորդությամբ և շաղկապումով ի՛նքս էլ խոսեցի:

Բ

Մեծա՛վ կորցրի՛ ժխտելով պարտքը իմ տաղանդների, ես՝ ապիկարը՛ս, որ մատնվել եմ անարժան վարձին ինքս իմ գործերի, ես՝ կրկնակի՛ դատապարտյալըս, վատնի՛չս արքունի անգին գանձերի, պատասխանատո՛ւս միշտ Մեծիդ առջև՝ չե՛մ հրաժարվում ինքս իմ պարտքերից, բյուր քանքարի են իմ պարտքերն հասնում, սակայն ես չունեմ կշիռ մի ունկի: Առանց բարեխոս՝ կապված եմ ահա դառն պահեստում արգե-



լարանի, իմ վաստակները ցավե՛ր են միայն, կերածս՝ Հեծեծա՛նք՝ խորքում այս բանտի, ես տանջահա՛ր եմ, ինչպես մեկը, որ ապավեն չունի՛, առանց թոշակ եմ ու ողորմելի, և իմ վիճակը ողբալուս համար՝ այս եղանակով խոսքս կնքեցի, կոծ կսկիծների փոխադրելով բանն իմ խոսքերի՝ և մասնակցեցի շրջաբերության այս պայմաններին՝ որ ամեն մի տուն հնչի խորհրդով՝ երկու տասնյակի և նույն իսկ հանգի: Իմ աղքատության հնոցն է մրկում՝ բոլոր կողմերից, մի անպատասպար թշվա՛ռ եմ ահա՛ վտանգված սրտով դրված գրավի, հոգիս շարունակ տարակուսներում՝ ես ապաշնո՛րհ այր եմ շեղալի, և դատաստան է պահանջվում՝ ինձնից հայցմամբ լիուլի, մեղքի և մահվան գեներով իրենց՝ զգայարա՛նքս են խոցոտում գաղտնի, ես անփրկելի մե՛կն եմ՝ մատնված, չարքերին գերի, որոնք գոյության իմ էությունն են հողում սաստերով սուր սուսերներ: Երբ բեմն եմ հիշում՝ պատկերն եմ տեսնում իմ դատաստանի, և իմ չարատես աչքերի առաջ անլույս մռա՛յն է անվերջանալի, և անօգնական կապկպված ու եղկելիս այդպես՝ գերապարվա՛ծ եմ տարակուսներին, տեսնում եմ միայն դեմքերն ահարկու վերնայիններ: Ես խիստ անարև տարտարոսի մեջ՝ առանց ծածկոցի, առանց վեղարի և անապավեն մի մոլորությանմե՛ մորմոքվո՛ւմ եմ արդ հրո՛ւմ գեհեների, առանց հայտնության կործանված մե՛կն եմ վիճում մեղքերի: Ահա ես ունեմ անպիտա՛ն արծաթ, որ ո՛չ հարգի է, ո՛չ ընդունելի, և որ՝ չի՛ հաշվում՝ ընտիր գանձերի շարքում Տէրունի, քանի որ իմը արդունք է պղտո՛ր հայեցումների, աննվիրակա՛ն, անմաքո՛ւր ձեռքի, որ բեկված սրտով, մատներով դողդոջ՝ հո՛ւյս է իմ դարձին, ես՝ ծնկի՛ եկած, երեսս՝ հողին, Մո՛րն եմ պաղատում մեր Տէր Հիսուսի, Բարեխոս եղիր, քավության մաղթիր՝ ի՛նձ՝ մեղավորիս, Դու՛ հզորագո՛ր Փրկանակ կյանքի, Երկնի՛ Իսկուհի, երկրից ահա Քե՛զ եմ բարձրանում օրհնության ձայներ՝ բույրերով խնկի, և մատուցվում է յո՛ւղ առնուհանձն՝ ամենայն տեղից և ամենայնից:

#### Գ

Արդ այս իմ ասած ողբոցն հուսալով՝ դրանց այլ մաս էլ ի՛նքս հավելեցի, և մատուցեցի արցունքի պտուղ՝ տված շնորհով մեծ Բարերարի, երբ կորուստներիս խորքը չափեցի՝ որքանությանն էր անհասկանալի, մասնավորելով խոսքերս, սակայն, նո՛ւյն իսկ հանդեսի համար

Չանացի, արագությունը ավելացնելով մտքիս թևերի՛ չկարողացա՛ երբևէ հասնել իրողությանը երևույթների, պարտությունն ուշքիս պատճառ դարձավ, որ՝ բարկության բաժակ ձեռքիս առնելի, և տարտամության տարակուսանքն իմ, իբրև մահ՝ հենց ի՛նքս էլ ճաշակեցի, և այժմ ահա հաճախությունից անվերջանալի իմ հանցանքների խոսում եմ երգո՛ւմ, սակայն ձայնարկմամբ իմ ողորմելի: Ես աներևույթ մի կրակարան՝ բորբոքված տապով անգովանալի, և կամ քուրա մի անտեսանելի, սաստիկ եռացման իր հարցքներով անշիջանելի, սրտիս խորություն չտեսարանում սուր սյաքներով խրվել են խրճեր թունոտ նետերի, մահվան խոցոտող խիթերի ցավով, երակներովս գնում գնո՛ւմ են՝ հասնում լյարդիս, կրքերն երկունքի՛ անճարակ շարժմամբ իմ աղիններն են իրենցով պատել ու դուրս չեն դալիս, մաղձի դառնությունն անհնարավոր նախադասն է հասել կոկորդիս, երիկամներիս կազմին երկակի ջերմն է կալանել անդարմանելի, շնչափողիս մեջ ուժգին հնչում են ձայնի ավաղներն ինձ լքածներ: Եվ բազմահատված իմ էության մեջ միմյանց ներհակ ուժեր են ելել պատերազմների, և երկչոտությանմբ ու երբումով, և կարծիքներիս վարանումներով՝ վտանգվա՛ծ եմ ես բոլոր կողմերից, թեպետ միմյանց հարագատ, սակայն, դավաճանությանմբ ջարդո՛ւմ են իրար միշտ անհաշտելի, և թաղվել մեղքի գարշության տիղմում՝ ես ո՛չ մեռած եմ, ո՛չ էլ կենդանի, Բարերարիցն եմ ի վեր ակնարկում օգնություններն իմ՝ պատժապարտությանմբ կասկածավորի, որ անակնկալ կյանքի այցելմամբ այս վիճից հանի՛ Լույսին անձկալի:

#### Դ

Նա՛ տպավորեց այս խոսքերն իմ մեջ՝ և պիտ պսակի խմբի թվի հետ երջանիկների՝ ակնարկելով Քո ողորմությանը առատությանմբ լի, որ հաղորդվեմ Քո անարատներին, և հանուն Ձոհման բարեգործության Տէր Աստծո Բանիղ՝ կենդանանում եմ Քե՛զ համար՝ առջևն հավիտյաններիդ, և օրհնությունը գովյալ շրթունքիդ ես բաժանել եմ գլուխների մեջ այս իմ մասայանի, այստեղ է նաև ըղձանքն հաստատվում և սողմոնյան առակի խոսքի. «Նկարագրի՛ր Հոգով Քո Բարձրյալ, Քեզնով՝ նորոգումն անեղծանելի», քանի որ միայն Դո՛ւ ես Հեռատես և Համբերատա՛ր, Ներողությանմբ լի, և Քե՛զ են վայել ամենայն տեղից Փա՛ռքն ամենայնի: Ամէ՛ն:



**Հեծեմանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂ ՂՎԱԾ ԱՍՏՈՒԻՆ  
ԲԱՆ ԻՆՔ**

**Ա**

**Քանզի** ողբաձայն բանաստեղծության վեր ընծայման հետ թվական դրույթ հարմարեցրի՝ կական, հեծություն և հառաչանքներըս կողկողազին, լացիք դառնություն և արցունքի երգ, այժմ դարձյալ եմ պաղատանքներին ճառերն սկսում խոստովանելով, զղջումով անհուն և գաղտնածածուկս եմ հայտնաբարբառ խոսում Քո առաջ՝ անդրադարձությամբ սկզբի խոսքի, տողի բառերի վերջավորությամբ՝ շեշտելով մեկ նույն համաձևություն, և մեկ թախանձով նույն մաղթանքների, որ հոգենորոգ իմ խոնարհությունս դնում եմ այստեղ:

**Բ**

- Մեղա՛ եմ Մեծիդ Բարերարությունը,  
անա՛րգս, մեղա՛:
- Մեղա՛ եմ Մազմանը ճառագայթիդ,  
խավա՛րս, մեղա՛:
- Մեղա՛ եմ բոլոր Քո շնորհների անբավ  
երախտաց, արդարե՛ւ, մեղա՛:
- Մեղա՛ եմ Սիրուդ անհուն, վերնային  
Գթություն հանդեպ, հայտնապես մեղա՛:
- Մեղա՛ ոչնչից կյանք Ստացողիդ,  
ստուգի՛վ, մեղա՛:
- Մեղա՛ գերունակ Գողիդ Գրկանքին,  
անսահման մեղա՛:
- Մեղա՛ աննվազ Լույսիդ վայելման,  
նենգո՛ղս, մեղա՛:
- Մեղա՛ ճաշակմանն անճառ Քո կյանքի,  
բյո՛ւր անգամ մեղա՛:
- Մեղա՛ եմ անհաս Քո Պարգևների բոլոր  
ծիրերին, հանապազ մեղա՛:
- Մեղա՛ եմ գովյալ Մարմնիդ Աստծո,  
մահո՛ւ չափ մեղա՛:
- Մեղա՛ պաշտելի Արյանն Արարչիդ,  
խսկապե՛ս, մեղա՛:

**Գ**

Ահա, արդարև, օրհնյալ է հատվածն այս իմ խոսքերի՝ սիրտ հուսադրող իմ Մեղաներով: Ավանդ պատվելի, անմոռաց պատվեր, հայրենական տուրք, նախահայրերին մատուցված օրենք, համայնից թոշակ, անհերքելի բան, հզոր պատասխան, ապրելու կամո՛ւրջ, Վերնային ախո՛րժ, սրբոց սիրելի՛, անխզելի կա՛պ, հրա՛չք բարբառում, պատճա՛ռ անետղարձ, աղե՛րս բաղձալի, սեղա՛ն փափազված, սրտաբե՛կ հնչում, անհնարից ճա՛ր, կարծրություն վանիչ, աստվածապաշտի կենդանի սահման, հեթանոսաց գիրք, վաղնջուց կանո՛ն՝ քրիստոնյային մերձ ու հարազատ և՛ արարաչությունն էլ անգամ հաղթող հզոր անջրպե՛տ, խտրադիրների համար՝ ահավո՛ր, արվե՛ստ բարձրություն, խորություն անչափ, հիացման տեսիլ, կնքված խորհուրդ, որից ո՛չ մեկը չի կարող անցնել, արագաթուխ միտքն իսկ չի՛ կարող խոսքն այս ըմբռնել: Մեղայականն այս ձայն է ամբողջ ու բարեպատեհ և հրաշաբեր իր ներգործությամբ, ձայն, որ չհնչեց, չհիշատակվեց ա՛յն դասի կողմից, որ վերջին օրվա դատակնիքին՝ շնորհից լքվե՛ց, դուցե նրանից հեռու վանվեին իրավունքները աստվածայինի, որ մահով պիտի պատիժը գործեր վրիժառություն, և այդ իսկ ձայնից մեղայականի՝ դատակնիքը պիտի խափանվե՛ր, քանդվե՛ր իսպա՛ռ հավիտենական իր սահմաններով: Մեղայականի ձայնն այդ, որ զարդն է փառաց մեծություն, որով նույն Ինքը՝ Աստվածությունն է պսակվում մեր մեջ ու բարգավաճում:

**Դ**

Քանի որ ո՞վ որ վազելով բռնեց այս սուրբ սեղանի սուրբ եղջուրներից և առժամապես չպրծավ պատժից կամ չմաքրվեց: Իսկ եթե Աքար Զամբյանը և Սավուղ կիսյանը, Միմոնյան Հուրան՝ մեղա ասելով էլ չարդարացան, ի՛նքս եմ վկայում խոստովանելով պայմանն այդ խոսքի, որ ականայից ու բռնադատված մեղա ասելը՝ սեր չէ՛ կատարյալ, ուստի և իր մեջ չունի՛ փրկության բովանդակություն:

**Ե**

Իսկ ես կամովին և ի սրտե եմ միշտ էլ համբուրում դարձյալ կրկնելով երջանիկ խոսքդ այդ, որ Քո պատվերով և մկրտությունս հարագատն է իմ:

Մեղա՛ երախտացդ, որ ես մոռացա,  
 վերստին մեղա՛:  
 Մեղա՛ իմ հոգին մարմնիս ձեռքով  
 հարվածի տալուն, հիմա՛րս, մեղա՛:  
 Մեղա՛ տվածդ ձշմարիտ Կյանքը դրժելուս  
 համար, իս՛կ և իսկ, մեղա՛:  
 Մեղա՛ Խոսքերիդ ընդդիմանալուն,  
 չարաչար, մեղա՛:  
 Մեղա՛ սպանդի իմ օրվա համար, որն իմ  
 մեղքերով է առաջանում, վատթա՛րս,  
 մեղա՛:  
 Մեղա՛ պարտականս անկենդան մահվան,  
 ձաղեղի՛ս, մեղա՛:  
 Մեղա՛ անպատկառս՝ Բարձրությանդ  
 հանդեպ, տաղտկալի՛ս, մեղա՛:

2

Հոգևորի մեջ աշխարանքները ես ներմուծեցի, որտեղից ահա իմ կորուստներն ու կործանումները երևացին ինձ, ես, որ հեռացա և այն էլ՝ անդա՛րձ, ես, որ գրվեցի թշնամիների՛դ որդիների հետ, ես, որ երկնքի բարձունքի՛ց ընկա, ես, որ վարքիս մեջ փշե՛ր դիզեցի: Եվ սրանց նման աղաղակների բազմաթի՛վ ողբեր, որովհետև որ անձամբ իմ անձը ի՛նքս անարգեցի և Արեգակիդ փոխարեն դտա կորսչի՛ բազին: Եվ մի դժոխակ կսկիծ էլ ունեմ սրտիս մեջ պահած, համարում եմ ինձ այն, ինչ՝ ինքքս չե՛մ:

Արտաքինահարգար բաժա՛կս անմաքուր, ծեփված ու ներկված որմը՛ս գարշելի, զարդարվածքս սի՛ն պարծենկոտությունք, մռայլությո՛ւնըս Լուսիդ մեջ չըջող, և թշվառացած ա՛չքս, որի մեջ արդեն գերա՛ն կա, փառքերի ջա՛հըս, սակայն հանգցրա՛ծ, ամենայնի մեջ և ամեն ինչում՝ վնասակա՛րըս իրատեսորեն՝ և տերունական տնօրինություն, և աստվածային հայտնություններում, և արարչագիր երևումների բարեհանգեսում, և խոնարհություն մեջ՝ սարսափելի՛ս՝ Նրա առջև Ուժ՝ ինքս իմ աչքերով կենդանի տեսա, Մեծին, Որին եմ պատասխանատու ամեն բանի մեջ՝ առավել ևս, քան թե ընդհանուր Ավետարանի, և Ուժ տեսնելով՝ զարմա՛նք պարեցի, նաև հիացմո՛ւնք, և Հոգիս ընկալ՝ հալոցքների մեջ և վիճակներում անհնարավոր, մտքիս մեջ եղած հաշվարկներն այդժամ կորցրի՛ իսպառ, ես՝ անկատարս վեր ելնելու մեջ, և անհաստատո՛ւ իջման ժամանակ, ես՝ հարմարվողս հուսահատությունս սպանող մտքին, ես, ում պատշաճ է լո՛կ հանդիմանանք և լո՛կ ձաղկում-

ներ՝ պատեհ առիթով, ես՝ նզովվելու մեջ իրավացի՛ս, արժանահատուց վա՛յրս անեծքի: Ահա սրանք են կշտամբանքները ողջ մեղավորիս և ինքնահարվա՛ծ տանջանքները իմ:

է

Քանզի Կարող ես այս բոլո՛ր-բոլոր պարտքերն իմ թողնել, բուժե՛լ մահացու խայթվածքներն իմ, Տէ՛ր ողորմություն, Աստվա՛ծ բողբոի, Քրիստո՛ս Արքա, Բարձրյա՛լ Հոր Որդի, Ստեղծի՛չ, Գթա՛ծ և Բարերարո՛ղ, Ամենասոհճնյալ, Առա՛տ և Հարո՛ւստ, Ահալո՛ր, Հզո՛ր, անհո՛ւն Ողորմա՛ծ, Տեսո՛ւչ, ձեռք Բռնո՛ղ, Հաստատահիմնո՛ղ, Ապրեցնո՛ղ Դու Կյանք, և Դարման անող Խո՛ւքն ես Կենսատու, և Համբերատա՛ր, և միշտ Հեռատե՛ս, և հա՛ր Ապավեն, Դո՛ւ ես Բժիշկը ամենագոյալ՝ իջած Երկնքից, Անվիճարկելի Լո՛ւյսն ես մեզ և Կյա՛նքն ամենասոհճնյալ, Հարուժյո՛ւնն ես մեր, նորոգությունն ու քափուժյո՛ւնը ողջ:

Ը

Եթե համաձայն Քո սովորություն՝ մարդասիրությունք մը նայես ինձ վրա, Քեզ նայելով ես ինձ պիտի ողբամ: Եթե լսես ինձ՝ պիտի հառաչե՛մ, թե արժանացնես ուշադրության, պիտի պաղատե՛մ, եթե անսաս ինձ, պիտի աղաչե՛մ, եթե դառնությունք մը նայես ինձ վրա, պիտի գոչոչոչե՛մ, թե անտես անես, պիտի կործանվե՛մ, թե ոտնահարես, լա՛ց լինեմ պիտի, եթե չընծայես ոգուս պահապան, այդժամ պիտ մեռնե՛մ, իսկ թե ահարկու դեմք ցուցադրես՝ պիտի սատակե՛մ որպես անասուն: Եթե ինձ սաստե՛ս պիտի դողդողա՛մ, խեթելով նայես՝ ընկնեմ սոսկմա՛ն մեջ, թե սաստկությունք դիմես՝ սարսափե՛մ: Եթե հալածես՝ պիտի հեծեծա՛մ, եթե գցես վար՝ հերքվե՛մ պիտի, թե վհատության բռնած այս բոցով ինձ չառնե՛ս Քեզ մոտ, պիտի տագնապե՛մ, եթե խստանաս՝ շտապեմ փախչե՛լ, եթե սպառնաս՝ ընկճվե՛մ պիտի: Թե քննես ինձ, պիտի քարկոծվե՛մ, իսկ եթե ուժգին Քո ակնարկն անես՝ անդո՛ւնդը սուզվեմ: Չուսադրես՝ մերժվե՛մ պիտի, եթե կոչես ինձ՝ նայեմ խեթելով, եթե աչքերս հառել տաս վրադ՝ պիտի ամաչե՛մ, եթե Չայն տաս ինձ՝ պիտի երկնչե՛մ: Որովհետև որ՝ Քո պարգևների բարի՛ն եմ մատնել, թողել-հեռացել երանությունից, Շնորհդ եմ լքել ու ցրիվ տվել ուխտը Քո հիմնած, վաճառները Քո թաղել՝ եմ անդարձ մոռացություն մեջ, համարձակություն

վատահուլթյունս եմ մատնել կորստի, բարկացրել եմ՝ երբ է-իս Ի՛նքդ ես ստեղծաբանել, և ընդոստնե՛լ եմ անվիճարկելի Շնորհիդ Հանդեպ՝ պատվական պատկերս աղավաղելով:

Թ

Իսկ թե այս խեղդող մահվան հեծուլթյան ու ցավերի մեջ՝ մարդասիրությամբ Դու ինձ ժամանես, Տէ՛ր Հիսուս Քրիստոս՝ Սուրբ Գրի խոստմամբ լիացնելով ինձ, թե՛ մեծ մեղքերը դադար են գտնում Քո բժշկությամբ, որով և ի՛նքս էլ ամենառատ Քո քաղցրությամբ պատվաստվելով Քեզ, Լույսի կերպարդ պիտ ձևավորի Հոգին Սուրբ իմ մեջ՝ վերստին որպես գտնված մեկին, Քո կամքով արդեն՝ ամու՛ր Հաստատված, քավության դեղով ստեղծաբանված, տանել-դնելով՝ փրկության դասում, Հավիտենական կյանքում գտնվող անմահների՞դ Հետ՝ ովքեր իրենց մեջ չեն՝ կրում ախտեր, և Քե՛զ՝ Քո Հոր Հետ, և Հոգուն Քո Սուրբ փա՛ռք Հավիտյա՛նս: Ամէ՛ն:



**Հեծծանքների մի նոր հավելված նույն իսկ հակողից, նույն աղերսներով և մաղթանքների խոթքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ՌԻՂՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ ԲԱՆ ԻԸ**

Ա

Ե՛վ արդ, էլ որո՞նք ես Հայտնի անեմ, որո՞նք ավելի դիտեմ կարևոր, և դրանց մասին ի՛նչ եղանակով ճառ շարագրեմ, ծածուկում եղած որքա՞նը արդյոք մերկացնեմ Քո դեմ կամ խոստովանեմ, այս ներկաների՞ց, որ արդեն ունեմ, թե՞ անցյալներից, որ մթերեցի, ապագաների՞ց, որոնց նայում եմ դեռ կասկածանքով, թե՞ բազմաբազում շարժընթացներս վայրընթացներին, որոնցով ինքս էլ վա՛յր գլորվեցի, փոքրե՞րը միայն իմը Համարեմ, որ Աստծող կողմից գրվեց որպես մեծ, աննկարագրելի՛ն, որ՝ չի հիշատակվում, և կամ նվա՛զը, որ է՛ առավել, և կամ նրանք, որ թեթևագո՛ւն են՝ ծանոթ ամենքին, կրքե՞րն հոգեկան, որ սահեցնում են կորուստների մեջ, թե՞ մարմնական ախտերն սպանող, հեշտականների՞ սկիզբը թվեմ, վնասակարնե՞րն անչափ ծայրահեղ, աներևույթի մեջ եղածնե՞րը, թե՛ տեսնվողները ակնհայտորեն, նրանք, որ ձեռ-

քով շոշափվում են, թե, որ գտնվում են շնչավորների հեռավորությամբ, լայն ապրելու մեջ հեշտ խածնողնե՞րը, թե՛ երկար ժամանակ նետաձգության ժամանածներին, իրենց խորությամբ անչափնե՞րը, թե՛ հայտնվածնե՞րը ամեն ինչ ծախող, պոռնկությո՞ւնը հոգնագլուխ, թե՛ առողջության անբժշկելի՛ն, մարմինս չարով պարարելը, թե՛ հոգիս դնելը բարո՛ւ սովի մեջ, խնամք տանե՞լը այն ամենում, որ ախո՛րժ չեն Աստծուն, թե՞ բռնադատման տեղոր գործելը՝ նո՛ւյն մոլեգնությամբ, մեղքերի դրդմամբ եղած մա՛հը, թե՛ ընդունայնությո՞ւնը կարծիքների:

Բ

Արդարև, ինքքս ճորձերս Հանած և ամոթանքներս ի Հայտ անելով՝ ինքնկամ մի խենթ, շուռ գալով՝ ի՛նքս ինձ Հանդիմանեցի՞ ընդդեմ գնալով իմաստությանը, թե՛ Հանճարները ծածո՛ւկ են պահում ամոթանքն իրենց. կրոնի Համար դարձել եմ օտա՛ր, հեռո՛ւ դնացել կյանքի կարգերից, սրբապահությամբ անսո՛ւրբ եմ ապրում, իսկ կուսության մեջ՝ մեկն եմ անմաքո՛ւր, արդարության մեջ՝ մարդ եմ ամբարի՛շտ, բարեպաշտության մեջ՝ վնասապա՛րտ, լուկ խոսքերո՛վ եմ Արարչին մոտիկ, սակայն հեռու եմ երիկամներո՛վ, չըթուներեո՛վս եմ պատիվ մատուցում, ըստ մարգարեի, և ո՛չ թե սրտով: Ե՛վ եթե պարտ է, կարելի է և՛ քստմեղի մարդ ասել ինձ այստեղ, որը առավել չար մի բան է, քան՝ այն տանջանքները, որ Հանդգնության Համար են լինում, իբր զուր է իմ պաշտոնն Աստծո մոտ, երբ անկարուն են դարձել մտքերըս երկու ճամփի մեջ, և երկուսում էլ՝ մահվան վարանմամբ. ջանո՛ւմ եմ, սակայն չե՛մ գտնում օգուտ, ընթանում եմ միշտ, բայց տեղ չե՛մ հասնում, շտապո՛ւմ, վազո՛ւմ՝ բայց չե՛մ ժամանում, անձկում եմ, սակայն՝ չե՛մ կարող տեսնել, խիստ փափագում եմ և չե՛մ հանդիպում, կարոտում, սակայն՝ չե՛մ պատահում դեռ, ես երկրավոր ամե՛ն ինչ ունեմ, բայց ահա և տես՝ անհնար մի բան՝ աղոթանվեր պատգամավորն եմ Համայն աշխարհի:

Գ

Այլ, Դո՛ւ, Բարերա՛ր, այս իմ մեղքերից շատերին Ի՛նքդ թողություններ տուր և Քո մտքի մեջ մի՛ պահիր դրանք, ավելի հեշտ է Քեզ իմ մեղքերը ջնջե՛ս մեջտեղից, քան թե ինձ Համար դրանք ամենքը նկարագրել պատոված իմ աջով: Ա՛յն բանի Համար դրանք գրեցի, և առանց

փո՛քը իսկ ինձ խնայելու, որպեսզի Ինքդ առատորեն էլ ջնջե՛ս մեղսեղից, Օրհնյա՛լը հավիտյան: Դո՛ւ, որ հանուն մեզ՝ մեղավորներին, կոչվեցիր Փրկի՛չ և Երկայնամիտ ու համբերատար, ինչպես երջանիկ Եզրն աղոթքում սրտի հեծմամբ է պատմում այդ մասին՝ խիստ նեղված անձով և հոգին իր մեջ ձանձրանալով է խո՛սքն հիշատակում, և ահա ինքս էլ՝ բոլոր մահարար կրքերից ընկած մեծ վտանգներում՝ մեղքի գարշուձթյան հորն եմ գլորվել, անդունդների մեջ բնակվողների ապականության չափին իջնելով, որովհետև որ, ըստ Հոբի խոսքի՝ չեմ հավատում թե՛ ինձ պիտի լսես: Արդ, ինքս իմ կողմից ինքնապարսա՛լ ու անձնադա՛տ գերիս, ի՛նքս եմ իմ կամքով իմ բնությունը դրել մատնության, այն ամենը, որ կյանքով Հնար են մեղսագործության՝ ի՛նքս արգելեցի, ի՛նքս փակեցի, ի՛նքս կնքեցի, քանի որ մեղքով ինձ՝ կապկավածին՝ Դո՛ւ Կարող ես տալ կրկին փրկություն և ինձ փրկելով՝ կրկնակի՛ ավել պիտի մեծարվես ու արժանանա՛ս իմ գովեստներին:

Գ

Որովհետև որ՝ բարվոք խրատ կա մեզ մարգարեի միջոցով տրված, մենք էլ ջանք անենք նրան միացած մեր աղոթքն անել՝ Հոգովդ երգելով, Հաստատուն Հույսով՝ Քեզանով գտած մեզ ապաստարան. - Ձեզ հետ վերցրեք խոսքերը կյանքի,~ ասում է Ովսես,~ և վերադարձեք ձեր Տէր Աստծո մոտ, ասացե՛ք Նրան՝ Տէ՛ր, Դո՛ւ Կարող ես մեր մեղքը թողնել, որովհետև որ՝ Խոսքիդ համեմատ մենք ընդունում ենք Բարին Քո կամքի:~ Եվ այդ ժամանակ դուք ձեր անձերով պիտի վայելեք բարությունն Աստծո: Ահա և Աստված այս Խոսքը խոսեց, ո՞վ կլինի որ՝ Նրան չլսի, Աստված վկայեց, ո՞վ կլինի, որ՝ հավատ չընդունի:

Ե

Եվ վճիռներն են Նրա պաշտելի՝ Նվիրյալ պայման, Սահման նույնազոյ, Կյանքի՛ ավետիս, Տէրունի՛ նշան, և Բարության դո՛ւռ, Սիրտանքների ճամփած հրավեր, ձշգրիտ Պատկեր, Անպատրելի՛ գանձ և սուրբ Հիշատակ անմոռանալի: Եվ այս խոսքերը ասելով ինքս էլ հավատ անելով և այստեղից իսկ մարգարեի հետ միաբանելով՝ նո՛ւյնն եմ վկայում, որ Դո՛ւ Կարող ես իմ բազմաբեղուն մեղքերը թողնել՝, ներել՝ բոլորն էլ՝ այդպես նորի՛ց նոր հզորանալով ու բարձրանա-

լով՝ արդեն կործանված ամենաթշվա՛ս իմ հոգու հանդեպ: Քանի որ Դո՛ւ ես ամենքին իշխում և ամենքին էլ բավարարում ես Կյանքով՝ Քո ծագած, մի՛ ակնթարթում համում ամենքին, ամեն տեսակի բռնություն հաղթո՛ւմ, ամեն տեսակի կարծրություններ՝ փչրո՛ւմ-թափում վա՛ր՝ վանելով Քեզնից ամեն տեսակի ընդդիմացողի, ամեն տեսակի խտուձթյունները վատնո՛ւմ ես իսպառ, և վերև թռած ամեն սրություն՝ գցում ոտքիդ տակ, անուշացնո՛ւմ ես ամեն դառնություն, և քաղցրացնում այն ամենը, որ՝ դժվարությամբ են գտնում ամոքում, ամեն տեսակի պարտքերը անձանց նրանց շնորհում, և հանցանքներին ամեն տեսակի՝ թողություն տալիս: Ամենակարո՞ղ, Ամենազորե՞ղ, ամե՛ն բանի մեջ Հնար ունեցող, Ամենաարվեստ, այդ Դո՛ւ Կարող ես բոլոր մեղքերս ծովում ընկղմել և չբացնելով՝ ջնջել՝ մեղսեղից՝ որպես ճաճանչը փոքր մի կայծի, որը իր չափով չնչի՛ն, չքոտի՛, տիեզերատարած ծովը ընկնելով՝ կորչո՛ւմ է իսպառ:

Զ

Արդ, այս մատյանի աղոթքի խոսքը վերծանողներին ողորմի՛ր, Աստված, Հա՛յրդ գթության հանուն Քո Որդու խաչի և մահվան չարչարանքների, վերծանողների ընթերցումներով ողորմի՛ր նաև ողբերգու ձայնով այս արտասովածին նվազները Քեզ՝ վեր առաքողին, որ փրկության այս կենաց դեղերը հարմարեցրեց շատերիս համար, ի՛նքն էլ բժշկվի, Անվամբ Քո, Հզո՛ր: Խոստովանությամբ ելքը մեզ համար նա՛ էր՝ դարձրեց պարզ-նկատելի, նույն այս պատշա՛ճ ու արդար պայմանով՝ անարա՛տ դառնա ինքն էլ պարտքերից: Որ հպարտության թևերը կտրել մեզ վարդապետեց. այդ նույն կանոնի կենաց պատգամով թող որ ազատված լինի նա՛ ի՛նքն էլ՝ սկզբնեական, վերջի՛ն և միջին չար կապանքներից՝ որ մահն է բերում իր արկածներով: Երրորդությունդ բարեգործությամբ թող որ նորոգվի ի՛նքն էլ այդ Լույսով. և այս ամենը, որ մենք գրեցինք Նրա հետ մեկտեղ՝ մե՛նք էլ պիտի մեզ գտնենք երջանիկ:

Է

Արդ, Դու, որ այսքան անբավ հրաշքներ ես իրագործել, ամենաստե՛ղծ Հայր, Անո՛ւն ահավոր, Զա՛յն սարսափելի, Ընտանի՛ կոչում, Համբուրելի՛ Խոսք և Աքանջելի՛ ու Օրհնյալ՝ ազդում, և Հրաման, որ՝ իր ասելությունք սոսկալի՛

է մեզ, անքընրների՝ էականութիւն, Գոյաբանութիւն Անվիճարկելի, Անբա՛վ իսկութիւն, և Զորութիւն Ես Անգնների, Ամենաբարի՛ կամք և Տէրութիւն Ես անսահմանելի, Մեծութիւն անչափ և Բարձրութիւն անբովանդակելի, որբանութիւնը՝ անկշռելի՛, առավելութիւնը՝ անհասանելի՛, Որդուդ Հայրութեամբ պատճառն Ես, բայց՝ ո՛չ նախադրութեամբ: Անպարփակելի գործութեամբ, ո՛վ Հայր, սաստի՛ր՝ հեռանա՛ խոր տաղնապ ազդող դիվական տենդի ջերմութիւնը իմ, որ մեղքերիս հետ ներսս է թափանցել, որովհետև որ մեղքը իր տենդով հանկարծ զարհուրած փախչում է մարդուց՝ սխրագործութեամբ Գառանդ երկնավոր արյան վտակից, որով մե՛կ անգամ ցողվածներս արդէն մշտնջենապէս մաքրութիւն գտանք:

Ը

Այս պատկառելի և արարչական խոնարհ խորհրդից, որ Որդիդ գործեց, թող որ ամաչի՛ սատանան իր չար հրեշտակաց հետ, թող որ տանջվի՛ և Հայածվելով դո՛ւրս ուղարկվի թող՝ Քո բնակութեան շինված խորանից խալա՛րն արտաքին: Եվ ջնջի՛ր, սրբի՛ր Դու մեր դեմքերից ողբի հետ բխող արցունքները մեր, և մեր սրտերի խորքերից ելնող հառաչանքներն ու ձայնն հեծեծանքի: Եվ հիշատակով քստմնափուշ ու տաժանատեսիլ, ոգի պահանջող հարվածով խրված մահո՛ւ մեխերն այն, որով որ Նրան ինչ՛աչտարակին գամեցին նրանք՝ Որդո՛ւդ Միածին, վերքերն այդ արդէն՝ չարին՝ ցավեցնեն: Կողին հասցված սուրսալը նիգակի ուժեղ բախումով, որով մեր վերքերն իր վրա առա՛վ թող չարն այլևս իսպա՛ռ սատակի, որ սկի՛զբն եղավ մեղքի ու մահվան: Որովհետև մեր մեղքի պատճառով՝ գովյալ գլուխն ի՛ր Որդիդ Միածին խոնարհեցրեց և Քո ծոցի՛ մեջ ավանդեց հոգին, և ապստամբութիւնն անբարի բարքով չա՛ր Բելիարի՛ կորացնելով վար՝ հանձնեց կործանման՝ և ամեն բանում նրան հերքելով տվեց կորստին: Եվ որովհետև Լողանջն օրհնութեան, Իսկութեանն անմահ՝ ի՛ջա՛վ, ծածկվեց երկրի արգանդում և այդտեղից էլ Հարութիւն առավ, ինքն իրեն մի բան կեղծող գոռոզի հպարտութիւնը իսպա՛ռ կործանած, ապա թո՛ղ դրան մահվան հատակի մթին դժոխքի ստվերները լոկ այժմ դիտել տա՛ և թող մի՛շտ հիշվի անբժշկելի հարվածն առաջին, որով դիմամարտ վիշապը թռնոտ առհավետ մեռավ՝ Կյանքով սնուցող ամենազորի հարչարանքներով:

Թ

Հանուն փառքի՛ Քո, Հա՛յր Ողորմութեան, և որպես Որդուդ Վե՛րն ուղղված գովեստ՝ Սուրբ Հոգիո՛վդ եմ այս խոստովանում: քանզի առանձին գործութիւններ չեք մեկըդ մյուսից, այլ մեկ խորհրդի խորութեան մեջ եք Մե՛կ ու Միասին, և անսկզբին, որ Բան-Խոսքն է Քո՝ մեզ անձնավորված, և անժամանակյա Հորդ հետ միասին փառավորո՛ւմ ենք Քո Որդի Բանին: Եվ Քե՛զ՝ Մե՛կ միայն՝ Սուրբ Երրորդութիւն, հալասարապատիվ մեկ տերութիւնով Համաբո՛ւն Արմատ և Ինքնութեանդ անբաժանելի՛ օրհնաբանութիւն, գոհաբանութիւն, գորավորութիւն և վայելչութեան անճա՛ռ մեծութիւն, և բարեփիճակ Մե՛կ նույն հարթութեան՝ Մե՛կ գուգակչիւ հավասարութեամբ, հավիտյա՛նս: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղբերներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ԻԹ**

Ա

Բարո՞ւ սկիզբն, արդ, Դո՛ւ Ես միմիայն՝ Գթութիւն անճառ, Բարձրյալ Աստծո Միածին՝ Որդի, օրվա ողջունը Դո՛ւ դարձրիր մեզ ներման փրկչարան և ո՛չ թե ատյան անդարձ կորստի՛ պղպես ինձ համար եղանակելով չար օրվա մեջ էլ՝ մե՛ծ ավետիսի ակնկալութիւն: Դու, ախտավորիս Բժիշկ ու Փրկիչ, մոլոր ոչխարիս՝ Հովիվ հոգածու, Տէ՛ր՝ ապավինած ծառայիս համար, մեծ վշտացյալիս մխիթարելու անապա՛կ գէնի, սպեղանի՛ դեղ վերավորվածիս, սուրբ ազատութիւն մեղքերի գորքով գրավված անձիս, և մերժվածիս բարեբարութեան համա՛կ օրհնութիւն, շնորհի կնի՛ք խոտանվա՛ծ մարդուս և կոչման օծո՛ւմ խիստ կողոպտվածիս, Դու կործանվածիս վերականգնո՛ւմն Ես՝ կրկին-նորից՝ նոր, գլորվածիս վե՛մ ու պատսպարան. որ և՛ կայո՛ւն է, և չի՛ երերում, վե՛հ ու վայելո՛ւչ օժանդակութիւն գայթակղվածիս. բարձրութեան՝ Դու՛ն տարակուսածիս և երանութեան երկնային Սանդո՛ղը եղկելո՛ւս համար. պայծառ շողերով Ուղիղ ճանապարհ՝ մոլորիս առջև. պարտքերիս հանդեպ՝ ներող Թագավոր, լքվածիս քաղցը՛ր,



ամենաքաղցրը Հոսադրուկություն, դրժվածի՛ս Համար՝ կյանք ուղեկցելու ձեռք Բունդն Ես Դու:

Բ

Ամենամե՛ծն Ես, Ամենաառա՛տ, և բարինե-  
րին Քո լիութիո՛ւնը կարգ սահմանեցիր, որպես-  
զի նրանք անպակասորեն՝ առատ վայելեն, որ և  
Հեղո՛ւմ Ես մեզ վրա հաճախ ու առա՛նց չափի,  
քան այնքանը, որ՝ խնդրո՛ւմ ենք Քեզնից, և քան  
այնքա՛նը, որ գիտակցում ենք կամ Հնարավոր  
տեսնում-Համարում՝ ըստ մեծ Պողոսի գոհաբա-  
նություն: Քանի որ Ի՛նքըդ մեզ պատվիրեցիր՝  
ի՛նն անգամ Հիսուս, եռակի թվով, չո՛րսն անգամ  
տասն Հեղ, վաղ առավոտից մինչև արևմուտ,  
երկնայինը մեր մեջ, և մենք էլ Նրա բարի անվա-  
նը անթարթ՝ Հույս դրած՝ Հավե՛տ Հայեցմամբ,  
մենք էլ նույն չափով և նույնի՛ նման՝ անարգել  
սրտով, և ավելի՛ վեր, քան թե մարդկային ակն-  
կալման չափն աղերսանքների՛ բարիքնե՛ր գոր-  
ծենք մեկս մյուսիս և ծառայեցնենք մեր շնորհնե-  
րը միմյա՛նց Համար: Սակայն եթե իմ թշվառութ-  
յունն ու անարգությունը բերենք ու դնենք Քո  
փառքերի մեջ, ամենակարող Զորութիո՛ւն ահեղ,  
Աստվա՛ծ բորբի, օրհնյալ՝ Քրիստոս, ինչպիսի՞  
ներում, չափ ու կշռությ՝ պիտի սահմանվի, որ  
Հաստատողը՝ Հողիս բանական, ընդունի մի օր  
որպես կցորդված Հավասարություն: Քանզի  
գործելու Համար մեզ տված Ավետարանիդ  
մնասն, այսինքն՝ չափը շնորհի, անկարելի՛ է մեզ  
հետազոտել այս բաների մեջ, որովհետև Դու ամ-  
բողջովի՛ն Ես Բարի, ո՛վ Աստված, խավար բար-  
կություն մա՛ս չկա Քո մեջ, ուստի և սաստիկ  
նվա՛ց ու ցած են մեծությունդ առջև թիվը աստ-  
ղերի, որոնց որ Ինքդ ոչէությունից կոչեցիր  
կյանքի՛ նրանց առանձին անվամբ կնքելով, կամ  
Հյուսիս երկրի՛ օդի մեջ հեղված մի բան էր, որին՝  
չգոյությունից բերիր Հաստատման՝ որպես տա-  
րածուն մի Հատա՛կ կառույց, բայց այս ամենը  
անչափ քիչ են, Տէ՛ր, ա՛յն կոչիդ Հանդեպ, որով  
հենց Ի՛նքդ ինձ վարդապետեցիր, որ՝ Քե՛զ նման-  
վեմ:

Գ

Ահա և կամքիդ երկայնամիտ ու պայծառ  
Լույսի մեջ՝ ծածկվե՛ց լրիվ, ընկղմվեց-Հալվե՛ց  
չարությունն Հանուր, որպես թե փոքրիկ մի ամ-  
պի մռայլ՝ արևի տապից, և նույնի նման Հասար-  
ակություն կիրքը բնական Բարուդ առջև է Հալ-  
վում-չքանո՛ւմ: Որովհետև որ մարդկանցից ո՛վ

կա, որ մեղաագործեց ու չղջացավ, ո՛վ զազրա-  
գործեց՝ Հետո չամաչեց, ո՛վ գարչագործեց ու  
չպատկառեց, ո՛վ սխալվեց ու՝ ապա չդիմեց ա-  
պաշխարություն, ո՛վ էր կործանվեց ու չհեծե-  
ծաց, ո՛վ գայթակղվեց ու չստերջացավ, ո՛վ  
պարտվեց ու՝ Հետո չփակեց բերանն իր Հոխորտ,  
ո՛վ պատրանքներով ընկավ ու Հետո Հոգոց չհա-  
նեց, ո՛վ խմեց լեղի ու չդառնացավ: Բարձր մի  
տեղից ո՛վ ընկավ ներքև ու վեր չցատկեց, ո՛վ  
էր կորցրեց մեծությունն իր վեհ և չապաշխա-  
րեց, ո՛վ գրկվեց իր երանությունից, Հետո լաց  
չեղավ, ո՛վ կողոպտվեց Քո փառքի շնորհից, Հե-  
տո չըողբաց, ո՛վ վնասակար գտավ ինքն իրեն և  
ինքը իրեն չմեղադրեց, ո՛վ մերժվեց իր Աստծո ե-  
րեսից ու չհառաչեց, ո՛վ ինքն իսկ լսեց սպառ-  
նանքն Աստծո ու սոսկում չապրեց, ո՛վ թեկուզ  
մեկ հեղ չարի Հետ եղավ՝ Հազա՛ր չավաղեց, ո՛վ  
ձմռան օրով լրիվ մերկացավ ու չսարսուաց, ո՛վ  
անօրինություն գործեր կատարեց և չքարկոծե՛ց  
մտքում ինքն իրեն, ո՛վ ստրուկին տեսավ մեծ  
դիրքում ու չխայթվեց: Ո՛վ չարիք գործեց և ին-  
քը իր դեմ նզովք չկարդաց, ո՛վ անտարբերեց և  
չպարսպեց ապա ինքն իրեն, ո՛վ ամոթալին  
գործեց՝ մարմինն իր չճաղկեց Հետո, ո՛վ Հայեց  
աչքն իր այն ամենին, որ ամո՛թ են մարդուն և իր  
անկատար օրը չանիծե՛ց, ո՛վ իր անօրեն գործերն  
հիշեց ու չընկավ ջերմի մեջ, ո՛վ մտաբերեց իր  
գաղտնիքները՝ և չխորովվե՛ց, աներևույթներին  
ո՛վ կերպավորեց ու չկորացավ կրկին վար՝ եր-  
կի՛ր, ո՛վ էր մեղքերի իր հեշտանքներին անչեջ  
հնոցի բոցը չխառնեց, ո՛վ վնասակար բնավո-  
րություն գծերն իր դիտեց և չպապակե՛ց, ո՛վ կա,  
որ հիշեց իր ներգործությունը չարիքներն եղած  
և իր սատակման Համար չաղոթե՛ց, ո՛վ անճառե-  
լի բաներին նայեց և չխոռովվեց, ո՛վ անկրելի բա-  
ներ կրեց ու չընկավ թխսի մեջ, կամ այդ բեռ-  
ներից մեծամեծերն ու՝ ինքը չմաշվե՛ց, ո՛վ ինքն  
իսկ տեսավ ապականողներին իր անբժուկյան ու  
չտոչորվեց, ո՛վ տեսավ իրեն տարագրության  
լացերին պատճառ ու չտազնապե՛ց, ո՛վ տեսավ  
երեսն աղտեղություն մեջ և չհամարեց անձն իր  
արժանի վերին բարկություն, ո՛վ իր աչքերին,  
թեկուզ մի՛ մեղք, որ՝ գործել էր արդեն, կրկին  
պատկերեց և մահվան գեներց խոցեր չտասցա՛վ,  
խայտառակություններն իր՝ ո՛վ հիշեց, Հետո վա-  
յր չգոչե՛ց՝ վճատությունը հեծեծանքների ճաչ-  
նին խառնելով: Մեկը կա՞ արդյոք, որ արքայա-  
կան գահից գրկվելով՝ դարձավ մի տնանկ ու  
կարկամելով վայր չզլորվեց, ո՛վ իր պսակի պեր-

ճուրջան փոխան հող դրեց գլխին և չմահացավ՝ կրկնակի էլ հողին դնելով չարչարանքներում, ո՞վ է, որ պայծառ պատմուճանի տեղ քուրճ հագավ վրան ու խիստ չտխրեց, մեկը կա՞, որ իր կյանքը կորցնե՞ր ու չհեկեկար արյուն արցունքով, ո՞վ լույսի փոխան իր վրա գցեց խավար վերարկու ու չընվաղեց, մեկը կա՞, որ իր սիրելու վրա սգար շարունակ ու չթառամեր:

Դ

Ահա սրանք են այն ճշգրտագույն պատկերումները Հանդիմանության, որ պարտավորս ունեմ իմ վրա՝ խիստ տխուր մի դեմք, քաղված ճառագայթ, խոնավությունից ցամաքած մի մարմին, նիհարած շուրթեր, անշուք կերպարանք, խոր տրտմած ոգի, ծռված պարանոց ու այլայլված ձայն: Եվ եթե մեկն այս ճշմարտությունը հայտնի է անուճ, դնում աչքի դեմ՝ անօրենություն արդեն չի՞ գործի, կշարունակի դա՞ն իր պատկերը նկարագրել՝ միտք, որ արդեն էլ ամբարտավան չէ և սիրտ անհպարտ, որը պարզեն է այս իսկ թշվառի, որ պահքերի մեջ՝ ինքնակշտամբող մեկն է դեգերող, իրավունքներից մերժված սովյալ, քաղցած, լլկված արդարությունից, պատշաճ դատ անող, որ սակայն ինքն է հարված ստանում, և մի մահապարտ, որ հանցանքներն իր ինքը վկայեց, և նաև մեկը, որ դո՛ւրս վտարվեց արժանիների շրջապատներից, անձ, որ եղկելի անե՛ծք է տալիս շարունակ իրեն: Եվ այս խոսքերս, թե թարգմանություն հայացքով կարդանք, ներկայացված է իբր արդարագործ այն փարիսեցու օրինակի մեջ, որը կշտամբվեց, երբ որ նույն տեղում՝ բարեհոգակվեց մաքսավորը, որ՝ մեղապարտ էր խիստ:

Ե

Եվ արդ, եթե որ՝ հնարավորությունը բանասարկուի չարիք գործելու՝ գալիս գտնում է գայթակղություն մողորվածներին, իր մոլեխոտը մեր մեջ սերմանում և մտցվում է օրվա հաշվի մեջ, էլ ինչո՞ւ հապա հոգու քաջություն բարիքները այն, որ Դո՛ւ Ես տնկել մեր մեջ Քու Ձեռքով, խնամքների մեջ կեցուցիչ Կամքիդ, Դու գրի չառնես յուրաքանչյուր օր, Տէ՛ր իմ Բարեգութ, Հզոր և Հաղթող, քալի՛չ մեղքերի, երբ Դո՛ւ Կարող ես ամեն-ամենքին փրկության տանել: Անդունդներն անգամ, այդ Դո՛ւ Կարող ես փոխել երկնքի՛ և կամ խավարի՛: Մթության՝ մեջ էլ Լույսըդ հաստատել: Այդ Դո՛ւ Կարող ես դառնություն

լեղին վերածնելով դարձնել արդեն քա՛ղցր մահանա, կամ թե կոծերը սաստիկ վշտերի՛ հարսանյաց ուրախ ու բերկրանքի հանդեսի՛ փոխել, և այդ ամենը ո՞ղջն էլ դյուրին են գործել Քեզ համար ու հնարավոր, և այդ ամենից ավելին՝ ին՛ն էլ Կարող ես անել՝ տիրապետելով համայնի՛ վրա ահավորապե՛ս: Եվ համայնից էլ Քեզ Գովե՛ստ ու Փա՛ւք, այժմ, հավիտյա՛նս հավիտենից: Ամէ՛ն:



**Հեծծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻԾ ԽՈՍՔ  
ՈՒՂ ՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ Լ**

Ա

Արդ, ճշմարտվում է Խոսքը՝ Ողորմած Աստված բոլորի, Ներող և Օրհնյալ, երբ որ բազմագութ դարձի ճամփեքով մեղավոր մարդու գղջման պատկերն է նկարագրվում օրվա բացատում, թեկուզ ընդունվի իր վերջին շնչում և կամ շարունակում գործած պահի մեջ՝ դեպի այն աշխարհ փոխադրվելիս: Եվ մանավանդ, որ դժնյա կցորդս այս՝ անձինչխանություն մշտական մարտիկ՝ խաբող, շողքո՛րթ, հակված ստություն, ըստ առակողի՛ հողմեր՝ արածող, դժվար բռնելի մի վարժողությամբ՝ Հաստողից փախչո՞ղ, մարմնիս մոլի ցանկալաններով որսողին գերված և ինքս իմ ներսում՝ ներհալ տնկալից աստվածալինիդ, որ հոգնություն է առանց վարանման՝ Աստծուդ պատճառում, և այնքան շատ, որ՝ միայն Դո՛ւ գիտես քանակը դրանց: Մեղքերիս հետքով իմ ողորմագին ողբերգությունն է բարձրանում վեր, վճատ վիճակով ու տաժանակո՛ծ, բազմավաղելի՛ - ահա առջևդ եմ Ես գտնվում, Տէ՛ր, Գու՛թը շարժելու աղերսանքներս գրած արցունքով և թառանչներով իմ թշվառություն, անբավ-անհաշիվ չար վտանգներով իմ վրա ելած՝ մեղսատագնապս եմ պատկառում Քեզինց:

Բ

Որ չլինի թե կրկնաբանությամբ շատախոսություն ինքս ինձ ներքաշեմ, որով ավելի՛ ողբալի դառնամ, քան մատյանը իմ ապաշխարություն, քանի որ դեռ ես չեմ համարձակվում

խնդրել Նրանից, որ՝ արքայութեանն Իր արժանացնի, այլ տանջանքներիս թեթևութիւնն եմ միայն աղերսում: Ո՛չ թե կենդանի Հոգիների հետ Լույսում ապրելն եմ աղաչաբանում, այլ զգայական շնչով լինելըս՝ թեկուզ և խավար գերեզմաններում ապրողների հետ. ո՛չ նրանց կողքին, ովքեր համբարձմամբ վերև տարվեցին, այլ բեկյալների՝ խորտակվածների՝ ընկերակցութեան: Եվ նմանը իր հանգստյան մեջ էլ աշխատում է դեռ, տրտում է լինում խրախճանքներում, դեմքը ժպտում է, բայց մի՛տքն է խոցված, ծիծաղում է, բայց՝ ա՛չքն է ողբի մեջ, երեսները իր մխիթարված է անվերջ ձևացնում, բայց արցունքներն իր դառնութիւններն են վկայում սրտի:

Գ

Ըմպանակներ կան երկու ձեռքերին, մեկը՝ արյամբ լի, մյուսը՝ կաթնով, և կայծկտացող երկու բուրվառներ՝ մեկից ելնում է խնկի՝ առատ բուշր, մյուսից՝ ճենճի՝ երկու սկուտեղ, որոնք լեցուն են տարբեր համերի ճաշակելիքով՝ մեկը քաղցրութեամբ, իսկ այն մյուսը՝ համահ դառնութեամբ, երկու բաժակներ, ու՝ տարբեր իրենց պարունակութեամբ, մեկում արտասուք, մյուսում՝ ծծո՛ւմբ, մատների ծայրով բռնած երկու տաշտ, մեկի մեջ գինի, մյուսում՝ լեղի՝, տեսանելիքի երկու ներհակ դուռ, մեկը բացվում է դեպի լացի՝ կողմ, մյուսը դեպի վրիպումների ամոթների՝ մեջ, իրար հակառակ երկու հալոցքներ, մեկը բորբոքուն, մյուսն՝ հանգչնո՛ղ: Երկու դեմք իրենց հայեցվածներով, մեկը փոքր ինչ ողորդ խնդրանք, մյուսն ակնհայտ բարկութեամբ լեցուն, և բազուկների երկո՛ւ վեր հառնում, մեկն հարվածելո՛ւ, մյուսը՝ մերժման, դեմք՝ կրկնակի արտահայտութեամբ, մեկը՝ տխրալի՛ր, մեկը՝ ցասման մեջ, և երկու կողմի ուղղված կշտամբանք, մեկը՝ ներկային, իսկ այն մյուսը՝ ապագաներին, ապավիրնութեան երկու կարծիքներ, մեկը՝ «գոնե» է, իսկ այն մյուսը՝ «թերևս» է ասում, մեկ բերանի մեջ երկակի բարբառ, մեկն՝ եղկութեամբ լի, իսկ այն մյուսը՝ լի խոտովութեամբ, միևնույն սրտում՝ երկու ազդումներ, մեկը՝ կեղեքված երերուն հուշով, իսկ այն մյուսը՝ ուղիղ կորստյան: Լրթագույն ամպ մի՛ ահագնատեսիլ երկու անձրևի, մեկը՝ նետերի՝, մեկը՝ քարերի՛, ահեղ արդյունքի երկու որոտմունք՝ մեկով կարկո՛ւտ է, մյուսով՝ կրակ, երկու վտանգի ցավագին ծագում, մեկն՝ արտասուքի, մյուսը՝ մահվան, սգո

առավոտ գո՛ւյգ բողոքների, մեկը՝ սաստերի՛, իսկ այն մյուսը՝ սպառնալիքի՛, երկու՝ արեգակ երկնքի երկու ծայրերի վրա, մեկը՝ խավարի՛, մյուսը՝ կիզման:

Դ

Եթե հարվածող բազուկ երևի վեր՝ համոզված է, որ ի՛ր վրա կիջնի, թե երկարվում է ձեռք պարզեատու՝ չի՛ ակնկալում, թե նաև իրեն նկատի ունի, թե պարծենում են՝ կորանում է խեղճ, իսկ թե հոխորտում՝ ընկճվո՛ւմ է նա, չար հիշատակներն իր բոլո՛րն հիշելով՝ անձայն հեծե՛ծում, անարատ մարդկանց մասին թե խոսեն՝ լցվում է անհո՛ւն մի պատկառանքով, իսկ թե պատմում են հանդերձյալներից՝ երերո՛ւմ է նա՝ դողալով ահից անարժանութեան: Եթե հայտնապես որևէ մեկը օրհնում է նրան, անիծում է նա անձն իր ծածկապես, գովեստ է լսում եթե իր մասին, նա ինքն իրեն է պարսպանքներով անվերջ կշտամբում, իսկ եթե սաստիկ նախատվում, այդժամ, ի՛նքն է վկայում, թե՛ առավել էլ մեծ պարտքեր ունի, ու եթե նրան ծաղրում են ուժգին, համարում է նա սակալ հատուցում, թե՛ իր պարտքերով դեռ առավել է արժան ծաղրանքի, իսկ եթե լսի՛ մահն են փափագում՝ համաձայնվում և այո՛ է ասում ու կրկնո՛ւմ դարձյալ: Եվ թե երկնքից մահ որողայթով կայծակը ճայթի, դեմքը հազիվ թե բարձրացնի վեր. իրավունքների մատյանն է խփված, պատասխան տալու Լույսն են լքել, փակվել է արդեն համարձակութեան ընթացքը նրա: Թե անփրկելի կորուստ չլիներ գերյալի համար՝ ինքը իր կամքով կորուստ գնալուն չէ՛ր էլ դանդաղի: Եվ ըստ հոգեկից այն խոսքերի, որ իմաստունն ասաց՝ արդարև վա՛յ է մեղավոր մարդուն, որ տարակուսած կանգնել է երկու ճամփաների մեջ:

Ե

Եվ ինչո՛ւ պիտի այսքան ողբաձայն ու աղերսագին հեծեծանքներիս չողորմես, Աստված, երբ որ անվամբ Քո ողորմութեամբ բարձրացար այսպես. «Ես Ողորմած եմ և Տէ՛ր խոսքերիս»: Ահա գերյալիս չարութեան հանդեպ՝ Բարութեանն է Քո, մահվան դատվածիս դառնութեան հանդեպ՝ Քաղցրութեանն է Քո, ինձ՝ կորուստների մեջ հայտնվածիս՝ Ճառագայթն է Քո, մոլութիւնների մեջ հանդգնածիս՝ Առատութեանն է Քո, որ ողորմութեան, իմ խակ բնութեան վնասակարիս՝ Հեզութեանը Քո, և կործանվա-

ծին՝ օրհնյալ Աջն է Քո ինձ այցելություն, ընկղմվածիս դուրս հանելու համար՝ հզոր Ձեռքն է Քո, անողջանալի խոցվածությունս բժշկում տալու՝ Աստծո Մա՛տն է Քո, և Ուրին է Քո՝ ահաբեկվածիս ի պաշտպանություն, ապախտավորիս ի վստահություն՝ Երկայնատությունդ ինձ ամպհովանի, և ամենայնից դժնիրի ահա օժելու համար՝ Զորությունը Քո, ինձ՝ մեղավորիս քափություն տալու՝ Հրամանը Քո, և Ուրբերն են Քո՝ փախածիս ամուր պապիհներու, դուրս սլացողիս պատսպարելու՝ Բազուկներն են Քո, միշտ վրիպողիս առաջնորդելու՝ կյանքի Լո՛ւյսն է Քո, տարակուսածիս՝ Հովվական ելքի սուրբ Հանձարն է Քո, և անիծվածիս կրկին ետդարձի՝ Օրհնությունն է Քո, վհատիս որպես քաջալերություն՝ Նրախո՛ւյսն է Քո, և վշտացածիս մխիթարություն՝ Բաժակը ինձ պարգած, նեղվածիս որպես ընդարձակություն՝ օրհնյալ Կամքը Քո, ինձ՝ ատելիիս Քեզ մոտ կոչելու՝ անհուն Սե՛րն է Քո, և սասանվածիս հաստատման համար՝ Խոսքդ կենդանի, հոգով խորախոր վերափորվածիս՝ կաթի՛լն Արյունիդ, և իմ մթերած ցավերի դիմաց, որ չեն երևում՝ Ակնարկությունը ինձ նորոգելու, Իշխանությունը վստահարանով հուսահատվածիս դարձնելու ընտիր՝ ա՛յնկողմնայինում, և պատվաստումը իմ՝ կտրվածիս՝ Քե՛զ կցորդելու, և խավար մահվամբ արդեն ծածկվածիս՝ նշույլը կյանքի, Խաղաղությունը տիեզերական ինձ խուժքներից հանդարտեցնելու, օտարացածիս վայրագության դեմ՝ Ողջունելը Քո: Որովհետև որ ամենայնին էլ՝ Դո՛ւ Ես միմիայն Գիժությունս տիրում, և չկա Քո մեջ մա՛ս իսկ խավարի, նաև առանց Քեզ գոյություն չունի՛ր՝ բարին երբեէ, և Քեզ են վայել Փառքերն հավիտյան: Ամէ՛ն:

նելով երկինք՝ անափոփելի վտանգից երնող խոստովանանքներ, որովհետև որ՝ Սկզբնաշայրդ, որորմա՛ծ Ես միշտ՝ անհայտ ծածուկում եղած մեղքերի խոստովանություն կատարողներին, Որդի՛ Բարձրյալ Կենդանի Աստծո՛՝ Տէ՛ր Հիսուս Քրիստոս, որ իմ մեղքերն էլ քաղցրությունս քափեն՝ խոնարհությունս հաշվի առնելով: Եվ արդարև, Տէ՛ր, այդ Դո՛ւ Ես Կարող և բավական Ես Քո ճշմարտությամբ, հնարներ ունես, եթե կամենաս, որովհետև որ, եթե կամենաս առավելն անել՝ կկարողանաս առավել՝ չափով: Դու բաժանելով Ես հարստանում, քան թե վերցնելով, և բազմանում են գանձերդ բոլոր, երբ որ ցրվում Ես, քան թե հավաքում, ստացվածքներդ Քո սփռելով են Քեզ վերադառնում, քան թե՛ կռելով, և հաշիվներդ տարածելով են գալիս-կուտակվում, քան թե պահելի շտեմարանում: Եվ հավատում եմ, որ այս ամենից Քեզնո՛վ պիտ գտնեմ ելքը փրկության, ես անա՛րզ մեկն եմ, բայց հավատո՛ւմ եմ Քո Պատվականին, Աբրահամի և Աննայի նման հո՛ւյս եմ դնում Քեզ, որովհետև որ՝ մեկը հավատաց տվածդ խուքին, իսկ մյուսն անսաց հանձնարարականին քահանայապետի, որի պատճառով առաջինն ապրեց մինչ խոր ծերություն և հա՛յր հաստատվեց անհամար որդոց: Անդադրում հույսով նա Քե՛զ էր հայում, որ արդեն զառամ նաև անպտուղ արգանդն իր կնոջ անդաստան պիտի դառնա պտղածին, պիտի տա մի օր արդյո՛ւնք օրհնություն, և պիտի մի օր իրենից սերեն՝ բազո՛ւմ ժողովուրդ, սո՛ւրբ մարգարեներ, արքաներ ընտիր: Հավատաց, հուսաց՝ այդպե՛ս էլ եղավ: Իսկ մյուսն՝ Աննա՛ն, հո՛ղ մի անմշակ, բայց բարգավաճեց յո՛թ զավակներով և որովայնի սենյակը այդպես դարձավ պտղաբեր, և յոթ թիվն այստեղ հավիտենությունս բուն էությունն է իսկ նշանակում, որովհետև որ՝ թիվ է անասման, և որով որ սուրբ Աստվածությունդ հարակայություն սահմանն է արդեն՝ մեզ համար սակայն անհետազոտվող, և Ավագանի նորածին որդոց անհատ հորդություն երկնային փառքի սահմանից է այդ: Այս մի պանծալի թիվ է, որ չունի որևէ կցորդ և չի՛ սպառվում և չի՛ վախճանվում, այլ կո՛ւյս է միայն, հատուկ ընտրությունս, հավե՛տ նվիրյալ՝ անվիճարկելի հավիտենությունս բնո՛ւյթն է կրում, անհո՛ւն մի խորհուրդ, որի իմաստը դժվար է մեկնել:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍԻ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏԾՈՒՆ  
ԲԱՆ ԼԱ**

Ա

Քանի որ ահա խոսքիս պայմանով բազում դարձրեցի հեծեծանքներս ձայնը՝ աղետի տազնապներով լի, մե՛ծ հառաչներով հա-

Բ

Արդ, ի՛նքդ Համարիւր արդարութիւն ինձ դավանութիւնն այս՝ փո՛քը իմ Հավատով խնդրվածքների, ամենավարան ձայնս աղերսագին, սրտիս շարունակ հեծեծանքներով՝ Համարիւր որպես հոգուս փրկութեան Համար նշանակի, ի՛նձ էլ դնելով վերևում հիշված երջանիկների օրհնյալ դասի մեջ, որպեսզի ի՛նքս էլ ապրեմ նրանց հետ, նրանց հետ բերկրեմ, մե՛ծ-ամո՛ւր կապով կապված մնալով Քո շնորհներին, քա՛ն իմ գործերին: Եվ մանավանդ որ շնորհները Քո կրկնակի՝ են բարձր ու փառավոր, և ո՛չ մի խոսքով հնարավոր չէ դրանց կշիռն ու չափը հաղորդել, դրանք թող լինեն Հաշտարարները իմ խոսվութեան և հզորագոր քավարանները բոլոր մեղքերիս, և Քո ահալոր Արյամբ են կայուն այդ ամենը, Տէ՛ր, և ըստ մարմնի Քո ծնողներով, Հավե՛րժ խնկելի՛ առաքյալներիդ շարքերով, ապա, նաև՝ դասերո՛վ մարդարեններիդ, մարտիրոսներիդ ահարկու դնդո՛վ՝ ձիավո՛ր լինեն կամ թե հետևակ, որ՝ արիւթյամբ են սպառագեն, մեկը մյուսից է՛լ առավելով մերկամարտ մրցող, և Համագումար մենակյացներո՛վ, բանականների բուլլերո՛վ ընտիր, և բարեկրոն մարդկանց Հավաքո՛վ, նաև հուլլերո՛վ հոգեղեններիդ, որոնք թեպետև երկրում են, բայց՝ երկնավորների՛ հետ են խոսակցում, և մեզ կցորդված վերնային գորքո՛վ ու գինվորներո՛վ, և վաճառներո՛վ երախայրիքի, և գոհաբերված մատուցումներո՛վ զվարակների, և նաև վառվող ճրագ ու ջահով, և բուրումներո՛վ տարբեր խունկերի՛ անուշ յուղերի բուրումների հետ, և նշաններիդ փրկութիւն բերող Հաղթանակներո՛վ, կառուցումներո՛վ աստվածաբանակ սուրբ խորանների, նաև ձեռքերով խորհուրդը գործող քահանաներիդ:

Գ

Այդպէս է անձի շարժումն առ Աստված՝ Նրա գոյութեան հիշատակներով, այդպէս է անձն իր քայլերն սկսում, այդպէս է աջի բարձրանալը վեր՝ աղոթք անելու, այդպէս են ելնում բազուկներ երկիրք՝ աղերսանքներո՛վ, այդպէս է բարին գոհութիւն Հայտնում, խնդրում գթութիւն և կամ աղաչո՛ւմ, այդպէս է դառնում Բանը ընտանի և մարդկութեան մեջ տարածվում Խոսքո՛վ, այդպէս է ձայնը բուն էութեան հետ մե՛կ ու միաբան, այդպէս են գործում Հաջողված գործեր, առաքինութեան ջերմութիւնն այդպես իջնում է մեր մեջ, և գիշը-ցերեկ՝ հոգևորների

օգտակարութեան ընթացումներն են Քեզանից առնում առաջնորդութիւն ամեն ժամանակ, ամեն օր ու պահ, քնա՛ծ, թե արթուն, պատերազմի մեջ, դեերին ընդդեմ վարած մարտերի, հերձվածողի հակառակութիւնը ճնշաբանելի՛ս: Նույն եղանակն է փոքր ու մեծին, խմելու մեջ, թե կերակուրների մեր ճաշակումով, և այն ամենը, որ մեր կրքերով են կերպարանվում, հեշտակա՛ն լինեն, թե տատամելի՛, որ անգամ ոմանց աղոթքո՛վ էլ են նրանց հետ մնում, սակայն Դու նրանց սքանչելապէս հեռու ես պահում այդ Հանցանքներից՝ Հրաշագործո՛ղ Հնարանքներով: Ամեն-ամենքին, որ Հավատում են՝ Բավական ես Դու, դեռ կաթով սնվող մանկանից մինչև Հասուն պատանին, մտքով վայրենի մարդկանցից, նաև՝ խի՛ստ գոռոզացած ստամբակներից՝ մինչև թատրոնի տեսարանները, որ խա՛ղ են միայն: Եվ խառնիճաղանջ ամբոխի կուլտից և կամ կաքավող մոլորյալներից, որ չեն՝ ախորժում կամքը Հզորիդ՝ Դու Մոռացված չես:

Դ

Արդ, Դու ամենքի՛ն վերցրեցիր Քե՛զ, Քո՛նն են բոլորն էլ, և ամենքին էլ Դո՛ւ ես ողորմում, Միա՛յն բարեգութ, որովհետև որ, թե մեղք էլ գործեն՝ Քո՛նն են, քանի որ Հաշի մե՛ջ են Քո, քանի որ գիտեն՝ Քո գորութիւնը, ըստ առակողի մաղթանքի խոսքի: Եվ այդ մաղթանքին կցորդ եմ ես էլ՝ իմ թշվա՛ռ խոսքով, և թեպետև Հանցավորութեամբ՝ ա՛յս եմ վկայում, թե երբ որ մեկը Քեզ գովեստ կարդա՝ ծանոթացնելով, որ Կա՛ս, Ծածկատե՛ս, և թե յոթ հեղ էլ վարակված լինի՝ կրկնակի ծանր պատժապարտութեամբ, - այս օրինակի կիրթ ձեռնարկութեամբ՝ Քե՛զ վկայելով, ինչպե՛ս պիտի նա Հավիտյան կորչի: Ինչպես սևաթուղյր ագռավների մեջ պատահում է, որ՝ սպիտականիչ աղափնիների բնույթի նման երամ ենք տեսնում, և կամ տաքարյուն, խրոխտ ձիերի արդեն անմաքուր երամակի մեջ՝ լինում են ձիեր, որ որոճում են Հանդարտաբարո, կամ գագան կորած շների թվում՝ նվիրյալ գառներ, և կամ հեզութիւն՝ խստութիւններում, կատարելութիւն՝ թերութիւններում, կամ խոնարհութիւն՝ անբարեհաճի վարք ու շարժումում, կամ ճշմարտութիւն՝ ստախոսութեան անդաստաններում, միամտութիւնը՝ խորամանկութեան, անբժութիւնը՝ այլամտութեան վիճակագրում, բարերարութիւն՝ շարութեան վարքում, կամ պարկեշտութեամբ

յուն՝ լիտիության մեջ, անգլիության մեջ՝ ողորմածություն, անհուսության մեջ՝ ապաշխարություն, կամ բարկության մեջ՝ քաղցրության համ, թշնամության մեջ՝ հաշտարարություն, խածնողության մեջ՝ անոխ բնություն, լիկվածությամբ ընկած վիճակում՝ քաջալերություն, և կամ օրհնություն՝ նետաձգության տարափների տակ: Բաներ, որոնցով չկարողացա՛ր երբևէ դատել ճշգրիտ կերպով, թե երկրածին սրանցից ովքե՛ր ժառանգությունդ պիտի ստանան, երբ կշտամբում ես՝ անաչառորեն, իրավունքներով ու արդարությամբ՝ մաքուրին անգամ՝ անբարչտության իր վարձունքի մեջ, նաև պոռնիկին, որ գղջացել է ու եկել է Քեզ: Այս ամենքին էլ Բարեգործողը Դո՛ւ ես միմիայն, Արդա՛ր Թագավոր, Դո՛ւ, որ օրհնյալ՝ ես բարձունքների մեջ՝ Հավիտենություն ո՛ղջ սահմաններում: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հակողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոթքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ԼԲ**

Ա

Ե՛վ արդ, Հետնյա՛լս արժանիներից, ովքեր որ եղան ինձանից առաջ, Հենց ի՛նքս իմ կողմից վրաս գրեցի պարտավորության բազո՛ւմ պատիժներ, այժմ ամենքի Հետ աղերսանքներով՝ ողորմություն եմ հայցում Քեզանից. նկունների Հետ և անհամարձակ ընթացողների, տկարների Հետ և փոքրիկների, ընկեցիկների և արհամարհված ճնշվածների, նրանց Հետ, ովքեր տարագրյալ են, նաև նրանց, որ՝ ե՛տ վերադարձան, երկմիտների Հետ և ճշմարտության մեջ մտածների, կործանվածների և կործանումից հարուցվածների, ընկճվածների և արդեն կյանքով հաստատվածների, գլորվածների և կանգնածների, մերժվածների և՛ ընդունվածների, ատվածների Հետ և կանչվածների, ապշածների Հետ, նաև նրանց, որ՝ զգա՛ստ են արդեն, անառակների և զավավածների, հեռացածների և մոտեցածների, պատկառածների և զվարթությամբ ընթացողների, ամաչողների և խընդմընդության մեջ ապրողների:

Բ

Սակայն ես այստեղ, ըստ մարգարեի, որ Քեզանից իր հրամանն առած՝ իր նախնիների հանցանքից խոսեց, ձեզ պիտի պատմեմ ո՛չ թե մեղքերը երուսաղեմի, ո՛չ Հակոբի տան գործերն անօրեն, այլ պիտի խոսեմ այն հայտնությամբ, որ այցելել է ինձ: Քանի որ ինքս էլ հարելով մահվան բերած աղետին, ըստ մարգարեի ուղենշումի՝ հանդիմանեցի ի՛մ իսկ ձայնով՝ ինձ, այնպես, ինչպես որ Սաղմոսողն ասաց, որպեսզի այդ իսկ հանձնառականով, համայնապատում խոստովանությամբ, կարիք հունենամ երկու ուխտերին պարտավոր մնալ, այլ՝ միանգամից իսպա՛ռ սրբվեմ՝ Է՛-իդ օրհնության հրամանելով: Արդ, բարերարիդ քաղցրությանն ուղղված՝ ծոնը դնելով, փուվելով հողին, ես ցույց տվեցի մահ գլորվելու կերպարանքը իմ՝ և որ՝ խառնված եմ այս իսկ երկրին՝ անցավորների Հետ զուգակալիլու, նո՛ւյն իսկ կորստյան կենցաղին տրված՝ իմ անասնական գետնաբարչտությամբ սողունի՛ նման իմ սահումներով ինքս ի՛նձ գամեցի անցնող բաներին: Սակայն Քեզնո՛վ եմ ես լցվում, ո՛վ Տէր, որ կյա՛նք հաստատող Քո Գավազա՛նը ինձ առաջնորդեր՝ որ ընձյուղ տալով բարձրացավ-ելա՛վ Դավթի արմատից. մարմնով, սակայն անվիճարկելի Քո Աստվածության անե՛ղ շաղկապմամբ մեզ հայտնվելով, ես, որ իմ կեսով հարվածվել էի օրենքի կողմից, որը պահելուն դեռ չէի՛ հասու, Քո աշխարհ գալով՝ կանգնեցի ոտքի՛ և պատկառանքով լցվեցի հանդեպ երախտիքներիդ, և իմ գլուխը վայր խոնարհելով, մտքիս աչքերը բարձունքիդ հառած, իմ ողորմագին տեսքով Քո առջև՝ Միա՛կ Մերձավոր կյանքի խոստումի, հեծեծո՛ւմ եմ ես, Դու Ողորմություն ամենքի համար, համակ Քաղցրություն Քո ամե՛ն բանով, լճերը լույսիս արցունքով լցրած՝ պաղատանքներս եմ Մեծիդ առջևում կենսունակ հույսով վերընծայում Քեզ:

Գ

Ամենաառատ, աննվազելի Քո հեռատեսությամբ, լսի՛ր ինձ, ո՛վ Տէր՝ Քեզ դառնացնողիս, Դո՛ւ ես միմիայն ամենքի համար Սահմա՛ն փրկության, Դո՛ւ ես Աստվածը մեր ամենայնի՛ անճառ մեծությամբ, և Բնություն, որ՝ որևէ չափով չի՛ բովանդակվում, անքընընկի Իսկությունն ես Դու, Կարո՞ղ գորություն, շարունակական Բարերարություն և Լրությունն ես անպակասելի, ժառանգություն ես

Հաստատահիմնած, վայելու՛ւնք վիճակ, պատ-  
րաստութեանդ՝ առատաառա՛տ, իմաստութե-  
անդ՝ Լո՛ւսս է անստփեր, տեսչալի Տուրք ես և  
անձկալի Ձիր, բաղձալի՛ Բերկրանք, անտխո՛ւր  
Հանգիստ, անտարակո՛ւս Գլուտ, կյա՛նք ես  
Անկապանք և արդուք Անձախ, և Բարձ-  
րութեան՝ չփոխարինվող, ամենաարվեստ  
Բժի՛շկ ես, նաև, Հաստատութեանդ Անասա-  
նելի, մոլորյալներին Ե՛տ վերադարձնող, կո-  
րուսյալներին Գտնո՛ղն ես միակ, ապավինողի  
Համար կայո՛ւն Հուսս, խավարածներին Լո՛ւսս  
ես այցելող, մեղանչածների Վե՛մը քավութեան  
և փախածների Թաքստո՛ցն ամուր, Անդորր  
տվողն ես խոսվալներին, մահացածների Հա-  
մար՝ փրկութեան, կապանք Արձակող, և Ա-  
զատո՛ղն ես մատնվածների, Պատսպարա՛նը  
վայր սահածների և Վշտակիցը նրանց, որ ըն-  
կա՛ն գայթակղութեամբ, Համբերութեան՝ ես  
հեռատեսորեն՝ նրանց Համար, որ՝ տարակու-  
սանքի մեջ են գտնվում, տեսակով Լո՛ւսս ես ու  
ցնծութեան ցո՛ւք, օրհնութեան Անձրև՝, շնորհի  
Հոգի՛ մեր երեսներին, Ձորութեան՝ դեմքին,  
գլխին՝ Հովանի՛, Շարժարա՛ն շրթանց, ազդու-  
մը Բանի՛, անձին՝ Կառավա՛ր, մեր բազուկնե-  
րը երկինք ուղղելու գրկման նպատակ և մեր  
ձեռքերը Քեզ երկարելու մազնիսի նման Ձգող  
Բանալի՛ն, Երասա՛ն սրտի, Ընտանի՛ անուն,  
Մերձավորի՛ ձայն, Հարազատութեան՝ մեզ  
կցորդութեան, Խնամածութեան՝ Հայրենի  
սուրբ Տան, Դավանվա՛ծ Անուն, Պաշտվա՛ծ  
պատկեր, Անպարփա՛կ կերպար և երկրպագ-  
վա՛ծ Միա՛կ Տէրութեան, և Բարեբանվա՛ծ Հու-  
շերի շարան, Ուրախութեան՝ մուտք, Անվրե՛պ  
չավիղ և Դո՛ւռ փառքերի, Ճշմարտի՛ն ճամփա,  
Երկնաճեմ Սանդո՛ւղք: Եվ բազմութեամբ այլ  
գովեստի խոսքեր՝ անհամար շարքով, տներով  
անբալ, որոնք չի՛ ասում բերանն երկրածին,  
ո՛չ էլ մարմնեղեն գործիքն է կարող ամենն  
այդ տանել, ո՛չ էլ կարող են հոգեղենները  
կռել դրանք իրենց իզձերով:

Դ

Ամեն տեսնող աչք՝ Քո կողմն է ուղղված,  
Աստվա՛ծն ամենքի, Ունկնդի՛ր եղիր Քո ծառա-  
ների Հառաչման ձայնով պաղատանքներին, նաև  
լսիր Քո աղախիներին, եթե նրանցից որեէ մե-  
կը առջևդ աղաչի: Ընդունիր՝ նաև իմ ողբեր-  
գութեան ցողերը լացի, արտասուքները աչքե-  
րիս, որոնք ցանկասեր են դեռ և կաթկթում են

անարատ, սակայն մարդեղեն ոտքիդ, Տէ՛ր իմ  
Քրիստոս, այն օրինակով Հանցավոր կնոջ, որ իր  
մազերով ոտքերդ էր սրբում՝ որպես Մեծիդ  
դարձ ու դավանութեան, ես էլ նրա պես  
չրթանցս Համբուրով դեպի փրկութեան ինձ ա-  
ռաջնորդող Հաղորդութեանն եմ ահա ճաշա-  
կում, Համաշնչապես՝ անքակտելիորեն՝ Քեզ  
միանալով: Նույն գթութեանը նոր ողորմութե-  
ամբ Քեզնի՛ց առնելով, բարերա՛ր Աստված, որ-  
պես թե գրավ Մեծդ պարզեես փո՛քը իմ Հավա-  
տին: Գթութեան սիրո՛ւ ձեռքով Քո, ո՛վ Տէ՛ր, Քեզ  
խոստովանող ծառայիս խոսքով՝ ձմռան Հողմերի  
խոստութեանները թող որ Հանդարտվե՛ն, և  
մրրիկների սաստկութեանը թող՝ վերածվի ար-  
դեն ախո՛րժ գեփյուռուի, կարծիքն երկյուղի՛ մե՛ծ  
վստահութեան, իսկ պատիժների պատուհասները  
թող երանութեան պատահմունքներո՛վ այլևս ի  
Հայտ դան, թախիծներ ծնող վստահները թող՝  
փոխվեն հոգևոր խրախճանութեան, պեկոճութե-  
անը ծփանքների խո՛ր խաղաղութեան, և նավի  
ղեկը թող որ անչփոթ՝ նավահանգի՛ստդ բերի  
Հասցնի, և թող բեռները մեղքիս բերքերի Քո  
շնորհների թոշակո՛վ փոխվեն:

Ե

Բյուրավոր թվով բարի բաները, որ Քեզնից  
եղան ամենքի Համար՝ որպես շնորհում, առավել  
ևս պիտի մեծացնեն Անունն Հզորիդ՝ խնկալի-  
տութեամբ, խոստովանութեամբ պատմվի ամեն  
տեղ, պիտի ամաչի՛ այդժամ բանասարկուն, հերք-  
վի՛ լրիվ, Հալածվի՛ իսպառ, և իմ մեղքերի մուր-  
հակներն ամբողջ՝ դառնան անհեթեթ, և խաբ-  
կանքները խզվեն ու իրար չմիաբանվեն, որո-  
գայթները քանդվեն, ընկնեն, կապանքը կապ-  
վի՛, վիճերը վանվեն, ու վնասները լրի՛վ վերա-  
նան, պիտ պատրանքները չքվեն պարսերով,  
մեղքերը ջրվեն, պարտաթղթերը պատուվեն ար-  
դեն, լուծը խորտակվի՛, քեղինք քանդվեն: Չար  
Հանցանքների մութ ու մուսլի և մեզ պաշարող  
աղտոտ դեղերի բանակների տեղ՝ պիտի ժամանի  
Արև՛ը Փառքիդ՝ ապրեցնելու մեզ, փրկելու մեզ  
և լուսավորելու՛ աջից ու ձախից, դեմի՛ց, թի-  
կունքի՛ց, և Առավոտդ Գարնան պիտ ծագի Քո  
Սո՛ւրբ Հոգիով՝ Քեզ ակնկալող սպասողներին՝  
Քո՛ իսկ երևմամբ: Որովհետև որ՝ ամեն-ամեն-  
քին ես բարերարում, և Քեզանո՛վ է, որ Հնար ու-  
նի յուրաքանչյո՛ւր ոք, քանի որ Դո՛ւ ես ամեն-  
քի Համար կյանքի կամեցում, և փրկութեանն  
ես որոնում նրանց:

Ո՛վ պարգևատու ու Փրկարար Ձեռք Քրիստոս Տիրոջ, Քո սուրբ Շնորհի Աջի երկարմամբ՝ դեպի ի՛նձ դարձիր, Բնակվի՛ր իմ մեջ և միացիր ինձ և մի՛ հեռացիր կարոտյալ սրտիս սիրո սեռյակից: Եվ նկարագիրդ անեղծանելի՛ որպես պանծալի քրիստոնեկան Լուսյի մի նշխար թող որ փրկավե՛տ լինի կոչմանն իմ, և ի՛նձ էլ պահիր Քո միջնորդությամբ՝ Մատյանի մեջ Քո կյանքիդ կտակի, որով երկնային Ավետիսն՝ Հոգո՛վ մեզ պարգևեցիր: Քեզ, որ Միա՛կըզ են մեր կյանքին պատճառ, և պատճառեցիր Միակըզ Մեկի՛ն, և բոլորն ունես Մեկի՛ պատճառով, Եռյակ անձե՛րով՝ Մե՛կ Աստվածությամբ՝ և վայելում են Ներկայությունդ փառքերն երկնային, նաև փառքե՛րը սրբերի դասի՝ հավիտյա՛նս հավետ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված նույն իսկ հակողից, նույն աղերսներով և մաղթանքների խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ՌԻՂՂՎԱԾ ԱՍՏԾՈՒՆ ԲԱՆ Լ Գ**

Ա

Արգ, այս խոսքս, որ հարմարեցրի Աստվածությունդ պաշտամունքելու, հոգուս բերքերը նվիրելու Քեզ, օրհնյա՛լ Բարեգուծ, գուգամասնապես և կցորդելով բոլոր նրանց, որ՝ խնկազգեստ են Քո առջև կանգնած, անուշուկության այդ խառնիր Դու նաև Մարիամ անուշով բարեպաշտ կնոջ յուղն անուշուկության, որն իր էությամբ հավասարվում է բոլոր երջանիկ ա՛յն պոռնիկներին, ովքեր Քեզանով վերափոխվեցին հավետահրաշխեցուն հարգանքով, նույն հրաշքով էլ Դո՛ւ պարարտացնես խոսքերն իմ նվաստ, որ արդեն որպես արժանահավատ յուղ՝ ընդունես խոսքն իմ, որը թափվում է անհաս երկնայինուճ Բարձրյալիդ Գլխին, և ընտրյալներից միշտ բարբախտվում, որպեսզի հետո ես Հիշտամբվեմ, ըստ Մաղմոսողի անբամբաս խոսքի՝ թե. «Մեղավորի այգուց ստացված յուղով մի՛ օծիր գլուխդ երբեք»:

Բ

Այնպե՛ս արա, Տէ՛ր, Քո կրկնակի Օրհնության բուրմամբ, որ այս մատյանի վրա է իջել, շատե՛րը կընես առջևդ կանգնեն խոստովանություն,

ո՛ղջ աշխարհով մեկ՝ համասփյո՛ւս և ամենատարա՛ծ՝ բոլոր տեսակի մեղքերո՛վ իրենց, նրանց հիշատակն համեմատելով խոստովանությամբ Քեզ դառնալու հետ: Քանզի նույն Տէ՛րն Ես, որ զգաստությունդ դարձի կոչեցիր նախնի չարախոհ-մեղավոր կանանց, որոնց օրինակն էլ այնուհետև նմանեցրիր՝ անգամ վարքի հետ մի մարգարեի, ուճ ստեղծեցիր Քո ճշմարտության պատկերի հանգույն, և այստեղից էլ, սրանց միջոցով ներգործությունդ է աներկբայելի, որ իջավ վրաս կատարելագո՛ւն չնորհիդ Լույսով, որպեսզի արդեն դարու փոխարեն, որ տալիս էին որպես կերակուր՝ անասուններին, արդեն ես անվեմ առատապտուղ ցորենից սարքած կենսատո՛ւ հացով, ապականացու արծաթի փոխան՝ շնորհեցիր ինձ արքունական Քո Պատկերը փառքի, թմբուկություն բերող և հիմարացնող գինու փոխարեն՝ Բաժա՛կը ինձ տվիր՝ Արարչիդ Արյամբ, Հին ժողովրդի արատ ունեցող կնոջից առած յուղի փոխարեն՝ Շնորհ Օծո՛ւմը ինձ վերադարձրիր, գլուխս ծածկող կտավի փոխան՝ հագցրեցիր ինձ Անապակության՝ օրհնյալ վերարկուն, ապարաջանով պծնվելու տեղ՝ ինձ ընծայեցիր թուխքնե՛րն Հոգու Բարեմասնության, Ավետարանով և օրենքներով կյանքի պարգևդ կենսագործեցիր՝ հանդե՛րձ գործնական առաքի նություն, ականջին դրվող վայելուչ զարդի փոխարեն արդեն՝ Տէրունի Ձայնիդ հավե՛րժ անստվեր հիշատակն ունեմ, կուրծքս պերճացնող մանյակի փոխան՝ ինձ նվիրեցիր Քո հոգնահավաք Ավանդն ուղղության՝ Քեզնո՛վ իսկ կրոն՝ լծիդ քաղցրությունդ:

Գ

Բայց այս ամենով ինչո՛ւ պարծենամ, երբ հարկ է կրկին նույն այդ ամենը հիշատակելով՝ կրկին՝ պատկառել, այլ հնչեբանգի փոխելով մատյանն այս ողբերգության, այնպես որ լինի իմ փրկությունը օգուտ և հարմար, որպեսզի բոլոր մեղք ու պարաքերիս պատժի հատուցման հարցերը լուծվե՛ն: Մարգարեների խոսքն իմ աղոթքում համառոտելով՝ խիստ դատախազի նման կարգելով ընթացքիս վրա, նրանց ողբերին ինքս էլ իմ ողբով դառած լծակից, քան թե խառնված նրանց բերկրանքին, երբ կարող էի պարել ցնծությունդ, այլ ի՛նքս ընտրեցի նախատիքնե՛րդ՝ իմ խորտակման դեմ, հառաչանքներս ու ձայնս հեծեծանքի և բողոքներըս, որ բարկությունիցդ ես առաջանում՝ համարելով իմ լացն այս



ավելի՛ կարևորագույն: Քանի որ Աստուծու Գթությունն է մեծ, որ ամեն կողմից ժամանում է, երբ դատափեստում ենք մեր մեղքերը մենք և դառնում է հույս Ողորմածությամբ՝ երբ որ զղջում ենք ու խոստովանում, որովհետև որ, Աստված, Տէ՛րը մեր՝ ողորմությամբ է հանուր ավետիս, Պարգևի՛ բաշխում, Լույսի՛ երևում, և խրախուսաներ ու քաջալերանք, և ժառանգելը վերին փառքերի, հրաշալիքներն հայտնություններին, և սքանչելի տեսություններն՝ մեզ մխիթարող, որոնցից ոմանք հույս են պարգևում, ոմանք էլ բերում ու մատուցում են՝ ամենատարբեր վահատություններ, որոնց մեջ էլ ես կործանված մե՛կն եմ, այն էլ՝ ի՛մ կամքով:

### Գ

Որովհետև երբ մեծ եզեկիելը պատշաճ համարեց, որ վարագույրը տաճարի կոչեր Տէր Աստծուն զգեստ, և ժողովուրդը կուռքի վերածեց վարագույրը այդ շարունակորեն կարկատելով այն, գործ, որ ասում է՝ պոռնկանալ է սոսկ նշանակում, - Հայպա և որքա՞ն պիտի հաշվվեն անմաքրություն իմ պատիժները ողջ. ես, որ Աստծուն եմ զգեստի նման հագել թե՛ նեսից, թե՛ արտաքինից: Եվ զարմանում եմ, որ չե՛մ հրդեհվում, և հիանում եմ, որ չե՛մ այրվում, ապշում եմ, ինչպե՞ս չեմ հափշտակվում, տանջվա՛ծ, լքվա՛ծ, չարչարվա՛ծ, ջախվա՛ծ, մանրատվա՛ծ նաև, այսչափ խորտակվա՛ծ, կտրատվա՛ծ արդեն ու բաժանված են մասերս իրարից, զրվածքում նշված այն ժանյակի պես, որ օրինակն է քանդմամբ կորուստի: Սակայն միայն ինձ սրա՛նք են պահում՝ թեկուզև նշույլ մի հիշատակի և հույս փրկության, որովհետև որ Ավետարանը կյա՛նք է ամենքին՝ Բանի՛ պատկերով ճանաչեցված մեզ, որով է, որ կա՛ մեզ մեղքերից դարձ և մեր պարտքերից ազատման շնորհ, մեր եղծումներից կա՛ նորոգություն, անօրինությունից ստո՛ւյգ քավություն, վերքին բժշկու՛մ, վտանգին՝ անդո՛րր, պատժին՝ ներումնե՛ր, և պատերազմին՝ հանդա՛րտ ընթացում, կրակին՝ անձրև՛, պատուհասներին ընդդեմ՝ պարգևներ, մեր սատակումը ակնկալելու փոխարեն՝ ձիբե՛ր, մահվան գործարանն ընկնելու փոխան՝ կյա՛նք՝ ազատություն:

### Ե

Ինչու՞ համար եմ այս ամենն հիշում, թվում խոսքիս մեջ, և ոչ թե միայն ներկայացնելով Անճառելիի՛ր Բարձրյալ մեր Հոր հիշատակման մեջ՝

Որդուն կցորդված, հանուն Միածին Որդու լինելով՝ ընտանությունն Հոր՝ մեզ իսկ ուղղորդված, սրանց երկուսի ակնարկությամբ էլ՝ հաղորդությունը՝ Աստուծու Սուրբ Հոգուն, փրկությունն եկած իսաչի միջոցով և սփոփանքը Բանով մեզ իջած, Իր բարի կամքի վարձը մեզ տված, Իր իմացության գիտությունը՝ մեր չափ ու կշիռով, սուրբ Ավագանը մեզ կենդանացնող՝ միջնորդությունն այդ՝ Իր հետ հաշտության, և այլ, ամենայն անթիվ բարիքներ, որ Բարերարից մեզ իսկ համար են տրվել-կուտակվել, բարիքներ, որոնք ազատ են հարկից և եթե լուծ են՝ քա՛ղցր են ու թեթև, և իշխողներ են իշխանների պես, որ չե՛ն գտնվում իշխանության տակ: Սրանք են ահա, որ մինչև անգամ մահվան դառնությունամբ եղածս պահին՝ կենդանի կյանք են ավետարանում, և տարակուսանք չե՛ս գտնի նրանց ոչ մեկի մեջ էլ, քանզի երբ որ ես սրանք չունեի՛ ստուգապես էլ անպտուղ էի, կյանքով կորուսյալ, ինչպես որ Աստուծո Բանի համաձայն երգողն է ասում: Եվ Հորը ո՛չ թե փառավորում եմ Որդու փոքրությունամբ, ո՛չ նվաստացնում Հոգուն, թե՛ Որդուն եմ նախադասում, Նրանք ինձ համար համափառությունամբ՝ Նույն Երեսով են մեկ արարչություն: Որովհետև որ՝ Սուրբ Հոգու կողմից այս է աղաչանք՝ դեռ պատարագի սկզբում տրված նախընծայորեն, որում երկնավոր Գառն է մորթվում, որ ա՛յդ մասին մեր աղոթքը անենք՝ մեր կյանքի համար ու կենդանության:

## Աղոթք, որ պատարագից առաջ է մատուցվում

### Ձ

Ամենակալ ու մարդասեր Աստված, ամենքի՛ Աստված և բարերարո՛ղ, որ երևացող ու չերևացող ամեն-ամեն բան Ի՛նքդ Ստեղծեցիր, Փրկո՛ղ, Հաստատո՛ղ, և Խնամատա՛ր, և Խաղաղարա՛ր Հոր Հզո՛ր Հոգի. մենք բազկատարած, մեր աղոթքների գոչման հեծությամբ՝ հայցում ենք Քեզից մեղքի՛ թողություն, սրբանայո՛ւ վարք, այդպե՛ս ենք ահա ընդառաջ ելել, Քե՛զ Ահավորի՛ր: Մենք մեծ դողությամբ, սաստիկ երկյուղով ջանք ենք անում, Տէ՛ր, որ նախևառաջ Քե՛զ մատուցանենք բանական խոսքի պատարագը մեր Ձորությունը Քո անզննելի, որպես վայել է Աթոռակլցիդ, և Փառակլցիդ, Արարչակլցիդ Հայրենի պատվին, որ չի՛ կողպտվում: Մածուկում ինչ կա՛ Դո՛ւ Ինքդ ես քննում

Քո խոր խորհրդով՝ կատարյալ Կամքի գործադրութեամբ Հորդո՛ղ էմմանուելի, որ Քեզ Առաքեց՛ց, որպէս Փրկի՛չ մեզ և Կենդանատու՛ և Արարիչը մեր ամենայնի: Եվ Քո Ձեռքն էր, որ ճանաչեցրեց Աստվածութեանդ՝ երեք անձերով ու միասնական, որոնցից մեկը Դո՛ւ ես ճանաչվում, Անհասանելի՛դ: Քո՛ միջոցով և Քեզանո՛վ եղան առաջինները՝ նահապետական տոհմին շառավիղ, տեսանողներդ անվանակոչված՝ անցյալների մեջ և դալիքների և արգէն եղած ծնունդների մեջ, նաև նրանց, որ՝ դեռ չեն գոյացել, նրանք՝ ամենքն էլ անստվեր լեզվով, բարբառով Բանի՛ վերապատմեցին Կենդանութունդ հավիտենական: Հոգի՛ Տէր Աստծո, որ Քեզ քարոզեց Մովսէս մարգարեն, որ անպարագիր Քո մեծ գորութեամբ, երբ Գնում էիր ջրի վրայով՝ ընթացքդ տեսալ, շրջապայութիւնդ աճե՛ղ իր չորս կողմ, սուրբ Սեր տարածող Գիրկդ լայն բացած պաշտպան կանգնելով նոր ծնունդներին՝ դժասիրելով և նորոգելով, և մեզ կնքելով ճանաչեցրի՛ր Քեզ այդուհանդերձ՝ սուրբ ավագանիդ խորհրդով Լույսի: Որ կերպարանքն էր այն օրինակի, երբ վարագույրը Հին ուխտի վերջում պատուվեց՝ հանվեց, որ նշան խոսք է, թե ամեն բարին և բնութիւնն իր բովանդակութեամբ՝ Տիրապետ Կարող Դո՛ւ ստեղծեցիր գոյերին բոլոր, էութիւններին ամենայն, նաև՝ անէներին էլ: Եվ Քեզանով է ստեղծաբանվում նորոգութիւնը նաև Հարութեան, այն ամենքի, որ՝ Քեզանո՛վ եղան և ա՛յն ժամանակ, որ Օրն է վերջին այս մեր կենցաղի, և Օրն առաջին՝ կենդանիների երկրում ապրելու: Քե՛զ է հնազանդ Կամքի միութեամբ, որպէս Հորը Իր էակից Որդին, Անդրանիկ Որդին մեր կերպարն առած: Ծջմարիտն Աստված Ավետարանեց մեզ Ի՛ր իսկ Որդուն, որպէս հավասար, որպէս համագոյ՝ յուր Հո՛րը Հզոր. Հոգուն հայհոյը անքավելի մեղք Տէրը անվանեց, սակայն հայհոյը ներեց Իր հանդեպ Արդա՛րն անարատ, Նա՛, որ Գտնողն էր մեր ամենայնի, Նա՛ մեր մեղքերի համար մատնվեց և մեռելներից հարյալ, որպէսզի մեզ արդարացնի: Նրան Փա՛ռք՝ Քեզնով, Քեզ բարբառնո՛ւմ մե՛կ ու միասին՝ Հո՛րն ամենակալ՝ հավիտյանս հավետ: Ամէ՛ն:

Դարձյալ նույն խոսքի կարգն եմ կըրկնում, մինչև որ Լույսի ազդեցութիւնը իր հրաշալի հայտնութեամբ ազդի՛ վերստին, կրկին՝ խաղաղութիւնը մեզ ավետելու

Է

Աղաչո՛ւմ եմ Քեզ և աղերսում եմ արցունքահառաչ, ո՛վ արարչութիւն՝ յուրաքանչյուրիցս էլ փառավորված, անեղծ, անստեղծ և անժամանակ Հոգուդ զթացող, որ Իր անմուռնչ հեծութիւններով Բարեխոսն է մեր՝ առ ամենայնի Հա՛յրդ Ողորմած, որ Պահպանում է միշտ Քո սրբերին, մեղք գործածներին մաքրո՛ւմ-լվանո՛ւմ և տաճարներդ է հիմնում ու կազմում: Ո՛վ Դու Կենդանի կամքի Կեցուցիչ՝ Բարձրյալը Հոր, արդ, մեզ ազատի՛ր ամեն տեսակի անմաքուր գործից, այն բոլորից, որ՝ հաճելի չեն Քեզ, որոնցով ո՛չ ոք՝ անհնար է, թե՛ Քեզ մոտ բնակվի, և թող որ մեր մեջ չհանգչեն հանկարծ կայծակումները Լույսիդ շնորհի, որոնցով է, որ առնում է իմաստ տեսողութիւնը մեր իսկ աչքերի, որով հետև որ մենք ճանաչումն այդ Քեզնի՛ց ստացանք՝ միանալով Քեզ մեր աղոթքներով և ընտրյալ վաքքի խնկաբուրումով: Եվ քանզի Մեկից երրորդութիւնից պատարագվում է, Մյուսն ընդունում՝ բարեհաճելով, միջնորդելով մեզ՝ Իր Անդրանիկի հաշտարար Արյամբ, Դու լսելով մեր պաղատանքները, արդարացնում ես, հանգստացնում մեզ՝ պատվականորեն ու վայելչութեամբ արդեն պատրաստված օթևաններում, երկնավոր Գառիդ Մարմնի ճաշակման վայելումի՛ մեջ, որ անմահացնող մանանան է Նոր կյանքի փրկութեան՝ առանց մեզ պատժի դատապարտութեան: Եվ այդ իսկ Հրից գայթակղութիւնն է հալվում մեր ներսի, մարգարեի խոսքն այդպէ՛ս մաքրվեց, երբ ունելիով Կենդանի կրակ մոտեցրեցին նրա շրթունքին, որ ամենքի՛ն էլ Քո մեծ գթութեան խոսքը քարոզվի, որպէս որ Աստծո Որդիով է մեզ՝ Քաղցրութիւնը Հոր քարոզվում բոլոր արարածներին, Նա, որ անառակ որդուն մերձ բերեց ժառանգութեանն Իր, և պոռնիկներին արժանացրեց՝ նույն երանութեանն Իր արդարների՝ վե՛րն Երկնային արքայութեան մեջ:

Ը

Այո՛, այո՛, Տէ՛ր, նրանցից մե՛կն եմ, ի՛նձ էլ ընդունիր նրանց հետ մեկտեղ, որպէս որ Մեծիդ մարդասիրութեան կարիքն ունեցող, որպէսզի ապրեմ Քո՛ շնորհներով նաև Արյա՛մբը՝ իմ մշակվելով, քանի որ ա՛յս է աստվածութիւնդ Վերն ամենայնից ծանոթացնում մեզ՝ յուրաքանչյուրիս, որ փառավոր ես Հոր հետ միասին համապատվաբար, Մե՛կ Նույն Կամքի մեջ, Մե՛կ իշխանութեամբ գովաբանութեան: Քանի որ

Քոնն են Գթուլթյո՛ւնն անծայր, Կարողություն և Մարդասիրությո՛ւն, Զորություն և Փա՛ռք՝ Հավիտյա՛նս Հապեա: Ամէ՛ն:



**Հծծծանքների մի նոր Հավելված  
նույն իսկ Հակողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏԾՈՒՆ  
ՔԱՆ ԼԴ**

Ա

Ազգ, այս ամենը՝ իմ թշվառացյալ իղձերով շնչին, դավանությունս է՝ Քեզն՛ով-Քե՛զ ուղղված, Հարմար խոսքերով, քանի որ, Աստված, ամենայնն Ի՛նքդ ես Բանի միջոցով ողջ բովանդակում, որոնց մասին, որ նախկին ճառերում խոսել եմ արդեն և երկրորդներում նույնն եմ անելու: Եվ Հանդիմանման շարքերն են գրիս՝ բանական քարոզ, որոնց միջոցով ես թվարկեցի՝ արգահատանքս բոլոր մեղքերին և աղերսներս բարեմաղթության, որոնք որ իրենց ներքինում ունեն գոհաբանություն: Եվ իմ մատյանի քարոզները այս Քեզնով ուղղված են տարբե՛ր ազգերի բազմություններին, և պիտ թարգմանվե՛ն ժողովուրդներին՝ որպես նվերներ:

**Հանդիսաարահում գտնվողներից ի վեր  
առաքված մաղթանքի այն խոսքերը, որոնցով  
Աստծո Հաշտեցնող Հոգին հասնում է  
օգնության**

Բ

Արդ աղաչում եմ անփոփոխելի և ամենահզոր Քո Տէրության մեջ՝ Քո Հզո՛ր Հոգուն՝ քաղցրությանդ ցո՛ղը առաքելի ինձ՝ իմ անձին որպես բարեգործություն, Քո իշխանական ազդո՛վ աներկբա՝ ամեն բան արդար կյանքով Հագեցնող Քո՛ շնորհներով, ողորմությա՛մբըդ ամենապարզե՛ լցնելի ի՛նձ էլ: Եվ իմ բանական անդատանը այս, որ կարծրացած է մարմնեղեն սրտով, Ի՛նքդ Հերկելի՛ր՝ Քո արգասաբեր ընդունակության հոգևոր սերմերն ինձ սերմանելով: Ամենախմաստ էությունդ ես մեզ խոստովանեցնում, որով տալիս ես ամենա՛յն պարզե, ճանաչեցնո՛ւմ Քեզ վարդապետներին, և բարբառո՛ւմ են համբերը Քեզնով, շղթայվածների կապա՛նքն

ես քանդում, աճեցնում նրանց որպես ազատներ՝, ձեռնադրում ես առաքյալներին, մարգարեներին լցնում Քեզան՛ով, բացո՛ւմ խուլերի ափանջները փակ, որպես անում էր ազգակիցը Քո՛ Հակիցը Հոր՝ Անդրանիկ Որդին՝ Քո՛ գործակցությամբ՝ ներգործելով այս ամենի վրա: Քեզ Աստված Ի՛նքը քարոզեց որպես Հավասարակից Իսկությանը Հոր: Ի՛նձ՝ մեղավորիս Համարձակությա՛մբ խոսել շնորհի, Կնքի՛ր իմ սրտում Քո կենդանարար Ավետարանիդ խորհուրդն ավետյաց, կյանքի մտքերի արագաթուփ ողջ ընթացքներով լիանամ ի՛նքս էլ՝ Քեզանով շնչող զույգ կտակներիդ ասպարեզի մեջ: Եվ երբ Հանդեսի առջև կանգնելով Բանի մեկնության Խոսքն իմ սկսեմ, թող նախևառաջ Գթուլթյո՛ւնը Քո իմ մեջ բարձրանա, որ կարողանա՛մ արժանիներիդ մասին խոսք ասել, պիտանիների՛, և Քո սահմանած ժամանակի մեջ՝ Քեզհաճոնների՛, Հանո՛ւն Քո փառքի և աստվածության նրանց գովեստի, որ և թող լինի ընդհանրական սուրբ եկեղեցու շինություն համար գործնական ընծաս: Վրա՛ս երկարի ամենայնից վեր Ա՛ջդ Մերձավոր, զորացրո՛ւ է ինձ շնորհներով Քո, որ գթությամբդ են ծագում ինձ վրա, գլորչացրո՛ւ մտքերիս միջից մեզը մթության և մոռացություն, ապաքինի՛ր ինձ մեղքի խավարից, որ Իմաստությանդ վրա ուշք դրած՝ բարձրանա՛մ վեր երկրի կենցաղից: Լուսավորի՛ր ինձ աստվածությանդ վերատին ծագմամբ և Գիտությամբ Քո, որն անստվեր է և հրաշալի, որպեսզի լինեմ Հզո՛ր, արժանի՛ ուսուցանելու բարությունը Քո որպես օրինակ՝ Տէր Աստծու սիրող բոլոր լսողաց: Եվ Քե՛զ, որ ամենայնն ես բովանդակում՝ ամենայնից փա՛ռք՝ և ամենակալ Հորը հետ մեկտեղ՝ Որդո՛ւն Միածին և Բաբերարին՝ այժմ և՛ Հավիտյա՛ն անվախճանությամբ: Ամէ՛ն:

**Սուրբ Երրորդության անփոփոխ, նաև Հավերժ  
նորոգող ստեղծաբանության Աստծու ներազդի  
մասին, որ Նիկիայում սահմանվեց  
Հավատամքի կարգով**

Գ

Խոստովանում ենք, դավանում ենք և պաշտամունքում ենք և երկրպագում զուգահավասար փառքի միությամբ Երրորդությանը միշտ ամենատո՛ւրբ, Աստվածությանը Հա՛ր անճառելի, Հավասարապատի՛վ, մշտաբո՛ւխ բարի, նաև նույնազոյ և իմաստության իր վեհ թ-

ևերի սլացումներով հավիտյան անհաս, վե՛ր է ավելի համեմատելի որևէ բանից կամ օրինակից, և դո՛ւրս՝ ամենայն նմանությունից, գերազանցն է Նա գոյաբանություն ամեն սահմանից՝ Իր անպարագիր բացարձակությունը, ավելի ևս առա՛ջ էլ Նա կար, քան երբ որ դրեց հավիտենություն հիմքը անտարփակ էությունների, հավետ պսակված ամենահարուստ վեհափառությունը ստեղծվածներին համար սահմանեց կարգ ու կանոններ՝ օրհնաբանությունը անթարգմանելի: Ժամանակների Հաստատողն է Նա, նաև նրանց, որ՝ կերպավորվեցին ժամանակներում, Ի՛նքն է պատճառը հանդերձայների և երևացող և աներևույթ ողջ տեսակների՝ ամենահարմար գոյաբանվելու Տէ՛րը Հորինիչ, Նա ո՛չ չափվում է որևէ անվամբ, ո՛չ էլ որևէ տիտղոս կարող է անբովանդակը երբևէ կշռել. ո՛չ կարելի է Նրա որակի նմանությունը օրինակ գտնել, ո՛չ էլ այնպիսի մի քանակություն, որի հետ դրվի նույն կշռություն, Նա ո՛չ որևէ մեծ օրինակի նմանվելով է դեմք կազմավորել, ո՛չ էլ ծանոթ է և կամ ճանաչված Իր որպիսությունը, ո՛չ տարածվում է ինչ որ թերություն ներքին պատճառով, ո՛չ էլ ամփոփվում լրիվությունից, ո՛չ գրավվում է որևէ վայրով ո՛չ էլ վայրենի տեղերը ընտրում՝ Հայտնվելու Իր արարածներին:

Դ

Դու և Հայր ամենայն գթությունների, հանուրի՛ Աստված, և ամենայնը, որ կան, ամենքն էլ՝ ենթակա՛ են Քեզ՝ երկնքում լինեն, թե՛ երկրի վրա, նրանք ամենքն էլ գոյացան Բանից, Նրանո՛վ է կան և Նրանո՛վ են եղածները ողջ, որ ստեղծեցի՛ր, շնչավորեցի՛ր Ինքդ ամենքի՛ն էլ՝ Քեզ իսկ Իսկակցող Հոգու միջոցով կենդանացնելով, որով որ՝ համայնը կազմավորվեց:

Ե

Մեկն երջանկափառ և համագորը երեք անձերի՝ Աստվորության, վերից խոնարհվեց ստորիններին, և Իր բնությունը մեր ներաշխարհից եղավ անբաժան՝ չարտազատվելով փառաց ակոռից և իր ծնողի դեմքը տեսնելուն անկարոտ սիրով մտավ սենյակը կույսի արգանդի և այնտեղից էլ պարզորեն ելավ հոգավորությունը մարդկային մարմնի և իր մարդկությունը անթերի՛ էր Նա և գերազանց էր Իր Աստվածությունը. Հոր միակ Որդին և Միածինն ու Անդրանիկն էր Նա սուրբ Աստվածամոր՝ Տիրածին կույսի, և

Արարիչը այդ եղանակով որպես ճշմարիտ Մա՛րդ ծնեց Նրան, Իր սկզբնածին Մարդը կատարյալ, որ առավելն էր, քան մարդը՝ Ադամ: Ահա մի բան, որ չէ՛ր եղել երբեք երկրաստեղծ մարդկանց նմանությունով, այլ Նո՛ր էր, չքնա՛ղ, թագավորների համար՝ Վեհափա՛ռ, որ չհամարեց Ինքն Իրեն դրսից, ո՛չ էլ գոյացավ ժամանակներում, Առաջնե՛կն էր Նա՝ ըստ Սաղմոսողի, Առաջնեկը, քան՝ թագավորները ամբողջ երկրի, Նա, որ լինելով Ինքն անապական՝ խառնվեց սակայն ու կերպավորվեց մեր մարմինների հուսկ նմանությունը: Ըստ օրենքի Նա՝ Հոգով էր Աստծո, նաև միատեղ՝ մարդկային մարմնով, և ոսկի՛ էր Նա՝ հրին խառնված, և կամ, հայտնապես Լո՛ւյսն էր՝ օդի հետ, որ չէ՛ր փոփոխվում ու տարանջատվում:

Զ

Կամավոր կերպով Նա Ինքը եկավ մահվամբ խաչվելու, որպես անարատ Գառը սպանդի, և ծրագիրն այդ Ի՛նքը կատարեց՝ արարածների փրկության, նաև՝ կենդանիների իսկություն համար, Նա Ի՛նքը մտավ չարչարանքի տակ, Ի՛նքն երեք օրով դրվեց շիրմի մեջ, և մահվամբ իջավ խորըր դժոխքի՝ սանդարամետականների կողմից վհատված բանտարկվածներին՝ քարոզեց կյա՛նք ու ողորմության՝ լույս: Եվ երբ ավարտեց՝ տնտեսությունն Իր փրկվողների, Տնօրինաբա՛ր և աստվածապե՛ս՝ վերստին եղավ այս կենցաղի մեջ և կառավարած հողմի թևերով, քերովբեների վրա ելնելով՝ Նա անքննություն ամպերով ծածկվեց, և համբարձվեց վե՛ր՝ ամենավերին՝ երկնքը մինչև՝ նստելով այն ճոխ աթոռն իրական՝ Իր Հոր աջ կողմում, Ում սկզբից էր Ինքը ժառանգորդ՝ հավասարությունը, որից էլ երբեք Նա չբաժանվեց՝ այդպես իսկ արդեն՝ անկորուստ չափով, և աննվազ Իր սեփականության Տէ՛րը դառնալով: Որով որ պիտի կրկին գա երկիր՝ հատուցումների դատաստանները քննաբանելու, ծածուկում եղած ամեն՝ամեն բան արդարության և իրավունքների չափ ու կշռությունով Դատ անցկացնելու, և Որին է, որ՝ սպասում ենք մենք և Որին ուղղված աղոթք ենք կարդում՝ հավատացյալներս ամեն՝ամենայն՝ Իր ողջ տերություն սահմանների մեջ, ամենքի վրա Նրա ունեցած տնօրինությունը, և Նա արդարև Միա՛կն է միայն՝ Մե՛կ ու Միակից, և Միակի՛ն է փառակցությունն Իր և երկրպագված՝ հավիտենաբա՛ր:

է

Բարեբաններ միշտ և օրհնաբաններ Հորը և Որդուն, նաև Սուրբ Հոգուն Նրանց էության, որ Ամենագոր և Կատարյալ է և ճշմարտությո՛ւն, և Սուրբ Հավիտյան, որ գոյացրեց անէությունից այն ամենը, որ՝ Նրանով սկիզբ և կյանք ունեցան. Ինքն Իրենո՛վ է գործում ամեն բան, և Երկուսի Հետ Հավիտյան անեղծ Հոմիչխա՛նն է Նա՝ Թագավորությանն Իր սահման չունեցող, և ինչպես Նա, որ՝ սկզբնապատճառն է նախևառաջին՝ Բանն Իր ահավոր հավետ Ինքնության, նույն Ինքն և Հոգին բարեբանվում է, որպես Ինքնակալ բարերարություն, ամենքին Հորից պարգևներ բաշխող, և գովեստն է Նա Հոր Միակ Փառքի, այսինքն՝ Փա՛ռքը Միածին Որդու: Նա, որ ներազդեց ողջ օրենքներին և ճշգրտեց մարգարեներին, և փշմամբ Հոգու՝ առաքյալների մեջ տպավորվեց, ի Հայտ երևաց աղավնու տեսքով Հորդանան գետում՝ գալիք մեծության փառքի պարգևով, և փայլեց Լույսով նրանց գրեթե, ովքեր որ եղան ավանդ պահողներ, Նա՛ էր՝ արարեց Հանճարեղներին և գորացրեց իմաստուններին, վարդապետներին լցրեց Իրենով և արքայության սուրբ Յուզով օծեց, Նա՛ օժանդակեց թագավորներին ու տվեց նրանց վերակացուներ, Նա՛ Հրամայեց և՛ իշխանությամբ Առաջնորդն եղավ փրկության համար, շնորհեց ձիրք՛ր, հանդերձյալներին եղավ քավությո՛ւն, և Քրիստոսի մահվամբ մկրտված յուրաքանչյուրի ներսը իջնելով ու բնակվելով նրանց ներքինում՝ նրանց ամենքին՝ Նա՛ մաքրագործեց. և այն, որ Հայրն ու Որդին կամեցան, նույնն էլ ներգործեց մեզ վրա Հոգին, որ Ի՛նքն է Աստված՝ Տիրապես խնկյա՛լ ամենքի կողմից:

Ը

Որովհետև որ՝ Սուրբ Երրորդության անունները մենք նախաթվելով՝ նրանցից մեկը մեծ չէ՛ ավելի, քան մյուսները, կամ անունները մեկը մյուսից հետո ասելով՝ նրանցից մեկը չի՛ նվաստանում կամ խառնակում չեն՝ մեկը մյուսին, իսկ Սուրբ Երեքը, երբ տրոհվում են՝ միշտ էլ մնում են միևնույն կամքում: Որովհետև որ՝ անմեծարելի՛ Հայրը կլիներ, եթե չունենար Բանը առանձին գորավորություն, և նաև եթե Հոգով չլիներ, Նա պիտի լիներ մեկը անկենդան, պակաս ամենքին Իր Կենդանությամբ հրամայելու: Իսկ եթե Բանը չճանաչեցվի Իր Հոր անունով, կլինի որպես մի որբ կամ լքված և կամ ժառանգը մա-

հացած մեկի: Նույնպես և Հոգին, եթե պատճառի՛ց ելնելով գործին չի նշանակվում, ապա կլինի որ ո՛մն թափառող և իբրև լոկ շունչ անկա՛րգ ու անդա՛ս:

Թ

Իսկ եթե մեկը հակաճառ խոսքով հավակնի Հորն Իր Բանից անջատել, իբր երբե՛մն էր՝ կար, ավելի առաջ ժամանակի մեջ չի եղել իբրև, և անբանության այդ բամբասանքներով «պատվել» կամենա Մեծությանը վե՛հ, կամ սարկություն վերագրելով անմահ Բխողին՝ համարելով թե, իբր հոգևոր չէ՛ր իր Բուն էությամբ, այդպես խոսողը ներ է մուծում լոկ օտար գոյություն, և կամ, իբրև թե, ամբողջելու պես այլալիական է՝ անարատ պատվով և՛ միությունը Սուրբ Երրորդության, - այդպիսիներին հարկ է հավատի պարսատիկներից նետվող խոսքերի քարերով խփել, որպես արվում է դժնի դեկերի և գազանացած բնույթների դեմ մարտելու ժամին, այդպիսով պիտի հերքելով դրանց՝ Հայածե՛նք հեռու, նաև նգովքներ դնելով նրանց՝ պիտի փա՛կ պահենք մենք նրանց առաջ մեր կյանքի ուղին՝ եկեղեցական մո՛ւտքը Գալիթի: Ուստիև մե՛նք էլ՝ Սուրբ Երրորդությա՛նն ենք փառավորում՝ նույն մեկ տերությամբ միակցորդված հավասարությամբ, իրենց զուգաճայն սրբաբանությամբ և միանման իրենց հարթությամբ, որ և Օրհնյա՛լ են և Փառավորյա՛լ երկնքում, նաև՝ երկրի վրա, անդրանիկներին և երկրածին բանական ազգեր մի հավաքելով՝ հավիտենական Մե՛ծ կյանքի համար: Ամէ՛ն:

Ժ

Արդ, գոռումներն այս ծածուկ խորհրդոց՝ կերպավորելով այս մատյանի մեջ, որ լսողներին ունկերին լինի միշտ հասանելի, սրանո՛վ ահա սպառազինվել, ապա՛ եմ մտել այս հանդեսի մեջ: Դու կարիք չունեն՝, որ այս իմ ձայնով մեծահոգակվես, որովհետև որ՝ մինչև ամենայն ստեղծածներդ՝ երկնքում ապրող անմահներն էին Քեզ փառաբանում և երկրաստեղծ բանավորներով, Դու Ինքդ Քեզնո՛վ, Քո՛ լրությունից փառավորյալ և օրհնված էիր արդեն նախապես, այլ, որովհետև ի՛նձ՝ մերժվածիս հարգելուդ համար, թույլ ես տալիս, որ՝ Քո անճառելի քաղցրությունները ի՛նքս էլ ճաշակեմ՝ իմ այս մատյանով հաղորդվելով Քեզ: Ըստ արքունական Քո հրամանի ի՞նչ է պարտավոր կյանք-

քի կանոնով. Քեզ Ադոնայի Տէ՛ր սաել, սակայն՝ պատվիրաններդ չգործադրե՞լ. եվ ես ինքս ինձ-նից՝ Քեզանո՛վ ոսկե տախտակ եմ խոսուև, որ նվիրյալ է Քո պատգամներին, և որ գրված եմ Քո՝ Աստժո՛ւղ մատով, եղծվե՛լ եմ սակայն և այնքա՛ն չափով, որ իմ խորտակվելն էր իրավա-ցի, և այդ առաջին ոսկուց գրվված՝ պատվել եմ մրով, և երկրորդով եմ իմ առաջինի նմանութ-յունը Հայթաթել փորձում: Սակայն քանի որ բազում անգամներ դրվատանքով ու խանդա-ղատանքով Քեզ պաղատեցի, որոնք չեն գրվել ձայնիս այս կարգում, այս խոսքերիս Հետ այն մյուսներն էլ լսիր, Բարեգո՛ւթ: Եվ թող որ լինի այս աղերսներիս բարբառումները Հողավորու-մով կապված և՛ նրանց, և թերևս ես, Քո առջևն իմ այս մաքրվելո՛ւմ էլ՝ Կամարարիցդ՝ նվերն այս Հացի՛ յուղով շաղախված բաղարջի նման՝ փառքիդ սեղանին մատուցանելու իրա-վո՛ւնքն առնեմ:

ՃԱ

Այլ Դո՛ւ, Բարերա՛ր և ամբողջովին մար-դասե՛ր Ես միշտ, Հիսո՛ւս Քրիստոս՝ մե՛կն Աստվածութեան, Դու, որ Հզո՛ր Ես և Ամենա-կա՛լ, որ ինամարկու գթություններիդ քաղց-րութեամբ Ես Հար Հաղթանակ տանում՝ ո՛չ միայն Հանուր Հասարակութեան իմ նման մարդկանց Հետ գոյակցելով, երբ որ նրանց մեջ ամբոխումը կա և բյուրամասնյա Հակառա-կություն, այլ նույն գթութեան քաղցրութեամբ Քո՝ Հրեշտակների՝ մեջ Ես բնակվում, երբ մեզ-նից վեր ու անախտ են նրանք, և նրանցից էլ առավելս սուրբ անարատութեամբ նվիրյալնե-րիդ, որոնցից մեկն էր Եղիա մարգարեն, որի Հետ որպես խստութեան նշան՝ Քորեք լեռնե-րում՝ եռօրինակով խոսեցիր նրան. մեկ՝ մե՛ծ շարժումով, մեկ՝ Հողմո՛ւմ ուժգին, և մեկ էլ ար-դեն՝ Հրո՛ւմ կիզանող, - բայց ներկա չէիր Ինքդ այդ ամենում, որովհետև որ, երբ երևացիր, Քոնն Հեզությունն էր մեծ Համբերութեան, Հանդարտությունն ու մեղմությունն օդի՝ քաղցրութեամբ լեցուն, քանզի լուկ Դո՛ւ Ես, Քո ողորմութեան կամքով աւլեցուն, որի մասին, որ Գրվածքը խոսեց: Քանի որ, եթե մեր մեջ սուր-բերը Հաճո եղան Քեզ՝ առաքինութեամբ եղա-նակելով նմանությունը վերնային կյանքի, սա-կայն նրանք էլ երկրածիններ, ընտրյալներ էին մարդկանցից առնված: Իսկ Դու Հարանալ չգի-տես երբեք, Իսկութեամբ բարի՛դ, Օրհնութ-

յո՛ւնդ Համակ, յուրաքանչյուրին պատրա՛ստ փրկութեան, Հոգնածին՝ Հանգի՛ստ և Անդոր-րությունդ ամեն-ամենքի, երբ Քեզ են դիմում, ախտացյալներին՝ Դե՛ղ առողջութեան, Կենդա-նի՛ Աղբյուր, ըստ Երեմիայի:

ՃԲ

Դարձի՛ր դեպի ինձ Ողորմութեամբ Քո, Դու, որ այնքան Ես Ծարավ ու կարոտ փրկութ-յանը իմ, որ երկնի անմահ և օրհնաբանող Հրեշ-տակներին՝ ի ծառայութեան մեզ ընծայեցիր, որ մարդու նման քահանայե՛ն մեր փրկութեան Հա-մար, քավչապետաբա՛ր մեր կյանքն Հոգալով և իրենց անեղծ Հարակալութեամբ՝ մշտնջենավոր պաղատանքներով դիմեն Օրհնյալիդ, որ Գթությունդ, երկրակենցաղով բնակվողներին՝ անընդհատորեն՝ շնորհաբաշխես, որ ինձ՝ լքվա-ծիս, Հաշտեցնեն Քեզ Հետ՝ այսպես խնդրելով. «Աստվա՛ծ, ողորմի՛ր Երուսաղեմին»։ այս խնդրանքն եղավ Լուսիս խորհուրդը Մեծիդ Հայտնութեան, որպեսզի ընկած Հրեշտակների փոխարեն արդեն՝ մարդի՛կ ընդունվեն և արժա-նանան թափուր տեղերին՝ Քո կցորդութեամբ ա-վետարանված՝ արդեն Երկնային Երուսաղեմի նո՛ր օրինակով:

ՃԳ

Արդարև լսեցիր՝ Բարեգո՛ւթ, անսացիր՝ Թագավո՛ր, ունկընդդեցիր՝ Կյա՛նք, Հաչվի առար՝ Հո՛ւյս, մտապահեցիր՝ Երկնավո՛ր Արքա, Հարգե-ցիր՝ Հզո՛ր, նկատեցիր՝ Ծածկազե՛տ, տեսար՝ Խնամակա՛լ, կարեկցեցիր՝ Անպատո՛ւմ և խո-նարհվեցիր՝ մշտապե՛ս Բարձրյալ, նվաստացար՝ Ահավո՛ր, Հայտնվեցիր՝ Անճա՛ռ, ամփոփվեցիր՝ Անսահմա՛ն, քանակվեցիր՝ Անքննի՛ն, թանձրա-ցար՝ Ճառագա՛յթ, մարդացար՝ Անմարմի՛ն, շո-շափվեցիր՝ Անքանա՛կ, և մարմնի մեջ կեպավոր-վեցիր, Դու, վե՛ր ամենայն որակումներից, և լցրեցիր՝ աղաչողների բաղձանքները ողջ: Եվ Դու իսկ եղար թշվառացյալիս Հրեշտակային ձայնով Զրուցող, բարի՛ Բարեխոս, Միջնորդ Կենդանի, Պատարա՛գ անմահ և Զո՛հ անվախ-ճան, Նվե՛ր մաքրութեան, Ողակե՛զ անծախ, Բա-ժա՛կ անպառ: Ահա, Ողորմա՛ծ, Մարդասե՛ր, Օրհնյա՛լ, մեղավոր անձին միշտ Ես կատարում Բարբառություն՝ Կենդանապարզ և Քո՛ իսկ Սուրբ Կամքով, Հեռուն մտածող Գովյա՛լըդ, Աստվա՛ծ: Քեզ է վայել փա՛ռքն Հավիտենական: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերաներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍԿ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՕՈՒՆ  
ԲԱՆ ԼԵ**

Ա

Ե՛վ արդ, ով Դու Տէ՛ր զորությունների, Մեծությո՛ւն ահեղ և անտարակո՛ւյս Տեսալորություն, Կա՛մք ամենարձակ և Առատությո՛ւն անպակասելի, և ո՞վ կարող է պատշաճ հանդեսով ու պարերգությամբ տոնակատարել, Յո՛ղբ բարության, որ կաթում է վար միաբանությամբ Քո Երրորդության, որով փնտրում ես հնարանքներ իմ փրկության համար, որոնց մեծ մասը ես գրի առա, որպեսզի արդեն պատմվի նրանց, ովքեր որ հետո՞ պիտի գան աշխարհ: Քանի որ երբեք հրեշտակասեր Դու չե՛ս անվանվել, երբ պետություններն հրեշտակների՝ Ի՛նքզ հաստատեցիր, նույնպես երկիրքն իր ողջ ճրագների լուսատուներով՝ գործն է մատնելիդ, երբե՛ք, ո՛չ մի տեղ չի գրվել, թե Դու՛ նրանց ես սիրում, սակայն մեծերից միշտ ստացել ես գովեստի պատիվ՝ մարդասիրություն դրսևորելդ նախ և առաջի՛ն դասելուդ համար: Ե՛վ դրանով իսկ առավել՝ ևս մեծ ճանաչվեցիր Անվամբըդ անճառ՝ սոսկալի՛, անմա՛հ Քո խորհուրդներով, և երկնային լուսակերպարան էություններին կոչեցիր լինել սպասավորներ՝ և գլխավորներ՝ մատակարարմամբ իրենց յուրհատուկ, իսկ ստորային ծնունդներին, որ՝ մահկանացո՛ւ ենք, պերճացրեցիր՝ պաշտելի անվամբ Քո Տէրունական. և անցյալների չափ ու կշռույթի սահմանման չափով՝ լայնացրեցիր՝ դեպի՛ Քեզ բերող կտակարաններ՝ անճա՛ռ ու անբավ խոսքերի գրով և որոնցից որ անապակ ծորմամբ Քո բարությունն է իջնում վերնային: Առավել ևս, երբ որ մարդացար մեկ էությունից, ոմանց իրենց իսկ, ոմանց էլ՝ այլոց ծառայեցնելու, բազմաօրինակ արվեստներով լի՝ առատությունդ գեղեցիկ նրանց, որպես կյանքի տուրք և աստվածագործ սքանչելիքներ, նաև նշաններ՝ ճշմարտատեսիլ: Ե՛վ որպես որ Դու անդամալույծի պակաս հավատը լրացրեցիր՝ նրան խնամող մարդկանց հավատով՝ և ողորմեցիր՝ գթառատությամբ, ապա որչա՛փ մեծ զորավորությամբ ամենակարող խոսքդ պիտ գործի՛ ար-

տալից մարմնիս մաքրության համար՝ հառաչանքներով աղաղակողիս Քո ունկընդերելով: Քանզի, արդարև, առավել դյուրին մեծ հրաշքներ են լվացվածների վրա կատարվում, քան երբ ախտավոր մարդկանց հիմնում ես Սրբությանդ Հոգով, լվացվածների կերպարանքն արդեն անտիրելի՛ են ախտի ներգործման, և ունեն երկրո՛րդ առավելություն, այն, որ՝ մկրտման Սուրբ Ավագանով շնորհ է իջնում լվացվածներին՝ Հայրենի փառքը բարձրացնելով վե՛ր:

Բ

Այդ Դո՛ւ ես, Տէ՛ր մեր, որ Սրբում ես մեզ, որպես վարվեցիր Մովսես ծառայիդ՝ Քո ընտրյալի՛ հետ: Դո՛ւ ես, որ մեղք ու անօրինություն մեջ՝ Հակոբի տոհմին եղար հսկող Աչք ու Վերակացու՝ մինչ եզրիպտացվոց խավար երկրում ընտանենային հեթանոսաց հետ: Օրենսդետներին մեղավորների ճանապարհներին այդ Դո՛ւ ես դնում, ինչպես ասվում է Դավթի երգի մեջ: Քարե սրտերի կարծրությունները այդ Դո՛ւ ես հալում, դարձնում մարմնային փափուկ գոյություն և արդեն հարմար՝ լուսավոր Բանիդ ընդունման համար: Դո՛ւ ես, որ Բավ ես ընձեռել ա՛յլ սիրտ և մի՛ ճանապարհ՝ երկնչել՝ Քեզից՝ սահմանների մեջ բովանդակ կյանքի: Խստամիտներին այդ Դո՛ւ ես անվերջ Երկյուղըդ տալիս, որ Քեզ ուշադիր լինեն հավատքով, ինչպես այդ մասին մարդարեական ձայներն են խոսում:

Գ

Աշխարհաստեղծ Բերանի օրհնյալ շրթունքներով Քո և Աստվածային անձրևներիդ ապրեցնող հոսքով՝ իմ ականջների դռներին հավի՛ր, բա՛ց արա լրիվ դրանք Քո առջև, դո՛ւրս թափիր ինձնից մահացու թույնը բանսարկու օձի, որ խայթել էր ինձ խորամանկությամբ, և Բժշկի՛ր ինձ: Քո ամենակալ կենդանի Ձեռքով խոսք արտահայտող իմ շարժողական գործիքը բռնի՛ր և Ազդի՛ր նրան Ձայնիդ զորությամբ, Դո՛ւ որ տալիս ես յուրաքանչյուրին, որ Բանը ընտրեն, ե՛ս էլ՝ Նրանով, թող պատշաճորեն դաստիարակությունս առնեմ Քեզանից, որ իմ նախնու պես չլինի՛ հանկարծ հանդուգն խոսքով, որսորդից խաբված՝ Քո Հույսից լքվեմ և անբանությանը մատնեմ իմ հոգին: Քո կենդանաբաշխ Աջն երկարելով՝ վերստի՛ն Լույս տուր՝ արդեն խավարած հոգուս աչքերին, որ չլինի թե վիշապի շնչից հա-

մարձակութեան լապտերս մարի՛ կաթսայի ներքո դրված մնալով: Անօրինություններն իմ Հանի՛ր ինձանից և գցի՛ր դրանք խորքերը ծովի, որ անչափ փոքր է Քո անբավելի մեծությունդ հետ համեմատելիս, ըստ մարգարեի խոսքի համաձայն՝ իմ չարությունն էլ ընկղմիր ծովում: Եվ Ոտքի՛ հանիր ինձ՝ կործանվածի՛ս՝ անձի Նշանով Քո վստահելի, որ չլինի թե՛ հուսահատություն սարքած կոթողից՝ ծածուկ մեղքերս ի վեր բողոքեն: Բայ՛ց արա իմ դեմ, Հզո՛ր, Գթառանձ, Վարդապետարան բժշկարանըդ՝ Կենդանի Կյանքով, որպեսզի բարի մշակություն մե՛ջ կորսչի ցանած սերմանան՝ ծը չար՝ Կամբիդ մանգաղով մինչ հո՛ւպ արմատը խուզելով թափե՛ս ու տաս կրակի՛ն:

Դ

Ես ընդառաջ եմ գալիս Քեզ ահա, ամենքի՛ Աստված, և գալիս եմ Քեզ օրինակումին Քո հետեւելով, սակայն Պետրոսի նմանությունը էլ՝ կենցաղիս ծովի մեղսալիքների վրա քայլելիս, հանկարծ երկմտում ու ծո՛վն եմ սուզվում: Տէ՛ր, ժամանակի՛ն Աջդդ ապրեցնող երկարիր իմ կողմ և սասանվածիս օգնությունն ցույց տուր: Ես քանանացի կնոջ ձայնի հետ ի խորոց սրտի պաղատո՛ւմ եմ Քեզ, ամեն սնունդով ճոխությունը լեցուն Քո մեծ Սեղանից՝ ամենաթշվա՛ռ վտանգավորիս, որ կաղկանձում եմ սովահար շան պես, ապրուստի համար հացի փշրանք տուր: Դու, որ եկել ես փնտրելու՛ է համար և ապրեցնելու՛ է ինձ՝ կորուսյալի՛ս, դառնություն որդուս, նյութականացված խորան մարմնիս՝ փրկությունը բեր: Որովհետև որ Քոնն է ամենայն մեծությունն, Աստվա՛ծ, և հաղթությունը և գորությունը՝ Քո՛նն են լիարժեք, Դո՛ւ ես քավություն, և՛ բժշկություն, և՛ նորոգություն, և՛ երանություն՝ միաժամանակ, Քեզ է վայել փա՛ռք և երկրպագություն՝ հավիտյա՛նս հավե՛տ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հակողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂ ՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ԼՁ**

Ա

**Փանդի օրեօր** անթիվ են դարձել հաճախումների արգասիքները՝ Քո փրկանավորող շնորհումների, որոնք որ իրենց գերազանցությունը առավել են միշտ, քան իմ պարտքերը բռնո՛ւն՝ համախումբ, որ Դու մարում ես Չարչարանքներիդ հանդեսով, նաև՝ Հորից ստացած Քո՛ հանձնառությունը: Բոլոր հոգևոր գոյերը կյանքով ի հայտ ծագեցնող Ա՛փդ ամփոփարար, թույլ տվեցիր, որ մահվան գործիքի՛ խաչի նշանին չարերը մեխեն, որպեսզի այդպես՝ ձեռնարձակումներն իմ ընդդեմ ընթացող Քո Կամբո՛ւլ քանդես: Երկու ոտքերիդ լծակցությունը ընթացողական, որոնք քայլեցին Կյանք պարզեւելու, իմ անարգության պատճառով, սակայն՝ միացրեցիր պատժարան փայտին՝ որպես թշվառիս վայրագ փախուստի դիմաց տրվելիք՝ Գրավակա՛նը Քո Գթացություն:

Բ

Դու Չկամեցար Քո օրհնյալ գլխին բուռնցքով խփող վայրագ ձեռքերի գոսանան՝ անգամ, Դո՛ւ, որ թզեցնու տունկը Քո խոսքով չորացրեցի՛ր, բայց՝ ժամանակո՛ւլ, որպեսզի նաև այդ օրինակով Քեզ ինձ ներելի՛դ պիտարանես: Քեզ՝ խոստովանված Աստծուդ, անխնա ապիրատությունը ձեռողներին էլ՝ որևէ խոսքով Դու չսպառնացի՛ր՝ արուսյակն էիր երբ որ մրթնեցնում, որպեսզի այդպե՛ս իմ մեռնող անձին բարություն գործես՝ Հանգստյա՛մբ հանդերձ: Հայհոյիչներիդ իրենց աղտեղի չարաբանությունը չլուցրի՛ր, երբ որ Դու լուսնի պատկերը ձերմակ Կարող ես փոխել գույնո՛ւլ՝ արյունի, իմ կյանքի հանուն Ի՛նքդ համբերեցիր, որպեսզի այդպես իմ անհամարձակ լեզուն գորանա՛, խոսի Քեզ ուղղված գովեստի՛ խոսքեր: Նախատողներիդ մոլեգունությունը Դու չաստեցի՛ր, Դու, որ ողջ տարբերն էիր սասանում, որպեսզի այդպես թշվառացյալիս գլուխն օծես Քո գթությունն Յուզով: Քեզ մոլորեցնող անվանողների աստվածասպան ծնոտները ժանտ՝



Դու չպոկեցի՛ր մեկը մյուսից ու չխախտեցի՛ր, Դու, որ վեմերի կարծրություններն էիր ճեղքում ու կտրում, որպեսզի այդպես բարության համար անունակ հոգուս դատարկությունը լցնես հանդարտով Քո ողորմության: Պահապանների սրերն իրար դեմ Դու չհանեցի՛ր, Դո՛ւ որ՝ մե՛կ խոսքով օձին մատնեցի՛ր՝ որ փորի վրա սողա՛ Մայր հողին, որպեսզի հետո, ոսկորներս որ շա՛տ են տառապած, հողի մեջ՝ որպես մի գանձարանի՝ դրանք պահելով՝ արժանացնես ինձ կյանքի՛ հարուստիան: Երբ կնքում էին Քո կենդանագիր շիրիմը, կողքին՝ դնում պահակներ, նրանք փռելով թիկնավայր՝ գետնին՝ Դու չսուզեցի՛ր անդունդներն երկրի, որպեսզի հետո անձիս տապանում՝ Լուսիիդ նշխարի Շո՛ղը իջեցնես: Երբ բամբասեցին, թե երկրավոր մարմինդ շիրմից՝ իբրև եկել են գողացել-տարել, բայց Դու նրանցից չիրճատեցի՛ր համայնալինը ու ամենասպառ սերմըդ ծննդյան, թողեցիր կրկին, որ սերունդներ՝ տան, որպեսզի այդպես, ինձ՝ անարժանիս, բարու հիշատակն ընտրեն ընտրել տաս, որ ինձ մասնակից դարձնես արդեն փրկվածներին, որ անկորուստ են ու անվնասելի: Ո՛չ էլ արծաթի կրկնակապանք կաշռածգման վաճաճ ստիպեց Քեզ դիմադարձելու, քանի որ Քո Հոր գանձարանից էր՝ նվեր տվեցին մատնություն գրավ և անարգություն մասնավորեցին կյանք պարզևողիդ, հանձնելով կյանքի պարզևատուիդ ուրացողների մոլեգնած խմբին, սակայն Դու, Աստված, ըստ հին հարվածի Մովսե՛սի բերած՝ չդարձրի՛ր նրանք քարեղեն արձան, որպեսզի այդպես ինձ վրիպյալիս՝ տաս Հաստատություն, մահվան վաճառված ամոթահարիս՝ Քո Արյամբ փրկես և կառուցես ինձ հաստատուն Վեմիդ՝ անհասանելի՛ Քո իշխանություն: Օրհնյա՛լ ես կրկին, օրհնյա՛լ վերստին և օրհնաբանյա՛լ բոլոր բաներում հավիտյա՛նս հավետ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված**  
**Նույն իսկ հսկողից, նույն աղերս-**  
**հերով և մաղթանքների խոսքով**  
**միջնորդած**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ**  
**ՈՒՂ ՂՎԱԾ ԱՍԾՈՒՆ**  
**ԲԱՆ ԼԷ**

**Ա**

**Եվ բարեշնորհ** գումարտակներն այդ վերին դասերի՝ երախտիքներիս համար ուղարկված պարզևներն են Քո, ո՛վ Ամենագութ, Բարերա՛ր, Գովյա՛լ և Ամենագո՛ր, թեև նրանցից քչերին գրով հիշատակեցի, բայց խոստովանեմ, որ արքայազուն հոգի են նրանք և իշխաններ են ինքնակալ ու մեծ, գորություն որդի, ծնունդներ՝ Վեհից իրենց փառքերով՝ վե՛ր, լուսանորո՛գ, հրաշապատի՛վ: Մի՛շտ հաղթող ոգով, վերամբարձությունմբ, որ հոգակված են գորշակների տարբերանիշով, գլուխներն իրենց պսակապաճույճ գեղազարդերով, և նրանց հետ են գնում շարունակ, քանակով անթիվ, և պետություններն օրհներգողներին, և հեզահամբույր, երջանիկ էին և խաղաղական՝ Վերն Աստվածային հարազատության ա՛յն նահանգներից, որոնց մարգարեն մաղթեց, ասելով. «Ձարթնեցրո՛ւ, Տէ՛ր մեր, գորություններդ, ե՛կ, որ ապրեցնե՛ս նրանց միջոցով».- Սրանք գորու են մեղքերն հալածել կատարելապես և անհուսություն կարկուտը հալել, փախցնել հեռու, առավել, քան թե նախամարտիկը իր գինվորությունմբ՝ երկնային պարում, որ խավարասերն է գիշերային, և հենց նա ի՛նքն էլ եղավ Տէր Աստծո ամենայն բարուն սկզբնաներհակ: Եվ որովհետև այդքա՛ն պարզևներ Բարձրյալից ինձ ձրի անձրևվեց՝ այսքա՛ն տկարիս, այսքա՛ն թշնամուս, նաև ապերա՛խտ ծառայիս վրա,- անկարելի է ամենն այդ ասել իսկ եթե մեկը համարձակություն հենարան գտնի՝ բազմաթիվներից սակավի մասին խոսել ու պատմել, քան իսկությունն էր հանգամանալից՝ պիտի հիշի և առաջին նյութը, որից ստեղծվեց, իբրև մի տկար՝ գորավոր Մեծից, և այդ հիշելով՝ պիտ հերքվելով էլ պարտություն կրի:

**Բ**

Եվ այս ամենի մասին, թեպետև, այսպես գրեցի, դարձյա՛լ ու դարձյալ նույնն եմ վկայում, իմ՝ թերի հողիս խակություն հանդեպ՝ կատար-



յալ Սերմն է կյանքն Հաստատողիդ, Քո Բարու Հանդեպ ինձ՝ անարժանիս՝ ամենալույս ու աննախանձ Պարգևն առատագեղուն, Արարչութեանդ գովյալ Զորութեամբ վանում ես բոլոր կարծրութիւններն այն, որ բանասարկուն է մեր սրտին նյութում, ինչպես որ քարի առակով ես մեզ Հուսահատութեան ու վհատութեան որպես օրինակ՝ ցույց տալիս թե իմ աղբյուրներն երկու՝ ինչպե՞ս են դարձել ցամաք ու խցված, երբ Ստեղծողն է դրել իմ դեմքին՝ որպես Եղեմից զգայաբաններ, որոնցից ելնող ջրի ոռոգմամբ պիտի ծաղկեի՝ դրախտում որպես բարեգործութեան ուրախ կենսատունկ: Ահա մի՛ թող որ՝ արտասուքներին այս ցամաքութեամբ օժն ինձ վերստին նոր ու թունալի իր պատրանքներով ու իր չարաչար խորամանկութեամբ կրկին դուրս հանի ա՛յն փափկութիւնը, որ ես ունեի դրախտափայրում, որի մեջ Քեզնով կանչել ես ինձ ետ: Այնժամ, երբ արդեն համբարձված Աստված աստվածների մեջ իր հրաշքներով հառնի՛ վերստին, ա՛յն աստվածների, որ վե՛հ են իրենց կամք ու արվեստով, կրկին գա իբրև Հաշտարարութիւն վե՛հ խաղաղութեան և շնորհների Կտակն Իրենով բացի ամեն տեղ, ապա ամենայն վնասակարը, ամեն տեսակի եղծ-խարդախ բաներ, կարճամտութիւններն ամեն չափերի, որ ծնունդներն են մեր սրտնեղութեան, պիտի գան-բախվեն՝ այդ ամուր Վեմին ու ցնդեն-գնան, ինչպես ջրերի բարակ առուներ կամ հողի կոշտեր, որոնք բախվելով Լեռանն աներեր՝ պիտի փշրվեն ու փոշիանան:

**Գ**

Կշտամբանքներս ո՛չ թե գալիս են ըստ Հորի ձայնի և կամ մարդկանցից որևէ մեկի, այլ ամենատես աչքերիդ Վերին Հրամանումի՛, խղճիս մեջ մտած առաջացնում են երկյուղ ու տագնապ, և սոսկում եմ ես, սասանվում եմ ես՝ ներսումս ծնվող ամեն կարծիքից: Ապավինում եմ միայն ու միայն հույսի՛դ Հաստատուն, կենդանի՛, անեղծ, որովհետև Դու Քո ողորմութեամբ նայեցիր վրաս՝ կորստյան պատժից՝ իբրև պարտավոր նավաբեկյալի, և Երկնայինիդ բարերարութեան առջևն եմ ահա՝ դատարկածեռն ու լրի՛վ անվաստակ, երախտիքներիդ անպատում փառքերն եմ վկայաբերում ու հիշեցնում Քեզ, որովհետև որ՝ Դու մոռացութեամբ չես զբաղվում, Տէ՛ր, և ո՛չ էլ նիրհում, ո՛չ էլ աչքերի թարթումների չափ ընդմիջում տալիս, որ Հեծեծանքս կրքերի բերած՝ անտեսես մի պահ: Հանի՛ր ինձա-

նից, աղաչո՛ւմ եմ Քեզ խեղդող վտանգն այս՝ Քո Խաչի՛ Լույսի ամենհաղթութեամբ Հանի՛ր ինձանից, մեղքիս պատճառով տրտմութեանս մեջ Եղի՛ր Հոգարկու, տարակուսածիս տխրութիւնները մխիթարելու օգնութիւնը բեր, փշե պսակով՝ մեղքիս բողբոջներն ինձանից վանի՛ր, Քո գանահարմամբ՝ վանի՛ր Հարվածը ինձ գետնող մահի, կրածդ ապտակով՝ ամոթնե՛րը իմ, լճքի թշնամամբ՝ գարշութիւններս դատապարտելի, լեղու ճաշակմամբ՝ դառնութիւնն հոգուս:

**Դ**

Անբովանդակելի բարութիւններն այս միայն Քո՛նն են, Տէ՛ր, Դու միա՛կ Աստծո Միածին՝ Որդի, և որոնց հետ էլ՝ չարութիւններն իմ հիշատակելով ամենաօրհնյալ՝ Անունը եմ կարգում՝ ամենաբա՛րձր աղաղակներով՝ պաղատանքներով՝ հոգեղենների: Ամոթահարիս խոստովանութեան զղմանս խոսքը որպես պարտութեան նշանակ նայիր, որ զԹա՛ս, Օրհնյա՛լ, և ողորմութեան որդուս՝ արդեն՝ իսկ սատակման արժան՝ պարգևիր մեռնել անմահի՛ մահով, թող իմ մեղքերի բացմութիւնների անվանումները կրկնելով՝ այստեղ, այս իմ մատչանում՝ առավել ևս Ողորմութեանդ Ավետարանով՝ առավել ևս՝ աճելով վրաս, և իր հոշակված ահավոր հնչմամբ՝ առավել ևս թող որ տարածվի՝ երկնքի մեջ և երկրի վրա: Եվ Քեզ միաբան՝ Հորն և Սուրբ Հոգուն՝ հավիտյա՛նս փա՛ռք: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն խակ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ԼԸ**

**Ա**

Բայց այժմ ահա, ինչպես ընթերցվող այս իմ գրվածքում մի տեղ հայտնեցի՝ գլխավոր մեղքերն սկզբից եկած, որ խավարային սկիզբներ ունեն, նաև՝ ծնունդներ, դառնալով օրենք՝ մեր մարմնական անդամների մեջ, որոնց տեր դարձա ժառանգը՛ս մահվան, - նույնպես և այժմ, խոսքիս ընտրութեան այս սահմանի մեջ պիտ հիշատակեմ Լույսի որդիներ ծնող և հոգու կյանքն ապահովող, և ազատարար օրենքները այն, որ

Տէր Հիսուսով դարձան մեզ համար աներկբա՛ շնորհ՝ հիշատակելով բազմաթիւիներից սակա՛վը, այնքա՛ն, որպէս անսահման ծովի ջրերից միայն մի կաթիլ մատուցած լինեմ:

Բ

Քանզի, արդարև, թագավորական դասի մեջ ոմանք, բարձր գահերի վրա բազմելով՝ լցվել են ահա ու հարստացել՝ վարձատրութեամբ մեծ շնորհների՝ թագավորը իր սիրեցյալներով, արքան՝ շուրջն եղած պատվականներով, թագադրվածը՝ իր իշխաններով, բարեհոգեպետները՝ իր համբավներով, հաղթանակողն իր շեփորումներով, գորավարը իր քաջ մարտիկներով, գովաբանվածն իր տարածված փառքով, փեսան իր առջև պար բռնածներով, գեղեցիկ դշխոն՝ իր օրիորդներով, փեսայացածն իր հանդերձավորմամբ, ազատութիւնը՝ իր շնորհներով, այցելութիւնը՝ պարզևող ձեռքով, տրված խոստումն իր բերած քավութեամբ, պահպանութիւնը՝ գորավոր աջով, ընտիր պարզեն իր զարգանախելքով, կյանքի նշանն իր անխորտակութեամբ, կնիքն՝ իր տեսքով, ամպն՝ հովանիով, արվեստն՝ հրաշքով, և մաքուր հոգին իր անեղծութեամբ, Բանն իր գործերով, ուխտադրութիւնն իր կատարումներով, գորութիւնը իր հրամաններով, լվացարանը՝ իր սքանչելի նպատակադրմամբ, երկնի մանանան՝ անապականութեամբ, Վեմը՝ կենդանի իր վտակներով, հրեղեն սյունն իր ճառագայթներով, որոտումը իր տված ազդումով, վերին հույսը իր պտուղ փրկութեամբ, օրհնութեան ծառն իր բերք ու բարիքով: Բարեունակն իր բարութիւններով: Եվ որպէսզի թե ամբողջն ասելով՝ ես որևէ բան աչքաթող չանեմ, ինչպէս արևին ուղիղ մի նայող, երբ աչքն այլայլվում է, տկարանում, այդ իսկ պատճառով ինձ լռեցրի շատ շատերն ասել և միայն սակա՛վը մատուցեցի՝ բավականանալով անպէ՛տք, ապիկա՛ր իմ կարողութեամբ:

Գ

Սակայն ես այստեղ, ավա՛ղ պիտ ասեմ, հավիտյա՛ն ավաղ՝ իմ թշվառացյալ, եղկելի՛ անձին, քանի որ ձայնին իմ ավետավոր ու խոսքի կարգին՝ բերում-խառնում եմ բողոքի՛ գուշփեր, քանի որ այդպէս և առնթեր են՝ արդարութիւնն իր կշռույթներով, և վճիռը իր բերած հատուցմամբ, և քննութիւնը իր բացած լույսով, հանդիմանութիւնն իր ճրագներով, մերկութիւնը իր պատկառանքներով, և հայտնութիւնն իր

ամոթով հանդերձ, անբժութիւնը իր վաստակներով, և շեղաբնաս՝ իր պատիժներով:

Դ

Դարձյա՛լ, վերստին, կրկին ու կրկին՝ ողբա՛մ եղկելուս, քանզի պիտի դա և հնձման ժա՛մը հասակին հասկի՛ անհնարին ու մեծ իր բարկութեամբ՝ մանգաղն հնձի մեջ և Դատավորը նստած ատյանում, Հզորը բեմում, Սպառնացողը՝ կորստի՛ վարձով, Արդար բազուկը իր դատաստանով, Խրատ-գավազանն իր հարվածներով, ահեղ Զինվածն իր նախանձի՛ ինչրով, Հովիվն՝ ընտրութեամբ: Քանզի այն Խոսքը, որ հետս խոսեց՝ Նա՛ պիտի դատի դատապարտյալին՝ ամենավերջին օրը հատուցման: Այլ Ի՛նքդ կանխիր, բարեգու՛թ Աստված, քաղցրութեամբբը ինձ նախընծայելով՝ վարանական այս երկյուղիս տալով նվա՛գ հեծութիւն, զորավորի՛ր ինձ՝ Ձեռամբդ օրհնութեան, ամենահետին իմ տագնապններին՝ նախ և առաջ Քո օգնութիւննե՛րը տեղ հասցնելով՝ մխիթարելով, բժշկելով ինձ, քավութիւն տալով, կենդանութեան մեջ պահելով հոգիս: Ամեն բանի մեջ՝ փառաբանութեան մատուցումներն են միայն Քեզ վայել, հավիտյա՛նս: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված**  
**Նուռն իսկ հակողից, նուռն աղերսներով և մաղթանքների խոսքով**  
**միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍԻՐ**  
**ՈՒՂՂՎԱԾ ԱՍԾՈՒՆ**  
**ԲԱՆ ԼԹ**

Ա

Քանզի **առաջին** իմ կերպարանքը՝ վնասարարի թելադրութեամբ՝ ի՛նքս լքեցի իմ ծուլութիւնից՝ իսպառ մատնված մահվան կորստին, իսկ այժմ, ահա, իմ ողորմելի հեծեծանքներով, հոգով թախծալի՛ իմ հին, ա՛յս տեսակն եմ քննախոսում, անաչառորե՛ն, խայտառակութիւննե՛րըս վերապատմելով ամեն-ամենքին՝ եկեղեցիներո՛ւմ բազում ազգերի՛ իմ բարձր ձայնով և բարբառով մեծ՝ աղաղակելով:

Բ

Ահա շնչավոր մի մատյա՛ն եմ ես՝ ներսից ու դրսից լիուլի լցված ողբ ու վայերով, ձայնեւրով՝ բազում, ըստ եզեկիկի տոմարի մասին տե-

սած տեսիլքի՝ մի քաղաք եմ ես, որ չունի շուրջն իր պահպանող պարիսպ, ներսում՝ մահարձան, և իմ տների դռները գուրկ են ամուր լինելուց ու կողակեքներից, ինքս ահա աղի տեսակ եմ միայն՝ ո՛չ Համեղությամբ, ջո՛ւր եմ աղտեղի՝ այնքա՛ն անախորժ, խիստ ծարավա՛ծն էլ չի կամի խմել, հերկազործության բարիքի համար՝ գետի՛ն անօգուտ, սահմա՛ն եմ լքված և հեղեղավայր ճահճախոտների, հա՛նդ եմ, բայց խոպան ու տատաակաբեր, Աստվածախնամ հո՛ղ եմ հողևոր, բայց մշակվեցի չա՛ր բանասարկուի պատրանքների մեջ, յուղընձյուղ փա՛յտ եմ, որ կորցրել է պտուղները իր, և կտրելու ծառ մի ունայնաբույս: Անհույս տո՛ւնկ եմ մի կրկնամեռ խոտուն, ճրագարա՛ն եմ, որ ամբողջովին հանգել է արդեն ու լույս չի՛ տալիս:

Գ

Այսպես, կրկի՛ն նույն ողբերն հանելով և նույնանման աղաղակներս բազում անգամներ բարձրացնելով վեր, թե հեգիս համար դառն ամոթանքի ինչ պատուհաս է առջևս սպասվում, կճրտումնե՛րը իմ ատամների և անվերջ լացն ու կանչե՛րն եղկելուս, ցասո՛ւմն Հայրական՝ դառնության որդուս, ապականությո՛ւնն աննորոգելի՛ մեղանչած մարմնիս. ախտացյալ հոգուս, չարիք գտածիս՝ նոր կշտամբությամբ, տարակուսանքի տարտամ տագնապներ՝ ախտով գերվածիս, թշվառիս հանդեպ Երկնային զորքիդ բերած հատուցմամբ, իմ՝ վտանգվածիս մեջն աճեցրած՝ որո՞մ խրճերիս դեմ վկայելով, ահարկու ձայնի հայտարարությամբ, թե՛ բուժվելիք չե՛մ լքվածքս արդեն:

Դ

Ահա, արդարև, երգս է նմանվում կատակերգության, հիչեցնում եմ ես քնար նվագող այն պոռնիկին, որ՝ կոպի՛տ, համարձակ, հատո՛ւ կոծերով՝ կսկծեցուցիչ ու ողորմելի ո՛ղբ է հնչեցնում՝ Եսայու խոսած առակի նման, որում պատգամ կա ուղղված Տյուրոսին: Քանի որ երբ նա դեռ ապագայի փութը դիպված ու անցքերն էր ողբում՝ տարբեր կերպերի ու այլաստության աղաղակներով, ինչպես կոծ հանող պարողներն էին սովոր կատարել, բայց ես ո՛ր չափով և ի՞նչ ձայներով վհատանքներս մրմնջամ պիտի, որպեսզի առանց վրիպումների սպասեմ Տիրոջ Գալստյան Օրվան, ես, որ մնացի այսքա՛ն անպատրաստ և անհանդերձա՛նք:

Ե

Արդ, եթե միայն դատաստաններիդ ահավորության փաստը կրքկնեմ՝ աշխարանքները՛ս բազմացնեմ պիտի, ապա թե փորձեմ իմ տանջանքները իսկությամբ ցույց տալ՝ վրաս երկյուղը պիտի հաճախի, իսկ եթե դրանք նկարագրեմ՝ ինձ սպասվելիք հատուցումնե՛րը պիտի հավելեմ, որովհետև որ՝ կանխավ տեսնելով այդ ամենը, ես՝ անգամ փո՛քր իսկ չապաշխարեցի: Այլ խնայի՛ր ինձ՝ Գթա՛ծ, Մարդասե՛ր, Հզո՛ր, Բարեբա՛ր, Ամենապարզև՝ Քրիստո՛ս Արքա՛ հավիտյա՛նս օրհնյալ: Ամէ՛ն:



**Հեծծանքների մի նոր հավելված  
Նույն իսկ հսկողից, նույն աղերաս-  
ներով և մաղթանքների խոսքով  
միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՈՒԻՆ  
ԲԱՆ Խ**

Ա

Ո՞վ ամենակալ Աստված բարերար, որ Ստեղծիչն ես ամեն բաների, լսի՛ր ձայներն իմ հառաչանքների՝ այն վտանգների մասին, որ՝ ունե՛մ, և ապագայի հանդեպ հավաքած իմ երկյուղներից ու տագնապների ալեկոծումից փրկի՛ր ինձ իսպառ, ամենահնար Քո մեծ զորությամբ՝ ազատելով ինձ դա՛ւն իմ պարտքերից, քանզի կարո՞ղ ես ամենաղժվար և անտանելի վիճակիս վրա՝ Քո՛ հնայների անբա՛յ մեծությամբ, անչափ-անսահմա՛ն իմաստությամբդ՝ իջնել ու տիրել՛:

Բ

Եվ քանզի ուշիմ մտքիս աչքերով հեռվի՛ց հեռու էլ տեսնում եմ ահա հանդերձյալների ժամը հանդեսի՛ ահավորափայլ, հույսի սրբերին ցրեկվա լույսում, իսկ պատժապարտիս պատուհասներում խավարած օրվա, և որտեղից էլ ուժս չի՛ զորի՛ փախո՛ւստ տալ, գտնե՛լ մի պատասպարան՝ ո՛չ անդունդների խորություններում, վիհերում անտակ, ո՛չ բարձունքներում հսկա լեռների, և ո՛չ քարեղեն անձափների մեջ, ո՛չ արձանացած կարծր ժայռերում, ո՛չ ծերպերի մեջ, ո՛չ էլ դրանցում եղած անցքերի, ո՛չ իջվածքներում փորված փոսերի, ո՛չ հեղեղների սորանքների մեջ, ո՛չ բավիղներում

խորշերից ելնող, ո՛չ էլ տների պահեստարանում, ո՛չ սենյակների թաքստոցներում, ո՛չ հովիտների ծմակուտներում, ո՛չ ծործորներում դժվարանցելի, ո՛չ բլուրներում մեկը մյուսի վրա բարդբարդվող, ո՛չ էլ հերարձակ քամիների մեջ, և ո՛չ էլ ծովի անսահմանություն, ո՛չ սահանքներում մեծ հորձանքների, ո՛չ եզերքների հեռավորություն, ո՛չ ձայների մեջ ողբասացություն, ո՛չ հեղեղալից, հորդ արցունքների, ո՛չ շարժումներում ձեռքի մատների և ո՛չ ձեռքերի երկինք համբարձման, ո՛չ շրթունքների պաղատանքներում, ո՛չ լեզուներով աղաչանքի մեջ: Եվ այս բոլորից իրենց սաստկությունը անճողողելի, Դո՛ւ Ես, Քրիստո՛ս, Տէ՛ր ու Հովի՛վ մեր իմաստություն Քո հնարանքներով իջնո՛ւմ-ազատո՛ւմ, բերում դուրունցի՛ն և անդորրություն, սուրբ փրկությունը մեզավոր հոգուս:

Գ

Միայն քաղցրը Դու ամենքի մեջ, իմ վտանգները ի՛նքդ դիտարկիր, որ ամբամուր բարդվե՛լ իմ շուրջ, շրջափակե՛լ ինձ: Խաչի՛դ կյանքի գեներ հաղթող սուսերով՝ խցի՛ր ցանցերը ինձ բռնող վարմի, որ ամեն կողմից պաշարել են ինձ՝ գերելով մահվան, շեղ ընթացողիս ոտքը սասանված՝ դո՛ւրս բեր անդորր տեղ, հրատապ ջերմով տոչորումները մղձկացող սրտիս, Բժշկի՛ր, Օրհնյա՛լ, մերժի՛ր դիվային չարահարություն շուրջները իմ Քեզ պարտավորի՛ս, հալածի՛ր անհույս ճանճությունները հոգու մթություն չարին կենակցիս, ցրի՛ր ծխամած թանճությունները մեղքի բռնություն, կորցրո՛ւ իսպառ զազրությունները ամպանման և գա՛րչ իմ կրքերի, և իմ հոգու մեջ նորոգի՛ր կրկին՝ Լուսե, պաշտված փառք մեծություն՝ Անո՛ւնն չգորիդ, և զորացրո՛ւ Քո շնորհների շողարձակումը իմ դեմքի վրա ու կերպարանքում մտքիս տեսություն, իմ հողեղենիս հարմար հորինմամբ՝ հարդարի՛ր անձն իմ՝ Քո նկատմամբ նորոգելով ինձ՝ շողազարդ մաքրմամբ գտե՛լ-հանելով ապական մուսյր մեղավորիս, Քո աստվածային հավե՛տ կենդանի, անե՛ղծ-երկնավոր Լույսով ծածկելով Եռապատկերը անձիս էություն: Որովհետև որ՝ Հոր հետ միասին և Սուրբ Հոգու հետ Դո՛ւ Ես միմիայն՝ գովվյալ և օրհնյա՛լ, ամեն օր ու ժամ, և հավիտյա՛նս հա՛ր հավիտենից: Ամէ՛ն:



Հեծեծանքների մի նոր հավելված  
Մուսյն իսկ հսկողից, նույն աղերս-  
ներով և մաղթանքների խոսքով  
միջնորդված

ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՌԻՂ ՂՎԱԾ ԱՍԾՈՒՆ  
ԲԱՆ ԽԱ

Ա

Ֆենդանի Աստծո Կենդանի՛ Որդի, Ամենաօրհնյա՛լ, ահավոր Քո Հոր անքննի՛ն ծնունդ, և ինչ էլ որ կա՝ տկարանում է ու ենթարկվում Քեզ և ողորմության անսովոր շողիդ փառքերի ծագմամբ մեղքե՛րն են հավվում, դու և երն հալածվո՛ւմ, հանցանքը ջնջվո՛ւմ, կապանքը խզվո՛ւմ, շրթայք խորտակվո՛ւմ, կենդանանում է մեռյալն իր հերթին, և բժշկվում են հարվածները ողջ վերքն առողջանո՛ւմ, ապական ինչ կա՝ դո՛ւրս հանվում իսպառ, տխրությունները տեղի՛ են տալիս, հեծեծանքները նահանջում են ե՛տ, խավարը փախչո՛ւմ, մեղքը հեռանո՛ւմ, և մառախո՛ւղն է մերժվում իր հերթին, և փարատվո՛ւմ է մուսյր լրիվ, և աղջամո՛ւղջն է սպառվում ամբողջ, մուլթն է վերանո՛ւմ, գիշերն հեռանո՛ւմ, տարազրվո՛ւմ է տազնապն անհանգիստ, չարիքը փախչո՛ւմ, և հալածվում են ամեն տեսակի հուսահատություն. Թագավորում է Ձե՛ւքդ ամենակար, Քավի՛չդ ամենա:

Բ

Որովհետև որ Դու երկիր եկար՝ ո՛չ թե կորցնելու մարդկային հոգին, այլ՝ ապրեցնելո՛ւ, ողորմության մբբդ թող ինձ՝ չարիքներն իմ բազմաբազում, Դո՛ւ Ես միմիայն վերն երկնքի մեջ անվիճարկելի Տէրն ամենայնի, և անգննելի երկրի վրա, գոյաբանության տարրերի խորքում և ծագեթիձա՛գ՝ աշխարհի բոլոր եզրերը լցնող Սկիզբն ամենայն, և ամենայն՝ Քեզնով լրացնող ու ամբողջացնող, Օրհնյա՛լ Աստվածդ բարձունքների մեջ: Եվ Քեզ Քո Հոր հետ՝ Սրբության Հոգով՝ փա՛ւք հավիտյանս: Ամէ՛ն:





**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն աղերս-  
ներով և մաղթանքների խոսքով  
միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂ ՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ԽԲ**

Ա

Աստված Գթուլեթյան, Փրկուլեթյան Աստված և Ողորմուլեթյան, Քավուլեթյան և Նորոգուլեթյան, Բժշկուլեթյան և Առողջուլեթյան, Լուսավորուլեթյան և Կենդանուլեթյան, Հարուլեթյան և Անմահուլեթյան, հիշի՛ր ինձ, երբ Գաս Արքայուլեթյամբ Քո, Ահավո՛ր, Հզո՛ր, Գոյյա՛լ, Բարերա՛ր, Ամենաստե՛ղծ, Հավե՛րժ Կենդանի, Ամենակատա՛ր, Դո՛ւ, որ Քեզանով ստեղծված բոլոր արարածների հեծեծանքներին Մե՛րձ ես մշտապես, ահա խաչակցիդ միաբան ինքս էլ՝ նո՛ւյնն եմ պաղատում, որ ի՛նձ էլ հիշես. նա չէ՛ր բռնվել հանուն Քո Անվան և ո՛չ էլ կապվել, և ո՛չ էլ հանուն Քո Անվան կախվել մահացու փայտին, և ո՛չ էլ մեխվել, ո՛չ բռնեցքներով ձեծեր էր կրել հանուն Քո Անվան և ո՛չ անարգվել, ո՛չ լվկվել էր հանուն Քո Անվան և ո՛չ էլ կրել արհամարհանքներ, ո՛չ խորտակվել էր և ո՛չ մահացել հանուն Քո Մեծի, սակայն և ահա՝ Արքայուլեթյանը, որ արդարներից համար է միայն Լույսովդ անձկալի՛ նրան արժանի՛ ցուցաբերեցիր, և Քո իսկ Ուխտի իրավունքներով, որոնցով Երդո՛ւմ տվիր ամենքին, անփոփոխելի բարի բաները, որ պարզե բախտես այդպե՛ս իսկ արդեն՝ փառավորեցիր հույսը Փրկուլեթյան՝ իսպառ լքվածիս:

Բ

Օրհնյա՛լ, և Օրհնյա՛լ, և դարձյալ՝ Օրհնյա՛լ, ի՛նձ էլ ընդունիր այդ նույն հավատով և Ոտքի՛ հանիր կործանումներից, միա՛յն Բարերար. հիվանդուլեթյան ախտից բժշկի՛ր, ընդմիջո՛ւ Ողորմա՛ծ. մահվանըս եզրից կյանքի՛ մեջ դարձրու՛ հա՛ր Կենդանուլեթյո՛ւն. Քո՛նն եմ նաև ես, ապրեցրո՛ւ ինձ էլ, Ապավինուլեթյո՛ւն. կենդանուլեթյանդ շո՛ւնչն ընծայիր ինձ՝ հոգով մեռյալիս, Դու իսկ՝ Հարուլեթյո՛ւն. մշտապես Կյա՛նք ես և Անմահուլեթյո՛ւն և Բարուլեթյո՛ւն ես անպակասելի, Անսպա՛ռ շնորհ, և Ներողուլեթյո՛ւն անփոփոխելի, Ա՛ջ ամենագոր, Ձե՛նք ամենիշխան, Մա՛տն ամենամերձ, Կամեցիր, Տէ՛ր, և՛ կիրկվե՛մ ես, Քո գթուլեթյամբդ սկնարկի՛ր միայն և՛ կարդարա-

նա՛մ, Խոսքովդ ասա և՛ պիտի հապշտապ դառնամ անարա՛տ, մոռացիր թի՛վը Հարուլեթյուններիս՝ և պիտի արդեն լինե՛մ համարձակ, Առատա՛ձեռնի՛ր, և պիտի լինե՛մ Քե՛զ իսկ պատվաստված, Փառավորյա՛լըդ ամեն բանի մեջ, հավիտյա՛նս հավետ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂ ՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ԽԳ**

Ա

Ե՛վ բժշկական կրթական կարգով, որն ունի իր մեջ բազում եղանակ և ամենափորձ հնարանք ու ճար, և այդ ամենը Քեզանով է, որ պատճառներ դարձան անախտ ապրելու, Արքա՛դ Ջորավոր և Երկնավոր, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, Աստվածդ ամենքի՛ գիտակիցների և տեսակների, ահա իմ մեջ ես, ըստ մարգարեի՛ նո՛ր կցորդուլեթյամբ, ուստի ես Քեզ հետ միուլեթյան մեջ եմ բարեգարդ խոսքիս այս դաշնագրով, որով որ ի՛նքս էլ լուսավորվեցի ու առողջուլեթյուն դատ վերստին՝ շնչո՛վ և մարմնով, քանի որ, Տէ՛ր իմ, ամեն՝ բանի մեջ՝ Դու Կարո՛ղն ես միշտ և անվանելի՛ն:

Բ

Ե՛վ կարիք չունե՛ս սպեղանիներ սարքել զանազան, որոնցով պատես վերքերն հոգևոր, և կարիք չունե՛ս ո՛չ ժամանակի և ո՛չ միջնորդի, ո՛չ էլ օրերի երկարաձգման, ո՛չ փոփոխական դեղատվուլեթյան, ո՛չ հատման, և ո՛չ կրակով խարման, ինչպես երկրավոր բժիշկն է անում իր գործին գիտակ, բաներ, որոնց մեջ հաճախ լինում են վրիպուլեթյուններ՝ ամենասխալ տարակուսանքներ առաջացնելով: Այլ Քեզ՝ Արարչիդ, և՛ հոգիներին, և՛ մարմիններին ինչ խնդիր որ կա՝ ամենայն ի՛նչ է պա՛րզ, լուսավորվա՛ծ, ամենայն ի՛նչ է նախապես հայտնի, ամենայն ի՛նչ է նախապես գրված, ամենայն ի՛նչ է դյուրին Քեզ համար, և ամենայն ինչ՝ նաև համայնն է հնարավոր Քեզ, իմաստը Քեզնո՛վ է գլխավորված, խոստումը՝ լցված, և կամենա՛ն է Քեզնով կատարյալ, Ավետարա՛ն է Կտակդ գրված և Քո Մատյանն է աղբ-

յուր շնորհի: Դու ո՛չ փակված ես օրենքների մեջ, ո՛չ կանոնների պարունակներում, ո՛չ արգելված ես նվազ բաներով, ո՛չ հպատակված հնազանդուկյամբ, ո՛չ տեղավորված փոքրիկուկյամբ մեջ, ո՛չ էլ չափվում ես սահմանների չափ, ո՛չ բարկուկյունից պահ իսկ վրիպում, ո՛չ այլայլվում ես ցասման ժամանակ, ո՛չ խտուկությունից սխալներ գործում և ո՛չ ամբոխվում խռովությունից, ո՛չ դղրդում ես անզետ պատճառով, ո՛չ էլ փոփոխվում ողորմածուկյամբ, ո՛չ պակասում ես բարձրում լինելով, ո՛չ տկարանում փրկագործուկյամբ, և ո՛չ էլ լքում Քո այցն անելիս: Դո՛ւ ես սկիզբն ու լրումն ամենայն և ամենայնը Քեզնից է ծագում. Քեզ է վայել Փա՛ռք և երկրպագուկյուն՝, հավիտյա՛նս: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ԽԴ**

Ա

**Աստված** անսահման. անթարգմանելի՛ Հարազատ Ծնունդ Մե՛ն-միակ Աստծո, Արարի՛չ բոլոր արարածների, Քրիստո՛ս Արքա, Լո՛ւյս խավարի մեջ մթնած սրտերին, որ մեր մեջ եկած Մա՛րդն ես կատարյալ, իսկ Առաքչից՝ իսկուկյամբ Աստված, մերայիններիս հրաշալիորեն Քեզ ճանաչեցնող: Քո Հայրն է Օրհնյա՛լ, Երկնավո՛ր, Անճա՛ռ, որ բարձունքներից Քեզ վար առաքեց, Ում փառակիցը ես արարչության մեջ, Նրա, որ այնքա՛ն սրբորեն հոգաց փրկուկյունը իմ, որ գերի՛ էի սոսկ մի տարագիր, որ Ուղարկեց Քեզ և մատնեց մարդկանց՝ հանո՛ւն իմ կյանքի: Դու ամեն բանում գոյուկյամբ Կարո՛ղ՝ վե՛ր, քան վշտերն իմ, ըստ տնտեսուկյան Քո Սուրբ Խորհրդի՛ պարաքերիս դիմաց հաճեցար ահա մահվան բաժակը լմա՛ն ճաշակել՝ միակ անթերի Մարդը լինելով, իսկ Աստվածուկյամբ՝ վե՛հ ու աննվագ: Եվ Սուրբ Հոգո՛վ ես Դու Կենդանաբար, որ Իսկակիցն է և Քո և Քո Հոր, և Համապատիվ՝ Մեկ Նույն էուկյամբ Քո Ծնողին և՛ Քե՛զ իսկ՝ Ծնվածիդ: Մե՛կ Երրորդուկյամբ, սակայն Կատարյալ, Երեք Սուրբ Անճե՛ր՝ Մե՛կ նպատակով, որ Անսկիզբ է և Անժամանակ և Բարե-

րա՛րն է ողջ Տիեզերքի, Կենդանաբար Համայնի կյանքի և Խաղաղարար յուրաքանչյուրին, Գոյի՛ Ստեղծիչ և Հորինո՛ղը ամեն-ամենքի՛ կյանք ծագեցնո՛ղը անքանակուկյամբ և Մեկ Բնուկյամբ՝ վե՛հ փառքերի մեջ:

Բ

Իսկ երբ որ Հայրը՝ Գթա՛ծ, Երկնավո՛ր, Հզո՛ր, Նույնաէ՛, իմ՝ մահապարտիս հանցանքի դիմաց՝ Քե՛զ իսկ մատուցեց որպես քավուկյուն, միակ Ծննդիդ Անքննին Մոցի, ապա Դու՛ Որդիդ, Համապատիվդ և Սիրելիդ Հոր, դեմ չզգացի՛ր որևէ բանով, այլ Քո՛ իսկ կամքով տրվեցիր մահով չարչարողներին, ըստ Զաքարիայի մարգարեուկյան, որովհետև որ գարթնել էր սուրբ Հովվի վրա, և բռնադատել Հովվապետին՝ ոչխարների հոտն այդպես ցրելով, այնպես, ինչպես որ նուրբ օրինակն էր նախադրվածքի՛ հանո՛ւն խորանի ուխտադրուկյան: Եվ նվիրումը սպանողով արյան, որ առակ խորհուրդն էր աբրահամյան հին պատարագի, որով թշվառիս փրկուկյուն բերիր՝ Կեցուցիչ Կամքդ այդպես նախօրո՛ք ինձ պատկերելով. «Եվ արդ ինչո՛ւ ես դու այդպես տրտմել, հոգի՛ իմ, ա՛նճն իմ, երբ կործանումդ Աստծո՛ւց չի եղել, այլ քո ինքնագործ հակամտուկյամբ այդ վիճակն առար», և կամ. «Ինչու՞ ես իմ մեջ խռովվում՝ սատանայական հուսահատուկյամբ մտքիս խփելով: Հուսա՛՛ք Սատծուն և խոստովանի՛ր Անունը Նրա, և Նա կհոգա՛ պետքերը բոլոր», ըստ դավանուկյան Դավթի սաղմոսի և նաև այլ մի մարգարեի էլ՝ կենսախրախույս խոսքի համաձայն:

Գ

Իսկ եղանակը Խնամարկուկի վե՛ր է ավելի, քան սահմաններն են մտքի կշռուկյթի, որ հրեշտակներն ու մարդիկ ունեն, և եթե բյուր հեղ սահմանն իմ չափի դնեմ և կրկնեմ՝ չե՛մ լինի չափած, որովհետև որ՝ անբովանդակի Բարերարելն է հա՛ր անճառելի: Որովհետև, երբ Սուրբ Երրորդուկյան Մեկ Անճի կողմից Օրհնյա՛ծ է Նա՛ Օրհնաբանվա՛ծ է մյուսի կողմից, Ինքն էլ համագո Երրորդուկյունից երկիր առաքվեց, և ի հաճուկյուն Առաքչի կամքի՛ մեռա՛վ մեզ համար, Մյուս Երկուսը մեծ հավանուկյամբ ու բաղձանքներով օրհնո՛ւմ են, մաղթո՛ւմ՝ Իրենց Համագո Կամքը Գործողին: Եվ Համաբարո Միակամուկյամբ Երեքով՝ Նրանք ներգործում են մեզ միևնո՛ւյն բարին. կենդանուկյունը Հոգուց է

բխում և բանականը ծագում է Բանից, պայծառությունն է ծագում փառքերից և կերպարանքն է Իր էությունից: Փռվածացող է Նա կենդանություն տալ, ողորմությունն Իր անում է՝ սթափ, փրկության համար Զեռքն Իր մեկնելու՝ միշտ Կա՛գմ ու Պատրաստ, առատությամբ՝ Հո՛րդ, հաճախության մեջ՝ Զեղո՛ւն Քաղցրությամբ, անբավությամբ՝ լի՛, և փարթա՛մ է Իր Աննվագությամբ, Երկարմտությամբ՝ ճո՛խ, համբերատա՛ր, և Անհասությամբ՝ Բարձրյա՛ն է Նա՛ Մե՛կ Երրորդությամբ Կատարելագո՛ւյն, երեք Անձերով՝ Հավիտյա՛նս Օրհնյալ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն աղերս-  
ներով և մաղթանքների խոսքով  
միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂ ՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ԽԵ**

Ա

Ե՛վ աղբ, սրտիդ մեջ բարության հույսի տնկին դու ունես, ա՛նձն իմ կործանված, ունես պընդված հավատի գոտին երկիմաներիդ երկու մասունքում, որ գործարան են կրկնապղտոր ցանկություններիդ ու խորհուրդներիդ, խոստովա՛ն եղիր Բարերարն Աստծուն՝ մտքերըդ որպես կատարվա՛ծ գործեր, խորհուրդներդ իբրև իրագործվածնե՛ր, անտեսանելիներդ՝ Հայտնվա՛ծ բաներ, սրտիդ ծածուկում եղածներն իբրև բարձրաճա՛յն խոսքեր, ակնարկություններդ իբրև արդյունքնե՛ր մեղքահավաքի, և շարժումները քո շրթունքների՝ գլուխ վեր հանած չարիքների՝ բուն, ոտնաքայլերը՝ Տէր Աստծո տված պատվիրաններից վագելո՛վ փախչող, ձեռքիդ ձգտումը ցասո՛ւմն է դեպի՛ արյուն թափողին հա՛մ ու հավասար, անտեղի տեղը ծիծաղելը քո՛ իբրև կամավոր չնորհի լքում, տեղին-անտեղի երդումներդ իբրև՝ գործակցություններ խաբողի կամքին, ամբարտավանությունը՝ նախաստեղծի բարձրության հանդեպ՝ բնավորությունն հին կործանողից, սրտնեղությունը՝ իբրև թերությո՛ւն հավատի կյանքի, մեղկությունդ արդեն պարտությունն է քո՛ մեծ Զորավորի ամրության առաջ, տրտունջները քո կրքերի մասին՝ ուրացումներդ են Տիրոջ ուխտի դեմ, ապերասանությունը՝ քո անգթություն թո՛ւն է ծնունդով,

անբարեհաճ քո վերաբերմունքը՝ գոռոզությո՛ւնդ է վեհերի հանդեպ, հպարտությունը՝ իբրև կամակո՛ր արտահայտություն՝ որ հարագատ է չարի՛ք գտնողին, ակամաների մեջ՝ կամավորական, բռնավորների հանդեպ՝ համակի՛ր, եկամուտները՝ բնածին դիտող, անօրինությունները՝ անասովածություն՝ հետ մեկտեղելով, փոքրերը խառնող մեծամեծերի՛ն, իսկ նվազները՝ փառքերի հասած հղովվածներին, անպատումները՝ իբրև պատմված ճառելի՛ բաներ՝ դրա՛նք ես ուղղում Ամենագետին, չզրվածների վնասումները՝ իբրև տեսնողի կողմից նկարված կամ արձանացած մագնիսե վեմին, թեթևագույնները՝ մտքի խտրության իբրև բեռների ստվար ծանրություն, ծածկված խնդրի չափերը իբրև մինչև՛ վերջ չափված, լուծվա՛ծ ճշտություն՝ կետի կորյունի բերանից ելնող չորեքդրամյան իր կշռությամբ, և անդունդներին արժան գործերը՝ Աստծո ականջին իբրև թե արագ տեղ հասած լուրե՛ր: Եվ այս ամենից էլ հաճախելով կրկնակուտակ քո հանձնառությունամբ, Հեծեծանքներով վերստի՛ն պատմիր՝ չեղածներն իբրև եղելություններ, և ընծայելով Տէր Աստծուդ դրանք՝ ե՛տ վանված անձիդ պարտությունները պիտի լա՛վ տեսնես, քանի որ, ա՛նձն իմ, դու ընկալվում ես որպես մեկը, որ Փոխտուհի չնորհք է ակնկալում, իսկ քո մեղքերի պարտքերի դիմաց ակնկալում ես վերին թողություն, մի բան, որ Տէրն Ինքը արդարացրեց և հրաշափառ հուշակամամբ հայտնեց ողջ տիեզերքին, ուստի՛, ըստ այդմ էլ՝ ամենապատիկ ներբողումներով իմ գղջումները կրկնելն ավելի՛ գովեստ է, քան թե՛ պարսավանքներն իմ ուղղված մեղքերին:

Բ

Բարդի՛ր և դիզի՛ր, ա՛նձն իմ մեղապարտ՝ բամբասանքներըդ իմ հոգու մասին՝ քո բազմամանյա խոհերը բոլոր հոգնախթան քո խոսքով կշտամբող, որ չարություն են, անօրինություն և վրիպությունն, մարտի հանդեսից փախուստդ է դեպի պարտության դիրքեր, ներսումը ամբարած մոլեգնություն կա, անբարչառություն, նաև ապշություն, նաև թմբբություն՝ քուն թե արթմնի և կամ նիրհելը է ընթացքի պահին, խորհուրդներդ՝ օտա՛ր, խոսքերը՝ նանի՛ր, հաճությունները՝ զազրությունն ուղղված, կամ համեմալ է նման բաներին՝ աներկյուղություն և անսաստություն, անուղիղ ընթացք, և թերություններ՝ և թյուրություններ և լուծարումներ



ճշմարտությունից, անկա՛պ, սանճարճա՛կ, վրնջողական՝ քո ծիծաղներով, կատակերգական խոսքերով տարված, գայթակղության մեջ խորասուզված ու պատրողության, քաջագո՛րծ, երբ որ՝ դրան հարկ չկա, սակայն մարտի մեջ անհարմա՛ր դիրքով, արիւթյան մեջ՝ անօրինակա՛ն, հոգու խեղճմո՛ւլ, և երկչոտությա՛մբ տատանողական, այսպիսի՛ն եմ ես՝ բազմաստեղյան ճյո՛ւղ մի անպիտան, անպատկառուրե՛ն ինքնափարատման հետևորդելով, գծտուլթյունո՛ւլ լի ու խժոժությամբ, ատելությա՛մբ, երբ՝ դատի հիմք չունեմ թեթևբարո իմ մարմաջներով, փոքրերի՛ մեջ իսկ կշիռ չունեցող խոստում դրժող եմ մի անպատվելի, ես, որ ուխտե՛րն եմ տվել մոռացման՝ նմանեցնելով այլակերպության, որ կեղծիքնե՛րս եմ քողարկված պահում՝ փառամոլությա՛ն իմ հիմարությամբ, որ՝ հավանվելու՛ է հավակնությունս սոսկ բավարարեմ՝ ապիրատությո՛ւն մեջ պահելով, նախագահելու ազա՛՛հ տենչանքով, եղեռնողներին նույն իսկ չարությամբ՝ եղե՛ռն անելու հատուցումներով, դրանց մեջ անշահ աղճատումներով, հետևանքների վայրենի՛ բերմամբ, և բանասրկուի խորամանկության իմ ընթակցությամբ, Բանի սերմերի կաթկթումները իմ վաճառելո՛ւլ, կյանքը ծախելով դնո՛ւլ սատակման, ավանդակորույս ու հայրենաճախ մի կապարա՛ն եմ մեղք ու պատրանքին հույժ ձգողական. երինջների պես, որոնք կապված են լծափուկերո՛ւլ, նույնի նման իսկ՝ անխզելի են անօրինություններն իմ ըմբռնման կապով, տղմաբնա՛կ եմ՝ հարատևորե՛ն թաթախված տիղմով, լքա՛ծ լավերին, ընթացքս անկարծի՛ք, թե ետ եմ դառնում՝ նո՛ւյն դաժանական բաներն եմ ընտրում և ցավաբերե՛ն՝ նորանո՛ր մտքեր, օտա՛ր խորհուրդներ ու կա՛մք անկայուն, հագագի՛ հնչմամբ՝ շունչը որպես թե հուլթյո՛ւն դիտող, և ամեն բանում սահմաններն անցած՝ քան կանոնական դրուլթյուններն են ապրել կոչնակում՝ ամենասփյուռ բացարձակության վերն իշխանությամբ, և էլի բաներ, որ ճառելի՛ չեն, ո՛չ էլ գրելի, ո՛չ էլ պատմելի, և կամ էլ բերվող երեսի առջև:


Գ

Եվ արդ, այսքան շատ չարիքից հետո, այսքան տեգերից սաստիկ խոցոտված, ինչպե՛ս բժշկվես, ա՛նձն իմ եղկելի՛՝ հանված ու թողնված ա՛յր մի տարագիր, ըստ մարգարեի մեզ հասած խոսքի՝ անողջանայի՛ քո վիճակներով, քանի որ վերում գրված մեղքերից մե՛կն էլ հերիք է, լրի՛ւլ

բավական՝ սատակմա՛ն տալ քեզ: Դեռ այժմ թողնենք սպանողների դասերը մի կողմ, քանի որ դժնի այդ դահիճներով ես չըջապատված, և մանավանդ որ՝ ո՛չ այստեղ գրված սոսկ նմանությամբ, նաև դրանց իսկ տարացույց կշռի բեռնե՛րն են ճնշում քե՛զ՝ տաժանյալի՛ր: Ինչպես օրինակ անթիվ բազմությամբ կայտառ ու խայթող կարիճներն են, որ՝ թուլյն օրհասական կրում են իրենց պոչերի ծայրին, և այդ մաշկեղեն ամանների մեջ ամփոփված են ու չըջափակված են չարի՛քը նրանց, թեպետ նայելիս՝ արտաքուստ դրանք բարի՛ են թվում, սակայն ներքինում դրանք կորստյա՛ն պահեստներ են լուկ, կո՛ւյտ կսկիծների, սպանղի՛ գործոն, մշակնե՛ր մահվան:

Դ

Արդ, նույնի պես էլ անօրինությունները քո մեջ ամբարած և որոնց վարձը՝ թշվառաբրտինք տաժա՛նք է մնում, ա՛նձն իմ՝ կրկնակի սատակման արժան: Եվ դու կամավոր այն դերն ես տանում, ինչպես թշնամին, որ այս աշխարհի ազարակներում՝ ցորենի վրա չար սերմ է ցանում, ով այրգ անմաքո՛ւր, անբարիշտ ու ծո՛ւլ, որ ատելի՛ ես բոլոր կողմերից, որ ախորժանքով սիրահարված ես քո ա՛յն մտքերին՝ որոնք լցված են անառակությա՛մբ: Առաքյալն ինքն էլ այլ սարսափելի բաների կողքին կշտամբեց և սա՛ թե՛ սկսելով Աստծուց և Նրա կանոն պայմանը լման գործելով, թեպետ,՝ սառւմ է,՝ հասել են Աստծո իրավունքներին, բայց եթե մեկը այսպիսի բաներ սկսի գործել և կամ կամակից լինի գործողին՝ մահո՛ւ արժան է ուրեմն արդեն: Արդ ես, ինքս ինձնից պարտք վերցնելով կրկնակի՛ պատիժ, համարելով ինձ կորատի՛ արժան, արժա՛ն սատակման, և նաև մահվամբ դատապարտության, աղաչո՛ւմ եմ Քեզ, ողորմությամբդ խնայելի՛ր ինձ, Բարեգո՛ւթ Աստված, Հզո՛ր, Կենդանի՛, Կարո՛ղ, Կամարա՛ր, Քեզնո՛ւլ է, որ կա հնարավոր ելք, բժշկմա՛ն հնար, հավիտյա՛նս օրհնյալ: Ամէ՛ն:





**Հեծեճանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն աղերս-  
ներով և մաղթանքների խոսքով  
միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂ ՂՎԱՍՏ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ԽՉ**

Ա

Արդ՝ վրիպյալս, որ հավիտյան եմ պատժի արժանի, միշտ դժնի՛ վարքով, վայրենաբարո՛, մահվանըս համար՝ ի՛նքս եմ անձամբ ինձ անվերջ կշտամբում, ես զագրուկթյուններ արածողների մի երամակի հովի՛վ եմ ահա, արոտ եմ հանել խոզերի՛ խմբեր, որոնք սնվում են վայրա՛գ բաներով՝ մեղքի՛ գարշուկթյամբ, և վարձկաններին հասցեագրված նախատինքնե՛րն են ինձ բաժին ընկնում: Հովի՛վ եմ, սակայն՝ պահակ եմ կանգնել ամայաբնակ ուլերի համար, որ գտնվում են իրենց հորանում. վրանների մոտ եմ հովիվների, որի մասին որ առակն է խոսում Երգ Երգոցի մեջ, ցույց տալով այդպես օրինակը իմ, թե՛ չկարողացա՛ ինքս ինձ երբևէ դիտել-ճանաչել՝ ո՞վ եմ ես, և կամ, Ո՛ւմ պատկերով էր, որ ի հայտ եղա, և կամ Ո՛ւմ ձեռքով գոյաբանվեցի:

Բ

Ահա դիտենք քեզ, ոտքերըդ շարժուն, երկու կրողներ՝ բայց նո՛ւյն խորհրդում միակցորդված, ողջ արտաքինով դու կառուցվեցիր հրեշտակների՛ հար նմանությունամբ, և ինչպես նրանք ազա՛տ թռչում են իրենց թևերով, նույնի պես և քեզ բազուկներ տրվեց, որ տանում են վե՛ր, թե՛ հայրենական աշխարհը դիտես քո թռիչքներով, ո՞վ հիմար, ինչո՞ւ ինքըդ քեզանից կորացար երկիր, հոգալու այստեղ սոսկ դիպվածները քեզ գետնաքարշող, և համարվեցիր անապատական ցիռերի կարգին: Եվ աշտանակին մարմնակառուցիդ՝ իբրև մի ճրագ բազում կանթեղով՝ գլո՛ւխը հաստատվեց, որպեսզի այս իսկ օրինակի էլ չօտարանայիր քո շնորհներից՝ տեսնելու Աստծուն և մնացած այլ բաներում արդեն՝ վերն իմաստությունամբ վերաբերվելիք: Բանականություն հարգանքների մեջ կրկնակի՛ ճոխ կարգավորվեցիր, որպեսզի խոսես անարգել լեզվով ու մեկնաբանես՝ հաղթանակները բարեմասնություն, որոնք քեզ եղան, որ քեզ լսելով գործնականները՝ տեսնություններն իրենց հանձնված

լա՛վ տնօրինեն, և իբրև կցորդ ամեն բան բաշխող համեցողություն Աջին Տէր Աստծո՛ւ՝ Նրա իսկ կողմից աստված կոչվեցիր: Երեքհարյուր և վաթսու՛ն հոգերով դու շաղկապվեցիր՝ նրանց վրա էլ հավելյալ տրվեց պատշաճական ու մասե՛ր չափավոր՝ հի՛նգ զգայարան՝ ազդ ու ներագդի, ձեռքիդ հաստատման հարմար ուտերով՝ շառավիղներն են ահա մատներիդ՝ որպեսզի դրանց համամբողջությամբ դու դիտո՛ղ լինես նյութականացված ու երևելի կառուցիդ վրա, որպեսզի այդպես մտքիդ տեսություն դիտումի առաջ ա՛նաչառորե՛ն քննես նախ քեզ: Քո անդամներից ոմանք ավելի հա՛ղթ են, գորավո՛ր, իսկ մյուսները՝ թեպետ փոքրիկներ, սակայն՝ պիտանի՛, կես մասն ավելի կարծրակերտ են, նաև՝ ազդեցի՛կ, կան որ փափո՛ւկ են և գողտրիկներ՝ պատվականագո՛ւյն, դարձյալ՝ կարևոր և պատկառելի: Իսկ թե ամենն այս թարգմանենք, ապա՝ այս իսկ տեսությունամբ դո՛ւ ես նկարվում իբրև արձանը կառուցիդ վրա, որ չի՛ ջնջվում, ա՛նձն իմ եղկելի: Ինչպես տարբերը ժամանակների, նաև օրերի հետևորդումը մեկը մյուսին, որոնք կազմում են պատկեր տարվա, նույն այդ կանոնով մարմնիս մասերի թի՛վն է սահմանված:

Գ

Դարձյալ հոգևոր մեկ այլ օրինակ, որը որ սիրո բազում հոգերով իրար է կապում ողջ եկեղեցին, և այդ ամենը դարձյալ Քեզնո՛վ է մեզ մեկնաբանվում. և եթե սրանք, որ թվում է թե՛ հանդես են գալիս առանց որևէ զուգամասնություն, բայց եթե միմյանց մեծ հավանությունամբ վեհ ու փոքրերը չկցորդվեն, ապա սուրբ անվամբ Տէր Քրիստոսի՛ հավաքվածների անարատությունը պիտի վնասվեր, այդպես էլ ասենք այդ անդամների թեկուզև նվազ մեկի հատումով, որ պատվաստված է ամբողջ մարմնին, պակասումն արդեն պակասեցնում է և կազմությունը՝ մարմնակառուցի կատարելության, որ զգայական սեյսյակն է մարդու, իսկ այդ հատումով կստացվի անկարգ մի փոփոխություն, որ ներդաշն չէ իր ընտանություն կերպ ու պատկերին: Արդ այս բաներով և ևս բազում հրաշկերտությունամբ, իրենց ընույթում միշտ անզուգական, եղական պատկերն Աստծո ստացար՝ իսպա՛ն կշտամբված ոգի՛ իմ գերի: Թեպետ առաջին նմանությունից կողոպտվա՛ծ դարձար՝ պատվիրանի դեմ հանցավորությունամբ, երբ ապրում էիր կյանքի դրախտում, բայց հետո, սակայն՝ սուրբ ավագանով Հո-

գու փշուճի Լուսազարդ չնորհն արդեն ստացար՝  
և նմանվեցիր Պարզևատուրի:

Գ

Եվ արդ, էլ ինչո՞ւ կորստի տվիր փառքդ  
երկնավոր, նախաստեղծի պես, որ մի ժամանակ  
երկրավոր Այգին՝ դրախտը կորցրեց, երկինքն  
առջևդ ինչո՞ւ փակեցիր՝ կողպելով դուռը քեզ  
վերև տանող, մաքրության ջրին ինչո՞ւ խառնե-  
ցիր ախտն արցունքներիդ, որ ծնունդ առան տա-  
ժանքներիդ մեջ, ինչո՞ւ լվացված, մաքուր վերար-  
կուղ ապականեցիր քո գարշ գործերի պիղծ գագ-  
րանքներով, ինչո՞ւ մեղքերիդ հանդերձանքը, որ՝  
հանվել էր քեզինից, ե՛տ աշխատեցիր, և պատմու-  
ճա՛նը անառակության գցեցիր վրադ: Եվ  
սրբությունը քո իսկ ոտքերի՛ ի՛նքդ արտեղեցիր  
ժանտ ճամփեքի մեջ, Իրավաբանի հայացքի ա-  
ռաջ... ինչո՞ւ կրկնեցիր ուխտագանցությունն  
հին պատվիրանի, Շնորհի պտուղն ինչո՞ւ մերժե-  
ցիր՝ ճիշտ Աբամի պես, որ կենաց ծառը հենց  
ի՛նքը մերժեց, և քո իսկ կամքով ինչո՞ւ դրժեցիր  
հարակալությունն անստվեր Լուսին, և ամոթնե-  
րով քո բազմապիսի՝ անհամարձակությունն  
ի՛նքդ աճեցրիր քո իսկ դեմ դիմաց, ինչո՞ւ զին-  
վեցիր քեզ իսկ հակառակ, ո՛վ ընդունարան խե-  
լագարություն, ինչո՞ւ որս դարձար մահվան ծու-  
ղակին՝ թողած շավիղը վստահարանիդ, ինչո՞ւ  
բռնվեցիր պատրանքի կարթով, երբ հաղորդ էիր  
կենդանարարի Արյանն ու Մարմինն: Սակայն  
վերստին դու նրա՛ն հուսա և նրա՛ առաջ կար-  
դա աղոթքներ. ապավինածիս՝ Քավի՛չ, Նորոգո՛ղ,  
Փրկի՛չ, Ապրեցնո՛ղ և Կենդանարա՛ր, Ողորմա՛ծ  
Ծնող, Բարի՛ խնամող, Բազմազո՛ւթ, նաև միա՛կ  
Մարդասեր և Անտխակալ Աստվա՛ծ բոլորի, Դո՛ւ,  
որ Օրհնյա՛լ ես հավիտյա՛նս: Ամէ՛ն:



**Հեծեճանքների մի նոր հավելված**  
**Նույն իսկ հսկողից, նույն աղերս-**  
**ներով և մաղթանքների խոսքով**  
**միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻԾ ԽՈՍՔ**  
**ՈՒՂՂՎԱԾ ԱՍԾՄՈՒՆ**  
**ԲԱՆ ԽԷ**

Ա

Արդ, ի՞նչ է մնում էլ ինձ ասելու՝ ամո-  
թահար՝ եմ այդքան ահավոր Մեծիդ երեսից,  
մնում է միայն բերանս հող առած արդեն համ-

րանամ՝ սրտիս մեջ անգամ ձայն չհանելով, մար-  
գարեական այն խրատն առած, որ՝ բարի՛ հույ-  
սին ձգվեմ ու փարվեմ: Իսկ թե շուրթերիս փա-  
կանքը բացեմ կամ բռնադատեմ նրանց, որ՝ խո-  
սեն, դարձյալ նո՛ւյն ձայնով եղերերգության,  
կրկնակի՛ լացով, մտքերն իմ դեպի՛ ողբերգութ-  
յա՛նը պիտ առաջնորդեն:

Բ

Եվ արդ, ողբակից մեծ մեղավորին՝ Դավիթ  
արքային, նա, որ կամովին մահու հանցանքով  
անօրինացավ, ես էլ նրա հետ մի նոր գոչումով,  
նույն աղաղակն եմ ահա երկրորդում: «Մեղա՛,  
Տէ՛ր, մեղա՛, անօրինություններս ինքս ի՛նձնից  
գիտեմ»: Հյուսած այս գոչին և հիսուներորդ  
խոսքը սաղմոսի՝ անթվելի՛ են մեղքիս պարտե-  
րը գրի առնելու, անհաշվելի՛ են, քան թե հոգիա-  
հոս փոշու հյուլերը երկրի վրա, որ քամու ձեռ-  
քով ամենայն կողմ են քշվում, տարածվում: Մե-  
ղա՛ երկնքի, նաև՝ Քո՛ առաջ, անառակ որդու  
հետ ամոթահար, Հայրական գթիդ հույսով՝ ես  
դարձա, իմ կրկնակի՛ էլ թախանձանքներով, ա-  
ղերսանքներով իմ ողորմելի՛ արցունքից ծնված  
ողբեր եմ գոչում՝ տխուր իմ դեմքով, դրանք  
առջև՛դ եմ բերում-տարածում, Աստվա՛ծ բոլորի,  
գթությունների գերակատար՝ Հայր, այլևս, բնավ  
էլ արժանի չեմ ո՛չ միայն որդի կոչվել Քեզ հա-  
մար, այլ անգամ արդեն՝ անպիտան՝ վարձկան:  
Ե՛տ ընդունիր ինձ՝ վնասապարտիս, ես որ տարա-  
գիր սովյալ եմ արդեն, և քաղցի ցավից, նեղութ-  
յունների լլկանքների մեջ, չարաչար վարձից  
նվաղած այսքան՝ բժշկի՛ր կյանքիդ կենսատու  
հացով: Ողորմությունը ընդառա՛ջ էլ ինձ, քանի  
որ Քե՛զ եմ ես ապավինել, ինձ՝ մեղապարտի՛ս,  
անօրինացա՛ծ, մեղքով մերկվածի՛ս կրկին հագ-  
ցրու հանդերձանքներն այն, որ կողոպտեցին:  
Մեղքով աղտեղված, ալմանդ կորցնող իմ ձեռ-  
քին, ո՛վ Հայր, ամենաառատ, օրհնյալ Քո կամ-  
քով դի՛ր այն մատանին, որ կնի՛քն ունի համար-  
ձակություն, ոտնաթաթերիս խի՛ստ թշվառական  
վիճակները տես, ամո՛ւր-անխորտակ կոշիկ  
հագցրու՝ ավետարանական պատասպարությունը,  
որ օճն այլևս չկարողանա՛ խայթել ու թույնել:  
Տո՛ւլը՝ մատաղի համար պատրաստված, Ե՛զրդ  
երկնային, որ և Միածին Որդիդ է օրհնյալ, Մար-  
դասիրությունը կայո՛ւն, իսկական, բարութ-  
յա՛ն կարոտ հոգուս նվիրի՛ր՝ Ձոհաբերություն  
արգասի՛քը Քո: Նա՛, որ մեզ համար Ձոհագործ-  
վում է հավիտյան կարգով՝ իր լրության մեջ ան-

պակասելի, և մորթվում է սեղանի վրա սպանդարանի՝ անթիվ-անհաշիվ պատարագներում, բայց անսպա՛ն է, և ամբողջ է Նա բոլոր տեղերում և ամենքի մեջ՝ մասնավորաբա՛ր, իր էությունը՝ Նա՝ վերն երկինքներում, սակայն իսկությունը՝ երկրի վրա մարդ լինելու մեջ աննվազ եղավ և անթերի է իր Աստվածությունը, և փշրվելով բաշխվում է Նա անթիվ մասերի և չունի՝ հատնում, քանի որ այդպես ամենքին է Նա հավաքագրում Մեկ Նո՛ւյն Մարմնի մեջ, իր Գլխի՛ ներքո: Նրա հետ Քեզ Փա՛ռք, Հա՛յր Ողորմության, հավիտյա՛նս: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
Նույն իսկ հսկողից, նույն աղերս-  
ներով և մաղթանքների խոսքով  
միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏԾՈՒՆ  
ՔԱՆ ԽԸ**

Ա

Բարձրա՛յլ, Հզո՛ր, Անսկի՛զբ, Անե՛ղ և Անբովանդա՛կ, Աննիրհեղի՛ Աչք, որ ամեն ինչ է իմ մեջ նկատում, և որ Մնողն է իր անքնելի Միածնի Փառքի, ողորմությանըդ ինձ մերժվածի՛ս, երկնայինների առջև և նաև երկրավորների ընդունելության իրավունքներդ պարզ և շնորհիր: Եվ նրանք, ովքեր որ բնակվում են Վերին հարկերում, իմ կորուստիս դարձը տեսնելով տոնախմբում են և պարերգությանը դիմավորում ինձ. Ավետարանի՛ր խոսքըդ օրհնության և մահացածին կենդանությունըդ վերապարգևիր, Բարի Կամքդ ի՛նձ էլ հայտնի դարձրու՝ Գովվյալըդ բոլոր արարածներից, և թշվառիս էլ Քո նորոգելով ինձանից էլ, Տէ՛ր, Քեզ համար մի նոր ու անճառելի Անուն մշակիր: Մերելի Որդուդ Արյան ալիքով, իմ հոգու մահվան վճուխ լվացմամբ՝ կորցրո՛ւ գիրը մեղքիս մուրհակի ամբաստանության, և փոխարենը, Քրիստոս Որդուդ Արյան միջոցով, նկարի՛ր այնտեղ՝ վստահարանը բարի փրկության: Քո հարազատի հարսանյաց ճաշին հրավիրելով՝ անարժանի՛ս էլ արժանացրո՛ւ Բարեթխությանը Քո սքանչելի: Եվ Քեզ դիմողիս առջև մի՛ փակիր կյանքի Տան ճամփան, հրավիրյալներիդ արժանի խմբից ինձ մի՛ բաժանիր, Դո՛ւուդ առագաստի, Բարիքներիցդ դուրս մի՛ թող և ինձ: Անօրենությանս

պարտքերը, որոնք նյութեցի Քո դեմ, մի՛ պահիր արդեն գանձարանիդ մեջ, և Քո բարությունս քսակը իմ առաջ մի՛ կնքիր փակով՝ զազիր գարշուկությամբ իմ վատ գործերի, մարմինս ծածկող մեղքիս վերքերը երկար մի՛ թողնիր, որ վրաս մնան, մի՛ թող ինձ լինել մահվան տնկակից՝ փթող նեխություն իմ ցավերի հետ, այլ հեռացրո՛ւ ծանտությունները՛ս սպականարար Քո Ողորմության կենդանի խոսքով, գատելով բոլոր հյուժող ախտերից՝ ինձ առողջության համար պատրաստիր: Գթությունների՛, խղճմտանքի՛ Հայր, անարգելարան Քո գորեղությանը՝ հնարավորին դարձրու ինձ համար, որ մեծ խոցվածիս՝ համապատասխան սպեղանիդ տաս, և ինձ՝ բարի Քո այցելությունով՝ կարևորի՛ր, որ՝ կործանումներից իսպա՛ն հանես դուրս, որովհետև որ՝ ես Քո՛նն ու Քո՛նն եմ, Տէ՛ր իմ հոգեսեր: Եվ թե բյուր անգամ մեղանչած լինեմ, սակայն չեմ գրվի մեղավորների կորած շարքերում, և՛ չնորհիվ Քո, Դու՛ իմ Կենսատու՛ կյանքի Բարերար, որովհետև որ՝ Քո չնորհների պարգևներին՝ եմ ես ապավինել, որովհետև որ՝ ճանաչելը Քեզ՝ արդարություն է արդեն բովանդակ, և իմանալը գորություններիդ՝ իմ անմահությանն արդեն՝ իսկ Արմատ, ինչպես այդ մասին և իմաստունը նախօրոք գրեց, «Դարձյալս՝ ասում է,՝ Քո ամենայնին տիրելըդ արդեն՝ Քեզ խնայել է տալիս շարունակ՝ նո՛ւյն ամենայնին», և ապա ինձ էլ խոսքն ուղղորդելով. «Մո՛տ է Տէրը քեզ, և երբ կամենաս՝ կարո՛ղ ես գտնել»:

Բ

Սողոմոնի այս աղերսանքն հույսի՛ նման է իմին, որովհետև որ՝ բազմամեղների խմբաքանակում այլ մեկը չկար, որքան որ նա՛ է մեղքի շատությունը ինձ զուգաշավիղ, երբեմն՝ որդի, ապա՛՝ ատելի, երբեմն՝ միջնորդ է խաղաղության նա Աստծո ընտրյալ ժողովրդի մեջ, և հետո նսեմ խտրականությանը՝ խուսկություններ դրող ու նյութող, երբեմն՝ կյանքի օրենքում կայուն, և ապա մահվան՝ մուրհակ հաստատող, կամ երկնավորիդ պաշտոնի հանդեպ ոտնո՛ղ ապստամբ, կամ Աստծուդ թողած՝ օտարի՛ անունը ճանաչելով՝ անտեղի՛ ցրող, անկարոտ՝ գրկո՛ղ, անսովելի գո՛ղ, գրկի մեջ եղած, բայց՝ տրանջացո՛ղ, փափուկ կյանք ապրած և՛ փախստական, սեղանն ունեցող և՛ սեղանանն՛նդ, իր դիրքորոշմամբ՝ անպատասխանատու մի վնասապա՛րտ, քաղցրությամբ անված, սակայն՝ հայհոյի՛չ, զավակ՝ հայ-

րատյաց և կտակների մատնիչ գրպարտո՞ղ, Մովսեսի հանդեպ լարված չարախոս՞ս, երախտիքները ուտող-մոռացո՞ղ, իմաստուն՞ սակայն սխալներ գործող, ամենագետ մարդ՞ սակայն հանցավոր, զղջացող, սակայն՝ ամոթի՞ պարտքով, կասկածանքներով աշխարհի՞ն հարած, իր աղոթքների մեջ աղաչավոր, բայց և՛ կուսպա՞չտ, դանդա՞ղ դարձավոր, կեղծ կարծիքները մի՞ բան համարող և կասկածավոր իր հաշտության մեջ, ապագաները հիշատակ դիտող, բայց՝ երկբայո՞ղ միտք փրկության հանդեպ, անգիտակից գյուտ, դեռ կիսատ՝ ավարտ և անձն իր մատնող կամավորական, տմա՞րդ հղիպացած և մեծահանձա՞ր, որ վրիպո՞ւմ է բազում բաներում: Մեկ խոսքից երկու իրար հակադիր ընթացք որոշող, բանսարկություն էր ամեն տեղ գցում, և իր հետևից ողբեր ու ձաղկանք, մե՛ծ պարսավանքներ, փո՛քր գովեստներ, և հավելում էր իր ինքնագրավ քայլը կորստյան, և երգիծանքով խառնում ինքն իրեն այս աշխարհի հետ. բայց նրա խոսքը թելադրված է՝ ի բարգավաճում ամեն հասակի, այնինչ իր գործած խոտորումներով՝ բոլոր շուրթերից բարձրացնում է թախծալի՞ թառանձ՞ ողորմելի՞ իր ձայն ազդումներով:

#### Գ

Ջարմանում եմ ես նաև վհատվում և ապշում, ապա և տարակուսում, որովհետև որ, երբ Սողոմոնը այդքան շատ գայթեց, հապա ի՞նչ պիտի պատահի ինձ հետ. ինչպե՞ս վար ընկավ մեկը, որ այդքան վեր էր բարձրացել, արդեն հաստատվածն՝ ինչպե՞ս սասանվեց, ինչպե՞ս կործանվեց կառույցն այդչափ մեծ, ճանաչվածն ինչպե՞ս այդքան օտարվեց, ինչպե՞ս ետ կանգնեց զավակն ընտրության, մերձավորն ինչպե՞ս հեռացավ այդքան, փայլ արձակողը ինչպե՞ս աղոտեց, ազատվածն ինչպե՞ս դարձավ մի գերի, ուսուցիչն ինչպե՞ս անօրինացավ, հռչակավորը ինչպե՞ս նվաղեց, և փառավորը անարգվեց այդքան, այդքա՞ն փոքրացավ մարդը մեծատուն, բարեպաշտն ինչպե՞ս դարձավ ամբարիշտ, ընտրողը ինչպե՞ս անբարեհաճեց, լիալեցունը ինչպե՞ս դատարկվեց և ունայնացավ, և ուխտն իր խզեց Բարձրյալի հետ: Ամոթով ասեմ, որ անգամ կապվեց սանդարամետին. բայց կուռքերի հետ նա ի՞նչ գործ ունեւր, կամ որտեղի՞ց էր նրա այդ սերը նրանց պատկերին, կամ հանուն ինչի՞ խտրականների կամքի հետ քայլեց: Ինչո՞ւ չհիշեց հանդիմանութ-

յունը Սամվելի կողմից ուղղված Սավուղին. «Հմայանքները մեղքեր են, որոնք բերում են միայն ցավ ու դառնություն»: Ինչո՞ւ հայրենի հանդիմանանքին ուչք չդարձրեց. «Հեթանոսների կուռքերն,- ասում է,- դեւեր են անշունչ, և նրանց նման էլ պիտի լինեն պաշտոնայք նրանց»: Մովսեսն ինքն էլ է նախօրոք գրել սաստիկ ձաղկանքի ամբաստանությամբ. «Նրանց մեջ չկար, օտար աստված մի, որոնց հայրերը չճանաչեին»:

#### Դ

Ո՞ւր մնաց սակայն մահեր մատուցող այլացեղ արձանը Փագովրի, ո՞ւր է Սիդոնի կուսպաշտների չափազանց տգեղ ու անպանծալի իրական կուռքի ամենանոց՞ով, աղտո՞տ ձուլածոն, ո՞ւր է կանացի արարքի համար խիստ անգրելին՝ խայտառակությունը զազիր տեսակի, որով ամոթի՞ մարգարեները առանց խտրության ու անասունեն նվիրվում էին այլանդակելուն՝ հանուն անժուժկալ դեի չարության անաստվածորեն, մոլագարությամբ պաշտամունքելով: Որն էլ էությունը բարեբաստության քչեց ու տարավ և որսաց նախնյաց՝ իրենց չար անկմամբ կորստյան տալով, և մեծությունը, ցավոք, այդպես իսկ հաղթանակ տարավ՝ առապելության դեմ մեծն իմաստության, և գոռոզությունը՝ գերելարեց, և փափկությունը հիմարացրեց հիմնավորապես, և ծառա կոչված արծաթը նրան դարձրեց իր ծառա՞ն, հին կործանողն իր գեներ՞ով հարվածեց այս տոնելի ու իմաստուն մարդուն և նրա հոգին գցեց դատի մեջ, նրան դուրս հանեց իր Աստծո գրկից և վար գլուրեց հին ստամբակի ոտքերի առաջ, և մեղկությունը մեռցրե՞ց նրան, իսկ ծուլությունը գցե՞ց թմբրի մեջ, և արբեցրեց շվայտությունը իր ստորությամբ: Ո՞վ դյուրապատրանք մարմին երկրածին, ի՞նչ ձայնարկությամբ քեզ ավաղ ասեմ, քանզի ոչ միայն Սողոմոնին են վերաբերվում իմ խոսքերն ընդդիմող, այլ բոլոր նրանց, որ սխալներ են գործում ինքնակա՞մ և կամ ինքնակա՞մ քայլում շեղ ճամփով, սակայն մեծ մարդու այս օրինակով առավել և՛ս է մեզ իմանալին. անիրավացի՞ բան է պարծենալ՝ մարմնականի իմաստությունով, եթե ոչ միայն Աստծո դատելով ընտրվելն է, որ հաստատ է արդար: Եվ այս պայմանով, եթե մեկն անգամ հիմար էլ լինի և Ստեղծողին ի՞ր կամքով հուսա, ապա չի՞ տեսնի այն չարիքները, որոնք Սողոմոնն իր վրա կրեց:

Սակայն քանի որ Սողոմոնն ուներ իր դարձի մասին հիշատակարան, և քստմենլի ինչ որ արել էր, սաստիկ չարիքներ, գրի էր առել ինքնապարսավող կշտամբանքներով, իբրև թե արդեն աշխարհի համար անձնասիրութեամբ իսկապես մեռած մեկը խոսելով, բաներ, որոնք որ, ինչպես որ ինքն է դիտել-նկատել՝ ունայնութեամբ են լոկ իմանալի, այլև մատյանում քահանաների և Միրոնացի Աքիայի գրքում, որտեղ որ նա իր ընթացքն է երգում արտասուքների ջանադրութեամբ. «Ձո՛ւր են ջանքերը, վաստակն անօգուտ, անմիտ հետևում, անչա՛հ արչականք, անկայուն երկունք, օտա՛ր իմաստներ, սի՛ն հորովումներ, բամբասելի՛ բերք, անհարմա՛ր վարկած, անտո՛խ սերմում, ավագե՛ շինվածք՝ արդեն փուլ եկած, և ստացվածքներ պակասանացո՛ւ, քամահրելի-թո՛ւնդ տաժանմունքներ, ինքնամա՛րտ կռիվ, դա՛ս իր ոգու դեմ, ընդունայնորեն հավաքված քրտինք, վնասո՛ղ փափագ, կորստյա՛ն շափղ, վրիպա՛ծ ճամփա, և կրթութուններ կործանո՛ւմ բերող, կամ վարժութուններ մոլորապատի՛ր, պճրություն, սակայն՝ աչքի՛ արատով և տեսություն, որ՝ ամենայն օր է սխալ ու չեղված, պոռնկակերտ ու տհա՛ճ կերպարանք, ախտաբորբո՛ք նյութ, դժնատեխի՛լ գույն, դեղ հոգնատխո՛ւր, թանձրամրո՛ւր ծուխ, շոգի՛ ցնդելի, ավարի վաճա՛ռք, տաղավար՝ վաղո՛ւց քանդման ենթակա, աղաղակ, սակայն՝ դեպի՛ վա՛ր ուղղված, ծաղրանք, որ չունի հիմո՛ւնք ու պատճառ, քամահրելի՛ տեղ, անձնավաճա՛ռ գիր, սատակչական էլք, անաստվա՛ծ խորհում, ստահո՛ղ ճառեր, գայրացնո՛ղ գրույց, անմիտ խժեժանք, խելագարութեայն՝ առաջարկ-խնդիր, ամոթի՛ ցույցեր, խայտառակութեայն՝ հայտնի երևում, գալիքի՛ առակ, ապաշխարանքով դատի ենթակա՝ մեղսապատ գործեր, ըմբոստ մեղքերի մասին պատմությո՛ւն, հեղգացածների տհա՛ճ օրինակ, ծածո՛ւկ խորխորատ, խավարայի՛ն որս, մահագուշակ՝ վիհ, անհատակ անդունդ, և ուղեկցությո՛ւն սպանողների, կամ հիմարութեայն բարբառանքների շարադրումներ, դարանակա՛լ վայր, կամ տուն խարխվա՛ծ, սասանվա՛ծ շինվածք, կամուրջ խախտեցվա՛ծ, երևույթ, որից հարկ է չո՛ւտ փախչել, խաբո՛ղ շողորթ, անտարբեր մատնիչ, և այս ամենը՝ ընդդեմ Բարձրալիս հակառակութեայն»։ Եվ այս ամենը խոստովանութեայն խոսքի մասերով, որպես կանոնիկ գգուշացումներ՝ ամեն-ամենքիս սրտերի համար նախա-

սերմանեց ժողովողն ինքը՝ Սողոմոնը նույն, կանոնադիրը գղջմամբ ետ դարձի, որ չպարծենա՛ մարդկանցից ոչ ոք՝ բամբասանքների նետերով զինված՝ անձն իր ընկերոջ հույժ խոցոտելով, քանի որ նա, ով՛ կուսպաշտութեայն քողով է ծածկված, և կերպ-ձևն ունի աստվածապաշտի, նա, ինչն ախորժ է իր Ստեղծիչին՝ չի՛ էլ կատարում։

9

Եվ արդ, նա, ով որ ո՛չ այնքան չափով մեղքի մեջ ընկավ, որքան որ գղջաց, չլինի՛ իսպառ պախարակութեամբ անունն իր հիշվի, այլ որ՝ ա՛յր էր նա բարի ծագումով, և հիշվեց իբրև հուսադրութեայն ա՛յն հիմնադրամբ, որով Տէրունի ոտքերի առաջ խոստովանություն խոսելով դիմեց, այնժամ էլ Տէրն Իր Հոգով իջավ վար, այցելե՛ց նրան և աստվածութեայնն այլևս անբաժան նա կենսագործեց խոստովանությունն, այնպիսիները, որ մեռյալներին՝ արդեն կենդանի ապրողների հետ, առանց որևէ տարակուսանքի ու երկմտութեայն տվին ավետիս։ Ընդ որում նրա մեղքերին ի՛նքս էլ մասնակից եղա, բայց իմաստութեայն չափ ու կշիռն՝ չկարողացա՛ երբևէ հասնել, նրան մեղսակցած, ես պաղատում եմ Մեծ Բարերարիդ, լցրո՛ւ համեստ բանախոսութեայն գրությունս այս՝ ա՛յդ երջանիկի հանճարեղութեամբ։ Թող որ իմ աղոթք հայեցվածքները բարգավաճեն նո՛ւյն հարգանքի տուրքով՝ աղերսների հետ նո՛ւյն գերաշխարհիկ արքայի դարձի, թող խնդրանքներն էլ իմ միաբանվեն վեհ արքայորդու աղերսանքներին, որին որ ի՛նքդ ընտրեցիր, Աստվա՛ծ, որ արյունակիցն է Միածին Որդուդ։ Եվ մենք էլ արյան Քո կցորդութեայն Փառակցիդ ենք տեսնում նրա մեջ. Փրկությունդ տուր և ա՛յդ ծառայիդ, Ամենահնա՛նր, Ջորե՛ղ, Ահավո՛ր, բազմապատկելով նրան փրկելո՛ւ առավելութեամբ՝ Փառքն Ստեղծողիդ, անքավելի այդ մեղքերի ջնջմա՛մբ։ Բարի խորհրդիդ հիշատակումով՝ նրան էլ փրկիր՝ նրանց հետ, ովքեր՝ Քո ողորմութեայն Ձեռքին են նայում, որովհետև որ՝ ողորմելի՛ ենք Տէր Աստուղ առաջ, իսկ Սողոմոնը իր անմահահամ, ախորժաճաչակ և բազմապաճույճ առակի գրով՝ Աստվածությո՛ւնդ է քարոզել-խոսել՝ Քո յուսազարգված Մատյան-Կտակում, որ եկեղեցո՛ւն Քեզնով ընծայվեց ինձ հետ բարութեամբ վարվելու համար, որ ես էլ նրա նման խոնարհմամբ խոստովանութեամբ Քեզ դիմեմ, Սո՛ւրբ Հայր։ Որ հեռո՛ւ չենք մենք ողորմությունից՝ մինչ այդ եղածն է

Հուշում իմանալ. թե անհուսովյան կաթված չդիպչեր մեծ Սողոմոնի եռանդուն արտի մաքուր իղձերին, նա չէ՛ր շտապի այդ իր ընթացքին փոքր ինչ զղձումով կասեցում բերել:

Ե

Արդ, հիշելով այն բարի բաները սո՛ւրբ, անճառելի՛, որ կա՛ն Քո մասին, Քո իսկ Գթուկթյամբ պիտի ողջունեն՝ այն ամենը որ՝ կոճկվածփա՛կ են բազում դարերում՝ բամբասանքների քարածգուկթյան տակ գտնվելով, վերարժանացրո՛ւ այժմ երանուկթյամբ, որովհետև որ՝ նա իր հոգնահոս արտասուքների խոստովան ելքով՝ իր ապարանքի հատակն հեղեղեց՝ սաստկակսկի՛ծ դարձով ինքնադատ, զզվելո՛վ մեղքից, և ողորմելի ոգու հեծուկթյամբ՝ հոր իսկ կրքերի հեծեծանքի՛ն էլ գերազանցեց նա: Դու արտասպեցի՛ր Բանի աչքերով, Դո՛ւ, որ մեզ համար՝ ախտակիրներիս, առաքելուկթյամբ վա՛ր իջար երկիր, երկայնամիտ Քո ներողությունը միացնելով մեզ, որ խառնեն՝ մեզ հետ գթարտուկթյամբ՝ բարեբանուկթյունն այն սաղմոս երգի, որ վերագրված է Սողոմոնին, որտեղ խոսում է հակից Որդուդ փառքերի մասին, որովհետև որ՝ Որդուդ քաղցրուկթյամբ ապրեցնո՛ւմ են մեզ և բոլոր աղքատ ժողովուրդներին: Պոետիկուսը՝ մի բարեշնորհ՝ ինքն իսկ իր անձը արգահատելով, գուգաձայնելով մեծ Սողոմոնին, վարվելով նրան իբրև ողջի հետ՝ նրա՛ համար էր աղերս ուղղում Քեզ, ընկերուկթյունն այդ համարելով նա վա՛րձն իր լիարժեք, որ հաջորդ խոսքում է պարզաբանվում: Քանզի նա գրեց բազմահարչ և մարգարեաճառ պատմագրուկթյուն՝ Օստացի Հոբի նվիրման մասին, ուր Աստվածուկթյունն է արդարացնում վարմունքը Հոբի և Սողոմոնին կարգում երկնային ողորմուկթյանը մեծարժան մարդկանց, որովհետև որ՝ առավել լա՛վ է այդ մարդու համար աղոթքներ կարգալ, քան նրա մասին չարաբանելով խոսել և կամ էլ՝ նրան ատել:

Ը

Եվ այդ նույն բանը ինքս էլ եմ մաղթում՝ մեծ վստահուկթյամբ իմ այս հեծուկթյան, նրանց հետ մեկտեղ ընծայուն ձայնով նույնը գոչելով. որովհետև որ, թե մեզ կորցնեն, ըստ մեր գործերի դատապարտուկթյան՝ փառքը ոչնչով չի՛ պակասելու, քանի որ, Աստվա՛ծ, յուրաքանչյուրին՝ ճշմարտուկթյամբք են դիտում-ճանաչում, իսկ թե մեզ գտնեն՝ այդքան ավելի՛ պիտի բարձրանաս,

և դա՛ է վայել մեծուկթյանդ անհուն, քանի որ հավե՛տ օրհնաբանվում են այս իսկ երկրորդով՝ Ողորմածուկթյամբ, քան օրենքներիդ նախահրաման սաստկուկթյան պատժո՛վ: Դարձի՛ր, Տէ՛ր, դարձի՛ր, Քո Քաղցրուկթյամբ գթուկթյան խնամք իրագործելու՝ ամենաառատ և ճրիորեն սիրո անհատնում Քո պարգևներով մխիթարելու՛, մեզ՝ տրտմածներիս արդեն հավիտյա՛ն, որ համաչափիդ տաղնապի տապով տոչորման մեջ ենք ու բժշկուկթյան չունեն՝ք մի հնար, Փրկուկթյան Ձեռքդ պահի՛ր մեր վրա և նորոգի՛ր մեզ նորի՛ց, վերստի՛ն՝ այս մեղսակործան խորտակման միջից հաննել-քավելով, խորտակումներից պատսպարելո՛վ: Եվ Քե՛զ միմիայն, որ Սկի՛զեն են ողջ և Անսկիզբը ողջ սկիզբների, Սուրբ Երրորդուկթյանդ մե՛կ Աստվածուկթյամբ՝ Սկզբնավորի՛դ, Փա՛ռք, Իշխանուկթյուն հավիտյա՛նս: Ամէ՛ն:



Հեծեծանքների մի նոր հավելված նույն իսկ հակողից, նույն աղերսներով և մաղթանքների խոսքով միջնորդված

ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ՌԻՂՂՎԱԾ ԱՍՏԾՈՒՆ ԲԱՆ ԽԹ

Ա

Եվ արդ, էլ մի՛ թող՝ անօրինուկթյունները ելնեն ու տիրեն վե՛րն արքայուկթյան և կայսերական իմ այս պատկերին, Աստվա՛ծ, որ Լո՛ւյսն են մեր ամենայնի, այլևս մի՛ թող, որ Հոգուդ փշմամբ գարզը շնորհիդ կրկին կողոպտի գոռո՛զն ապստամբ՝ ստեղծածներիդ մոլորեցնելով, մի՛ թող, որ Քեզնով մեզքը խափանված մահկանացու իմ մարմնի՛ն իշխի՛ գրավելով ու թագավորելով: Ինձ համար չկա՛ այլ մի թագավոր և Տէ՛ր իմ շնչին, բացի Քեզանից՝ Հիսո՛ւս Քրիստոս, Դո՛ւ, որ առանց մի բռնադատուկթյան հնազանդեցնում, խոնարհեցնո՛ւմ են քաղցրուկթյանդ լծին, որ ամենակալ Խոսքիդ միջոցով կարողուկթյունն են հանում մեղքերիս, որ Արյա՛մբըդ մեզ արդյունք ստացար և Մարմնո՛վըդ մեզ կերակրեցիր, և կարգ կանոնով մեզ սահմանեցիր՝ Կյանք տանող Ո՛ւխտը հավե՛տ անփոփոխ, և Հոգո՛վըդ մեզ կնիք դնելով՝ կցո՛րդ դարձիր Քեզ՝ մեզ մատուցելով Քո Հորը, որպես ժառանգակիցներ: Հանուն Ձեռմանըդ, հիշատակներո՛վ Ձարչարանքներիդ՝ համարձակուկթյուն տվեցիր մեզ

էլ՝ աղոթքնե՛ր ուղղել մեր Բարերարին, ամեն ամենքի՛ Ստեղծչին և Կյանքի՛ աղբյուրին: Դո՛ւ ես Աստվածը ողջ հոգիների, որ մեծացրիք անթիվ գործերի հրաշքները Քո՝ Զոհագործվելուդ նաև ա՛յս սուրբով, մեր վրա իջած շնորհումների Քո Այցելութամբ: Եվ ո՛չ երկինքն իր զարդարանքներով, ո՛չ հրեշտակներն իրենց շողջողուն պայծառության մեջ, և ո՛չ երկիրն ու մարդկությունը ողջ, և նրանց համար Քո զարմանալի գործերը բոլոր, ո՛չ սահմանները ծովի լայնություն և այն ամենը, որ ծովի մեջ կան, ո՛չ անդունդները իրենց փականքով և ո՛չ էլ նրանց խորությունները, որ մեր հայացքին թվում են անբավ տարողություններ: Սրանց հորինմամբ այսքան վեհորեն Դու չբարձրացար, որչափ իմ հանդեպ Քո կարեկցությամբ, ինչպես այդ մասին սուրբ մարգարեն է իր խոսքում ասում՝ պատկերելով մեզ քաղցրությունդ հուշի բարությունն անբավ. «Մ՛ի է Աստված մեր, եթե ոչ կարո՛ղ թողնել մեղքերն իմ ամեն ժամանակ, և անօրենություններն իմ բոլորը ջնջե՛լ»: Ահա ինչկայ են բոլոր խոսքերդ, ողորմա՛ծ Աստված, բարերարություններդ՝ խոստովանվա՛ծ, փառավորյա՛լ են խորքերը բոլոր Քո խորհուրդների, և շնորհներիդ գեղմունքներն օրհնվա՛ծ ու երկրպագվա՛ծ:

Բ

Արդարև, և ո՛չ մեկն էակներից չի՛ կարողանա նյութեղեն լեզվի խոսքով թարգմանել անգամ մասնիկը այն գթություն, որ՝ ցուցաբերեցիր իմ հանդեպ, Աստվա՛ծ, որովհետև որ՝ ավելի մեծ է գորությունը այն, որ հնացածն է կրկին նորոգում՝ ըստ առաջնային իր պայծառության, քան ստեղծելը անգոյությունից: Որովհետև որ՝ Դու տկարություն երբեք չունես, և Զորությունն ես ինքդ ամենայնի, և Քո մեկ խոսքից միայն ազդված՝ բոլոր գործերը են լրություն հասնում, արդ, այցելի՛ր ինձ փառավորությամբ, բարի՛ գործով Քո ու կրկին՝ անգամ վերածնիր ինձ, որ անհուսալի արդեն չմնամ իմ փրկության մեջ, և իրավունքո՛վ Քո դրած ուխտի՛ թող որ բարձրանա ինձ ստո՛ւմդ հաստատուն, կա՛մքդ ամենագործ օրհնաբանելի ավետյաց ձայնով, որ մեզ քավելու մասին շնորհ է մեզ ճանաչեցնում՝ Ողորմությա՛նդ լույսով ուղեբձված, քան ճանապարհն էր նախաստեղծման: Որովհետև որ առաջին դեպքում՝ Դու ճանաչվում ես միայն Արարիչ, իսկ երկրորդ դեպքում՝ առաջնով կոչմամբ՝ Երախտավոր ես նաև մեզ համար՝ ո՛չ լուկ Ստեղծող,

այլ նաև՝ Քավի՛չ, ո՛չ լուկ Նորոգող, նաև՝ Բարերար՝, ո՛չ լուկ Հաստատող, նաև՝ Ողորմա՛ծ, ո՛չ լուկ Կամեցող, նաև՝ Հնարնե՛ր հար գործադրող, Հորինո՛ղ և՛ Հե՛զ, Նկարագրո՛ղ և՛ Ամենագո՛ր, Առաջնո՛րդ և՛ Լո՛ւյս, Խնամարկման հետ մեզ նաև՝ Հովի՛վ, Դարմանելու հետ նաև՝ Հոգացո՛ղ, Ողջ պահելու հետ նաև մեզ Բժի՛շկ, Պաշտպան լինելով նաև՝ Զորավա՛ր, Անպարտության հետ նաև՝ Թագավո՛ր, Արարչության հետ նաև՝ Քաղցրարար՝, Պարզև տալու հետ և՛ Առատաբո՛ւհ, Համբերության հետ նաև՝ սուրբ Ներո՛ղ, Չբարկանալով և՛ Անոխակա՛լ, կարիքավորին վշտակցելու հետ նաև՝ Ծածկագե՛տ, անձանձրանալի գթությամբ մեկտեղ՝ նաև Ապավե՛ն, և Քո գերունակ գործվության հետ, նաև՝ Սո՛ւրբ Աստված, անսպառելի Բարությունդ հետ՝ օրհնությունն ես Դու ամենքի համար:

Գ

Արդ, Ստեղծեցի՛ր, մինչ ես չկայի, և ճանաչվեցիր Ինքդ ինձ գոյացնո՛ղ, և այժմ իմ հոգին աղոթո՛ւմ է Քեզ՝ տաղավարի մեջ իմ մարմնակերտ. հարգարի՛ր այնտեղ՝ կրկի՛ն, վերստի՛ն՝ անարատությունն, ինչպես որ կայի իմ լինելության նախնական ժամին, որովհետև որ՝ այժմ առավե՛լ է բազմապատկվում, առավե՛լ աճում՝ ու առավե՛լ է հաճախ կայանում տվչությունը Քո, սքանչելիքներդ՝ անսահմանելի, որ ներկայում են անձա նորոգում: Եվ շնորհներդ առավե՛լ առատ ինձ պարզեցիր, քան նրանց, ովքեր հին սովերներով եղան անցավոր: Մեղքերիս ճյուղը ճառելու պահին, որքան հնար է, մտքիս թևերով՝ անարտահայտելի բաները անգամ հիշատակելով, և լսելով ինձ՝ արդարացրի՛ր Քո Օրհնյա՛լ Անվամբ: Եվ այն ժամանակ, երբ Քեզ եմ պատմում բծերն իմ անձի, խոստովանողիս ամբարշտության բազում-բազմազան մեղքերն ես թողնում, Հզո՛ր, Ծածկատե՛ս, Ամենափրկի՛չ, որ չլինի թե՛ նախկինի նման ես կարոտ մնամ ավետվածներին, որ ծայրագո՛ւյն են կատարելությամբ, այլ որ ընդունեն սաղմոսի խոսքով ա՛յն երանելին, թե՛ շնորհքներո՛վ պիտի փրկվեմ՝ իմ մկրտությունս: Եվ ինձ՝ մեղքերի փշերով ահա՛ խոցոտված հոգուս այժմ ու վերստի՛ն Ձե՛ռքդ երկարելով, ծանր պարտքերիս բեռներն առնելդ առավելապես ավելի՛ն է, քան՝ քաղցրությունն՝ Քո պարգևների: Եվ ազատի՛ր ինձ հա՛ր օրհնաբանված Սրբությունդ Հոգով, աղաչո՛ւմ եմ Քեզ, Տէ՛ր ամենայնի, փրկի՛ր օրենքից՝ մեղքի ու



մահվան: Ձիւնի՛ Հանկարծ իմ տկարութեամբ ես ընկնեմ դրանց սահմանների մեջ, որտեղ ծագում է ճշմարտութիւնը որպէս գրված Գիրք, որովհետեւ որ, ուր քաղութիւնն է Քո թաղապետութեամբ, այնտեղից արդէն մեղքն է վտարված: Կենդանի խոսքիդ քաջալերանքում հուսահատութեան նշո՛ւլլ իսկ չկա և չնորհնաբերի վերին այցելմամբ՝ պարտքերս հալածվում, փախչում են հեռո՛ւ, և Քո մերձավոր գորավոր Ձեռքին, Տէր, չկա՛ մի բան, որ անհնարին լինի երբեք, այլ՝ Լո՛ւյս է միայն, և Ձորութիւնն է բովանդակապես, և անպարտելի կարողութիւննն՛ր: Եվ Քեզանից է փրկութիւնը մեր, և՛ կենդանութիւն, և՛ նորոգութիւն, և՛ ողորմութիւն, որ քաղցրութեամբ է ամբողջովին լի, Քոնն է, ո՛վ Աստված՝ արքայութիւնը անմահ իր կյանքով, անեղծութիւնն ու փա՛ռքն հավիտյանննր: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐՈՒՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍԾՈՒՆ  
ԲԱՆ Ծ**

**Ա**

Այլ ինչպէս չկա առանց Քրիստոս մեր հոգիների համար փրկութիւն, և ոչ էլ առանց աչքերի տեսման լույսն է երևում իր զվարճութեամբ, և կամ թե առանց արևի ծագման՝ քաղցրութեան լույս չի՛ լինում երբեք, նույնկերպ էլ, առանց խոստովանութեան ծածկույթի ներքո անձի ճշգրտման՝ երբեք չի՛ լինի նաև քաղութիւն: Որովհետեւ որ, քո մաքրութիւնից ի՛նչ օգուտ է քեզ, երբ պիտի դատվես փարիսեցու հետ, կամ իմ պարտքերից ի՛նչ վնաս ինձ կա, թե պիտի գովվեմ մաքսավորներին համ ու հավասար, կամ ինչո՞ւ պիտի պարսավիլի ինքը՝ Հովել մարգարեն՝ եռակրկնելով երկրութիւնն անձի, և կամ կարո՞ղ է սուրբ մարդը դատվել՝ Տիրոջ մեծ օրվա հիշատակն այստեղ տոնելու համար, և կամ Եսայիս իր շրթունքներով անմաքո՞ւր դիտվի, երբ հեռու էր նա Իսրայելի տան աղտոտ գործերից, և կամ թե Աստված ինչո՞ւ պարտավոր իրեն համարեց աղամյան մարմնում իջնել-բնակվել ի՛նձ կարեկցելով, Հորն աղոթելով հանցավորի՛ պես, կամ ինչպէ՛ս մեկնել խոսքն այն առակի, թե

Իմաստունի սիրտը սգատան մեջ է գտնվում, բայց անմիտ մարդու սիրտն ուրախութեան տոներում է միշտ: Նա, ով Ադամի գործած սխալը չի՛ վերագրում իր անձի վրա, և չի՛ համարում ամենքի մեղքը իր մեղքը նաև, ինչպէս երջանիկ արքաները, որ՝ մեղավոր էին համարում իրենց՝ հայրերի գործած մեղքերի դիմաց, բայց և դրանով մարդը կարող է իսպառ կորցնել՝ արդարութիւնն իր, որպէս բնութեամբ անախտակի՞ր է ինքն աշխարհ եկել, և սիրտը նրա չի էլ բերկրում, երեսները չեն փայլվում ուրախ զվարթութիւնից՝ երջանիկ հուշի ավետիաներով, որ ասվել է մեզ. «էլ ո՞վ, եթե ոչ՝ Քրիստոս Տիրոջ առաքելութեամբ ուսանած մարդն է, որ պիտի տրտմի՛ ըստ Աստծո կամբքի»:

**Բ**

Արդ, ըզձալի է այստեղ ինձ հիշել խրատը այն հին՝ որ նկատելով հոգով հանճարեղ ու հպետ նորոգ, Տէրը երկրորդեց. «Ամբարիշտների ժողովների մեջ, երբ լինեք ներկա, ո՛չ թե հպարտի նման շտապեք՝ գնալ ու նստել առաջին բարձին», որից Դավիթն ու Երեմիան իրենք հրաժարվեցին և ուխտ ու կանոն դրեցին նման գայթերի հանդեպ. «այլ դուք նստեցեք նրա՛նց չարքերում, ովքեր ի սրտե արդեն զղջացել, ամոթահար են մեղքերի համար», ահով և դողով մեծ դատաստանին հատուցում տալու միտքն էր նրանց մեջ. և ա՛յս իսկ երկրում ու իրե՛նց կամքով խոնարհներ դարձան, հետինների հետ իրենց անձերը հավասարելով, ուստի Բարձրյալ Աստված նրանց այդ խոնարհումները սիրով պարուրված՝ դարձրեց բերկրանք, որով և նրանք նախադաս եղան բազմականների մեջ՝ երանութեամբ, և որով մե՛նք էլ համարձակվեցինք՝ թե՛ ես, թե՛ նրանք, որ հետեցինք նո՛ւյն այդ խրատին, և ազատվեցինք մարգարեի այն խոսքերի դատից, որ ակնարկում է վեսերից ոմանց. «Ինձ մի՛ մոտեցիր, մաքուր եմ ահա, և ո՞վ կարող է նայել տեսնել ինձ»: Իսկ ես ինձ նպաստ վերցրի մեծ ու երջանիկ Դավթի անկշռելի խոնարհութիւնից, նրա հետ մեկտեղ ասելու համար. «Համարվեցի ես իբրև անասուն՝ իսպա՛ռ գրկված զգայութիւնից, և շուրջանակի՛ չարիքն հասան ինձ, վերքե՛րս են նեխել, փտո՛ւմ են արդեն՝ և անզգամիս անձա՛ր լինեցն է պարզ տեսանելի»: Եվ ընտրյալներից ոմանք՝ գերիներ Ասորեստանում, կամավորապես մեղապարտութեամբ կշտամբում էին՝ իրենց անարա՛տ անձերը անգամ. նրանց մեջ էր

և Եզր քահանան՝ հռչակավոր մարդ, և նրա խոսքին միացած ինքս էլ նույնն եմ բարբառում. «Անարածան եմ ես գտնում ինձ, Աստված, բարձրացնել իմ երեսը վերև, նայել դեպի Քեզ»:

Գ

Արդ, ես ճշգրիտ պատկերն եմ ահա ամենայն երկրի, իմ ունեցածն էլ այլոց պարտքերի բեռներին խառնած, նրանց ունեցած դառնութիւններն էլ վրաս վերցնելով և կրկնաբանած առավելութեամբ, նրանց հետ մեկտեղ հեծեծում եմ, Տէ՛ր, թեպետ օգտակար ո՛չ մի բան չկա գարշտեան գունդին նույնն ավելացնել ու տգեղութիւն ստանալ դարձյալ: Արդ, ահա՛ մեղա՛, որովհետև այս իմ անմտութեամբ ո՛չ թե գործեցի ինչ հաճո է Քեզ, այլ սխալվեցի՛ բազում անգամներ՝ հանցավորութեամբ: Նայի՛ր ինձ, Գթած, ինչպես երբեմն ուրացութեան մեջ ընկած Պետրոսին, որովհետև որ՝ հո՛ւյժ ունայնացա: Լուսավորի՛ր ինձ Քո ողորմութեան ճառագայթներով՝ Դու որ Դարմանն ու Բարեբարումն ես ամեն-ամենքի, որովհետև, երբ՝ Քո օրհնութիւնը իմ վրա իջնի՛ կարգարացնես՝ ինձ, այդժամ կապրե՛մ ես սրբութեան կյանքով, մաքո՛ւր կլինեմ ու արդեն՝ ազա՛տ նրանցից, որոնց Դո՛ւ չստեղծեցիր, և ուրոք ահա լլկողնե՛րն են ինձ: Իսկ այժմ, Տէ՛ր իմ, համարձակութիւն չե՛մ գտնում իմ մեջ՝ մեղապարտ ձեռքերս բարձրացնել Քեզ, մինչ չհպես ինձ օրհնյալ Ա՛յը Քո՛ ի նորոգութիւն դատապարտյալիս: Քո մեծ հեզութեամբ՝ կրկնակի՛ հաղթի՛ր համառութեանս՝ մարդասիրտին ինձ ժամանելով, կրկնակի՛ հաղթի՛ր առաջին գործած չարիքները իմ ամենահնար՝ Քո կարողութեամբ, և չարիքները միջին ընթացքիս, և վերջինները իմ չարիքների՝ այդ բոլորին էլ թողութիւններ տուր, անհասանելի խնդրանքներին էլ հնարով հասնող, Քրիստո՛ս Աստված, Տէ՛ր և Թագավո՛ր, Լո՛ւյսն արդարների:

Դ

Արժանի էլ չեմ Անունդ կանչել, Օրհնյա՛լ մարդասեր, որովհետև որ՝ մահվան հարվածներ ստացած մարդ եմ Բարեգործիդ մոտ՝ վնասակար իմ մեղագործութեամբ. վնասակարս՝ Կնիքի՛ հանդեպ, Շնորհի՛ հանդեպ և Հոգուդ փշմա՛ն, Պարգևի՛ հանդեպ, Ավանդի՛ հանդեպ, հանդեպ Ձիրերի՛, Քո Անվա՛ն հանդեպ, որդեգրութեան և արքայական պատվականութեան, պատկերի՛ հանդեպ, դրոշմի՛ հանդեպ և հանդեպ օծմա՛ն,

ճոխութեան հանդեպ, համարձակութեան և ընտանութեան, և Կյանքի՛ հանդեպ, և Լույսի՛ հանդեպ և Երանութեան, և Հույսի՛ հանդեպ, Փառքերի՛ հանդեպ, վեհ բարձրութեան, պսակի՛ հանդեպ և խոստումներով հագնվածութեան, որ Տէ՛ր Քրիստոս, Քեզանով բազմացն ավետարանվեց՝ ինձ՝ համառ իժի՛ս, ինձ՝ նաև քարբի՛ս, ունկերը՝ խցա՛ծ, լսելիքը՝ փա՛կ, ձայնըդ չըլտող իմ ականջներին: Եվ բարութիւնդ, որքան որ ավել առավելացավ, այնքան ավելի բազմաթիվ դարձան և հաճախակի չարիքները իմ, և կործանեցին ինձ իսպառ նրանք, կյանքից մերժելով՝ կապեցին մահվան հավերժ կորստին՝ դարձնելով ծառա՛ ապականութեան:

Ե

Եվ արդ, Բարեբար՛, Իրավակչիւ և Ճշմարտադատ, Օրհնյա՛լք իմ հանդեպ Գթասրտութեան հարատևութեամբ, մեղա՛ Քեզ, մեղա՛, որովհետև ե՛ս անօրինացա ու ընկա ներքև՝ անիրավութեան նենգ ցանցերի մեջ, այդ իսկ պատճառով՝ եղծմա՛ն տրվեցի, գործեցի հանցա՛նք, ամբարշտացա՛, Քեզ չսպեցի՛, որ խոստովանեմ և երկրպագեմ գովյալ Քո Բանին: Երբ անճառելի սիրովդդ՝ հենց ի՛նձ էլ երևացիր, Որի մասին որ գրելն իսկ՝ մեծ է, Նշան դնելը՝ ինձ սարսափելի՛, Քեզ արդարութիւն և փա՛ռք հավիտյան, գովաբանութիւն մշտնջենավոր, և ինձ՝ Քեզանից միշտ պատկառածիս, Խնամակալ՛ իմ, որ Քավութիւնն ու Ողորմութիւնն ես, որպեսզի ապրեմ, Բժշկարան իմ, որ Օգնութիւնն ու Պահպանութիւնն ես սրտիս և ոգո՛ւս, Բարեբանութիւնն ամեն լիութեան, հավիտյա՛նս: Ամէ՛ն:



Հեծեծանքների մի նոր հավելված նույն իսկ հսկողից, նույն աղերսներով և մաղթանքների խոսքով միջնորդված

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻԾ ԽՈՍԿՐ ՌԻՂՂՎԱԾ ԱՍՏՄՈՒՆ ԲԱՆ ԾԱ**

Ա

Արդ, աղաղատեցի՛ երկրածի՞ն մեկին, ամենայն տեսակ պատրանքով լցված ա՛յրս մահացու, թե՞ ընդունայն եմ աղաղակ հանել: Ես՝ մահկանացու բանական մեկի՞ն միթե խնդրեցի, ում հույս դնելը՝ փրկութեան համար ու վստա-

Հուլիսյան, բնականաբար, սո՛ւտ պիտի դուրս գար: Եղծական մարդո՞ւ միթե կանչեցի, երբ նա տկար է կենդանի խոսքում, իսկ իր գորուծյամբ նանի՛ր է միայն, կամ իշխանների՞ն, որ երկրավոր գահեր են տիրում, և անցավո՛ր են իրենց բարուծյամբ, եղբո՞րս Հարազատ, երբ նա նախ ինքն է կարոտ իր անձին՝ կամեցողություն և անդորրություն փնտրել-գտնելու, Հո՞րն իմ երկրավոր, երբ իր օրերի նվազեցման հետ խնամքներն էլ են նրա պակասում, մո՞րն իմ ինձ ծնած, երբ գլուխըստն է նրա կասեցվում նահանջելու հետ իր կենդանուծյան, և կամ աշխարհի թագավորների՞ն, որոնց արհեստը առավելս մահ տարածեն է, քան՝ գործե՛րը կյանքի:~ այլ Քե՛զ կանչեցի, Բարերա՛ր Աստված, որ բարձունքներում Օրհնյա՛լ Նս հավետ, որ Կենդանի Ես Մշտնջնեական և Կենդանուծյունն Ես ամենայնի, որ անգամ մե՛ր իսկ վախճանից հետո՞ ի գորո՛ւ Ես մեզ անեղծացնելով՝ կրկին՝ նորոգել:

Բ

Եթե մենք փախչենք Քեզանից հեռու՝ մեր ետևից Ես շարունակ Գալիս, թե տկարանանք՝ Զորացնո՛ւմ Ես մեզ, թե ուղին շեղենք՝ մեր շավիղն Ի՛նքդ Ես դյուրուծյամբ Ուղղում, թե պատկառում ենք մեր ամոթահար պարտքի պատճառով՝ Քաջալերո՛ւմ Ես, որ թե՛ չընկճվենք, Բժշկո՛ւմ Ես մեզ ու միևիթարում՝ թե ախտվում ենք հոգով և մարմնով, եթե դարչանանք մեր մեղքերի մեջ՝ Մաքրո՛ւմ Ես այդժամ, և եթե ստենք՝ Արդարացնո՛ւմ Ես Քո ճշմարտուծյամբ, եթե մեր ներքին անդունդների մեջ գլորված սուզվենք, ջուլց Ես տալիս մեզ՝ Երկի՛նքն իր կյանքով: Եթե մեր կամքով չենք վերադառնում՝ Դո՛ւ Ես Շնորհով դարձնում մեզ ետ, եթե կրկին ենք մեղանչում, այդժամ, Ողբում Ես՝ ինչպես ծնողն է ողբում, թե արդարանանք՝ Ժպտո՛ւմ Ես սիրով ու Պայծառանում, թե օտարանանք՝ Սո՛ւզ է Քեզ համար, և եթե կրկին մերձենում ենք Քեզ՝ Տո՛ն Ես կատարում, եթե տալիս ենք՝ Ընդունում Ես ու Գովեստով պատվո՛ւմ, թե համբանում ենք՝ Երկայնամի՛տ Ես Քո սպասումով, եթե ժխտում ենք՝ Դու առատորեն Շնո՛րհ Ես տալիս, որ չկործանվենք և ընձեռում են Բարեկիճակներ՝ լինելուծյունից չէ՛ թե հեռանանք, եթե Քեզ լքենք՝ Տրտմո՛ւմ Ես այդժամ, թե արիանա՛նք՝ ինդուծյան՝ մեջ Ես արդեն հայտնվում:

Գ

Հարյուրերկուերորդ սաղմոսն է ինչպես իր հրաշալի օրհնաբանուծյամբ վհատյալների սիրտը սփռվում, կյանքի մեծ հույսը մեզ ավետելով՝ փրկուծյան վերին հանդեսով ի հայտ, որ հաղթական է դեերի հանդես, իսկ բանասրկուին տարակուսաների մեջ է չպրտում, ինչպես բարեբախտ խաչի նշանը մեր տերունական, սքանչելափա՛ն, նաև պանծալի՛, անխոնարհելի Լույսի բարձրուծյամբ և անպարտելի գորուծյամբ վերին, և իր անունով Ախոյան է նա, կանգնած է անշա՛րժ ընդդեմ անբարի բոլոր ուժերի, բռնուծյունների դեմ Բելիարի: Եվ սաղմոսն ունի հոգևոր գանձեր՝ գիտնական մարդկանց մտքերին օգուտ, ընծայական է մահվան պարտուծյան և լուծարումն է բոլոր մեղքերի, և արդարների անեղծ նորոգման խոստումից դրված՝ նա կրկնակի հույս է հավիտյան իր կանոններով բարեհրավեր ու կենդանատու՛ նրանց, ովքեր որ Հոգո՛վ են Աստծուդ: Եվ ո՛չ միայն այդ, այլ բոլոր երգերն էլ սաղմոսների՛ կյանքի կտակ են նկարագրված և տեսանելի մաքուր սրտերին:

Դ

Նախկին ուխտն էր իր տկար բնուծյամբ և օրինակով, և իր գրկի մեջ՝ մահվան կործանման մեծ նախաժամն ու գալիքը ունեք, գալիքը՝ Քեզուով, որ երկնակրոն ու վերնակենցաղ, միշտ անճառելի կյանքն էր ավետում ու վստահուծյունն ավետագրքի, բայց նա գրվածք էր ջնջվող գրով ստվե՛ր օրինակ, և իր պաշտոնով դատապարտում էր հանցավորներին, ովքեր որ արդեն վհատված էին ու հույսի կարոտ: Եվ հին ուխտը մի խափանվող կտակ էր երկրային, հաշտարարուծյան տկա՛ր մի միջնորդ, և թերի՛ խոսք ու խնդրանքի համար: Այդ իսկ մասին է նաև վկայում խոստովանելի փրկուծյան պատուճը Մանասեի, երբ նա բազմաթիվ անբժշկելի մեղք-հանցանք գործեց, և արդարների արյունով լցրեց քաղաքն՝ անունով մեծ թագավորի, որ իր հայրենի քաղաքն էր նաև:~ անսուտ պատմուծյուն, որ մարգարեական գրուծյամբ ունենք: Եվ այս Մանասեն, մեծ տեսանողին, որ բազմերախտ էր՝ և խնամում էր նրան, պաշտպանում, ի բնե ծնված մեծ մանկավարժին, որ տեսչուծյունն էր իր դատարարակում նախակերտ հարկի, նմանօրինակ վիթխարահասակ խնամարկուին, մահվան մի սարքով՝ մեքենայական դաժան սղոցով՝ սղոցեց մեծին աշակերտն իր այդ, և երկու մասի նրան բաժանած՝ մաշե՛ց դժն:

դակ տանջանքների մեջ: Ապստամբության այդ խորհրդից հետո՝ Մանասեն չուներ էլ փրկության հույս, այլ այս ամենի վրա հավելյալ, նա մոլեգնորեն, մի քրեական վերնամարտության հանցանք էլ գործեց, հանդգնեց անգամ Բարձրյալի՝ դեմ և չպատկառեց՝ իր Ստեղծողի Անվան պատիվը խորանից մերժել, և նա հայածեց Աստծո Սուրբ Հոգուն ու Բելիարի անձը դավանեց: Որովհետև որ նույն այդ տաճարը, որ տերունական խնկարկման համար սահմանադրվեց, և հռչակավոր, պատկառելի էր ողջ երկրով մեկ, և իր սրբությունը սարսափ էր ազդում երկրի ազգերին, ուր տեսիլքները հրեշտակների և աստվածային հրամաններով մեծ հաղթողների հայտնությունները ազդեցություն են էր՝ ակնհայտորեն լուսավորությանը, երկրնանման այս իսկ վայրն ահա, որ՝ ահավոր էր և քրանչելի, Մանասեն դարձրեց՝ ոմն մի Քեռն նախանձի կուռքի բնակատեղի՝ քառադիմակե նրա պատկերով, և քրանչելի՝ տաճարն ավերեց, տեղը թողնելով անապատային պաշտոն գործելու գարշելի մի վայր, և դիվանձեց՝ ճոտ զոհարան դարձրեց՝ այդպես զրկելով երկնի արքային իր արքայական կայանատեղից: Ամենահարուստն իր ունեցվածքից զրկվեց՝ այդպես, Տանտերը դարձավ մի թափառական՝ անհանգստությանը այս ու անդ շրջող, և Բեհեզեբուղի դրդմամբ նկարվեց ձեռունը սուրբ տան, իսկ Տերունական անունը ահեղ՝ դարձրեց նա անտուն ու վտարանդի, գովյալ ավանդները գերեվարեց, նվազեցրեց ողորմած մասը ողբալի չափով, Լույսի սրահը փոքր աղվեսի ապարանք սարքեց, և Նրան, ումն էր՝ ամեն-ամեն բան, ինչ բարիք որ կա՝ մի՛ տաղավար իսկ չթողեց՝ գլուխ դնելու համար, Հզորի դրած ցանկապատերը քանդեց, վա՛ր թափեց և մեծախորհուրդ արյան սրսկման սեղանը դարձրեց բախտահամ տեղ, գայթակղություններն ավելի ևս առատացրեց, ընդլայնեց՝ դրանք և դարձավ Հոտին աստակման տանող կորըստյան հովիտ, մե՛ծ մոլորության բուռն վարդապետ, և այդ ամենը ըստ կրոնական ողջ օրենքների գիտությանը արեց՝ հայր ունենալով մեծ եզեկիային, որ նմանակիցն էր Դավիթ արքայի:

Ե

Այնքան խորացավ չարիքների մեջ և այնքան գործեց Աստծո պատվի դեմ, երբ Տէրն էր նրան բարձրացրել վեր, դարձրել արքա, իսկ ինքն հայհոյում էր, թշնամատում, և աղոթքներով սնունդ ստացող բազմությունն ահա՛ սուսե-

րախողխող մահվամբ վա՛յր փոռեց, այլ բան չէր, քան թե՛ տանու՛ դավաճան, մերձավոր մատնի՛չ, հարազատներին սպա՛նդ կատարող, մեկը՝ կցորդված ջարդարարների՛ն: Աստծուն չէ՛ր կարող այլևս դառնալ, զի ուրացել էր արդեն իսկ Նրան, չէ՛ր կարող հիշել և Աբրահամին, նրանից արդեն մեկն էր խորթացած, և Իսահակի միջոցով աղոթք չէ՛ր կարող հեզել, քանի որ արդեն նրանց բերանով նզովված էր նա, չէ՛ր կարող պարծել և Իսրայելով, որովհետև որ տարագրված էր մեծ խորհուրդ կրող այդ իր շնորհից, չէ՛ր կարող Դավթյան երգերը երգել, որովհետև որ՝ կշտամբո՛ղ դարձավ այդ իսկ երգերին, քավարանին էլ չէր կարող մոտ գալ, որովհետև որ՝ հենց ի՛նքն էր պղծել, և տապանակին վերն-աստվածագի՛ծ՝ էլ ապավինել չէ՛ր կարող արդեն, որովհետև որ՝ գարշ ձուլածոյով էր փոխանակել, Մովսեսին ևս աղոթքի խոսքով չէ՛ր կարող կանչել, որովհետև որ նրա հանդեպ էլ՝ անքավելի էր հանցանքն իր գործած, Ահարոնին էլ իր աղաչանքը չէ՛ր կարող ուղղել, քանի որ նրան վնասապարտ էր իր արարմունքով, իրեն մերձավոր մարգարեների համախումբ գնդին՝ չէ՛ր կարող դիմել, քանի որ նրանց ինքն էր սպանում: Բայց ահա նրա մեղքերի համար քավություն եղավ, և կրկին նրան թագավորական իշխանությունը ընծայվեց պարզև, որովհետև որ, այդպես, Բարերա՛ր, բազմացրեցի՛ր, կարգավորեցի՛ր գովեստներն անճառ ու անլուելի՝ ազգ ու տոհմերի, ժամանակների ու դարերի մեջ, այդպես Դուռն Հույսի՛ մտնելու համար անփակ պահելով՝ հանո՛ն Քո Փառքի Բարձրության արի՛ր՝ դատապարտյալի՛ս փրկության հույսը ավելացնելով, ո՛վ անմահության Պարգևներ Տվող, Հիսո՛ւս Քրիստոս, Գովածդ հավիտյա՛ն: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղբաններով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻԾ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏԾՈՒՆ  
ԲԱՆ ԾԲ**

Ա

Քո իսկ հությամբ՝ Տիրաբար օրհնյալ, Անսահմանելի՛, իսկապե՛ս Բարի՛, Պաշտպան խնկելի, որ խոստովանված երջանկությունն Ես

ողջ երկրով մեկ, Դու երկայն հուշսի ամենապատրաստ, Պայծա՛ն տեսութիւն, Ողորմա՛ծ, Գթա՛ծ, որ ոխ չե՛ս պահում մեղքերի բազում տարիների դեմ, այլ, երբ դարձ տեսնես, Բարիանո՛ւմ ես մեկ ակնթարթում՝ հրաշատեսիլ զարմանք գործերով, որ գերագո՛ւն են, քան թե ամենայն նախնայաց ազգերին տվածներըդ ողջ, և անսահման այդ առավելութեամբ, նախկին մեկի տեղ՝ կրկնակի ո՛վ հաճեցիր հեղել Քո ողորմութեան վերնահո՛ս, հստակ՝ Վտակներըդ մեզ՝ Շնորհիդ բաշխման Ավետարանո՛վ, խնկավետութեամբ աղոթողների: Եվ անձրկութեան պատուհանի տեղ, որից ներս մտնող լույսն այնքա՛ն էր թույլ, ըստ Սողոմոնի՝ աղոտ գիտութեան նշմարման չափով, բայց առավելը՝ այս Նորը՛ տվիր. և թշվառացյալ վիճակիս վրա լայնարձակ բացվեց Առագա՛ստդ փակ, և ե՛լքն հասավ ինձ՝ վերն աստվածային ձրի պարգևով: Եվ որն իմ ներսում, մասնավորապէս, ավետիսներո՛վ ինձ հիշատակվեց, մի բան, որ հնում այս օրինակի տպավորութեամբ նկարագրվեց, թե. «Դարձե՛ք իմ կողմ, և այդժամ պիտի դեպի ձե՛զ դառնամ», «Այնժամ, երբ դառնաս, անկեղծ հառաչես, այնժամ էլ կապրես»:

Բ

Նա որ Կարող է աղճամուղջների սեռութեան գույնը՝ ձյան ճերմակութեան ու պայծառութեան փոխել դյուրորեն, և արյամբ ներկված արանց դարձնել դեպ առաքինին, ինչպես որ գեղմն են մշակումներով դարձնում մաքուր, ըստ Եսայայի և Զաքարիայի՝ բարկութեան մեջ էլ Ողորմութեանըդ զույգ կտակները դարձյալ հիշելով, որովհետև որ, երբ քաղաքները Իսրայելի՛ դարձան անապատ, ապա և կրկին էլ բնակվեցին՝ Քո ողորմութեամբ: Երբ ճամփաները դարձան ամայի՝ որովհետև որ՝ մարդը վերացավ այդ իսկ վայրերից, բայց հետո կրկին նույն ճամփաներով՝ մարդկանց եռուզեռն էլի՛ հայտնվեց՝ Քո՛ ողորմութեամբ: Եվ ոգու սովից պիտի լքվեն, բայց՝ կրկին՝ գորանան՝ Ձեռքիդ պարգևով: Աստված Իր տեղն է գնում գայրացած և ետ է դառնում ողորմութեամբ լի, ըստ ներողութեան հեռանում մեզից, սաստիկ սպառնում, ապա՝ կրկին է դառնում դեպի մեզ՝ Ի՛ր պաշտպանութեամբ, որովհետև որ, Նա Իր սրտի մեջ խռովման պահին՝ մեզ խնամելո՛ւ մասին է խորհում:

Գ

Այս հիշածներս՝ մարգարեների խնկելի ձայնով, որոնք Քո օրհնյալ Գալստյան մասին նախաձայնեցին՝ ի հայտ անելով հրամաններըդ մեզ ազատարար, և անհնար է նյութեղեն լեզվով դրանց իսկ անբավ օրհնանքը թվել. փոքրեր են դրանք, նաև՝ նվազներ, օրինակներ և նմանութուններ հին ընթացումի, ժամանակավո՛ր, բայց և խոսում են ավետիսներիդ հայտնութեան մասին և Քո հաղթ Խաչի փրկագործութեան: Եվ Արյանդ ուխտի Խորանը Ինքդ էլ կառուցել տվիր ամենայն վայրում, որ առավել է անընդմեջորեն բարձր աղաղակում, քան դատակնիքն Աբելի՛ մահվան, խոսում Քո բարի հաղթութեան մասին՝ վերստին կյանքի և անմահութեան՝ չնորհաբաշխման և մկրտութեան, հարութեան կյանքի և նորոգութեան՝ Քեզ ընտանութեան և Սուրբ Հոգու հետ մեկ ու միաբան, քավութեան մասին և ազատութեան, լուսավորութեան, մշտնջենավոր մաքրութեան մասին և երանութեան, Վերնայինների հետ կցորդութեան, փառքերի՛ մասին անկողոպտելի, և մեր շուրթերից Բարձրայլին ուղղված հաշտեցման խոսք ու աղաչանքների: Եվ այն, որ ասելն է իսկ ահավոր, գրում եմ այստեղ, հիշատակները երախտիքներիդ, որոնք տրվեցին Քո՛ Մեծի՛դ կողմից, որ մենք կարող ենք. «աստվածներ լինել»՝ ըստ Քո ընտրութեան դրված շնորհի և Հաստողիդ հետ. «կազմել մե՛կ Մարմին»՝ Տիրող Մարմնի մեր ճաշակումով և Քո Լույսի հետ կյանքիդ խառնութեամբ, որ կատարումն է երջանիկ խոստման, ըստ սուրբ Պողոսի մեզ խոսած խոսքի. «Խոստում, որ չունեն Օրենքը իր մեջ»: Դու՛ փրկութունը Քո՛ հարստութեամբ՝ երկիր հայրենուդ հիմնադրեցիր և մատուցեցիր ընդունողներին՝ Հույսի երկարում, որ ամբողջութեամբ իրենց հույսերը Քե՛զ վրա դնեն, Քավի՛չդ ամենքի: Փա՛ռք Քեզ՝ Քո Հոր հետ՝ Գովեստների և բարեբանութեան Սրբութեան Հոգուդ, հավիտյա՛նս հավետ: Ամէ՛ն:





**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂ ՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ԾԳ**

**Ա**

**Ձորությունների Դու տերերի՝ Տէր և Դու Թագավոր բոլոր գոյերի, Ողորմություն ես Սո՛ւրբ, Օրհնաբանված, Աստվածն ամենքի, որ Հաղթող ես միշտ սահմանների մեջ ընդարձակության, անսահմանությունը Քեզանով լցնող չափ որքանության, կարծր Քեզ համար հեղձակ է հոսող, հեղուկը որպես ամրակազմ ու պի՛նդ, հուրը որպես թե ցո՛ղ է զովացնող, անձրևը բո՛ց է կիզանողական: Քա՛րն էլ Կարող ես Դու կենդանացնել՝ կերպարանք տալով, իսկ բանականին դարձնել անխոս ու անշունչ արձան, պարտքի մեջ ընկած տառապող մարդուն դարձնել պատվական, իսկ ինքը իրեն մաքուր կարծողին՝ իրավունքներով դնել դատի մեջ, մահվան դատվածին՝ ազա՛տ արձակել բարի բերկրանքով, ամառողներին դարձնել օձյա՛լ, տեսությունը զվա՛րթ, մատնվածներին՝ կանգնեցնել խաբող գլորման տեղից, սասանվածներին՝ հաստատել Վեմին Քո վստահության, և բազմաշառաչ ախտացյալներին՝ դարձնել երջանի՛կ, իսկ առաջ գնալը ատողներին՝ նահանջեցնելով տանել դեպի ետ: Եվ այն ժամանակ, երբ բարիքները մեջտեղից հանվեն, առավել ևս զարմանալի՛ն ես ազդով ներգործում, քանզի հանուն Քո՛ Դու Գիտես՝ մարդկանց մեղքերը թողնել, անօրենությունները ջնջել՝ հավիտյան, և՛ քավիչ լինել անիրավության, և՛ մեղքերը մեր բնա՛վ չհիշել՝ ըստ մեծ եսայու և երեմիայի:**

**Բ**

Եվ այս շնորհը նորոգ փրկության, գոհաբանության բազմաօրինակ իմ մեղքերելով, որ Անբավիցդ է հաճախում մեր մեջ, դառնում ակնհայտ իրականություն՝ լռեցրե՛ց ինձ՝ լի կարեկցանքով, որովհետև որ՝ կրկնակի Լույսիդ անսպաս բարին, որ թշվառության մեջ համառողիս Քո ճառագով է պարզելվում այսպես անընդհատորեն, այդ ներշնչածըդ աղերսանքներով՝ Քե՛զ եմ աղոթում, խոսքերս կրկին հարմարեցնելով

այս իմ մատյանի մեծ ողբերգության տառին և ոգուն թախծանքով լեցուն ու հեծեծանքով: Քեզ նի՛ց եմ առնում պարզենները այդ և ըստ Քեզ հաճո դեղեր պատրաստում՝ վհատության խառնելով նաև՝ խրախուսանելու ինձ ոտքի հանող, հուսահատությանս՝ Հիշատակդ Անվան, թե՛ Քեզանով է կյանքը հաստատվում, տխրությանս հետ՝ Սփոփանքն՝ ըրե՛ միաբանելով, դառնությանս հետ՝ Քաղցրությունն՝ ըրե՛ Կենդանարարիդ, պատժիս արյան հետ՝ Ծնորհները Քո, պարտքիս անեծքին՝ Օրհնությունն՝ ըրե՛ ինձ ազատարար, մարմնիս մահին՝ Նորոգությունը բարությունը լեցուն:

**Գ**

Ես հավատո՛ւմ եմ Հզորիդ խոսքին և հաստատո՛ւմ եմ իմ վկայությանը, ակա՛նջ դիր սրտիս լուծությանը, Տէ՛ր, Հիսո՛ւս Քրիստոս, ուրում Քեզ ուղղված երկար գոչեր են հնչմամբ մեծաձայն: Դու սիրելով մեզ դարձար մեզ համար և՛ մարմնակից, և՛ պատկերակից: Դու, անօրինակ Քահանայապետ, որ Օրինակն ես հի՛ն, ծա՛նր լծի լրիվ խորտակման՝ անասնոց նման մահվամբ մորթվելով ու բարեբանված մարմնիդ նվիրմամբ, որ բաժանելով մատուցում ես Քեզ վե՛հ, անմահորեն և շնորհում մեզ Քավությանդ պղպես աննվազաբա՛ր, ո՛չ միայն նրանց, որ քիչ մեղք ունեն, այլև նրանց, որ՝ ակնկալի՛ք իսկ չունեն ապրելու: Որովհետև որ՝ մարմնի անդամոց որքա՞ն պիտ գորի մեղքի մեջ ապրել, նաև զուգընթաց կենդանի մնալ, թե հազարավոր տարիներ անգամ նրանց ապրելն էլ երկարաձգվի, միևնույն է, երբ քավություն չունեն, որովհետև որ՝ մահով է միայն մեղքը դադարում, այդ բանի համար ամենքի Տէրն ու Աստվածն ամենայն, Ի՛ր Նոժարությանը և Ի՛ր իսկ Կամքով՝ Ջոհվե՛լն ընդունեց՝ մահվան համբերմամբ, և այդտեղից էլ քավություն բաշխեց ընդունողներին: Եվ ո՛չ թե որպես մաքրության աղբյուր, մահվան պարտական ծրագրերով օրըստօրե Քո գոհումներն եղան, այլ Կամքով Քո, Տէ՛ր, և գործակցությանը Սրբության Հոգուդ՝ ի հաճություն Հոր, որ մեր հաշտության համար մեկընդմիջտ՝ Մեկ Ջոհաբերմամբ Դու մատուցեցիր: Իսկ երբ ամենքի Աստվածդ Անքնին, որպես թե՛ ինքըս իսկ և ի դեմս ինձ, ճիշտ ի՛մ փոխարեն և ի՛մ հավատով ինձ իսկ կցորդված՝ որպես Մե՛կ մարմին, ի՛մ պարտքերի տեղ, որպես հանցավոր գոհագործվեցիր, ապա հարությանդ հաղթեցիր՝ մահին,

դրանով արդեն՝ ի՛նձ էլ հարուժյան մեջ ներառելով. բազմաթիվների համար Դու մեռար, բայց կենդանի՝ Ես մնում հավիտյան: Եվ Քո կենդանի մասունքը, ո՛վ Տէր, որպես մեզ համար սուրբ Հաղորդութիւն՝ ուրացողների ձեռքով չես տալիս, այլ՝ դավանութեանդ հավատացողի, և Աստվածային նվիրումները յուրաքանչյուրին՝ անհատապէ՛ս Ես բաշխում-բաժանում:

Գ

Մի ողորձովոր, անհավատների մի պաշտոնատար՝ Հուսադերելով իր անհարմար անձին, մեծ ու անկշռելի փրկութեան կամքը դատում էր այսպես. «Ես առավել եմ հավատում փառքին, երջանկութեանը, քան մարտիրոսական մարդու վախճանին»: Թող որ ուղղութեամբ իմ թշվառութեան հանցավոր մարմնիս վախճանն ընդունեմ: Իսկ անճառութեան խորհուրդը ինքուս այսպես դիտեցի. դավանման մեջ է ճշմարտութիւնը, որովհետև որ մաքուր անձերն էլ առանց նվիրման այս հիշատակին՝ չե՛ն կարող լինել իսպառ կատարյալ, թե չխառնվեն հրաշքներ կերտող մեծութեան Հոգուն: Հետո ասում է. «Ինձ՝ մեղավորիս Դու մատուցվեցիր կրկնակի բաժնով», ապա ասում է՝ Հուսար իբրև այս է իսկութեամբ. «Ես ինքս եմ եղել այդքան ճշմարիտ»՝ իմ դաժանութեան մեջ զբաղվելով համեղութիւնը, որ Քոյինանյութ Լույս գանգվածի կենաց նշխարով Ես պատարագել: Սրան հավելած, Իր նախանկեր բարի շնորհով, որպես չբուժվող ախտերի համար ճարակ անող դեղ, Մարմին-Արյունը, որ Տէր բաշխեց որպես քաղցրութեան՝ բոլոր նրանց, որ Վերնատանն էին, և այդպիսով էլ՝ ավելի վեր էր հաղորդութիւնը կարծեցնում այդպես, քան նահատակի վկայութիւնը իր գոհման արցամբ: Սա օրինակ է ինձ համար Հույսի, որպեսզի գրեմ Քո Փառքի մասին, որով որ արդեն փրկանք գործելդ երևացրիր մեզ հավատալի, և ավելի քան՝ քավելը մեղքի, կամ ողորմելըդ, շնորհելըդ, կամ, Աստվածութեանդ առ մարդը ուղղված գործութիւնը Քո՝ որքան ուրեմն առավել է այս մեծ պարգևումով. և Քո Տիրական, կամավորական մարմնիդ, որ էր աստվածախառն օրհնյալ նվիրում՝ դրեցիր այդպես անասունների սպանդի փոխան, և պարգև դարձար Անմահականդ մահկանացուիս, Լույսըդ ահավոր՝ սովերացածիս, Հավիտենականըդ՝ անցավորիս, վեհ Բարձրյալըդ երկրավորիս, իսկութեամբ Բարիդ՝ բնույթով թյուրիս, և ստեղծվածիս՝ կյանքըդ Անստեղծ, և

մանավանդ, որ՝ և՛ կամենալն էր Քոնը ի բնե և նույն Քո Կամքի կենսագործելը՝ օրհնութեան առիթ՝ անեծքի բոլոր պատճառների տեղ:

Ե

Արդ, աղաչում եմ, սրտով և հոգով խոցվածիս, Գթած, երկնից Ընծայված կյանքի՝ դեղը տուր, և Քաղցրութեամբ դեղն այդ մատուցիր, ի՛նձ, որ մեղքերի ախտով եմ լցված, քավիր պարտքերն իմ, Ամենակատար բավականութիւն: Թող ինքս էլ ասեմ՝ այս և՛ ճշմարիտ և՛ անխաբելի խոսքը կերպավոր, որ «Հաստատողդ ու կյանքդ ամենքի՛ բնակվում Ես Քո սրբերի ներսում, որովհետև որ՝ ինչ որ ցանում են՝ այդ պիտի հնձնեն», սա, ըստ Պողոսի ճշմարիտ խոսքի. և աչքացավով տառապողները արևի տապը չեն կարող տանել: Իսկ Դո՛ւ, բարերար, որ ամենայնը Ինքդ Հաստատեցիր ոչէութիւնից, և Համայնին էլ հարգում Ես հավետ, որ Քեզ դավանեն, որ այդ դավանմամբ տաս կենդանութիւն, փակված չե՛ս երբեք օրենքի դրած սահմանումներով, և մանավանդ, որ Կարող Ես խզել կանոնի դրած ամեն մի կապանք, սակայն մնալով պայմանն ավետյաց՝ Հանցավորների՛ համար ամենայն, և Հոգիների, որ տարակույսի՝ մեջ են գտնվում: Եվ Քեզ՝ Հորդդ Հետ, Սրբութեան Հոգուդ՝ փա՛ռք, իշխանութիւն, հավիտյանս: Ամէ՛ն:



**Հեծծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հակողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍԻ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍԾՄՈՒՆ  
ԲԱՆ ԾԴ**

Ա

Արդ ամեն կողմից Ողորմութեանդ են ակնկալում, Տէ՛ր, Սկզբնալույսդ աչքերի տեսման, Սկզբնալույսդ սրտի իմաստի՝ Հիսո՛ւս Քրիստոս, Բարերարելը Քեզանից է լոկ, Քեզանո՛վ է կյանք և անմահութիւն: Դու Քո Գթութեամբ դարձիր դեպի ինձ, և հազցրու ինձ Քեզդարձի՝ հագուստ և կրկնակի կլինի այդժամ բերկրութիւնը իմ, որովհետև որ՝ առանց Քո Կամքի չե՛մ կարող լինել վերանորոգված, և թե՛ Քո կամքով Ինքդ չգթաս, ես՝ մահապարտը՝ փրկվել չե՛մ կարող: Կառավարը՛դ թե ինձ չար-

դարացնեն՝ դեպի Քեզ բերող ճանապարհի մեջ հետս քայլելով ու նորոգելով՝ խո՛ր-խոր վիհերն ինձ աջից ու ձախից կարող են կուլ տալ:

Բ

Ես չե՛մ պարծենում և ո՛չ մի բանով, երբ նախատված եմ իրավունքներից, չե՛մ պարծենում իմ դուրս վունդվելով, լքված լինելով՝ չե՛մ խորոխտանում, չե՛մ մեծաբանում՝ պապանված եմ երբ, ծեծվածքս արդեն չե՛մ ըմբոստանում, չեմ երջանկանում իմ եղկելիությունը, ամբարշտությունը՝ չե՛մ արդարանում: Որովհետև որ՝ առանց սանձի ձին ուղիղ չի՛ դնա, և ո՛չ էլ նապն է գետով վեր երևում առանց նավորդի, ո՛չ էլ արորն է լուրջ, արժեքավոր մի գործ կատարում՝ առանց մաճկալի, և ո՛չ էլ երկու լծով եզներն են առանց եզնորդի ուղիղ ընթանում, և ո՛չ էլ ամպն է մեկ այլ տեղ չըվում, եթե ուղղորդող նրան հողմ չկա, և ո՛չ էլ աստղերն են անհետանում, գումարվում բույլով, առանց իրենց իսկ սահմանված հատուկ ժամանակների, ո՛չ էլ արևն է իր շուրջանակի ընթացքը գործում՝ առանց օդի և նրա տարրերի, նրանց հետ և ես՝ ոչինչ չեմ կարող՝ առանց ամենայն հրամաններից և ակնարկության, որ Բարգործը է հովվությունը տալիս: Քանի որ Դո՛ւ ես կենդանությունը բանականների և ինձամոռն ես արարածներից, և Քեզանից է փրկությունը իմ, ըստ Սաղմոսողի, և Դու ես ձայնում ինդունության ձայնով, ավետյաց հնչյուններ՝ անհանգիստ իմ, ձեր աշխատանքից արդեն հոգնածներ՝, ես կմաքրեմ՝ ձեզ բոլոր պարտքերից»:

Գ


Իմ լվացումից ի՛նչ օգուտ մնաց, թե կրկնակի դարձա զազրելի, կամ ճաշակումից ո՛րն էր օգուտն իմ, թե մատնվեցի գեհենի պատժին, և կամ, ինչպես եմ պարծենում անվամբ մեծ Աբրահամի, երբ խորթացել եմ նրա գործերից. որդի՛ս գարշություն, ըստ մարգարեի ինձ ուղղած ձայնի, որ ամովրացի եղա հոր կողմից և մոր կողմից էլ քետացի եղա կամ քանանացի: Մերժելի՛ ժառանգըս եթովպացի և ո՛չ Սաուայի սենյակից ծնված, ըստ տեսանողի առածի, որ՝ ի՛նձ նկատի ուներ: Եղբայ՛րս Շամրի և կամ Գոմորի, համբա՛կս անվա՛ կյանքով անալի, և իմ խակությունը՝ ծնունդ Ողղի և Ուղղբայի խակության պորտի, ըստ Եզեկիելի կրկնանախատ այս կշտամբանքով:

Դ

Ինչպես մեկը, որ՝ բազում վտանգի ծփումների մեջ, այնտանջ հողմից սաստկապես զզված, ուժգին լլկանքով խապառ տազնապած՝ ծովի խորքերում ճոճվող նավի պես և վրան փլվող խոլ ալիքների ողողումի տակ, ձեռքերը այս ու այն կողմ ճոճելով, և ալիքները, որպես զարնանը գայրացած գետեր՝ բռնություն համար նախահարձակմամբ նավն ակամայից ընթացքից դո՛ւրս են հանում-չարտում՝ մի ողորմելի-թշվա՛ռ գլորմամբ, արդեն ջրակուլ և ոգեսպառ պղտորարբությունը, և դաժանահո՛տ, մամուռ արմատո՛վ, և խառնախո՛րի՛վ, այդ մեծ մահաբեր երերումներով վանված վերջապես, խեղդվում է խոլ հեղեղումներից, - նույն այս առակի նման՝ եղկելիս, խոսում են, սակայն տեղյակ չե՛մ լինում, գոչում՝ չե՛մ լսում, բարբառում են, բայց՝ արթնություն նույլ չի՛ դալիս վրաս, հրամանելով հնչում են, սակայն՝ չե՛մ փոխադրվում, փողահարում են և՛ չե՛մ հավաքվում-գումարվում մի տեղ, վիրավորվում եմ, սակայն չե՛մ զգում, ու նմանվում եմ զարչելի կուռքի թափուր դառնալով բարու իմաստի ազդեցությունից: Արդարև չար է իմ օրինակը և առավել՝ չար՝ հավիտենական այդ ճշմարտությանը, մի վիճակ, որը ատելի է և մեղադրելի, և արժանի է միայն մատնվելու՝ Քրիստոս Տիրոջ դատաստաններին:

Ե

Քանզի այս ճամփան անդառնալի է որպես հիշատակ, այստեղի պարտքերս այս իմ կտակի մեջ ամփոփեցի, և իմ կտակը նրանց եմ տալիս, որ ընթեռնում են և կամ թե՛ լսում, և առ Աստված են յուրաքանչյուր օր կարդում իմ խոսքով. այս լինի սահմանն այն հանձնառության, որ խոստովանման համար ընդունեն՝ հարատևորեն՝ ձայնարկելով Քե՛զ, ո՛վ Ամենակալ, Ում գիրն է՝ մարմնիս և Խոսքն է՝ հոգուս՝ Անսահմանելուց միշտ թախանձանքով, իբր անեղծորեն մաղթողի կողմից՝ նրանց ձայների աղբյուրն ընդունիր՝ ձայնի՛ս միջոցով, անվե՛րջ Բարեգութ, Մարդասե՛ր, Օրհնյալ, հավիտյա՛նս: Ամէ՛ն:







**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍԿ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՕՈՒՆ  
ՔԱՆ ԾԵ**

Ա

Որովհետև որ՝ ոգուս թևերով սլանում էի մարդկային անթիվ ծնունդների մեջ, և ինչ իմացա՝ դրանք դրեցի մտքիս կշեռքին, և չգտա ես որևէ մեկին, ով որ իմ հանդեպ լինեք պարտավոր, և այս մասին իսկ Դավթյան սաղմոսից երգ ստեղծեցի, անվանելով ինձ գավագանավոր գործավար՝ դա՛ռն կշտամբանքների. «Ո՛վ կարող է ինձ լինել հավասար անօրենություններ կատարելու մեջ»: Եվ ինքս այս մասին այդպես խոսեցի վերջնականապես, և այլս մահվան՝ ճշմարտությունն այդ բացեցի իմ դեմ, որ վկայելով՝ կրկին անգամ եմ նույնը հաստատում՝ իրավունքներն իմ գրի առնելով, թե՛ ե՛ս, միայն ե՛ս եղծվեցի իսպառ՝ ինքս ի՛մ ձեռքերով, առավելն այս է, քան թե իմ խոսքով բազմաթիվ այլո՛ց դատապարտեի, թերևս այս իմ գտած արդյունքով, որ շնորհում եմ մեղքերը այլոց թողնելով իրենց, Ի՛նքդ էլ, ո՛վ Աստված, բոլո՛ր պարտքերն իմ Ի՛նքդ ինձ շնորհես, որպես որ ե՛ս նույն բաներն արեցի և շնորհեցի այլոց՝ այլոց ինչպես նախապես խոստում ես տվել, որ այդպե՛ս կանես:

Բ

Եվ արդ, սրանց պես Քեզհաճո էլ ի՞նչ աղերսներ բերեմ, անուշ խոնկերի ծխով մատուցեմ, գովյալ Քրիստոս Երկնի Արքայիդ, թե ոչ ինձնից էլ անիծյալ մարդկանց փրկության համար պիտի աղոթեմ, արձակում խնդրեմ բոլոր նրանց, որ կապված են չարից, դատապարտյալին խնդրեմ ազատում, բարեգործություն՝ նգովյալներիին, թշնամացածին՝ պսակ Տիրոջ հետ, սփոփանք նրանց, որ տրտմած են խիստ, խորտակվածներին՝ դարմանում հոգու, խնամք՝ սարսափի մեջ ընկածներին, նենգվածներին՝ պատսպարություն, և նրանց, ովքեր վիրավորվել են իրենց մարմնով՝ բժշկություններ: Եվ եթե մեկը օրհնության խոսքով առջևդ ելնի, նրան պիտ լսես, իսկ, թե անեծքով՝ Դու չե՛ս հաճենա ընդունել նրան:

Գ

Ես՝ տառապյալս ամենաթշվառ, այս իսկ մատյանի իմ մաղթանքներով ամենատին սպասավորություն Քեզ կատարելով՝ թողություններ եմ շնորհում մտքով իմ հանդեպ բոլո՛ր հանցավորներին, փակելով Քո դեմ բոլոր նրանց, որ չարաշուք ձայնով անեծք են խոսում՝ մղվելով իրենց դժնդակ ըղձից, իսկ բոլոր նրանք, որ դժնի մտքով նենգում էին ինձ, թող որ բարու հետ, իրենց մտքերից արգահատելի, ի սրտե դառնան մեկ հաշտություն մեջ, և նրանց համար ես ծնկի եկած պաղատանքներ եմ բարձրացնում Քեզ: Որչա՛փ առավել ինձ այցի գալով՝ պիտի ողորմես, ըստ Քո մեծություն, մշտապես Գովյալ Քո Խնամքներով՝ Քո կյանքից տալով ի՛նձ՝ մահացողիս, Հզորը՝ դ հոգալով՝ սաստիկ տկարիս, Ամենակարողը՝ վարանողիս, լի իմաստություն Աղբյու՛րդ՝ հիմարիս և թմբիրների մեջ գտնվողիս: Որովհետև որ՝ հավիտենական սխալներով էր, որ այսքան ընկա մթով ողողված և ո՛չ ընտանի միջավայրի մեջ, մահվամբ շարունակ անձս խաբելուց անզգայացած, և չիմացա էլ, թե կորուստն ինչպե՛ս եկավ ինձ գցեց, և չգիտեցա՝ որոզայթները, որ ե՛տ կանգնեի: Չկարողացա՛ տեսնել որսողի մեքենայության ծածուկներն իմ դեմ, և չկարծեցի՛, որ խաբեությունը կերպարանք փոխող վարմն է կեղծավոր, չնկատեցի՛ գալթակղությունն ինձ շրջափակած, ինձ պատանդ տանող ցանցարկը կարթի չշոշափեցի՛: Եվ ժամանեցին չարիքներն այդպես, ելա՛ն ինձ վրա, անկարո՛ղ եղա դրանք ճանաչել, ըստ Սաղմոսողի:

Դ

Քանզի, ինչպես որ մի իմաստուն է, արտաքիններից, այս բանը ասել. «Բարվոք է թվում չար ասել մահին՝ ա՛յն բանի համար, որ պատճառները մենք չենք ճանաչում»: Ես էլ իմ հերթին և իմ խոսքերով այս եմ վկայում, որ մենք ինչպես որ անզգա պատճառն անասունների՝ մեռնում ենք թեպետ, բայց չե՛նք զարհուրում, կորչում ենք, սակայն՝ առա՛նց սարսափի, թաղվում հողի մեջ ու չե՛նք խոնարհվում, տարագրվում ենք ու չե՛նք տազնապում, եղծվում մեր մեղքով՝ չե՛նք ապրում զղջում, մաշվում ենք, սակայն՝ չե՛նք խեղամտվում, պակասում թեպետ՝ չե՛նք պատրաստում մեք, գնում ենք, սակայն՝ չե՛նք զգուշանում, գերիվարվում ու չե՛նք զգում բնավ:

Հոր Երանելին մարդու վախճանը հանգիստ է դիտում, սրբի հետ նույնն էմ ես խոստովանում։ Եթե մահացու գործերի բեռներ ես չունենայի և ապաշխարման պարտքի հանձնառում, որ աշխատությունս պիտի կայանա, և մանավանդ, որ՝ որոգայթներն են գաղտնիով լարվում, և հնարագիտն է աներևույթ, և ժամանակի տարրն է ոչնչից, անցյալն է անհայտ, և ապառնին է խիստ կասկածելի, իսկ ես անհամբեր և իմ բնույթով թերահավատ մարդ, ոտքերս՝ անհաստատ, մտքերս՝ ցնդած, կրքերս՝ բռնի՝, բարքերս՝ անժուժկա՛լ, մեղսամակա՛րդ է մարմինն իմ ահա, և հոժարությունն իմ՝ երկրասե՛ր, դիմամարտելուն՝ տնկակի՛ց եմ ես և խառնությունը ընդդեմ գնալուն՝ հակառակամա՛րտ, բնակարանս կավեղեն է և՛ անձրևներն են ուժգնապես իջնում, անթվելի՛ են կարիքները իմ, պատահարները՝ ամենագրա՛վ, միտքս՝ չարխնա՛մ, և տենչանքներս են բարիատյայ՛ց, կյանքս՝ առօրյակա՛ն, զբաղմունքներս էլ՝ անչա՛փ սակավ։ Իմ խաբվելն է միշտ՝ հիմարություն կողմ, մեծ եմ՝ մանկական խաղալիքներով, աշխատությունս արդյունքն է դատարկ, իսկ վայելումս սո՛սկ երազումներ, արդյունքս հաշվելիս՝ ոչի՛նչն եմ հաշվում, և պահեստներս լցված են հողմո՛վ, ստվերների՛ եմ նմանակերպվում, ծիծաղելի՛ եմ իմ ողջ կերպարով։ Որովհետև որ, երբ պատվիրանը եկավ հասավ ինձ, ըստ մեծ Պողոսի մեզ խոսած խոսքի՝ ինքնըստինքյան ինձ անպատրաստ գտավ, այդժամ էլ՝ մեղքն ի՛նքը կենդանացավ՝ արդարութունից հանդիմանվելով, իսկ կյանքի համար՝ ի՛նքս մահացա, բայց կենդանացա՛ կորստյան հովտում։

Զ

Եվ օտարները չարի գնդերով գողացան տարան սրտիս իմաստի արդյունքները ողջ, ինչպես որ Գիրն էր նախապես ասել, որով և հասան պատուհասներն ինձ՝ և իմաստությունն իմ արագորեն սաստիկ նվազեց, ըստ առակողի, և անբարի՛ն էր իր ցանկությունով մեջս ավելանում։ Ես չհառեցի աչքերը ոգուս իմ կյանքի գլխին՝ Քրիստոս Աստծուն, Որով ուղիղի՛ն ինքս հետևեցի, քանզի ուզելով ուժգին ընթանալ՝ ընկա՛ սաստկապես, Անչափելիին անչափ ձգտելով իմի՛ն չհասա, մեծագույնի մոտ ջանացի ելնել, բայց գլորվեցի այս իմ տեղի՛ց էլ, երկնային ուղու դռնով մտնելիս՝ մատնվեցի ընկնել անդունդ-

նե՛րը խոր, առավելի մեջ զգուշանալով՝ հավիտենակա՛ն վնաս կրեցի, անարատությունս պահել ջանալով՝ խորտակումս եղավ մանր բաներից, կարծելով ինքս ինձ, թե ձախ կողմից եմ հաղթանակ տանում՝ աճո՛ւմ գայթեցի, ասի՛ երկրորդի՛ց արդյունքներ խուզեմ՝ նախկի՛նը կորցրի, խնդիր դրեցի սակավը շահել, բայց զրկվեցի կարևորներից, ջանքեր լարեցի, որ ուխտը պահեմ, սակայն գրեցի՛ դաշինքըս ուխտին, ըստ սովորության փորձեցի գործել՝ կորսչիս գտա, փոքրերից փախած՝ մեծամեծների՛ ձեռքը մատնվեցի, և ինքս ինձանից ստեղծաբանած, իմ անձի վրա՛ դարձա չարաչար դատող դատախազ։ Սրանց ամենքին մատնված գերուս միայն գորու ես Ի՛նքդ փրկել, Տէ՛ր՝ կյանք մատուցելով հոգուս, որ մահին ի՛նքս ընծայեցի, որովհետև որ՝ Տէ՛ր Հիսուս, Ի՛նքդ ես միայն ճանաչվում բարերար գործով, անսահման Փառքով՝ Հո՛րըդ հետ, նաև, մեկտեղ Սուրբ Հոգուդ՝ օրհնությունները ամենայնից Քե՛զ, հավիտյա՛նս հավետ։ Ամէ՛ն։



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՌԻՂՂՎԱԾ ԱՍԾՄՈՒՆ  
ԲԱՆ ԾՋ**

Ա

Թագ առևթները մահվան դիպվածի այս պտուղներն են՝ դա՛ուն իրենց համով, որ դժոխարմատ ծառի՛ցս են աճել, թշնամիներ են, սակայն՝ ընտանի՛, հարազատներ են, սակայն՝ հակառակ, որդիներ, սակայն և՛ դավաճաններ, դրանց տակ հենց ի՛նքս եմ ստորագրում և այդ մեծ խմբից մասեր հիշեցնում իրենց անուճով՝ սի՛րտ՝ նանրախորհուրդ, բերա՛ն չարախոս, ա՛չք արատատես, ակա՛նջ՝ շեղալուր, ձեռքե՛ր՝ մահաձիգ, և երիկամներ՝ անմաքուրաթոր, ո՛տք մոլորընթաց, գնա՛ցք հանդգնող, հե՛տք խոտորակի, ծխախառն չո՛ւնչ, մտքե՛ր խավարուն, լը՛յա՛րդ քարացած, խորհո՛ւրդ՝ ծորացող, և կա՛մք անկայուն, չար՝ մի՛շտ անփոփոխ, բարեմասնություն՝ արդե՛ն սասանված, ա՛նձ տարագրված, վաճառված՝ ավանդ, վիրավո՛ր գազան, թռչո՛ւն նետահար, քարավե՛ժ արված մի փախստական, մի վնասապարտ՝ արդե՛ն բըռնրված, ծովի՛ ավա-

գակ, զինվոր նենգավոր, անպատրաստ մարտիկ, սպառազեն, բայց բարքով անժուժկա՛լ, Հեղագցյա՛լ մշակ, և աղոթող, որ չի՛ քաջալերվում, բեմ ելած քծնո՛ղ, անխո՛նկ քահանա, օրինական, որ չունի՛ նվերներ, կշտամբված դպիր, անմի՛տ իմաստակ՝ խելագարության դրսևորումով, ճարտասան, սակայն խոսքով անճոռնի՛, անպատկա՛ռ կերպար, և դե՛մք անամոթ ու լպի՛րջ երես, գու՛յն, բայց անհամբո՛ւր, տիպա՛ր տմարդի և գեղեցկություն՝ ծաղրուծանակված, այլխա՛ռն խորտիկ, ճաշա՛կ դարչեցված, այգի գաղձնավոր, որդնահարված որթ, պարտե՛զ փշաբեր, հասկ՝ ուտիճահար, մեղր, որ դարձավ մկների ճարակ, թշվառ մի անկյալ, որ՝ պաշտպան չունի, և մի սնապարձ՝ զուրկ ու հուսահատ, նդովված մեկը՝ երբ չե՛ն նդովել, անհա՛շտ բաժանված, մի շաղակրատ և դատարկաբան, գոռո՛գ բթամիտ, և դժոխային չափերով աբահ, հանդո՛ւզն անսանձ, անաստված մոլի, բան ձեռք ձգելիս՝ ձե՛ռք սպանողի, Հողագործ, սակայն տատասկներ ցանող, երջանկություն, որ եղծվածությամբ զգվա՛նք է աղղում, մի վե՛՛հ մեծություն, բայց վատթարացած, և անշուք դարձած մի վայելչություն, և կարողություն խի՛ստ տկարացած, վե՛՛հ բարձրություն՝ սակայն խոնարհված, փառավորություն՝ ապստամբելուց ի վեր ընդոստնած, և պատվիրանագանց՝ անդո՛ւլ, հարամե՛րժ, ինքնակամ սխա՛լ, մատակարարար, որ՝ կամակոր է միշտ, խորհրդակից նե՛նգ, բարեկամ, սակայն մասնակիորեն, հազարապետ, բայց գողամիտ բարքով, մերձավոր կծծի՛, բաշխող, բայց ժլատ, կակազ գործավար, անկամորդ ոգի, անսերի՛ ըղձանք, լավ բարքեր ատո՛ղ, անգո՛ւթ աղիքներ, անխոհեմ գնացք, աներևույթ բան՝ վնասվածքներով, ծածուկներ, որոնց անե՛ծք է դրված, դիպվածներ, որոնք թշնամանում են, դառնում հալածո՛ղ, վաճառական, որ հենց ի՛նքն է վատնող, շահարար շվա՛յտ, արբեցողությամբ ընկած պաշտոնյա, երկմիտ ոստիկան, պատգամավոր, որ բա՛նն է սակարկում, և մի դռնապան, որ՝ քնած է միշտ, հպա՛րտ մի աղքատ, ժխտո՛ղ մեծատուն, և դիվանապետ, որ է՛ անօրեն, մատնի՛չ պահապան, դրկի՛ց չարախոս, սուրհանդակ, սակայն, որ չի՛ ժամանում, նամակատար, որ պարտքից է դրդված, առաքյալ, սակայն խռովքներ դնող, անիմաստ միջնորդ, դո՛ւրս արված արքա, անա՛րգ թագավոր, կայսր՝ կործանող ոգևորության, իշխան՝ տիրադավ, գրկո՛ղ գորավար, դատավոր՝ դատը թերակազո՛ղ, և ռամիկ, որ՝ շարունակ թեր-

հաս՝ ինքն էլ՝ ինքնագործ ու ինքնահավան, նախատող, երբ որ ինքն է ծաղրելին, սիրված աշխարհո՛ղ, բնագրի կա՛զմ, հանդիմանողի գլխին դատախա՛զ: Եվ քանզի այս իսկ որակումներից վեհագույնները ես կրում էի ինչ որ ժամանակ, իսկ վատթարագույն մասերը հետո եկան հասան ինձ՝ դարձա այդպիսի՛ն: Արդ, խարդախության հաճախումներից վնասակար այդ բաներով ընկա, որոնցից ոմանց ինքը՛ս խաբվեցի, որպես մի հիմա՛ր, ոմանց էլ ինքը՛ս տրեցի, այդչա՛փ տկար լինելով՝ ինքնակամորեն՝ ինձ մահուն տալով, ինքնակամորեն՝ ինքս ինձ մատնելով:

Բ

Արդ վերում գրած մասերից որո՞նք, որ Քեզ ատելի բաներ են և ինձ մահվամբ կորցնող Քո պաշտամունքին ընծա մատուցեմ. ապակախությամբ պարագրյալս դրանցից ո՞րոնք ամենասուրբ Քո մեծությանդ առաջ բերեմ կանգնեցնեմ, և կամ ո՞ր չափի հեռատեսորեն պիտի համբերես այսքան պարտքերիս, որքա՞նք ներես, և ինչպե՞ս լռես. Ինչպե՞ս պիտի Դու դրանք հանդուրժես, իբր չե՞ս մատնի գանահարության ինձ, որ արժան եմ մահվամբ սատակման: Սակայն իմ նման այն Հոգիներին, որ գտնվում են խավարումի մեջ անճառագայթող՝ Քո Ողորմության Լույսով հանդիպիր, բրժկելու և քավելու նրանց, կենդանացնելու՝ Ջորդղությամբ Քո անվթարելի: Եվ Քե՛զ է վայել փա՛ռքն ամենայնի, հավիտյա՛նս: Ամէ՛ն:



**Հեծանքների մի նոր հավելված նույն իսկ հակողից, նույն աղերսներով և մաղթանքների խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ՌԻՂՂՎԱԾ ԱՍԾԾՈՒՆ ԲԱՆ ԾԷ**

Ա

**Քրիստոս՝ Աստված**, Անո՛ն ահավոր, Տեսա՛կ մեծության, Դո՛ւ, անքննելի բարձրության պատկեր և զորություն, որ՝ սահմաններ չունի, փրկության Լույսի ժայռե՛ կերպարանք և Պաշտպա՛ն կյանքի, Դո՛ւն արքայության վերնային հանգիստ մտնելու համար, և Ճանապարհ, որ՝ հանդարտությամբ է ընթացնում մարդուն, Ապավինություն անվերջ նորոգող, և երանութ

յո՛ւն մեզ անտիրական, Դու՛ իշխանությո՛ւն վերն ամենակալ՝ ամենայն տեսակ էությունների, օրհնվելու համար դեպի՝ Քեզ կանչող Ավետումի՛ Զայն, Բերկրությա՛ն բարբառ, Անմահությա՛ն դեզ, և անճառելի՛ Մեկ Աստծո Որդի: Ինչ անհար է ինձ համար անել՝ այդ դյուրի՛ն է Քեզ, ինչ անհաս՛ է ինձ՝ Քո էության մեջ այդ կա՛ սահմանված, ինչ որ ինձ համար անանցանելի՛ Դու մե՛կ հպումով բացում ես ճամփան, ինչ որ ծածուկ է եղկելուս համար՝ Քո միջոցով է երանությունն այդ մերձավորում մեզ, ինձ անկարելին՝ Քեզ կատարելի՛ ամեն ժամանակ, ինչ որ ինձ համար անկշռելի՛ անճառիզ համար չափվա՛ծ է արդեն, ինչ որ ինձ համար հուսահատություն, Քեզ համար առի՛թ ինձ սփոփելու, ինչ որ ինձ համար անբժշկելի՛ անվտանգ է Քեզ, ինչ ինձ հեծեծանք ինդությո՛ւն է Քեզ, ծանրերն ինձ համար՝ Քեզ թեթևագո՛ւն, ինչ եղծում են ինձ՝ նվաճումների՛դ մեջ են գրանցված Քո՛ գորեղությամբ, ինչ որ ինձ համար կորած է արդեն՝ գտնվա՛ծ է Քեզնից, ինձ համար ինչ որ անճառելի է, բացարձակությո՛ւն՝ Քեզ համար դրանք հաշվվում են թվո՛ւյ, մռայլեցնում է ինչ որ ինձ, նույնը՝ ճառագայթներ է Քեզնից ծագեցնում, ինչ անթիվ է ինձ, ողջն ամփոփված է ու բովանդակված՝ օրհնյա՛լ Քո ձեռքում, ինչ ինձ սոսկալի՛ Քեզ դյուրի՛ն մի բան, ինձ ինչ փախչելի՛ վանվո՛ւմ են Քեզնից, ինձ համար ինչ որ անհաղթ են թվում՝ Քեզ համար դրանք միշտ հերքվում են ամենադյուրին եղանակներով, ինչ որ ինձ համար բան են մահաբե՛ր, գլանք՝ ամենը՝ էականության գորությանը առաջ՝ ընդհանրապես գոյությո՛ւն էլ չեն:

**Բ**

Այլ Դու, Ողորմա՛ծ, Աստվա՛ծ բոլորի, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, այս ամենի մեջ մի՛շտ ես գորավոր՝ ելքի հնարներ գործադրելով, եթե մեզ գթաս՝ Հանուն Հո՛րդ Օրհնյալ՝ Անվան ու Փառքի մեծությունների, և հանո՛ւն Հոգուդ կամքի գթության, որ է՛ Սրբասուրբ: Տաժանավորիս վիճակի՛ն նայիր՝ կրքերից եղկված ու հանդիմանված հայտնության Լույսով, որ սրտիս խորքից՝ ի՛նքս եմ իմ հանդեպ դարձել դատախազ: Գթությամբ նայիր՝ ամենայն կողմից խակությամբ լցված բնությանը իմ, և իմ՝ վերքերին բժշկությո՛ւնըդ պարգևիր, Օրհնյա՛լ, և հնարավոր դարձրու ելնել այս կորուստներից. անջատիր մահից այս բազմամասնյա, ապականվածիս կյանքի՛ շավիղըդ սիրո՛յ կամեցիր, նորոգուլթ

յո՛ւնդ՝ եղծմամբ ընկածիս, ամբարշտացած այս տառապալիս՝ հույսի մի մո՛տք բաց: Եթե ես այսպես կամքն իմ ցույց տվի աննմանորեն, որչա՛փ առավել՝ Դո՛ւ, որ բնությամբ՝ բարերարության մեջ ես Ընտանի: Եթե ես այս իմ փշերի միջից քաղցրության պտուղ Քեզ ընծայեցի, որչա՛փ առավել, Դո՛ւ՝ Մա՛ւրդ կյանքի, ինձ անմահության՝ ճաշակ կրնձպես, ատելիներիս համար եթե ես ողորմություններ մաղթեցի Քեզնով, Դու քոնիներին, Հզո՛րդ ամենա, ինչպե՛ս կարող է կրկնակի՛ չափով ողորմությունդ պարզև չբերես, որ Աննվա՛զ ես առատությունից:

**Գ**

Արդ, Մեծությանդ նայիր, ո՛վ Բարձրյալ, և ապա նայիր փոքրությանը իմ, և իմ անհամար մեղքերի համար խոստովանությանս սակա՛վն ընդունիր, որովհետև որ՝ ամենա՛յն բան է իր ամբողջությամբ Քեզ տեսանելի: Վեմի դայթելը երբ գրի չառար, փոքր ավազիս սասանկեն ևս բան մի՛ համարիր, ինձ հե՛տ էլ վարվիր՝ ինչպես Դավթի հետ. մեղա՛ էր ասում՝ իսկո՛ւյն պարտքերի պատիժն անցնում էր նրա վրայից, նույնկերպ ի՛նձ հետ էլ, հեծեծանքներս լսելու պահին՝ Քո համբերության լի քաղցրությամբ պատիժներս հանիր ու հեռացրու, որ ամենքի՛ն ես կյանքի հիմբ ու կամք՝ անաչառորեն ու առատապես՝ Մշտահա՛ղթ բարի ու բազմաիմաստ, որ ինձ՝ ստրուկիս ամենահետին չե՛ս էլ նախատում՝ այդպես մնալով ամենաստեղծդ նաև՝ Ողորմա՛ծ: Ինձ, որ արյա՛մբըդ բուժեցիր, Գթա՛ծ, կործանման մի՛ տուր, այլ վերստացի՛ր՝ կյանքի կոչելով, որովհետև որ՝ իմ փրկությունը Քեզնո՛ւյ է միայն, և քավությունը Քեզնի՛ց է պարզև, և Քե՛զ է վաշել փա՛ռքն ամենայնի, հավիտյա՛նս: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղբյուրներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻԺ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՄՈՒՆ  
ԲԱՆ ԾԸ**

**Ա**

Օրհնյա՛լ Տէ՛ր Հիսուս, Օրհնյա՛լ Քո Հոր հե՛տ կամք ու հաճությամբ Սրբության Հոգու, օրհնվածները ամեն-ամենայն՝ Քո Օրհնելով է, որ

օրհնակեցին, Դու միայնդ՝ Օրհնյալ, Որդի՛ Օրհնյալի, չունեն՛մ թագավոր, որ իշխի շնչիս, բացի Քեզանից, Քրիստո՛ս իմ Տէր: Ա՛յս է օրհնութիւնն Հակոբի վրա և այս մասին է ասում Եսային. «Այնժամ, երբ մեկի մեղքն է վերցնում՝ օրհնում է նրան նո՛ւյն ակնթարթում»: Արդ, ողորմի՛ր ինձ, Տէ՛ր իմ բարեգութ, ըստ այդ նախնական Քո սովորութեան, և այս բանական անո՛թս էլ օրհնիր, ըստ Դավթի ձայնի և ըստ Մովսեսի, որ փրկութիւնը վրաս ժամանի Քո՛ խոսքի կամքով, և վրաս Հասնի քաղութիւնը Քո և ես օրհնվա՛ծ լինեմ Քեզանից: Ողորմա՛ծ արբա, Տէ՛ր իմ երկնավոր, Հրաշագործի՛ր ինձ Աստվածապետ, այնպես, ինչպես որ երկար տարիներ իր մահճին դամբած անդամալուծին, որ գտնվում էր Հիվանդների Հետ Բեթճեզղայի Հինգ սրահների մեջ, դրանցից մեկում պառկած էր անշարժ, և թերահավատ էր կրկնակի, երեսնու՛թ տարվա ախտացած էր նա՛ լո՛ւծ իր Հոգեբով, և չզլացար լինել ձեռնահաս և բժշկեցի՛ր, թեպետ դիտեր, որ անբուժելի չարութիւն ուներ, որ Քո դեմ նյութեց օրը մատնութեան դառն այդ գիշերվա տիրադավութեամբ մարտելու ելած՝ Թագավոր Մեծիդ և Բարերարիդ, Երախտավորիդ բարիքի փոխան:

Բ

Ու թեպետ կանխավ նրան այդ մասին զգուշացրիր, թե՛ մի՛ մեղանչիր այլևս արդեն, որ ավելի մեծ չարիք չգա քեզ, բայց ոչինչ նրան չկասեցրեց լինել ձեռներեց, որ Հենց առաջին դատողների Հետ Հանձնի Քեզ խաչին: Եվ Դու այդպիսի կախարդ Չարուին, մահվան ոտքն ընկած չարաշուք մարդուն ողորմա՛ծ եղար, Անճա՛ռ Բարութիւն, և չտեսնված սխրալիութեամբ՝ մարդասիրութիւն, և սարսափելի՛-մե՛ծ ներողութիւն, սոսկալի՛ չափի Հեռամտութիւն ու Համբերութիւն, և անբավելի քաղցրութիւն Ես Դու, Հեզութեան տիպա՛ր փառատրելի: Որ գթութիւնից Հաղթվում, սակայն՝ չե՛ս թխնամանում, ողորմութիւնից պարտվում թեպետ, բայց չե՛ս պարսավվում, մարդասիրութեամբ բռնադատվում, բայց չե՛ս դատափետվում, Հարկադրվում Ես Քո բարութիւնից և չե՛ս Հայճոյվում, սիրուց ստիպվում, և՛ չե՛ս բամբասվում, և իմ Քեզ դարձին պաղատում ես Դու անդադրում կամքով ու չե՛ս ձանձրանում, ապերասանիս ետևից վազում, սակայն չե՛ս լքում, ինձ՝ չլսողիս շարունակ կանչում ու չե՛ս բարկանում, մեղավորվածիս մոտ Ես չտապում ու կանգ չե՛ս առնում: Բարի Ես վար-

վում միշտ չարիս Հանդեպ և ներողն Ես իմ բոլոր պարտքերի, և մեղավորիս քաղութիւնն Ես Դու և խավարյալիս առջև բացվող Լույս, ինձ՝ մահացածին կյանք Ես վերստին:

Գ

Նույն բանն են ասում բոլոր Հոգեշունչ գրքերն օգտակար, որոնք որ Հաճախ պտուղ են տալիս՝ երկնավոր, անճա՛ռ և զարմանալի՛: Ամենասօրհնյալ, Ամենապարզե՛լ, ինձ էլ նո՛ւյնն ասա, որ թշվառութեան մեջ եմ գտնվում. «Վե՛ր կաց, վերցրո՛ւ կործանման վայրից քո այդ մեղքերի մահիճը արդեն, Ինձ Հետևելով ե՛կ ու ժամանի՛ր Հանգիստ-անդորրը անաշխատ կյանքի»: Ամենակարող խոսքիդ սուտերի այդ Հրամանով՝ կտրի՛ր, դե՛ն գցիր դժոխազընա պինդ կապանքները մահազգեստիս, և Հանգույցներն այդ՝ քանդի՛ր, բա՛ց արա, որ ոգեպահանջ սաստկութեանն են ճնշելով խեղդում: Մահու արժանուս ազատութիւնըդ առաքիր վերին, Քո աստվածային Բանիդ կենսաբեր ինձ այցելութեամբ՝ անանց բերկրութիւն շնորհիր, Աստվա՛ծ: Եվ ո՛չ թե միայն երբեմն ազդելով և կամ օրեօր տեղափոխելով այցելութիւնդ ինձ, որովհետև որ, ծանրութիւնը իմ մեղքերի բեռան ողջ իմ թիկունքն է տիրել ու ճնշում, և իմ ազդերն են կորանում ներքև՝ Հայելով արդեն բաց դժոխքի մեջ, թող ուժգնորեն գոռոզ բռնութեան չենթարկվե՛մ Հանկարծ, և չլինի՛ թե զենքերս Հոգեւոր կյանքի տեղ մահվանն իմ ծառայեցնեմ: Այլ Դու օգնի՛ր ինձ, Բարի՛ Վշտակից, մահվան երկունքիս Հեծեծման պահին՝ վերցնելով ինձնից փա՛յտն սպանումի, ինչպես երբեմն պահակի ուսից փայտն այդ վերցրիր, և կառուցեցիր Նշանը փառքիդ ու վայելչութեան՝ Արի՛ գորութեան Քո Հաղթանակով, Ամո՛ւր Հավատով ու Կարծր ուսով՝ նաև ի՛մ խաչը բեռեկելով Քեզ: Եվ Քե՛զ՝ Հորդդ Հետ Սրբութեան Հոգուդ, Փա՛ւր, Իշխանութիւն, Հավիտյա՛նս: Ամէ՛ն:





**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՒՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏԾՈՒՆ  
ԲԱՆ ԾԹ**

**Ա**

Ես հաջատուս եմ և վկայածս՝ գիտակցաբար եմ խոսում ու գրում, իմ ոգուն ազդող իմաստությունը և տեսողությունն իմ ուշիմությունս՝ այդ Քեզանից է ներգործվել իմ մեջ, որովհետև որ, Քե՛զ՝ Բարերարի՛դ, առավել ևս ըղձալի՛ են, երբ՝ մեղավորներն են առջևդ աղաչում, քան թե խնդրանքներն են արդարների, որովհետև որ՝ մեկը նրանցից՝ իր պարտությունն է հայտնում Քո առջև և սպասում է Քո շնորհներին, ու ճանաչելով բնությունը իր՝ նա ինքն իրեն է անվերջ նախատում մեծ կշտամբությունք՝ և մարտիկի պես պատերազմ վարում իր մեղքերի դեմ, դա՛ն քննարկմամբ նա մի ծածկատես դատախազ դարձած՝ ատյան է կազմում ի՛ր անձի հանդեպ: Սակայն մյուսը, նայելով իր իսկ բարի արդյունքին, իր վստահության ձեռքերի հենքով անձն է հանում վեր և մոռանում է մեղավոր մարդու բնությունը իր և պարզեմբ է նա ակնկալում, քան ողորմություն: Այդ բանի համար մեկը բազմաթիվ ճառեր երկնում, ողորմությանդ փողն է բարբառում այդ ճառերի մեջ, իսկ մյուսի մոտ լռել են սրանք, ո՛վ Անքննելի և ո՛վ Ահավոր, Դո՛ւ որ խնամքն Ես յուրաքանչյուրի, և ամաչո՛ւմ եմ մեզ համար ասել, թե երկրավորներիս եղած գործերի պատմությունները բերել, Քոնոնցից առաջ ենք դրել: Արդ, արի՛, Տէ՛ր իմ, Աջիցդ առավել թող չգորանա՛ աջն հողեղենի և ողորմություններդ անթի՛վ-անհամար՝ թող չկռվեն ջանքի հետ մարդկանց:

**Բ**

Առողջ անդամներ ունեցողները, իրավ է, չունեն բժշկման կարիք, և տեսնողները պետք չունեն բնավ, որ մեկը նրանց լինի առաջնորդ, և ունեցավածքով փարթժամ-կուշտերը չեն էլ դեղերում լիացածների դռների առաջ, և ամեն ինչով հղիփացածները չեն ակնկալում՝ փշրանք ստանալ հացի սեղանից, իսկ սուրբ վարքերով բնակվողները՝ կարոտ չեն մնում ողորմածություն: Եվ արդ, ինձ գեթ, որ ողորմես ինձ, Բարձրյա՛լ,

Երկնավո՛ր, Հզո՛րդ ամենա, որովհետև որ վարանման մեջ եմ ամենատխուր իմ վիճակներով: Ու եթե Հոբին ես նմանվելի, նրա նման էլ կկոչեի ինձ արդար-անարա՛տ, եթե Մովսեսին՝ նրա պես վստա՛հ պիտի ասեի, թե. «Ճանաչո՛ւմ է Տէրն իրեններին», եթե լինեի Դավիթի նման պիտի ասեի. «Արդարություն և իրավունքներդ գործադրեցի՛», դարձյալ այլ մի խոսք, որը ավելի բարձր է, քան թե՛ այն բնությունը, որ մարմինն ունի. «Եթե սրտիս մեջ մեղքեր տեսնեի՛ Տէրն ինձ չէ՛ր լսի»: Եթե լինեի նման Եղիային, պիտի ասեի. «Ես ա՛յրն եմ Աստծո՛», թե Երեմիային՝ ճշմարտությունդ կորինակեի՛ ի՛մ իսկ անձի մեջ, թե Եզեկիային՝ պիտի պարծեի՛. «Բարի բարքերով և իրավացի՛ առաջ քայլեցի՛ Քո՛ արդարությամբ», եթե Պողոսին, ասեի պիտի. «Ես բնակարան-ընդունարա՛նն եմ Տէր Աստծո Բանի՛»:

**Գ**

Իսկ ես անօրեն մեկը լինելով, որ օրենքների գիտությունն ունի, ո՛չ միայն նրանց իմ նմանությունք անձն իմ չեմ կարող ընծայաբերել հարգի խոսքերով, այլ՝ չա՛ր լինելով, բարերարության խոսքերը նրանց դեռ հասո՛ւ էլ չեմ առջևդ բերել և հիշատակել. բոլոր գոյերից բարեհույսված անուկը, Հզո՛ր, ամբարշտացած լեզվովս ինչպե՛ս պիտ գովեղեմ Քեզ: Մատուցի՛ր, ինձ, Տէ՛ր, Ողբ՝ փրկության, Ա՛ջ՝ պաշտպանության, Ձե՛նք՝ այցելության, Բարի՛ հրաման, Լո՛ւյս ողորմության, Բա՛ն նորոգության, Պատճա՛ռ քավության, նաև Գավազա՛ն՝ կյանքի օգնության: Որովհետև որ՝ Դո՛ւ միակ հույսն ես ապավինության, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, Օրհնյա՛լ Քո Հոր հետ, Սրբությունդ Հոգով հավիտյա՛նս հավե՛տ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՒՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏԾՈՒՆ  
ԲԱՆ Կ**

**Ա**

Արդ, վախելուչ է՛ օրհնաբանելը մեղավոր բերնով, ճշմարտությունը այդ մասին կանխավ սովորել էի ես մի առակից, նույն գովեստ-

ները ինչո՞ւ կրկնեմ մեղավոր շուրթիս աղաչանքներով, երբ պիտի անե՞ծք վաստակեմ միայն, ինչպես սաղմոսն է այդ մասին ասել: Որովհետև որ հարկ է նախ երգեմ ի՛մ վտանգները, նախատինքնե՛րս ի ցույց դնելով, և մերկ գրկիս մեջ շուշանի տեղակ ժողովեմ փշեր: Դավթի հետ ինչպե՞ս ես համարձակվեմ այս խոսքերն ասել. «Մեղավորների ատամները, Տէ՛ր, Դո՛ւ պիտի փշրես», դարձյալ, խոսքն այս, թե. «Անօրենները չպիտի՛ ապրեն աչքերիդ առջև», մյուսը դարձյալ. «Իմ դա՛տն էլ դատիր, Քո արդարության համաձայն, Տէ՛ր իմ, այն անբժուկյան համապատասխան, որ կա՛ իմ ներսում»: Եվ կամ խոսքը այս. «Չարիքներն ելան ու կատարվեցին մեղավորների շարքերի վրա», հաջորդը նաև. «Պիտի խորտակվեն մեղավորների, նաև չարերի բազուկները նենգ», և սրանց նման հետևյալները. «Թե որդպալթնե՛ր, թե հո՛ւր, թե ծծո՛ւմք մեղավորների վրա պիտ տեղան», հաջորդ խոսքը թե. «Նենգավոր շուրթեր ունեցողներին և նաև նրանց, ովքեր որ ունեն մեծաբան լեզու՝ Տէ՛րն Ի՛նքը պիտի խփի-սատկացնի՛», կամ այս մեկը, թե. «Սի՛րտն իմ փորձեցիր՝ անիրավություն չգտա՛ր այնտեղ»: Կամ սրա նման հաջորդողը, թե. «Ես պահեցի Քո ճանապարհները խստորեն՝ ուղիղ», մյուս խոսքն ևս. «Ես երևացի երեսիդ առջև՝ ի՛մ արդարությամբ», կամ թե. «Ես եղա անբի՛ծ, ինչպես Նա՛», կամ այս մյուսը. «Իմ արդարության համեմատ պիտի Տէ՛րն ինձ հատուցի և ըստ ձեռքերիս ազնի՛վ սրբության»: Կամ ինչպե՞ս պիտի ստույգությունս ինձնից ինքս ծանակեմ, որ կարողանամ սրբի հետ ասել. «Ես սրբությամբ եմ ձեռքն իմ լվացել»: Ես նաև իրերերի մեջ գտնվելով՝ ինչպե՞ս կարող եմ ամբարիշտների աթոռների դեմ ելնել ու խոսել, կամ թշվառացած իմ այս վիճակում մեծ երջանիկի նման պարծենալ. «Դա՛տ արա ինձ, Տէ՛ր, որովհետև որ՝ ես անբժուկյամբ ճամփաս քայլեցի»: Օտարս ինչպե՞ս ամենայն բարին, Քե՛զ, Գիտեցողի՛դ, այս բանն աղաչեմ. «Մի՛ համարիր ինձ ամբարիշտներից»: Ինքս մեղավոր լինելով ինչպե՞ս այլոց անիծեմ, թե. «Տու՛ր նրանց, Տէ՛ր, ըստ նրա՛նց գործի», իսկ այսքան չափն էլ համարձակվեցի՛ ըստ խոսքիդ կարգի:

## Բ

Թե նախորդ բաժնի վերջին խոսքերը ես այստեղ դնեմ ինձ առաջաբան, «Տու՛ր նրանց, Տէ՛ր իմ, ըստ նրա՛նց գործի», կրկին ցավերն են գալիս ու ճնշում, և դառնություններն հաճա-

խում վրաս: Բայց արտասուքի շեղջերից փոքր ինչ մի չափ առնելով՝ բավականացա Սաղմոսաբանի ձայնով ընտանի՛ հանապազորդյան հանդիմանություն, որ պարտավորիս կշտամբում է միշտ: Եվ նույն բանում է ինձ հանդիմանում քառասնիներորդ սաղմոսը նաև, որ գարչացածիս խայտառակությունն ի հայտ է անում ակնհայտորեն՝ բերա՛նս է խցում՝ եղկելի անձն իմ ցուցադրելով, և փառաբանել չե՛մ կարողանում, որովհետև որ՝ իր աստվածային ձայնով դատախազ լինելով արդար՝ ինձ կյանքի հանդեպ ակնկալումից վանում է հեռո՛ւ, և իր պատենչից վրաս են գալիս մահացո՛ւ քարեր: Քանի որ, եթե չար բան է, երբ որ օտարի կողմից ինքդ ես անիծվում, սակայն, երբ ինքդ ես քո անձն անիծում, կրկնակի՛ է չարիքն ավելի: Իսկ երբ օրենք է՝ մերձավորներից չստանալ անե՞ծք, ապա, երբ որ այդ Ամենատեսիլը կողմից է լինում, ուղեկցվում է միշտ արյան կրքերի տաժանմունքներով, և աղետներից ծագած վշտերով, խեթերո՛վ մտքի: Բայց եթե մեկը խոնարհությունից անձնատուր դառնա այդ տաժանքներին, և ինքը իրեն նախատի՛, դատի՛ և հանդիմանի՛ կշտամբանքներով, ապա այդտեսակ խոստովանությամբ Ամենաիշխան շուրթերիդ կողմից, Վերի՛ն Բերանով պիտի օրհնվի, որովհետև նա ճշգրիտ կերպով այդպես թարգմանեց դարձն իր դեպի Քեզ՝ կյանքի հիմքերից չհեռանալով, և դեռ ավելին՝ սահմանմամբ սիրո իր պարտքի արմատն այդպե՛ս նա կտրեց՝ և ո՛չ թե տիրվեց, ո՛չ թե իշխվեց խարդավողների կամ չարաբանող բանակի կողմից, այլ որպես ոչխար, որ Քրիստոսի հոտին է պատկան՝ իր բժշկո՛ւմը գտավ այդպիսով, քանի որ դիմեց օգտաբե՛ր աղին, որ աղիների խոցերն է բուժում: Բայց անբանական բարօրություն է, երբ որ խմբերն են ասուն կենդանյաց դալար, ծաղկածին, կենսաձիր Բանի վայրում արածում, բայց իրենց մտքի թմբբանքին տրված՝ արոտների մեջ ճարակում են մա՛հ:

## Գ

Վերջին առակը կշտամբողական ինձ է հասցեյված, և դիպվածների, պատահմունքների չարություն խայթով՝ ակնարկում է ինձ, որ անձիս հանդեպ ի՛նքս իսկ նյութեցի՛ դարձնելով ինձ վառող կրակի տոչորումին կեր, և կրակներն այդ երկնից են հոսում իմ աստնարանիս՝ գազաթի՛ս վրա: Այս դեպքում ինչպե՞ս սաղմո-

սը կգա ինձ արդյունավետ օգնականելու, երբ որ ես նրա բազմերգությունից անպտո՛ղ եղա, և ինչպես Պողոսն է թելադրում՝ իմ նվագելը հոգուց չէ՛ր բնավ: Եվ ինչպե՞ս պիտի մարգարեի հետ Տէրունի խոսքը ես արտաբերեմ, մեղավորներից մեծը լինելով, պիտանիներից տկար ու նկուն՝ ասելու խոսքն այս. «Ինձանից հեռո՛ւ այն ամենքը, որ անօրենություն գործեր եք անում»: Եվ ինչպե՞ս պիտի պատվիրաններից բազմաթիվների իմ չպահելով, և՛ շնորհինը, օրենքինը և, երջանիկի հետ նույնը բարբառեմ, որ նախ ի՛նքն արեց, պահե՛ց ամբոն էլ, ապա կանոններ դարձնելով դրանք՝ Հանձնարարեց մե՛զ. «Քանզի Քո ծառան, այս ամենը Տէ՛ր, պահե՛ց Քո առաջ» և նաև հետո եկող խոսքերն էլ: Ինչպե՞ս պիտի ես՝ կյանքի իմաստից թափուրս իսպառ, երկյուղածների հետ միաբանված՝ Տիրոջը օրհնեմ: Ինչպե՞ս պիտի ես՝ մեծ մաղթողի հետ կցորդված ասեմ. «Մի՛ բան խնդրեցի ես իմ Տիրոջից, որ վայելչությունը նրա տեսնեմ և իր տաճարում հրամաններ տամ»: Ինչպե՞ս պիտի ես ձեռնամուխ լինեմ օրհնություն խոսքին, երբ լսում եմ, թե. «Օրհնաբանելը վայել է նրա՛նց, ովքեր ուղի՛ղ են իրենց սրտերում»: Ինչպե՞ս պիտի ես իմ իսկ շուրթերով անձն իմ անիծեմ՝ ասելով հետո եկող տողերն էլ՝ նույն հոլովույթից. «Տիրոջ երեսն է չարագործների դե՛մ ու հանդիման, որ բնաջնջի՛ երկրի երեսից հիշատակները նրանց ունեցած»: Կամ ինչպե՞ս պիտի մյուս խոսքն ասեմ. «Չարերը պիտի հապշտապորեն ընկնեն՝ սատակմամբ», կամ այն խոսքը, որ՝ ինձ է պատշաճում ակնհայտորեն՝ ամբարշտությունս իմ դեմ բացելով. «Ամբարշտների բազուկներն իսպա՛ռ պիտի խորտակվեն»: Ես ինչպե՞ս պիտի իմ սատակումը ինքս պաղատեմ՝ ասելով այսպես, թե. «Պիտի կորչեն մեղավորները, ամենքն, անխտի՛ր»: Ես ինչպե՞ս պիտի բազում կողմերում շրջող իմ լեզվով օրհնություն խոսքն այս ի լուր հնչեցնեմ. «Ասացի պահեմ ճամփաները իմ և մեղք չգործեմ լեզվովս երբեք»: Մեղքի փշերով խեղդվող ինչպե՞ս՝ Անարատի մոտ խոսեմ պարծանքով. «Իմ անբժուկյա՛մբ ընդունեցիր ինձ»: Ինչպե՞ս պիտի ես, որ թե՛ մեղավոր, և թե՛ կրկնակի պատժի եմ արժանի՝ իմ նմաններից դո՛ւրս դնեմ ինքս ինձ՝ որպեսզի ապրեմ՝ նրանցից լրի՛վ իմ ազատումով. «Մեղավո՛ր մարդուց, նենգավո՛ր մարդուց՝ փրկի՛ր ինձ, Աստվա՛ծ»:

Ինչպե՞ս պիտի ես՝ որ իբրև արդեն կուսպաշտող չեմ, անպատկառորեն ինձ պերճացնելով, դատարկ պանծանքով Դավթի հետ ասեմ. «Մի՞թե մոռացանք անվանումը մեր ազատիչ Աստծո, և կամ երբեք ձեռք երկարեցի՞նք այլ աստվածների, որ օտա՛ր են մեզ»: Քանզի նրանք, որ մեղքի գարշություն մեջ խոնարհվեցին՝ նրանք Տիրոջ դեմ կուռքեր սարքեցին՝ պաշտելով դրանք՝ անասնապատկեր ախտ տարածողներ, պոռնկապատիր պատկերումներով ու կերպարներով և՛ Աստարտայի, Քամովսի նաև, Մեղքոմի անմիտ, պիղծ արձաններով, և՛ Թարահատա թարմատարի ախտավորության՝ կանացի պղծման զազրոտի տեսքով՝ իզանդամների անամոթությունա՛մբ, մե՛րկ, առանց ծածկո՛ւյթ՝ պիղծ ծանակությունա՛մբ: Ինչպե՞ս չամաչեմ նահատակի հետ խոսքն այս ասելու, որ այդ ամենին դիմադրաված՝ բարին ունեք միշտ. «Մենք ամեն օր ենք հանուն Քո մեռնում» և նույն կարգին է Հաջորդ սաղմոսն էլ: Իբրև թե հիմա՞ր, խենթ ու վատթարս ասե՛լ Հանդգնեմ, թե. «Իմ բերանը իմաստություններ լոկ պիտի պատմի, իսկ սիրտս՝ Հանձա՛ր»: Ես՝ մարդակորո՛ւյս, բայց որպես բարու կերպարանք առած՝ ինչպե՞ս մաղթեմ, թե. «Մարդահանոնների ոսկորները ողջ՝ ցրի՛վ-ցրի՛վ գան»: Ես ինչպե՞ս կրկնեմ արդեն երկրորդված մեծ բարությունն այն, թե. «Հաճո՛ւ եղա ես Տիրոջ առաջ՝ երկրում այն, ուր որ կյանք կա կենդանի»: Ինչպե՞ս պիտի ես անբավ մեղքերի տերն ու կրողս՝ արդարից առած այս խոսքն ասեմ, թե. «Ես ո՛չ մեղք ունեմ և ո՛չ էլ հանցանք, առա՛նց մեղքերի կյանքս ապրեցի և եղա ուղի՛ղ»: Ինչպե՞ս պիտի ինձ կորստյան մատնեմ՝ այս բանն ասելով. «Մի՛ ողորմիր, Տէ՛ր, նրանց, ովքեր որ անիրավության գործեր են անում», կամ. «Ինչպես մոմն է իր գլխին եղած կրակից հավվում, նույնի պես նաև՝ մեղավորնե՛րը Աստծոդ երեսից»:

Ապականացու փափկություններով գրգվածս ինչպե՞ս՝ ինձ հարմար գտնեմ խոսքն այս աննման. «Խոնարհեցիր՝ անձն իմ պահքերով», կամ այս բանն ընտիր. «Ազգակիցներս երբ որ նեղություն մեջ էին ընկնում՝ քո՛ւրձ էի հագնում, խոնարհվո՛ւմ էի, և տրտմո՛ւմ էի ինչպես սգավոր»: Ինչպե՞ս հանդարտվեմ իմ նմանների պատիժները միշտ իմ մեջ հիշելով. «Մեղավորները ամբողջ երկրի պիտի մինչև վերջ՝ Աստծո



բարկության՝ բաժակից հարբեն»։ Կամ մյուս բանը ինչպե՞ս ինքս ասեմ. «Մեղավորների եղջյուրները ողջ Դո՛ւ պիտի փշրես»։ Ինչպե՞ս պիտի ես ապերախտությունը Հակոբի հեգնեմ քարոզի խոսքով, որ սովերի հետ ճշմարտությունն եմ նաև վերցրել, սակայն նրանց հետ՝ նրանց թերությամբ մոռացման տվի երախտիքները Տէր Քրիստոսի՝ Իր Աստվածային բերած արվեստով՝ ինչպե՞ս փրկության, և քան թե նրանք՝ Մովսեսի ցալի գորավարությամբ, ցուպն այդ մերժեցին, որով մարգարեն գործեց բազմաթիվ սքանչելիքներ, որ օրինակն էր նկարագրում տնտեսությունը Տէրունականի։ Հարուցյալներին ինչպե՞ս պիտի ես դեռերի գործած աղետը ցույց տամ, համարելով, թե՛ խուժեղձ ազգերի գնդեր են օտար, որոնք. «Թոչնի պես հարձակմամբ իջան այն դիրքին, որ՝ բարիներն էին մեզանում եղած, սակայն գիշատիչ թռչունները այդ լրի՛վ կուրացան՝ օդի այսերի աղետը այդպես ակնհայտելով»։ Որպես Բանի սերմ, որ հողի տեղակ ընկնում է ճամփին, միաբանվածս չարի կամքի հետ՝ ինչպե՞ս պիտի ինձ սուրբ այր անվանեմ, կամ ինչպե՞ս պիտի չարի հետ նույն իսկ շափղում լինելով, նմանակցելով իր պատերազմին՝ օձոտող մտքիս գաղաճամարտության գուպարումները անվանեմ բարուց, երբ այդ ամենը ե՛ս գորացրի՝ պիղծ բանասարկուի հնարանքներին դարձած գործակից։ Եվ չունեմ իմ մեջ այն աղերսը, թե. «Մի՛ լռիր, Աստված, և մի՛ դադարիր», և կամ. «Սրբերիդ մասին խորհելով՝ այսպե՛ս ասացին», Սաղմոսարանի աղոթքում եղած այլ խոսքեր ևս։ Որովհետև որ՝ պատահական էլ Սաղմոսարանից վերցնենք խոսքեր, գեներբ՛ր են դրանք՝ մոլի դեերի բռնություն վրա և ճակատելու նրանց ներկայիս խոտվության դեմ, և նաև նրանց չար մշակություն։

Ձ

Իսկ Քո սրբերին, Տէ՛ր իմ Քրիստոս, Որդի՛ Բարձրյալ Վեհամեծք Աստծո, պահե՛ս -պահպանե՛ս, ամրացնե՛ս նրանց երկնային գործիդ շրջափակությունը, պահե՛ս հողմերի խաբո՛ղ, մոլորո՛ղ, շե՛ղ ընթացքներից՝ Քո ինչպե՛ս Լույսով մեզ պաշտպանելով, որովհետև որ՝ գուցե գտնվեն վրաս բազմաթիվ անօրինություններ, բայց՝ ո՛չ հայհոյանք։ Իսկ Դու իմ նման ամբարիշտներին կորուստ չտարար, այլ թախանձանքով ամենագորով՝ ջրհեղեղի մեջ կործանվող բոլոր գազրագործների համար էլ անգամ Սուրբըդ վշտացար,

և նրանց մահերը տաղտկալի՛ դժվար տանելով՝ ասացիր այսպես խո՛սք զարմանալի. «Չարագործ մարդկանց գործերի համար՝ երկիրն այլևս չե՛մ անիծելու ավելին, քան կա՛»։ Եվ մխիթարվում, պարարվում ես Դու սատակման արժան անմաքուրներին կյանք պարգևելով։ Եվ երբեմն ասած դգմի առակով՝ արդեն կործանման արժանուն Ի՛նքդ էլ եղար ողորմած, իսկ մեկ ուրիշից Ի՛նքդդ նեղացար՝ սաստիկ վտանգում տեսնելով նրան, և անձրևի դալը կապելով՝ դարման դարձրի ուրացողներին՝։ Եվ անճառելի բարերարության տարբեր տեսակներ՝ դարձան տոնելի՛ Քո՛ պարգևումով, իսկ վերջում ահա, վերջին օրերին՝ առաքյալներիդ ոսկեբան ձեռքով հասարակության անբարեհամբույր հեռավորներին հրամայեցիր քաղցրաճաշակ կյանքի ողջուններ։ Ահա վրաս էլ ցողի՛ր, Ո՛վ Օրհնյալ, գթություններիդ սերը հայրենի՛ կենդանի՛ կյանքով, որովհետև որ՝ ես փրկվում եմ՝ ամենաառատ Քո այցելություն բերած քավությունը։ Եվ Քեզ Հորդ հետ, նաև Սրբությունըդ Հոգու հետ մեկտեղ՝ Փա՛նք՝ հավիտյանս հավիտենից։ Ամէ՛ն։



**Հեծեճանքների մի նոր հավելված  
նույն իսկ հակողից, նույն  
ասող երանքով և մաղթանքների խոսքով միջնորդված**

**ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍԾՄՈՒՆ  
ԲԱՆ ԿԱ**

Ա

Եվ ինչպե՞ս է պետք, որ այս սաղմոսից նման վեհ խոսքեր ինքս էլ գործածեմ, որ նախատինք են ինձ միանգամայն, տևական նզովք ու անտանելի դատապարտություն, և ես ամեն օր տավրիցս լարած՝ ինձ նզո՛վք երգեմ և նախատինքնե՛ր։ Քանզի երբեք եղա՞մ մի անգամ, այդ երջանիկին գեթ ստվերի չափ իմ նմանվելով, դատապարտյալս՝ նրան միացած այս խոսքերն ասեմ. «Թո՛ւյր սրտով մարդը ինձ մոտիկ չեկավ»։ Եվ ինչպե՞ս պիտի մյուս տների կարգադրությունը, այդ խոսքից հետո՛ էլ դե՛ռ առավել զարհուրեցուցիչ խոսքերով ընտիր հնար ունենամ միաբան խոսել կանոններ պահող օրինավորին ընկերակցելով, երնել-կանգնելով գինվորի՛ կողքին, և թագավորի, և՛ մարմնական հրամայողի՛, նրանց, ովքեր որ՝ երկնայինների համար՝ են արդեն համբու-

րելիներ, նրանց միաբան՝ ասելով այսպես. «Կյանքիս մեջ երբեք չեղա հուսահատ»։ Ես, որ պատմողն եմ Ավետարանի, Նորի՛ աշակերտ, անմասն եմ ահա՛ բարեկարգված այդ նվաճումներից, որ հասանելի՛ էր նրանց համար։ Արդ, ինչպե՞ս պիտի իրավը խորհող արդարի կողքին գեները վերցնեմ՝ մեղավորներին մահվամբ զարկելու և առավտից վաղ արթնանալով միշտ պատրաստ լինեմ նրանց դեմ մարտել, ես, որ անդամներն իմ մարմնական չկարողացա գանահարելով՝ անգամ խրատել։ Որպե՞ս կարող եմ մասնակից լինել արիությունը մեծի այս խոսքին. «Տիրոջ քաղաքում սատակեցրի՛ անօրեններին», ես, որ իմ հոգու բծերն իսկ բուսած չկարողացա՛ իսպառ մեռցնել։ Եվ ինչո՞ւ ստեմ խոսքն այս գրողի, որ Հայտնում է մեզ. «Ես մոխիր կերա հացին փոխարեն»։ Ինչպե՞ս եղավ, որ ես իմ վշտերից կաթիլ՝ մի պղտոր արցունք չխառնած՝ արտասուքների հստակ աղբյուրով երգողի խոսքին, համարձակվելով նրա հետ ասեմ. «Իմ արցունքները խառնեցի ես իմ խմած ջրի հետ», և. «Ամեն գիշեր վիշտ ու տքնանքով այնքան եմ լալիս, որ անկողինս միշտ թրված է իմ արցունքներից»։ Սաղմոսների այս խոսքերից ո՞րոնք իմ մեղքերի մեջ արդեն մեռածիս ինձ վերագրեմ, երբ որ ողջ սրտով Տէր Աստծուն սիրողն իր վրա առավ իր նախնիների հանցանքներն անգամ, թե. «Մեղանչեցի՛նք մեր հայրերի հետ, անօրինացա՛նք, հանցա՛նք գործեցինք» - և վախճանը այն, որին սաղմոսն է մեզ մատնանշում, ի՛նձ է առավել վերաբերում, քան մեծն Խարպելին։ Ես խոսքերի ո՞ր հենարաններով ինքըս ինձ դասեմ բարիների մեջ, երբ որ մարդկային հնարանքների ա՛յս դեղը միայն պատիվ ստացավ, դեղ, որը սակայն չեկավ՝ դատավ ինձ։ Կերակուրների գարշուկություններից մինչ ի մահ քաղցած և հաճախակի ճգնություններից նվաղած հոգով՝ Հրեաների և Հեթանոսաց կրոնների մեջ. ըստ նրանց կարգի՝ ես սկսեցի հո՛ւյժ տարուբերվել։ Ել ինչպե՞ս պիտի արդարությունն իմ մնա հավիտյան, մի բան, որ՝ բնա՛վ չկատարեցի։

Բ

Եվ որպեսզի թե չտաղտկանամ նույնը կրկնելով՝ ես շտապում եմ համառոտելու խոսքերս այս մասին։ Եվ ի՞նչ պիտի ես ասեմ ավելին, որ աստվածաշունչ նվազի ձայնով արդեն ասվել է օրհնությանը Դավթի, թե. «Ամբողջ սրտով Քե՛զ խնդրեցի, Տէ՛ր»։ Այս խոսքի կողքին մեծե՛րն ավելի, թե. «Չարի բոլոր ճանապարհներ

րից՝ արգելի՛ր ոտքն իմ»։ Ե՛րբ կարողացա Դավթի հետ մեկտեղ բանն այս մատուցել. թե. «Սրտիս խորքում թաքուն պահեցի խոսքերդ բոլոր, որ երբեք մեղք չգործե՛մ Քո դեմ»։ Ունայնություն մեջ շրջողս ինչպե՞ս, իբրև ներսս եղած լեցունությունից՝ մաքուրների հետ նման ճառ ասեմ. թե. «Քո սահմանած պատվիրաններով՝ ատեցի՛ չարի ճանապարհները՝ բոլորն, անխտիր»։ Ինչո՞ւ պիտի ես Հեզի մեզ բերած ճշմարտության մեջ մշտնջենական երգմնագանցություն իմ ստույգությունը խառնեմ որպես կարգ՝ և ուխտ կապելով հավատարմիդ հետ այս խոսքերն ասեմ. «Ինչ երգվեցի՛ իրագործո՞ւմ եմ այդ ամենն ահա, և պահելո՞ւ եմ դատաստանները Քո արդարություն»։ Ինչպե՞ս պիտի ես իմ մահը գուժող հրեշտակի հետ, որ խիստ անհրաժեշտ վճիռն է բերում՝ Բանի պատգամն այս ինքս էլ կրկնեմ. «Փրկությունն Աստծո՛ հեռո՞ւ է մնում մեղավորներից»։ Ինչպե՞ս պիտի ես՝ չա՛րըս իսկպես, բարիների հետ նման խոսք գրեմ. «Տէրը բարի է նրանց հանդեպ, որ՝ ուղի՛ղ են սրտով», երբ բարիները Տիրոջ՛ պիտի բարի հատուցումն իրենց ստանան։ Ինչպե՞ս պիտի ես, որ վրիպել եմ ճշմարտությունից, փոխատրություն անաչառությունը համառոտելով, իրավունք տամ ինձ այսպես ասելու. «Թյուրընթացներին հափշտակելով՝ նրա՛նց հետ պիտի պատժի մեջ տանի նաև նրանց, որ՝ ծնում-գործում են անիրավություն»։ Ինչպե՞ս պիտի ես, ամոթահարըս, ինքս ինձ պատվաստեմ Աստվածազգեստ հար պանծալիին, նրա հետ այս իսկ խոսքերն ասելու. «Բարձրահոն չեղա՛վ սիրտն իմ երբեք, ո՛չ էլ աչքերըս հաճույք փնտրեցին», նաև բաներն այն, որ պատմվում են այս խոսքից հետո։ Ինչպե՞ս ընդունեմ մարմնականից վեր խոսքն անճառելի, որը որ տրվեց վհատյալներին, որպեսզի նրանք քաջալերությունը հույսո՛վ ամրանան, իսկ ես վատթարը՛ս, գանձը՛ս գեհեհեհի, ինչպե՞ս կարող եմ Տէր Աստծո Ղոզով օծյալ մարդու հետ նույն այս խոսքն ասել. «Սկզբի՛ց տեսար, որ իմ լեզվի տակ նենգություն չկա՛» և նույն սաղմոսի նախաձայնության սկզբից նրա ավարտը մինչև՝ անարժան եղա բարձրաձայնել։ Ե՛ս՝ դասակիցըս դժնասիրտ մարդկանց, նրանց համաբան, ե՛ս՝ ա՛յրս մահվան, որդի՛ս սատակման, ինչպե՞ս, ի՞նչ ոգով պիտի բարբառեմ բարեշնորհին միացած ձայնով. «Ատեցի՛ միշտ Քո ատելիներին» - և կամ հաջորդող խոսքերը մյուս։ Ինչպե՞ս պիտի ես մեծ վստահությունը տոնելի Վեհի, իմ աչ-

խարհի մեջ աշխարհող անձով ոգիս ընծայեմ որպես դատերից հեռու և ազատ, և սուրբ պսակով պսակվածներին դարձած միաբան՝ վե՛ր բարձրացնեմ ձայն իմ դեպի Քեզ. թե. «Փորձի՛ր, ինձ, Տէ՛ր, Տե՛ս, անօրինություններ կա՞ն իմ ձեռքերին», հավելած նաև սրան հաջորդող խոսքերը ընտիր: Ինչպե՞ս կարող եմ ես այլոց նման աղոթքով ապրել՝ ձայնակից դարձած հուսացողներով, թե. «Պահի՛ր ինձ, Տէ՛ր, մեղավորի և չար մարդու ձեռքից»: Ինչպե՞ս պիտի ես ձեռքերս դեպի երկինք բարձրացնեմ՝ փառավոր ու վե՛հ մարդկանց հետ մեկտեղ Աստուծո՞ւ մաղթելու, թե. «Ի՛նչ ես հույսն իմ, բաժինս կյանքի՞ կենդանիների բնակավայրում»: Ինչպե՞ս պիտի ես, ճգնավորի հետ ընկերակցելով, ինքս էլ նրա պես իբրև ճգնավոր, իմ վարքով տարած պսակն հաղթության, Քեզ՝ Թագավորիդ մատուցանելով, և առավել, քան եղած օրինակն աղերս աղոթքի, ինքս էլ խնդրեմ, թե. «Քո արդարները պիտի սպասե՛ն, մինչև որ, Տէ՛ր, ինձ հատուցո՞ւմ առնես»:

Գ

Բարեբանված է այս իմաստն հոգևոր, նմանվում է և Տէրունի գործին, ուր որ փորձիչն է միշտ ամոթալի: Եվ ամենայն բան արհամարհությունամբ մի կողմ դնելով՝ իմաստությունը արարածներին սկզբնապատճառ՝ այս բանն է հայտնում՝ ասելով այսպես. «Երանի՛ տի տամ ա՛յն ժողովրդին, ում Տէ՛րն է Աստված»: Մե՛ծ է և այստեղ բարձրությունները Նրա Շնորհի՛ գգո՛ւյշ ապրելու, պահքերի բերած համարձակության, որոնց պտուղն է երանությունը լի. թե. «Սրբերը Քո միշտ օրհնո՞ւմ են Քեզ»: Ըղձալի է և ընտանությունն այս՝ երբ որ հոգևոր հաղորդության մեջ, որպես մերձավոր՝ հույս ունես Աստծուն, որ արժանանաս՝ սաղմոսի խոսքի մեջ բերկրելով. «Իրենից երկյուղ ունեցողների կամքը Տէրն Ի՛նքն է ի կատար ածում», որ ավարտվում է այս ողբազվարթ պատգամի խոսքով. «Տէրը պահում է բոլոր նրանց, որ՝ սիրո՞ւմ են Իրեն, և սատակեցնում ամե՛ն-ամենայն մեղավորներին»: Իսկ Սաղմոսների երգեցողության ամենավերջին գլուխների մեջ, որպես օրինակ ցույց տրվեց արդեն՝ արդարների և մեղավորների հատուցումները՝ ամենքի համար: Եվ երգի ձայնով զուգակցորդ են սրանք միմյանց, թե. «Ընդունում է Տէրը՝ հեզերի՛ն, բայց մինչև գետին վար խոնարհեցնում՝ ամբարտավանին», ապա ես որքա՛ն եղ-

կուլթյամբ եմ լի Նրա առջևում: Եվ երբ որ. «Տէրը սուրբ ժողովրդի հետ է միմիայն, և բարձրացնում է Իր հեզերին վեր՝ մինչև փրկություն», ապա ես, որ մեկն եմ՝ բարեմասնություն իսպառ չունեցող՝ իմ տեղը՝ որտե՞ղ պիտի հաստատվի: Իսկ երբ որ. «Աստված օրհնվում է լոկ Իր սրբերի մեջ», ես, որ՝ օտար եմ սուրբ մաքրությունից, ո՞ր մի դասի մեջ պիտի հայտնվեմ: Իսկ թե նախապես երգողը դրեց հիշատակարան ինձ կշտամբության, թե. «Տիրոջ սրբեր, սիրեցե՛ք Նրան, որովհետև որ՝ ճշմարտություն է Նա փնտրում ձեր մեջ, և կրկնակի՛ն պիտի հատուցի նրանց, ովքեր որ՝ ամբարտավանե՛ն», ապա, ո՞ր զնդում պիտի լինեմ ես, գերվա՛ծս չարից, որը մեր առջև իր գաղտնի մեղքի գյուտերն է դնում՝ գայթակղությունմբ:

Դ

Ինչպես, օրինակ, եղևնիների տերևները, երբ՝ ուժգին հողմ լինի՝ տագնապով լցված տատանվում են ու խոնարհ հոսում են ծառի վրայից, նույնպես նույն հողմը ջանաց, որ ջարդի՛ վերարձակության ընթացքները իմ, երբ որ քաջաբար կանգնել էի ես՝ Անեղ մշակիդ ձեռքով հարմարված: Արմատացնելով վերստին, դարձյա՛լ, կրկի՛ն հաստատիր՝ նոր ու անապակ պտղավորությանմբ՝ Կամքի՛դ ինամբով, ինձ՝ անդաստանում կենդանի կյանքիդ, ամենապարզ և Քրիստո՞ս Արքա, հավիտյա՛նս օրհնյալ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հակողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍԻ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍԾՄՈՒՆ  
ԲԱՆ ԿԲ**

Ա

Արգ, ինչո՞ւ համար սաղմոսի ճառին ես հավելացնեմ մարգարեների խոսքերից մասեր: Բայց կերակրից ի՛նչ վայելումներ պիտի ստանամ, եթե ուտում եմ առանց զգալու ու ցավերի մեջ, և կամ սաղմոսից ի՛նչ շահ ինձ համար, թե ընթերցածս միաբա էմ պահում: Որովհետև որ սաղմոս կարգավորվ նգովում եմ ինձ ու չե՛մ հասկանում, լվացվում, սակայն՝ չե՛մ պայծառանում, արևի նման ծագում եմ, սակայն՝ չե՛մ լուսավոր-

վում, մեղը ճաշակում՝ չե՛մ քաղցրանում, դեղե-  
րով լցվում ու՛ չե՛մ բժշկվում, կամ դիմում նույ-  
նին ու կրկին անգամ մնում եմ դատա՛րկ, ձաղ-  
կում եմ ինքս ինձ ու չե՛մ խրատվում, ողորժում  
դարձյալ՝ չե՛մ զգաստանում:

Բ

Արդար է խոսքը մարգարեի, թե. «Անօ-  
րենուլթյուններս ու բոլոր մեղքերս վերադառ-  
նո՛ւմ եմ, իջնո՛ւմ ինձ վրա՝ ես դրանցի՛ց եմ շա-  
րունակ մաշվում», ես, որ կանգնած եմ պարտա-  
վորեցնող խոսքի դեմ դիմաց ու Տէրունական  
այն առակի, որ՝ Հին տիկերի և նոր գինու մասին  
օրինակումով՝ խրատական խոսք ուղղվեց ամեն-  
քին: Որովհետև որ՝ ինչպես Եսային նախաձախ-  
նելով այս խոսքը ասաց. «Պիտի սատակե՛ն անօ-  
րենները՝ մեղավորների Հետ մե՛կ ու միասին», ա-  
պա ուրեմն, նույն բաժինն է և Համնում դժնիխ՝  
Հանդերձյալ կյանքում: Եվ նույնն է ասում սաղ-  
մոսը նաև. «Պիտի Հատուցի՛՜ Տէրը նրանց, որ՝ ա-  
ռավել ևս են ամբարտավանում», կամ. «Տիրոջ օ-  
րը ահեղ Իր դատով նրա՛նց պիտ իջնի, որ  
Հպարտնե՛ր են ու ամբարտավա՛ն»: Կամ եթե ա-  
սեմ. «Մեղավորները օտա՛ր են եղել մոր որովայ-  
նից»՝ Հարաբերվում եմ մյուս խոսքերին. «Անօ-  
րենները պիտի կործանվե՛ն ողջ երկրով մեկ»,  
«Պիտի Հեռացվե՛ն ամբարիշտները երկրի վրա-  
յից», կամ՝ «Նրա կողմից՝ անօրենները մերժվե՛ն  
խսպառ»:

Գ

Եկե՛ք, ինձ վրա ողբե՛ր կարգացե՛ք՝ այս  
խակ խոսքերով. «Ինչպես օրինակ՝ եղեգն է վառ-  
վում կայծակի հրից, ճիշտ նույնի նման մեղա-  
վորները պիտի այրվե՛ն բորբոքված բոցում»: Լա՛ց  
եղեք վրաս՝ սաղմոսի խոսքով, թե. «Նրանց  
վրա բորբոքված հրի կայծակներ՝ գցես»: Եվ աշ-  
խարհով մեկ ելե՛ք, պատմեցե՛ք՝ Բա՛նն աստվա-  
ծային, վճի՛ռն ընդունված՝ ազդված խոսքից  
մարգարեական, թե. «Երբ չկամեք դառնալ լ-  
յսե՛լ ինձ, պիտի սո՛ւրն ելնի ու խժու՛ր՝ ձեզ»: Կո՛ծ  
արեք վրաս սաղմոսի խոսքով, թե. «Մա՛հր պիտի  
հովվի նրանց»: Աղի արցունքով և ողորմութ-  
յամբ Հառաչմանը ձեր Հեծեծանքներն իմ ևս  
խառնելով, և այնժամ, երբ որ՝ Բարձրյալն է խո-  
սում Իսրայելի Հետ, սաղմոսի խոսքով ինձ էլ է  
ասում. «Իմ ժողովուրդը ձայնն իմ չլսե՛ց»: Ավա՛ղ  
կարգացե՛ք թշվառացյալիս, երբ որ նույն  
բանը մարգարեներից ուրիշն է ասում. «Վա՛յ ն-

րանց գլխին, ովքեր որ փախա՛ն, Հեռացա՛ն ինձ-  
նից»: Միտ մղկտացնող նոր աղաղակով փո՛ղ  
Հնչեցրեք, այն ժամանակ, երբ տեսանողն Աստծո  
ամաչեցնում է, ինձ էլ կշտամբո՛ւմ Հակոբի տան  
Հետ, որ ապերասա՛ն եղանք Տիրոջ դեմ, թե. «Տե-  
սեք-տեսե՛ք, արհամարհողնե՛ր, ապչե՛ք, զարմա-  
ցե՛ք և ոչնչացե՛ք»:

Դ

Այլ ահավորիդ սպառնալիքով սո՛ւրբը  
բարկության, որ բարձրացրել ես մեծիդ երեսից  
փախչողիս վրա՝ կրկին՝ դարձնես ետ, պատյա՛նը  
դնես, և ինձ ժամանես բարեբախտությա՛ն Աջիդ  
խնամքով և կյանքի՛ օժմամբ պարգևատրե՛ս  
Քեզ աղաչողիս: Գետին խոնարհված մահկանա-  
ցու Քո արարածներից, սահմանների մեջ բոր՛ր  
ազգերի և ո՛ղջ մարդկության, Քեզ Փա՛ռք երկն-  
քի բարձունքների մեջ, Հավիտյա՛նս: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր Հավելված  
նույն խակ հակողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՄՈՒՆ  
ԲԱՆ ԿԳ**

Ա

**Միա՛կ Թագավոր**, որ Բարերար ես,  
նաև Բազմազուլթ, Միա՛կ մարդասեր և երկայնա-  
միտ, որ պատվված ես Հորդ Հետ մեկտեղ և օրհ-  
նաբանված Տէ՛րն ամենայնի՛ Կենդանի՛՜ Աստծո  
Միածին Որդի, որ պատճառ չունես իմ կորստյան  
մեջ և չե՛ս փորձվում երբեք չարից, որ մեղավո-  
րի մահը չե՛ս փնտրում, և փրկությունը Քո՛ կամ-  
քով է լուկ նրան ընծայված, որ մեղքի մրրկից  
փրկե՛ս ու դարձնե՛ս մեղմ գեփյուռուի մեջ Քեզնով  
քավության, և նրա Համար բարկության Հուրը  
փոխես անձրևի՛: Որ բարի կամքից կնոջն ետ ըն-  
կած՝ կրկնակի՛ գոյով մեղքից տարար ետ՝ մարմ-  
նի արձանում վերստեղծելով երկու բնություն՝  
լինելու արդեն ո՛չ նրանց շարքում, որ պարտքեր  
չունեն, և ո՛չ էլ նրանց, որ պատիժների՛ են դա-  
տապարտված: Որ փափկությունը Հոսանուտ ծո-  
վի, որպես քարերից ամուր ցանկապատ բարձ-  
րացրի վե՛ր, ու ժողովուրդը ծովի Հատակով,  
որպես ցամաքով՝ գտավ փրկություն, և անապա-  
տում կարծրանյութ ծայռից՝ հորդ վտակներով

աղբյուր Հանեցիր, որ նրանք խմեն: Եվ Հորդանանի ջուրը սրարաչավ Դո՛ւ արգելեցիր Հոսել այնքան, որ՝ ժողովուրդը Քո գետի հատակով անցնեն մյուս ափ, ցույց տալով այդպես, որ հետևորդող հեթանոսները նրանց թիկունքում լվացվելու են ավազանի մեջ: Եվ Երիբրովի պարիսպներն ամուր, որպես թեթև հարդ՝ օ՛ղ ցնդեցրի՛ր ու թափեցիր վար, որ օրինակն էր բռնության անկմանը սատանայի: Եվ վնասակար ջուրը Դու այնպե՛ս այլափոխեցիր, որ դարձավ բարի, այլևս օգտակար՝ փրկության համար քանանցիներին, այն համեմելով աղով, որ մաքրման խորհուրդն է կրում, և ապա նաև՝ անուշացնելով: Դու, որ Մեռայի դառնությունները, որպես մտքերի անհավանություն՝ Կյանքի փայտով Քե՛զ հարմարեցրի՛ր՝ քաղցրացնելով ըստ Քո՛ բնության դարձնելով այդպես արդեն պիտանի: Որ գետի միջից ջուր վերցնելով, նրա անորակ գույնը փոխեցիր երանգով բոսոր՝ և անասմանիդ գծագրությունը ու հրամանով՝ մածուցիկ արյուն դարձրի՛ր ջուրն այդ ցամաքի վրա: Դո՛ւ, որ՝ անկենդան ցուպ-գավազանը Մովսեսի ձեռքի, որ խորհուրդն ուներ՝ մեր իսկ Քո Ձեռքի մեջ գտնվելու, նաև այլևայլ օտար ազգերի Քո իսկ ընտրությունը՝ կենդանացրի՛ր անթույն վիրապի նմանությունով: Դո՛ւ, Քո Մովսեսի երջանիկ աջով ի ցո՛ւյց դրեցիր ապագա լինող հրաշքները Քո մարդեղենություն, և Քեզանով իմ ախտավոր մարմնի մաքուր դառնալու փոխատրություն օրինակո՛ւմը նախաձայնեցիր: Շրջադրություն օրինակներն այս, որ թվարկեցինք, սիրովդ՝ արվեստի գործադրությամբ՝ դրանք, ամենք էլ, ա՛նակնկալ գյուտ նշանակեցիր՝ կորստյան մատնված մեղավորներին՝ գտնելուդ որպես կայուն նշանակ, որ նրանց այդպե՛ս բարեխնամես, Ամենագո՛ւթ և Օրհնյա՛լը, Աստվա՛ծ:

### Բ

Որ վե՛ր ես հանում երկրի հողից բուսականություն և կենդանացնո՛ւմ անշունչ մեռյալին, որ ինչ անչարժ է՝ կառավարո՛ւմ ես որպես ընթացող, անարգ արգանդից ծնեցնում ես Քեզ պատկերակիցներ, բարիք ըմբռնանող ծնոտներ տալիս պատանիներին և մազածածկո՛ւյթ ընծայում նրանց մաքուր այտերին, որ սաղարթներն ես սեթևոր մագերի փոխում զարմացնող ճյա՛ն ճերմակություն ցույց տալով այդպես, որ կարողություն սահմանները Քո՛ չունեն՝ սահմաններ, որ անվե՛րջն ես Դու, Հաղթո՞ղ և Հզո՞ր: Դու որ

փոխում ես, ըստ Հոբի խոսքի, բնությունը թոթով շրթունքը մարդու, որ հավատարիմ եղողները Քեզ Կամքի՛դ համաձայն խոսք արտահայտեն, որ սասանո՛ւմ ես երկրի հիմքերը՝ նրա սյունեղով, ցույց տալով այդպես ստեղծված գոյիս, թե՛ Դո՛ւ ես միայն անկործնելին: Դո՛ւ որ քանդո՛ւմ ես տարրերը իբրև անցավոր բաներ, և դարձյալ նրանց ի՛ մի ես բերում, կապո՛ւմ ես իրար՝ իբրև հարակա արտահայտություն, և այդտեղից էլ վստահեցնո՛ւմ ես, հո՛ւյս տալիս կրկին, որ մեր մեղքերի բազմություններն էլ Կարող ես թողնել նույն Ջորությունը, որ՝ տարրերի հետ ես Հզորող վարվում: Եվ արուսյակին, երբ իր հույսով անզգա է նա՛ դաստիարակո՛ւմ ես որպես թե՛ ձիուն՝ երասանակով՝ նրա միջոցով ցույց տալով բանն այս, թե՛ բնությունը չար ինչ դրսևորվի՛ հանդարտեցնո՛ւմ ես՝ երբ էլ կամենաս: Որ բուրրակը անխոս լուսնյակի դարձնում ես ունա՛յն պատրանքով փոխվող, և նրա լույսի պատճառը հայտնի, որ արևից է իր լույսն ստանում՝ տեսնողի աչքին դարձնում ես արդեն հո՛ւյս և ավետի՛ս, և երբ լուսինը պարտավոր բարուց նվազանում ու հավո՛ւմ է ասես՝ Դու կրկին նրան ամբողջացնո՛ւմ ես՝ նախկին ունեցած իր լրիվությամբ: Դու, որ պատկերը անխոս աստղերի, որպես հոտերի խմբեր ու դասակ՝ առանձնացնո՛ւմ ես կամ թե՛ ժողովում առանձին վայրեր, այդպես և հույսն իմ այդ Քաղցրահասց կամքիդ տեսությունը խորհուրդ է հուշում՝ վստահել, Քեզնի՛ց կյանք ակնկալել, և նույնի նման, ովքեր չեն կարող լեզվով աղաչել՝ Կարող ու բա՛վ ես ողորմել նրանց:

### Գ

Այդ Դու ես մահվան և կյանքի միջև վստահության Քո շավիղը բացել՝ վկայությունդ դրած հավաստի՝ անկասկածավոր վայրով խոստացած, և Քեզանո՛վ է, որ պաշտպանվում ենք գայթակղության խոչ ու խուժեցից և ալիքներից փրկությունն ատող: Եվ ինչպես ջուրը, որ կաթսայի մեջ եռո՛ւմ է ուժեղին կրակի վրա՝ մեղքերի մրրկից սաստիկ պղտորված, Քո կամքի Բանով խափանո՛ւմ ես այն: Նայում երկրրին, և ցնցվո՛ւմ է սա, և առանց խոսքի զգաստացնո՛ւմ ես մտավորներին: Եվ իբրև ընթացքն անձուկ մի նավի, որ ալիքների վրա է ճոճվում՝ դըրըրգացնո՛ւմ ես թանձր ու հսկա երկիրը ամբողջ, և դրանով էլ արարածներին ճանաչեցնո՛ւմ, թե՛ Կա՛մքը է մշտահաղթ, աներկբայելի: Որ՝ գորեղ

Խոսքով հիմնադրեցիր Տիեզերքն համայն, որ սերմանում էս մեր մարմինները երկրի հողում, պահում անկորո՛ւստ, կենդանացնելով՝ ծնո՛ւմ էս դարձյալ: Որ ապականվածն ավանդ դնելով՝ անե՛ղծն էս արդեն հուճուկ ստանում, և մահկանացու նյութին խառնում էս նշխարը կյանքի, ու ակնարկության մեկ հրամանով՝ կազմավորվո՛ւմ են մեկ իսկ վայրկյանում՝ յուրաքանչյուրի անգարդությունը դարձնելով պատրաստ վերանորոգման: Եվ Զորությունը ամենակարող Քո՛նն է հավիտյան, և ժամանակն իր տարիների հետ՝ Ի՛նքդ էս վերցնում շրջանակի մեջ՝ հյուժուժներով նրանց օրերի, որ բարեպատե՜հ մեր տեսողության համար է տրված: Անմոռնչներին Կարգադրում էս, որպես թե նրանք լինեն կենդանի, Ազդո՛ւմ էս միայն, և ընթանում են նրանք Քո՛ կամքով, անճառ արվեստով Քո Հնարագետ՝ միայնակ հյուսում մե՛զն առավոտի: Եվ առաջնաստեղծ լինելիության հորինվածքների կարգումից հետո Դու արարեցիր փառավորյալ՝ ու մեծամե՛ծ բաներ՝ հրաշակերտված իր ո՛ղջ հանդեսով, ըստ Գրքում գրած այն երջանկության և կանխահիաց զարմացումի մեջ, երբ Դու մարդացար՝ գոյավորելով տոնելի տեսակն՝ ավելի անեղծ մի նո՛ր աշխարհի, քան եղածը՝ այս:

Դ

Ահա մեր գործած հանցանքները Քե՛զ Վերագրեցիր և ա՛յլ չափով էլ արդարությունդ շնորհեցիր մեզ, և մեր հաշտության փրկանակ ինչը առար Քե՛զ վրա, և չե՛ս դադարում մեզ ողորմելուց, - այժմ ամբարշտի՛ս էլ դարձրու արդեն իմ իսկ պաշտոնում մա՛րդ բարեբրկյուղ, թմբրվածության մեջ գտնվողիս զգաստացրո՛ւ արթնությունք սրտի, և անմաքուրիս լավ լվանալով՝ շնորհի՛ր սուրբ ու պայծառ կերպարանք, ինձ, որ մեջս ունեմ բազմաթի՛վ բծեր՝ դարձրու անբի՛ծ՝ հանդարտ պատկերով պատվականություն, և ողջացրո՛ւ բեկվածիս այնպես, որ դիպվածներից չընկնեմ խորտակման, երկար լացացիս լցրո՛ւ այլևս զվարթ խնդությունք Քո անտխրելի, հուսահատվածիս՝ Քո միավորիչ սիրո՛վ մեկացիր, որ չի քանդվում խարդախ ուժերից. ինձ՝ ամաչողիս, վատահուժթյո՛ւն տուր հաստատության մեջ՝ Քո անշարժելի, և խավարյալիս՝ Քո երանության Լույսի՛ մեջ հանիր, հավիտյա՛ն Լույսիդ, որ Կենդանի՛ է և անմեկնելի, մահվամբ գերվածիս՝ դի՛ր Քո Կյանքի մեջ, որ չի՛ եղծվում ու չի՛ ընկնում վար: Թող փառավորվի՛ անու-

նրդ, Հիսո՛ւս, խոստովանելով Հո՛րն ամենայնի՛ Սրբության Հոգո՛ւղ, բարձուճքների՛ մեջ երկնքի, մինչև՝ խորքե՛րն երկրի՛ նրանց մեջ ապրող բնակիչներով՝ հավիտյա՛նս հավե՛տ: Ամէ՛ն:



**Հեծծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂ ՂՎԱԾ ԱՍՏՕՈՒՆ  
ՔԱՆ ԿԴ**

Ա

Արդ, ամեն բանում բացարձակապես ուղի՛ղ էս, Աստվա՛ծ, Իրավունքով էս դատերդ վարում և Կշռում դրանք լո՛կ արդարությամբ, ճշմարտությամբ էս չափում ամեն բան և օրհնությանմբ էս դրանց հետևում, ընթանում բարվո՛ք, ճշգրտությունը սիրում շարունակ, ամեն բանի մեջ հստակություն էս կամենում միայն, Լուսավորությանը՝ համբուճյրներ տալիս, հանդիմանում էս՝ փո՛րճ ունենալով և քննում էս՝ տեսնելով հեռո՛ւն, ո՛չ նենգություն կա Քո ներսում երբեք, ո՛չ գոռոզության անգամ մի նշույլ, այլ լո՛կ հեզություն՝ հանդարտությամբ լի և ողորմությունք:

Բ

Վերն իմաստությունն արդարացրի՛ր՝ ա՛նայլայլ Քո Հոր Հանճարի Ձեռքով՝ և կրկնակի անզեղջ գովեստով վկայեցիր մեզ, նրանց, որոնց որ՝ որդեգրեցիր շնորհներ տալով Բանիդ սրբությամբ, որ և Քո կենաց Ավետարանով՝ ստացա Քեզնից, էս, որ՝ չողբացի կոծողների հետ, ո՛չ էլ պարեցի՛ երբ որ սկսեց շեփորը հնչել: Եվ անօրենիս պատվիրեցիր թե՛ մի՛ անօրենիք, բայց նո՛ւյն չարիքը ինքս պնդեցի, մեղավորիս, թե՛ մի՛ հանիր եղջյուր բարձունքների դեմ, բայց էս ընդդեմ Քեզ կրկին գործեցի և ինձ չզգացի՛ երբեք խայտառակ, երբ Ամբակումի և նաև Դավթի և Զաքարիայի խոսքի համաձայն՝ Քո արքայական ձեռքով էլ լինում՝ հպարտների չար եղջյուրներն հանել, և ամեն՝ տեսակ խոտարհեցումներ ու բարձրացո՛ւմ: Դու ինձ օրհնություն կամեցար միայն՝ անվե՛րջ ողորմած կրկին մնալով, սակայն էս ահա՛՝ անիծյալս մեծ տարագրություն, խոտորվեցի՛ իմ արժանի ճամփից, և բարկությունը սի-

րեցի, ո՛չ թե՛ մնալը բարու ընթացականում, և Գրի խոսքով շուտփեցի ես՝ խավար, ո՛չ թե՛ Լույս, կենդանի Ձայնիդ գթութիանը մեծ անզգամորեն պատասխանելով. «Հետո՞ կլսեմ»: Եվ որըը անմահ և հուրը անչեղ և կշտամբանքը անվախճանական, հավիտենից են ու չվերջացող, և օրինակն է դրանց սոսկալի, - ասացիր Դու մեզ Եսայու խոսքով, բայց չհասկացա՞, ըստ Սաղմոսողի, ո՛չ էլ խոսքերըդ ի մտի առա, որ խոնարհվեի՛ բժշկվելու չափ, այլ, մուսյադեմ՝ կրկի՛ն ընթացա մտքի կուրուլթյամբ:

Գ

Մարգարեներով ցույց տվեցիր, թե՛ օրհնութիո՞ւն պիտի ստանան՝ ովքեր օրենքն են պահում, իսկ ես փութացի նույնը աղճատել: Եվ Դավթին նրա բերանի խոսքով, որպես հոգևոր արձան կարգեցիր՝ այդ վեմի վրա Քո իսկ մատներով, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, գրեցիր այսպես, նրա ընտրութիան Քո հաստատումով, թե՛ «Պահեցի՛ Քո օրենքները ողջ և ամենա՛յն ժամ, և՛ հավիտենի՛ց», և ավարտի մեջ, Բանի միջնորդած Քո՛ անդրադարձմամբ նույնն հաստատելով, թե՛ «Հավիտյա՛նս հավիտենից էլ», և այս և նման խոսքերից իմ մեջ պարծա՛նք արթնացավ և խրախուսա՛նք, բայց չազգվեցի՛, որ դառնայի ետ: Եվ շտապելով վազեցի տնե՛րը չաստված Բահադի և ո՛չ թե՛ Աստծո, և երկուսի մեջ, իմ երկմտությամբ՝ կրկնակիո՞ւլ էլ ավել կաղացի՛ բարի գործերից իմ ետ մնալով, ինչպես Եղիան է երգիծող խոսքով այդ մասին ասում: Եվ ունեմ նաև Մովսեսի կարգած օրենքները ողջ, որոնք գալիս են մահացածներից, մարգարեների խոսքերը ունեմ՝ գրված իմ հոգում, առաքյալների մատյանները, որ՝ շարված են ահա մտքիս մատներին, ավետիանե՛րը՝ Քո կողմից ահա համայնին տրված Կտակարանի, Թաղումիցդ Հետո և Քո Հարությունմբ՝ Հարություն առած ննջեցյալներով, որոնց որ արդեն թիվ-համար չկա՞, բայց այս ամենով ես դեռ ավելի անհավա՛տ եմ, քան՝ հինգ եղբայրները Հարո՛ւստ-մեծատուն, որոնց առակը այժմ էլ հարմար է ինձ համար բերել, սրանք նման են մարդու ունեցած անողորմաբար հղփացումին կուլ զգայարանքին՝ նույն իսկ հինգ թիվով. և սրանց նման՝ ինքս էլ մնացի դարբնի սալի պես՝ անշա՛րժ, անտարբե՛ր, նո՛ւյն դիրքում, համա՛ռ, քարացա՛ծ սրտով, որ բան չի՛ զգում, և որպես օրինակն է Բելիարի՛ չապաշխարեցի՛:

Դ

Սակայն վերստին այս կերպարանքիս, որ կրկնակի՛ ուժգին է լքված, Քո ողորմությամբ այլևս նայիր, Բարի՛, Ահավո՛ր, Մարդասե՛ր, Գթա՛ծ, Խնամակա՛լ իմ, որ Կենդանի ես անվախճանորե՛ն, Սո՛ւրբ և Լուսեղեն և Թագավո՛րն ես մեր հոգիների, և Քո պանծալի Չորությամբըդ, Տէ՛ր, Խաչի՛դ խորհրդով՝ մեղքերից սաստիկ կարծրացածիս, երբ անպտղաբե՛ր մի հանդե եմ դարձել, երկկամներեսի հիմարությանն ու լքվածությանը չարչարված սրտիս, որպես նպաստ և օժանդակություն՝ ամենակալիդ Կամքի գթությունն արդեն առնելով՝ գորե՛ղ որոտով բխի՛ իմ հոգին և իմ աչքերին խո՛ր, վշտագնա՛ ընծայաբերի բազո՛ւմ վտակներ արտասուքների, որոնցով արբած՝ ինձ փրկութիո՞ւն գա և գա մաքրութիո՞ւն, ընդունելի լինեմ Քեզ համար, ամենապարգև Տէ՛րըդ ամենքի, փառավորյա՛լըդ հավիտյա՛նս հավետ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղբերաներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍԾՈՒՆ  
ԲԱՆ ԿԵ**

Ա

Եվ արգ, ես՝ նախնիս ամբարիշտների, և զլխավորը՛ս մեղավորների, պե՛տս անիրավաց, որ առաջինն եմ պարտավորներից, հանցավո՛ր մարդկանց պատկերը լրիվ, ըստ վատթարության մի ատտիկեցի՛ ո՛չ թե՛ բարեբաստ իր վարք ու բարքով: Մածուկում պահած ինչ որ ունեի՛ հայտնի՛ արեցի, խայտառակեցի՛ իմ ամոթալի գործերը բոլոր, հրապարակեցի՛ գաղտնիքներս ողջ, թաքցրածներս դրեցի ի ցո՛ւյց, ամփոփածներս ի Լո՛ւյս հանեցի, ժայթքեցի՛ մաղձը իմ ողջ դառնության՝ չարին գործակից լինելս լրի՛վ խոսել-մատնելով և վերքերիս մեջ ամբարված թարախն իսպա՛ռ քամելով, ճանահեցնելով, թե՛ որքան խո՛րն ու մե՛ծ եմ պարտքերն իմ, իսկ պատրվականերն իմ արդարության՝ կեղծիքից առած. և իմ վրայից տգեղության քողն հանեցի՛ այդպես: Ամոթույքներս ծածկող զգեստից մերկացնելով ինձ՝ հան-

դիմանեցի՝ գարչանքները իմ, մահու մրուրը փսխեցի՝ իսպառ, և հոգուս խածնող պալարները ժանտ Քահանայապետիդ՝ Քրիստոս՝ Տիրոջս առջև բացեցի: Չինայեցի՝ հոգուս դարպասող և ո՛չ մի վտանգ, մարմնիս սիրուն ես չաչառեցի՝, և ներսուսս եղած արմատն հնության դարձրի՝ ի տես, և չողորմեցի՝ բնույթովս եկած կարիքները իմ, միաբանության կապը խզեցի՝ ես նրանց հանդեպ, դղյակը սրտիս՝ քանդեցի՝ հիմքից, որս դարձած կամքն իմ դիտելով որպես ինձ դարանակալ՝ կենսից ու մահու կռվով դեմն ելա, անհայտուս եղած պահեստարանն իմ ի վեր հանելով՝ դարձրի արտաքի՛ն, և ներսուսս եղած մթերքը մեղքի ես Մեծիդ առջև բաց արի լրիվ, և դատախազին կանգնեցրեցի Դատավորի՛դ դեմ, և գալիքների փորձառությունը ա՛յժմ իսկ գտա, ի՛մ ժամանակում, կտրելով այդպես կործանողի հետ դաշնությունը իմ՝ ցրի՛մ տվեցի ուխտը խաբողի, մարտի հաղթական ավարտի համար, Քրիստոս՛ս, Քե՛զ մոտ ապաստանեցի, և պատերազմող խո՛ւմբ հանեցի վեր ու գրգռեցի ոգի՛ն քաջության, դիմադրության դիմելու համար՝ ես Աստո՛ծ՝ Բանիդ միայն հուսացի, խավարասիրաց փաղանգը այդպես՝ մատնեցի զեներին և Լուսեղեններիդ:

Բ

Եվ արդ, Ստեղծի՛չդ արարածների, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, Բարձրա՛յլ Աստծո Միածին Որդի, երբ որ ես այստեղ իմ հանցանքները ի հայտ արեցի՝ պախարակելով ու ծեծելով ինձ՝ իմ արատներից գարչելով այսպես, էլ մի՛ կշտամբիր կրկնակի դատով՝ Մեծ դատի օրն ինձ: Եվ Ինքը՛դ՝ Հզո՛ր, Անքնի՛ն, Անճա՛ռ, Բարերարը՛դ իմ, անմահ Թագավոր, տեսնելով խոսքն այս իմ խոնարհության՝ ինքս ինձ պարսավող մեծ ամոթանքում, երբ ինձ անխնա ճաղկանքի տալով՝ հոգի՛ն դատեցի, Ի՛նքդ էլ Քո կողմից՝ այս իմ մատյանի ողջ նվազների խոստովանությամբ՝ անարգանքի՛ ու ամոթի՛ մեջ դիր դեմքը անամոթ, պի՛ղծ սատանայի, իսկ երեսներն իմ Քեզնից պատկառող զորացրո՛ւ Քո Խաչի զորությամբ: Թող որ միանա Կնիքդ Լույսի իմ գեղապատկեր տեսակի վրա, Նշա՛նդ ամբուլթյան թող որ հաստատվի դիտողիս ոգուն, և երևա՛կը Կենացդ փայտի, թող ձևակեպովի այտերիցս ելնող ճառագայթումով, և արվեստներըդ հրաշագործիք՝ թող իմ ճակատից իրենց ազդումով ի հայտ երևան: Քո լու-

սապաճույճ դրոշմն ինձ վրա մի՛ այլափոխիր, տեսնող բիբերիս միջից մի՛ հանիր ճաճանչն օրհնության, և առհավատչյան Քո վստահության, որ գլխիս ունեմ՝ մի՛ մերժիր արդեն, բերնիս ամրոցի շեմը մի՛ քանդիր տյառնագրության Քո փառք ու պատվից: Թող պահպանակը երկրպագելի միանա սրտիս զգայարանին, և չորս նյութերից միաբան կազմած գոյությունը իմ՝ թող որ ներագգվի՛ Քո քառաթևի նշույլից անգամ, և երբ ձեռքերըս բարձրացնեմ վեր՝ իշխանությանը Թագավոր Փրկչիդ, օժանդակի՛ր ինձ, և մատները իմ, որ ստեղծվել են մատուցման խորհուրդն իրենց մեջ պահած՝ թող բարեգործե՛ն համարձակությամբ:

Գ

Երբ որ ես մեկնեմ, թող չհեռացվի՛ Սրբությունդ ինձնից, թող որ չլքի՛ իմ պատիվը ինձ՝ երբ պարտավորիս պատեն պատանքով, և անդավաճան փրկությունդ հոգուս չմերժվի՛ թող, թող չընջվե՛ն կենդանատուրիզ գծերը ազնիվ, որ Քո շնո՛ւյլ ես գրել հոգուս մեջ, և թող տիրատիպ գորությունդ արյան խոռանիս ներսում Քո վեհ նկարով՝ չեղծվի՛ երբեք, զերեզմանո՛ւմ էլ բնակվի իմ մեջ: Թշվառ մարմինս, երբ որ քայքայվի, թող որ չնորհիզ օժուճն ինձ վրա անխափան մնա, և նորոգության օրը՝ դրանո՛ւյ, թող որ հանդիպեմ Փառաց Փեսայիդ, և քոնիներին թող որ դրանո՛ւյ ճանաչվեմ այդտեղ, Քո՛ վաստակների փառքով պըճնված, արժևորեն ինձ՝ Մեծիդ պարգևած երախտիքներով, ես՝ մկրտության սուրբ Ավագանի զգեստով զուգված, Ողորմությամբըդ քավվեմ լիպպես: Այդժամ Վերարկո՛ւղ անապականության զցիր ինձ վրա. երբ Քո՛նն եմ արդեն, մեղքի մարմնով տաժանակրիս՝ թող չհարձակվե՛ն բանսարկություններ, և թող սպառվի՛-չքանա՛ լրիվ՝ հնացնո՛ղն հոգուս, թող վերև չելնե՛ն խավարաբնակ պատրանքներն ինձ հետ: Եվ թող օրհնվի՛ անվամբ Քո, Գթա՛ծ, վի՛հն իմ հանգստյան, գերության գուրն իմ՝ Ողորմությամբը՛դ լցվի լիուլի, և Ընդարձակվի՛ Քեզնով ինձ համար թշվառատեղիս, բարկության բանտում ինձ Անդորր լինի Քո՛ խնամքներով, և արգանդի մեջ գուրբի մթության՝ հոգիս աճումով թող որ սնուցվի, հարկն անձկության՝ թող դառնա հույսի՛ մի շտեմարան: Եվ տարտամության խշտիս թող որ Քո՛ Ձեռքո՛ւյ պահպանվի, և Թ-



և երովորդ հովանի լինես տա՛նն այս տազնապի, վտանգներով լի այս սենյակի մեջ մի՛շտ լինես ինձ հետ, Գովյա՛լը ամենա: Եվ հազա՛ր անգամ ավա՛ղ ինձ այստեղ, որովհետև որ՝ վերնային էի, այժմ դարձել եմ հո՛ւյժ անդնդային, մի ժամանակ, որ տոնելի՛ էի, աշխարելի՛ եմ դարձել այս պահին:

Դ

Այլ Դո՛ւ ես միայն բոլոր գոյերից մշտապես՝ օրհնյալ՝ երկնայիններից և երկրավորներից, և մեռելներից, որ գտնվում են սանդարամետում, անպարտականը այս տարագրուկթյան. ե՛ս վրիպեցի, ե՛ս օտարացա, ե՛ս հիմարացա, պարտվեցի՛ այսպես ու դարձա խոտա՛ն, այդ ե՛ս լքեցի, արգելակեցի ընթացքներս Քեզ, ե՛ս կործանվեցի՛, ե՛ս մոլորվեցի, այդ ե՛ս մերժեցի՛ ինքս ինձ մատնելով, այդ ե՛ս խորթացա, այդ ե՛ս գերվեցի, գայթակղվեցի՛, ե՛ս նզովվեցի, ե՛ս թշվառացա, այդ ե՛ս արբեցի և վատթարացա, այդ ե՛ս ընկա վար, այդ ե՛ս խաբվեցի, անօրինացա՛, ապականվեցի՛ և այդ պատճառով այսպե՛ս մահացա, եղծվեցի՛ իսպառ: Եվ չարի մատով այս ամենի մեջ չկա՛ Քեզանից անգամ նշո՛ւյլ մի, քանի որ Դո՛ւ ես մեկ ու միմիայն Բարի՛ն անփոփոխ:

Ե

Երբ Կամքդ է իմ մեջ, խավա՛րն էլ է ինձ Լույսի ճառագայթ, որտեղ որ հույսիդ ճրագը, այնտեղ մո՛ւլթ գիշերն էլ է դառնում վաղորդյան, և սուրբ Մարմնիդ մեր հաղորդվելով՝ մեր ամոթների կարծիքից այդպես փրկուկթյուն գտնում, ապրո՛ւմ ենք դարձյալ: Իսկ ես՝ չե՛մ կոչում անձն իմ կենդանի, քանի որ արդեն անփախչելի իմ վախճանը գիտեմ, սակայն չե՛մ կոչում ինքս ինձ կորուսյալ, որովհետև որ՝ ես կասկած չունեմ՝ նորոգման մասին: Եվ ես փակված եմ ինքս ինձ համարում, բայց՝ Կյանքի՛դ ելքով, և անքավելի պարտքերիս մարմամբ, որ Քեզանո՛վ է իրականանում, կրկի՛ն պիտ բացվի իմ առջև կենաց Դո՛ւրը Դրախտի՛ հանուն ավետյաց կյանքի փրկուկթյան, քանզի ո՛չ այնքան վհատման գուլթս է տազնապով լցնում, որքան առավել քաջալերանքով՝ Ձե՛ռքդ է փրկուկթյան հասնում-գտնում ինձ: Արդ, Տէ՛ր իմ Աստված, տո՛ւր ողորմուկթյուն՝ ամեն՝ ձայնի հետ գոհաբանելու՝ Քե՛զ, որ օրհնյա՛լ ես հավիտյա՛նս հավետ: Ամէ՛ն:



Հեծեծանքների մի նոր հավելված  
Նույն իսկ հսկողից, նույն աղերս-  
ներով և մաղթանքների խոսքով  
միջնորդված

ՄՍՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍԻՐ  
ՌԻՂՂՎԱԾ ԱՍՏՄՈՒՆ  
ԲԱՆ ԿԶ

Ա

Արդ, օվ էլ վերցնի՛ դեղն այս մաղթանքի, ո՛վ էլ լինի նա և պարկեշտացնող այս իմ մատյանով պաղատանք անի, մեղավորներից լինի նա եթե՛ թող որ ես ի՛նքս էլ իմ իսկ խոսքերով կցորդվեմ նրան, իսկ եթե՛ լինի նա արդարներից, առաջիններից գուցե նրանց մեջ, ի՛նքս էլ մատյանի բոլոր խոսքերով՝ թող ողորմուկթյո՛ւն գտնեմ նրա հետ: Իսկ թե՛ նրանցից մեկն երջանկանա այս մաղթանքներով, և եղկուկթյունը մեկ ու միմիայն ի՛նձ վերագրի, թող նա իմանա, որ նույնը ի՛նքս իսկ արել եմ արդեն: Բայց պարտավոր եմ հիշեցնել նրան մեծ Սողոմոնի խոսքերն հոգեչունչ, «Մեկը կա՞ արդյոք, որ վստահաբար իր մասին ասի, թե սուրբ է սիրտն իր», և կամ՝ «Կա՞ մեկը, որ պարծենա, թե՛ մաքուր է մեղքից»: Որովհետև որ. «Բնավ չի՛ եղել երկրածին մի մարդ, որ ազատ լինի մեղքերի համար պատասխան տալուց», և՛ «Ձկա մեկը, որ ընտիր լինի ինքնարչավ վագքով», «Ո՛չ էլ թռչում են միայն թևերը բարձրացնելով վեր», և ինչպես Պողոսն է ուսուցանում. «Ձգու՛ւյշ պիտ լինի յուրաքանչյուր ոք՝ կրկնակի երկյուղ մեջ՝ ունենալով, թե՛ Վեմի վրա հաստատ է արդեն, գուցե թե՛ հանկարծ վայր գլորվելով՝ էլ չկարենա՞՞ իր կշռուկթով կրկին նմանվել այս իրավադատ կանոն Դնողին և Սահմանողին»: Այլ պիտի առնի նյութը պսակի՛ երբ որ ընդունի Կշտամբուկթյունն այս՝ և երբ նա կամա-ակամա իջնի իր անձեռնահաս բարձրուկթյուններից, թե՛ պատժապա՛րտ է՝ առիթ՝ կշիռի կշտամբանքներն այդ՝ իր ազատուկթյան, ու վերե՛ կեցնի իր կործանումից, և կապրի Լույսով՝ հոգևոր մահից փրկվելով՝ արդեն: Իսկ ինձ համար էլ պատգամն այս որպես արձանագրված խոսք է մի անեղծ, որ իմ եղկելի, մահացու անձին փոխարինելով՝ անդադար հնչմամբ՝ լաց հեծեծանքով՝ աղաղակում է առանց դադարի: Եվ ոսկորներիս համար է նաև, որոնք քանդվո՛ւմ են վերարկու՛ի տակ իմ հողապատյան շիրիմաթմբի, սակայն անմուռնչ խոստովանելով

նո՛ւյն այդ պատգամով, և հողում լուծվող մարմինն նույնպես նո՛ւյն պաղատանքով՝ թող որ բարբառի Քե՛զ՝ Ծածկատեսի՛ր:

Բ

Գթուլթյան Դու Տէր, և ողորմության մշտաբո՛ւս աղբյուր, բարությունների՝ պարգև բաժանող՝ Որդի՛ Բարձրյալի՛ Տէ՛ր Հիսուս Քրիստոս, Ողորմի՛ր, Խնայի՛ր և մարդասիրի՛ր, նայի՛ր վտանգի մեջ գտնվողիս, ակնարկությամբ՝ արդեն բեկվածիս, ու թշվառության մեջ հայտնվածիս՝ Խոնա՛րճ մոտեցիր, Տես՛ տագնապները՝ իմ անձեռնահաս տարակույսների, Հասի՛ր հաղորդվել կորստականիս կարիքների հետ: Բժշկի՛ սիրով եկ ու շոշափիր ախտավորությունս ամենաթշվառ, Քո Քաղցրությամբ ունկնդիր եղիր ողորմագին այս հեծեճանքներիս, և անդունդներից մահ գերեզմանի դեպի Քեզ ելնող անմոռնչելի հառաչանքներս անլսել մի՛ թող, և ամենալուր լսելիքներիդ Ականջին հասնի պաղատանքները՝ արդեն վատված իմ անդամների: Եվ որովհետև անապական է և Գրավական իմ կենդանության, պիտի անփոփոխ մնա և Սիրո՛ւզդ գթությունը ինձ, որով և կցո՛րդ եղիր հեզությամբ տկարությանը տաժանավորիս

:

Գ

Եվ արդեն մեռյալ պատկերիս վրա՝ մի՛ պահիր ռեսեր, անշունչ մարմնիս հետ՝ մի՛ մտիր դատ ու դատաստանի մեջ, և հարվածները մահից տանջվածիս էլ մի՛ հավելիր, արդեն կոտրված խեցե անոթիս մի՛ դատապարտիր ուժգին մարտելով, և վճիռների պինդ պարաններով լավ կապկպվածիս՝ մի՛ կրկնապատկիր բարկությունը Քո, ես մի շինվածք եմ արդեն կործանված՝ էլ մի՛ հասցրու այլ մի պատուհաս, շո՛ւն եմ սպանված՝ այլևս ինձ վրա քարեր մի՛ նետիր, լո՛ւ եմ ջախջախված՝ սաստիկ որոտում մի՛ բեր ինձ վրա, անպատվա՛ծ հող եմ, էլ մի՛ մռնչա նույն ուժգնությամբ՝ իբրև որպես մի անբարեհաճի, մերժելի մոխրիս՝ մի՛ կանչիր դատ ու դատաստանիդ մեջ, ցնդելի փոշուս՝ մի՛ համարիր Քեզ ընդդիմամարտող, տաղտկալի տիղմիս՝ մի՛ ընդունիր Քեզ որպես ոտխի, և գարշությանս այս անգոռնելի՛ հեռու մի՛ վանիր, որպես դեմդ ելած բռնամարտիկի, և դուրս նետվելիք կոճղիս մի՛ պահիր, որպես գեհնի համար վառելիք, այսքան ու այսքան և բազմապատիկ խիստ կշտամբվածիս՝ Ինքդ էլ վերատին մի՛ հանդիմանիր:

Դ

Եվ ահա այս իմ ամենաթշվառ, բայց խավարարգել շիրմին եմ իջել կոտրված սրտով և հոգնաթախիժ արգահատանքի բազում տեսակներ, սակայն հաստատի՛ր օրհնյալ Խոսքը Քո, որ միշտ անփոփոխ մնա սրտի մեջ արգահատվածիս: Քանի որ այժմ մինչդեռ կենդանի խոսում եմ ահա, սակայն մեռյալ եմ անհասիք առջև, որպես թե լինեմ սատակմամբ եղած մահվան կորստում՝ բայց և՛ մնայով ինքս իմ հավատքի անեղծության մեջ: Արդ, աղաչե՛մ Քեզ, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, Քո ողորմությամբ նայիր ինձ վրա, և մի՛ թողնիր ինձ՝ դառնալ տնկակից պիղծ Բելիաբին, և մահագեղեցյալ ազգը տապանիս՝ թշվառիս թաղմամբ, և անկենդանիս համար թնդունով, աղաղակներով, հառաչմամբ լացի՛ որոնք միաբան՝ իմ հոգին թող որ հաշտեցնեն՝ Քեզ հետ, և հարգես՛ս լսել՝ միայն Բարեգործ, Հոգեսե՛ր, Հզո՛ր, Օրհնյալ՝ մարդասեր, թող Բարի Հոգիդ գերեզմանո՛ւմ էլ բնակվի իմ մեջ՝ Լուսավորելով ինձ այդ խավարում: Եվ թող Քո կրած չարչարանքների Կենարար բոլոր մասունքներն իմ մեջ մնան պաշտելի, որպես դանձերի պահ տված ավանդ, որոնք կպահեն ինձ էլ՝ Քո ներսում՝ Կյանքի նորոգումն ընծա բերելով: Թող Անվատնելի գեներդ հաղթող ի՛նձ էլ պատկանեն, որպես հարակա քարերի պարսեր ձեռքիս տակ պահած, որոնք հոգևոր հնարանքներ են՝ չարի գնդերը դո՛ւրս հալածելու, և իմ դեմ եղած մարտը Քեզանո՛վ կվանեմ հեռու: Իսկ թե տեսնելով քաղաքս դատարկ պահող զորքերից, և լուսած՝ փողի ձայներից ազդու, չարն ելնի վրաս պատերազմելու, ապա՛ Տէ՛ր, իմ Տէ՛ր, մշտնջենապես, Դո՛ւ ես պահապանն իմ աննիրհելի:

Ե

Իսկ եթե չարը, կանխամտածված, մահս արագացնի, քան թե վախճանիս օրն էր սահմանված, և պատրաստի ինձ մի արգելարան, որից դուրս գալու շավիղ իսկ չկա, չարի ինձ բերած մահվան գանի դեմ՝ ես Տէրունական աղոթքը այդժամ կառաքեմ երկիրք: Իսկ եթե նա իր հնարանքներով ձգտի վայր գցել, որ ինձ կործանի՝ կծրադրեմ ես իմ Արարչին՝ որպես՛ս պատասխան: Եթե մոխրի մեջ ինձ թավալելու ձեռք հանի վրաս՝ իմ երեսնիվայր փռվելն Աստծոդ դեմ՝ կհերքի՛ նրան: Եթե ցավերից վաստակ առնելը նյութի իմ հանդեպ՝ առատ Քրտի՛նքը աշխարհի Փրկչի՛ արյան հետ խառնված՝ կփախցնի՛ նրան:

Թե բարի շունչն իմ ընթացքներին մեջ պատանդի դնի՝ Ամենաստեղծի կապանքները ինձ կարձակեն նորեն: Թե ուրացուլթյան բռնադատի ինձ Լույսի պարգևից, աստվածամարտերի հայհոյության դեմ՝ համբերուլթյունը մեր Տէր Հիսուսի՝ նրան վաղաժամ պիտ պապանձեցնի՝ ինչպես և բոլոր նմանօրինակ հայհոյիչներին: Եթե գաղտնաձիգ գեներբից նետեր արձակի վրաս, ապա Փառքի Հոր աղեղից ելնող կարթ հնարքներին՝ պիտի հանդիպի: Եթե խավարն այդ Լույսի բող հազած գա աչքս մտնի անամոթելու, ճորձերով ծածկված մեր Տիրոջ գլխի կոփահարո՛ւմը պիտ տանջի նրան: Եթե մոլեգնի իմ վատահուլթյան ձեռքերը կապել, ապա եղեգն այն, որ մատուցեցին կյանք Գոյացնողի օրհնաբեր աջին, պիտի մի՛նչ հատակ նրան չարչարի: Եթե ծաղրանքի այլպանումներով ինձ հետ կատակի՝ մեծ համբերությամբ Ամենազորի ծաղր ու ծանակներ տանելը պիտի հույժ հեզնի նրան: Եթե բժժանքով և հուռուլթյանով խորամանկի ինձ խաբել՝ կախարհել՝ պիտ հզոր Աստծո գեմքին ստացած ապտակը նրան գցի խորագո՛ւն ամոթանքի մեջ: Թե դիչերային մթան ժամանակ իր խաբեության խավարով ելնի լկտի մարտելու՝ Լույսի երևման Քո ճառագայլից պիտ խայտառակվի՛: Թե միջօրեի տապի ժամանակ նա արեգնակեզ վատնող խորչակը հարմար կարծի ինձ խախտելու համար, ապա գորությամբ Լույսիդ նշանի՝ այդ ի՛նքը պիտի արդեն չորանա: Հնարավորություն թե նա ունենա շնորհիգ փչուում ունայն դարձնել ինձ, այն թուքը, որ Տէրը քերովբեների իր վրա առավ մեղավորին հետ՝ պիտ նրա՛ն դնի պատկառելու մեջ:

Ձ

Թե ինձ ծախելու ժանիքներ ցույց տա՝ թող Լուռությունը Սուրբ Երկնավորի նրան դնի խոր պապանձումի տակ: Ու թե խածմունքով իր ավաղական իմ հոգուն ազդի, պիտ Ստեղծողի Սուրբ Բևեռներից ցավով կըսկըծա: Եթե անիրավ իր խորհուրդներով ինձ մոլորեցնի ճանապարհիս մեջ, Անհասանելի ոտքերին եղած գամերը պիտի նրան շղթայեն: Եթե ինձ դժնի հրապույրներով խաբի-արբեցնի, պիտի քացախն այն լեղու հետ խառնած, որ Բարեբարին տվին խմելու՝ դառնացնի՛ նրան: Եթե ինձ գտնի առաջին մեղքի ճաշակումի մեջ, պիտի սոսկալի՝ խորհուրդը Սաչի ինքն ըմբռնելով՝ ի՛նքն իսպառ դրվի իր պարտքերի տակ: Թե ընդդեմ Տիրոջ հնազան-

դության հրամանների՝ անձն իմ ուսուցի ընդգրկելու և հակաբանության, Անսահմանելու սուրբ պարանոցի բերվե՛լը մորթման՝ պիտ նրա՛ն գցի կործանումի մեջ: Եթե մահով ինձ աստակման համար խիստ հալածելով՝ վերքե՛ր պատճառի, հաստաբեստ գենքի՛ տեղը, որ մխվեց առաջին մարդուն՝ Ադամ Ստեղծող Աստծո կողի մեջ՝ պիտ հերձի՛ նրան: Թե դժոխային վշտերից ելնող երկունքներով իր գա շրջափակի, պիտի պատանքի կտավը Է-իդ նրա դեմ փակած հանդիմանի՛ խիստ: Թե խարդախությամբ ջանա, որ ձգտեմ հատակը մահու, պիտի կենդանի մահվան Վեմին իմ ապրելը նրան իսպա՛ռ մահացնի: Եթե մարդկորեն գայթակղվելուս վրա նա խնդա, նա կրկին՝ պիտի ինքը իր կամքով կորանա ներքև, երբ անմահն Աստված փառքով հարուցյալ՝ նորոգի՛ բուր մահացածներին՝ Իր հզո՛ր Կամքով: Եթե բերկրի, թե հազարամյա այդ կարճ ժամկետով իր կապանքները պիտի լուծարվեն, պիտի նույն պահին սըրբսիմա՛ նաև, կարկամի վերջի՛ն իր շղթաներից՝ անգերծ տագնապով ըմբռնելով, որ՝ մատնվելո՛ւ է սաստկագու՛նին՝ անվախճանակա՛ն տանջվելու համար: Եթե առաջին հարվածը Վեհի մեծ չարչարանքով, դժվար տանելի ընդուների վրան, ապա հարվածն այդ պիտի հավելվի կորստյան գույժով, որ պիտի հետո չարն այդ ստանա իր սատակման՝ հետ՝ գցվելով խորքը անչե՛ջ գեհեկի, որ պատրաստված է հենց նրա համար և նրա բոլո՛ր հրեշտակներին, և այս պիտ լի-նի այն մեծ օրվա մեջ՝ Մեծիդ Աստյանի դատապարտությամբ:

Է

Իսկ ես, որ լոկ Քե՛զ եմ ապավինել, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, Միա՛կ Թագավոր, Ինքնակա՛լ, Ջորե՛ղ, և Աբարի՛չը երկնի և երկրի, նրանցում եղած բոլո՛ր գարգերի, որ Գալուստի՛դ եմ հույսով սպասում, Ողորմության՝նը աշխարհի Փրկչիդ՝ Քո՛ ոտքն եմ ընկնում և գարշապարիդ հետքե՛րն համբուրում: Սոստովանում եմ պարտություններն իմ, հրապարակում մեղքե՛րն իմ բոլոր, կշտամբանքների քարերով ծեծվում՝ կոծո՛ւմ եմ ահա, տապակվո՛ւմ սրտիս հառաչանքներից, խղճիս խեթերից ստանում խոցե՛ր և տոչորվո՛ւմ եմ շնչիս բոցերից, այրվո՛ւմ եմ իմ արտասուքներից այդ ցողերով և կիզվո՛ւմ ազդամաբ երիկամներես, հույսը կորցրած՝ օդից ցամաքո՛ւմ, հանգչում-մարո՛ւմ եմ դառնաշունչ հողմից, երերո՛ւմ խոսքիս թախանձանքներից և կող-

կողագին հեծեծանքներով դողում շարունակ, կամ տվայտում եմ իմ տաժանելի կրքերի բովում և կամ տատանվում հոգուս տազնապով, խոլ մրրիկների կոծերից ծփում և սասանվում եմ, երբ որ բախվում են ալիքներն իրար, սարսում համբավի լիարժեքությամբ և կորչում ահի հիշատակումով, ատյանի տեսքից հավվում եմ արդեն և մեռնում Մեծիդ սպառնալիքից: Լսի՛ր ինձ, Ներո՛ղ, Բագմագո՛ւթ, Քավի՛չ, Երկայնամիտ և մարդասե՛ր Աստված, Քաղցրություն անճառ՝ բարի՛ օր բերող և Լո՛ւյս տենչալի, քանզի Կարո՛ղ ես ամեն բանի մեջ և շունչս երեսիս՝ Մեծիդ փրկությամբ ապահովելու: Եվ Քե՛զ Քո Հոր հետ, Սրբությանդ Հոգով՝ Փա՛ռք հավիտյանս: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հակողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՅ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏԾՈՒՆ  
ԲԱՆ ԿԷ**

Ա

Եվ քանզի ահա հույժ Մորար է խոսքն ու իրավացի Քրիստոս Աստծո, որ ուղղված է ինձ Ավետարանով, քան թե ամենայն չարիքների հոր՝ նենգ սատանայի, որ դրողում է լուկ ստի՛ն ու մահի՛ն, որի վարմերն ու որոգայթները քանդեց ու հայտնի արեց Լույսի մեջ՝ Փրկի՛չն աշխարհի, և իմ հնացած պատկերն Իրենո՛վ տարավ նորոգման, կերպարանքն առավ մեր ո՛ղջ հույթյան՝ Ինքը լինելով իսկությունն Աստծո՝ մեզ Իրե՛ն խառնեց: Նա շնորհներից Իր բազմաբազում ոչի՛նչ չտվեց չար սատանային, սակայն ինձ վրա լիառատությամբ Շնորհներ տեղաց: Երբե՛ք, ո՛չ մի պահ՝ Նա չչարչարվեց այդ չարքի համար, բայց պատարագվեց, պատարագվում է՝ հանուն ի՛մ կյանքի: Հարն անհաղորդ էլ մնաց այդ Կյանքին, իսկ ես մշտապես իմ փրկությունն եմ վայելում Տիրոջ ի՛նձ հովվությամբ, նա միշտ վանվում է ինչի նշանից, քանի որ ինքն է Տիրոջը խաչել, ես՝ գորանում եմ միշտ այդ նշանով, նա Լույսի կողմից հերքվում է միշտ, իսկ ես այդ Լույսով միշտ եմ միացած վերին փառքերին, նրան չտրվեց այս երկրի վրա և ո՛չ մի խոստում և ո՛չ մի հանգիստ, բայց ինձ երկի՛նքը Աստծուց

շնորհվեց, որպես ինձ համար սեփականություն, նրանից կտրե՛ց Տէրն առհավատչյան, բայց ի՛մը պահեց առանց խզելու, նրան ուղարկեց երամակի մեջ կեղտոտ խոզերի՛, բայց իմ մեջ Ի՛նքը իջավ-զորացավ, նրա բնույթը Նա համեմատեց կարիճների՛ հետ, բայց ինձ անվանեց Լույսի՛ ճառագայթ, նմանեցրեց նրան ստորոդ, նենգ սողուններին հավասարադա՛ս, բայց ինձ՝ Ի՛ր Անվամբ կոչեց ու կնքեց:

Բ

Բայց ես երախտիքն Աստծո լքեցի, որ այսքան բարի բաներ ինձ արեց, և մտածեցի հետևել չարին՝ հայել դժոխքի անդունդների մեջ, ու եղա այսպես բարուց անարժան, երախտիքների ձիրքերից ընկա երաշտների մեջ, և անընդունակ դառնալով սիրոն՝ ձգվեցի դեպի տուպանքը մեղքի, երկամներիս վրա բացվեցին խորախո՛ր խոցեր: Ժա՛նս արմավենու՝ Չարված ճյուղերով, բացախված գինիս, ցորենս՝ հեղեղված, ես դարձա այդպես թրջված մուրհակ, պատուված վճիռ, կնիքս իր կերպից արդեն ծռված, նմանությունս փոխված, այլակերպ, վառված մի հագուստ ու կորած բաժակ, ընկղմված մի նավ, և մարգարիտ եմ մանր Չարդոտված, սուզված անգի՛ն քար ու գոսացած տունկ, խորտակված նեցուկ, փայտս, որ՝ փթե՛լ է ամբողջովին, եղծված մանրագոր, փրահատակ տուն, խախտված խորան, բույսս՝ արմատներից հանված դո՛ւրս դցված, թափված ձե՛թ եմ ես աղբի գուհում, և կաթ եմ՝ մոխրի՛ կույտի մեջ հոսող, մահո՛ւ արժանիս՝ գնդում քաջերի:

Գ

Որովհետև որ՝ մարգարեների ճայնի համեմատ, միշտ խրատվել եմ Երուսաղեմին ուղղված խոսքերով: Ողբալի անճն իմ խրատը լսում, բայց չի՛ խրատվում, այստեղ անգոսնված, և խայտառակ եմ արդեն այն կողմում, այստեղ դո՛ւրս նետված, այնտեղ կշտամբված, այստեղ ձողկված եմ, այնտեղ նախատված, այստեղ թշնամի՛, հանդիմանված եմ այնտեղ շարունակ, այստեղ ապչած եմ, այն կողմում լքված, այստեղ հեծեծա՛նք, այնտեղ՝ հառաչա՛նք, այստեղ կարծիքներ, այն կողմում՝ վախճա՛ն, այստեղ խեթի վարք, այնտեղ՝ հատուցո՛ւմ, այստեղ արկածներ, այնտեղ՝ հանդեսներն իմ դատաստանի, ուր ո՛չ խոսելու իրավունք ունես, ո՛չ պաղատելու, և որտեղ չկան ո՛չ օրերի թիվ և ո՛չ էլ ելքեր

ժամանակներից, ո՛չ հուլիսի շավիղ, ո՛չ ողորմութ-  
յան որևէ մի դուռ, ո՛չ պահապան աջ, ո՛չ էլ  
փրկելու ձեռք այցելություն:

Գ

Սակայն այնտեղ էլ ապավինությունս  
Դո՛ւ ես միմիայն, և փրկությունս է միակ Քեզա-  
նո՛վ, և՛ Երանություն, և՛ Բժշկություն՝ Քեզա-  
նո՛վ են լուկ, Ողորմություն՝ են է Քեզանից ծագում,  
Միայն՛դ է հզոր, Կենդանի՛, Անճա՛ռ, Տէ՛ր Հիսուս  
Քրիստոս, Բարերա՛ր Աստված, Օրհնյա՛լ և  
Օրհնյա՛լ, վերստի՛ն Օրհնյա՛լ, Սրբության Հո-  
գով՛դ Հավե՛տ բարձրացած՝ Մեծիդ իսկակից Հո՛ր  
փառքի համար՝ Հավիտյա՛նս Հավեստ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր Հավելված  
նույն իսկ Հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՕՌԻՆ  
ՔԱՆ ԿԸ**

Ա

Արդ, վերում գրված հիշատակները,  
որ ահարկու են և Տէր Աստծուց են եկած ինձ  
հասած սպառնալիքներ, էլ ինչպե՞ս պիտի դա-  
դարեցնեն ինձ՝ նորից ողբերգի խոսքեր չգրել,  
կամ ինչպե՞ս պիտի արտասուքներին հեղեղնե-  
րը այս՝ ցամաքեն արդեն: Որովհետև որ՝ չորս  
վտականի գետերն առաջին իրենց հորդահոս  
ծավալումներով, որոնք Եդեմն ու երկիրը ամ-  
բողջ ոռոգում էին լիառատորեն՝ իրենց ջուրն  
այդպես բավականություն բաշխելով նրանց,  
բայց եթե նրանք իրենց բխումով գան ու միա-  
բան աչքերս լցվեն, չե՛ն կարող անձիս բոցը  
մեղքերի՛ փոխել գովություն: Եվ կամ իղձերով  
սուրբ մարգարեի՛ կրկնակի բխմամբ ջրերի ան-  
թիվ բազմությունները գան գլխիս թափվեն, և  
իմ տեսություն ճրագարանը դարձնեն աղբյուր-  
ներ՝ կոտրված ոգուս վտանգի չափը՝ չե՛ն ար-  
տահայտի: Եվ ո՛չ էլ անգամ խո՛ր եղերակա՛ն  
բանահույս կանանց լացը համորեն, որոնց մի-  
ջոցով վերքեր ստացած սիրտ-հոգիների ձայնն  
է բարձրանում, չե՛ն կարող նրանք իմ աղետ-  
ներն ու վտանգներն այս մեծ վերածել երգի  
կամ արտաբերել նվազն իմ ձայնի այսքա՛ն ող-  
բերգու:

Բ

Ի՛մ լինելության օրն էր նգովված և ո՛չ  
թե Հորի կամ Երեմիայի, որովհետև որ՝ նրանց օ-  
րերը տոնելի են արդ, և ո՛ղջ աշխարհը չի հավա-  
սարվի նրանցից մեկի չափ ու արժեքին, ապա ու-  
րեմն նախորդ եմ ես նկատված եղել որպես  
վե՛հ Հուլիսի ո՛չ արժանի մարդ, և կամ թե բա-  
րու մեկ-միասնական անեծքն է նրանց եկել Հան-  
դիպել իմ կյանքի օրվան, որտեղ ես եղա կորստ-  
յան որդի, մահվա՛ն հարևան, մչա՛կ մեղքերի և  
արբանյա՛կ մի՛ անօրենություն: Որովհետև որ՝  
չկարողացա հաստատուն մնալ կյանքի ուխտի  
մեջ, որ սահմանեցիր՝ Աստվա՛ծ Բարերար, որով-  
հետև որ՝ ի՛նքըս իմ կամքով՝ ես չքայլեցի պատ-  
վիրաններով Քո կենդանացնող և անմահական:  
Չվաստակեցի՛ պտղի բարիքներ հնձել-ամբարել,  
որպեսզի ձմռան խոով օրերում կերակրվելու  
համար պատրաստվեմ: Ո՛չ ամուր պատեր կա-  
ռուցեցի ես, ո՛չ էլ իմ տանը տանիք սարքեցի,  
որով որ պիտի պատասպարվեի փչող հողմերից:  
Անեղրական հոգևոր յուղից նշխա՛ր մի պաշար  
ես չամբարեցի, որով որ սովի տագնապը երբ  
գար՝ բուժում առնեի իմ հավաքածից: Ո՛չ ա-  
ղերսների աղոթքներն հագա, որով Քո առջև հա-  
մարձակվեի դուրս գալ ու կանգնել, և ո՛չ էլ իմ  
մեջ կարգավորեցի փրկության բերող մաքրույթ-  
յան մի վարք, որն իմ նորոգման երաշխավորը լի-  
նեի հաստատուն:

Գ

Եվ իմ կենցաղի շանապարհի մեջ ես իմ  
մատնիչին՝ նախօրոք հաշիվն իր չտվեցի, որ՝  
կյանքս ազատեմ, թողեցի, որ նա քա՛րչ տա, ինձ  
հանձնի՛ ձեռքը անողորմ, խիստ դատավորի:  
Ո՛չ իմ ձեռքերի լի օրհնությունով ելա ընդա-  
ռաջ, որով լինեի մեծ օրենադրի կամքին մաս-  
նակից՝ ի՛նձ սրբացնելով: Ո՛չ իմ դիմացից զգու-  
շություններ ինքս պահեցի, ո՛չ էլ թիկունքից՝  
պատասպարություն, ո՛չ գինիությունյան աջա վար-  
ժեցի, ո՛չ էլ իմ ձախի կանգնեցի պաշտպան՝  
Քեզ հավատալու ամուր վահանով, որոնցով  
միայն գերծ կմնայի պատերազմի ողջ վտանգնե-  
րի մեջ: Ո՛չ հազցրեցի իմ երիվարին ամուր  
զրահներ, ո՛չ էլ գինեցի իմ մարտիկներին ընտիր  
զենքերով, որ պարզ ճակատով ապրեի արդեն:  
Ո՛չ հավաքեցի կանխապես հասած պտուղը  
կյանքի, ո՛չ ուշահասին ելա ժողվելու, և ահա  
այսպես, հայտնվեցի ես տարակուսանքում՝ և  
զուրկ ամենայն բերք ու բարիքից: Այլևս չունե՛մ

մաքրութեան ծաղիկ, ո՛չ պահեստային յուղ ուղորմութեան, այլ լուկ գիշերվա մուսլ քողի տակ՝ աննշմարելիս՝ մահվան նիրհի մեջ ննջեցյալ եմ մի, և ստիպված եմ սպասել միայն, թե երբ կհնչի փողը տազնապի: Կրկին մերկացա հարսանայց գարդից և ձեթը վարքի վերստին՝ անգամ լքեցի Քո դեմ, և մուտքի Դուռը Մեծ Հարսանիքի՝ փակվեց իմ առաջ:

Դ

Եվ արդ, որտեղի՞ց մխիթարութիւն ինքս առնեմ այսքան տարբեր վշտերից, կամ խավարամերձ տարակուսներին որքա՞ն հուշերի լուսավորութիւն պիտի շողախեմ, և կամ՝ ոտքերիս հենարանները որտե՞ղ պիտ հիմնեմ, և կամ աչքերն իմ ո՞ր վատահոլութեան ուղղութեան հառնեմ, կամ նկատելի ծփանքները իմ ի՞նչ անդորրութեան մեջ հանդարտեցնեմ, և կամ բղձալի ո՞ր դժուրութեանը ձեռքերս հանեմ վեր՝ աղաչանքներով: Որովհետև թե՛ ձեռքերս ուղղեմ վեր՝ երկնի բարձունքին, սակայն այնտեղից Սողոմի վրա՝ անձրևի նման կրակ թափվեց վար: Եթե հատակը երկրի խորութեան՝ սա էլ իր հերթին բացեց կոկորդն իր՝ խորքում կուլ տալով Դադանին, մեկտեղ՝ ո՞ղջ բանակները նաև Աբրիոնի: Եթե հանդեմնեմ նրանից փախչել՝ Ումն է՛ ամեն բան՝ դուցե ինձ բռնի վիրշա՛յն ահադին: Թե գազանների խմբով թափառեմ՝ ինձ վրա արագ վրա կհասնի վրե՛ժը Տիրոջ, առավել՝ արագ, քան մի ժամանակ որ՝ Եղիսեի միջոցով եղավ՝ երբ Բեթելացի դեռևս մանուկ քրմորդիներին ենթարկեց պատժի: Թե հույսս դնեմ ամենատարած պարզութեանն օդի, բայց եզիպտացի բնակիչներին նույն օդը եղավ ակնհայտ խավար: Թե թռչուններին՝ բարձրերում ճախրող՝ սակայն նրանք են Տիրոջից կոչված՝ սպանվածների դիակներ ուտել:

Ե

Տկարների դեմ եթե խիզախեմ՝ պիծակներն անգամ իմ վերջը կտան, առյուծներն արդեն էլ ինչի՞ս են պետք: Եթե պատառող արջերից փախած ապրեցի, ապա՝ արյան ծարավի մժեղներն ելան, ինձ պատահեցին: Իսկ եթե անհոգ ինչ որ տեղ նստեմ՝ ամենաանարգ մժեղներն այդ նույն՝ վրաս կտեղան, որպես ցնցուղից, որը եռում է կրակի վրա և կմաղեն ինձ նրանք իրենցով: Միանդժյուրի եղժյուրից եթե հասցնեմ փախչել, մլակներն իրենց ճիրաններով ինձ պիտի աղաղեն, այդպես կեղեքեն՝ մորմաբեցնելով:

Եթե սենյակիս շտեմարանի խորշերից մեկում մտնեմ-թաքնվեմ, պիտ գագրացնե՛ն ինձ գարշուկյունները տաղտուկ գորտերի: Թե հանդերի մեջ որևէ վայրում գնամ հարմարվեմ, շնաճանձերի՝ գնդերը պիտի իրենց շարքերով գան ու պատեն ինձ: Եվ կամ էլ, եթե՛ խառնիճ ու մորեխ՝ գորավոր գորքով, և այլ թրթուրներ, այլոք էլ, որոնք՝ տեսքից են միայն անկյանք երևում, հարձակվեն վրաս՝ կարծր կարկուտի, նաև փչացնող եղյամով հանդերձ, որոնք որ աչքին թվում են անզոր և նվաստագույն, բայց Աստծո տված մե՛ն մի ակնարկով, մե՛ծ ուժգնութեամբ՝ եղն՝ւմ-հարձակվում, վան՞ւմ հպարտին, անբարեհաճին քո՞ւմ են հեռու. երբ փարավոնի բռնութեան բուռն գավազանին էլ՝ նո՛ւյն իսկ վիճակով նրանք հաղթեցին, այդ նրանք են, որ կերպարանքն ունեն թաքուն կրքերով մարդ լլկողներին տանջահարելու, որ եզիպտացից անօրինութեան դեմ ուղարկվեցին, չարչարողներին՝ խի՛ստ չարչարելու, գաղտնի վնասներ պատճառողներին՝ տալու հատուցո՞ւմ:

Զ

Այլ Արարիչըդ Դու ամենայնի, Տէրը՛դ ամենքի, ամենագորը՛դ ամեն բանի մեջ, ատելիներին՝ս դեմ ելի՛ր խապա՛ն հերքելով նրանց, և ողորմի՛ր ինձ կրկնակի գու՛թով՝ փրկութեան ձեռքըդ հո՛ւսկ երկարելով տարակուսածիս ու կապկավածիս, որ վարանյալ եմ մահվան պարտքերով՝ Դո՛ւ հասի՛ր կրկին, կրկին՝ ու կրկին: Զի՛ Դու ես միայն ճանաչվում Աստված՝ մի՛շտ փառավորյալ, Հոր հետ՝ Սրբութեան Հոգո՛վըդ մեկտեղ՝ հավիտյա՛նս հավետ: Ամէ՛ն:



**Հնձեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱՄ ԱՍՏՄՈՒՆ  
ԲԱՆ ԿԹ**

Ա

Եվ արդ, քանի որ Քո՛ Մեծիդ Ձեռքով ամենահնար արվեստավորիդ, Տիրոջ ու Աստծու՛դ ինձ կերպավորման, սիրող քուրայում ընտրելուդ համար՝ եռում շարունակ, բայց չե՛մ խրատվում, խառնվում Քեզ հետ, բայց չե՛մ

միանում, - և ինձ թվում է, թե զուր է արդեն, ո՛վ Երկնավոր ճարտարապետդ իմ, Մե՛ծդ արծաթազոր՝ մնոտուս համար այսքան աշխատես, ըստ մարգարեի հայտնի առակի, թե. «Չարուկթյունն իմ երբե՛ք Հչալվեց»։ Որովհետև որ ինքքս ինձանից այսքան խայտառակ մոլորամիտված, իբրև խելագա՛ր, իբրև դիվահա՛ր մի ողորմելի, անկա՛րգ բաներ եմ հանդգնում խոսել՝ և բազմացնում եմ պարտքերը՛ս միայն, քա՛ն թե գանեի հաշտության հնար: Եվ որպեսզի թե՛ անընտել՝ դիպված, անկի՛րթ պատահար կամ անհավասար հանդիպում հանկարծ ինձ հետ չլինեն՝ հանդերձյալ կյանքին պատրաստվելուս մեջ՝ տանջարաններն են այժմ ինձ երևում, որ իմ մարմնում անմոռա՛ց պահեն՝ նախնի անեծքի մնացորդների նշույններն անգամ, որպեսզի փոքր ու անարգ տարրերից իմ խրատվելով՝ մեծերն ուսանեն:

Բ

Որովհետև կան որովայնի մեջ մեղքի պատճառով ծնունդներ առնող բոտոտ ճիճուներ, որ շարժվում են ու տարատեսակ ազգ ու ցեղ ունեն, աղիների մեջ գաղտակո՛ւր որդեր, որոնք խաղում են հրակայծակող, և բծեր, որոնք բոցակակի՛ծ են, և անեծքներ, որ՝ չունեն՝ կերպարանք, և քրտնածին այլ եղծ երամներ, որ զազրաթուրմ են, բերելով մարդուն կսկի՛ծ ու մարմաջ, ասպատակո՛ղ են սրանք վայրենի, որ շատ նման են գիշերով մարտի ելած դեերին կամ գեները պատրաստ խավարափրաց բարբարոս գնդի, իսկ գազանությամբ սսես թե սրանք՝ խո՛ւ, արաբական գա՛յլ են գիշատիչ, կորաթուլը ընթացք, արջնաթուլը գույնով, կրկնապարուլը, կուածագ կտցով, որ ի գորու են կարիճի նման թունավոր խայթել, կամ իբրև դժնիկ՝ փշովք խոցոտել, և մարդու արյան խոնավությունը ծծել ու կուլ տալ, և անկողինը հանգստյան մահճի՛ տարբեր կրքերի անարգ վաստակով դարձնել ապակա՛ն: Եվ եթե մեկը ձեռքն իր կարկառի, որպեսզի նրանց հատուցումներն իսկ դարձնի իրենց, նախորդորեն՝ կանխի վտանգը մարդուն խեղճացնող, սակայն սրանք իսկ լերկ մարմիններով, փոքր հասակով, իբրև թեկերով փորձում են թուչել՝ և մորելների պես ոստոստալով՝ տարուբերվո՛ւմ են այս ու այն կողմի, և բազմապատրանք բարոյականով, նենգող ու դավող աղվեսների պես խորամանկելով, խուսանավո՛ւմ են՝ բազում ելքերով, որ-

պեսզի իրենք մահվան երկյուղից ազատված ապրեն: Եվ ահա այսքան չքոտի՛ անձեր՝ ընկճում են ո՛չ լուկ ուամիկ մարդկանց, և բազմաբազում ամբոխների էլ, այլև ահագին ու հզորագո՛ր թագավորների՝ փախցնո՛ւմ են նրանց ու տարագրում, հանո՛ւմ բարձրաբերձ ժայռերի վրա կամ բնակեցնում ամա վայրերում: Եվ քա՛ջ այրերը, որոնք իշխում են խոլ ամբոխներին և կամ տիրում են ժողովուրդների կամ քաղաքներն են առնում ազգերի, սրանք ամենքն էլ՝ իրենք են պատմում պարտությունն իրենց, թե. «Չկարեցա՛նք մենք մեր բռնությամբ Վեհին նվաճել, այդ պատճառով էլ մի կերպ փախչելով՝ ա՛յս տեղերն հասանք»:

Գ

Եվ ինչո՞ւ եմ ես այդքան փոքրերի, աննշանների, ծաղրելիների գոյության սաստիկ կրքերը պատմում, քանի որ սրանք ակնհայտորեն ջատագույնե՛ր են վերն Աստվածության՝ հանդերձյալներից դեռ հիշատակված, որ անօրինացող իմ մարմնի մեջ ընծա են բերում՝ պտուղներ, որոնք դառն են ու տանջող: Եվ սրանցից էլ եկամուտներն ու վարձերն են ախտի, որ սպանում են ախտ գործողներին և ուտիճների անողոք խմբեր հանո՛ւմ-կուտակում: սրանք իրենց մեջ չունեն՝ երբևէ փրկության նշույլ, մնում է միայն մարմնին բերող այս վտանգները հաշվի առնելով՝ սրանց պատճառներն իմաստասիրել, որ ա՛խտ գործելուց ծագեցին սրանք: Եվ անհնա՛ր է այլ տեղ փախչելով ազատվել՝ սրանց սպանումներից, առա՛նց Քո Կամքի Վերն ակնարկության, որից որ, ցավո՛ք, մարդու գնացքի շեղ կարիքները և հնարքները հեռու գնացին: Իսկ Դո՛ւ, Բարերա՛ր, բավականացնող ամեն՝ բան ունես և մեզ փրկելու կյանքի հնարներ, եթե կամենաս՝ փրկել՝, նորոգել՝, քավել՝, բժշկել՝ և կենսագործել՝: Եվ ամենայնից Քեզ Փա՛ռք հավիտյան: Ամէ՛ն:





**Հեծածանքների մի նոր հավելված  
նույն իսկ հակողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂ ՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ Հ**

**Ա**

**Քանզի խոսեցի ես** երկրավոր փոքր բաներից, որ վեր հանեցի դիտարկման համար, աննշաններից, որ մաս չեն համարվում ստեղծվածների գոյություն չարքում, այժմ դիմում եմ մեծագույնների արդար տեսակին, ովքեր որ ունեն տոնելի՛ հանդես, և հայտնի են մեզ Վերին Ահեղիդ իրավունքները իրենց պահելու անահառությունը: Քանի որ, եթե՛ ամենամերձն են նրանք Տէր Աստծուն, ինչպես օրինակ՝ մեծ հայրերն էին սկզբնաճանաչ և կամ մաքրագույն մարգարեների նման դեսպանորդ, կամ անբժագույն՝ որպես որ դասն էր առաքյալների, կամ ընտրելագույն՝ նահատակների նման ընծայվող, սակայն եթե՛ Դու Քո չնվազող բարերարությունը չմարդասիրես, խնամակալիդ հոգացությունը որ չի՛ փոխարինվում, և Քո անսպառ ողորմությունը չի՛ փոխարինվում, ապա ընդունայն մի բան կլինի՝ այդ ընտրյալներից փրկություն հուսալ:

**Բ**

Աբրահամին էլ անգամ ես ձայն տամ, (ինչպես ունեւոր, բայց ողորմելի մարդու մասին է Տէրը առակով մեզ վարդապետում) մի՛ կաթիլ ջուր իսկ չի կարող նա տալ, և ողորմելի այդ մարդու նման կրկին կմնամ պապա՛կ, տապի՛ մեջ, քանզի փակված է Աբրահամն անգամ դժոխքի տապում գտնվողների կարիքն հոգալու անհնարությունը: Մոյսեսին՝ ձայն տամ, երբ համակված էր նա տկարությունը, և անգոր եղամ ին՝ դժ մի մարդ փրկել, որ շաբաթ օրով փայտ էր հավաքում: Թե՛ Ահարոնին, երբ ի՛նքն էր կարոտ այլ աղաչողի: Իսկ եթե՛ Դավթին, նա էլ իր բարի առավելությունը ընկավ ստի՛ մեջ: Իսկ եթե՛ Նոյին և կամ թե՛ Հոբին և կամ Դանիելին՝ նրանց մասին էլ եզեկիելը մեկնությունը գրեց՝ անգամ անուաններն հիշատակելով, Տէր Աստծո կողմից հայտարարելով. «Կենդանի՛ եմ ես, - ասում է Տէրը,- թե, չե՛մ ապրեցնի նրանց ուստրերին նաև դուստրերին՝ այն բարկությունից, որ պիտի իջնի,

այլ՝ միայն իրեն՝ պիտի ազատվեն»: Իսկ թե՛ Պետրոսին՝ Վեմի՛ն հավատի, եղամ, որ նա՛ էլ Քո խնամքներից մի պահ հեռացավ, և ներգրավվեց այն կրքերի մեջ, որոնց մեջ եմ դեռ: Մի կողմ եմ թողնում խումբն այն բազմություն, որ կարիքներից խոնարհվեցին վար, թեպետ հավիտյան երջանիկ էին, նրանց հետ նաև Հովաս անունով ոմն մարգարեն, որ Աստվածառաք սպասավորություն մեջ գալթակղվեց, և մարդկորեն այդ անկումը նրա չի բացատրվում, թեպետ կարծում եմ, ըստ իմ մեկնություն, կարելի է և պատճառը գտնել:

**Գ**

Եվ որովհետև սահմանափակ է գորությունը այն, որ մարդիկ ունեն փրկության հանդեպ, և այդ երևաց մեծ Բարերարիդ ողորմածությունը, քանի որ նրանք գորացան Քեզնո՛վ, և Պաշտպանողի՛դ կողմից կոչվեցին Քո առջև երեսել, Հնարավորի՛դ միջոցով գտան քավությունն իրենց, և շնորհներով Քո ազատվեցին, և բժշկվեցին Անախտականի՛դ հոգածու ձեռքով, Անպակասից՝դ կենսագործվեցին՝ Նորոգողից՝դ լուսավորվելով, այսպես իմացանք սակավությունն ու որքանությունը նաև հողածին մեր իսկ ընտության, որ նմանությունը այդ օրինակների՛ հարազատորեն ու վստահությունը մխիթարություն-սփոփանք գտնեն՝ բոլոր նրանք որ՝ հուսահատության մեջ են հայտնվել, - և այս ամենը ինքս իմանալով ես Քե՛զ դիմեցի, Քե՛զ, որ Որդի՛ն ես կենդանի Աստծո, Քրիստո՛ս, Օրհնյա՛լը ամենայնի, և մանավանդ որ մաղթանքների հետ առակն հիշելով, արդարանում են խոսքերն իմ, որոնք վերում գրեցի, և ըստ իմաստուն մի երջանիկի. «Բարի է ընկնել Տիրոջ Ձեռքի տակ և ո՛չ երբեք ձեռքը մարդկային, որովհետև որ՝ որքան որ Մե՛ծ է, այնքան Ողորմա՛ծ»: Այս բանը թեև Դավթի միջոցով ինձ գծագրվեց, և երբ որ Տիրոջ երեք հարվածից մեկը ընտրելու առաջարկն եղավ, նա ինքն իր կամքով մահվան սատակման դատն ընտրեց, որն էլ՝ Քրիստոս Աստծո հավերժ կենդանի հավատն էր խոսուն, քան հարվածներն այն, որոնք ավելի փոքր լինելով տանջահարում են, բայց չեն ողորմում: Բայց ինձ համար էլ օրինակելի՛ է խոսքն այդ ճարակել, որպեսզի կյանքի հնար լինի իմ կորուսյալ անձին, որ թե՛ չայլայլեմ՝ պատեհությունից: Նաև որ այսպես չեմ նվաստացնում փրկվածներին՝ մեծ ողբերգություն այս իմ մատյանով, որով-



Հետև որ՝ առանց այդ մարդկանց օրինակների՝ Հնարավոր չէ՝ Տիրոջը մոտիկ լինել երբևէ, սակայն Փրկողի Սուրբ Անունն եմ ես պսակով գարդում, ամենքին ի լուր բարեհաճակում շնորհը՝ Նրա, թե նրանք, ովքեր բարձունքների մեջ թռչում են իրենց ապրած վարքերով, խոստովանում եմ, նրանք էլ էին Հավետ կարոտյալ Քո Ուղորմության կամքին ու դեղին:

Գ

Ահա՛ Դու կյանքն ես, Դու Փրկությունն ես, Դու՝ Բժշկությունն, Դու՝ Անմահությունն, Դու՝ Երանությունն, Լուսավորությունն, ե՛կ իմ մեղքերի չարչարանքներից անդո՛րր բեր ինձ էլ, և Քե՛զ Համար էլ կլինի Հանգիստ: Եվ մեր իսկ ձեռքով մեզ դատապարտման Հեծեծանքներն ու Քեզ ձանձրացնող թախանձանքները Հաշվի առնելով, այլ կերպ չես վարվում, քան թե մեզ բերած Փրկության կյանքով, որով որ, Տէ՛ր իմ, պարարտացնո՛ւմ ես ցեղը մարդկային, Դո՛ւ, որ Օրհնյալն ես Հավիտյա՛նս-Հավետ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր Հավելված  
Նուռն իսկ Հսկողից, նուռն աղերս-  
ներով և մաղթանքների խոսքով  
միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՕՈՒՆ  
ԲԱՆ ՀԱ**

Ա

Քանզի երջանիկ և փառավորյալ պարը սրբերի, որոնցից ոմանք դուլզն-ինչ գայթեցին, բայց Հաստատվեցին՝ ավելի Հաճախ, փոքր-ինչ չափով թեպետև ընկան սասանումի մեջ, սակայն մեծապես վառվեցին՝ նրանք կյանքիդ շողերով լուսավորվեցին՝ Հոգու մաքրությամբ, նրանցից մեկը զանգվածներին Հայտնի է անում տկարությունը Հասարակաստեղծ, մյուսը ահա մեզ ցույց է տալիս ավելի վե՛հն ու գերազանցը, քան՝ բնության օրենքն անվիճարկելի, և այդ ամենը՝ Հրեշտակային իրենց վարքերի առաքինությամբ: Եվ արգ, նրանք, որ օրհնյալներ էին՝ ամենախշտան ու Սուրբ Բերանով Քրիստոսի Հոր՝ ընտրյալներ ընտիր և տոնելիներ, բարեբանվածներ՝ խնկի բուրումով, և պաշտըվածներ՝ որպես անդամներ մեր Տիրոջ՝ Մարմնի, Սուրբ Հո-

գուն իրենց տաճար մարմնում օթևանելով՝ արդարացվածներ, որոնց մեջ չկա՛ն չարի նշաններ և գյո՛ւտ խավարի, այլ ամբողջապես անկեղծություն են և արդարաբուրություն՝ լուսավորությամբ, և այնքան, որքա՛ն մարդուն է տրված Աստծո մարդ լինել, նմանվե՛լ Նրան, երեսները՝ պա՛րզ, և ամաչելու ո՛չ մի բան չունեն, նրանք կրոնի բարձունքներն եյան ու չընկա՛ն ներքև, զգա՛ստ ապրեցին իրենց ողջ կյանքում և եղան անսո՛ւտ, Աստծով պաշտպանվա՛ծ՝ մնացին ամո՛ւր, անփոփոխ կամքո՛վ, ընթացքներն՝ արի՛ և անկասելի՛, միատա՛րր իրենց ճշմարտության մեջ և անցնդելի՛, դիմազարավող գորեղներ՝ էին և անհերքելի՛, պաթառ տեսնողներ՝ և՛ անապշելի՛, խոր իմաստությամբ իրենց վերնային և՛ անկուխելի՛, պատկերներ՝ մաքուր, անաղարտելի՛, որոնց Հաղթական կերպարանքները և Հիշատակը սուրբ անունների՝ Տէր Աստված Ի՛նքը մեզ վարդապետեց, որ նրանցով մենք, երբ որ Հայտնվենք խոովության մեջ՝ բարեհաճություն գտնենք Իր առաջ, նրանց իսկ նման՝ Լուսավորվելով Արարչիդ Խոսքով:

Բ

Բայց՝ անպիտանը՛ս ամեն բանի մեջ, և պարսավյալըս, այնքա՛ն, որքան որ՝ զորու է խոսքն իմ այդ մասին ասել, որ մինչդեռ արթուն նիրհո՛ւմ եմ սակայն, թմբիրի մեջ եմ՝ մինչդեռ արտաքուստ զգաստ եմ թվում, դայթակղվո՛ւմ եմ՝ բարեպաշտելիս, և աղոթելիս անգամ վրիպում, արգելակվո՛ւմ եմ ընթացքիս պահին, արդարանալիս արդեն մեղանչո՛ւմ, խաղաղանալիս ամբոխի նման երևում-խոռվո՛ւմ, արչավիս ժամին՝ Հակամիտում եմ՝ ինչպե՛ս ետ ընկնել, և Հեռանալիս՝ կրո՛ւնկս եմ դարձնում ընդդեմ գնացքիս, խոսում եմ Լուսից, բայց խավարի՛ն եմ Հարում շարունակ, քաղցրությանս մեջ՝ օշի՛նդը եմ խառնում, բարու կողմն անցած՝ Հյուսում եմ չարի՛ք, ոտքի կանգնելու պահին՝ գլորվո՛ւմ: Ծաղկում եմ, սակայն՝ չե՛մ պողաբերում, ասում եմ թեպետ՝ բայց՝ չե՛մ խրատվում, խոստանում ա՛նել, բայց՝ չե՛մ կատարում, ուխտ եմ պահում և՛ թողնում անվճար, ձեռքերս դեպի երկինք մեկնելիս՝ նուռն իսկ պահին էլ իջեցնում եմ վար, լուկ ցույց եմ տալիս, բայց՝ չե՛մ ընծայում, մերձեցնում, սակայն՝ չե՛մ մատուցանում, մի կողմից խոցիս Համար ճարակում՝ վիրավորվո՛ւմ եմ իմ մյուս կողմից, Հաշտության պահին՝ վերատին ընկնում խոր խոռվությամբ: Իզուր եմ գնում

դատի հանդեսին, քանի որ ինքս եմ իրավունքներով պարտքի մեջ ընկնում, գրի եմ առնում ու ջնջում իսկույն, նավում եմ թեպետ՝ շեղվում եմ սակայն Քո արդար գծից, սկսում եմ, բայց՝ երբեք չեմ՝ հասնում նավահանգստին, կարգավորվում եմ՝ սասանվում դարձյալ, լրիվ լցվում եմ և թափվում կրկին, շարակարգում եմ մտքերս այս կողմում, սակայն այն կողմից հոսում եմ ներքև, այստեղ բարդեցնում, այրվում եմ այնտեղ, հիմքը գցում եմ, բայց կառույցիցս գլուխ չեմ հանում, սակավ վաստակում, բայց թե վատնում եմ հազարապատիկ, գանձում քիչ թվով, սպառում անթիվ, այրոց խրատում, բայց ինքս կրկին մնում եմ անփորձ, ուսանում եմ միշտ, բայց ճշմարտության գիտությունն երբեք՝ չեղավ, որ հասնեմ, չարիքներն իմ մեջ մարում եմ, սակայն միևնույն չափի դրանք գործածում, քաջալերվում եմ փոքր բաներից՝ առավելները լքում եմ իսկույն, լարվում եմ, բայց և նույն իսկ մեղքերով կրկին՝ գլորվում, այստեղ կարկատում, պատառոտում եմ կարկատածս՝ այնտեղ, եղինձ քաղհանում՝ տնկում եմ տատասկ, հազիվ վեր ելած ընկնում եմ կրկին, աղալնու բույնն եմ մտնում, այնտեղից՝ ելնում եմ արդեն որպես մի ագռավ, սակավ սպիտակ առաջ եմ գալիս և ետ եմ դառնում լրիվ սևացած, և ասում եմ թե՛ Քե՛զ եմ դավանում, բայց նվիրվում եմ ի՛նձ սպանողին, և Քեզ ընդառաջ ելնելուս պահին՝ դարձնում եմ թիկո՛ւնք:

Գ

Մաքրվում այստեղ՝ այնտեղ մրոտվում, լվացվում լրիվ՝ աղտոտվում կրկին, կերպարանվում եմ մեծ Դավիթի տեսքով, սակայն գործերն եմ անում Սավուղի՛, ճշմարտություն եմ շրթունքով խոսում, սակայն ստո՛ւմ եմ երիկամներով, տալիս եմ աջով, ձախով՝ ավերում տվածներն աջիս, ցորեն ցանելիս՝ հետն էլ որո՞ւմ եմ խառնած սերմանում, և իմաստներից Քո բարձրագույն վայր սլանալով՝ ինքս ինձ եմ գտնում՝ հրեշտականման իմ երեսներով՝ սակայն դիվացած խորհուրդներին մեջ, ոտքս հաստատո՛ւմ եմ, բայց շարունակում ճոճվել մտքերով, սո՛ւտ ձևեր անում խոտորվում իրո՛ք, կեղծավորվում եմ որպես թե արդար, բայց արդյունքներով ամբարշտանո՛ւմ, դասվում եմ ահա հեզերի խմբին՝ այսերի՛ հետ եմ կաքավում սակայն, գովվում մարդկանցից, բայց պարսավվո՛ւմ եմ Տեսնողիդ կողմից, հողածինների շարքում տեսնվում միշտ ե-

րանելի՛ ավաղելի՛ եմ Լույսի վեհապանձ որդիներիդ մեջ, հաճոյանում եմ Հետին ուսմկին՝ բայց Աչքի՛ց ելնում մեծ Թագավորիդ, և Դատավորիդ ատյանը թողած՝ արեբս եմ հղում խառնակ կրոնով մոլորվածներին, վեհից մերժելով՝ սոսկականներին՝ մեջ եմ սպրդում: Արտաքնորեն եմ մարմինս պնդում, սակայն իմ հոգով ճանաչվում ճայի երկներանդ գույնով, գալիս հավում եմ դաշն հաստատելու, սակայն խոստացած ուխտս կորցնելով՝ մերժվում եմ ես և դո՛ւրս վռնդվում: Այսօ՛ր, ա՛յս պահին՝ մաքուր հոգեկիր, իսկ վաղը արդեն՝ մոլի՛ խելագար, մե՛կն եմ, որ Տիրոջ պատվերը լքել՝ թելագրամ՝նն է հետևում օձի, արիանում եմ գորավորվելով՝ վատթարագույնս ընկրկելով ե՛տ, ծանրությունն օրվա վրաս եմ առնում, բայց վարձի ժամին անմասն ելնում դո՛ւրս, հեռվից խոսում եմ ճոռոմ խոսքերով, պատասխանելու պահին՝ պապանձվո՛ւմ, առավոտյան կողմ հարո՛ւստ եմ թվում, երեկոյան կողմ դեգերում ունայն, աթոռներին եմ բազմում ծերերի, բայց կցորդվում եմ խելահեղներին, ննջում խեթելով՝ և ահաբեկված-գարհուրած՝ գարթնում: Դաշտերն իմ կամքի չարաչար հերկում և շտապում եմ՝ չարի՛ խնամքով լինել հոգածու, միշտ եմ անառակ որդու կերպարում՝ անդա՛րձ տարագիր, անզի՛ղջ խրատվող, անմխիթար եմ իմ տրտմության մեջ՝ և ինքնագրավ դարձել եմ գերի՛, ծառաս՝ մահվան ու ապականություն, անողորբոն տանջված եմ ես և մատնված եմ անփրկելիորեն, ջարդված ճյուղը՛ս անպատվաստելի, անհասկանալի հանգա՛ծս արդեն, խորտակվածս արդեն անկազդուրելի և կործանվածս՝ հանդերձներից գուրկ, և եթե պարտ է այստեղ ավելի սաստի՛կն էլ ասել, նախատինքներն այն, որ իմ անօրեն անձին են հասնում, ահա գրում եմ այդ ամենը ես, գրում-գրո՛ւմ եմ անխնայորեն՝ գեհննին խոփ նյութ հավաքելով: Եվ իմ նախանձի այդ արդյունքներով՝ Նոր ու Երկնային Աղամն Իջավ վար, որ ինձ ազատեր արդեն Հի՛ն մարդուց, որպես որ եղավ Կայնն առաջին՝ պատճառը Հնի և հողեղենի, որով որ այստեղ կրում եմ իմ մեջ նշանները այդ ամբաստանություն, որ կշտամբություն խոսքերումս էլ է լի արտահայտվում՝ ո՛չ միայն շնչիս տուրևառություն:

Դ

Եվ արդ, ո՛ւր փնտրեմ փրկությունը իմ, երբ որ հավատի սկզբնահայրը հուսահատության վայրի մեջ կանգնած՝ գործած չարիքս է ա-

նողոքորեն ինձ հանդիմանում, մարգարեներից մեծն է ինձ ծեծում խոսքե քարերով, քաջը բարեփառ ծայրն իր նիզակի՝ խրում է իմ մեջ, որ սաստակեցնի՝, և ճշմարտության պատկերն իմ միջից ջնջի, ինչպես, որ՝ Աքարի՛ն արեց, մատնեց վրեժին՝ վե՛հ, աստվածարյա՛լ հարագողերի, և մարգարեսածին տեսանողն ի՛նձ է, մեր Տիրոջ առջև՝ հետն ամաղեկցվոց դնում սպանդի՛, և նախանձավորն Աստծո՛ երկնքից բոց տեղացնելով սպառո՛ւմ է ինձ, Ստվերայինի ավա՛րտն է ահա Նորի Սկզբով հոսում ինձ վրա՛ ընտրության սաստիկ տարբաբաժանմամբ, և ահա պետը առաքյալների, կյանքն իմ դարձնում է Սափիրայի հետ՝ լուկ զրոյական, բայց Ջարմանային՝ քննությամբ Հոգու, մահիս բուրման մեջ՝ կյանքի քարոզն է պարգևով խառնում: Արդ, անաչառ են հետս հարաբերվում կաճառների մեջ՝ երջանիկների, որտեղ որ վերին՝ ահեղ հրամանն են իրազործում, ուր՝ արիններն են սպառազինված. և հրեշտակների հետ՝ նաև մարդիկ, հողագնդի ու տիեզերքի հետ՝ տարե՛րբը նաև, անշարժների՝ հետ և շարժվողների՝, և որոնցով էլ դատված տուժվում եմ լլկանքի պատժով, որպես օրինակ, որպես հիշատակ ապագաների, որ պիտի լինեն սոսկալի՛ այցով, որպես որ հոգմով փոթորկի մեջ են ալիքներն հավետ, նույնպես իմ կյանքի վատահուլթյան մեջ ա՛յդ մրրիկը կա, որ դարձնում է ինձ իմ հաստատությանմբ՝ արգե՛ն անկայուն: Եվ եթե մեկը իր իմաստությանմբ քննության առնի բազմատեսակ ու զանազանակերպ լողակները լավ հետազոտելով՝ մանուկ փոքրերին մեծամեծների շարքին դասելով, անթիվ, անհամար իրենց քանակով՝ կազմելով այդպես՝ թնդունո՛ւմ թռչող անհուն երամներ, որ եռո՛ւմ-գեռում ու սլանում են մարմնիս ծովի մեջ, սրանք ամենքը՝ թե՛ վկայում են, և թե՛ հաստատում ճշմարտությունը ասած խոսքերիս բանազրույթյան:

Ե

Սակայն Դու, Ի՛նքըդ, Օրհնաբանված և Անմահ՝ Թագավոր, Բարի՛, Երկնավոր, Մարդասեր՝ Հիսուս, Կենդանի՛ Աստծո Միածին՝ Որդիդ, Հզոր, Բարձրյալ՝ և Անքննելի՛, Անճառելի և Քավության ղեկող, սաստի՛ր իմ ներսի ճմեռն ամբողջված, ոգուս ծփացող ալիքները այս՝ հանդարտեցրո՞ւ, և արգելակի՛ր ծավալումները

խռովված սրտիս մոլեգին շարժման, և իմ ըմբռնման երասանակի սանձերը ձգի՛ր, որ դադա՛ր առնեն՝ ցնդա՛ծ մտքերիս վայրագություններն ինձ տանջահարող: Թո՛ղ խաղաղությունն իջնի ինձ վրա՛ հրամաններո՛ւմ ահեղ ու Մեծիդ, և ամեն կողմից հոգիս վարանող սասանող բքից՝ ինձ ազատո՛ւմ բեր, սատակեցրո՛ւ-խափանի՛ր լրիվ իմ անդամների բազում գլխանի ուրվականներին, իմ ամոթներին, որ գաղտնիքի պես ունեմ իմ ներսում, որոնք հիմնել եմ իմ երկրակենցաղ ու դառը կամքով, և այս նորընծա ու ողորմադերս աղոթքները իմ հարամատուցվող՝ հաչվի՛ առ, Օրհնյա՛լ, ա՛յս իմ մատյանի ողբերգությամբ, որ՝ Քե՛զ եմ մատուցում թախծալի ձայնով: Մահվան դժիս և խոր անդունդներից՝ հանի՛ր ինձ, Աստվա՛ծ, որ ես փրկված մարգարեիդ հետ՝ ապրեմ այլևս չքնա՛ղ մի կյանքով: Նոստովանության խոսքն իմ անձնադատ՝ ընդունի՛ր որպես բո՛ւյր անուշահոտ, և դառնադառն իմ այս վշտերից մխիթարությունն շնորհի՛ր ի՛նձ էլ, որ ուժգնորեն հեծեճանքներով՝ հուսահատության՝ մեջ եմ հայտնվել: Եվ Քե՛զ՝ Հորըդ հետ՝ Սրբության Հոգուն՝ փառաբանությունն, և հավե՛րժ պատիվ՝ և Իշխանությունն հավիտյա՛նս: Ամէ՛ն:



**Հեծեճանքների մի նոր հավելված նույն իսկ հսկողից, նույն աղերսներով և մաղթանքների խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐԳԵՐԻՑ ԽՈՍԳ ՌԻՂ ՂՎԱԾ ԱՍԾՈՒՆ ԲԱՆ ՀԲ**

Ա

Ահա ձե՛զ ասեմ, եկեղեցիներ՝ մենակյացների, մենաստանների աշակերտ այրեր, որ մերկ ձեռքերով ակնկալեցիք պարզեւներն հույսի, և զինվորվեցիք Տիրոջ անասճման բարություններին, բացած սեղանն այս լի խորտիկներով՝ ձե՛զ եմ ընծայում: Ընդունե՛ք սրանք, որպես ավանդներ խոստովանության, որ հոգիների փրկության համար ես պատրաստեցի, սրանց միջոցով ճանաչելով թե՛ մարմինն իմ ինչպես պարտություն կրեց: Եվ հիշեցիք այն խրատները, որ մարգարեներն ու առաքյալները ավանդեցին

մեզ. «Թող չպարծենա՛ որևէ մարմին Տէր Աստ-  
ծու առաջ, որովհետև որ՝ չկա՛ արդար մարդ՝ ո՛չ  
իսկ մեկ հոգի»: Եվ մի՛ մոռացե՛ք խոսքը Տէրու-  
նի, երբ պատվիրաններն իսպառ կատարե՛ք Հա-  
մարեցե՛ք ձեզ. «անպիտան՝ն ծառա», որ չլինի թե՛  
ձեր մեկ գտնվեն այնպիսիները, ովքեր որսեր են  
դառնում խաբողին, զգո՛ւշ մնացե՛ք և Գրքի՛  
խոսքով, թե. «Ընտրյալներն են չարին կերա-  
կուր»: Ինքս էլ իմ կողմից ձեզ մատուցելով  
նվազ պտուղն իմ, վկայում եմ, թե՛ իմ մեջ տեսա  
ես կամավորական ստահակություն, և չբեղկվող  
մեղքերի արդյունք՝ բյո՛ւր բամբասանքներ,  
սկզբնահորից սկսած մինչև վախճանը նրա ողջ  
ծնունդների՝ և Հանձնառությունը ի՛նքս իսկ իմ  
կամքի, ի՛նքս Հաստատելով՝ դրեցի անձիս սահ-  
մանականն այս, թե՛ ամենայնի չարիքի փոխան  
ե՛ս եմ պարտական:

Բ

Բարեպաշտ մեկից լսեցի խոսքն այս, թե.  
«պարտական չէ որևէ մեղքի», և ասած խոսքն  
իր՝ չհավանեցի, որովհետև որ՝ չի էլ Հարմարվում  
այդ խոսքը Տիրոջ առջևում խոսել, ում առջև եր-  
բե՛ք չի արդարանա երկրածին կյանքով և ո՛չ մի  
մարմին, իսկ սա ասում է. «Ես ո՛չ շնացա, ո՛չ  
պոռնկացա, ո՛չ էլ աշխարհում մահվան բույր  
բերող որևէ բանից առա՛ ճաշակում»: Եվ ինքն,  
իբրև թե՛ հեռո՛ւ է ամեն անօրենությունից, այդ  
խոսքի Համար՝ թող թողություն տա Տէրն այդ  
ասողին: Թեպետև խոսքն իր գրի է առել նա  
ճշմարտությունը, թե՛ չարե՛ց դրանք, սակայն  
սայթաքում կա այդ խոսքի մեջ, և Ջաքարիայի  
խոսքի Համաձայն՝ նույն ո՛չ պատշաճին այդ  
խոսքերն ասաց և ժողովուրդը մեծ Իսրայելի, թե.  
«Տէրն օրհնյա՛լ է, որովհետև որ՝ մենք Հարստա-  
ցա՛նք», և փարիսեցու կերպարանքի պես՝ անվա-  
յելո՛ւ է այդ խոսքը խոսած:

Գ

Սակայն, քանի որ՝ ինքս ամենագետ Աստ-  
ծուն եմ մատնել դատաստանը իմ, որ իմ կրքերի  
և աներևույթ բոլոր մտքերի կշիռը գիտի, որ օրի-  
նական սահմանումներով իմ անձն էլ դատի ի-  
րավ Հատուցմամբ. - ուրեմըն, ի՛նքս էլ՝ չե՛մ ձևա-  
նալու Տեսնողի առաջ, Քննողի մոտ չե՛մ կեղծա-  
վորվելու, չպիտի՛ ստեմ՝ բոլոր գործերս լավ՝ Նկա-  
տողին, և Մեծի առջև՝ չե՛մ ջանալու, թե՛ խաբե-  
բայությունը լինեմ հաճելի, ո՛չ էլ քողարկեմ չար  
ցոփությունն իմ բարու տեսիլով, ի՛նձ, ապիկա-

րի՛ս՝ չպիտի՛ Հարգեմ որպես ընտանի ընդունված  
պատկեր, ո՛չ խենչանամ օտար զարդերով, ո՛չ էլ  
պրծնըվեմ՝ այլոց ունեցած լի պայծառությունը,  
ո՛չ էլ գեղեցիկ պաճույճներ բերեմ ու Հարմարաց-  
նեմ՝ տգեղությունս ծածկելու Համար, չկա՛ մեկը,  
որ մեղավոր լինի առավել, քան՝ ե՛ս, իմ չափ անօ-  
րեն՝ իմ չափ ամբարի՛շտ, իմ չափ անիրա՛վ, իմ  
չափ չարագո՛րծ, իմ չափ շեղընթաց, սխալվա՛ծ՝  
իմ չափ, իմ չափ մոլեգնա՛ծ, խարդախա՛ծ՝ իմ  
չափ, իմ չափ շողախվա՛ծ, իմ չափ ամոթո՛ւյ և  
դատապարտվա՛ծ, այդ ամենն՝ ե՛ս եմ և ուրիշ ո՛չ  
ոք, այդ Հանցանքները ի՛նքս եմ կատարել, և իմ  
ներսում են դրա՛նք՝ ամե՛նքն էլ: Ո՛չ թե՛ ամենայն  
հեթանոսները, որ չգիտեին ո՛չ օրենք և ո՛չ՝ շնոր-  
հը Վերին, և ո՛չ էլ երբեք հրեաները, քանզի կու-  
րացան, ո՛չ տգետները և խառնիճաղանջ ամբոխ-  
ները մութ, որովհետև որ՝ Հիմարներ էին և հե-  
ռո՛ւ՝ կյանքի իմաստությունից:

Դ

Եվ անվանվեցի ինքս վարժապետ՝ որպես  
իմ անձին դատապարտություն, ուբբի՛-ուբբի՛  
կոչվեցի նաև՝ այդպես եղծելով գովեստն առ  
Աստված, բարի է ասին ինձ, որ՝ եղկությունն եմ  
ժառանգավոր, և մարդկանց կողմից՝ սո՛ւրբ վ-  
կայվեցի, երբ անմաքո՛ւր եմ իմ Աստծու առաջ,  
դավանեցին ինձ որպես արդարի՛ երբ ամեն ին-  
չով մարդ եմ ամբարի՛շտ, մարդկանց գովեստից  
ես հրճվեցի՛, որ՝ Քրիստոսի դատի՛ն ծաղրվեմ, իմ  
միլտությունս ավազանից իսկ կոչվեցի արթո՛ւն,  
մինչդեռ ննջում եմ մահվան քնի մեջ, ինքս հոր-  
ջորջվեցի փրկության օրվան որպես հսկո՛ղ աչք,  
բայց ա՛չք փակեցի զգաստության դեմ: Ահա  
դատաստան, Հանդիմանություն, նո՛ր կշտամ-  
բանք, հի՛ն դատապարտություն, դեմքի ամո-  
թա՛նք և տագնա՛պ հոգու, փո՛քր խնդիրներ և  
կշիռներ մեծ: Այլ, Դո՛ւ միայն, Տէ՛ր, Աստված  
բոլորի, որ մարդասե՛ր ես և անոխակա՛լ և երկայ-  
նամի՛տ, վերջին ահավոր օրվա դատի մեջ պարտ-  
քերիս տեղակ՝ մեղապարտ անձիս դատը Համա-  
րի՛ր՝ այս կսկծացնո՛ղ նախատիրներըս ինքնա-  
բանական, թող որ այդ օրը Քեզնից չլսեմ արդեն  
ամենն այն, որ՝ ինքս ի՛մ բերնով խոստովանեցի  
ու գրի առա, և խոսքերն իմ այս թող որ ընդուն-  
վեն անձիս փոխարեն: Արդ, Հանն՝ս ինձնից, հե-  
ռացնե՛ս լրիվ՝ կանոնակարգով ինձնից պահանջ-  
վող պարտքե՛րս բոլոր, այն տեսչանքով, որ՝ Հո-  
գիս Քե՛զ հետ է առհավետ կապվել, Հանի՛ր ին-  
ձանից նախատիրներըս, խայտառակություն-

նե՛րըս ամոթալի, և իմ մարմնի տեսակը տգեղ, որ մերկանդամ է Քո շնորհներից՝ ծածկի՛ր Աջ Ձեռքով Քո Կարողութեան, Հանգստյան մատնի՛ր՝ մեղքի բեռներից ուժգին կաղողիս, շուրջս բարութեան սահմաններ կարգիր, որ ե՛լք ունենամ օրհնյալ կյանքիդ մեջ, և մտապահի՛ր, որ ինձ ողորմես ու մահիցս հետո՝ կյանք տաս վերստին, Դո՛ւ որ՝ օրհնյալ ես երկինքների մեջ, երկրում գովյալ, և բարեբանված ամենքի կողմից՝ Հավիտյանս Հավեստ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր Հավելված  
նույն իսկ Հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍԾՈՒՆ  
ԲԱՆ ՀԳ**

Ա

**Թագավոր**՝ Բարձրյալ, Հզոր, Ահալոր, Օրհնյալըդ միայն՝ Տէ՛ր Հիտուս Քրիստոս, լոկ Դո՛ւ Կարող ես Հուսահատութեան սպառնումները փոխարկել կյանքի անակնկալի, և անեծքները սատակեցուցի՛չ՝ դարձնել ապրեցնող, Համակը՝ օրհնություն, և վհատաբեր պարսավանքի հետ՝ տալ և գովություն գվարթացուցի՛չ, ամոթանքի հետ՝ Համարձակություն, պատկառանքի հետ՝ Հարգանք ու պատի՛վ, տարադրման հետ՝ Հույսի բարություն, բաժանումի հետ՝ ակնկալություն միաբանութեան, և սպառնանքի խոսքի հետ մեկտեղ՝ սփոփանքներըդ մե՛ղմ ու Համոզիչ, և մեկ անգամվա դատապարտման հետ՝ ազատությունը՛ կրկնակի՛ չափով:

Բ

Ողորմի՛ր, Տէ՛ր իմ, ի՛նձ՝ մեղապարտիս, շնչիս արձակման օրը երբ որ գա, երբ որ աչքերն իմ ողորմաաղերս բարձունքներդ հառեմ, և աչքիս առջև ճամփան Հայտնվի, որից երբեք չե՛մ կարող փախչել, թող որ այդ ճամփով բազում արկած ու վտանգներով լի՛ անշե՛ղ ընթանամ մտքիս տեսիլքով: Երբ բնակութեան իմ տան երգիկից արդեն նկատեմ շավիղը ելքի՛ կիսամեռութեամբ իմ թշվառացած, այլայլված դեմքով, մատներիս դողով, կարկամ հոգոցով և հեծեծանքիս նվազանալով, ձայնով նվաղած, իմ հոգու արդեն հոգնած ու տխուր տարակույսներով՝

բող՛ գործածս բոլոր մեղքերի Համար՝ սրտիս խորքերում հառաչանքներով, կրկի՛ն Կարող ես բարեգլխութեամբ Հրաշագործել՝ Քո գորեղութեամբ Հավիտենական այս խոսքն ասելով. «Ո՛ղջ լինի հոգիդ՝ արդեն փրկված ես խորտակումներից», և կամ թե խոսքն այս. «Թողություն լինի բոլոր մեղքերիդ», և կամ խոսքն Հաջորդ. «Ե՛լ, խաղա՛ղ գնա, դու սրբվա՛ծ ես մեղքերիցդ արդեն»: Իսկ որ այն ժամին պիտի անհնար լինի պաղատել, այսօր ընդունիր աղաչանքներս մարդասիրաբար, ո՛վ երկայնամիտ, շնորհումներով ամենակեցո՛ւյց:

Գ

Եվ մինչդեռ, այժմ՝ կարող եմ խոսել զարդարուն խոսքով, սե՛գ, խրոխտածայն, բարձրապարանոց, այնժամ, երբ դառնամ անկենդան դիակ՝ շուրթերս արգելված էլ չե՛ն խոսելու, ձեռքերն իմ պիտի լինեն կաշկանդված, ու անդամներս լքված ու մերժված, շրթունքներս խո՛ւփ, աչքերս՝ փակված, տախտակ մի անշարժ, կո՛նջ կիսաայրված, արձան՝ անգագ, պատկե՛ր անբարբառ, գոյություն անշո՛ւնչ, խղճալի՛ տեսիլ, կորչո՛ղ կերպարանք, ողբալի՛ նշմար ու եղկելի՛ դեմք, և արտասվելի մի նմանություն, լու՛ծ մի լեզու, ցամա՛ք որպես խոտ, թոթափված ծաղիկ, ծորացո՛ղ մի գեղ, Հանգա՛ծ մի ճրագ, դատարկված կոկորդ, խոպանացած սիրտ, լու՛ծ ազդարան, սպառված աղբյուր, թալկացած մարմին, նեխած որովայն, քանդված տաղավար, կոտրված ոստեր, հոդեր՝ բաժանված, կացնահարված ծառ, սղոցված արմատ ու թողնված տուն, Հնձված մի արտ, արմատախի՛լ բույս, օտար բարեկամ, մոռացված պահեստ, թաղված գարշություն, մերժված ատելի, Հանված արգելակ, անարգված կմախք, ոտնակոխելի՛ որպես անպե՛տք իր՝ կարոտյալ այլոց աղաչանքներին, ովքեր թշվառիս ձայնի հավատով՝ հառաչանքներով աղերս են երգում, և արցունքների ցողերն են իրենց տարածում Վերին բարձունքների մեջ, որ Բարբերարիդ գլխությունները Հրավիրեն իմ խղճյալիս վրա: Դեպի Քեզ դարձիս մասին են երգում, որ՝ օրհնո՛ւմ եմ ես, ինչիդ նշանի փրկությունը՝ ինձ երկրպագելի, և կյանքն հարութեան Քո՛ ճշմարտութեամբ, որին փարված եմ խորի՛ն Հավատով, Հայտնությունները շենող փառքերիդ, որոնք որ ի՛նքս եմ միշտ փառավորում, ահավոր օրը մեծ Դատաստանիդ, որ վխալում եմ՝ խոստովանութեամբ, Հանդիմանանքի

խոսքերդ ուղղված ինձ, որոնցից է որ՝ ունեմ զարհուրանք, ուղեկցումը ինձ Սրբուկայանդ Հոգու, որ՝ պաշտո՛ւմ եմ ես, Տէրունի օծման Խաչակնքումը՝ ինձ համբուրելի՛, Թագավորելը՝ Քեզ հետ միասին, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, որի համա՛ր եմ անվերջ պաղատում: Արդ, լքվե՛ց, մերժվե՛ց, ցնդե՛ց, վերացա՛վ, տարաբաժանվե՛ց, փախա՛վ, սլացա՛վ, ու տեղի տվեց կցորդուկությունն այն, որ զուգընթաց էր կենդանությունը իմ կենցաղային, իսկ Հուսարը՝ Քեզ, որ ես Քեզանից պարզե ստացա, որպես մնայո՛ւն հիշատակարան՝ իր անջնջելի հարակալությունը պահպանվեց իմ մեջ:

Դ

Իմ վտանգավաճիս տարակույսները ողորմությունք մը տես, Միայն Բարեգութ և փառաբանված Որդի՛դ Հայր Աստծո, քավի՛ր, բժշկի՛ր և կենսագործի՛ր՝ պաշտպան կանգնելով, ե՛կ-նորոգի՛ր ինձ, նկարի՛ր կերպն իմ, կանգնեցրո՛ւ ոտքի, դարձրու հաստատուն, կրկի՛ն ծնիր ինձ՝ վերատեղծելով անարատության երջանիկ կամքով: Կարողությունը Քո՛նն է Հավիտյան, և փրկութիւնն ու ողորմությունը Քեզնո՛վ է լինում, Չկա՛ Քեզ համար անկարելի բան, այլ ամբողջությամբ զորությունն են Դու, Քո՛նն է Բարձրությունը, Իշխանությունը, Թագավորությունն անվախճանական, և՛ Իսկությունը, և՛ Ինքնությունը, Բացարձակությունը ամենուրեք, Բարերարություն և Լուսավորություն: Փառավորյա՛լ են Տիրակներն և անպակաս են ու անհավելված, Խնկյա՛լ խորհրդով անթարգմանելի՛ ամբողջութիւնով Սուրբ Երրորդության, գոհաբանվածդ առհավետորեն՝ և միապատի՛վ զուգահեռութեամբ և՛ նույն պաշտոնում հավասարության՝ երեկ և այսօր, հավիտյա՛նս -հավետ: Ամէ՛ն:



**Հեծեճանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
բրանքերով և մաղթանքների խոսքով  
միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍԻ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՄՈՒՆ  
ԲԱՆ ՀԴ**

Ա

Արքա՛ երկնավոր, Տէ՛ր ամենեքյան, ամեն բանի մեջ հեռատեսորեն՝ միշտ համբերատար, Կենդանի Աստծո անքնի՛ն Որդի, ահա, գի-

տենք, որ՝ ողորմությունդ իր ամբողջ իսկությունք մը նրա՛ն է հասնում, ու և՛ վաստակների ակնկալությունն իսպա՛ն սպառվեց, և, զիտենք՝ նրա՛ն են Բարեգործում, ու և՛ որ տեսություն իմաստն աշխարհում՝ չարով խափանվեց, և և՛ յն ժամին են Գալիս օգնություն ու մարդասիրում, երբ որ տեսնում են, թե տկարության վտանգը աճել, տիրաբար եկել ու պաշարել է՝ ներսից ու դրսից: Բժշկությունը Քո Աստվածային Ձեռքով բաշխվող՝ այնտեղ է գործում, երբ անգամ Հկա անդամների մեջ կյանքի իսկ նշույլ ու կենդանություն, և այն վայրերն են Քո Այցելության շնորհով պատվում, որոնց մեջ արդեն՝ չե՛ն էլ նկատվում ելքի հնարներ, և մեծությունըդ ա՛յն բաներում է դառնում ակնհայտ, երբ Բժշկում են Հուսահատության վերքերը բոլոր, նա՛ է հարազատ ազգակիցը Քո, երբ անակնկալ Քո արվեստներով, ճիշտ ժամանակին, փրկություններդ են առատ շնորհում, և հանդիսարանը հաղթանակիդ, ա՛յն է, երբ որ Դու՛ սպասող շնչիս առջև Բացում են մուտքերը կյանքի, որ փակված էին մինչ այդ՝ ամբողջ, և շնորհները Քո վայելչական ա՛յն բանում են, երբ, իմ չարիքները իսպառ մոռացած՝ Քո Բարիքներն են միայն հիշեցնում, ա՛յն բաներում է Քո անոխակալ ընուկթն երևում, երբ երախտիքներ ունեցողի հետ խնամարկում են ի՛նձ, որ՝ դատարկ եմ երախտիքներից, և այս ամենը տեսելով արդեն պիտի հասկանամ, թե, նախկինի պես, Քո Գթությունք են նայում խոսքերի իմ՝ նվերներին, և չարիքների սովորույթներն իմ՝ պիտի ինձանից իսպա՛ն հեռացնես:

Բ

Եվ այս մասին իսկ հյուսվում են խոսքեր, որ եղանակի նվազակցությամբ՝ արտասանվում են և կամ երգվում, թե՛ բարի Տէրը բարեգործներին պարգևներ տալիս՝ բաժին է հանում և չա՛ր ծառային: Մինչ նա իրավամբ սպասում էր լոկ բանտ ու աքսորի, բայց արքայական պալատի մեջ է հանգիստն իր գտնում: Մինչդեռ չար ծառան հրավերք ուներ՝ ապրելու արդեն՝ զբի՛ տիրմի մեջ, բայց Տէրը նրան ամենապատիվ մարդկանց հետ մեկտեղ՝ սեղան նստեցնում և բազմեցնում է գահերի վրա: Մինչ սպասում էր, թե որպես պատիժ աչքերն իր ահա պիտի կուրացնեն՝ նրան երկնքի բարձրություններից բերկրություններ է տալիս հայեցման: Մինչ սպասում էր, թե պիտի ահա մատներն իր հատեն՝ համարձակության մատանի՛ է նա նրան մատուցում:

Մինչդեռ նայում էր իր վրա եկող հարվածների կողմ՝ նույն պահին նրան Տէրն իր գլխով շարժելով գիրկին է վերցնում: Մինչ կորստյանն էր պատրաստվում արդեն բազմություն առաջ բարձրացնում է վե՛ր, պատիվներ տալիս: Մինչ սպասում էր մահվամբ սատակման՝ Տէրը կյանքի հետ նաև փառքեր է նրան ընծայում: Մինչ սպասում էր, թե իրեն պիտի ահա գլխատեն՝ նրան պակո՛ւյ է պայծառացնում: Պտուղներն այս են Քո մեզ օրհնության, սքանչելիքներն շառավիղներիդ, Գլխառա՛տ Աստված, և այսպիսի՛ն են արգասիքները Քո արարչական հրամանների, և այսպիսի՛ն են իղձերը բոլոր Քո խորհուրդների, որ տենչանքներդ են մեզ խոստովանում, սրա՛նք են ահա, որ Քո Մեծ Լույսի ամենասպիտուկ ճառագայթներից՝ նշույններ են լուկ, և բարեբանված Քո քաղցրություն ճաշակումները մեզ պիտիբալի՛ այսպիսի՛ն են, Տէ՛ր:

Գ

Սրանք ամենքը Քեզնի՛ց են, Աստված, և Քեզանով է, որ այս ամենի մասին գրեցի՝ Քեզնի՛ց իսկ ազդված: Ահա Քեզնով էլ՝ Քե՛զ եմ աղաչում, ամենօրհնյա՛լ, որ Քո սիրո՛ւց ինձ պարգև շնորհես: Բա՛ց, Տէ՛ր, իմ առաջ՝ դանձերդ բարի, ըստ այն առակի աղերսանքների, թե՛ Քո բարություն հաշվի մեջ մի՛ առ չարիքները իմ: Պահեստներդ մեջ մի՛ հավաքիր՝ ինչ ատելի՛ են Քեզ՝ ամենայն տեսակ ռիսեր ու ցատում, մի՛ խառնիր դրանք գլխություններիդ, առատություն՝ Քո ողորմություն: Ինչ որ տհաճ ու անախորժ է Քեզ՝ մի՞տություն լինի, թե դաժանություն, մի՛ պահիր դրանք ունեցվածքիդ մեջ, և ինձ վնասող մեղքերն իմ բոլոր ու թշվառացնող վիճակները իմ՝ մի՛ թող խառնվեն Քո բարիքներին: Եվ իմ պարտքերի մուհրակը, որ լի է անեծքներով՝ կյանքի մատյանիդ մեջ գրի մի՛ առ Աջո՛ւղ օրհնության, այլ այն բաները, որոնք ինձ համար անհնարին են՝ դարձրու դյուրին՝ և հնարավոր՝ և դրանցով, Տէ՛ր, կրկնակի ավել՝ պիտի մեծանա Անո՛ւնդ իմ ներսում:

Դ

Շատ են պարտքերն իմ՝ անթի՛վ-անհամա՛ր, բայց այնքան չեն, քան՝ ողորմություններդ հրաշալի: Բազմաբազում են մեղանշումներս, սակայն չեն՝ կարող ներողությունը Քո գերազանցել: Չարություններն են իմ հաճախակի, սակայն հաղթում է նրանց ամենքին՝ մարդասի-

րե՛լը իր հզորությունը, ո՛վ Ամենակալ: Անթվելի՛ են բծերն իմ անձի, սակայն Քեզ համար, ինձ գրավելով՝ հո՛ւյժ սահմանափակ: Մեղքի գեներն իմ՝ ամոթահարիս, չեն՝ կարող լինել այնքան զորավոր, որ կենդանանան ու պողպատովեն, քան՝ հիշատակը մահվամբ կյանք առած Հաղթանակածիդ, որով որ, օրհնյա՛լ, բռնություն բերող ինձ կործանողին վանում ես հեռո՛ւ: Աստծո օրվադ մեջ փոքր խավարն իմ ի՛նչ պիտի ազդի, և ինչպե՞ս պիտի կայուն դիմանա՞ դուզյն աղջամուղըն իմ մեծ ճառագայթիդ, և ինչպե՞ս պիտի խաչակրություն չարչարանքիդ հետ դրվի կշեռքին՝ հեշտությունների խակությունները տկար իմ մարմնի: Ամենակալիդ աչքն առատության ի՛նչ պիտի տեսնի՞ ողջ տիեզերքի մեղքերի կույտում: Ընդամենը մի խոշոր հողի դուռը դյուրափխրելի՛, որին թե կարծր մի բան երբ բախվի՛ մեղքն այդ կցնդի՛ ու կանխանա՞, որպես պղպղակն անձրևի պահին, նույնպես Քո կամքի՛ առա՛տ անձրևի բազմազեղ հոսմամբ՝ պղպղակի՛ պես էլ՝ պիտի պայթի՛:

Ե

Էլ բանի պետք չեն՝ զորությունդ առաջ և ամենհնար Քո Կարողության՝ առավելությունը ժամանակների, որ՝ քավություն տաս իմ հանցանքներին՝ ո՛չ ակնթարթի մի որոնման մեջ, ո՛չ անցավոր մի պահի տեսության, ո՛չ էլ կայծակող կարճ մի նայվածքի, ո՛չ կիսամասնյա տիրող լուրության, և ո՛չ շտապող ոտքերի քայլի, ո՛չ բարձրությունից կաթիլի անկման, ո՛չ որոշ չափի մտքի հետևման, ո՛չ արագության պատիկ մի պահի, և ո՛չ էլ շնչի տուրեառություն, կամ այս ամենին նման այլևայլ որևէ բանի, որ անգո են և չտպավորվող, օրինակներ, որ անձե՛ն են, նաև՝ հավե՛տ անկայուն, այնքա՛ն են դրանք առժամանակյա՛, հարևանակի՛ց: Բայց Դու մեղքերիս պահեստարանի սառնամանիքից՝ Քո մե՛ծ զորությունը՝ Աստվածո՛ւք ամենքի, Տէ՛ր շիտու Քրիստոս, Որդի՛ անքննելի կենդանի Աստծո, հայո՛ւմ ես դրանք, չբացնո՛ւմ լրիվ եղծումներն այդ ողջ: Որ պարգևում ես Արե՛լ քաղցրության՝ բարիների հետ նաև չարերի՛ն, անձրևելով յուրաքանչյուրին՝ անաչառորեն, որ կշռում ես գործերը նրանց՝ իրավունքներով, և վտանգներն ու կրքերը նրանց հավասարապես դարձնում բուժվո՛ղ: Նրանց ամենքին, որ ակնկալում ու փափագում են պարգև՝ նախաստի՛ փորձությունների փոքր արգելքներով, սակավեցնում ես պարտքերը

նրանց, ա՛յս կողմում արդեն վճարդ անելով նրա՛նց փոխարեն, իսկ նրանց, ովքեր երկիրն ընտրեցին՝ ներողամիտ ես Քո Ողորմությամբ դարմանում տալով, միշտ սպասելով նրանց Քեզդարձի՛ն: Փառաբանություն Ամենզորիդ՝ բոլոր Քո գործած այդ հրաշքների ու կյանքի՛ համար, Բարեխնամող Հեռատեսություն, հափիտյա՛ն Օրհնյալ: Ամէ՛ն:



**Հեծծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏԾՈՒՆ  
ԲԱՆ ՀԵ**

**ՍՈՒՐՔ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԵՆԴԱՆԻ  
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ա

**Եվ արդ**, որ այսբան ընկղմված եմ ես, այսբան զմայլված, իսպա՛ռ ծածկված բազմամասնյա Քո երախտիքներով, հաճա՛խ Այցելմամբ, Քո անճառություն առավելությունմբ, որ ամենառատ լի լրիվությունմբ՝ աննվազելի՛ է աշից և ձախից, դիմացի՛ց եկող, նաև թիկունքի՛ց, և անբավությունմբ անթվարկելի՛, այդ ամենո՛վ եմ այստեղ մատուցում, ընծայում դարձյալ վե՛հ ճշմարտություն դավանման ավանդը Գովեստի արժան: Որովհետև որ, ես մի ժամանակ ամեն ինչ պատրոզ նենգողի կարթով ու խաբեությունմբ և հերձվածողի չարափառությունմբ առաջնորդվելով՝ դո՛ւրս մերժվեցի և հեռացվեցի՝ դրախտի կյանքից, արդ, այժմ արդեն միավորված եմ ուղղակիորեն՝ անբծությունը և ավանդներին, որ ա՛յն կողմից է շնորհ լսողիս, որ հա՛նրդ անգամ համբարձվեմ ի՛նքս էլ՝ Լուսյի թեկերով երկի՛նք ժամանեմ՝ ի՛մ դավանությունմբ: Քանի որ ինքս էլ նույն այդ Արգանդից, սուրբ հղիությունմբ եմ առաջացել, և ծնունդ առել Հոգու երկունքով, մե՛ծ և երջանիկ, անարա՛տ, անմա՛հ Լուսյի Դշխոյից, որ իսկուհի՛ն է բոլոր կույսերի, Մա՛յրն իմ պանծալի և գտնվում է գովեստների՛ մեջ շարունակական, պարտ է, ուրեմն, որ դավանումն իմ Բանի սահմանած կանոնակարգով արձանագրեմ իմ այս մատյանում, որ մի՛շտ ճանաչվի, նաև

ցո՛ւյց տրվի ապագայո՛ւմ էլ եկող ազգերին՝ իմ ա՛յս պատմությունմբ՝ որքանությունմբ խնկելի փառքիդ՝ և արժանավոր պաշտամունքներով լինի պատվված, որպես որ մաքուր, սրբված Մարմին, որի գլուխն է մեր Աստծո Բանը մարդեղենացած, և այդ ամենն եմ այժմ հիշատակում՝ Սուրբ Երրորդություն դավանման մասին խոսած ճառիս մեջ:

Դարձյալ նույն մասին, որ Աստվածային Հոգու ներազմամբ ու կրնկնապատիկ էլ երկրորդելով այն ամենը, որ՝ առաքյալների համար սահմանվեց եկեղեցու ողջ Լուսավորությունն ավանդապահել, եղալ ինձ հետ էլ, որ և մեկնությունմբ տալիս ենք այստեղ: Որն անչնչավոր նյութեղենությամբ մատնացուցում է մեզ երանավոր կերպավորումը Վերն անճառելի:

Բ

Եվ արդ, ըստ բերված այս օրինակի և հոգեկար Բանի պատկերի, որ հարմարվում է Լուսյի խորանին, ընդունիր ի՛նձ էլ, գթառա՛տ, օրհնյա՛լ, ամենաքավո՛ղ և այս դավանմամբ սրբացրու ի՛նձ էլ: Եվ այս մատյանով հանի՛ր ինձանից նախատինքները բոլոր մեղքերիս, և սրանով իսկ հովանի դարձած բազմեցրու ի՛նձ էլ՝ անբիծներիդ և անմեղներիդ հետ, ի՛նձ տկարիս էլ ավելացրու Դավթի տան մյուս քնակիչներին և այնտեղից էլ՝ դի՛ր Աստծո Տան մեջ, ըստ մարգարեի այն խոսքի, որով՝ Տէ՛ր Հիսուս Քե՛զ էր նա իր փրկության ակնարկը անում: Իմ ներս մտնելով, ո՛չ էլ անօգուտ իմ դուրս ելնելով՝ հետևությունմբ մի՛ անիչ շատ խիստ: Եվ չլինի թե ջերմությունը իմ անկեղծ հավատի օտար սառնություն հանկարծ հարմարվի և համբույրներին իմ ողջունների՝ չլինի՛ հանկարծ հավելագրվի ինչ որ անկարգ բան: Եվ չլինի թե իմ այս պաշտոնը ապաշնորհների հետ վարկաբեկվի և չլինի թե՛ երկրպագումն իմ թողնվի անխորհուրդ, չլինի՛ լըքես: Եվ չլինի թե տեսնվող պատկերը լինի անպտուղ, և սքանչելիությունները չլինի՛ փոխվի աննշանական կերպարումների: Թող չմոռացվի՛ Քո ողջակեզի սպանումն, Աստվա՛ծ, որ առա՛նց կրակ իրականացավ, և չլինի թե պատարագն ուխտի այս ճառով ցրվի ինձ դո՛ւրս հանելով: Մի՛ թող, որ Լուսյիդ ճաշակումը իմ մահավանդա՛ն համար ինձ պատճա՛ռ լինի, և կամ բաժակն իմ, որ կողիցդ հոսող արյամբ է լեցուն՝ չլինի՛ դառնա դատապարտություն:



Աղահոն՝ եմ Քեզ, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, մե՛կը Աստվածային ողջ էութիւններից և Քեզանո՛վ է Գիտութիւնը Հոր նաև Սուրբ Հոգուդ, որոնց որ միայն Քե՛զ ճաշակելով մենք ճանաչեցինք, և Քեզանո՛վ է մեզ վարդապետված ամենապարզև կարգն եկեղեցու, իսկ Նրանով էլ աղոթանվեր Լուսարա՛նն է մեր Կենաց փրկութեան՝ Բարերարութեամբ Քո առատաձեռն, սրտի ձեռքերն է Նա վեր տարածել խոսքերի խոնկի առնուչ բուրբոնով, Տէ՛րն է բնակվում այս կացարանում, ամեն-ամենքին Տիրողըն է այստեղ Երեքսրբենին մատուցանում մեզ, ուր բարեշնորհ բարբառուններով ընծայում ենք Քեզ աղոթքնե՛րը մեր:

Փառավորո՛ւմ ենք Աստուծու ամենայն՝ երկինք ձայնվող օրհնութեան երգի մեր նվազներո՛վ և մեր Հավատի խոսքով պաշտամո՛ւնք մատուցելով Քեզ, պատմելով նաև բարեհրաման պատճա՛ռն ամենայն արարածների, որոնք գոյացան Սո՛ւրբ Երրորդութեամբ, որ սկի՛զբ չունի, և անՀամեմատ է Իր բարձրութեամբ, անՀասանելի՛ Իր խորհուրդներով, իմաստներով վե՛հ, անըմբռնելի՛, բաներ, որոնք, որ անգննելի՛ են զգայարաններին արարածների, քանակութեանը վերն երկնային, նաև ներքևի՛ խորութիւններին, որ անասճման են, վերջացողների լրութեանը, և նախադրութեանը սկզբնավորման, որոնց մեջ Նրանք մեկ են՝ Երեքո՛վ, և Երեքո՛վ էլ՝ Մեկ իսկութեան մեջ՝ անբաժանելի՛, ավելի վե՛ր, քան մտքերն են իրենց անարգելութեամբ, իսկ Երեքն ահա Կարողանո՛ւմ են միշտ Հարածգվել՝ բովանդակորեն՝ ամենայն տեղեր: Անփոփոխ բարի, անասանելի Միա՛կ ուղղութիւն, Միրո՛ կերպարանք՝ Սո՛ւրբ անխառնութեամբ, որ Անհաջո՛րդ են իրենց մեծութեամբ, և բարձրութիւնն անխոնարհելի, տեսականութիւնն, որ չի՛ վատնվում, բարերարութիւնն աննվազելի, կամք, որ կայո՛ւն է, և հրաման է Հավերժ կենդանի և ակնարկութիւնն փրկչական գործի, և անսո՛ւտ խոստում, և արգասավոր դրած ավանդներ, ստո՛ւյգ ավետիս, վերամբարձութիւնն՝ ձեռնարկումից վեր: Մե՛կ Հայր, մե՛կ Որդի և մե՛կ նույն Կամքում Հոգով պատվված, ամենահարուստն է Նա Իր բարութեամբ և ամբողջովին զե՛րծ է Նա չարից, և գովված է Նա գոհաբանութեամբ օրհնո՛ղ ձայներից և ներբողներով անբընդների:

Խոսք այն մասին, որ Նիկիայում սահմանվեց, և իմ խորհրդածութիւնը աստվածային այդ ավանդութեան վերաբերյալ

Մե՛կն է Տէրը մեր՝ Բարձրա՛յ, Ահալո՛ր այն Անուններից, որ համապատիվ Իր կցորդութեամբ և անպատմելի Իր ազգակցութեամբ՝ զուգակցութեամբ է Երեքի Լուսի, և անհավելված միևնույն մտքով, նաև ինքնիշխան կամավորութեամբ՝ պատվասիրելով Հորն հանգուճատիպ և գործակցութեամբ Հոգու Սրբութեան, որ խոնարհվելով Իջավ երկնքից՝ Ընտանի փառքի գոյութեան կամքո՛վ աննվազելի, որ բարեհաճեց Իջնել արգանդը կուսակա՛ն, մաքո՛ւր Մայր Աստվածածնի, որում որ աճեց Բո՛ւյսը Օրհնութեան անարատութեան այդ անդաստանի Լուսասահմանում, և էութեան հետ կատարելութեան, նա համասնվեց՝ իր Անանջրպետ միակութեան մեջ, և իր թափանցող սուրբ աստվածութեամբ Մա՛ս դարձավ շնչիս գոյութեանս հետ՝ Իր հրաշալի՛ ոգով խառնված: Եվ դրանով էլ անհանդիմանելի սանձերի ընտիր երասանակով՝ ուղղեց ինձ դեպի կյանքի կրթութեան, ստահակութիւնն իմ հանդարտեցրեց, և Ի՛նքն Իր կամքով ընծայվեց Խաչին: Նա՛ Կյանքի պտղի Մաղի՛կն ելավ վեր՝ անմահ Տունի դարձավ Կատարելութեան Գազաթն հասնելով, և վիրավորվեց մահվամբ թեպետև, բայց Մե՛կը մնաց Աստվածութիւնից անընդմիջորեն: Հանո՛ւն մեր սիրտ, մեր նմանութեան մարմին առնելով, Նա կենսագործեց պարտքերը բուր: Արարչութիւնից հավե՛տ անբաժան լինելով է, որ՝ մարմնում վշտացավ: Խավար դժոխքի վայրերը իջավ, հանեց այնտեղից նրանց, ովքեր որ կապկպված էին հի՛ն օձոտողի անկման կապերով, իսկ հետո ինչպես քնից արթնացած, մահվա՛մբ նահանջից՝ ելա՛վ -կանգնեց վե՛ր և Կենդանացա՛վ Իր Աստվածութեամբ, Նա՛ Կյանքի՛ հացը, հողից բարձրացավ և հովվեց Իր հո՛տը բանավոր: Նա հավատարմե՛ց աշխարհի կարգին՝ մահ ճաշակելով, բայց կենդանացավ և շատ շատերին երևաց՝ կյանքով աննվազելի՛ Իր իսկ նույնութեամբ, և նույն տեսքով էլ պիտի կրկին գա՛ և տեսանելի՛ ամենքի աչքին: Համբարձվե՛ց, ապա և բազմե՛ց գահին՝ գերուճակ ու վե՛հ՝ Իր արարչական նախկին՝ փառքի մեջ: Եվ այս ամենը խոստովանում ենք, Աստվա՛ծ Բարերար և Տէ՛ր ամենքի, որ Դատելու Ես երկիրն ամենայն արդա՛ր ընտրութեամբ՝ այն Մեծ օրվա մեջ, ուր

Ի՛նքդ ես Սկիզբն և Ավարտն՝ Ի՛նքդ ես, նո՛ւյնն Առաջինը, Գալի՛քը նաև և անպակաս՝ Քո բո- վանդակութեամբ՝ անմատուցյց Լուսի թագավո- րութեան մեջ գտնուելով:

2

Օրհնաբանո՛ւմ ենք Հորը և Որդուն և ան- բաժանելի՛ Բոլորումը նրանց՝ որ Սո՛ւրբ Հոգին է նրանց փառակից՝ ո՛ղջ Իր տերութեամբ: Հոգին ստեղծեց ամե՛ն-ամեն բան և ամենայնին կենդա- նի՛ ծնեց, Նա, որ այն կողմում, ծնունդները մինչ, Համապարփակ ու խոլ մթութեան մեջ և աշխար- հակալ միգում էր շրջում, Նա, որ անցնում էր անբավ ջրերի երկիրը ծածկող ծովի վրայով, որ օրինակն էր մեզ տված Լուսն սուրբ ավազանի, որ մեզ պարզևկեց այն արդյունքների խորհր- դով, երբ որ՝ Տէրը ինչպե՛րով երկրո՛ւմ կատարեց: Նա նայն՝ Ստեղծե՛ց և ապա՝ Գործե՛ց, Գոյացրե՛ց և, ամենն ինչ արեց, արե՛ց արվեստով և սքանչե- լի՛ իրականութեամբ՝ սրբասացների՛ նախատե- սութեամբ և օրենքների՛ ներազդումներով Իր աստվածային, զարմանահրա՛շ գորութեաններով, մարգարեներո՛վ, առաքյալներո՛վ, վարդապետ- ներո՛վ, ովքեր Հանձարի վերի՛ն կրթութեան մեջ վարժվեցին: Եվ սրբարանում մատուցվող Ար- յամբ Տէր Քրիստոսի՛ Նա բարեկարգեց և քա- վութեանը Հավատի անձանց և մարմինների ա- ռողջութեանը, ըստ նմանության Տէր Քրիստոսի՛ ողորմածութեամբ Նա՛ Հրամայեց: Եվ Նա՛ Մկրտեց Իր առավելով, քան ջրով միայն և Ինքն Իր ամբո՛ղջ բավականութեամբ Նորոգում արեց և Լուսավորեց: Զորանում է նույն բարեգոր- ծութեամբ: Նա՛ Միաձին աստվածութեանը Ի՛նքը վկայեց Հորդանան գետի Հոսող ջրերում, և ամ- պի տեսքով Նա Ի՛նքն երևաց Թաբորի վրա, և Նա՛ էր խոսեց՝ Տիրոջ Հոր ձայնով: Նույն եղանա- կով և նմանութեամբ Հովանի եղավ Հակոբյան տոհմին, երբ Եգիպտոսից դուրս էին ելնում: Եվ Նա Ինքն էր, որ Մովսեսին կարգեց զորավարը Իր, որ առաջնորդի՛ Իր ժողովրդին և ապա Հող- մի սաստկութեամբ եկող փարավոնին՝ Նա՛ ընկղ- մեց ծովում: Կատարելագործո՛ւմ է քահանանե- ըին, իմաստուններին կազմո՛ւմ, պատրաստո՛ւմ, թագավորներին զորավորեցնո՛ւմ, քավութեան բաշխում, և կյա՛նք շնորհում մահացածներին՝ Հարութեան բերած Իր նորոգութեամբ: Ի՛նքն է Օծումը մարդացած Աստծո: Մշտնջենավոր Հա- վասարութեամբ երկրպագվա՛ծ է Նա Հոր Հետ մեկտեղ՝ պատվով մեծութեան Միաձին Որդու, և

անասՀմա՛ն է փառավորութեամբ, և օրհնյա՛լ է Նա Հավիտյա՛նս: Ամէ՛ն:

**Սուրբ եկեղեցու խորհրդի մասին նոր մի խոսք՝ ընդդեմ պիղծ աղանդավորների թոնդարակեցիների և մանիքեցիների**

է

Դավանում ենք մենք Հավատը ուղիղ և անբծութեանը անխտոր, մեր շրթունքների Համ- բույրով ողջունում անշունչ քարերով խորանը կառուցված, կառույցն այսինքն՝ մեր եկեղեցու, բնակութեան վայրն այդ աստվածային, որն էլ գերազանց գտավ Տէր Աստված՝ ամենազարդ երկնի բարձրութեան չափ, և տաճարներն Իր՝ ա- ռաքելական դասերով Հիմնեց, աշակերտներո՛վ Իր խնկավետեց, պաշտվեց Բանի սպասավորնե- րով: Եվ կենաց դանձի սկիզբն այդ եղավ Վեր- նատան արդար նույն սրահի մեջ, երբ որ այս վայրում սուրբ Հաղորդության խորհուրդն արե- ցին, այս նույն սրահում Պենտեկոստեի օրը կա- տարման՝ Աստծո Սուրբ Հոգին լըցրեց նրանց և նրանց վրա հո՛ւյժ փայլատակեց Վերին գորութե- յամբ՝ առատ օրհնութեան պարգևներ տալով. և այդ նույն տունը եղավ բարետես նախօրինակը մեր եկեղեցու առավելութեան. նույն սուրբ խոր- հուրդն ենք կատարում այստեղ, ինչպես Վերնա- տան Հավաքավայրում, և նույնը՝ այստեղ բնակ- վողներին, Նա՛ լուսանորոգ բարեփառութեան բաժանեց նրանց: Այստեղ է աՀա Արյունն չգո- ըի, որ մատուցվելով բաժանվո՛ւմ է մեզ, առավել է, քան՝ արյո՛ւնն Աբելի, որ բողոքում է իր մահ- վան Համար: Եվ այստեղ է, որ մեծ բարբառու- մով, բերկրության ձայնով կենդանութեանը է անմահ ներագրո՛ւմ սուրբ Հաղորդութեանը ըն- դունողներին: Որովհետև որ չկա՛ զորութեան ա- րեգակի տակ երկնքի հանդեպ սպասավորութե- յունն այդ ձեռնարկելու իր խորհուրդներով, եթե ո՛չ միայն սուրբ եկեղեցու թեկերով անել, որով- հետև նա չի՛ բավարարվի միայն Տէրունի մարմ- նի նվերով, եթե չունենա իր առաստաղին օրհ- նութեան՝ ծածկույթ, որով որ մահվանն, ըստ օ- բնեքների Համատարածված, անե՛ծքն է Հերքում, քանի որ օրենքն այս վկայության խորանից դուրս էր այդ պատարագը մատուցում անում, ուստի և Նորով՝ առաստաղն է սուրբ Արյամբ ծածկված, և մանավանդ որ պարտավորեցնում է թափված Արյանն այդ, որովհետև որ՝ ո՛չ թե իր անձի օրինակումին մեր հետևելու, այլ որպես

նվեր, որպես պարզև է Արյունն ընծայում: Եվ մե՛կ անգամ է լվացումն այստեղ՝ Տէր Քրիստոսի մահվա՛մբ, Հարությա՛մբ, որպեսզի անգետ ու տգետները աստվածությունը չանարգե՛ն Հանկարծ նախնի կատարված բաները նորից կրկնելու մեջ: Եվ մե՛կ անգամ է ձեռնադրումը օծության Լույսի, որ չլինի թե՛ անբծությանը Հանկարծ խառնվեն խաբեություններ: Մե՛կն է չնորհքով քավությունը, քան՝ ապաշխարությա՛մբ, որ չլինի թե՛ ճշմարտությանը կերպարանվելով՝ խորամանկությո՛ւն գա ու միանա: Մե՛կ ընտրություն է գալիքի Համար և մե՛կ Հավատով, որ չլինի՛ թե՛ սպառնալիքը եկող Հատուցման՝ Համարվի որպես մի դատա՛րկ գրույց: Եվ մեր գոյության երկու կողմերին, որն իր կիսով չափ՝ մեր ներքին մարդն է, կիսովն՝ արտաքին՝, և Համարվում է չարից դեպ բարին փոխատրությո՛ւն՝ որդեգրվելով անմահ գորությա՛նը արքայական, որովհետև որ՝ ընտելանալով երկնայինին, որն՝ Հոգո՛վ է մեր, և առավելությամբ Հոգո՛ւ է, որ մենք՝ վերն արքայության մեջ ենք գտնվում՝ Հայտնապես նաև՝ ճշմարտությա՛ն մեջ: Եվ մեկ է Լույսը մեր կենդանության՝ անե՛ղծ սրբերի միջոցով եղած, որպեսզի արդեն առանց երկվության խոստումներն Աստծո՛ւ ունկընդիրների սիրտ ու մտքերում ճանաչո՛ւմ գտնի՛ միայն Հավատով:

Ը

Սա՛ է մեր Տիրոջ պաշտելի Դշխոն, սա՛ Եկեղեցի՛ն, որ տալիս է կյա՛նք, մահվանը իշխո՛ւմ, ըստ օրինակի աղամյան պողի՛, ում ճաշակումը թվաց Հաճելի: Սա մահ չի՛ տալիս, այլ՝ կյա՛նք Հավիտյան, դերազա՛նց է, քան բանականները, անշնչությա՛մբ էլ իր մեջ Նա ունի Հրաշագործո՛ւմ, երբ խորհուրդների կատարումներն է արդեն ընձեռում: Նա Հաստատո՛ւմ է նորոգությունը՝ վերստին մեր մեջ կենդանացնելով կերպարանքը սուրբ փառքերի՛ Լույսի: Գրված է նաև Նրա տեսակն ու կե՛րպը մեծության, որ երկնային վերին կամարն է մեզ օրինակում, որն սկզբից էր առաջնակառույց, քան թե՛ Նրա մեջ գորություններն են, բնակիչները Հոգեղենների: Եվ Նրանից է արդեն ընծայվում թո՛ւի չքը մարմնի, որ թեթևացումն է Հոգիների, որոնք պատվական Հարստությամբ են Հավաքվում այստեղ՝ անարգ մարմինը դարձնելով Հարգի՛: Ինքնակիր մեղքով Նա չի՛ գազարանում, եթե ոչ միայն չարմիտ մարդկանցից կամ թե՛ անհավատ խուժանից է Նա ոտքի տակ տրվում: Եվ կառուցված է ճիշտ

իմ կերպարի պես զարմանավոր, մե՛ր իսկ տեսության իմաստով Հաղթող, անբան շինվածքը բանավորների՛ Համար գրվածքով, որպես բանավոր Հավաքման Համար օժանդակությո՛ւն, ուր Վեհագո՛ւյնն է այցելում այդպես՝ Հավե՛տ նվաստին: Մե՛ծ է, քան մարդը և այնքան, որքան ընտրյալ Մովսեսից՝ Հրաշքներ գործող ցո՛ւպն էր Հաղթական, և առավել է, քան թե՛ բանավոր խոքով Հմո՛ւտը, որ Ահարոնն էր, ում գավազանը խորհուրդներ կրող մի ծառի նման՝ Հրաշքո՛վ ծաղկեց, և դերազանց, քան մա՛րդը մտավոր, որչա՛փ գետահերձ Եղիան, և ապա՛ նաև Եղիսե՛ն, ովքեր որ մորթե՛ նույն վերարկուով դետի ջրերը փախցրին՝ Հեռու և սքանչելի՛ այդ նույն Հրաշքի փայլող արվեստով՝ ցամա՛ք Հատակով անցան մյուս ափ: Նրա օգնությունը պարզեւում է մեզ կրկնակի՛ ավել ամենակատար ու սրբանված ձեռքերով գործել, քան թե՛ գեներեթո՛վ, և թեպետ մարմինն է նյութականցված՝ քարից և Հողից, սակայն Ինքն այդպես թե՛ գոյակիցն է, թե՛ Հաւրգատը զգայություններ ունեցողներին, նաև՝ սրբերին: Իսկ Վե՛մն անմահ է, Հավե՛րժ կենդանի՛ թե՛ կործանելու, թե՛ կանգնեցնելու, որպես Դատավորն ամե՛ն-ամենայն մեր Հոգիների, և Հրաշալի՛ ներագույն է նա՛ թե՛ անեծքներով, և թե՛ օրհնությամբ: Եվ իբրև Տեսանողն աներևույթի, այնտեղի ումանց Հայտնի է անում, և ումանց Համար ի վերն աղերսում, և Ի՛նքն է գրված ա՛նունն իր վարքի գործով Հաստատում՝ որպես առաջնորդ և Հրամանատա՛ր՝ Է՛նից արտոնված: Եվ ինչպես լեռն է Հավիտենական անհարվածելի՛ դիմամարտներին, այդպես էլ Նա՛ է ըմբռնում բոլոր Հոգևորներին՝ Հնարգրությա՛մբ Մեծի արվեստի, և որպեսզի որ՝ Նա անմեղությամբ՝ ըստ Քրիստոսի Հետքո՛վ ընթանա, դառնում է գովված օրենքին գլո՛ւխ:

Թ

Եվ այնքան մեծ է սրբությունն իր մեջ, որ նրանց, ովքեր, ըստ պատկերի են ծնվել Տէր Աստծո՛ւ առանձնացնում է իր կանոնների խորականությամբ: Եվ եթե ընտրյալ Հոգիներից դուրս որևէ մի մարդ սխալվի՛ Հանկարծ և Համարձակվի՛ գավիթը մտնել, Նրան չի՛ պղծի, այլ մարդկային այդ անպատրաստության, թերության Համար՝ դժվար վիճակի մեջ կՀայտնվի, բայց չի՛ նզովի, այլ տեղի՛ կտա, այդ անգիտակցի շնորհի չափով: չի՛ լքի նրան, որպես պարտավոր ինքնականությամբ իրեն գտնողի, այլ կդժվարի՛ նրա

կատարած տՀաս գործերից, բայց թե թույլ չի՝ տա կրկին մոտենալ Կենդանատուհի ոտքն Համբուրելու, ըստ Տիրական սուրբ, անձա՛ն խորհրդի, և նույն օրվա մեջ, թե կրկին դա մոտ՝ նույն կերպ չի՝ վարվի, որպեսզի նվերը Հաղորդության անընտիր այդ մարդը ընդունելով՝ չխայտառակվի: Կարիքավորին վշտակցող է՝ Նա՛ իր գորությունով, որպես Անախտը՝ ապականվածի՛ն, և իր գորությամբ մտնելով մեր մեջ ու շարժվելով առանց բարբառի՝ Նա իր տիրական հրամաններով՝ մեր ամենքի էլ դատերն է տեսնում:

Ժ

Եվ Նա Տապա՛նն է ինձ մաքուր պահող, և կրկնակի՛ է ինձ երջանկացնում ու պահպանում ինձ՝ կյանքիս հեղձուցիչ ալիքների մեջ, և լցվում է Նա ո՛չ թե բազմաթիվ անբան գազանաց դաս ու տեսակով և սակավ մարդկանց, այլ իր ծածկի տակ պատրաստում է և Հավաքաբերում՝ երկրայիններին ու վերնայիններին, իսկ լաց լինելիս Նա խոռվություն չի՝ պտղաբերում, այլ Ի՛նքն է թռչում բարձունքների մեջ երկնակամարի: Իբրև աշակերտ՝ Սուրբ Հոգու կողմից հրահանգ առած՝ Նա միշտ փախած է նենգություններից, և չի՛ բողբոջում այն հարվածներից, որոնք գալիս են իր մարմնի վրա, այլ ավետիսն է Նա ձայնում՝ կյանքի ըմբռնումներով: Եվ ո՛չ թե Նույի նմանությամբ է գործն իր ձեռնարկում, այլ Հրամանով՝ Կյանքն Հաստատողի, ո՛չ թե Մովսեսի և Բեսելիելի հրահանգներով, այլ՝ Հոր Միածնի՛, Աստծո՛ Հոգո՛վ է զգեստավորվում: Ո՛չ թե անընդհատ շարժման մեջ է Նա՝ տեղափոխվելով այստեղ ու այնտեղ, այլ մնում է միշտ կայունակառո՛ւյց, և անասան է Հաստատուն Հիմքով: Դարձյալ որպես որ տապանակն ուխտի, փայտեղեն, անխոս տախտակներով էր ամրացված իրար, որ զգայական տեսություն չունեիր, բայց ընտրյալներին առաջնորդում էր Տիրոջ գորությամբ, նույնի պես և Սա՛ անթի՛վ, անքանակ Հոգիների է կյանք առաջնորդում, ո՛չ միայն այստեղ՝ Հանդերձյալ՛ում էլ, յուրաքանչյուրին շարունակորեն՝ կյանքի Լույսի մեջ տեղ է պատրաստում: Ոգիելի հետ այնկողմնայինում նա կամահանա, եթե նաչապես հոգի չբերի. վատնված ժամանակը շտապ կսպանի, թե անասնական լծակցության մեջ երկրասիրաբար, գետնակուխ եղած մարդկանց սայլերով, իբրև անոթներ ձեռքով զննվող՝ մտախաբականքներ բարձելով տանի: Նա ո՛չ թե լեզվով իր մարմնական, այլ հրեշտա-

կաց բանով է խոսում, ո՛չ թե ականջով գոյակահնության, այլ մտառելով՝ արագությամբ է հոգով ունկրնդրում, ո՛չ թե սոսկ ձայնի կերպ ու բարբառով, այլ պատգամներն ու գործերն Հիսուսի բոլոր ազգերին պատմում է գործով, նաև՝ գորությամբ, նաև հոչակում՝ ո՛չ թե կոկորդի անդամախաղով, այլ Աստվածային իր կենդանության հազագով է Նա ազդում ինձ վրա: Նա չուների՛ իր մեջ ո՛չ ոսկորների, ո՛չ ջլերի հոդեր, այլ ունի զնդե՛րն բարձրյալ Աստծո, որոնց թի՛վ չկա, Նա գումարտակը եբրայական բորբոք ամբոխի՛ նրանց ամենայն անմաքուրներով՝ իր սրբությունից հեռու է պահում՝ երկու Հազարյակ կանգուն լայնությամբ. և ոմանց այնտեղ իրենց մեղքերի այրվող ախտերով, ապրեցնում է լով՝ աղյուս կրելու տաժանքների մեջ ու այդ վիճակում՝ հեռվից ուղեկցում: Քեզ Համար որպես Վե՛մ նշանակվեց մարմինը Աստծո՛ կոչելով Քեզ իր սրբասուրբ անվամբ և ամենքին էլ Նա՛ Հագեցրեց պատումամբ իր կողի: Եվ ո՛չ թե արյան հոսում ունի Նա երակների մեջ, այլ շառավիղներ՝ վերնային Լույսի, որ՝ ներթափանցում-միաբանվում են Նրա մարմնում՝ նոր կենդանությամբ օժտելով Նրան ու պաշտպանելով: Ո՛չ Սողոմոնի կամ Զուրաբաբելի մահկանացուական ոստիկանությամբ, այլ ամենայն բան Ի՛նքն ունեցողի իմաստով է Նա մեզ գծագրվում: Ո՛չ աննվիրուն, Հասարակաճաշակ այն յուզով, որով պարարտանում էր Հակոբը ընտրյալ, այլ օծվում է Նա Մեծ, Ահավորի՛ Արյամբ ու Փառքով: Ո՛չ թե տուն է Նա երկրային նյութից, այլ մի մարմին է Երկնային Լույսի, որով կնքում է Աստծո որդիներ ու ձեռնադրում: Ո՛չ թե երկրավոր կենցաղ հղացմամբ, այլ երկնային վերն արքայության ժառանգներին է Նա իր մեջ կրթում, և նրանց, ում որ իր գոգն է առնում՝ վերընծայում է Նա Աբրահամին: Ի՛նքը՝ կենդանի Որդին է Աստծո այս Հարսի Փեսան, իսկ օրիորդները այս սուրբ խնջույքի՛ Հայրապետների խմբե՛րն են բոլոր: Նա մոռացման է մատնում այսերի բարբը կռամոլ, երբ վեր են ելնում, քանի որ ինքը ծանուցում ունի երկնային Աստուծո: Բոլոր դիցերը օտար են այստեղ՝ իրենց անմաքուր դրոշակներով, քանի որ Սրա քարե սեղանին երկրպագվում է Ինքը՝ Քրիստո՛ս. այստեղ Հայտնապես քանդվում են իսպառ ուրվականները այն ըղձանքների, որոնք աշխարհի անտառներից են աճել-գոյացել, քանի որ Տէրն է այստեղ նվիրել կյանքի փայտը այն Իր նաչելության, որ նմանությամբ աշխարհում ե-

դած բոլոր ծառերի, խորտակում է վար կերպարանքները այն դիվապատկեր, որ արձանների հուռուժքներով են սարքված մարդկանց կորստի համար, իսկ եկեղեցում՝ քարն էլ է գովյալ, նաև պատվական կարկեհաններով ու գոհարներով Կենդանի Վեմով Վերից հաստատված:

### ԺԱ

Հարկաբաժինն այս մի վայր է չքնաղ և աստվածընկալ լինելով արդեն՝ ազատ է կոչված ամենայն կողմի ծառայությունից, ո՛չ օրինակն է վերին Սիոնի, այլ՝ առավել՝ ճշմարտությունն է այստեղ ճանաչվում, կոապաշտություն բազինի կապով կապված չէ՝ բնավ կամ մեղքի համար կենդանիների արյան լծով ու պարտավորության մեջ, այլ Տէրունական բարերարության պարգևարանն է, որ համբուրելով ընդունում է մեզ, և չի՝ սասանվում երբե՛ք ու երբե՛ք, այլ փոխարկվում է կերպարանքի մեջ իմ ձև ու կերպի և իր նույն փառքի շքեղությունն է նա ընդարձակում՝ առավել՝ ևս պայծառանալով, և Ի՛նքն է ահա, որ երկինքն երկնքի վրա դուամարած՝ հուզակվում է իր Լուսերի՛ շողով: Եվ որպես որ նա չի գոյավորվում առանց մեր Տիրոջ՝ Քրիստոսի՛ Հոր, նույնկերպ էլ առանց այս Մոր արգանդի, ուր Սուրբ Հոգով ենք վերստին ծնվո՛ւմ-կատարելանո՛ւմ: Անբովանդակը պիտ շրջեր անտուն, եթե այս Տան մեջ չհանգրվաներ, որովհետև որ ամենքի Տէրը գլուխ դնելու մի՛ տեղ իսկ չունի, թե կյանք մտնելու այս կայարանը չդնե՛ր այստեղ: Եվ առավել՝ է Տէրն արժևորում բնակվելն Այստեղ, որ ավելի՛ն է, քան թե վերնային կամա՛րն երկնքի, և անբավությունն աստվածյան Լուսի՛ Սա Ի՛ր մեջ ունի, որպես Մովսեսի դեմքն էր նույն Լուսյով դուրս շողարձակում, որ ստիպված էր նա քողով ծածկել, այդ օրինակն էր և եկեղեցո՛ւ, որի երեսի փառքից փախչո՛ւմ են խոտորված մարդիկ: Տոնն Հանդիսության՝ Այստե՛ղ արվում է մե՛ծ գովեստներով ու վայելչություններով խմբված նվագով բանական դասի, և կրկնակիով ավել՝ են օրհնվում բարձունքներն Այստեղ, քան թե դրախտի վայելչության մեջ:

### ԺԲ

Սա՛ եկեղեցի՛ն, Մայր է հոգևոր, Երկնավոր՝ մի Մայր, և լուսավոր է, քան, թե երկրում որևէ այլ բան, և իր մարմնով՝ շնչավոր է նա, և ինձ գգվում է իբրև իր որդո՛ւն: Եվ ստինքների կաթը՝ Արյունն է Տէր Քրիստոսի: Եվ եթե մեկը

Նրան պատկերի Մայր Աստվածածնի նկարագրով, անօրինություն արած չի՛ լինի: Եվ իբրև նշան խաչո՛ւ վիրկություն՝ նա զարմանազան գորություններով ու բազմօրինակ մշակություններով արվեստներով է հրաշագործում: Եվ Ահավորի ատյանի Բե՛մն է այստեղ հաստատված: Եվ կարկամում են հերձվածողները մեզ խորթաբարո, և մոլեգնաճառ նրանց բերանը Սա՛ Ի՛նքն է փակում: Նա ունի նաև սուրբ իմացություն բանավոր քարեր, որոնցով էլ միշտ առանձնացնելով դո՛ւրս է հայտնում՝ նրանց, ովքեր որ՝ գազանամիտ են, նաև՝ անմաքո՛ւր: Նա աստվածներ է ծնում իր ներսում՝ Հար նմանություն մաքուր պատկերի Աստծո Միակի՛ Քրիստոս՝ Տիրոջ: Նա ունի նաև իր դիրքը անշարժ դեպի արևելք կանգնեցնելով մեզ, այն նախկին տեղը մեր դարձի խոստման, ուր պիտ բնակվե՛ք նաև դավրքո՛ւմ. և իմ իսկ ձեռքով ցույց է տալիս ինձ, արդեն հայտնապես, Աստծո շավիղը երկրորդ Գալստյան, Տիրոջ առակի խոսած իմաստով՝ փայլակուններով պիտ ընդառա՛ղ ելնի ու գա դեպի մեզ և Վարդապետի՛, և Փրկությունը, որ արուսյակի ծագման է նման, Քրիստոսեկան երևումն այդպես, օրերի վերջում՝ արարածներին է երկրի թարգմանվում՝ ցավ հայածելով և բժշկելով՝ պիտաժեստներին, բունությունները դիվաց քանդելով: Եվ եկեղեցու Արգանդը այստեղ՝ որովայնի մեջ Ավագա՛նն է սուրբ ու կենդանաբարձ, Հարսանքավորները՝ դա՛սն առաքյալներ: Եվ եկեղեցին այնքան՝ ճոխացավ ու բարգավաճեց երանություն մեջ, որ մինչև անդամ՝ նա վայելչորեն իր Փրկչի՛՝ անվամբ ինքն իրեն կոչեց, և սուրբ Տիրամոր լուսե պաշտոնով՝ Միածնին ձայնող մերձավորների ձեռամբ կնքվեց: Մեղավորների ծփանքների մեջ՝ նավահանգիստն է նա հանդարտության, իրախճաբարձն է վերնային դասի, Բժշկարանը անսխալելի՛ նրանց համար, որ տարակուսած են իրենց պարտքերով: Եվ անպատմելի՛ Երրորդությունն է եկեղեցու մեջ միշտ փառավորվո՛ւմ՝ ամենայնի էլ օրհնաճայնումով:

### ԺԳ

Իսկ եթե մեկը ձեռքն իր չարությունները վերն արքայություն բարձրացնի լրբի՛ մի հաղհնություն, կամ թե մարմնավոր ինչ որ գյուտ արած և կամ մարդկային հնարանքներով և կամ արվեստով երկրակենցա՛ղ ավանդույթների՛ վեր ելնի ընդդեմ ու վարկաբեկի, թե՛ ձեռակերտ է ձեր եկեղեցին, և ո՛չ թե պարզև կյանք

առավելով, երբ եկեղեցին մի աստվածային ակնարկություն է Վերից կարգված, Սուրբ Հոգով հայտնի՝ և լուսանորոգ նախագրություն, և կամ Բարձրյալի ամենաբաշխող լիականություն՝ երախտիքները իր մեր մեջ արթնացնող, կամ Արարողի սրբազան կամքի խորհրդարանն է միշտ խնկավորյալ, և կամ աջ ձեռքով առաքյալների բարեհանճարված Վերին մի հիմնարկ, և կամ, մեկ խոսքով, եթե մենք ասենք՝ Դու՛սն է երկնքի և քաղաքն է սուրբ Կենդանի Աստծո, և Մա՛յրն է բոլոր կենդանի մարդկանց և Ազատողը նրանց պարտքերից, և բանականի ակնհայտորեն ի հայտ անելու տեսակն ու կե՛րպն է ճշգրտում իր մեջ, և իմանալի խորհուրդն է հոգուս, և շոշափելի պատկերը մարմնիս, սրբություններին գերազանցապես ավելացնում է նոր սրբություններ, և Քրիստոսյան նշանով է նա՛ սիրով պսակված ու պայծառապարձ, - իսկ այս բաներն, ով չի՛ խոստովանում, նա մերժվում է իր ամենակալ Հոր երեսներին, որ Իր էակցի, Բանի՛ Սուրբ Ձեռքով՝ նմանից արեւն վերցնում է ավանդ-շնորհները այն, որ տրվել էին փառակից Հոգուց, և Կյանքի Դու՛սն է Սուրբ առաքատի փակվում նմանին: Իսկ մենք, որ բոլոր վկայություններն այս ի մի բերելով՝ գրո՛վ կարգեցինք, փառաբանո՛ւմ ենք ամենակարող Երրորդությունը՝ Մե՛կ Աստվածությունը, այժմ ու նաև՝ հավիտյանս հավե՛տ: Ամէ՛ն:

**Այս է հավատն իմ Սուրբ Երրորդության, և այն է Մայրն իմ՝ Լույսում փառքերի, և խոստովանած դավանությունն իմ**



**Հեծեծանքների մի նոր հավելված նույն իսկ հսկողից, նույն աղերսներով և մաղթանքների խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏԾՈՒՆ ԲԱՆ ՀԶ**

**Ա**

**Աստված՝ Ողորմած, Բազմազո՛ւթ, Հզո՛ր, Ահռելի՛ կամքով, Մարդասե՛ր, Օրհնյա՛լ, Անճա՛ռ, Կենդանի՛, և ոչ մի անգամ Քեզանից ելնող Խոսքը չի՛ մնում անձեռնարկելի, բոլո՛ր խոսքերդ էլ դառնում են գործո՛ր, որ՝ անհնար է պատկերել մտքում: Քո միջոցով է փչերի պա-**

տած խստություն միջից քաղցրության պտուղ ելնում ու հասնում, Սկզբնահա՛յրդ Ես նման բաների՛ Քո գարմանավոր սուրբ կանոններով, որոնցով կյանքն է հավիտենական: Որովհետև որ՝ Դու պատվիրեցի մեզ ատողների համար էլ անգամ բարեքներ գործել, և աղոթք անել նրանց համար, որ՝ մե՛զ են հալածում, և փրկությունը հայցել նրանց, որ՝ խոցոտում են մեզ, և ներում խնդրել մարդասպանի հանցանքի համար, - և Քեզանից են այս հրաշալի պտուղներն ընծա, և՛ քաղցրությամբ անճառելի են, և՛ անօրինակ, և՛ բարեբանված Քո Կամքի համար միշտ ախորժեղի, և՛ ճաշակելի՛ գովյալ շուրթերիդ, և՛ Քո Հոգին է մեր երեսներին, որ Իր գործությամբ դարձնում է մեզ գեղեցկապատկեր, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, որ Օրհնյա՛լ Ես հար՛ բարձունքների մեջ: Սակայն մարդիկ, որ երկրածին են, ամենավրեպ, Քո բարեմատուց ձեռքի գործերը չարին դարձրին, իսկ Դու՛ Լո՛ւյս Ես և Բաշխո՛ղը Լույսի, ո՛չ անեծքի Ես ունկնդրում և ո՛չ չարիք ախորժում, ո՛չ կամենում Ես որևէ մեկին կորստի մատնել, ո՛չ մահը ըղձալ, խոտվությունից չե՛ս հուզվում երբեք, ո՛չ տիրում է Քեզ ցատում երբեք, ո՛չ բարկությունից Ես հարկադրվում, ո՛չ մթազրնում սիրելուդ համար, ո՛չ այլալյվում Ես գթություններից, և ո՛չ փոփոխվում բարության ազդմամբ, ո՛չ թիրկունքով Ես շրջվում և ո՛չ երես դարձնում, այլ Լո՛ւյս Ես համակ. և ամեն բան Ես գործի դնում մեր փրկության համար:

**Բ**

Եթե կամենաս քափություն անել, Կարո՛ղ Ես, Օրհնյա՛լ, եթե բժշկել՝ պատրաստ-Ձորավո՛ր, թե կենդանացնել՝ Բա՛վ Ես լիովին, եթե շնորհել՝ բաշխումովդ Առա՛տ, եթե ողջացնել՝ Ամենահնա՛ր, եթե պարգևել՝ Լիարժեքորե՛ն, թե արդարացնել՝ Ամենաարվե՛ստ, թե մխիթարել՝ Ամենախի՛ստ, եթե նորոգել՝ Ամենակա՛լ Տէ՛ր, եթե հրաչնե՛րդ Ես գործադրում՝ Թագավո՛րն Ես Դու, Ամենաարբա՛ն, թե խախտվածն Ես կրկին հաստատում՝ Արարի՛չն Ես մեր, եթե վերստին գոյություն կոչե՛ս Աստվա՛ծն ամենայն, եթե հոգաս մեզ՝ Տե՛րն Ես ամենքի, թե մեղքերից մեզ կորզես դեպի Լույս՝ Այցելո՛ւն Ես մեր, անարժաններին թե արժանավորես՝ Օրհնյա՛լն հավիտյան, եթե որսողի ձեռքից հեռացնես՝ Փրկի՛չն իմ անձի, եթե գանձերդ հեղես մեզ վրա՝ Ամենահա՛րո՛ւստ, եթե նախքան մեր խնդրելը Ի՛նքըդ ձեռք երկարես մեզ՝ Հովի՛վն անկարոտ, նեղություննե-

ըր եթե մեր լայնես՝ Անդր՝ր պարզևող, թե վերջն եկածիս կոչն՝ս կյանքի մեջ՝ Նախախնամո՛ղ, թե սասանվածիս պահես հաստատուն՝ Վե՛մն Ես աներեր, թե պաս պահողիս ծարավն հագեցնես՝ Աղբյու՛րը կյանքի, թե ծածկվածիս երևան հանես՝ Լո՛ւյսն Ես Երկնային, թե օգտակարը ինձ ճանաչեցնես՝ Բարի՛-Բարերար, եթե բծերն իմ անտես համարես՝ Հեռո՛ւն մտածող, եթե փոքրիս հետ դատի չմտնես՝ Բարձրյա՛լն Աստված, եթե բռնես իմ՝ ծառայիս ձեռքից՝ Ուղեկցո՛րդ Եղբայր, եթե Քո Աջով ինձ պաշտպան կանգնես, պահո՛ղ Հանձնառուն, թե վհատյալիս վերքը դարմանես ինձ Կերակրո՛ղ, թե պարարեցնես անգետիս խոսքով՝ Վարդապե՛տն Ես իմ, թե Քեզ դիմողիս առնես թևիդ տակ՝ Ապավինութ՝ յո՛ւնս հավիտյան կյանքի:

Գ

Արդ այս ամենը Քո՛նն են միմիայն, Տէ՛ր Ողորմության, սրանք ո՛չ միայն գրվածքներում կան, այլ կատարվել են՝ գլխավորելով համբերումները նախնի նահատակ Քո վկաների: Ապա գործությամբ ասպարեզ իջար ճակատամարտի, որ կակողացնես մարմնիս կարծր գոռոզությունը, որ բռնությամբ է տիրում ինձ վրա, որպեսզի վարժամբ՝ չարչարանքների վտանգների մեջ՝ կրթությունս առնեմ, Անպարտակիրը մե՛ր մարմինն առար, և եկար-մտար՝ մեր տաժանական տույժերի խորքում և տագնապներում տկար բնության, եկար մարմնո՛վ էլ Ինքդ չափվեցիր, որովհետև որ՝ մեր հանդեպ եղած գթութ՝ յո՛ւնդ է մեծ, որպեսզի մենք Քեզ օրինակելով արդյո՛ւնք ունենանք: Որովհետև որ՝ օրհնյա՛լ Ես, Տէ՛ր մեր, հավիտյա՛նս հավետ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻԾ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏԾՈՒՆ  
ԲԱՆ ՀԷ**

Ա

**ԵՎ քանզի օրն է և՛ Օրհնաբանված և՛ Լուսանորոգ՝** ընտրության երկու կշռության մեջ, որ սասանում է արարածներին՝ իմ իսկ հուժկունն եղանակելով՝ երկնակենցաղ ու ան-

փոխադրելի բարձրացածներին խոնարհելով վար և ընկածներին հանելով վերև, այդ սարսափելի ուրբաթ օրն էր, որ՝ Մեծ Պասի մեջ է խոր հիշատակվում, և այդ իսկ օրն էլ եղավ ինձ համար ժամ բարեպատեհ, որ այս նվազը հեծուկյան ձայնով և ուրախախառ երկյուղով գրեմ, ահա ըղձալի համարեցի ես այստեղ մեջբերել Քո կատարումն այն, որ իմ փոխարեն Ի՛նքդ կրեցիր՝ Աստվա՛ծ բողբոխ:

Բ

Այդժամ Կանգնեցիր ատյանի առաջ, Քո ստեղծածի՛ ի՛մ նմանությամբ. ո՛չ խոսեցիր, որ տվի՛չն Ես Բանի, ո՛չ բարբառեցիր՝ Հաստո՛ղդ լեզվի, ո՛չ ձայն հանեցիր՝ Սասանի՛չդ երկրի, ո՛չ մունչացիր ամենազո՛ղ Փողդ մեծության, ո՛չ որպես Տանտեր հանդիմանեցիր երախտիքներով, և ո՛չ լցվեցիր նրանց չարությամբ, ո՛չ էլ մատնեցիր Քեզ մատնողներին մահվան տանջանքի, ո՛չ Քեզ կապելիս դիմադարձեցիր, և ո՛չ նեղացար ապտակողներից, ո՛չ թշնամացար նրանց դեմ, ովքեր թքեցին վրադ, ո՛չ խոռվեցիր, երբ բռունցքներով ծեծում էին Քեզ, ո՛չ նեղարտեցիր, երբ կատակեցին, ո՛չ էլ երեսիդ վրդովմունք իջավ, երբ վարվում էին ծաղր ու ծանակով: Իբրև տկարից՝ Քո պատմուճանից մերկացրին Քեզ, և ապա դարձյալ հագցրին վրադ՝ իբրև բռնվածի, իբրև մեկի, որ դատաստանի մեջ փրկություն չունի: Թե լեղախառն քացախ չխմե՛ր կրկնակի անգամ՝ Նա իմ մթերած նախնի դառնության մաղձը չէ՛ր թափի: Սակայն ճաշակեց Նա վհատությա՛մբ և ապա մերժեց տարակուսանքո՛վ, իսկ նրանք ընկած մոլեգնության մեջ, անամոթաբա՛ր, մատուցեցին նույն քացախը Նրան: Եվ խառնիճաղանջ ամբոխի կամքին հանձնեցին Նրան՝ ամենահետի՛ն ու անարգալից հարվածներ տալով, և ծունը՛ր իջան նրա առջևում, որպես նախատի՛նք, որպես ծանակո՛ւմ, և պաս՛կ գրին Նրա սուրբ գլխին՝ արհամարհությա՛ն:

Գ

Հանգիստ չտվին Քե՛զ՝ Կենարարի՛դ, այլ ստիպեցին գործիքն այն կրել, որ մահվանդ համար էին պատրաստել, Երկայնամիտդ այդ ընդունեցիր մե՛ծ խոնարհությամբ, և չալակեցիր ինչպե՛ս Հեզորեն, մե՛ծ համբերությամբ մեր բեռը տարար՝ որպես պարտական Ի՛նքդ ստանձնելով փայտը վշտերի՛ իբրև շուշանաց հովտից մի Սա-

դիկ, իբրև Կյանքի՝ զենք՝ Քեզ զոհազործման գործիքը առար Քո՛ իսկ ուսերին, և որպես արոր մի գիշերային, որով Վարեցի՛ր դաշտը բանական, և Նաչդ դարձավ որպես յուրակերտ մի Գահավորակ, որ պիտի դառնար դատապարտությո՛ւն վայրենիների խոլ խնջույքներին: Կախեցին իբրև խոյին Սաբեկի, ում եղջյուրներից քարչ տալով բերին, Տարածեցին՝ Քեզ Նաչի Սեղանին՝ իբրև պատարագ, և մեխեցին՝ Քեզ այդ փայտի վրա. որպես՝ չարագործ, որպես՝ ապատամբ՝ ամուր կապեցին, իսկ երկնավոր Նաղաղությանդ Հետ վերաբերվեցին իբր ավազակի, անկապոտելի Մեծությանդ իբրև մե՛կը խղճալի՛ այդքան՝ տառապալ. քերովբեններից Պաշտվողդ իբրև քամահրված՝ մարդ, Կյանքի սահմանըդ իբրև սպանդի արժանացածի, Ավետարանի նկարիչդ՝ իբրև Արյան՝ Հայհոյիչ, Նա, Ով որ Տէ՛րն էր մարգարեների, նրանց թելադիր՝ այդ գրվածքները իբրև կրճատող մեղադրեցին, փառքերից իջնող Լույս ճառագայթըդ, որ և Կնիքն է Իր անքնելի Հոր խորհուրդների՝ Մոռոյի Կամբին իբրև մի ներհանի դատապարտեցին, Օրհնյա՛լը իսկապես՝ որպես տարագիր, արյան կապանքի Քանդողըդ, իբրև նզովված՝ մի այր, Հո՛ւրըդ սպառող իբրև մերժված՝ մի կալանավոր, և Ահավորըդ երկնի ու երկրի՝ իբրև Հավաստի պատժի ենթարկված, և Տէրըդ անմատույց Լույսով ծածկված՝ իբրև Հողածին՝ մի ձեռքակալված:

**Գ**

Ո՛վ Քաղցրությունդ, որ Ողորմածիդ գթությամբ լեցուն Բարերարո՛ւմ են Հեռատեսորեն, որ անօրինված ու ապախտավոր ծառայիս Համար, Ինքդ ամենայնի Տէրը լինելով՝ բոլոր ախտերս կամավորաբար, անգամ Հավանող բարեհաճությամբ՝ կատարյալ Մարմնիդ Հետ միացրիր և այդ միությամբ առար Քո վրա մեղքե՛րս բոլոր, և տարա՛ր Քեզ Հետ մինչև քնարան Շիրմիդ տապանի, և Աստվածային անքնելի Քո Լրությունից որևէ՛ բանով չզպակասեցիր, Աստված լինելով՝ նախատինքները ինձ Հասանելիք՝ Ինքդ կրեցիր մեծ Համբերությամբ, Հարությո՛ւն առար ու Կենդանացար Ինքնիշխանորեն՝ բարձրությամբ Լույսի, նույն իսկ Մարմնիդ աննվազությամբ և Աստվածությամբ Հավե՛տ անթերի, Օրհնյա՛լ փառքերով, Գովված՝ գթությամբ ու բարեբանված՝ միշտ ողորմությամբ՝ Հավիտյա՛նս Հավե՛տ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր Հավելված  
նույն իսկ Հակողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻԾ ԽՈՍՔ  
ՌԻՂ ՂՎԱԾ ԱՍՏՄՈՒՆ  
ԲԱՆ ԷԼ**

**Ա**

Ե՛վ այդդ, Հողանյութ ես իմ երեսով ընկած Քո առաջ, ծնրադրական երկրպագությամբ գլուխ խոնարհած, Քո՛ Բարեգործիդ ողորմածությունն ակնկալելով՝ Կենդանարարիդ ո՛տքն եմ Համբուրում, այդպես եմ միայն պատշաճ Համարում մաղթանքները իմ ընծայել Մեծիդ: Աղաչո՛ւմ եմ Քեզ, միա՛կ ու միակ իմ Ննամակալ, Մարդասե՛ր, Գթա՛ծ, Ապրեցնո՛ղ, Հզո՛ր, Այցելո՛ւ, Պաշտպա՛ն, Դո՛ւ, որ ինձ Համար մարդացար, Աստված, թող որ վաստակը Քո աշխատության, որ ջանացիր իմ փրկության Համար, չլինի՛ Հանկարծ, որ ունայն դուրս գա, և չլինի՛ թե դատարկ Համարվի արյան Հետ խառնված սուրբ քրտինքը Քո, որ՝ մատնության օրն էր կաթում Քո դեմքից, չլինի՛ Հանկարծ երախտիքներիդ Լույսը ստվերվի, Լույս, որ ձրի էր մատուցանվել ինձ՝ առանց փրկանքի վճար գանձելու: Մի՛ ջնջիր ինձնից Քո շնորհների ավետիսը, Տէ՛ր, որ պարզեցիր թշվառացածիս, երբ խոցված կողիդ արյան ու ջրի կալլակումներով ինձ նորոգեցիր՝ դատարկ դուրս մի՛ բեր Քո կրածների պտուղներն անգին, որոնք լիառատ պարզեցիր ինձ կարոտության մեջ: Թող չպարծենա՛ բանսարկուն վանված՝ ձեռքբերումները Քո յուրացնելով:

**Բ**

Ահա Հաղթեցի՛ր Քո զորեղ կամքով չարի ըղձերին, մի անգամ ևս զարհուրածը այդ թող կրկին՝ ապշի, իսպառ դատվելով՝ թող պարտվի՛ կրկին: Ե՛վ մի՛ խնայիր խոսքդ ազատարար, որ Քո իսկ ձեռքով ստեղծվածներին ընծայաբերի, վերատին՝ կերտի, ուղեկցի Քեզ մոտ: Ե՛վ անակնկալ Հուսահատության ժամի մեջ ահա Դո՛ւ արարեցիր բարերարությունդ անվիճարկելի, երբ ամբողջովին օտարացել էր, կտրվել՝ Քեզնից կենդանությունն ու կյանքն Հավիտենի ու չկա՛ր շարժում, այդպե՛ս մահացար, անմա՛հ Թագավոր, սակայն վերատին Կենդանանալով՝ նորոգեցիր մեզ՝ մահացածներիս: Համաձևության



կանոնը եթե Արյամբ փոխեցիր, արդ, ուրեմն, Տէ՛ր, առավել՛ ևս հնարավորը, գյուրի՛նն առավել մի՛ արգելի՛ր Քեզ, որ սկզբնածի՛րդ Ես ողորմութեան, Բարեգո՛ւթ, Օրհնյա՛լ և Երկայնամիտ, անմահ՛ թագավոր: Ազդի՛ր ինձ վրա Քո ամենագոր բանավոր խոսքով, որով նախկինում՝ Առաջին օրը որպէս գոյութիւն՝ Լո՛ւյսն ստեղծեցիր, և նույն խոսքովդ պիտի գտնես ինձ շտապով փոխված: Իսկ այն բանի տեղ, որ չփնտրեցի հետեւել Լուսիդ, Դու Ի՛նքդ ելար ու ինձ այցելեցիր՝ չո՛րդ իսկ կերպարով ծագո՞ղ ճառագայթ, և կոչվեցի Ես որպէս Քո առջև ծառա՛ մեղավոր ու վնասապարտ՝ որ ողորմութեամբ շնորհ ստանամ արդեն Քեզանից: Չե՛մ կարող արդեն մինչև պարտքերիս հատուցումների երկարածափող ժամանակի մեջ կանգնել սպասել, ահա, շնորհի՛ր ինձ տառապալի՛ս, որ ավելի՛ վաղ երեսդ տեսնեմ, ո՛վ Դու, որ Լուսն Ես խալարումի մեջ վհատ սրտերին: Արգելի՛ր, Տէ՛ր իմ, ընթացումներիս այն ելքերը կնքի՛ր, որ բարեքներդ մեջ տարածվելով՝ խույս են տալիս և հեռո՛ւ են գնում իմ հիշողութեան տեսողութիւնից. պահանջի՛ր իմ մեջ՝ ամենապայծառ ու մնացական շնորհները Քո, որոնցով որ ես լինեմ պատվական՝ Քո՛նն անվանվելով, և արդեն լինեմ Քեզնով պաշտպանված, Անսահման Բարի Տէ՛ր իմ և Աստված՛:

Գ

Ե՛կ, Ողորմի՛ր ինձ, Գթառա՛տ Աստված, աղաչո՛ւմ եմ Քեզ, Քո Կրկնակի կատարելութեամբ Ողորմի՛ր, չզո՛ր, ցավերն երկունքիս մի՛ փոխարինիր չարիքներիս հետ, ո՛վ Համայն բարի, վտանգվածիցըս էլ մի՛ հեռացնիր շնորհները Քո: Որ պահեցիր ամենասրհնայալ փշուճը չորհուրդ մի՛ արգելակիր, և արքունական խնկյալ պատկերիդ կնիքն իմ վրա մի՛ լուծարիր էլ, արդեն սրբված իմ մտքերի մեջ մի՛ թող հայտնվեն մեղքերի փշեր: Իմ ու Քո միջև սիրո պնդութեան կապը մի՛ խզիր, մի՛ մերժիր, ո՛վ Տէ՛ր, գորեղ արվեստը լեզվիս ճոխութեան, մի՛ պակասեցնիր հաջողումն աջիս՝ Լուսիցդ մասունք բաշխել-բաժանել: Եվ Քո դպրութեան կենաց մատչանում մահվան արժանի ծանր պարտքերն իմ մի՛ ցույց տուր որպէս կայուն հիշատակ, և դրանք իմը էլ մի՛ համարիր, մի՛ հիշեցնիր ինձ, մի՛ ամաչեցնիր, մի՛ նախատիր էլ, մի՛ առ ոտքի տակ, մի՛ արձանագրիր մեղիւթիւններն իմ, մի՛ ամբարի՛ր այն, ինչ որ արեցի կորստիս համար, մի՛ դատապարտիր,

որպէս ստերի մեջ բռնվածի, և մի՛ անեցնիր ծառն անեծքների՛ ինձ հետ միասին, և սաղարթները վնասներ բերող մի՛ թող որ ազատ տարածվեն իմ մեջ, մի՛ թող ի հայտ գան մեղքի ծաղիկներ, իսկ թե արդեն կան, մի՛ թող որ նրանք որպէս պարտքերիս ակնհայտ նամակ՝ բերքո՞վ կարդացվեն՝ պտղի էութեան գարշելի՛ ազդման արտաբերումով: Ըյուղերի վրա Երկիրն ստեղծող Քո Սուրբ Մատների՛ գործերս անօրեն մի՛ թվագրիր, Քո ահեղ խոսքով մի՛ դատապարտիր՝ անօրենութիւններս հիշատակելով, և ինձ մի՛ մատնիր, որ գնամ կամքիս սխալ ընթացքով՝ ավանդներն հոգուս տալով գերութեան, մի՛ փառավորիր այսկողմնաչինում, որպեսզի այնտեղ չդատապարտե՛ս, անցավոր կյանքի այս նվազութեամբ, թույլ մի՛ տուր, օրհնյա՛լ հավիտենական բարիքում տուժել, այսկողմնային կարճ այս ժամանակով, անվախճանական փառքը չափելն ինձ մի՛ թույլատրիր, հեծեճանքներով, վշտերով լցված հովտիս մի՛ թույլ տուր, անարատ կյանքդ ելնել գրավել, այս իմ մթութեան սոսկ ստվերի հետ Լուսյո՞ւ անճառելի մի՛ փոխանակիր, մտքիս սանձերը մի՛ թողնիր արձակ՝ Ուղուց դուրս միայն ինձ հետեւելու, դեպի կենցաղը սարքած կամուրջն իմ՝ մի՛ ամրագրիր, որպէս հանգստյան բավականութիւն, հովիտն հանճարիս մի՛ պահիր անսեր ստվերների մեջ, որ՝ հանդերձալո՛ւմ հրապարակես: Եթե ամբարես անթիվ, անհամար գործերս, որոնք պտուղ են չարից՝ կենդանի կյանքում՝ մեռած մեկն եմ ես: Եվ եթե դրանք շտեմարանես սրտիս մեջ, այդժամ, այսկողմնայինից սկսած պիտի այրվեմ արդեն մի կրակով, որ՝ բոց չի՛ արձակում: Եթե քննես գործերս, որոնք՝ անօրինաբար առջևդ արեցի, առանց և թեկուզ Քեզ հանդիպելու, լոկ մոտեցմամբ Քո՛ իսպա՛ռ պիտ հալվեն: Եթե մեղքերս ինձ տնկակից թողնես՝ նրանց հետ մեկտեղ պիտի ե՛ս մաշվեմ, վատնվե՛մ-հատնե՛մ՝ կյանք չտեսնելով:

Դ

Մի՛այն ակնարկիր՝ մշտապէ՛ս գորեղ, որ չարիքներս փախչեն ինձանից և բարիքներդ դրանց ամենքին՝ գան-փոխարինեն: Լոկ հրամայի՛ր՝ խնամակալըդ զթառատութեամբ, միայն գովեստի արժանի Լուսյո՞ւ երբեք չհանգչող՝ անսահման Սիրո Քո՛ գորեղութեամբ, որպեսզի կրկին, նորիցնո՛ր ևեթ բնութեամբ եղած իմ գոյութիւնը հաստատահիմնե՛ս՝ մարմնեղեն իմ տան ո՞ղջ անդամներով: Որում հանգելով անլ-

քանելի Քո Ներկայությամբ՝ Բնակվես արդեն բազմած իմ ներսում, ախորժ տենչանքով հոգուս միացած, միաբանած Քեզ՝ ապականությունն ու ախորը մեղքերիս իսպա՛ն մերժելով՝ անարատությա՛ն պատրաստելով ինձ, Ամենակեցուցյ անմա՛հ Թագավոր, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, Օրհնյա՛լը հավիտյան: Ամէ՛ն:



**Հնծծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՅ ԽՈՍՔ  
ՈՒՂ ՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ՀԹ**

Ա

**Հեչ՛ե՛ր, Տէ՛ր իմ, Տէ՛ր,** Գթության Աստված, Դո՛ւ, որ Սիրողդ Ես իրավունքների և ճշմարտության, վերստին նայիր միշտ սխալական բնությամբ եղած իմ կերպարանքին, զննի՛ր ինձ դարձյալ, ամենաթափաց տարածումներով շարժումն իմ արյան, և բժշկորեն նայիր տեսնելու, որովհետև որ՝ մարդ եմ հաստատված իմ խակ մտքերի թերի՛ խորհրդին, և այնպիսին եմ, որ Դու նախօրո՛ք ինձ վկայեցիր, Դու, որ Տեսնող Ես անտես բաների, միմիայն Ի՛նքդ Ես անմասն ու անխառն՝ ստույգան բոլոր իսպառումներին: Ապա, ուրեմն, իրավացի՛ է՝ ինձ գրել շարքում մեղավորների, ովքեր մարդկորեն վրիպումների սխալմամբ միայն պա՛րտք են կրկնակի՛ իբրև երկրածին մահացող մարմին, քան թե երևալ Քո խոսքի առջև որպես ստասաց, քանզի ամեն բան Գիտես արդարև՝ թե չա՛րն արարեց ամենայն չարիք, և նրա հետ մե՛նք՝ մե՛կ բուշսի նման, և նրանով էլ չարությունն է մեր, և չե՛ն փոփոխվում մեր խորհուրդները հավիտենապես, այն հոգեհանձար առակի հանգույն, որ իմաստունը կանխագեկուցեց:

Բ

Թեթևացրո՛ւ սաստկությունները իմ տանջանքների, որոնք պատրաստված ինձ են սպասում՝ գեհենի՛ որդուս որպես մահվան զարդ՝ գցելու համար պատժարանի՛ մեջ: Վերցրո՛ւ ինձնից ամոթանքները մեղքի պարտքերիս, որոնք պահվում են՝ վերջին ատյանում թշվառականիս հանդիմանելու: Առաջնապարզև Քո խաղաղութ-

յամբ ողորմությունները ինձ ընծայիր, Տէ՛ր, որ չլինի թե՛ այդ անտանելի բաները իրենց ահավորությամբ՝ ի հայտ գան հոգուս կերպարանելով՝ առջևս բերվեն անհո՛ւյս ապշությամբ, փոխանակ գղձման, որ հանուն կյանքի գործադրեի. Դատաստանն այստեղ ահավոր է խիստ, և անկաշառ է ու անխաբելի Դատավորն արդար, ամոթանքները սոսկալի՛ ազդու, կշտամբանքները սարսափ տարածող, հանդիմանությունից չե՛ն կարող փախչել կամ ճողորել ելնող տագնապից, չի՛ խրախուսվում թե ոտքերն ընկնես, ահից դողումներն անվա՛րձ են այստեղ, լացն՝ անսփոփանք, իսկ կճրտումները ատամների՛ չուսե՛ն այս վայրում բժշկման հնար, ապականությունը չի առողջանում, սարսափելի՛ է անեծքը այստեղ՝ Քո Աստվածային խոսքի սաստումով, այստեղ գթության դռնե՛րն են փակված, ողորմություններն արգելվում այստեղ՝ ներս չե՛ն թափանցում: Եվ այդ ժամանակ երկրի ահեղ գալարումի հետ պիտի դղրդա՛ նաև երկիրը կա՛րծը իր հատակով, ինչպես կուտակված գոռ ալիքները խռոված ծովի, որ ցուլց են տալիս, թե պիտի փախչե՛ն մեկը մյուսից, բայց խափանվում է նրանց փախուստը իրա՛ր բախվելով. և՛ ցնցվելով, և՛ սասանվելով հողազանգվածը իր լայնատարած ողջ թանձրությամբ՝ սկսած հիմքից՝ ներքին խորքերի բախման թինդերով, որ ուժգնությամբ պիտի վե՛ր ելնեն՝ հարթելով լեռներն իրենց բարձրաբերձ հպարտությունից, և պիտի այդժամ հրդե՛հը ժայթքի՛ ժայռերն հալելով, լավային խառնած բոլո՛ր տարրերը, որ գոյով եղան, և պիտի այդժամ երկինքը փոխվի՛ դառնալով նախկին անեղծությունն իր, և պիտ նորոգվե՛ն արարածները տարրերով իրենց՝ նո՛ր նմանությամբ, ծածուկ գործերը այդժամ էլ պիտի հրապարակվե՛ն, և աներևույթ մեր կրքերն ամեն՝ բոլո՛րն ի հայտ գան, և մեր վարքերը՝ կրոնից առած ներգործություն տակ, պիտի նկարվե՛ն մեր մարմիններին, տեսնվե՛ն հայտնապես. Եվ երկին Արքան պիտի Գա՛, Նստի՛ Արդար Ատյանում՝ վճի՛ռն հատուցման իր ձեռքում պահած:

Գ

Յոթնակի՛ վա՛յ ինձ՝ կրկնակի՛ ավել եղկությունը իմ, և ըստ յոթ թվի՛ չափ ու կշռույթով, որը որ բոլոր թվերում եղած անբավությունն է իր մեջ պարփակում. ողբալի հոգիս ահավոր օրվա վտանգների մեջ ի՞նչ պիտի անի: Քանզի նախապես հիշելն այդ մասին ավելի սաստիկ տան-

ջանք է ազդում, քան երբ հանդիպեմ, ինչպես որ նման մի օրինակ է մարգարեներից մեկը վկայում, տաճնապով լցված փախստականի նկարագրի մասին ասելով. օրինակ, եթե մեկը փախչում է ձեռքից առյուծի, բայց ճանապարհին՝ արջն է պատահում, երբ արջից էլ է նա մի կերպ փախչում, մտնելով մի տուն, ձեռքն հենում պատին՝ նույն պահին օձն է այդ մարդուն խայթում: Եվ դարձյալ կրկին սաստկացնելով այդքան քստմենելի տեսարանը, նա՝ այս հարցն է տալիս. ավելի լավ չէ՞ր պատահարը այդ, քան Տիրոջ Օրվա Դատաստանն ահեղ: Օրը խավարի և օրը մթի, օրը ամպամած և մառախուղի:

Գ

Եվ այն ժամանակ, կյանքի պահպան հրեշտակն ինքը՝ հզոր ոստիկան, իրավունքներով երբ ամբաստանի, և Հատուցողը ահեղ իր սաստով Իր Արդարութեամբ հանդիմանի ինձ, և սպասավորները Թագավորի քարշ տան անխնա խուճապահարված մեզանից ոմանց, ոմանց պատվարժան հրավիրելով գնալ դեպի կյանք, ոմանց հանձնելով՝ դատապարտության ամոթանքներին, ուրախ ծիծաղով նայելով նրանց մի մասի դեմքին, իսկ ինձ ահարկու ու քստմենելի երես ցույց տալով, ոմանց պիտի տան Լույսով զարդարուն շքեղ պսակներ, ոմանց ապրելու հանդեպ բողոքեն՝ մահվան կորստով, լսելի անեն Ավետյաց խոստման ձայնն արդարներին, իսկ ինձ գուժելով՝ վշտե՛րն անվախճան: Եվ այն ժամանակ, երբ բարիների վրա հոխորտող հաղթանքը մահվան ի՛նքն իսպառ մեռնի, իսկ չարագործիս երկրորդ մահն արդեն կրկին՝ հարվածի՝ հարակայնո՛վ, դուռն բախելն իմ կղառնա իզո՛ւր և անպատասխան, որովհետև որ՝ ինձ հասանելիք գթութեան չա՛փն էր արդեն վճարված: Եվ այն ժամանակ, երբ որ դավրության լի հրաշքներով մատյանը բացվի՛, ուր ծածկված են վարքի տեսակներն հասարակական, մարդու բնութեան բոլոր գործերով, որոնց համար որ՝ նրանց հույության գոյությունն եղավ, և այդ մատյանում ամենայն մարմին ներկայացված է անպակաս չափով, որ կարգացվում է իսկույնեթ, և խորությունները անճառելի իրենց կնքված ո՞ղջ իմաստներով պիտ կերպարանվեն՝ մեր աչքերի դեմ: Այստե՛ղ է միայն, որ կարող ենք մենք վաճառքի շահով՝ մեր ողբ ու լացով երկինքը գնել, բայց այնտեղ՝ արդեն թե լաց, թե կական ժամանակավրեպ բան են ընդունայն, և որ՝ լքվում են՝ արհամարհան-

քով: Մեր հառաչներն ու հեծեծանքները, թե կանխապես չե՛նք ուղարկել այնտեղ, նրանք այն կողմում արդեն տեղ չունեն՝, ողորմություններն այն, որ կծծիութեան սրտով են ցանկել, չեն՝ կարող մեկին, որպես առջևից պայծառ մի Լույսով լինել ուղեցույց: Մատյանն այդ տապանն է նախահանցների, կտակարանը տիրանարգների, և ներկաներին արդեն վկայված՝ նշանն ահավոր, որ դատախազից հանդիմանված են ահարկու՛ւ ձայնով. և այդ սոսկալի տեղավայրի մեջ մեկը պիտի իմ հայրենի ուխտի դրժումը ցույց տա, և մեկ ուրիշը՝ անտեսումներն իմ սուրբ վկայութեան խորանի հանդեպ, և երրորդ մեկը՝ մեծն Աստծո Արյան հանդիման գործած հանցանքները իմ, և իրավացի ամբաստանություններն իմ դեմ տարածեն: Այստեղ ինձ համար՝ ես բազմապիսի ու բազմապատիկ տանջարաններ եմ ինքս իսկ պատրաստել, իսկ այնտեղ հույսից արդեն պակասած՝ ինչպե՞ս պիտ գտնեմ մխիթարութեան: Որովհետև որ, եթե զորքերը լուսեղենները՝ դասն արդարների, որ իրավունքով փառավորո՛ւմ են երանության մեջ, սակայն սարսո՛ւմ են Մեծ Դատաստանի ահավոր տեսքից, ինչպե՞ս երևամ այդ Դատաստանին, ես՝ ի՛նքս-եղկելի՛ս, ավանդակորո՛ւյս սատակման որդիս՝ ես, որ՝ ո՛չ միայն պսակ չստացա հաղթանակողի, այլ՝ պատուհասն է իմ անտանելի, իսկ իմ կորուստը չունի՛ սպառում:

Ե

Բայց փրկարար Ձեռքը արագացրո՛ւ կորուստների մեջ գերվածիս մեկնել, ամենապարզ և զորութեամբ անճառ, որպեսզի Քեզից օգնություն առած՝ դժոխքի դռնից կրկին ետ դառնամ, որպեսզի արդեն վտանգների դեմ նախապես պատրաստ հանդերձանքներով, իսպա՛ռ ազատվեմ այդ պատիժներից, թո՛ղ այդ ամենը, ապագայի ողջ դիպվածներն եկող՝ մտքի՛ տեսիլով՝ ճանաչեմ միայն, բավականանամ այդ տագնապների ու տանջանքների եկյուղը կրել լո՛կ իմացությունը՝ բայց գերծ մնալով Քո բարի՛ կամքով, և չմատնվե՛մ այն առյուծների կոյուններին, որ խնդրում են Քեզից՝ ինձ իրենց հանձնել որպես կերակուր, և կամ որ ծախես գազանությունը նրանց ատամանց, որպեսզի այստեղ որովայնն իրենց լցնեն մահերով, և ինձ մեղքերով այդպես պարարված՝ ա՛յն կողմ նետելով, այնտեղ, որտեղ որ մնացած բոլոր մթերումներն են պահվում՝ հավիտյան մի ծախվածությունը, որ

ապա ողջն այդ՝ հալե՛ն կրակով: Սակայն Դո՛ւ միայն Կարող ես կորզել սատակման ժամից դեպի կյանքի մեջ և երանության, Դո՛ւ, ամենայնի՛ր ապավինություն, Լուսի՛ր Թագավոր, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, Օրհնյա՛լք հավիտյան: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված նույն իսկ հսկողից, նույն աղերսներով և մաղթանքների խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՅ ԽՈՍՔ ՈՒՂ ՂՎԱԾ ԱՍՏԾՈՒՆ ԲԱՆ Զ**

**ԱՊԱՎԻՆՈՒԹՅՈՒՆ ԱՌՏԻՄԱՅՐ**

**Ա**

**Եվ ահա այսքան** հուսահատություններից, ահարկու-ահեղ իմ խոռվքներից, և աստվածային բարկության զարհուր սաստկությունից հետո, թախժագին հոգով իսպա՛ռ տագնապած, աղաչո՛ւմ եմ Քեզ Սու՛րբ Աստվածածին, Հրեշտակ մարդկային, Քերովբե՛ մարմնատեսիլ, Թագուհի՛ երկնավոր, ջի՛նջ՝ որպես օղբ, մաքու՛ր, որպես Լույս, անե՛ղծ, հա՛ր նման վերն արուսյակին, գերազա՛նջ՝ քան վայրն այն սրբություններին, ուր անարժան է մարդուն ոտք կոխել, երանավե՛տ վայր սուրբ խոստումների, Եղե՛մ շնչավոր, Կյանքի Անմա՛հ Տառ, որ պաշտպանված է բոցեղեն սրով, հովանավորված Բարձրյալ Հորից, Նրանո՛վ զորու, Սուրբ Հոգու Քո մեջ իջած հանգչունով հավե՛տ հարդարված, և սրբագործված և չնորհազարդ սուրբ բնակությանը Միածին Որդու: Միածինը Հոր՝ Քե՛զ է Անդրանիկ, ծննդյամբ՝ Որդիդ, բայց և Տէ՛րն է Քո՛ ստեղծագործությունամբ Սկզբից եղած: Անախտ մաքրությամբդ՝ Դու անբի՛ծ բարի, անարատ սրբությամբդ՝ մեզ խնամակալ և բարեխոսող: Ընդունի՛ր աղոթքն այս աղերսական՝ Քեզ դավանողիս, ընծայի՛ր Աստծուն՝ իբր ո՛չ թե իմ շուրթից ելած խոսք, այլ պաղատանքը Քո իսկ սեփական, խառնելով սրան Քեզ նվիրած իմ ներբողս էլ նախկին: Եվ հյուսի՛ր սրանց և միացրո՛ւ հեծեծանքներն իմ դառնաղի կսկիծ մեղապարտության, միացրու սրա՛նք էլ երանելախոս ու նվիրական աղերսանքներիդ, ո՛վ Դու կյանքի տունկ Օրհնության Պողի, որպեսզի ես էլ Քո այդ օգնության բարեխոսությունամբ ապավինած քո Մայ-

րությանդ մաքուր, լուսավորվելո՛վ, այլևըս ապրեմ Որդու՛դ՝ մե՛ր Տիրոջ և Փրկչի՛ համար:

**Բ**

Քո բազկատարած սուրբ աղոթքներով օժանդակի՛ր ինձ, Դո՛ւ խոստովանված Մա՛յր կենդանության: Երբ այս աշխարհի հովիտից դուրս ելնեմ, այնպե՛ս արա, որ առանց լկանքի իմ մուտքը լինի Երկնային կյանք, Որդուդ պատրաստած օթևաններում: Որպեսզի ես էլ, որ ծանրաբեռն եմ մեծ հանցանքներով, իմ վախճանի մեջ ծանր բեռներիցս այլևս ազատվե՛մ: Տագնապի օրս Դո՛ւ այլափոխի ցնծություն տոնի, Դու որ բուժեցի՛ր երկունքն եկայի: Արդ բարեխոսի՛ր, խնդրի՛ր, աղաչի՛ր, որովհետև որ անկարագրելի մաքրությունդ համար, հավատում եմ, թե՛ խոսքը կընդունվի: Վտանգված եմ ես... Քո արցունքներո՛վ հասիր օգնության, ո՛վ Դու Գովյալը բոլոր կանանց մեջ, ծնրաղի՛ր խնդրի, որ հաշտությունս նորոգվի Հոր հետ, ո՛վ ծնողդ Աստծո: Հոգածո՛ւ եղի՛ր թշվառիս հանդեպ՝ Բարձրյալի՛ Նորան: Մեծ դաժանությանը այսքան ընկածիս սու՛րբ Ձեռքը մեկնի՛ր, Տաճա՛ր Երկնային: Արդ փառավորի՛ր Քեզնով քո Որդուն, որ Աստվածորեն ինձ համար էլ իր ողորմությունը և Քավությունն իմ հրաշագործի, ո՛վ Դու Աղախին և Մա՛յրդ Աստծո:

**Գ**

Քո պատիվն ինձնո՛վ թող վեր բարձրանա, իմ փրկությունը հայտնվի Քեզնո՛վ, եթե ինձ Որոնե՛ս, Տիրամա՛յր, եթե Ողորմե՛ս՝ Օրհնյա՛լ Սրբուհի, եթե կորածիս Գտնե՛ս, Անարա՛տ, եթե զարհուրածիս էլ խնամարկե՛ս, Երջանի՛կ Ծնունդ, թե՛ Քաջալերես ամոթահարի՛ս, Մա՛յր Բարեշնորհ, հուսահատվածիս թե լինես Միջնո՛րդ, Մշտապե՛ս Սուրբ Կույս, եթե մերժվածիս էլ Ընտանեացնե՛ս՝ Մեծարյալք Աստծո, թե իմ հանդեպ էլ Գթասրտությունդ ցուցաբերե՛ս, Լուծի՛չդ անեծքի, թե Նաղաղեցնե՛ս վիճակա ալեկոծ, Գի՛րկ Հանգստության, թե խոռվության իմ հուզումները Փոխես անդորրի՛, Մա՛յր Նաղաղարար, եթե ճախողված իմ անձի համար մի ե՛լք Հաստատես, միմիա՛յն Գովյալ, եթե պայքարի ինձ համար Ելնե՛ս, Մահվան Նահանջի՛չ, թե դառնություններն իմ Անուշացնե՛ս, Վերի՛ն Քաղցրություն, թե խտրությունը իմ բաժանումի մեջտեղից Քանդե՛ս, Հաշտության՝ արմատ, թե անմաքրություններս ինձնից Վերցնե՛ս, եղծման

Ընդոտնի՛չ, թե ստույգ մահվան դատապարտվածիս խելով Փրկե՛ս, Դու՛, Կենդանի՛ Լույս, թե լացիս ձայնը Կրտրե՛ս, Բերկրուկթյո՛ւն, թե Կագդուրում տաս, գոտեպնդելով ինձ՝ խորտակվածիս, Կյանքի՛ Դեղորայք, թե կործանվածիս համար Ակնարկե՛ս, Դու Մա՛յր Հոգելից, թե ողորմությամբ Ընդառաջե՛ս ինձ՝ Կտա՛կ Նվիրյալ, Դու որ Օրհնյան ես անբիժ շուրթերից այն լեզուների, որ երջանի՛կ են՝ Քեզ անվանելով: Ահա կաթիլ մի Կուսական կաթիցդ մեջս անձրևելով՝ Կյանք է տալիս ինձ, ո՛վ Մայր՝ Բարձրյալ Տիրո՛ջ՝ Հիսուսի՛, որ Արարիչն է երկնքի, նաև համա՛յն երկրի, Ում անճառորեն ծնեցիր Մարմնով՝ Նրա կատարյալ սո՛ւրբ Աստվածությամբ, Նրա, Ով իր Հոր և Սուրբ Հոգու հետ է միշտ Փառավորյալ, և միացած է մեր բնությանը Աստված էություն անքննելի կապով, լինելով Ամե՛նն ամեն բանի մեջ, որպես Մե՛կը Սուրբ Երրորդությունից: Եվ Նրան միշտ Փա՛ռք, Հավիտյա՛նս հավետ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՕՈՒՆ  
ԲԱՆ ՁԱ**

**Ա**

**Սուրբ Աստվածածնի մաղթանքների** հետ՝ անմահ, վերնային, Լուսակերպարան հրեշտակների աղերս-հայեցումն և՛ս ընդունիր, ո՛վ Դու Բարեգուկ, նրանք հանուն ինձ առանց լռելու գոչո՛ւմ են ահա հանապազորդյա մաքուր բերանով: Բարի՛ են նրանք՝ Բարեգործիցդ միշտ բարին գործող, անվա՛րժ են չարին և հաստատված են ամենախիշտան սուրբ Կամքով Է-իդ, գորքեր են նրանք՝ հզորահզո՛ր, և մի՛շտ են պատրաստ Բարձրյալիդ տված հրամաններին, սրբե՛ր են նրանք, մաքո՛ւր, անարա՛տ, հավե՛տ օրհնյալներ, վայելչական են, շարունակ հաղթո՛ղ և անպարտելի՛, մաքի տեսություն ակնթարթային սլացքի նման արա՛գ ընթացող: Եվ ժամանակի հավիտենական պարունակում է մարդկությունն ամբողջ, որ առակով ենք տեսնում թզենու, պողից զուրկ էին երբե տարիներ՝ մեկ որ՝ անցյալն է խորհրդանշում, և մեկ որ՝ ներկան, մեկ որ՝ ապառնին, երկարածգված մեկ ընդհանուրում,

արմատներն իրենց աշխարհի այգում, և իրենք իրենց զարդարել էին դատարկ սաղարթով, որ գո՛ւրկ են պտղից, և սա ճշգրիտ պատկերն է թշվառ մարդկությունը ողջ: Իսկ սրանք ահա՛ հրեշտակներդ, բարեխոսներ են կանգնած մեզ համար, բարության հագո՛ւտ մեզ հագցնողներ, խնամակալներ տարբեր բաներում, և ամենայն օր շրջում են մեր շուրջ՝ կարեկցելով մեզ կրքերի՛ համար, սպասելով թե, ե՞րբ պիտ պատշաճենք բարեմասնություն բարեգործությանը, և մեր փրկության համար շարունակ աղոթք են կարդում՝ հավիտենական իրենց կենդանի բարեխրությունամբ, և այս խոսքերն են խնդրում մեզ համար. «Ձեռքիդ գո՛րծն են, Տէ՛ր, անտես մի՛ անիր»: Քանզի, արդարև, մեզ համար են այդ աղաչանքները, Բարեբարիցդ՝ նրանց միջոցով մեզ համար կարգած, որովհետև որ՝ նրանք խոքո՛վե են ստեղծաբանվել, իսկ մենք՝ Ձեռքերի՛դ ներգործություն տակ: Եվ այդ նրանք են, ովքեր դալ՛ւ են Միածնիդ հետ, որպես վկաներ սուսկալի դատի հատուցման ժամին, և ճշմարտաբան դատախազներ են երկրայիններիս հանցանքը դատող, ահավոր ժամին իրավունքների հայտնություններն են մատակարարում, մեզ համար կրկի՛ն բարեխոսելով, շարունակ իրենց խոր կարեկցանքի հառաչանքներով և ողջն՝ հանո՛ւն մեզ: Եվ մշտանվեր նվազի ձայնով նույնն են միշտ խնդրում. «Ողորմի՛ր, Աստվա՛ծ, Դո՛ւ ստեղծեցիր, մի՛ թող կործանվեն»:

**Բ**

Արդ, անմահների խնդրվածքներով և նրանց ձայնի գոհաբանությունամբ մեր Հեծեծանքն էլ մեկտե՛ղ հոտոտիր, ամե՛ն ամենքի արմատ Արարիչ, Դու որ հաղթո՛ւմ ես Քո մեծ գթությունամբ վերնայիններին ու նաև մեզ էլ՝ ստորիններին, որովհետև որ՝ Դո՛ւ ես Բարեբար՝ թե՛ նրանց, թե՛ մեզ: Արդ, հանուն նրանց, որ անախտներ են բարեգործությամբ, և իրենց տեսքով հրաշալի՛ են, հրակերպարա՛ն, անշարա՛խ մաքուր, և հանուն նրանց՝ այդ անմեղների, բոցանյութերի, հոգեղենների, անվանիների, որ բարձրաբարձր են իրենց ընտրությամբ և առավե՛լ են մյուս ամենքից, իրենց գիտություն գերափա՛յլ լույսով, աստվածսիրություն տապով բնական, և լի՛ ջերմությունամբ մեզ առաջանողներ, որ երբ մեր սիրտն է անբոբոք հանգչում մեր իսկ պաղունությամբ խորանում դրված նրանց հրո՛վ է կրկին բոբոքվում մեծախորհուրդ Սուրբ Սեղանիդ առաջ: Ա-

ուանց նիրհելու և դանդաղելու՝ Ամենաստեղծիդ Ապրեցնող Կամքի Հրամանին՝ են նրանք սպասում՝ քերովբեական առաքինությունում։ Աստուծո՛ւցդ անբաժան։ Նրանք երկնավոր պետություններ են՝ մե՛ծ, Հսկայական՝, և զինվորներ՝ են էությունում անբեժ, ահավոր՝ գորեղ, պաշտոնյաներ՝ են՝ երկնավոր Աստուծուդ ազատագնա՝ կամօքի Համաձայն, Քո լուսե ամպից՝ ցո՛ղ են շողերի։

**Գ**

Որոնցով և ինձ, որ Հողեղեն և մեղավոր եմ մի, մարդասիրաբար ողորմե՛ս, Հիսո՛ւս, աղաչանքներով իմ հրեշտակի՝ դարձնելով ի՛նձ էլ Լույսիդ չափիղով դեպի բարին Քո. քանի որ, գիտեմ, Հոգիս պահելու ավանդը այն է, որ Հավատացի՛ նման տեսություն, և իմ փոփոխված ապրելակերպն էլ՝ Քեզին՝ ինձ հասավ նրանց միջոցով, որ իմ սրտի մեջ բերկրա՛նք են բերում՝ վերն ուրախության և անմեղադիր, խնդալից դեմքով զվարթանալով գորությունդ առաջ՝ Անհա՛ս փառքերի բարձրության՝ Արքա, կենդանախմբիդ խրախճանքներով և բերկրանքով պարողների հետ, ինքս էլ գոհությունը ընձա մատուցեմ Ռդորմածիդ որ՝ Գովված է ընդմիջտ։ Եվ Քեզ, Անքննելի Հորդդ հետ անհաս, Անճառ Հոգուդ հետ՝ Մեկ Երրորդություն՝ վայել է միայն պատիվներ ու փա՛ռք և երկրպագում՝ հավիտյա՛նս հավետ։ Ամէ՛ն։



**Հեծեճանքների մի նոր հավելված նույն իսկ հսկողից, նույն աղերսներով և մաղթանքների խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՄՈՒՆ ԲԱՆ ՁԲ**

**Ա**

Աստվա՛ծ Բարերար, բազում պարգևներ Բաշխող Թագավոր, Կենսից պատասխարան, Լույսի՛ կերպարան և Հանգստարա՛ն լայն տարողություն, որ մեղսագործիս հանուն՝ երկնքից եկար-մարմնացա՛ր՝ անպատժում գործեր այստեղ անելով, ի հայտ բերելով Հրաշալիքներ՝ բազում տեսակի, մինչ ամենալիր աստվածությունը գրվածքներն ամեն՝ կատարելապես՝ իրագործեցիր։ Արդ, հանուն Քո սուրբ առաքյալների, որոնց երկնաստեղծ Քո իսկ ձեռքերով Ձեռ-

նադրեցիր՝ հոգևորելով Սուրբ Հոգուդ օժմամբ, նրանց գովեստը արժանի կերպով այլ մի խոսքի մեջ՝ իմ կարողություն չափով տվեցի՛ պաշտամունքելով ի փա՛ռս Քո, Տէ՛ր, որ ողորմե՛ս ինձ՝ հիշատակ նրանց սիրո ընտրություն։ Ինձ Ելքի՛ չափիդ նրանցով ցույց տուր, դեպ երանությունը փափագելի, և թող որ նրանց ձայնը հովվություն, ողջույնը կենաց՝ քա՛ղցը լավի ինձ։ Ի՛նձ էլ մաս հանիր՝ առաջնորդների դասի հետ մեկտեղ՝ անեղծ փրկություն տունելի հույսից, առաջնորդների, որ փառավոր են, բանական գետեր, սկզբնաշնորհ պատիվ հագնելված, որ բարձունքների խոսքն երկիր բերին որպես ավետիս։ Նրանք պանծալի՛, շքեղ իշխաններն՝ երկնավորի, և լուսապայծառ թագերով պծնված ու պայծառացած զարդարանքներով՝ Վերի՛ն, Ջուրավոր՝ սուրբ շնորհների, որոնք նրանցով՝ անարգել էին, անկողոպտելի՛, նվիրագործված տիրական Լույսի՛ սիրտ զվարթացնող ազնիվ յուղերով։

**Բ**

Բարձրալի Աստու՛ Քրիստո՛ս, Տէ՛ր մեր, մեծ հրամանը ստացած բոլոր աշակերտներով, նաև Քո ընտրյալ մարտիրոսների նահատակությունում, որոնք մահացու ու վշտաչարչար իրենց մարմնով, և վտանգավոր տարբեր կրքերի անդամակցությունում, և՛ երկրավոր, և՛ հողազանգված իրենց բնությունում՝ այդպե՛ս մարտեցին՝ ամենայն նյութի գոյի տարրերին ելած հանդիման, և պատկվեցին հաղթանակներով, բարձրացան վե՛ր՝ և կենդանացա՛ն հոգևորապես. նրանք քաղությունում երկրից ելան, ըստ մարգարեի, և ճշմարտության վկաներ դարձան՝ ամեն բան փորձող մահվամբ անցնելով, և իմանալով անտես բաները, ծածկվածները անարժաններից, բարի՛ն աներկբա, որ նկատեցին հույսի աչքերով։ Եվ աշակերտներն առաքյալների, որ նրանց եղան չարչարանակից, իրենց գործերով նրանց հավասար, կատարյալ լրմամբ անպակասելի, աննկատելի երանության մեջ, խրախճանքների վայելումներում պարո՛ւմ են ահա. նրանց մաղթանքը հաճոյական է և ընդունելի՛, ի՛րենք իսկ էին արյունընձաներ վաստականվեր և քրտնախոնկ նրանց աղերսներն հարգելով, ո՛վ Տէ՛ր, ընդունիր ի՛նձ էլ նրանց նորոգված մասի հետ մեկտեղ՝ անեղծ փրկությունում հաստատվել Քո մեջ։

Նրանց հետ, ովքեր հրի և սրի մեջներով անցան՝ արյամբ ներկված իրենց վարքերով, նրանց հետ կան և սուրբ ճգնավորներ, հայրեր մենակյաց, հետևորդեցին Քեզ՝ Որդիդ Աստծո, հետևորդեցին՝ իրենց քաջության մեջ անպարտելի և զգաստության գոտևորումով՝ առանց պատրանքի, և արիաբար էլ մարտնչեցին դժնյա՝ գոռոզի մարմնականի բռնությանն ընդդեմ, և Քեզանով էր վանեցին նրանք չար Բեկիարին, որ՝ չունի՝ մեր պես նյութական մարմին, և մշտամարտի հանդեսով իրենց՝ ոտնատակ տվին ասպարեզները խեղդող կենցաղի: Եվ չզգվելով ծանրաբեռնված իրենց ընթացքից՝ մարմնե թանձր տապանակներով, աշխարհիս ծովի լայնածավալուն ծիփանքները ողջ նրանք հաղթելով դեպի վե՛րն երկինք թռան՝բարձրացան՝ ազատագրված ու թեթևացած վե՛հ հոգիներով, մինչև որ հասան Նավահանգիստը Կենդանի Կյանքիդ իբրև սիրահար վերին վիճակի՝ առանց այլևս թողածի մասին մտածումներին, պայծա՛ռ ճոխության պճնազարդումով, համարձակորեն՝ մինչև որ հասան հաղթության թագին, որ գլխներին՝ դրեցին նրանց: Եվ հանուն նրանց՝ արժանավոր այդ մարդկանց մաղթանքի, ընծայաբերված հայեցվածքներին, պատժի ենթարկված մեղավորի՛ս էլ՝ նրանց հետ մեկտեղ, ընդունի՛ր, Փրկի՛չ:

Եվ ահա խառնած անմաքուր խոսքեր՝ նախկին երջանիկ ու փառքեր տվող աղերասնքներին, որոնք հանուն ինձ գո՛չ են Քեզ ուղղված ու Քո հաճությամբ. իսկ ես նրանց հետ, իբրև դառնություն քաղցրին խառնյալ, իբրև տատակը՝ ողորկության հետ, և տգեղությունը՝ վայելչության, շաղախված տիղմը՝ գեղեցկությանը մարգարիտներին, և կամ թե հողը՝ հստակված ոսկուն, կամ անարգ քարը՝ պայծառ արծաթին, բացասությունը՝ ճշմարտության հետ: Ես փափուկ հացի զանգվածի մեջ՝ ավազի՝ հատիկ, որը ընկնում է ատամների տակ. Արդ, լսի՛ր, Հզո՛ր, Ամենահնա՛ր, Գովյա՛լը ամենքից, նրանց խնդրանքը լսի՛ր ինձ համար, և ի՛մն էլ լսի՛ր խառնված նրանց աղաչանքներին, նրանց գովեստով վերաբերվելու արդեն ի՛նձ հետ էլ՝ և փրկությունը՞ գթալու արդեն, հանուն Քո փառքի, որ Ամենազո՛ր Բարեբարողն ես, Հավիտյա՛նս Օրհնյալ, Դո՛ւ՛ Անստեղծը, որ մշակում ես ստեղծվածներս Քո Համբերությամբ, Կա-

րո՛ղ, Անքնի՛ն, Հավիտյա՛ն անճառ, Հավիտյա՛ն անեղծ, Դո՛ւ, որ Սկիզբն ու Պատճառն ես բարու՝ ո՛ղջ տիեզերքի ու ամենայնի:

Ազատո՛ղ ես Դու՛՝ ո՛չ Դատապարտող, ո՛չ թե կորստի մատնող, այլ՝ Գտնո՛ղ, Կյանք պարգևող ես՝ ո՛չ թե մահացնող, ո՛չ թե ցրող ես ու տարագրող, այլ՝ Հավաքում ես ցրածը չարի, ո՛չ թե մատնիչ, այլ՝ Կենսականություն, ո՛չ թե ընկղմող, այլ՝ ընկղմածին Բարձրացնող վե՛ր, ո՛չ թե գլորող, այլ՝ ոտքի՛ հանող, ո՛չ թե անիծող, այլ՝ Ձայն ես օրհնո՛ղ, ո՛չ թե վրեժի ցասումով լցված, այլ՝ Շնորհ բաշխո՛ղ, որով որ ապրե՛նք. ո՛չ թե բերում ես թշվառություններ, այլ՝ Մխիթարում, ո՛չ թե եղծում ես, այլ՝ Գրի՛ առնում, ո՛չ թե սասանում, այլ՝ Կայունացնո՛ւմ, ո՛չ թե զցում ես Քո ոտքերի տակ, այլ՝ Սփոփո՛ւմ ես ներքև ընկածին, ո՛չ թե հողում ես մահվան պատճառներ, այլ՝ Հնարներ ես փնտրում, որ՝ ապրե՛նք, ո՛չ թե ընթանում սպանման կամքով, այլ՝ Ողորմությամբ՝ հանուն փրկության: Այցելությունը Դու՛ չե՛ս մոռանում, բարին չե՛ս լքում, չե՛ս արգելում Քեզ Գթություն գործել, չե՛ս ներկայացնում կորստյան վճիռ, այլ՝ Ազատության կտակ ու պատգամ: Առատությանդ դեմ՝ չե՛ս թշնամանում, ո՛չ էլ բամբասվում շնորհներ տալով, ո՛չ հայհոյվում ես պարզև բաշխելով, ո՛չ էլ բաշխածդ Ձրի ձիրքերի համար նախատվում, ո՛չ անգունվում Քո հեռամտությամբ, ո՛չ էլ պարսավվում մեծ ներումներով, ո՛չ բանարկվում ես բարությունները իրագործելիս, և ո՛չ անպատվվում քաղցրությանդ համար, ո՛չ քամահրվում հեզությունը մեջ, և սրանց դիմաց՝ ո՛չ թե տրտունջներ, այլ՝ անլուելի գոհություններ են առաքվում երկինք: Իմ մեղքերն ինձնից՝ վերցրո՛ւ, Հզո՛ր, և անեծքներն իմ ամենքն էլ լուծի՛ր, քավի՛ր պարտքերն իմ, միակ Ողորմած, և հանցանքներն իմ՝ գթառատությամբ կենդանի կամքիդ՝ ջնջի՛ր մինչև վերջ: Քո Այցելության Մատն ուղղի՛ր վրաս, և կղաճառամ ես կատարելություն: Ի՛նչ կա Քեզ համար սրանից դուրսին, և պարտավորիս համար սրանից կարևորագույն. Կենդանագրի՛ր, Բարեխնամո՛ղ, ևս մի՛ անգամ՝ Քեզնով ստեղծված հոգուս պատկերը կենդանացնելով, չնչի՛ս Նորոգմամբ, Լուսավորությանդ մաքրող շնորհիդ՝ բազմամեղ հոգին իմ պաշտպանելով:

Մի թո՛ղ, Ողորմա՛ծ, որ ժամանակից ափելի՛ առաջ օրս կարճանա, մի՛ թող, որ մնամ ես առանց վարձի՛ անկատար ճամփով զնալուս համար, ծարավիս ժամին մի՛ մատուցիր ինձ դառնության՝ բաժակ, և այն հոգևոր օգուտները, որ հաջողվում էին, օգնո՛ւմ ընկածիս, Գթաւատության՝ Քո Սեր ընույթով՝ իմ առաջ երբե՛ք մի՛ փակիր դրանք, որ չլինի՛ թե՛ ավազակային խմբի հարձակմամբ՝ մահվան գիշերն իր հանկարծակիո՛վ իմ առաջ ելնի: Եվ չլինի՛ թե՛ տապը տոթակեզ՝ անպատրաստ պահիս ցամաքեցնի՛ ինձ, հատելով գցի՛ Քո արմատներից, և մի՛ թող լուսնի դիպվածները գան և պատրանքներով, գաղտնի՛ մոտեցմամբ հասնեն ինձ վրա ու վնասեն ինձ: Ինձ փակված մի՛ թող սառն իմ մեղքերում, որ չլինի թե՛ կենցաղի ահեղ հոսանքները հորդ՝ գան ինձ ողողեն: Եվ չլինի ինձ այնպիսի՛ հանգիստ, որ մա՛հ դառնա ինձ, և ո՛չ էլ լինի մի այնպիսի՛ նիրհ, որ պատճառում է ապականություն: Չլինի՛ հանկարծ վրաս արշավի վախճա՛նն անհարմար, և ո՛չ էլ շնչիս բարձրացումն ի վեր՝ արգելակվելով կրկին վար իջնի:

է

Դու ամենայնիս Տէ՛րն Ես Գթաւատ, Դո՛ւ Ես Բարերար, Դու Երկայնամիտ, Ամենակարո՛ղ, անհասանելի ամենա՛յն բանի վրա Ջորավո՛ր՝ քավելո՛ւ համար, փրկելո՛ւ համար, կենսագործելո՛ւ, լուսավորելո՛ւ և կրկի՛ն անգամ վերհաստատելո՛ւ, և զազանակեր ժանիքներից դո՛ւրս հանելու մեզ, Տէ՛ր, կամ առամների միջից վիշապի՛ ի կյա՛նք կորզելու, խոր անդունդներից ի Լո՛ւլս հանելու՝ բերկրություն մեջ, և մեր մեղքերի հեղձուկ ծփանքից՝ տանելո՛ւ համար և բազմեցնելու արդարների հետ՝ երջանի՛կ փառքով: Ամեն ոգի է Քեզ ուղղված հույսի ակնկալիքով՝ և սպասում են, որ իրենց ի՛նքդ միայն նորոգես. ամենքն են կարոտ Քո շնորհներին՝ երկնայիններ՝ լինեն նրանք, թե՛ երկրավորներ՝, նրանք, ովքեր որ ընկա՛ծ են մեղքով, և նաև նրանք, որ՝ արդարություն մը բարձրացան վեր, թե՛ տեր, թե՛ ծառա, թե՛ տիկին լինի և թե՛ աղախի՛ն, ամեն-ամենքի կենդանի շունչն է Քո ձեռքերի մեջ: Եվ Քո՛նն է Փառքը Հոր և Հոգու հետ միաբանություն մը՝ հավիտյանս հավետ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻԾ ԽՈՍՔ  
ՈՒՂ ՂՎԱԾ ԱՍՏՄՈՒՆ  
ԲԱՆ ԶԳ**

Ա

**Ո՛վ Անքննելի Բարձրյալ Աստված,** Ջորությո՛ւն ահեղ, Տէ՛րը ամենայն արարածների, Երկնի՛ թագավոր, որ ստեղծեցիր հրեշտակներին և գոյարանը մտածողություն, կյանքի կոչելով և հաստատելով հրեղեններին, Բարերարության Պե՛տ հոգիների, Ապավինություն հանարա՛ն ու Աջ, Հանգստյա՛ն անդորր, Լուսավորության հստակ տեսարան, Ակո՛ւնք բերկրության՝ պայծառությամբ լի և Երանության անվնասելի միա՛կ ճանապարհ, մեր կենդանության Հիմո՛ւնք ու Պատճառ, Առի՛թ ամենայն բանավորության, Անչա՛ր փրկություն, և Առաջնորդո՛ղ խաղաղության մեջ, Պարի՛սպ ամրության և Պահպանության աներե՛ր պատվար, Բոցե՛ ցանկապատ Մեծիդ օրհնության, և Անտրությա՛ն ընդգծված սահման, հիշի՛ր խոսքերն իմ խոստովանության, որ Քեզ եմ պարզում՝ ողբերգության այս մատյանի ձեռքով, ի բարին հիշիր նաև նրանց, որ՝ մարդկային ազգից թշնամին են մեր, նրանց համար էլ Քո քավությունը իրավագործի՛ր ողորմությամբ Քո: Եվ իմ պատճառով՝ էլ մի՛ բարկացիր նրանց վրա, Տէ՛ր, որ իբրև սուրբդ եմ՝ բամբասողների շրջապատի մեջ, և նրանց հետ էլ վարվիր ա՛յն սիրո հաճախության պես, որով իմ նե՛րսն Ես՝ Կենդանագրել, նրանց էլ որպես կշտամբողների դասում գտնվող մոլորված չարեր, ըստ իրավունքի նախատողներով՝ ների՛ր և նրանց հանցանքներն արած: Եվ մեր մեջ էլ կան, երբ որ նրանց հետ Քո առջև ելնենք, ո՛վ Արդարադատ, նրանց կատարած հանցանք ու վնաս, գուցե ավելի՞ սակավ դուրս գան, քան՝ մեզանո՞ւմ գտնես, այդպես իսկ նրանց բամբասանքները մեզ համեմատած՝ ճիշտ խոսք տեսնելով: Ամենապարզե՛, ինքս էլ Քո առջև նրա՛նց եմ նման՝ անթի՛վ-անհամար և անկշռելի՛ ուխտագանցություն մը:



Բ

Արդ, հիշի՛ր Քո իսկ մեծությունը, Տէ՛ր, և անարգիս Քո մեծությամբ նայիր, և բարի բաներ, երբ որ ես խնդրեմ արդեն ինձ համար ատելիներին, Քո իսկ մեծության համեմատ միայն՝ հրաշագործիր մեծամեծ բաներ: Ինձ խածնողներին ո՛չ թե սատակման կորստներին տուր, այլ մարդացնելով՝ փոփոխի՛ր նրանց, նրանց էլ նույնպես խելով խոտան այն բարքերից որ՝ երկրավոր են հույժ: Արմատավորի՛ր Քո բարին թե՛ իմ և թե՛ նրանց մեջ, և մանավանդ, որ՝ Դո՛ւ ես Լույս և Հույս, ես՝ խավար, հիմար, Դո՛ւ ես իսկությամբ բարի և միայն գովեստի արժան, իսկ ես ծայրեծայր չար և անպիտան, Դո՛ւ ես Տէրը մեր՝ ստորիններին՝ և երկնայիններին՝, իսկ ես՝ անհիշխան շնչիս և հոգուս: Դո՛ւ ես Բարձրյալը, որ բնակվում ես կարիքներից դուրս, իսկ ես ահա մի տաժանավոր եմ և փտանգավոր, Դու վե՛ր անասհման երկրում եղած բոլոր կրքերից, իսկ ես՝ անարգ կամ՝ դարձությամբ պատված: Ըստ մարդարեի՝ Ապրում ես անբավ հավիտենական բարձրության մեջ, իսկ ես մշտապես իմ կորուստներում, ըստ Նորոգ Խոսքիդ՝ Քո ներսում չկա՛ մթության նշույլ և կամ նենգություն, իսկ ես իմ անձով բովանդակապես խառնակ եմ դրանց, և ավանդներն իմ չկարողացա երեւե՛ պահել: Հանի՛ր ինձ բանտից և կապանքներն իմ արձակի՛ր, քանդի՛ր, ազատի՛ր դժնի այս շղթաներից, հանի՛ր խեղդվելուց, քանդի՛ր, դո՛ւրս հանի՛ր՝ իմ տագնապների պինդ երկաթներից, լուծի՛ր շուրջկալող պաշարումներից, և արտաքսի՛ր երկմտությունն իմ, տխրություններիս բեր սփոփանքներ, հանգրո՛ւ բոլոր նեղություններիս կրակը այրող և փարատո՛ւմ բեր բոլոր վշտերիս, խոռվումներիս՝ հանդարտեցումներ, ապաքինությունն իմ լաց ու կոծին, հեծեծանքներըս դո՛ւրս մղիր ինձնից Քո բժշկությամբ, ինձ հեռացրո՛ւ իմ այս ողբերից, կականներիցս կազդուրի՛ր լրիվ: Դու իմ Աստվածն ես մեծ ողորմության և պարգևատո՛ւմ քաղցրությունների, Արյամբդ՝ Հզորի՛ անտես մի՛ թողնիր կորստի դնող այս վայրերի մեջ մնալ գրավյալ, ե՛տ կանգնեցրու ինձ իմ այս ընթացքից, որ բերեց մինչև մահվանն հասցրեց՝ հիվանդություն՝ իմ բազմավտանգ:

Գ

Ահա բարդացան և կուտակվեցին չըջանակները ունայնալեցուն իմ տարիների, և այն

պահից, որ իմ մոր սենյակի անդաստանից ես դուրս հայտնվեցի՝ փո՛ւշ էի դժնի, մեղքի շառավի՛ղ ու անպետքություն, մի՛ լեր ինձ համար խոցոտող խայթոց, որպես որ եղար Հուզայի տոհմին, և կամ եփրեմի գավակի համար: Եվ քանզի բարի Քո իսկ սերմնացու ցորենի փոխան խայթո՛ղ, ինքնաթո՛ւյն և ընդարմացնո՛ղ խոտեր բուսցրի, ըստ Գրի խոսքի այն մասի, որը՝ ավագագույն է, քան Ավետիսը, էլ ինչո՞ւ հապա ինքս ինձ չկոչեմ դարչելություն մի լա՛յն անդաստան, որ խեղդված է անեծքներ բերող մեղքի փշերով: Եվ ըստ Ովսեի՝ արդարությունն է՛, որ սերմանեցի, հապա էլ ինչպե՞ս հնձեմ ու ժողվեմ պտուղը կյանքի: Եվ ստիքները, որ սնում էին կուտական անձիս արդար մաքրություն, ըստ մարդարեի խոսքի համաձայն, որ Իսրայելի համար էր ասել, Կարո՞ղ ես, Տէ՛ր իմ, նո՛ւյնը դարձնել Քո նորոգություն: Ինչպես մոլեկան բարքերն Հուզայի՝ ինքս ահա նույնիկեմ լայնեցի՛ կամքի անկողինը իմ, ընդարձակեցի՛ հոմանի անթիվ դեերի առաջ. սակայն կարո՞ղ ես Ձեռքովդ ամփոփել իմ կամքը դարձյալ՝ նո՛ւյն զգաստություն:

Դ

Եթե մարմնական կցորդությունը տեսանողի հետ՝ անարատ սարքեց անգամ պոռնիկին, ապա Դու Ինքդ՝ փրկությունն համակ՝ հոգեպես եթե հոգուս միանաս՝ կրկնակի՛ անգամ ինձ պիտի մաքրես: Եվ եթե արևն այս անկենդանի, որ ստեղծված է Քեզնով երկրին մի մատակարար, ցամաքեցնում է Քահիճներն իրենց սկիզբ ու հիմքից, և հատունացնում պտուղները խակ, ապա և Ինքդ, Սուրբ Հոգին Աստծո, որ ամենքի՛ն ես հատունացնելով տանում արդյունքի, ուրեմն՝ որքան՝ առավելությամբ Զորավոր ես իմ ախտի չարություն տիղմը չորացնել, և կամ թարախը մեղքիս պղծությունը մթերավորված՝ սպառե՛լ իսկույն: Այդ բանի համար ատելիներիս համար նախապես, ըստ այս նույն կարգի՝ ողորմությունը հայցո՛վ խնդրեցի, որպեսզի Ինքդ էլ մահվան պարտքերիս վնասներն հերքե՛ս և չմերժե՛ս ինձ՝ ամենախնամ գթությունը Քո: Արդ, անախտությամբ վերատի՛ն ծնիր մեղքերով լեցուն անդամները իմ, որպեսզի հոգուս բնության հանգույն՝ միշտ Քո՛նը խորհեմ: Քանի որ բոլոր բարեգործներից խնդրելը բարին՝ բնության մեջ իսկ օրե՛նք է դրված, և որով էլ մենք առանց որևէ բռնության կամքի՝ հարատևությունըս նույն բանն ենք սնում: Քանզի, արդարև, այս պատվերն է

Քո զորանում ամեն հասակի համար, մյուս պատվերիդ երկրորդ լինելու իր առաջնութեամբ՝ ա՛յն խնամքով է հոգուև հանդիպում, որ նմանվում է մարդը Տէր Աստծո՛ւղ, և այս բաների համար ես ի՛նքս էլ նախագասեցի, ամենաառաջ աղերսներս ուղղել թշնամիներիս գթութեանդ համար, քան երախտավոր բարերարներիս համար աղոթել:

Ե

Արդ, Հիշի՛ր նրանց մեկի փոխարեն՝ կրկնակիո՛վ էլ ավելի անգամ, նրանք Քո՛ անվամբ բարձրանալով վեր՝ ընդունեցին ինձ, նրանց Տուր, ո՛վ Տէր, ամենաառաջ ու բարերարող, անո՛խ Քո կամքով՝ վարձե՛րն արդարի և մարգարեի: Եվ թեպետև ես արժանիքներից զո՛ւրկ եմ հավիտյան, սակայն հավատով նրանց ամբողջան և հույսով նրանց ակնկալութեան, որոնցով նրանք պարտավոր գերուս ողջամիտ կամքով ակնա՛րկ են անում, որպես թե Քեզնից մա՛ս եմ ապրեցնող, որպես թե հոգուս ծածկույթի ներքին պահպանարանում լրի՛վն ունենամ Քո պարգևները: Եվ պատժավորիս, որ տեսողութեանդ մեջ չե՛ս ամփոփում, և չե՛մ դիմանա ուղիդ կշռութիդ, անսահմանելի Քաղցր գթութեամբ մոտեցիր Դու ինձ, և այնպե՛ս մաքրիր, որ անխայտառա՛կ պահես պահպանես՝ Տիեզերակա՛ն հանդիմանանքից: Սուվե՛ր եմ, սակայն, հանուն Քո՛ Անվան, վայելչակա՛ն են դիտել ախորժում սիրելիներդ ինձ՝ նայելով միայն բարեկերպարան իմ կրոնական հանդերձանքներին, չգիտենալով բժերըս գաղտնի, այդ պատճառով են երջանիկ տեսնում, կարգում եղկելուս, - և Դու, որ բոլոր հնարներն ունես, Ամենապարզե՛, Օրհնյա՛լ մարդասեր, որ Ողորմա՛ծ ես ամե՛ն-ամենքին, ամենաթշվառ հեծութեանս հանուն՝ հաշտվի՛ր նրանց հետ, ըստ ա՛յն հավատի, որ ունեն նրանք, ընծայի՛ր նրանց, Պարգևե՛ր անեղծ մեծութուններդ, անթառամելի պսակներդ Քո՛ այն օրն ահավոր, օրը հատուցման՝ ամեն ինչ փորձող ընտրութեան ժամին:

Զ

Քանի որ Դո՛ւ ես Գրավ փրկութեան և Մեծութունը մեր անվատնելի, Անծախ գանձերը ստրկի՛ս համար և քաղցահարի՛ս, վերնային շահի օգուտն առնելու մենք Քեզնից ելնող մո՛սքն ենք գործարկում, որն էլ հարգելով պիտի ճոխանանք: Ինձ տե՛ղ սահմանիր, այնտեղ՝ ուր ջրերն

են հանգստանում, ամրացրո՛ւ իմ մեջ վստահութունը Քո պատրաստակամ, հավիտենապե՛ս դարձրու անփոփոխ, Օրհնաբանյալ՝ դե՛ Կարգի՛ր ինձ համար հույսի ամբողջուն: Ամենախնամը՛դ, Անաչառորե՛ն լեր պաշտպանութուն, Բե՛ր սասանվածիս մեծ անդորրութուն, Բե՛ր Լուսյի Վեմի ապավինութիո՛ւն՝ տարակուսյալիս, աշխարհածիս՝ մե՛ծ, վե՛հ երջանկութուն, կյանքի օգնութիո՛ւն՝ հուսահատվածիս, անվե՛րջ լքյալիս՝ անզայթակղելի՛ օժանդակութուն, Անսայթաքելի՛ վերնթացութուն՝ ե՛տ նահանջողիս: Քո՛նն է ամբողջը և Քեզանից է ամենայնը ողջ, Քո Ձե՛ռքն է բաշխում հավաստութուններ, ամե՛ն պիտո բան՝ համայնի կյանքի, Քե՛զ է վայել Փառքն հավիտյա՛նս հավետ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հակողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐՈՒՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ԶԴ**

**Արքա՛** երկնավոր, Թագավոր Բարձրյալ, Տէ՛րը ամենքի, ամենքի՛ն հույս և ակնկալութուն, որ Ստեղծողն ես ո՛ղջ տեսակների, բանականներին Ի՛նքդ ես հաստատել, և Ի՛նքդ ես միայն Պատճառն ու Հիմքը լինելիության, Կազմակերպողն ու Կարգավորողը հանդերձյալների, Տվի՛չդ Լուսյի, և Առավոտի առի՛թն ես ազնիվ, և վաղորդյա՛նը նախապատրաստող, և երեկո՛ն ես Ինքդ երևացնում, կազմում տարրերը նաև խավարի. արվեստավոր ես Դու բարեհնար և ո՛ղջ գործերդ են իմաստութեամբ լի, Օրհնյա՛լ քավարան, Հալի՛չ մեղքերի, ցավե՛ր հալածող, դառնութիո՛ւն քանդող, հանգիստ առնելու Արդա՛ր Պահապան, նիրհելո՛ւ հնար, քո՛ւն հարմարեցնող, ննջելո՛ւ պարզև, շո՛ւնչ կարգավորող, և տևողութիո՛ւն ողջ գգայութեան, ցնորքնե՛ր ցրող, և դասդասողն ես անրջանքների, քնի մեջ եղած գարհուրանքները փոխակերպում ես բարի՛ ավարտի, իսկ տխրութիւնը՝ խի՛նդ-ուրախութեան, խայթեր խափանող, համոզվածութեան ընդարձակութուն, համադրութունն ես ծիսումների, խարդախողների վրա ի՛ջնող ա՛հ, դիվաց հալածո՛ղ, ախտեր փախցնո՛ղ, և ամեն տեսակ գայ-

Թակրության Ընկղմողը հզոր, Քո երկնաստեղծ Ձեռքերովդ, Տէ՛ր, Պաշտպան կանգնիր ինձ, և Զորացրո՛ւ Քո բարձր աջով, Քո ամենակալ թևերի ներքո ինձ էլ ամփոփիր, ծածկիր ինձամբով Քո աստվածային, և ամրացրո՛ւ վերնայիններիդ վերակացուլթյամբ, և անմահներիդ գունարտակներով շուրջս պարսպիր, և ամեն կողմից՝ հրեշտակներիդ ինձ կցորդուլթյամբ կյանքս պարփակիր զվարթունքներիդ գորախմբերով, վանիր ինձանից ընդդիմամարտին և պատսպարիր սասանված հոգիս սուրբ Աստվածածանիդ մաղթանքների տակ՝ Բարեկարգիր ինձ, անդրանիկներիդ գորեղ բանակով՝ Պահապանս եղիր: Աչքերիս առաջ նաև մտքերիս՝ Բաց տեսանելին, զգաստուլթյան մեջ ոգիս Հաստատիր. որ ծանրածանր կրքերի բեռից կաշկանդվել եմ խիստ ու դարձել արդեն դանդաղ ընթացող, ինչպես մերանով մածոնն է կազմվում՝ նույնի նման է Հիմարուլթյունը իմ զգայուլթյան բոլոր շերտերում. Հիմարուլթյունս այդ վերացրո՛ւ ինձնից, Միայն Բարեգործ և հեռացրո՛ւ թանձրուլթյունները իմ վարագույրի, և թող որ Լո՛ւսյւղ ներսն իմ թափանցի՝ ողորմուլթյանդ Օրհնյալ՝ ծագումով, և արեգակի ելման հետ մեկտեղ Քո Արդարուլթյան Լույսն Արեգակի սրտիս մեջ մտնի՝ այդպես կարող եմ ամոքելով, և Քո փառքերի ճառագայթը թող իմ խորհուրդների իմաստների մեջ վառվի ջահի պես, և թող տարածվի՝ Տյառնագրուլթյունը ինչիդ շնչին՝ հետ, նաև մարմնիս բոլոր մասերում: Եվ ես Հանձն առնեմ Քո օրվա Համար՝ Քեզ հարմարեցված իմ տաղավարը ոգով պահպանել: Քանի որ Դո՛ւ ես Աստվածն Անքննիկն և ամենքին էլ բավարարում ես ամեն բանի մեջ, Բովանդակապես, Հավիտյանս Օրհնյալ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻԾ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍԾՈՒՆ  
ԲԱՆ ՁԵ**

Ա

Եվ արդ, քանի որ՝ մեր զվարթուլթյունն արթնանում է, երբ՝ Քեզնով ենք ննջում, իսկ խոր թիբրուլթյամբ մեր լռելն այդժամ՝ Քո կողմն է ուղղված որպես հայեցում՝ անթա՛րթ, բաց աչ-

քով, ուղիղ հավատով, ուրեմն՝ Հոգու Քո իմաստուլթյամբ ուղղիր հաջողեմ ձեռքիս գործերում՝ ձայնիս մաղթանքի հեծեծանքներով, և քաջ վաստակով ճանապարհական՝ գորացրո՛ւ, Տէ՛ր իմ, հանդեպ բարի և կցո՛րդ եղիր մեր տկարուլթյան ող կարիքներին: Թեթև՝ դարձրու աշխատուլթյանս մասն այս սկզբի, արագացրո՛ւ, Ամենակարող, առաջադրված ձեռակերտս այս, և Ընթացրո՛ւ դյուրին շարժումով՝ մինչև որ լրման ավարտին հասնեմ, և թող վախճանն ինձ բերկրանք բերի՝ հանդիպեցնելով ժամանող հույսին, Կցորդ եղիր ինձ, որ ճանապարհն իմ ուղիղ ընթանամ, արագացրո՛ւ՝ վեր ելնող թոխչքս ի օգտակարուլթյուն: Եվ վտանգների ծանրուլթյան պահին՝ կանգնիր իմ աջում, անձկուլթյանս մեջ՝ լսե՛մ Զայնդ միշտ, կորստյան ժամին՝ կյանք տուր Ձեռամբ Քո, նեղուլթյան պահին՝ ազդիր Քո Մատով, և ամենաչար խափանումն իմ դեմ խորապես հարթիր, և հոգեղենի ինձ մոտ առաքմամբ, ըստ Ամբակումի՝ ինձ էլ ճար արա: Երբ ինձ կանգնեցնեն Ատյանի մեջտեղ՝ խո՛ւք շնորհիբ ինձ բազմուլթյան առաջ, իմաստուլթյունը տնկիր իմ ներսում, երբ քննե՛ն ինձ, Քո Կամքի ամպով սքանչելապես եղիր հովանի, մրրիկը ծովիս հանդարտեցրո՛ւ Փայտովդ կենաց և Սանձահարի՛ր երկրակենցաղ պատկերն ինձանից՝ Քո՛ հրամանով: Եվ ողորմուլթյունդ այստեղ կամեցիր, որովհետև որ կոհակներն այս լույծ՝ կարծր են ավելի, քան ժայռն անգամ, իսկ թե ցամաքում մեզ անտես անես, ամուր գետինն էլ դարձած անկայուն՝ մեր ոտքի տակից դո՛ւրս պիտի հոսի:

Բ

Պաղատանքներին ձեռնարկուլթյունը Քեզ ի հաճուլթյուն ընդունիր, Հիսո՛ւս, ամենակարծր գայթակղանքն էլ իմ մեջ փոխարկիր մեծ վատահուլթյան: Եվ որպես էին ջրահեղձերը ամենակործան դարաշրջանում, հարթ՝ամու՛ր գետնին՝ առանց երկյուղի անհոգա պարելով, սակայն ամառի մնալով Աստծու ողորմուլթյունից՝ մեծ ջրհեղեղով կորան՝ գնացին, բայց Հովանուղ տակ գտնվողները ստարնձված լատով, հոգնատատան այդ հիմունքի վրա՝ Գթածիդ Անվանն ապավինելով՝ այդպես պահպանին, - նրանց հետ և ինձ՝ մշտաբերրուն աղաչանքներին այս լատանավով, ինձ էլ Հասցրու՝ Նավահանգիստը Քո խաղաղուլթյան՝ մարդասիրտին և՛ ազատելով, և՛ ապրեցնելով: Քեզնից ստացած հոգևոր շահի վար-

ձերըս բոլոր ինձ հետ եմ բերում, և այդպես, ստվար պարտքերս լքած՝ Բանիդ առակով դամ ու տեղ հասնեմ՝ անբաժանորեն միանալով Քեզ, Օրհնյալը ամենա: Եվ կցորդվելով այս մաղթանքներին՝ հողեղենները ամենամաքուր՝ մարտիրոսացված հողեղեններ՝ դասի հետ մեկտեղ, ովքեր որ՝ շուր ու հրո՛վ փորձվեցին, և այս աշխարհից ելնելիս խընդրա՛նք ուղղեցին Աստծուդ մե՛ր կյանքի համար, և մեզ հիշատակ թողին օգնության ավանդը իրենց, այժմ էլ մեզ հե՛տ են համաբանաբար զուգամասնությունք այս խոսքն ստելով թող լինի՛, լինի՛:



**Հեծծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հակողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏԾՈՒՆ  
ԲԱՆ ԶԶ**

**Ա**

Ի՞մ այս թախժուկության հառաչանքների ողբերով, ո՛վ Տէր, որ ես բազմակերպ եղանակներով շարադրեցի, ողորմի՛ր բոլոր հոգիներին էլ, Երկայնամիտ և Անմահ Քաղավոր, և առավել ո՛վ ողորմիր նրանց, որոնց փրկությունն ակնկալելու հո՛ւյսն է սպառվել, և նաև նրա՛նց, ովքեր որ մեռա՛ն դեռ չպատրաստված, ում որ լապտե՛րն է հանգել պակասից պահեստի յուղի: Ահա և հիշիր, Տէ՛ր իմ Գթուկայան, և պատճառներն այս, որ Իրավո՛ւնք տաս, թե զրի առնեմ, որովհետև որ ի փա՛ռս Մեծիդ սքանչելագործ՝ հակառակության մեջ էր պատրաստվեց կազմվածքը մարդու, մեկը՝ ծանրը, իսկ մյուսը՝ թեթև՝, այս մեկը՝ զով, իսկ մյուսն՝ հրայն՛ն, որպեսզի որ մենք դիմադրությունն հակառակության՝ ներդաշնակելու չափին հասցնելով՝ արդա՛ր անվանվենք հավասարության հավատարմությամբ: Եվ դատողությամբ այս առաքի՛նի, մեր դեպի վերև թռիչքների մեջ, խոնարհությունը, որ մեր մարմինը կավից է ծագում, դիտումն այդ պիտի անմոռաց պահել՝ տքնություններով ճշնավորական պսակն ընդունած: Բայց որովհետև ուխտի կանոնից այս վրիպեցինք, և անասնաբար սահեցմամբ ընկանք՝ գիջելով՛ հողին, խառնվելով՛ նրան՝ մեկը՝ մի՛ ախտով, իսկ այն մյուսը՝ իր անգթությունք, երրորդն իր հերթին՝ մոլի՛ բաղձան

քով կերակուրներին՝ որպես արդեն մի մշտաբո՛ւյժ գազան՝ հարակա կապված մեր բնություն հետ: Եվ այդ տարրերի չորսից մեկն ահա անըմբռնելի, անողոքելի՛ իր սլացումով և ոստնելով դո՛ւրս՝ ամբարտավանում է վայրենիորեն: Թե ջերմանում ենք սիրո տաքությունք, որ Քե՛զ է ուղղված նշխարն այդ բոցի, բայց Քեզանո՛վ է այդ սերը մեր մեջ, սակայն և ցուրտն է նրան առընթեր՝ կասեցնում նրան և կանգնում է նա բարու և մեր մեջ, երբ հրեշտակային մեր ավանդական բնույթներով մենք վերև բարձրանանք, անդրանիկ նյութի թե՛ ծանրությունը, թանձրությունը թե՛, ներքև քաշելով՝ խափանո՛ւմ են մեզ:

**Բ**

Արդ, ամեն կողմից արդեն պարտված ու լքված իսպառ, իբրև ապիկա՛ր, հաշմված երևույթ՝ մերժվեցի՛ ես, վանվեցի՛, կորա՛, և վատնվելով բազմություններից՝ ես զբավվեցի մահվա՛ն զորքերով, այդ բանի համար, զրկված արդեն իմ պարզեցներից՝ ողորմությա՛նն եմ հայցելով նայում, և ամոթահար իմ դեմքով՝ համայնն իմ մեջ ներառած՝ ամենքի համա՛ր եմ աղերսաբանում, մեռելների, որ՝ Քե՛զ Կենդանանան, քանզի Կարո՛ղ ես հավիտենական Քո հնարքներով, այն մեռելներին, որ մեռելներ են՝ հա՛ր և նման ինձ, կրկին կյանք տալով՝ փրկությա՛ն բերել, որովհետև որ՝ ամեն ինչ անել Ջորելի՛ է Քեզ, քանի, որ Աստված, Քո կարելության սահմանների մեջ տկա՛ր բան չկա և Կամենալը է Քեզ ախորժելի: Արդ, եթե երկու այս շնորհները, որ բարգավա՛ծ են, նաև նորոգո՛ղ, Քո Կարենալը Կամենալու հետ՝ միմյա՛նց մոտենան՝ հուսահատությունը պիտի վանվի՛, վհատությունը պիտի հեռանա՛ մեղավոր ազգաց, և այդ ժամանակ վրա կհասնի Լո՛ւսյը Ավետյաց՝ հոգու բժշկման Քո՛ շրամանով, ամենայնի՛ Տէր, Օրհնյալը հավիտյան: Ամէ՛ն:





**Հեծեծանքների մի նոր Հավելված  
նույն իսկ Հսկողից, նույն  
աղերաներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՕՈՒՆ  
ԲԱՆ ԶԷ**

**Ա**

**Եվ արգ,** քանի որ՝ իր ավարտին է մոտենում արդեն սակավ մասերով կտակարանը այս ողբերգության, այնպես արա, Տէ՛ր, որ երբ վախճանի դադարին հասնեմ, իմ մաղթանքների այս խոսքերի հետ՝ ինքնանախատող իմ կշտամբուկյամբ՝ դադարե՛ն նաև սովորույթները չար իմ կրքերի, քանի որ ինքըդ ես սահմաններ կարգել դատապարտվածիս, որ՝ Ավետի՛սը Քո ակնկալեմ՝ այս Բանն ասելով. «Իմ Հոր կամքով չէ՛ մեկն անգամ կորչի այս փոքրիկներից», և դարձյալ. «Այս է Իմ Հոր կամքը, որ՝ ում հանձնել է ինձ, նրանցից մեկն իսկ չկորցնե՛մ երբեք»:

**Բ**

Ահա Օրհնյա՛լ ես Դու Քո Գթուկյամբ, և Քաղցրուկյամբե՛լ միշտ բարեբանված, Խոստովանված ես որպես հանգուրժող և համբերատար, ճանաչեցյա՛ծ ես մեզ ինամարկող Քո Այցելուկյամբ, Քարոզված Տէ՛րն ես Փրկուկյան տանող, և ներբողվա՛ծ ես Քո առատուկյամբ, Պաշտպան կանգնելու համար պատվրվա՛ծ և Փառավորյա՛լ՝ բերած փրկուկյամբ, անբավ բարձրուկյամբ Քո երկրպագվա՛ծ, և պաշտվա՛ծ Քո անքննելիության, գովաբանվա՛ծ ես մշտահաղթուկյամբ և վերածայնվա՛ծ՝ գորուկյանդ համար, ինկավորվա՛ծ ես ողորմածուկյամբ, և համբուրվա՛ծ ես հեզուկյանդ համար հար անպատմելի, ճաշակելի՛՛ ես Քո խոնարհուկյամբ, Քեզ հետ՝ Ծնողն է Քո երկընավոր՝ բոլորի՛ Աստված Մխիթարուկյան, Նրա հետ Հոգիդ՝ Քո Սուրբ Բարուկյան: Որ կանոնեցիլ՝ անգամ թշնամու գրա՛ստը ընկած, թե՛ անտե՛ս չարվի, և որ նույնն է, թե՛ որ անտե՛ս չարվի՝ գայթակղված մարդն իր անբանուկյամբ: Եվ որի համար երախտիքներն է Հզորիդ իմ մեջ, իսկ առաքինուկյունն ամենքից Մեծիդ, տոնելի դարձած՝ փառաբանվո՛ւմ է բարձունքների մեջ՝ առա՛նց դադարի և անվախճորե՛ն: Եվ այս իմ ձայնն էլ աղերսանքների՛ հարգելով, Օրհնյա՛լ, մարտիրոսների

պաղատանքներին միախառնված՝ ընդունի՛ր որպես Քեզ հաճելի Հոտ ու բուրմո՛ւնը անուշ: Եվ այս փրկանքով հաշտարար խոսքի՛ նախկին պարտքերն իմ և վերքերն իմ այն, որ չե՛ն երևում, թե միջլիններո՛վ, թե վերջլիններո՛վ, որ մահացնո՛ւմ են անողոքորեն՝ թե ա՛նձ, թե մարմին՝ բժշկի՛ր իսպառ, թե՛ ներքինս ուղղի՛ր, թե՛ արտաքինս էլ, բոլո՛ր հետքերն ու գծե՛րը բոլոր, և հարվածների խարանները ողջ՝ հանի՛ր ինձանից, մաքրի՛ր դեղերով Քո Ողորմուկյան, կրալուտանքներով խածվածքնե՛րն ամեն՝ իրենց բազմագույն արտահայտուկյամբ, որ մեր հուկյան բնուկյան ներսում գարշելի՛նե՛ր են՝ ախորժների հետ:

**Գ**

Եվ եթե հասնեմ ծերուկյան տարվան, մահվան արժանիս՝ առաջնորդուկյամբ Քո հովվուկյան, այդժամ տկարիս՝ մի՛ լքի՛ր, Օրհնյա՛լ, և թող չանարգվե՛ն մազերս ալեհեր, մի՛ թող կորացվի կործանվածն արդեն, կբվածիս մի՛ թող էլ նվաստացնեն, մի՛ թող գլորեն վար խոնարհվածին, և առկայծողին մի՛ թող որ մատենն հողմի չնչումին, արդեն սառածից մի՛ թող, որ հանեն վերարկու ու շոր, և տազնապածին մի՛ թող անդարման, անինամ մի՛ թող տուներ խարխված, պատկերն հնացած՝ մի՛ թող անպատվեն, պարարտուկյունը մի՛ թող, որ անհամ նետվելիք դառնա, մի՛ թող անարգվի փառքը չնորհի, քամահրանքի մեջ մի՛ թող որ մնամ որպես հնուկյուն, և հոգուս նավը մի՛ թող, որ ընկնի ալեկոծման մեջ, մի՛ թող կտրվի երկարուկյունը հոգեկից հույսի, շավիղի լաբը՝ մի՛ թող որ խզվի, ուշքը իմաստի՛ մի՛ թող հեռացնեն, եղծված մի՛ թող՝ գոյաբանուկյան կազմվածքը մեր, Քե՛զ բարձրացած թեկերը մի՛ թող անեն փետրահան, և գեղեցկուկյան զվարթուկյունը՝ մի՛ թող տգեղվի, մի՛ թող, որ քաղվի ճաճանչը շողի, և մեր աչքերի պատուհանները մի՛ թող փակ մնան, և լույսը նրանց՝ մի՛ թող խափանվի, խոսուն պատկերը վայր ընկած մի՛ թող:

**Դ**

Աղաչո՛ւմ եմ Քեզ, ահա, Բարեգո՛ւթ բոլոր սրբերի հետ միաբանված՝ Քե՛զ եմ պաղատում. այս ամենն ինձնից նախօրո՞ք լսի՛ր, որ չլինի թե՛ հետո մոռանա: Առաջնորդողն ինձ՝ Դու՛ ի՛նքըդ եղար, ինչպես այդ մասին սաղմոսն է ասում, և՛ ապրեցրի՛ր, և նույն երգողի հետ միա-

բանած՝ ինձ էլ դուրս հանիր այն կարծիքների կասկածանքներից, որոնցից ահա երկնչում եմ ես: Ինքս արժանի չեմ Քեզնից որպես վարձ՝ պարզ կերակուր էլ անգամ ստանալ, բայց Դու Կարո՞ղ ես և Սովո՞ր ես ինձ՝ ապերախտի՛ս էլ բարիք պարգևել: - Որովհետև որ՝ և՛ զարմանալի՛, և՛ անճառելի բարիքները ողջ՝ Քո՛նն են բուլորն էլ, լուկ Դո՛ւ Կարող ես հրաշագործել՝ համբերությունբոլոր մեզ հանդուրժելով, Հո՞ր հետ միասին, հանապազ Օրհնյա՛լ Սուրբ Հոգուփն հանդերձ, հավիտյա՛նս հավետ: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂ ՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ԶԸ**

Ա

Ե՛վ արդ, Աստվա՛ծ իմ, ջարդվա՛ծ իմ հոգով, մտքերով լքվա՛ծ առջևդ եմ ահա հեղելով թափում ջո՛ւրը իմ կամքի, կա՛թն արտասուքի, Արհիմաթացի Քո մարգարեի՛ Մամվելի արարքն աստ հիշեցնելով, որ վերցնելով ջուրն սկավառակից՝ առջևդ հեղեց, ո՛վ Ամենաստես, որ ժողովրդին օրինակ ցույց տար՝ թե ինչպե՛ս պիտի խոստովանությունբ անձը խոնարհել՝ Կենդանարարիդ գարշապարների առջևն ընկնելով հնազանդությունբ:

Բ

Արդ, աղիողորմ հեծեծանքներով խոսքերս այս հյուսված, ընդունի՛ր, ո՛վ Տէր, Երկնի՛ թագավոր, և Հոտտի՛ր այս բանավոր ընծան անարյուն գոհիս, օրհնելո՛վ սրբի՛ր տառը մատյանի այս ողբերգություն և իմ գրվածքին կնիք դնելով՝ դարձրու արձա՛ն հավիտենական՝ հաճոյական այն աղոթքների պես, որով առջևդ են սպասավորում: Թող որ Քո առջև մշտնջենապե՛ս սա միջնորդ դառնա, ամե՛ն օր ու ժամ Քո լսելիքին խոսքս հիշեցնելով, բարբառով՛ շուրթով Քո ընտրյալների, խոսվի՛ բերանով հրեշտակներիդ, և տարածվի՛ Քո աթոռի առաջ, թող որ սրբության սրահներիդ մեջ մատուցվի որպես բանավոր ընծա, խնկի պես բուրի՛ տաճարիդ ներսում, փառքի՛ սեղանիդ, դրվի ու պահվի՛ գանձարա-

նիդ մեջ և համարվի Քո՛ գործերի արդյունք, թո՛ղ որ պատմվի ազգերի առաջ, ժողովուրդներին քարոզվի ի լո՛ւր և իմաստուցության դռների վրա պատկերազարդվի՛: Թող զգայությունս սեմե-րի ներսում տպավորվելով՝ կենդանի խոսքով պատմի՛ բոլորին՝ անօրենություններն իմ խոստովանած: Ե՛վ թեպետ պիտի վախճանվեմ որպես մի մահկանացո՛ւ, բայց իմ խոսքերի հարակա-յությունբ, որ գրի առա այս մատյանի մեջ՝ պիտի կենդանի՛ լինեմ հավիտյան: Թող որ մատյանն այս անեղծ կամքիդ մեջ մի՛շտ կայուն մնա, ինձ՝ պատժապարտիս վրա բարձրացած որպես դատավո՛ր, կշտամբանքների անաչառություն, անպատկառություն հանդիմանություն, պախարակություն, որ չի՛ ինայում և պարսավո՛ւմ է անողորբորեն, մեղքերի հանդեպ ծաղրուծանակի՛չ անհամբուրելի ուղղամտությունբ, միշտ անմարդասեր գործերի մատնի՛չ և դրանց տանջող անփրկելիությունբ, որ՝ ապաշխարե՛ն, անկաշառորե՛ն կառափման դնող, և մեղքերն հայտնո՞ղ ո՛չ թե խնամող, ապառնիները հրապարակո՞ղ, և բողոքող, որ՝ աշխարհը լսի՛ փողի մեծածա՛յն հնչումի ազդամբ, որ անդադա՛ր է ու անլուելի՛ պարտքերիս անվե՛րջ խոստովանությունբ:

Գ

Այս գիրքն ի՛մ ձայնով և ի՛մ փոխարեն, ի՛մ մասին պիտի միշտ աղալակի՛ ի հա՛յտ անելով ծածուկները իմ, գաղտնի եղածս վե՛ր հուշակելով, կական հանելով՝ արդեն կատարված մեղքերիս համար, մոռացվածները վերհիշեցնելով, անտեսանելի գտնվողները դարձնելով հայտնի, և մանկանց նման բարուրովածները՝ դո՛ւրս բարբառելով, խորքում եղածը բարձրացնելով վե՛ր, մեղքս պատմելո՛վ, թաքնվածները ո՞ղջ մերկացնելով՝ ցույց տալով դրանց դեմքե՛րն իսկական: Սրանով պիտի շոշափվե՛ն բոլոր հոգեորսները, գայթակղությունները գտնվե՛ն-բացվե՛ն, և անպատմելի՛ վերնայինները պիտ հանդիմանվեն, չարիքներն իրենց մնացորդներով՝ քամվե՛ն մինչև վերջ, և շնորհներով պարգև կյանքդ այդ ժամ պիտ թագավորի՛ պահեստավորվա՛ծ, արդեն ցամաքա՛ծ իմ ոսկորների գանձարանի մեջ, Քրիստո՛ս Հիսուս, որ երբ հարություն ժամանակը գա՛, և սկզբնավոր ու գարնանային Լույսդ մտնի իմ ոսկորներից ներս, Նորոգման այդ Օրը Պայծառություն Քո Կենաց ցողով հոգիս ա՛ճ առնի և անմահական այդ իսկ փրկությունբ, վերամբարձությունբ անցամաքելի՛ շառավիղները Իր

իմանալի գցի բարյաց մեջ՝ դարձյալ դալարմամբ կրկին ծաղկեցման, ըստ Գրքի խոսքի, որ Քո՛չնչով է հուսադրություն: Եվ Քեզ Մե՛ն Միակ Փրկչիդ և Հոգուդ՝ Հո՛ր Իսկակըցին, Մե՛կ-Միասնական Տէրութեանդ և՛ անճառելի՛ Սուրբ Երրորդութեանը՝ խորհրդանշան գովեստներով Փա՛ռք, երկրպագությո՛ւն, հավիտյա՛նս: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՕՈՒՆ  
ԲԱՆ ԶԹ**

Տէ՛ր իմ, Աստված իմ, Կյա՛նք և Արա-րի՛չ, Ողորմա՛ծ, Գթա՛ծ, Հեռո՛ւն մտածող, Հա-մապարփա՛կ Լույս, մի՛շտ Անոխակալ, միա՛յն Մարդասեր և Ամենագո՛ւթ, Պարզեմե՛ր տվող Փրկի՛չ մեր Օրհնյալ և Բարեբանվա՛ծ: Դարա՛ն ամրութեան և վստահութեան մեր պատասպարան, առանց որևէ նենգութեան բարի՛, առանց խավա-րի՛ կյանքի՛ ճառագայթ, քավի՛չ մեղքերի, վեր-քե՛ր ողջացնող, անհաս բաներին հասնելու հնա՛րք, և անմատչելին դարձնող մոտիկ ու շո-շափելի՛, անհուստությունից բացված Միա՛կ ելք, խոստովանվա՛ծ է Անուևըդ՝ Աստծո Միածի՛ն Որ-դի, Հզո՛րդ ամենա, Մեծ ու Ահավոր Հո՛րդ հետ միասին, և Ամենակալ-Երկրպագելի՛ Հոգուդ Սրբութեամբ, Օրհնությո՛ւն և Փա՛ռք ու նաև Պաշտո՛ն գոհաբանութեան, հավիտյա՛նս: Ամէ՛ն:



**Հեծեծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՕՈՒՆ  
ԲԱՆ Զ**

Ո՞վ բարեբանյալ Աստված Երկնավոր, Միա՛կդ Արարիչ, Տէ՛ր ամենակալ, Մեծութ-յո՛ւն անհեղ, Օրհնաբանելի սե՛ր ու գթություն, խոստովանելի՛ Ողորմածություն, երկրպագելի՛

Բարերարություն, Խնամարկություն պաշտա-մունքելի՛, Պահպանությո՛ւն խնկելի, Բարձր-յա՛լ անքննելի, Մերձավո՛ր կամարար, Ապավի-նությո՛ւն անկասկածելի, սրտերի համար՝ Մխի-թարությո՛ւն, վշտեր Փարատո՛ղ, Ապաքինութ-յո՛ւն բոլոր ցավերի, Ազատագրո՛ւմ պարտքերի բեռից և վճատութեան վերջնական Ավարտ, Փո-խարկի՛չ կարիքների, Կարգավորո՛ղ կրքերի, խոսքերի հա՛մ ու ներդաշնակություն, լեզվին Սա՛նձ դնող, շո՛ւնչ Կարգավորող, հազագ-կո-կորդը Կայո՛ւն պահպանող և խորհուրդների վե՛րն Ամփոփարան, Կամքի կրթարան, Հան-գի՛ստ հուզմունքի, փոթորիկները Հանդարտեց-նող Ա՛ջ, և Խաղաղությո՛ւն՝ ալեկոծութեան բո-լոր կերպերում, որ ամեն կողմի իմ իշխանութ-յամբ թևողիս ասհա Քո Իմաստութեամբ Ե՛տ Ես նվաճում, և իմ թոփչըր Ուղղորդում Ես Քե՛զ:

Բ

Միշտ Երախտավոր ու Գովաբանված Աստված բոլորի, Դու Քո հեզութեան Անհ-պարտութեամբ և համբերատա՛ր անճառ հրաշ-քի տենչով Ես ապրում սրբերիդ ներսում: Թա-գավո՛րդ համայն էությունների, որ ճանաչված Ես ամենքի կողմից Քո Մեծ Գթութեամբ, Սկզբնահայրն ու Նախաշավիղն Ես Միրո ըն-թացքի և ճամփան Կյանքի, որ քաղցրութեամբ Քեզ դիմողներին Առաջնորդում Ես Քո վերին Լույսին: Մեծ վստահարա՛ն մեր ձեռքը բռնող, որ բաց չե՛ս թողնում գայթակղվածիս ի վայր կործանվել: Հույսի՛ կերպարանք, որ ձյմար-տութեան գրավականով ի՛ հայտ Ես լինում ա-ղաչողներին: Ապավինությո՛ւն մեր հանգս-տութեան, չե՛ս մատնում երբեք մեզ վտանգնե-րի դատապարտութեան: Դու, ազատությո՛ւն մեզ շնորհածիր, որ բաշխում Ես մեզ լիառատո-րե՛ն՝ փրկանքի դիմաց առա՛նց որևէ վարձ պա-հանջելու: Լիաբուխ աղբյո՛ւր աննախանձութ-յան, որ Քո իսկ փառքով՝ անա՛րգ նյութն հո-ղիս ճոխացնում Ես սո՛ւրբ արժանիքներով: Շո-ղարձակությո՛ւն, որ ստվե՛ր չունի, ճառա-գայթներով ահեղ բարձրութեան վերից ինձ ի-ջած՝ պարածածկո՛ւմ Ես թշվառականիս՝ կրկնակի՛ ավել բարգավաճելու: Բազում մեղ-քերին քավություն Բերո՛ղ, որ իմ առաջին փրկագործումից արդեն մերժվածիս՝ պայծա-ռութեամբ Ես կրկին նորոգում, կրկին՝ դարձ-նելով վայելուչ որդի: Ամենահնա՛ր օգնութեան հասնող, գերամբարձութեան բոլո՛ր կերպերից

Հավե՛տ առաջին, վատահուժեղ և քաղաքացիական պատերազմի ժամանակ, որը հանդիսանում էր Կարմիր Պարտիզանների շարժումը, որը իմ կենդանի շունչը լքել էր իսկ ակտիվորեն՝ Ես դարձնում եմ ինձ Համար, որովհետև որ՝ Քեզ իմ գտնելով՝ կենդանանում եմ առավելություն։ Կամք՝ մի՛շտ անփոփոխ, որ առավել է գործնում գերուս քաղաքացիական ժամին։ Ամենքից գտնված, անսխալելի՛ կենդանացնող դեղ, որ ամբողջովին եղծված մեռելին տալիս Ես օրհնյալ սրբազնություն։ Ամենաբարձր անհրաժեշտություն, որ կրակի մեջ լրի՛վ այրվածին, Հողմից քշվածին, և գազանների սուր ժանիքներից ժանձնահարկվածին՝ կենդանացնում Ես ակնթարթորեն, առանց որևէ՛ դուրս-ինչ պակասի ոտքի՛ Հանում նոր Հյուսիսայինություն։ Անհավասարելի՛ Համարձակություն, Ում Համար միայն և աստվածորեն՝ պիտի պարծենալ։

Գ

Ամենակործան վտանգների մեջ նեղվածիս, ո՛վ Տէր, զվա՛րթ քաղցրությամբ Երկնքից նայիր, և բազմատաղանակ Հեծեծանքների ալեբախումից՝ Հանի՛ր Հանգստիդ անդորրություն մեջ։ Եվ վրաս ելած սատակիչներին՝ սպառազինված այսերի դժնի Հնարանքներով, որ զինվորությունամբ՝ Հար ուժին իրենց պատկանումներով նրան են միայն բուռն մարտակցում՝ տարբեր ցավերով, խիստերով՝ վատնող, որ կորստական նշմարումներ են բերում ինձ վրա, դրանց Մերժելով՝ Հանե՛ս ինձանից, Հատե՛ս, Խափանե՛ս, Հալածե՛ս դրանց և իսպառուրեն՝ տարագրելով իմ սահմաններից Փախցնե՛ս Հեռու՝ անդարձ ուղղամբ նրանց կորստյան, և կառուցելով կանգնեցնե՛ս իմ մեջ՝ Կյանքի՛ նպատակ, և ամո՛ւր, ինչպես արձանը մահվան՝ Խաչի՛դ նշանով, Քե՛զ՝ Կյանքի Աստծո՛ւդ ապավինածիս փրկություն բերող վատահարանով՛ը Հաստատահիմնես։

Դ

Եվ այս նշանով՝ անպարտ, անպատի՛ր, և անվանելի Մեծ Ահավորիդ արվեստով գործած հրաշալիքով՝ թող լուծվեն, չքվեն՝ որոգայթները միշտ գաղտնածածուկ-սատանայական, մեքենաները նրանց կապտովեն, գայթակղությունները վատնվեն՝ իսպառ, և նրանց խաբող դրությունները լինեն խայտառակ, թող Հայտնի՛ դառնա երևույթները որս կատարողի, նենգողի դրած

ծուղակները ողջ՝ գտնվեն՝ մեկ-մեկ, վարմին Հագցրած վերարկուները չքվեն՝ վերանան, և որոմների բույսերն այդ ընկնեն անդրդի դարձած սոչորումի մեջ, և թող նգովի՛ բռնավորն այդ իր Հարաբանություն, կտրվի՛ լարը իր խաբեությամբ ի մահ որսողի, և թող պարսավի՛ պատրանք սարքողն իր բանսարկությունով, պակասն գեները գրպարտողի՛, և մահաբերի սուսերներն ընկնեն, պատրաստությունը սաղորդի սուզվի՛, և տագնապները պատրանք բերողի՛ արձակվեն իրենց սարքված վարմից, թող կեղծավորի սուս կերպարանքը այլայլի՛ լրիվ, խրոխտողների Հարձակումները ընկնեն սատակամբ, և կցորդումները ուտողների՛ քանդվեն ուցրվեն, բաժանվեն՝ տոհմերն ավազակների, և թող քայքայվեն՝ բարբարոսների բույրեր բոլոր, փլվեն, վար թափվեն՝ ապստամբների վեր բարձրացած ամրոցները ողջ, և ամպրոպներին գո՛ղ-Հանդուգների՛ դրվի արգելանք, թող որ փորձողի անձրևի բերած վերքը փարատվի՛, Հալվի՛-ցամաքի՛ աղանդավորի եղյամբ լրիվ, Չարգիլի՛-ընկնի՛ ահեղ եղջուրը գոռոգացողի, և մոլորեցման ի վեր Հանվելիք դրոշակները՝ թող որ կտրուվեն՝ մանր մասերի, և թող փշրվեն՝ անբարեհաճություններն Հպարտացածի, ճակատման ելած դիմեցումները ահով՛ ե՛տ քաշվեն, և թող մասնատվեն՝ միաբան դարձած բոլոր գորքերը պիղծ Բիլիարի, անմարմին լինեն, թե մարմնավոր՝ թող փախչեն՝ նրանք նույն ճանապարհով, և մեկ շավիղով եկողները թող՝ յոթո՛վ ճողոպրեն, և իրենք՝ զցվեն այն փուր, որ ինձ Համար փորեցին, ճանձրացնողի ձեռները թող փոխվեն բարեշունչ եղանակների, կտրվի՛ կապանքը կցորդության՝ մշտաջանությամբ ավազակողի, և շողքորթի Համբույրը շողոմ նողկանք ազդի ինձ, և ընդհատվելով դադարեն՝ լրիվ նետածությունները նեղչի կատարած, և խարդախողի նավը՝ սասանման մեջ Հարատևի, ատամուկները խաճնողի իրենց արմատից՝ Հանվեն։

Ե

Հանուն Քո Փայտի կենաց օրհնություն, որին մեխվեցիր Քո բեռներն ի հիշատակումով՝ Անըմբռնելի՛ Աստված՝ Փրկի՛չ մեր, այդպես Միացար մահվան գործիքին՝ Դո՛ւ Արարիչըդ երկնի՛ք-երկրի, սակայն Քո արյամբ՝ արդար, Տէրունի՛, օծյալ Քո Կարթով՝ ո՛րս դարձրեցիր դժնի վիշապին, և դառնությունը լեղու ըմպելով՝ դո՛ւրս թափեցիր ողջ թույնն այդ կորաչի։



Պատմաբանության օձյալ ճառերի մեզ վկայութեամբ, Քո սարսափելի չարչարանքներով ամաչեցրի՛ր լրբութիւնները Հակառակողի, Անհասանելի և Օրհնյալ՝ անուն, և ամենայնից անթարգմանելի՛ դ, Ումից դողո՛ւմ են և դատապարտվո՛ւմ, սոսկո՛ւմ, սարսափո՛ւմ բնութիւնները՝ թե՛ նրանք, որոնք երևութապես տեսնվում են մեզ, և թե՛ նրանք, որ՝ անրևո՛ւյթ են մեր տեսութիւնից, - նրանց ամենքին՝ խոստովանողիս միջոցով լինի՛ պարզէներ տրվող Քո չորհրդներից՝ ի պաշտպանութիւն, բժշկութիւններ, քաղութիւն և լո՛ւյս: Իսկ մեզ մահ բերող դառնաթույն օձին, որ իսկ իր նման տիեզերաղավ չարութիւնով իր՝ ազդեց ամեն տեղ, խոստովանողիս մաղթանքը լինի մի նո՛ր սատակում: Իր տվածի չափ՝ ընկնի՛ կորստով անբժշկելի, իր տանջելու չափ՝ թող որ ենթարկվի՛ նույն տանջանքներին, և այս մատչանով մատնվի՛ նա թող, բռնվի՛ ու կապվի՛: Ողորմութիւնը թող Ստեղծողդ լինի ինձ վրա, և շունչն իմ ոգու՝ շողկապված Քեզ հետ, հավիտյա՛ն իմի՛ անբաժանելի՛ կապով միանա:

**Ձ**

Եվ ով ընթերցի այս իմ ձայները աղերսանքների, իմ մաղթանքների մեծ գոչումները և աղոթքները հայեցումների, ծե՛ր լինի, տղա՛, կո՛ւյս, երիտասարդ, և կամ աղախի՛ն, եթե պաղատի աստվածաբարձր՝ երանութեան մասն ընդունի Քեզից՝ յուրաքանչյուրն էլ հավասարապես՝ անաչառութեամբ, նրանց մեջ թո՛ղ որ նկարվի կրկին Կերպարանքը Քո անփոփոխելի: Ահա Տիրապետ Ամենահնա՛ր, Հզո՛ր, Անպատո՛ւմ, Ամենաանհա՛ս, Անիմանալի՛, տե՛ս այստեղ գրված հառաչանքներն այս հեծեծանքներին, որ մատուցվում են ամեն շուրթներից՝ ընծայվելով Քեզ, հանուն Քո Հորը և Բարերարին և Քո Հոգուն Սուրբ՝ Նրան փառակից Կենդանատուին, և Աստվածածնի՛ դ բարեխոսութեամբ, խնդրվածքներո՛վ բոլոր սրբերի: Որովհետև որ՝ ամենայնին էլ Դո՛ւ ստեղծեցիր, և Քեզանից էր եղան ամենքն էլ, և Դո՛ւ ես տիրում ամեն-ամենքին հավասարապես, և Քե՛զ է վայել փառքերը նրանց, Մե՛կդ իսկութիւնից՝ անժամանակյա Սուրբ Երրորդութեան, և զուգակցորեն Նրանց հետ մեկտեղ փառավորյալ՝ ես անբա՛վ փառքերով, հավիտյա՛նս հավետ: Ամէ՛ն:

**Հեծեծանքների մի նոր հավելված նույն իսկ**



**Հակողից, նույն աղերսներով և մաղթանքների խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻԾ ԽՈՍԻՔ ՌԻՂ ՂՎԱՄ ԱՍՏՕՌԻՆ ԲԱՆ ՂԱ**

**Ա**

**Տէ՛ր, Տէ՛ր Գթութեան և**

Ողորմոթյուն մեզ Բաշխող Աստված, Անո՛ւն մեծափառ, Ձայն՝ ահեղաբան, Սաստկութեան՝ կոչում, Անհասելի՛ լուր, Դողացնո՛ղ բարբառ, Հիացնո՛ղ հնչում, Բարերարելու ողո՛րմ քաղցրոթյուն, Հուսադրութիւն, Ումից երկյուղում ու սասանվում են ստեղծվածները համայն բնութեան: Քո սպառնալի ահի հպումից՝ սերովբեներն են սավառնում մեջ, քերովբեներն են թեւերն ամփոփում, պարուրվում պարը լուսակերպերի և երկնչում են պետութիւնները վերնայինների, դողահարութեամբ ցնծո՛ւմ են նրանք և բերկրում են՝ նավակատիքին ի մի հավաքված, բայց զարհուրհում են դէկերը բոլոր, չարութիւնների գունդն է ընկրկում և պակասում են այն հոգիները, ովքեր սիրեցին խավա՛ր ու կորուստ, օտարի բոլոր հրեշտակներն են մատնվում անդունդին, և հարձակումները դիմամարտի՝ կապվում են ինչո՛ւ, և քինախնդիր ամաղեկացիք դրվում՝ փակվո՛ւմ են ստորին բանտում, և անքանդելի կապանքներով են պաշարվում իմբե՛րն Հակառակողի, և մահագինաց կաճառներն ամեն՝ արգելափակվում անգեծ գնդանով, և պնդվում են շղթաների մեջ՝ գումարտակները այսականների, երբ որ լսվում է Հրամանդ ահեղ, և պապանձվում են դասակցութիւններն ընդդիմաբանող, և անրևույթ ժողովները չար՝ դատապարտվում են հյուժմամբ կորստի, և անլուծելի շղթաների մեջ առաքելութիւնները դերաքրիստոսի՝ դրվում են գորե՛ղ նեղութիւններում:

**Բ**

Եվ գիշերային այս ժամի խորքում ի վեր բարձրացրած ձեռքիս մատներով՝ նշանդ եմ վրաս տյառնադրում, Տէ՛ր, Քե՛զ, որ երբեք չե՛ս մթնում խավար անգիտութեան մեջ, Դու ամեն բանի և ամենայնի Տեսողութիւնը, որ Բնակվում ես ազուցված Լույսին: Ընդունի՛ր ահա, աղաչո՛ւմ եմ Քեզ, վտանգների մեջ գոհաբանողիս, և վերցրո՛ւ ինձ Հզոր թեւերիդ պաշտպա-

նության տակ, և ցնորքների պղտոր արդյունքից Փրկի՛ր լիապես, զգայարանը սրտիս հայացքի դարձրու սրբասու՛րբ, տիրություն բերող ա- նուրջների դեմ՝ ամրացրո՛ւ ինձ Կենացըդ փայ- տով, և Քո փրկարար Արյամբ սրսկի՛ր իմ կացա- րանը բո՛ւր կողմերից, կողիցդ կաթող կենարա- րությամբ գծագրելով՝ Յո՛ւյց տուր շավիղը իմ ե- լումուտի, և Զեակերտի՛ր երգիկիս վրա՝ Քո Քա- ռակե՛րպը՝ որպես պահպան, և երբ աչքերն իմ բարձրացնեմ վեր, թող որ փրկության խոր- հուրդդ տեսնեմ, տանըս ճակատին Չարչարանք- ներիդ գործի՛քն հաստատիր, թող որ օրհնութ- յան ծառիդ պատվաստվի իմ հավատն հույսի, և սրանցով, Տէ՛ր, Արգելա՛նք եղիր հոգեսպանին, և թող անխափան իմ տան մեջ մտնի Պաշտպանը՝ Լույսի: Ծանր ցավերիս հետ միասնաբար՝ Թեթևացրո՛ւ բեռը պարտքերիս, որ իմ մտքերի լուարանում են իմի հավաքվել և ամփոփվել են մահճիս անկողնում, և պտուղներից դառն հու- սահատության՝ Ուշքի՛ բեր կրկին, որ կարողա- նամ, չարաչար գործերս անօրենսության, որոնց մասերին թիվ-համար չկա՝ Ամենագետիդ խոս- տովան լինել :

Գ

Հանգստացրո՛ւ ինձ իմ վաստակների բա- զում կողմերի վրա ծփացող աշխատությունից, Հանի՛ր տազնապս՝ ոգիս կործանող տարակույս- ներով և դառնությունն իմ վշտաց հետ մեկտեղ, և հեծեծա՛նքը՝ կարիքներիս հետ, և ներդու՛թ յո՛ւնն իմ թշվառություններիս հետ միագումար, հառաչանքներս՝ խորտակումների, ողբ բեկում- նե՛րըս՝ ապշություններով մե՛կ ու միասին, թմրություններս շփոթմունքներով, արբեցութ- յո՛ւնն իմ հիմարությանս բազում բուլլերով, թերմտությո՛ւնն իմ՝ խելագարությամբ, սիրո սառչո՛ւմն իմ՝ աղվական ախտի կրակով հան- դերձ: Բազում տխրությամբ և տարտամությամբ տկարացածիս՝ եղի՛ր Օծանդակ՝ Բարեգործ՝ Աջո՛վ Քո Շնորհալի Ձեռքո՛վ՝ Նորոգող, Մատո՛վ կեն- սաբաշխ, Փառքո՛վ մշտափայլ, և մշտակայուն՝ Անեղձ ու զվարթ Քո երեսներով, պաշտամուն- քելի՛ իսկությամբ է՛րիդ և բարձրությամբդ երկրպագելի: Հատի՛ր ինձանից չարաչար խեղ- դող ու կորստական հեծեծանքներն իմ, և նոր գյուտե՛րը չարի հորինած, խարդախությո՛ւնը հին բանասրկու՛ի, օտար ազդեցմամբ ի մա՛հ կը- թողին՝ միշտ անհարմար իր երևությունով՝ եղեռ- նագործի՛ն հանապազորդյան: Աչք ու միտք կա-

պող՝ հնարանքները դժոխակ դե՛ի, և ողորական բոցաչնչո՛ւմը ձգող կախարհի: Մահվամբ դադա- րի հանգստյան վայրն այս Պահի՛ր-պահպանի՛ր՝ աներևույթ-չե՛ղ՝ մտածումներից և սխալների՛ց մասնավորացած, գայթակղությունների՛ց մեծա- մեծագույն, և ամենփո՛քը իսկ ոտագցումներից, և ճանձրությունների՛ց չար խաբեբայի: Քո դեմ հան- դիման այսքա՛ն հանցավոր անպիտանության ծառայիս խախուտ գգայությունից՝ Հեռացրո՛ւ բոլոր մտածումներս աններդաշնության՝ որոնք իմ մեջ են՝ բասրելի՛ կրքով, թշնամյո՛ղ վարքով և դիպվածներո՛վ իմ ամոթալի, վրիպումներիս թո- դած հետքերո՛վ, ձաղկելու արժան իմ պատրանք- ներո՛վ, և անգոմանելի՛ խորհուրդներով իմ, իմ ա- վելաբան բոլո՛ր կերպերով նշավակելի:

Դ

Ահա Քեզ Լրիվ ապավինածիս՝ Հանդեր- ձավորի՛ր նոր հագուստներով՝ անսխալ՝ հոգով, մարմնո՛վ անշաղախ, Պահի՛ր-պահպանի՛ր հողմի շնչումից, և հարվածների՛ց բռնությունների, փոթորիկների ահե՛ղ բախումից, և մրրիկների ոտնումի՛ց հուժկու, և գազանների՛ հարձա- կումներից: Եվ երբ որ փակեմ աչքերս, այնժամ՝ սրտիս աչքերի հայեցումները թող չստվերա- նան, այլ թող որ իմ սիրտն էլ զվարթանա և պայծառանա՝ վայելչության մեջ, փայլի՛ Քո առջև, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, անհանգչելի՛ մի Լուսավոր վառմամբ: Խոսքովդ սրբի՛ր պատս- պարանը իմ ննջման վայրի՛ խորամանկումից, զբաղումներից ամեն տեսակի, և Քեզ ատելի՛ հիշատակներից, մտածումներից իմ վերնամար- տող, քրեական նե՛նգ մորտուությունից, անշնո՛հ վարքից տիրադավության, Աստվածաբնդե՛մ պառակտումներից: Ինձ՝ Վերակացո՛ւ եղիր, ի՛մ Աստված, վերնայիններիդ հզո՛ր գնդերով, պե- տություններով և իշխանության բոլո՛ր դասե- րով, գորավորներո՛վ Քո անհաղթների, սուրբ և անարատ աստվածությանդ մատակարարող Քո մաքուրներո՛վ: Առաքյալները իրենց ավե- տած Ավետարանո՛վ, մարգարեները՝ կտակարա- նած իրենց գրքերո՛վ, և երջանիկներն իրենց մաղթանքո՛վ, որ նահատակման վերջին շնչի հետ Քե՛զ ընծայեցին: Եվ որոնցով, որ թող ի՛նքս էլ ննջեմ, առջևդ երկյուղի այն տրտմութ- յամբ, որ՝ Կամբի՛դ է հաճո, և թող որ զարթնե՛մ շնորհներիդ մեջ՝ կրկնակի՛ ավել մեծ ուրախութ- յան: Թե այնպես լինի, որ վատությամբ ննջեմ Քո առաջ, դարձյա՛լ հարությամբ՝ թող որ բերկ-

ըուծյա՛մբ լցվեմ հոգևոր, և եթե լինի՝ մեռնեմ մեղքերում, ապա դրանցից լրի՛վ Զատելով՝ Կանգնեցնե՛ս կրկին՝ անբի՛ծ, անաղա՛րտ նո՛ր խղճմտանքով:

ե

Խնդրվածքներին ամենահառաչ հեծեծանքներով, լսի՛ր, Աստված իմ, միա՛յն Բազմագույն, բարեխոսությունս սուրբ Աստվածածնի՛դ, բարեխոսությունս ամենայն բոլոր Քո արդարների՛, նահատակների՛դ ամենաընտիր: Ամենքի կողմից իմ գոչյուններով ես Փա՛ռք եմ ահա վերառաքում Քեզ՝ միանալով սուրբ հրեշտակներին և անմահներին՝ գերակա դասին՝ գովեստի խոսքեր Քո Հորն ուղղելով, նաև Սուրբ Հոգուդ՝ Համա՛յնն Հաստողին և Նորոգողին, հավիտյա՛նս հավետ: Ամէ՛ն:



ԽԱԶԱՓԱՅՏԻ ՄԱՍԻՆ,  
ՈՐ ԽՈՐՀՂՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆ Է  
ԵՐՋԱՆԻԿ ՈՒ ԲԱՐԵԲԱՍՏ  
ԺԱՄՀԱՐԻ  
ԲԱՆ ԴԲ

**Աղաչանք մատուցված  
Թարգմանական եղանակով**

Ա

**Քոհանա՛մ Քեզնից**, Բարեգո՛ւթ, Հզո՛ր, միա՛յն մարդասեր, Կենդանի Աստծո Միածին Որդի, որ Արարիչն ես երկինք-երկրի, ահա զարթնելով Կենացդ փայտի կատարյալ հնչմամբ, որ հիշատակն է չարչարանքներով Քո Սիրո լրման, և որի ազդող ճայնարկությունը բախվելով այդժա՛մ մենք սթափվեցինք, և ելա՛նք ոտքի՝ մեր մեռելություն թմբրություններից՝ վե՛ր հարուցվելով, որտեղից արդեն սիոփանքները լսելով Բանի, եկանք և մենք էլ կոչնակված ժամին՝ օրհնաբանությա՛մբ պաշտամունքելու, որպեսզի այստեղ կանգնե՛նք Քո առջև՝ բեմից տարածվող պարգևումների մեծ ուրախությանն արժանանալով:

Բ

Ահա և՛ Փա՛ռք Քեզ, անբովանդակելի ահեղ զորությունս անսահմա՛ն Անուն, որ այդքան թվով հնարավորություններ ունենալով էլ՝ իմ փրկությունը՝ Անձա՛մբդ հոգացիր, Իու հոհաբանված անե՛ղծ իսկություն, որ այս կողմում էլ

հրաշալիորեն կերպարանեցիր նմանությունը հանդերձայնների, և հանդարտորեն իր գործը ա՛նող Քո վայելչական փայտի անոթով, Խաչովդ՝ անհարի՛ր իմ քնի հանդեպ՝ Որոտացի՛ր Քո սաստիկ որոտով, և ծուլությունն ու դանդաղությունն իմ՝ Քո խրատներն ու հանդիմանանքը լմա՛ն խառնեցիր և Քո հեզություն հայրենի սիրո ուժգին ճայթումով ինձ բաժանեցի՛ր երկու մասերի, այդ երկուսի մեջ միջնորդ դառնալով, մարդասիրաբար քաղցր անձրևելով, սակայն այնպես որ՝ Քո մեղմությունը երբեք չզրեց նիրհմամբ ընկման կորուստների մեջ, ո՛չ էլ անխնա ահալորությունս զարհուրեցրի տառապյալ հոգիս: Համա՛յն Ստեղծիչ, որ ծնրադրման երկրպագություն ուսուցելով մեզ՝ այժմվանից արդեն ցույց տվեցիր, թե՛ ի՞նչ օրինակով պիտի ի հայտ գա մեծ օրն Հարություն իր ահեղությունս և բարբառումով, և այդպես մե՛զ էլ կենդանացրի դժոխային ողջ անշարժությունից, անբանությունից, և ով պակաս էր իր մտքով, նրանց՝ ելա՛ր փնտրելու, կոչեցի՛ր նրանց, որ ուրախությա՛ն գինիդ վայելեն, և Խաչո՛վդ էր, որ՝ անարատ հանդերձ հոգյորի Հարսիդ՝ ի սեր Փեսայի՛դ: Փոքր այս խթանով երկու կե՛ս արիք վիթխարությունը ապերասանի, և ստամբակին ընդդիմանալու կրթության համար՝ ստվար լո՛ւծը այս կարգադրեցիր և չարախոսի վայրաբա՛ն, վանո՛ղ կզակի վրա՝ Խաչդ դարձրի՛ր զսպո՛ղ մի կապանք: Հավիտյա՛նս հավետ փառավորյալ է բարձրությունն անբավ Քրիստոս Մեծիդ, որ վերցրեցիր Քո Խաչափայտին պարտքերս բոլոր, դրանք փոխելով կենաց շնորհով և ազատությունս, և արդեն ցնդած հիմարիս դարձյալ հոգևորական Ահեղ հանճարով՝ դարձրի՛ր իմաստո՛ւն, և զանգիդ գոչմամբ՝ անբժշկությունը օձի հարվածի՝ թարգմանեցի՛ր ինձ՝ առանց որևէ պահ իսկ մոռացման, և գծագրությունը Երրորդության՝ Երեքյան կապով՝ ա՛յս իսկ նշանով վնասակարիս վրա կրկնեցիր:

Գ

Այս ներբողներն իմ խնկի՛՛ բուրումով վերառաքեմ Քեզ, Ամենախնա՛մ, որովհետև որ ստապատրանքով կուռքերի սարքած բազմաստվածությունից՝ առավելագույնս և հաճախադե՛ս պարտքերով կորած ա՛նձն իմ որսացիր Քեզ երկրպագման, և քարոզեցիր ճշմարտությունն ինձ՝ ահարկո՛ւ, խրո՛խտ նվիրյալ փայտով, և այս պատշաճող պատճառով էր, որ՝ մեծացրեցիր Ավետարանիդ Պատի՛վն ավետյաց: Սա աղաղա՛կն

է բարձրութեանդ գոչման, Քո Կայսերական պետութեանդ արքա՝ Տէ՛ր իմ, Քրիստո՛ս, և Հաղթանակող սպառազինման նշանն է Փայտն այս, և նշանն է այս ա՛յն խրախճանքի, որ պիտի լինի մարտիդ ավարտման Հանդեսի ժամին, այն մարտի, որում որ իմանալի փարավոնն ի՛նքը բռնակց-կապվեց, և Հանապազորդ բռունցքներ իջան այդ Հարազործի Հպարտ գագաթին՝ շե՛րտ-շերտ տաշելով մինչև սպառում: Այս Փայտով է, որ պատերազմում են որդիք Սիրոնի՝ ընդդէմ երեւելով աշխարհը կալող խավար իշխանին, և կյանքի փայտդ այս՝ տո՛ն է ինձ Համար, և սրանո՛վ իսկ խիստ հեռուներին ց կարգավորում ես Քո Աստվածավանդ կրթութեանդ իմ մեջ, և ա՛յս նշանն է յուղի դրոշմով դրոշված վրաս, մշտապես նոր է և չի՛ Հնանում, և ա՛յս նշանն է իմ դեմ խափանում Հատուցումները ապագաների, ապագաներից ճանաչեցնելով Հար իր նմանին՝ կյանքի այն ծառին, որ դրախտում էր գտնվում Աստծո: Եվ կոչարան է Կենաց փայտը այս՝ բարվոք Հավաքման Չանադրութեան, դեպի սենյակներն օրհնութեաններին, և Սա պատկերն է դրախտում տնկած դիտութեան ծառի, որով բարին ու չարն են բաժանվում, և Սրանո՛վ է մարդն ընտրում բարին: Եվ մեր երեսն ենք մենք տյառնադրում, երբ որ Սուրբ Հոգով Խաչիդ նշանն ենք կնքում մեր դեմքին: Սա՛ նախագեկո՛ւյց, ավետամատուց Փա՛ռքն է Գալստյան, որով որ Հարսն է պահվո՛ւմ-պահպանվում սուրբ Թագավորիդ: Քաջալերական Հորդորին է Սա՛ խրախճանութեան ժամանակ պարող մաքուր սրտերի, անհա՛ղթ Սիրարկուն՝ անձնահամբուլը իր կցորդութեան, որ շքեղաշո՛ւք քող է ընծայում ամենքի՛ն Մնող ու Կույս Թագուհուն, և Հարդարում է նրան ծածուկում՝ պնդութեաններով, որ վայելչանք է հագցնում հոգուն՝ Սինայում տրված պատգամի Հանգույն, որ և Տիրոջից առաքվեց դրսում գտնվողներին: Հա՛րսն այս գովական՝ Օրիո՛րդ պանծալի, որը և դարձավ անշողախ որդոց Մայրը անարատ, և փառագարդվեց և Խաչիդ նշանով:

Դ

Եվ առավելս, քան Երիբովի փողերն եղջերյա, որոնց ձայնով, որ բռնութեանները նենգ Բեկիարի Հաստ պարիսպների քանդամ՝մբ Հարթվեցին, պարաստիկ սարքած ա՛յս Փայտով էր, որ քարե՛ր արձակվեց ընդդէմ Գողիաթի: Եվ ա՛յս Փայտով էր, որ կառուցեցիր գայիսո՛ն նորոգ՝ ա-

հեղ կործանման վկա՛ն՝ մշտապիղծ-չար սատանայի, որովհետև որ՝ խորախոր անձ իր արմատներով՝ մտավ մեղքիս մեջ և դրա սարքած մեքենայական ընթացումներից, Կենացդ այս փայտով՝ անձն իմ խեցի՛ր ստույգ կորսչից, և մոռացման մեջ, բոլոր գործերիս պարտքերը բերիր ու չնորհներով Կապեցիր ինձ Հետ՝ ա՛յս իսկ Նշանիդ երախտըներով: Որովհետև որ, երբ ի՛մ իսկ ձայնով Տէր Աստծո Բանիդ ի՛նքըս անվանեմ նախապատում Քո Երկավորութեամբ՝ սխալ չե՛մ գործի, այլ կճշմարտե՛մ: Եվ իմ մարմնի տկար ամանն այս՝ Կենաց նշանի Հոգեկիր նյութով՝ գործերդ Հիսուսի վերապատմելով՝ առավելապե՛ս պիտի հոչակի իրենց մեծութեամբ, և վերնապարգև օգնութեաններդ թվով՝ բյուրավոր՝ ապավինութեան պատվար չունեցող երկրականներին՝ Կենդանութեանդ՝ Ես գարմանագրել՝ Խաչիդ նշանով:

Ե

Խոստովանված է Անունդ Անքնին, որ մարդասերիդ բարի խնամքն է մեզ արտահայտում, և խնկվում է՝ անգժադրելի Լույսիդ պատկերին կազմելով սուրբ մաս, որ կրկընձա՛իր այս իսկ նշանով դուրս է արձակում շողերդ ինչպես նետե՛ր հեռաձիգ, որ սլանալիս օդաչուի պես Հարմարաթո՛ւիջ՝ ձայնե՛ր են Հանում, և իրենց ներսում պարունակում են հոգի՛ կենդանի, որով դառնում է նպատակն արդեն անսխալելի և ավարտվում է գաղտնի դրվածքով խավարի ծառա աղեղնավորի՛ Հավե՛տ կործանմամբ, այդպես ընկճելո՛վ խավարի գորքին: Իբրև պատնեշներ ամո՛ւր ու բա՛րձր՝ բերդամարտութեան Համար պատրաստված, միշտ կանգո՛ւն է Նա ու անընկնելի Հոգո՛ր Թևերով և Փայտն այստեղից Հարված է դառնում այնկողմնայինի ա՛յն դիպվածներին, որ մե՛ր Հանդեպ են գալիս կուտակվում, և Կենաց փայտից թշնամու ներհակ ուժերի Հանդեպ՝ Հրեշտակների կամավոր խմբե՛ր վերուղարկեցիր: Եվ Բանիդ արված մե՛կ Ակնարկութեամբ կամ Հրամանո՛վ և Քո Օծութեան չնորհին խառնած Արյո՛ւնդ անաղարտ՝ ա՛յս իսկ Նշանը դարձրիր խեթի՛ջ մոլի՛ գոռոցին, որպես հետանով սրված Գերանդին, և այդպես Խաչըդ դարձրեցիր Ձե՛նք մարդու փրկութեան: Եվ մեծ ազդումից այս սուրբ նշանի մեծ աղաղակի, որ առավել էր, քան թե ձայները վերնայինների՝ քանդվե՛ց-չքվե՛ց՝ ամուր դուները անվայել կամքի, ամենաերկչոտ խենչութեանները մոլի կարճմտի՛ր և Հակառակվե-

լը շեղ հրեական սրտի իմաստի՝ և այդ տանն ե-  
ղած սովերականին տվե՛ց կործանման:

## Ձ

Փառաբանութիւն վերընծայեմ Քեզ,  
Անմահ Թագաւոր, որ ամենայնը Ինքդ արա-  
րեցիր և Հաստատեցիր Աջով Քո Հզոր, աղա-  
չում եմ Քեզ՝ կրկին ներգործիր Քո Նորոգութե-  
յամբ: Կենաց Քո փայտով մերժիր մեր ներսում  
դժնդակ խեթերը խորամանկութեան, որ բան-  
սարկոն է սարքում-պատրաստում: Մերժիր  
լիապես և հեռո՛ւ վանիր տաժանքներ բերող  
տա՛ւը մեղքերի, Հո՛ղմը դառնութեան, որ դուրս  
է ելնում խաբողի շնչից, Մերժիր տարրերը այն  
արկածների, որոնք ծագում են մահվան երկյու-  
ղից և տխրեցուցիչ վնասներ բերող Հողում-  
նե՛րն իր հետ, և այսախառն հեծեծանքները, որ  
թալկացնո՛ւմ են ու նսեմացնո՛ւմ: Վերստին Յ-  
րիւր Քո այդ Հեծանով, որ Քեզանո՛վ էր վերած-  
վեց զենքի՝ օժանդակվելով բացված թևերիդ  
Նշանի Հանգույն: Մերժիր և Վանի՛ր ամպերն  
հրածին, որոտունքնե՛րը կարկուտներ բերող, և  
հրախափար կեղծավորութեան ցոլցու՛մների  
ազգը ցափազին, որ բազմոտանի խաբողի  
փշմամբ վիրա՛պն է նյութում, և Նշանը այս՝ ճա-  
կատամարտում, Հակառակորդի դիմեցումնե-  
րին՝ Սո՛ւր է սատակման, Նշանն այս Հաղթո՛ղ,  
որ բարձրանում է դեքերի բոլո՛ր կաքավումների  
և վայրենական խորհուրդների՛ դեմ: Դրանք բո-  
լո՛ւն էլ զարհուրման մեջ են այս փո՛քրիկ իրեց  
և մե՛ծ դողութեամբ տեղի են տալիս Խաչի՛դ Ն-  
շանին, որ և՛ հայտնում է, և՛ ճանաչեցնում  
բնույթը նրանց, թե Խաչի Չայնով Տէ՛րն է Հառ-  
նելու Մեծ դատաստանին: Եվ հոգիները խրա-  
խուսվո՛ւմ են, լցվո՛ւմ արիւթեամբ, զրահավոր-  
վո՛ւմ ամուր զրահով մեծ հավատամքի, և հոգի-  
ները զինավառվո՛ւմ են Սուսերով Հոգու,  
նրանք մարտիկնե՛ր են աստվածարյալ՝ ձև ու  
կանոնով ա՛յս իսկ Նշանի և հիշատակի, որ ամե-  
նափորձ հրի ընտրութեամբ և գոչմամբ Խաչի՛  
քարո՛գ են ուղղում համայն ազգերին՝ ա՛յս օրի-  
նավոր ասպարեզի մեջ՝ իրենց երջանի՛կ նահա-  
տակութեամբ:

## Է

Ավագափողը ահա և Հնչեց, Խաչով Համ-  
բարձվե՛ց Աստվածն օրհնութեան, և Սրանո՛վ էր,  
որ ողջ երկրին Աստվածամարդու վարքը պատ-  
մըվեց, լսելի՛ դարձավ հեթանոսներին ունայ-

նությունից նրանց բաժանման Արմա՛տ դնելով,  
և պահպանութեան Չայնը Ահեղի՛ առավե՛լ ևս  
զորընդեղացավ, Եսայու խոսած խոսքի համա-  
ձայն՝ ցնծացի՛ն ապա ամե՛ն-ամենքն էլ՝ նույն  
բարբառումով: Եվ Սրա՛ Չեռքով, ջրի առակի  
նման ցնդեցի՛ն թշնամիք Խաչի, անպատվվե՛ց ա-  
պա առաջին պողի ճաշակումն արդեն, և տոն-  
վե՛ց արդեն ա՛յս նշանը, որ կոչվեց՝ Կյանքի՛  
փայտ, և Սրա՛ փառքով ընթացքի առաջ՝ անարգ-  
մամբ ընկան պատերազմական զենքերը երկաթ:  
Եվ իբրև Տիրոջ Նշան Սրբություն՝ ձիւ սանձի՛ն  
էլ՝ փայտե կենսաձայն այս մեծ Նշանը Հարմա-  
րագրվեց, և հովվական օձյալ ցուպերի գա-  
գա՛թն ամփոփվեց ա՛յս իսկ Նշանով, որն այդ-  
պես դարձավ մարդկային ձեռքում երկինքից ար-  
ված իշխանութեան սուր: Քարե տաճարին մուր-  
ճով գործողից հետքեր չթողե՛ց, այլ աստվածա-  
կերտ խորանին տվեց այս Փայտե Խաչի հզոր թ-  
ևերով պացման թոփչք: Եվ ո՛չ թե միայն, ըն-  
դունվածի պես, ամսագլուխն էր երբ որ լրանում,  
և այդ նշվում էր փողահարութեամբ և կամ յոթ-  
նիցս յոթներորդ անգամ հոբելյաններին և  
դրանց անցման անկյունների մեջ՝ խափանե՛ց  
փողի հնչումները հին, և այս Նշանո՛վ Նա Փո-  
ղահարե՛ց Տիեզերական բոլոր ծագերով, և ծոցե-  
րի մեջ, նաև ծովերի ջրի բազմութեան ու կղզիներ-  
ում, և այս վայրերում հաճախ սաստկութեամբ՝  
իմ Աստծուց Հնչող ճայթումի՛՝ ձայնով՝ Ավետա-  
րա՛նն է քարոզախոսում: Այս Փայտի ցուցմամբ՝  
Չարդվեցի՛ն-ընկան՝ մեզ սպանողի սուսերնե՛րը  
ողջ, և անօգտակար այդ զենքերից արդեն՝ խոփ  
ու մանգաղներ վերածուլեցին:

## Ը

Ո՛չ արձագանքն է խոր անձայներից  
անդրադառնում մեծ բարձրաձայնումով ու  
կրկնութեամբ, և ո՛չ էլ օտար, ոմն իմաստակի  
բարբառանքներով՝ դժնդակորեն վիրավորվում է  
մեր հացն հանապազ, ո՛չ էլ անախորժ իր  
սրությունով ծակում է ականջ, ո՛չ էլ ուղեղի ա-  
մանն է լցնում չար թնդու՛մներով, ո՛չ ոսկորնե-  
րին փուշն այդ հասնելով, որ դուրս է բուսնում  
մարմնին ի հայտ, ո՛չ էլ նետում է մտքերի առջև  
զանազանակերպ ապշու՛թյան բաներ, ո՛չ էլ  
պղնձե զանգակի նման մարդ դանչու՛նչեցնում,  
և ո՛չ էլ հանում անախորժ ձայներ, ինչպես որ  
քարը սայլին խփելով: Այլ նոր Սիոնի մի պահա-  
տե՛ղ է, պարփակարա՛ն մի անխորտակելի, ա-  
րարչաավանդ կազմվածքներով ա՛յն սպասքնե-

րից գլխավորագույն, որ քրիստոնյա եկեղեցականը հին դետացու հետ գգուշուծյամբ է պահում-պահպանում, հրեշտակաձայն օրինակն է այն, որ առակողի խոսքով կոչվում է հավի ձայնարկում տպավորիչ իր հնչերանգներով, շնորհի օրվա նոր գործի համար ա՛յն նվագներից Ավետարանի, որով որ Հոգին մեզ է արթնացնում, և առավել է, քան եղիսի օրհնաբանելը սաղմոսերգերով: Սա նախօրինակ այն ձայնն է, որին, հա՛ր նմանութամբ ձայներ հանելու՝ ջութակը սարքվեց, որի լարերը պատրաստում էին ձգված աղիքից, նաև գործիքներ այլ, բարետավիր՝ ողբերգակ ձայնով, և բամբուկների բարեցուցակում, կան, որ ասես թե խոսելիս լինեն մարդկային բառի բարեկյուղությունով. նորոգ սրինգն էլ՝ իր տեսակներով՝ որ առնված էր հին օրինակից՝ նո՛ր փոխնորդութամբ, ձայն, որ նման չէ հեթանոսական ուրվաձայների կամ հրեական խակախոհության, որի համար որ մարգարեն Տիրոջ խոսքն այսպես ասաց. «Հեռու՛ է տար ինձնից»: Սակայն Տէրը Սա՛ սիրեց-հավանեց, և կրկնակի՛ անգամով պատվեց ձայնն այս մաքրութայն՝ ձայնն այս բարեհունչ, որ ահարկու՛ է դեբերի համար և ամենայն չա՛ր պատահարների:

Թ

Արդ այս ամենը, որ ընդունեցի օրհնաբանությամբ և գովեստներով՝ սրբության համար տո՛ւրք է կենդանի և պահպանությո՛ւն իմ հոգու համար՝ Քեզ բարձրացրած փառատրությամբ, Քո առջև պաշտոն իմ մատուցելով և իմ գոհությա՛մբ, առանց որևէ աղանդի մասի՝ արվեստ է ուղղված Քո Արարչական բարձրությունները փառավորելու: Եվ աստվածարյալ Ձայնդ թող մտնի Քո կյանքի ծառին ինձ՝ պատվաստվածի՛ս՝ բոլոր հոգերիս շողկապության մեջ: Եվ նշանակիր իրն այս դարձրու՛ւ ջնարակված ու պատվական՝ ազգմամբ, որպես Չատագով անխափա՛ն նամակ՝ Տիրոջից ուղղված անօրենների՛ն: Ահա Սրանո՛վ, Բարեգու՛թ, Հզո՛ր, աղաչե՛մ Մեծիդ, աներևույթ չար դիմամարտի դեմ՝ պահպանությո՛ւնդ պարգև շնորհիր կրկնակի՛ ավել: Մե՛զ մեկնիր Ձեռքդ՝ լիովին լցված բարբաշխությամբ, մասունքներով Քո բազմաօրինակ նվիրումների՛ օ՛ղբ քաղցրության և անձրևները շահեկանության: Եվ թող պակասե՛ն Քո Հրամանով՝ տապի հետ խառնակ հոգմե՛րն սպանիչ և շնչումները նրանց ցավաբեր, և

թող արձակված հեները կապվե՛ն իրենց չարաչար ողջ խարդախությամբ: Եվ թող Սրանո՛վ դժնյա մատնիչի զինվորներն ընկնե՛ն, հալվե՛ն ու հատնե՛ն, խափանվե՛ն լրիվ, և այս երջանիկ ձայնի օծումով Օրհնված փայտից՝ թող մեռնե՛ն, սատկե՛ն որդեր ու ուտիճ, ամենա՛յն գեռուն սրանց նմանվող, որ մե՛ր մեղքերի պատճառով եղան, ապա գորացած՝ ելա՛ն մեր հանդեպ պատերազմելու: Ո՛վ Ստեղծիչդ ամե՛ն-ամենայն արարածների, Սրանո՛վ մեր մեջ Երանության տունկն արմատացրու, որ մենք Քո Հույսով գտնենք մեզ համար մե՛ծ պաշտպանություն՝ ա՛յս միջնորդությամբ Սաբեկի ծառի, որի ոստերի դիտակներին են կախվել ծաղիկներն հոգի Նորոգող՝ այժմյան փրկության, որ պիտի Քեզ նո՛վ Անմահի՛դ Կյանքով պտղեն, Քրիստո՛ս: Եվ բարեգեկույց ձայնարկությունով Կենաց այս փայտի՛ թող հեռու՛ փախչեն խավարները խոր և ստապատիր, ստորինների խարդավանքները բազմաձեռնանի: Եվ թող Սրանով մերժվե՛ն, չքվե՛ն պտղատու համար մեր հանդաստանից, և արոտների մեր սահմաններից՝ վերքե՛րը վատնիչ և մոլորեցնող հույլե՛րը չարի, Կենդանի Ձեռքի Քո մշակությամբ՝ հեռանա՛ն իսպառ: Եվ թող Սրանով կտրվե՛ն բոլոր կրկնատեղ ու անվայելու՛ւչ պատահարները, որ չա՛րն է հայտնում: Իսկապես թող որ՝ վանվե՛ն Սրանով այն ամենը, որ՝ մերձավորներ են ինքնաստեղծ իրենց դավաճանությա՛մբ՝ տեղ գտած մեր իսկ երկու բնույթում, մեկում՝ օտարի վրիպակ՝ սարքող մտածմունքներով, մյուսում՝ գարշա՛նք գոյություններով մեզ ապականող անմաքուր գեռնո՛ց: Փրկի՛ր, Տէ՛ր Հիսուս, աղաչո՛ւմ եմ Քեզ, Փրկի՛ր, Բարերա՛ր, դեպ ի՛նձ երկարիր Ա՛ջդ ամենագով և օգնությունդ Դարձրու՛ Հենարան՝ Նշանո՛վ այս սուրբ, և Ազատի՛ր ինձ ամենայն տեսակ դիմամարտներից:

Ժ

Թող այս նշանին խառնվի՛-միանա Հրամանը Քո, և Բանիդ խոսքով արդյունաբերող՝ հիմարացածիս սիրտը փոխարկի աղամանդեղե՛ն թանկ արժևորման: Եվ սքանչելի Քո հրաշքների հենարանը այս թող գորությո՛ւնը Քո մխրճեցնի հենց ա՛յն սրտերում, որոնք լքված են և կամ ծորում են տկարությունից, դարձնելով նրանց՝ ամու՛ր և ուղի՛ղ, անասանելի՛, իսկ նրանց, ովքե՛ր՝ անզգա էին՝ փափակացնե՛ս լրիվ, որ զարթնե՛ն արդեն և լինեն

զգա՛ստ՝ Քո աստվածաբան դեպքերի հեղուկացումը, որպես Պողոսի և Մատթեոսի հետ կատարեցիր: Եվ հիշեցրո՛ւ մարդասիրութեամբդ պատվիված այս փայտով՝ Խաչի՛դ երախտին, որով աշխարհի մեջ Ներգործեցիր բանե՛ր, որոնք որ՝ անկարելի՛ է խոսքերով պատմել: Նոր Տապանակդ վե՛ր բարձրացնող հավե՛րժ պանծալի Քո լծակներով, Ապրեցնո՛ղք ինձ, Տէ՛ր, և վտանգները բոլո՛ր պարտքերիս Հեռացրո՛ւ ինձնից և թող որ Կամոք Քո հզորագոր, այս կյանքի ձայնով՝ բացվե՛ն սրտերի լսելիքները համառոտների: Այս մեծ Բարություն Քո ակնարկումով թող ականջները խլերի՛ լսե՛ն: Եվ Սրա Ձեռքով թող լեզուները համարացածների բացվե՛ն լիարյուն, սկսեն խոսել հստակ բառերով: Թող Լուսավորվե՛ն տեսարանները աչքերի այնքան, որ մաքրամաքուր ու անթարթորե՛ն հառվեն դեպի՝ Քեզ: Եվ թող զղջալով դարձի՛ դան բոլո՛ր հափրեցողները, և նրանց կամքը՝ ապաշխարություն մը գտնի կազդուրում: Տէ՛ր, տաճանապաճիս Քո ընձեռնումով արտասուքների՛ անձրևները տուր: Եվ թող դա լինի մեզ լո՛ւր ցնծություն, ձա՛յն ուրախություն, բարբա՛ն բերկրություն, նվա՛գ հանգստյան, նյո՛ւթ երանություն, պատճա՛ն փրկություն, առի՛թ քափություն, մերժո՛ւմ վշտերի, և խեղդումներից լիովի՛ն խզում, ներություններից՝ ընդարձակություն, և խեթումներից՝ համառոտումներ, և հալածումներ՝ հեծեծանքների, թառանջումների՝ թեթևացումներ, ապահովումներ՝ խիստ կարիքներին, կարգավորումներ՝ բոլոր կրքերին, վհատումներին՝ մխիթարություն, ցավերին՝ դարմա՛ն ու բժշկություն, ազատագրո՛ւմ հեղձություններից, անտեսողներին՝ արդեն լինելու համա՛կ ուշադիր:

ԺԱ

Եվ այս Նշանն է կամո՛ւրջ ցանկալի, անշե՛ղ, անխորտակ և վերնաշավի՛ղ, սրբահետքերով Սանդո՛ւխք երկնաչու, որով ելնում ենք դեպի Հորք Քո օրհնաբանելու: Ինձ բարերարող Ահավո՛ր Անուն, Սուրբ Հոգու փրկող առաջնորդությամբ Բերում ես որ Քեզ Միաբանե՛ս ինձ անընդմիջելի Մե՛կ միասնությամբ: Եվ որով ահա, Սո՛ւրբ, Միասնական Տէրությունդ անեղծ, Արարչությունդ՝ կենդանի բոլոր արարածներից և նաև անշո՛ւնչ ստեղծվածներից՝ գոհաբանություն՝ վայելու՛ց ձայնով, Փա՛ռք, Իշխանություն՝ հավիտյա՛նս հավատ: Ամէ՛ն:



ՄԵԿԵՆՈՂԱԿԱՆ ԱՂՈԹՔ  
ՍՐԲԱԼՈՒՅՍ ՅՈՒՂ  
ՄՅՈՒՌՈՆԻ ՄԱՍԻՆ  
ԲԱՆ ԶԳ

Ա

Սո՛ւրբ և ահավոր Բարձրալ Անուն, Հզո՛ր, Անպատո՛ւմ, Անձկություն՝ Փափագ Հարախորժե-

լի, սրբաբերկրով փառք տվողներից միշտ սրբաբանված, որ բնակվում ես Սրբարանիդ մեջ, լի՛ ես անհատնում, ամենագեղուն Քո Իսկ Բարություն մը առատաձե՛ն ու աննվազելի՛, Լույսով՝ աննվաստ, Ծագմամբ՝ գովելի, Հա՛ր երկրպագված Փառավորություն, Անգննելի Քո ահեղություն մանայն Բանն ես ամենայնի մեջ: Ես այս խոսքերի Լույսի դաշնություն մը ուստեղ եմ Քեզ հետ լինել Միաբան, Հզո՛րդ ամենա, այո՛ւ և ամեն, ալլուխա՛ Քեզ, Գովյալ՝ Թագավոր համընդհանուրի, Աստված բոլորի, Գոյի՛ Ստեղծող և Կամարա՛ր Տէր, որ պատճառն եղար ի կյանք կոչելու և Փրկիչն եղար նրանց ամենքի, ում Ստեղծեցիր, Հավիտյա՛ն օրհնյալ, Մշտապաշտելի՛:

Բ

Ուստի մեկնապես արդեն թարգմանված դանձն այս անվաճառ, և Հարստությունն անփոխադրելի, Քրիստոս Հիսուսն՝ երկնավոր Արքան, Ում որ դողահար սպասարկում են ահեղներն անմահ, որ լուսաբերան բոցաշնչություն մը կրկնում են Քեզ հետ Մտքերըդ անշեղ մե՛ծ հոժարություն մը և հաճություն մը՝ գոհություն մը ծունր առջևդ իջնելով, ո՛վ Ստեղծողդ էությունների, Դո՛ւ, որ Տեսնում ես այն ամենը, որ՝ ծածկությունների ներքո են լինում: Դու Կայիր և կա՛ս՝ Միայն բովանդակ, որ չի պակասում և ո՛չ մի բանով, և մեր համայնի կերպարանքն առար, որ Քո լրություն մը լցնես մեզ կյանքով: Հա՛ր բարեբանված, որ ճանաչվում ես անքերներելի ողորմածություն մեզ ի փրկություն, և այդ ամենը՝ հանուն փառքերիդ գովաբանություն, հանուն Քո անճառ բարձրություններից՝ Ահավորիդ մեզ բարերարելու: Սկզբնաձիրքդ Շնորհի Օծման հրաշագարգամ մը իր մեծ խորհրդով, քանզի Լույսը Քո, որ ծանուցվեց մեզ՝ ճառագայթ է վեհ, անհասանելի՛, ծագո՛ւմն անսահման, և արեգակ է անաչառասփյուռ, ա՛ստղ է սահմանված, որ կըրքում է տարրերը երկու: Ծրա՛գ է՝ ոտքերն ուղիղ դնելու և Լո՛ւյս հետևման, որով

խոսքերն են իմաստ ստանում և երևում են իմ տեսությունը ա՛յս ներդաշնությունը: Եվ պարերգությունը հրեշտակների, փրկավայելուչ կնդրուկ խնկելով՝ հասակմտորեն մե՛նք էլ ենք տունում՝ ամենաբաշխող առատ տրություն Ամենիմաստի՛ք անբիժ դավանման Յուդի՛վ այս գվարթ: Քանզի սկզբից սկսած՝ այնտեղ, դրախտավայրում ողորմելի մի տիրակաճությունը սկզբնաստեղծ իմ հայրը կապվեց՝ զրկվելով Քո բարձրագույն փշման սուրբ Շնորհներից և հի՛ն մարդ դարձավ մեղքերին գերմամբ, գրավվեց մահվա՛մբ, և ապա կապվեց ապականությունն՝ անլուծ Հանգույցով, և այդ ամենը ծառից ուտելու պատճառով եղավ, որով գլորվե՛ց կործանումի մեջ, և այդ իր մեղքով նա Լուսիդ հերքմամբ մատնվեց վայրի այս խավարներին, - սակայն Դու, Գթա՛ծ, Ողորմության՝ Տէր, նախօրոքորեն զգուշացրեցիր ստեղծածներդ, և փորձանքը այդ անակնկալ չէր, որ եկավ նրանց, որովհետև որ ակնկալեցին այնպիսի՛ բանի, որով որ նրանք անկարողացան իսկապես տեսնել՝ վերնային Լուսը Անսահմանելուճ գերակայության, և այդ պատճառով Քո Լուսյան հեղեցիք ո՛չ թե մշտափայլ հարակայությանը, անաղոտելի շողարձակ վառմամբ, այլ գիշերային ու ոտնալսիրժ սայթաքումներում մթին ահերի, անկումների՛ դեմ՝ բարձրացնելով ճրա՛գը ձեթի՛ պատրույգի նյութի շարամանյակով, որով որ ձեթը բարձրանալով վեր՛ լո՛ւյս է արձակում, որ օրինակն է անախտ միությունը Քո մեզ խառնվելու՝ մարդասիրորեն հյուսելով այդպես մեզ ու Քեզ իրար՝ Մե՛կ կագմություն մեջ, և որովհետև ծառից ուտելով մենք կանխակորուստ տարագրվեցինք մահվան կործանող ստվերների մեջ՝ մեղքի պարտքերով, ապա և նույն այդ ծառին ազգակցի Չահավոր պտղով, հավատի վառմամբ՝ պիտի ե՛տ դառնանք խնկավեստման մեջ, որ ունենիք՝ մինչ Հանցանքն սկզբյան, ա՛յն ճամփով դառնանք, որով որ Ինքը միաձուլվեցիր մահվան փայտի հետ, և Քեզանով իսկ փայտն այդ օձելով, ապա՝ մեզ ևս միաձուլեցիր մարդացած Աստուղ, այդպես առակի խոսքի համաձայն՝ մեծ խորհրդովդ միավորեցիր մեզ կյանքի Փայտին:

#### Գ

Եվ արդ, ինչպես որ օրը լրիվ չէ առանց գիշերի, ո՛չ էլ տան հարկի տնօրինումը առանց ձեթի հետ կապված կարիքի և խնդիրների, որովհետև որ, իբրև օրինակ, ինչպես ճրագով՝ մեր

մարմնավոր աչքն է ստանում տեսության համար կարիքի չափ լույս, հասարակային և ո՛չ նվիրման և կամ թե ծեսի համար վառվելով, նույնի նման էլ Քո չնչի խառնմամբ, մաքրված արդեն ու սրբագործված շնորհը ընտրության՝ անիմանալի և աներևույթ միաբանում է Հոգիս Անտեսիդ ու պայծառանում՝ Քո Հրաշափառ շողարձակումով: Եվ որովհետև, ինչպես իջնելն է Լուսարանի մեջ սուրբ ալագանի՛ մեր մարմինների լվացման համար, սրբացնելու մեր անձն հավատամքով, նույնի նման է Օծումը Յուդի՛ հույսով պարարված, և Սրանով է Հոգին մեր վրա իջնում գորությունը, որ ընդունում ենք աներկմտելի: Եվ այնպես, ինչպես Տէրունի տված Քո Հրամանի նախավճիռով՝ ախտացածների մեղքերին տված քափությունն է մեզ օրհնաբանելի, իսկ նրանց, ովքեր չէին հավատում, Քո հրաշալի բժշկումներով՝ դարձրիր նրանց Քեզ հավատարմող անդարձ վկաներ, նույնի նման էլ Յուդն այս փրկության Լուսյով կատարյալ՝ հեղած մեզ վրա, մեզ որպես արդեն արտաքին խորան, օծում են այդպես արտաքին մարդուն, իսկ ներքին մարդու ներսն են մուտք գործում աներևույթ ու ծածուկ թափացմամբ, և նրան ծնում վերստի՛ն Կյանքով ու Կենդանությունը:

#### Դ

Երկնի Արարչիդ պատկե՛ր պանծալի՛ այս կենդանարար նյութի զանգվածով, քանզի նրանք, որ Քո պատկեր Յուդից օգուտ ստացան, Ողորմության՝ մըք էր, որով ունեցան շահընծայություն: Եվ Դու Քեզ գովեստ այս սահմանեցիր, թե. «Ես Ողորմա՛ծ Տէր եմ», քանի որ՝ որպես որ Սերն է Աստված անվանը կցորդվում, նույնպես՝ ա՛յս օրհնյալ Յուդով, ըստ տնտեսության՝ մե՛զ են Կցորդվում: Վեհագույն Մեծիդ խորհուրդն է հարմար՝ այս ճարպով եղած դիմակերպություն, որ վերցրած է պարարտությունից ամբողջ երկրի, լինելով թանձր խտացումն հողյուլ գոյականության. և ինչպես օրենքն էր կարգավորել. կենդանու ճարպը որպես ուտելիք չէին գործածում, այնպես ինչպես որ չէին գործածում միան արյունի՛ հետ, այլ ամբողջովի՛ն՝ Արարչիդ էին կարգով ընծայում, նույնի նման էլ այս պարագայում, իբրև Տիրոջից մարդուն մատչելի օրհնյալ Զորություն, այս Յուդն է ահա հաճելի ավանդ՝ մեր Աստծուն՝ Է՛իդ, որ վայելչորեն՝ Քե՛զ համար է լուկ նվիրաբերվում, բացելով իմ մեջ՝ հոգուս հարագատ զուգաճանապարհ՝ Արա-



ըողիցդ Ուխտված ու պահված: Քանի որ է-իդ նվիրաբերված ո՛չ ճեճներումը այրվող ճարպի և ո՛չ էլ շունչը, որ գտնվում է արյան հետ մեկտեղ՝ չեն կարող երբեք իմ հոգու համար օրինակ լինել գվարթուն կյանքի և չեն թափանցում մարմնիս բոլոր անդամների մեջ, այլ մեկ ու միայն՝ Արքայությանդ վերին վիճակի և Տէրունական վեհ բազմականին ձոնված ճաշակ այս նյութն է ջահավոր՝ մշտաբորբոք և անաղոտելի բովանակությամբ՝ Կարո՛ղ այդ անել:

ե

Անդրանիկ որդին չէ՛ր կարող լինել քննողներին դատող դատախազ, եթե այս Յուզի օծմամբ Կնիքը վրան չունենար, ո՛չ էլ քահանան վայրն անկոխելի կարող էր մտնել, եթե չլիներ այս Յուզի օծմամբ արդեն կատարյալ: Հակորը որպես օրինակ քարը փրկության Վեմի, ապագաների եկող խորհրդով՝ ընտրյալ խորանը ա՛յս Յուզով օծեց, որ տպավորիչ նկարագիրն է անճառ բարձունքից դեպի վայր իջնող և տեսանելի հարմար սանդուղքի, որը ինձ դեպի երկինք տանելու նպատակալին ուղեկիցն է՝ ա՛յս Յուզի Կնիքով, և գալիքների՝ հիշատակն է մեզ այդպես ցուցանում: Եվ Ահարոնյան քահանայության պայծառությունն էր՝ հրամաններով Քո Աստծո Մեծիդ՝ օծմամբ ճոխանում, երբ գլխին հեղված Յուզը ծորում էր մորուքի վրա՝ զարմանազան էլ կենդանագրվող պատկերումներով: Ըստ սաղմոսողի՝ օծումն այս նախնայաց փառքերի մասին խրատ առակի՝ մի օրինակ էր, անդրադարձով յո՛ւն, որ շնորհներից սրբության կյանքով մեզ խառնվելու փա՛ռքն էր ցույց տալիս: Թագավորությունը չէր լինի այնքան վե՛հ ու պանծալի, Ստեղծագործիդ պատկերովն ի հայտ, եթե եղջյուրից օրհնության Յուզի օծում չլիներ ձեռնադրվողին՝ նրա գլուխը պճնելով՝ այդպես, բարձրացնելով վե՛ր՝ Քո՛ իսկ Անունով: Ինչո՛ւ մոռանամ նախնի մեծերից անուըր վեհ՛ի՛ Մեծիդ ծառայի՛ն, որ կերպարն ուներ աննկարագրվող Քո՛՝ Ներկայության, Մեղքխեղեկի մասին է խոսքս, որ օրինակն էր ճշմարտիդ Մեծիդ ահավորության՝ Ձիթենյաց լեռան վրա հայտնվելով, ուր հետո էր, որ մարմնացած Աստծուդ ոտքերն հպվեցին, այնտեղ վերնային հրեշտակները նույն տեղի պտղի Յուզով կնքեցին, որտեղ որ չիրմին մեր սկզբնահոր (այսինքն՝ Ադամի), պահպան դրվեց եպիսկոպոսական արքայապատիվ աթո՛ռ ճոխության՝ Քեզինից կարգված, մինչև որ Ինքըդ

լրիվ երեմամբ հայտնվեցիր այստեղ՝ համա՛յն Իսկություն՝ իբրև աղամյան կենսագործության կենսատու Արմա՛տ:

զ

Եվ արդ, քանի որ ողջ շնորհքները Քեզինից են ծագում, գոհաբանությունները մեր բոլորեքյան վայելում են Քեզ, ո՛վ, օրհնաբանյալ Որդի՛դ Սուրբ Աստծո, Դու՛ Ի՛նքդ համարիք աղաչանքներն իմ մյուռոնի Յուզով օծված ու կնքված, որ բարենշմար տպավորություն թողնեն Քո առաջ՝ խնկի պարուրմամբ ու զմուսալի՛ր, և պատճա՛ն լինեն Քեզ փառավորման, իսկ մեղապարտին՝ դառնան այլևս բուժվելո՛ւ առիթ: Իմ աներևույթ վերքերի վրա, Քսի՛ր, Տէ՛ր Հիսուս, ձե՛թն այս Լուսանյութ, և Քո անապակ, փրկույթյուն բերող սիրուդ դիմիով՝ արդեն մահացու խոցերիս վրա ու խարաններին՝ Կաթեցրո՛ւ Յուզն այս օրհնություն բերող, արարչական Քո միաբանությամբ պատսպարելով՝ պատանքների՛ մեջ Քո խնամքների, և հիշատակարանն իմ թարգմանական խոսքերով լեցուն ու մաղթանքներով, որ վայելչական բանարվեստով եմ ներկայացնում Քեզ, Սուրբ Հոգուդ լեցուն թևավորումով՝ թող որ իր կարճը գտնի Քո առաջ: Դավթի՛ վրա էլ, Բարձրյալ՝ իմ Տէր, Հոգուդ Զորույթը ա՛յն օրը խաղաց, երբ նվիրվեց Քեզ՝ ա՛յս իսկ օծումով: Սավուղը դարձավ ա՛յլ մի տեսակ այր, և այնտեղ եղած մարգարեներից ոմանց նմանվեց, երբ որ գագաթին օծա՛ւմ ժամանեց: Թագավորությունն Ասորստանցոց օծմամբ գրավվեց՝ և կցորդույթյուն մատուցվեց արդեն տա՛նն Իսրայելի: Եվ կայսրերից ոմանք, որ եղան նշանավորներ, վե՛հ, երևելի՛, անգամ խուճերից, բարբարոս ազգաց, Յուզն այս երբ նրանց գագաթի վրա Քո կենսացնող ցողով անձրևեց, իբրև մի կարթով՝ ո՛րս արեց նրանց՝ ի ընտանություն հպատակության սուրբ Աստծո Մեծիդ: Եվ Բանը Աստծուդ, երբ Երկնավորիդ պատվասիրութամբ լցված Կյուրոսին հասավ այդ Չայնով, որը օծյալ էր Սրբությանդ Հոգով՝ նրան դարձրեց առավե՛լ մեծ այր: Նույն Չայնը խոսեց Սաղմոսողի հետ և առավե՛լ էր, քան թե միմիայն մարգարեություն, օծյալ անուըր նախահարմարեց և կանոնափակ ընդամիջարկությամբ ավանդեց պատվեր է-իցդ առաքված. «էլ մի՛ մեղանչեք և մեղք գործելով մի՛ մոտեցեք Ինձ»: Չայնն այս լսելի մեծն Եղիա-յին՝ Քո աստվածայինն հրամանելով առաջնորդեց մի առաքելության, որ նշանակն էր ինձ

դուրս հանելու Բաաղի լալրժ պաշտամունքներից, և Հոգու Յուզի Օծումովը էր, որ՝ Քորեբի վրա Չայնդ ներազդեց Հեուին, նաև Ազայելին էլ: Իսկ այս խոսքը, որ վերավկայեց իմաստունը իր հոգեկից գրքում, թե. «Յուզ է թափվում Փեսայիդ անվանն անընդհատորեն», կանխավ գրվեց, որ՝ Հոգին Սուրբ Աստծուզ հավետ պատկերն է և նշանը այն, որ փոքր այս Յուզով՝ Մեծիդ կերպարն է նկարագրում, դարձնում մեզ Քեզ հետ մեկացած՝ հոգի՝ Իր այդ նույնացման ո՛ղջ շնորհները Քեզնի՛ց առնելով:

Է

Եվ էլ ի՞նչ հարկ կա այսքան երկարունչ և պատումների պատմություններով, և կամ հիշելով բացակա մեծաց, մանրամասնորեն գծագրել ու շարակարգելով՝ այս մաղթանքներն իմ բանաստեղծություն դարձրած լեզվով, բերել մատուցել վերն՝ Ահալորիդ: Երբ այդ ամենը Քեզանո՛վ գիտեմ, որ Կենդանարար Տէրն ես ամենքի, Արարիչն երկին և ո՛ղջ երկրի, որ Քո իսկ օծման ժամից սկսած քարոզեցիր մեզ Ավետարան՝ Քո Արքայություն, նախ վկայվելով Հովհաննեսից, թե՛ «Ահա՛ Գառն Աստծո, որ Վերցնում է մեղքերն աշխարհի»: Քանի որ, թեպետ, Քո Օծման պահից Օրհնություն Հոգին Քո մեջ էր արդեն իսկաբար՝ լրամբ և Աստվածության խառնութունն էիր բովանդակապես՝ սակայն առանձին անվամբ է պաշտվում Շնորհի Հոգին Իր խորհուրդներով, և Նա ազդում է սրբերի վրա հրաշափառապես, և ստրկացումը աղամյան մարմնի, որ մեծանում էր ու ահեղանում, Հոգու Շնորհի Քո իսկ Օծումով՝ հավիտյան՝ Կյանքին դարձրիր պատրաստ: Եվ մարդարեական պատգամն Եսայու ժողովարանի առջև բացելով՝ Ի՛նքդ ընթերցեցիր մարդացած Աստծուզ նշող խոսքերն այդ, որ հավատարիմ Քո ծառաներին նույնը ծանուցես, թե որպես կարգն է Ի՛նքդ էլ Օծվեցիր, ըստ այն խոսքի թե. «Տիրոջ Հոգին է ահա Ի՛նձ վրա, որով Օծեց Ի՛նձ», ապա փակելով գիրքը տվեցիր պաշտոնատարին, ապա հայտնեցիր Հոգուն անգիտակ յուրաբանչյուրին, թե որքա՞ն և ո՞ւմ պիտի ամոքես և մխրթարես, և հենց այդտեղ իսկ ցույց տվեցիր մեզ, թե որքանով է հեուու Օծումը մեր իսկ օծումից. Քոնը՝ անասհման, Քոնը՝ ընդարձակ և Մե՛ծ Կնիքով, մերը՝ կաթի՛լ մի և միայն Քեզնո՛վ շնորհագրարդված: Քոնը՝ իսկությամբ Հոր Հետ և Հոգու՛ թարգմանվում է մեկ հավասարություն: Եվ երբ առար մեր կերպն ու

մարմինը՝ Քո Օծյալ կոչման մասին երգեցին փառատրությունը՝ պանծալի սիրով և գովեստներով հրեշտակների՝ երկնքում եղած իրենց դասերով, և այդպես էր, որ՝ արարածներին երկրի երեսին՝ ծանոթացրիր ծննդյանը Քո: Քո Մնունդն երկրում կանխատեսորեն՝ մեզ հայտարարեց նաև մարդարեն՝ Հորդանանի մեջ և նաև Թաբոր մեծ լեռան վրա՝ Հայրենի Չայնիդ գալուստը մեր մեջ կանխանշելով, թե. «Մարդկությունը Նա՛ վկայեց Իր Օծյալի մասին»: Եվ Սաղմոսողն է կանխատեսորեն նույնը վկայում՝ Ձեռնադրվելուդ մասին խոսելով, Հզորիդ Փառքը պատվելով այսպես. «Այդ բանի համար, Աստված, Աստված՝ Քեզ ուրախության Սուրբ Յուզով՝ Օծեց՝ և առավել՝, քան՝ Քո ընկերներին»:

Ը

Մեր երեսների Հոգին Քեզնո՛վ է, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, Օծյալ՝ Քո անվամբ, որով որ մեր մեջ Կենդանություն ու Կյանք ես ներփրչում՝ բարեարություն լուսավոր ազդամբ, ինչպես այդ մասին Քո իսկ երջանիկ իմաստուններից մեկն է վկայում՝ խոստովանելով մարդասիրությանը չա՛փն անչափելի, և ոմն այլ մեկի վկայելով, թե. «Տիրոջ Օծումով բացվում է մի նո՛ր ավետյաց շրջան», և ապա հետո ավելացնելով. «Մեծ մարմիններ ունեցողներից ես անգամ կոչի՛կ չվերցրեցի»: Եվ երգ-երգոցում. «Ես ված Յուզի հետ՝ գինի՛ն է Աստծով մեզ ճանաչեցվում», որպես գովեստն է Փեսայիդ հարսի, որը խորհուրդն է սուրբ եկեղեցու՝ որ սուրբ մյուսուրի առաքինության հետ միաբանված գմուռու ու խունկեր, նշանակն հարսի վարքի մաքրության, նաև ամենայն անուշհոտ փոշով յուղեր խառնված՝ այնկողմնայինից՝ առաջնային է նախորդ բերված: Եվ Դանիելը, երբ որ խոսում է, թե ինչպես եղավ Քո կենսապարգև մահն այս աշխարհում, Քրիստո՛ս Արքա, ամեն բանից վեր, կոչման ձայնից էլ առավելապես անվանագրեց, թե՛ Օծյալն ես Դու, և վկայեց թե. «Վաթխուն և ինը յոթնյակից հետո պիտի սպանվի Օծյալը Աստծո», և անվանեց Քեզ Օծյալ՝ Առաջնորդ: Չաքարիան՝ որդին Բարաքիայի, որն էլ որդին էր Ադդովայի, Յուզի բարեբաշխ բացատրությունը՝ մի աշտանակ է նկարագրում, նրա վրա՝ գունդ, իսկ գնդից ելնող յոթը վառ ճրագ, որ նշանն էր, թե՛ Քո Լրությունը է փրկությունը մեր և այդ նշանով Քո իսկ գերբնական Օծյալությունն էր նախագեկուցում: Եվ ինչպես հնում, երբ որ տաճա-

րի խորանի մեջ էր կենդանու գոհի արյունը ցողվում, որ Տիրոջ Արյան կանխատեսումն էր, որ կրթիվեինք Հասնելով Նորին, և ընծայումը բաղարջի Հացով պահեցողության, և նաշիհները յուղով խառնված, և արջառները յուղակաված, և ձայնումները մեր Տիրոջ անվան, և թռչուններից ոմանց տեսակի թաթավումները ազգակից ճարպով ու նաև արյամբ, այս նույն խորհուրդի գործնական տեսակն էր մեզ նախաշաղիղ. ողջ այս ամենը նախորդ արդեն նշանակված էր ու Հարմարեցված և ողջ Քեզ էին խորհրդանշում՝ Ծնունդը Միածին, որ օրհնաբանված Մե՛ծն Ես մեր Աստծո: Որովհետև որ՝ միմիայն Դո՛ւ Ես Օծյալը Նորոգ և Զարմանալի, Քո՛ իսկ Ինքնությամբ՝ էությունն Համակ, և իսկապես որ՝ ամենայն բան է լրանում Քեզնով՝ անպակասելի՛:

Թ

Սակայն ես ինչո՞ւ բազում անգամներ նշաններ անեմ՝ անհասանելի այս խորհրդի մասին, և չճաշակեմ Քեզ, ո՛վ վե՛հ քաղցրություն: Քեզ ճաշակելով միայն կիմացվի, թե Յուզն այս որքա՛ն մեծ արժեք ունի, և տխրությունը, որ ծագեց ծառից պտղի ճաշակմամբ ու ամենքին էլ գցեց պարտքի տակ՝ բժշկություն է գտնում ա՛յս Յուզնով: Ըստ Սաղմոսողի՝ զվարթացնում է այս Յուզը մարդուն. իր պարարտությունը, սրանով լցված՝ մենք մոռանո՞ւմ ենք ուտելիքը այն, որ մեզ մա՛հ բերեց, և այս օծությունը արդեն մոխրացած տեսությունները մեր թշվառացած՝ փոխակերպվում են վե՛հ պայծառության և ուրախությունը հավիտենական, և փրկվելով սուրբ անուտով Քո, այլևս արդեն մենք անվանվեցինք Քո Հո՛ր գորություն և Սուրբ Հոգո՛ւ մեջ: Եվ մարգարեի Հոգևորական ըզձանքները և տե՛նչը բաղձանքի՝ ի՞նչ արդյունքներով մենք կիմանալինք, որի ծերություն մասին առակը՝ ձե՛թ է մի պարարտ, և կամ թե Յուզով գլխի օծումը վերամբարձում է մարդուն ա՛յն չափի, որ Հին ու դժբան խարդախությունը՝ սգի՛ սաստկությունը, և մահվան քանդող կործանումները՝ կենաց այս դեղի պատասպարության օժանդակությունը՝ փոխվում են դեպի կենսագործություն, արդյոք մի՞թե կա մեզ լուսավորող այդ սուրբ ճրագին շնորհակալություն Հայտնելու Համար արժանի մի չափ, երբ իմ մեղքերի և անհուսություն մեզի մեջ, նաև՝ կուսպաշտության խավարումներում՝ Քո իսկ միությունը կերպակցում Ես ինձ, ո՛վ է՛մ մանուկ, և կամ այլ բան չէ, որպես «սփոփանք

զվարթարարող օրհնության նշան» մեզ աստվածաբան մարգարեն Հայտնում, ոմանց վայելուչ լուրն ապետելով. «Մրուրից արդեն Հասակված Յուզով պիտ օձվեն նրանք», և կամ իմաստունն Հարսի անունից օրիորդներին է այս խոսքով դիմում. «Ինձ Հաստատեցե՛ք ազնիվ յուղերով և խնձորներով ծածկեք մարմինն իմ ու զարդարեցեք, ձե՛ր գիրկն առեք ինձ՝ պարտեզների մեջ ձիթենիներին», և այս ընտրված նյութով, որով մենք լցվում ենք Հոգով՝ տեսնո՞ւմ ենք արդեն, թե որքա՛ն բարձր է Անիմանալիղ և որքա՛ն գովված: Եվ արդ, Քե՛զ միայն, ի՛մ Խնամակալ, պատճառդ Բարու՝ ողջ նրանց Համար, որ ստեղծվեցին, Քե՛զ եմ բարձրացնում ձեռքերըս ահա, և բազուկներն իմ վե՛ր տարածելով՝ երիկամներիս ողջ գործածկցությունը, սրտիս հեծությունը, և ձայնարկությունը՝ լեզվիս, շրթերիս, - աղերսո՞ւմ եմ, որ՝ Քո ողորմությամբ իմ ձայնը լսես՝ խնդրվածքներիս պաղատանքը Քեզ կարդալուս ժամին: Եվ ես այս Յուզի լի պարզեցնելով շնորհագարդված՝ գոհաբանություն Քեզ վերընծայեմ, Հո՛ր, Ահավո՛ր, Բարձրա՛յլ, Անքնին՝ և Համբուրելի՛ անփակ փափագմամբ, որ ամեն ժամ Ես՝ անդադար-Հավե՛րժ երգածայնությունը օրհնվում այս խոսքով. «Սո՛ւրբ, Սո՛ւրբ և միշտ Սո՛ւրբ»: Եվ ինձ, որ իսպա՛ռ շեղված եմ Հուսնից, բարերարությունը ընձեռիք և տուր՝ Հո՛ւյս քաղցրության, ո՛չ թե միմիայն մասունք ունենամ Լույսի մատուցման, որ Քեզ Հանդիպման Համար դարձին ինձ արժանավոր, այլ թող՝ ընդլայնվե՛ն պարզեցնելը իմ մեջ՝ իրենց ծածկված նրբություններով, հավելյալ՝ բարի՛ Քո խորհուրդներով, որ գոհությանս՝ աղե՛րսս էլ խառնեմ՝ Դավթին միաբան այս խոսքն ասելով. «Ողորմությունը՛ մենք ընդունեցինք՝ օրհնաբա՛ր Աստված, ծածո՛ւկ-գաղտնիում անտես բաները՝ մեզ Հայտնի արիք Քո՛ իմաստությունը»:

Ժ

Արդ, մեծություն Քեզ առատաձեռն ու աննվազելի, ո՛վ Ամենակալ, և ամենալի շտապողը, որ՝ Գիծություն գործես, և մշտահոժար բժշկությունը Հասցնես նրանց՝ Քո օծյալներին, որովհետև որ ըստ այս ընտանի Հրաշքեր գործող օրհնության նյութիդ՝ արդեն այս Յուզով միացա՛ծ Ես Դու, միախառնվա՛ծ մերձավորներիդ՝ դյուրությունը նրանց արագ գտնելու, որով ի Հա՛յտ են կենդանագրվում՝ սքանչելիքները բարձր ու ահավոր: Որովհետև որ՝ երկինքն իր

բոլոր բարձրութիւններով, երկիրն ամենայն լայնութիւններով և անդունդները իրենց ներքնային խորութիւններով, անեզրութիւնները բոլոր ծովերի, սրանք ամենքն իսկ միաբանութեամբ ի գորու չէին կոչուան այդ տանել, այլ գիջում էին՝ Մեծից վերցված այս փոքրի առաջ: Փո՛քր այս գոյի մեջ տեղավորեցիր ճշմարտութեանդ գորութիւնը, որ՝ անգայթակղելի՛ իր բուն էութեամբ մեր իսկ փրկութեան համար դրեցիր, որովհետև որ իր նորոգութեամբ ինձ երևալով այլ էութիւնից, Հոգիդ չժվա՛ր կողմնակի աչքին երկմիտ կամ անգո՞ այդպես իսկ արդեն վերավորելով, քան բժշկելով՝ մտքերի բերած կարծիքն անխորհուրդ: Նույն բանի համար Սուրբ Մարմինը Քո, հավաստորեն, ցորենի հացով արտահայտեցիր, ո՛վ օրհնաբանվող Որդիդ Սուրբ Աստուծո, և Մատուցեցիր որպէս իսկութիւն և ո՛չ օրինակ, և կողիցդ իջնող կայակի փոխան՝ Մատուցեցիր մեզ խաղողի՛ արյուն, և մեր հոգևոր ծննդյան համար արգանդ դարձրի՛ր առատութիւնը հոսող ջրերի, նույնպէս և Հոգին Անմահիդ փշման սրա, սո՛ւրբ Յուզի միջնորդութեամբ ու արդյունքի համար տվեցիր մարդուն՝ կյանքի՛ երկունքով, և այս երկունքը կերպարանքով էր ընդառաջ եկել և փոխարկում չէ՛ր հեթանոսութեան, և նույնն էլ ինչի փայտը Քեզանո՞վ, Քո՛ ինչեղութեամբ, որ չի՛ երկրորդվում, այլ՝ նա նստում է երկրի ամբողջ խավարի վրա՝ նմանութեամբ Քո, որ մեզ Մագեցիր որպէս կենդանի՛ Լուսավորութիւն: Որովհետև որ՝ այս կերպարանքն է Հոգու Շնորհի, որ անպակաս է Անհասիդ օրհնյալ լրիվութիւնից, որով հայտնվելով՝ աշխարհը Քեզնով Լուսավորեցիր: Որ չլինի թե՛ տնանկը մնա խիստ կարիքի մեջ, իսկ ունեւորը՝ բարձրամարտի, այնպէս, ինչպէս որ՝ մեր շնչած օդն է հավասար բաշխվում երկրածիններին՝ որպէս մանանան, նույնպէս ա՛յս Յուզը, որ փոքրներին բաժին է հասնում առավել՛ս, քան՝ մեծամեծներին:

### ԺԱ

Այս նյութը ունի խորին խորհրդի տեսավորութիւն և իր բնութեամբ այնկողմնայինից հրաշապէս է մեկնվում-թարգմանվում, որ չլինի թե՛ երկմիտ մեկն ինչ-որ շուտափութութեամբ նրա վիճակը փոփոխի, դարձնի այլևս անհաստատ, և ո՛չ էլ ինչ մի վերաբերմունքից մարդուց հեռանա, որովհետև նա ո՛չ օճառով է մինչ վերջ վերանում, ո՛չ էլ դուրս մղվում՝ երբ ողոր-

վում է ընդդիմանացող ուրիշ մի նյութից: Որովհետև որ, ինչպէս որ գուշնն է անփոփոխելի մարմնին էութիւն, որ իր գոյութեամբ՝ մաքրում է՝ և ո՛չ թե ապականում, նույն այդպիսին է մեկ հարմարութեամբ այնկողմնայինից գորութիւն առնող Յուզն այս, որ իր մեջ յուրախինների վերկնային հատկութիւններն է լրիվ ներառում և իր գուգութեամբ միաբանվում մեզ: Ինքդ այդ իրային գոյին միաբան նաև լծակցող, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, գորութիւնը այդ կցորդում ես մեզ. աչքերի առջև մեր տեսողութեան և մեր մտքերի ըզճանքի դիմաց, որպէս իրային գոյն այս բերելով՝ կերպավորեցիր. գոյ, որ պատրաստվեց՝ երկրի պտղից ճնշելու կերպով հյութը մզելու՝ և հրաշագործ ու գարմանալի բնութեով այդժամ՝ հավելումներով մատակարար ես մեզ՝ քոնիներին: Եվ մանավանդ որ նույն հոլովութիւն՝ Դու ո՛չ թե միայն միախառնեցիր խմբակցութիւնից զանազան ծաղկանց՝ ըստ «Հին և ստվեր» յուզի տեսակի, որ պատրաստվում էր բազմաբուրավետ այլևայլութեամբ, այլ այս յո՛ւզը՝ Դու հրամայեցիր օժիվելու համար, սակայն փոխելով այլ եղանակով՝ Դու Ի՛նքդ Հոգով միախառնեցիր մաքրութեանը նույն վերնալույս ձեթի: Եվ ահա վեհ է ու անճառելի համեղութիւնը Քո անուշութեան և չի գտնվի ո՛չ մի օրինակ, որ համեմատվի, եթե ո՛չ միայն ծաղիկը դաշտի և շուշանն հովտի, և նարդոսն ընտիր, եղեգնախունկը՝ խառնված հավիեին և հարմարեցված քրքուրմի հոտով՝ փթթած ողկուլով և ազնիվ գինով: Եվ այսպէս արդեն ո՛չ միայն Յուզ էր, այլ պատշաճորեն այս միութեան մեջ օրինակեցիր Քո փառավորյալ Անունն Անքնին, որովհետև որ ամենայն գոյի Դու Ի՛նքդ ես լցնում և ամենեկին կարիքը չունես և ո՛չ մի բանի: Ուստի այս Յուզը անշփոթ է և՛ մաքուր նվիրում, և՛ հեռու է նա հակառակողի բռնադատութեան դրսևորումից և չի բաժանվում մի ինչ որ մեկի կամքից ելնելով, այլ բաշխվում է, պարարվում մեր մեջ՝ Քո հավանութեամբ և աստվածային սիրո մոտեցմամբ, և հանուն մեզ է հուշ՝ վայելչական նմանութիւնը, որ օրինակվեց, որով մեր ներսում ի հայտ արարեց՝ Լո՛ւյսը բարութեան, հո՛ւրը ջեռուցիչ, տա՛պը սուրբ սիրո, առանց մաս իր մեջ՝ անգթութեան շունչ և կամ օտարուն սառնացրտութիւն Ինքն ունենալու: Եվ այս նյութեղեն զանգվածի մեջ, ձեթի կաթելով՝ մաքո՛ւր մտքեր են հայտնվում մեր մեջ և իմաստութիւն, որովհետև որ՝ այս Յուզով Աստված Միանում է մեզ:

Սողոմոնի հետ, որ օծված այր էր, Աստծուն որդեգիր, հարսի բերանով ինքս էլ եմ երգում բարեբանությունը գոհաբանություն՝ իղձիս մտքերով համբուրելով Քո Հո՛տը Յուզերի, որ ավելին է, քան թե խնկերի բուրարձակումի հոտն անուշուրթյան, թե անգամ նրանք միագումարվեն: Եվ իբրև Կյանքի Խոսքը, որ ի՛նչպիսիք հավիտենությունն ունեցող է՛ից, և ըստ հոգեից այն վերիմաստուն Բանի համաձայն, որ աստվածաբան Ավետարանի միջոցով եղավ, թե. «Քո Յուզերի բուլբի հետքով է ընթացքները մեր, և երեսներս ենք կյանքի շրջերով ահա լվացել, և գլուխներս ենք օծել երկնային Յուզովդ անախտ՝ այդպես ենք ահա Քո առջև եղնում՝ մե՛ծ ուրախությունը և զվարթերեն՝ ո՛չ թե տխրությունը»:

### ԺԲ

Յուզն այս խնկելի, նաև պաշտելի և երանելի, որով ո՛չ միայն կնքվում, օծվում և օրհնվում է սենյակն ուղեղիս, և կամ թե գլխիս դագաթի լցմամբ՝ ո՛չ միայն ինչ-որ նպաստ մատուցում մագերիս հերին, այլ նրանով իսկ նշան է դրվում, տյառնագրվում է Տէրունի Խաչով: Եվ սույն այս Յուզով զարմանահրաշ օրհնության Լույս է իջնում կնքվող հրեաներին, և՛ հնդիկներին, բարբարոսներին, սկյուլթացիներին, և՛ հելեններին, և՛ դժբաբարո դոժերին անգամ, նաև խուժերին, և՛ զարհուրատես շանգլուխներին սոսկավիթխարի, նրանց մեջ եղած տերերին բոլոր և՛ ազատներին, և՛ ծառայածին ստրուկներին, սրանք ամենքն էլ՝ քրիստոնյա են կնքվում Քո՛ Անվամբ և ընծայվում են Ձեռքը Սուրբ Հոգուդ և Հո՛րըդ Երկնավոր, ում վկայում է հարազատ Որդին: Եվ արվեստների տեսությունները բազմօրինակ են Սրա՛ միջոցով, որ նախ և առաջ հարմարեցված են նրանք նյութերին, ապա Սրանո՛վ Ջորությունն Հոգու: Քանզի ինչպես որ դեռ օծում չառած փայտն ամանն է դյուրին կտրվում, դառնում անօգուտ և էլ չի՛ պատվվում, նույնպես և մարդը, այս Յուզով եթե օծում չունենա, նա հեշտություն է ընկնում խորտակմամբ, այդպես Քեզանից մեկուսանալով՝ չի՛ Լուսավորվում: Յուզն այս՝ Մա՛տն է Քո, Տէ՛ր Հիսուս, որով հրաշալիքներ են զարմանագրում, որովհետև որ իր կազմությունը նա իբր անգձելի, իր շրջարկությամբ՝ նա կարծրություն է պաշտպանում դրսի հարձակումներից, ներագրումներից խրթին և օտար, մինչև հասցնի մարդուն մաքրության, և ով Սրանով թաթախված լինի՛ չի՛

ներկվում Արյամբ, ո՛չ էլ այլապիսի՝ տխրատեսակ այլ երևույթներից: Քանի որ Յուզն այս ներ է թափանցում ու խառնրվում է մեր հոգիներին ու ներս է մտնում մեր մարմինների թանձրություններից, ինչպես անեծքն է ձեթի առակով սաղմոսում ասում. թե՛ չար-նե՛նդ մարդուն՝ ձեթի նման է ներթափանցելով անեծքը հասնում ու բաշխվում նրա ողջ ոսկորներին, որչա՛փ առավել Հոգին այս Լույսի փրկարար ճարպով իր ներթափանցմամբ աներևութորեն՝ մեր ներքին մարդուն, ներքին տեսակին՝ Կենսագործո՛ւմ է, Դարձնո՛ւմ ողջանդամ, այդպես ազդելով ու ներբուժելով մեր շնչափողի հազազի խորքից՝ մինչև ծայրերն ու ավարտը բոլոր մեր անդամների, և այդպիսով նա ամբողջ մարմնում՝ մահվան արկածի հիշատակներն է ընկղմամբ մաքրո՛ւմ, որովհետև որ՝ Քո Կենդանացող Ջորությունները ահավորապես մե՛ծ են և անճա՛ն, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, որ խառնվելով այս Յուզին՝ նրա մեջ են բնակվում:

### ԺԳ

Եվ բարեսեսիլ այս օծումը, որ՝ բռնամարտիկ և մերկամրցանակ ըմբիշներին է նաև քաջ հայտնի՝ օծման շնորհիվ հակառակորդի ձեռքից սահելու, հայտնի է նաև ճգնավորական կերպարանքի մեջ՝ որպես զորավոր, օրհնյա՛լ մի հնար, որով դառնում ենք մենք անբուժելի՛ ներհակ ձեռքերին, և օրենքով է Յուզն այս պաշտամունք, հզո՛ր, ահարկո՛ւ նա միջոց է սուրբ՝ ընդդեմ դիվաց և բոլո՛ր պիտերի: Եվ Եզեկիենն է նույն բանի մասին, երբ իմանալի փարավոնին է իր ակնարկն անում, իր հեգնախառն առակի խոսքով նաև ողբերով շարահարմարած, այսպես ասում, թե. «Դեռ հազիվ եղած, դու պատրաստվեցիր պատերազմելու՝ Աստրծո օձյալ քերովբեի դեմ, և այդ վայրի մեջ էլ կառուցեցին հրեղենների արձանախմբեր»:

Իսկ օրհնաբանված ահավորություն, ու ամեն վայր է Հասնում Ձեռքը Քո, և ամեն բանից Վե՛ր են ու Անճառ՝ գերազանցելով քննությունները ամեն տեսակի, որ ինկվում են Հարակայության Ավետարանով, որպես նորածին Օծումդ առնելով Դավթի քաղաքում: Եվ քահանայապետը այս հարցրեց, թե. «Դո՞ւ են Օձյալը՝ Օրհնյալի Որդին», իսկ երանելի Պետրոսը լցված իր դավանությամբ, արդեն հաստատեց. «Կենդանի Աստծո Միածին Որդին, Օձյալը՝ նրա՛ այդ Դո՛ւ են միայն», իսկ ապահավատ քննողները

նույնն հարցրեցին. «Եթե Օծյալը Դու ես, ասա՛ մեզ համարձակորեն, և ըստ կանոնի կհավատանք Քեզ, կընդունենք այդժամ Օծյալ Ուսուցչի, Տէ՛րն ամենայնի»: Եվ Հերովդեսը ավելի առաջ անունն Օծյալիդ հայտնապես հարցրեց. «Որտե՞ղ պիտ Մնվի»: Իսկ գրվածքներում նախօրոք էին այդ մասին ասել. «Օծյալն Աստուծո և Տէրը Դավթի, անսկիզբ Որդին և նաև Որդին ժամանակի մեջ»: Քանի որ այսպես մենք ընդունեցինք այս ամենը, որ՝ վայելուչ կերպով թարգմանվեցին մեզ, որ մեզ ընծայեց իրագործունը այս գազաթնային խորհրդի կոչման, որ և վիճակն էր քրիստոնյաների նախապատրաստման:

### ԺԴ

Եվ ահավոր է Յուզն Իր գորուծյամբ և միանգամայն նաև սրբուծյուն, խնկավորուծյուն՝ սոսկալի Անվամբ օծվելու համար, մինչ երկրայիններին և ո՛չ մեկին էլ չի տրված երբեք համարձակվելու Աստված անվանվել, այլ՝ աստվածային՝ նույնպես ո՛չ մեկին մենք չենք անվանում Քրիստոս անվամբ, այլ՝ քրիստոնյա՛: Եվ նախկին Ուխտի ամենամեծին՝ Մկրտչին, ով որ ջրերով Հոգին հրավիրեց վար, երբ հարցրեցին. «Դո՛ւ ես Օծյալը», պատասխանեց տվեց. «Ես չե՛մ, - ասաց նա, - այլ առաքվա՛ծ եմ Նրա առջևից»: Եվ որպես Խոսքն է մեզ ազդարարում Ավետարանիչ Մարկոսի գրչով, այս Յուզն ունեին առաքյալները, երբ շրջում էին, և իբրև Աստծո Ձեռքիդ հարազատ՝ նույն կերպ վարվեցին իրենց գործերում, որովհետև որ՝ Յուզով օծելով՝ Քո՛ Անվամբ էին բժշկում մարդկանց: Եվ այնպես, որպես խավարը Լուսից, և որպես ցավը առողջությունից, որպես գիշերը օրը ցերեկից և մահը՝ կյանքից, այսպես, սույն իրից տիրապարզեող՝ մերժվում են ամեն չար երևույթներ, և խափանվում են կամ բնաջնջվում: Որովհետև որ, որպես կան զազիր ճանճերն անպիտան և կամ գեռունները փոքրամարմին, սարդերը, նաև ականջմտուկներ, Յուզն այս որպես թե մահվան դեղ է մի նրանց սատակման, դրանք, ամե՛նքն էլ սպառվո՛ւմ են և թվով պակասում՝ այս Յուզի հպմամբ, սույնի նման էլ օծման միջոցով՝ ամենապարզ և Յուզով գորացած՝ վանվում են տարբեր չարապիտ բաներ՝ ջրվո՛ւմ մուրհակներ ու պատառվո՛ւմ են վճիռներ մահվան: Եվ առանց օծման օժանդակության դեռ կատարյալ չէ՛ մեր մկրտության ավագանը սուրբ: Հիշենք՝ մահաբեր ավագանիներից խոցեր ստացած առաջին մար-

դուն՝ դեղն այս փրկության համար մատուցվեց մեր Աստծո կողմից: Նաև Հակոբի և Իսրայելի արդեն անճարակ վերքերի համար՝ Սո՛ւյնն հիշատակվեց պատվական միջոց: Եվ այս Յուզին էր փափագում ինքը՝ Դավիթ մարգարեն, երբ գրում է, թե. «Ինչպես պտղալից ձիթենին, պիտի Տէր Աստծո հույսով ինքն հարակայի», և այդ իսկ խոսքով կանխատեսում էր, որ պիտի լքվեր թրիատուծյունը, որ մկրտությամբ մտնենք չնորհի ողորմության մեջ: Սակայն ինչքան էլ այս մասին ճանաչե՛մ կարծել տալով, թե կարող եմ հասնել՝ ամե՛ն-ամեն ինչ այս Յուզի մասին ի հայտ բերելու, երբ որ օրենքի ձեռնարկման կարգով վերնայիններն էլ ի գորու չեղան մասնակի չափից ավելին ասել, էլ ո՛ւր մնաց թե՛ իսկուծյունը ողջ ինքս մատուցեմ:

### ԺԵ

Փա՛ռք Քեզ հավիտյան, անմա՛հ Թագավոր՝ այս իմ երգաձայն օրհնաբանությամբ, ամենայն բանում հավիտյան՝ Քեզ Փա՛ռք, որ Ստեղծեցիր՝ մատուցելով ինձ: Բարեխնամո՛ղ և Երկայնամիտ, Հարո՛ւստ և Առա՛տ, Ամենահաղթո՛ղ և Գթությամբ լի՛, երբ դեռ այն կողմում՝ Հին ուխտի ժամին հայրերի առաջ գծագրեցիր օրինակումը, որ պիտի լիներ, մինչև ճշմարիտ Իսկուծյամբ եկար, լրացրեցիր խոստումները Քո: Քո իսկ Բնությամբ Դու Լո՛ւյս ես համակ և մշտապայծա՛ռ ու ջե՛րմ Արեգակ, աշակերտներիդ դասին էլ արդեն Լո՛ւյս անվանեցիր, որոնց շողշողուն ճառագայթներով արարածներին ամբողջ երկրի լցրիր երջանիկ Քո շնորհներով: Եվ մեկի կողմից Քո ոտքերի՛ն էլ Դու ընդունեցիր յուզն անուշության, որպես օրինակ ընդունելուծյան ա՛յն մաղթանքների, որ Քե՛զ են ուղղված. ըստ Հովհաննեսի՝ պոռնիկի ձեռքով յուզն ընդունելով՝ որպես նշանակ մեր հանդեպ տածած գթառատ սիրո: Եվ մշտափափագ Անսահմանելիդ բույրն այս հոտոտեց, մինչդեռ Հին ուխտի անփոփոխ կարգն ու օրենքն հարակա օրհնաբանելի՛ Քո հրամանի կենաց պատվերով՝ քարոզում եղավ համայն աշխարհին՝ Յուզի քիչ չափի գործագրության հարկավորությամբ և զարմանք ազդող մեծ հրաշքներով լսողաց համար և եկողներին հուսադրելով: «Դուք արդեն Սրբից օծուծյուն ունեք», - ասաց երջանիկն առաքյալներից, մեկնելով խորհուրդը, որ մեզ է հեղված անպակասելի Կենդանարարիդ բովանդակությամբ: Ուրեմն հավիտյան ի՛նձ է հարմարված և

Հանգուճատիպ մասնավորական նմանությունն իմ կենդանի Լուսիսի և Հոգու՛ր Սրբուն՛ կաթիլներով այս Յուզի օրհնություն, որ Վերնայինիդ բարեբասությունն է անսպառելի, որ սրակվեց մեզ, ինչպես ասում է. «Սա հենց ա՛յն Լուսյն է, որ՝ կար դեռ նախքան արարածներիդ թիվը կստեղծվեր, և սա այն Լուսյն է, որ արարչությունն է պատկերակից, Որով գլխավոր մթուճությունները բոլոր մեղքերի՛ դո՛ւրս Ես Հալածում»:- Ապա և Հուրը, որովհետև որ՝ արարածների տարրերն ամենայն՝ Հավասարապես ունեն գուճություն, ըստ հականի բնույթով իրենց բաշխության կշռով, ծածո՛ւկ և Հայտնի, թե՛ լույթյան մեջ և թե՛ ճանաչված: Եվ չի քննվում Նա Հակառակից, ո՛չ էլ երբևէ իր հոժար մտքով բաղձում բորբոքվել ինքնառատության իր լիությունից: Դարձյալ՝ Օծումն է, որի միջոցով և արքայորեն մեզ միանալով՝ դարձնում Ես մեզ Քեզնով որդեգիր, որով որ արդեն Հարագատորեն վերցնում Ես մեզ՝ Քո ազգակցության ողորմությունը անեղծանելի՛ նկարակերպում մեր հոգիներում, որով որ պիտի փայլե՛նք արդեն մենք Հանդերձյալ փառքում՝ մեր հոգիները մաքրած ու սրբած արկածախնդիր խաբե բաներից, որոնք ծագում են դարձ բանասարկուհի ներգործությունից, և արդեն նորոգ մեր փոփոխությունը, լիորեն լեցուն Սրբությանդ Հոգով և ձյմարտությունը՝ երկրպագում ենք Հո՛րդ Երկնավոր՝ Քեզ Հետ բեկեղած Հավատքի Լույսում Ամենապարզե:

### ԺԶ

ԱՀա, արդարև, Հավետաշնորհ Իսկուճությունը այս՝ Յո՛ւզն այս խնկելի և լուսապարար, որ Վերնականիդ սիրտ ակնհայտ տեսությունն է մեզ, որի Համար, որ Պողոսն իսկ պատշաճ գոհաբանություն իր ճառում այսպես իր խոսքը Հայտնեց. «Աստված՝ Օծեց մեզ ձեզ Հետ միասին՝ ի Քրիստոս Հիսուս, և Նա մեզ կնքեց առհավատչյալով Սրբության Հոգու, որ՝ մեր սրտերի՛ ներսում Հաստատեց»:- Դարձյալ ասում է. «Մի՛ տրամեցրեք Սուրբ Հոգուն ձեր մեջ, որով կնքվեցիք օրը փրկության»:- Պատկառելի է և անվանելի օծությունը այս իր հորջորջությունը՝ առավել Նոր-ում, քան թե Հնի մեջ: Որովհետև որ՝ Դավթյան սաղմոսում Տիրականորեն տնօրինելուդ, Չարչարանքներիդ խորհուրդն այսպես է վերասահմանվում. «Եվ Հավաքվեցին, եկան, կուտվեցին իշխանավորները ժողովուրդների՛ Տիրոջ և

Նրա Օծյալին ընդդեմ»:- Մարգարեությունն այս սպավորվում է մեծապես մեր մեջ, երբ Հրեախումբը չար մոլեգություն՝ Տիրոջը Հանդեպ Հանդգնությունով՝ Քո չըջնվող Արյանն Հավիտյան պարտապան դարձավ: «Ո՛չ ոք չի կարող ձեռքն իր նենգորեն երկարել Օծյալ Տիրոջ դեմ, ապա՝ քափուլություն գտնել»:- Քանզի թեպետև ի՛ր ազգակցից Սափուզն սպանվեց, օտար ազգերի նախատինքներն ու ամոթանքները իսպառ դուրս չեկան՝, մինչև որ Աստո՛ւղ Արյան Հաղորդամբ գտան վերջաբան: Դրավական է հիշատակելի ապագա եկող աղոթանվեր ժառանգորդներին աղերսությունն այս, որ սաղմոսով է մատուցանվել մեզ. «Տէ՛ր, Հանուն Դավթի՛ Քո սիրելի՛ երես մի՛ թեքիր Դու Քո Օծյալից», նույն խոսքը դարձյալ. «Տէ՛ր, նայիր և տես՝ երեսն Օծյալիդ, և Օծյալին Քո Ի՛նքդ ողորմիր»:-

### ԺԷ

Լուսակիր Հյուճն այս պարզև տրվեց Քո պաշտելի Ձեռքով, Հիսու՛ս Քրիստոս, որովհետև որ՝ մարգարեն ինքը իր արքայական բարձր ճոխություն մեջ գտնվելով և կանգնելով Քո առջևն աղոթքի, այս պատգամն առավ. «ԱՀա գտա՛ իմ Դավիթ ծառային և իմ սուրբ Յուզով օծեցի նրան»:- Ուստի ինձ Համար կրթություն է, երբ՝ Քո հիշատակն եմ Համբուրում Լուսի ա՛յդ իսկ Օծությունը, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, և Քեզ ճանաչում մշտնջենավոր ու Հա՛ր անփոփոխ, և Դո՛ւ Ես միայն թագավորների Թագավորը լոկ, Օծյա՛լ Թագավորը ամենայնի և փառաբանվա՛ծ ու երկրպագվա՛ծ երեկ և այսօր: Քանզի, ինչպես որ պատրույգը արդեն թաթավված ճարպով չի էլ նկատվում գիշեր ժամանակ, մինչև կրակով չբոցավառվի, նույնի նման էլ Լուսի օծումն այս՝ Հանդերձյալներից Չահավորվելով՝ մե՛ր մեջ է հեղվում: Եվ պատկերավոր մեկնությունը այս բացահայտվեց մեզ, որ նախնիներից բարենշանով այստեղ է Հասել Հարմարվելով ինձ՝ Հրաշապայծա՛ն գունբանազներով:

### ԺԸ

Արդ, այս ամենի Պատճա՛ն վեհագույն, որ ապրեցնում Ես մյուս ամենքին, որ աստվածանա՛ն Քո արարչությունը, դառնալով այդպես Քե՛զ Հարագատներ, և առանց որի. «քրիստոնյա եմ» անվամբ չի գրվում ո՛չ ոք աշխարհում, կամ Նագովրեցուց արդեն անվանվում, ո՛չ հիշատակվում որդին Հուճայի և կամ խրախույս ստանում

անվամբ Հակոբի Աստծո, եթե ո՛չ միայն հյուսիս-կանոնական օրհնությունն ձեռքի, որում խառնված միավորում է Երրորդությանը հետ՝ ճառագայթների սուրբ շնորհներով, շքեղությունը մեր դեմքերի վրա, նկարագրվելով մեր երեսների, բարեձևությունը պատահմունքների, Լուսավորումը մեր իսկ աչքերի, տյառնագրությունը բերեբերի գրված, վայելչությունը այտերի, նաև գեղեցկությունը կերպարանքների, պահպանարանը մեր շրթունքների, բարեհանգիճը կրոնավորի, վարքերն հարմարող շաղկապ հավաքման, գորությունն անձանց. ուժեղությունը դիմեցումների, և հուսույթների՝ խափանիչն է այս, հմայանքների ոտայնը քանդող, նահանջեցնող ձեռնածուներ, խայտառակի՛չը կախարհողներ, բացահայտող ողջ աղանդների, բռնախոյա՛նը խավար դեկերի. ցավեր փարատող, կնքվածներին նվիրագործող, երեխաների տեսչանքը մաքուր, արտաքինների համար անքննի՛ն, նաև հիացումն հեթանոսների, և նախանձարկուն անհավատների, և գաղտնիքների մերկացնողն է Նա, ետնկածների հարգանքը վերից, փա՛ռքն ստրուկների, պճնումը կանանց, և զարգացումն է Նա տղաների, հրճվանքը ծերի, Ձեռնագործը նվիրյալների, զգուշությունը մաքրասիրտների, թագավորների պատճի շքեղ և վե՛հ՝ ճոխությունը արքաների, կայսրերի համար՝ թագավորելու նախադրություն: Ինչպես օրինակ մի ինչ որ աման կնքված է եթե, նշանակում է, ներսն իր լցված է մեծարժեքություն, նույնպես Շնորհի բարձրությունն է, որ՝ մեր մեջ լցվելով՝ Յուզի միջոցով ծածկվում ենք մենք և կնքվում արդեն Քո սուրբ Անունով, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, մեր մեջ եղածի և մեր տեսակի վայելչությունը այդ Օծյալությամբ ճանաչեցնելով: Իսկ այս Յուզը, որ՝ Հոգով լի լցված այրերն իմաստուն կոչում են Մյուռոն, գործածում էին դեռ Եգիպտոսից, թեպետ իրային կերպարանք ունի, բայց ահավոր է պատկերը Նրա Իր խորհուրդի մեջ:

### Կարգ սրբալույս Յուզ Մյուռոնի

ԺԹ

Քանզի Մյուռոնը այս օրհնաբանյալ, որը մարգարեն նախատեսորեն գրեթե նույնն էր՝ որպես աչքի Լույս աղերսում-խնդրում, որն էլ իր հերթին բառի մեկնություն, և Հոմերոսի բացատրությամբ՝ թարգմանվում է ինձ ու ճանաչ-

վում՝ Մայր, այսինքն թե Նա Ինքն Իրենն՝ և մեր բնությունը ձգտում զորապես, կայունացնում մեզ, չքնաղ փոփոխմամբ լուծվում ջրի մեջ սուրբ ավագանի Լուսավորության, և խառնվելով կաթին դառնում է արդեն որպես դեղ, և այդ նույն դեղով կարգավորում է վայրագ բնույթի ցնորությունն իմ առաջացնելով աղբյուրի նման մշտահոսություն: Իսկ Մառնամուտը, որ նույն Մյուռոնն է՝ այլ բառով ասած, այսինքն՝ մթին, որ է խավարչուտ՝ և՛ ծածկված, և՛ անտեսանելի: Որ այս կոչմանը դիմառությունն է՝ մի օտարացեղ, քանզի արդարև իրեղեն անունն իր նշանակությամբ՝ նույն իմաստն ունի, նաև ասենք, որ՝ անքննելի է այս խորությունն հավետ, և առավել, քան ամենայն տեսակ սրբությունների սուրբը ամենա: Որովհետև որ, եթե նա ջրի օրինակումով պիտ չի լվանում և ո՛չ էլ հացի բնություն, սիրտն է հաստատում մարդու, այլ ինձ հարմարված, իր մասունքային ազդող գորությունը՝ նորոգում է ինձ՝ Տնօրինաբար տյառնագրելով, բայց անհասություն Վերնային է նա և անքննելի՛ է Անունը նրա: Քանզի ինչպես որ Սուրբ Աստծո մասին հայտնի է, թե Նա՝ միշտ է գտնվում անմատույց Լույսում և Անսահման է փառավորություն, հանպատրաստիցը ծածկվում ու փակվում անզննելի խավարի ձեռքով, այդպես արտաքուստ թաքուն մնալով՝ իմաստներից մեր ձեռքի գործերի, նույնի նման էլ այս Լուսավորող Յուզի ծորումին՝ ճարտասաններից ոմանք «Մուսլի» անունն են դրել՝ դրական մտքով, որովհետև որ երկրածիններից ծածկված է Նա. ո՛չ ոք գորու չէ լման ճանաչել բնույթն այս Յուզի: Աստվածությունից երկուսն իրենց մեջ Յուզն այս Տիրապես ունեն լիառատ, որովհետև որ կոչումն այս Յուզի՛ն այն է, որ Նրա օծումն ստացած յուրաքանչյուր ոք՝ նմանակերպով բարձրյալն Աստծուն, որով այս Յուզի հարգն է մեծանում առավելապես՝ ամենաբուրյան ազնիվ ինկերով, ինչպես Մովսեսն է այդ մասին ասում. «Տէ՛րն Աստված Ինքը՝ Հո՛ւր է սպառող», ըստ Հովհաննեսի. «Լո՛ւյս ամբողջությամբ», իսկ Եսային էլ այս Յուզի մասին նույնն է ակնարկում. «Տէ՛ր Աստված, որ Լո՛ւյսն է Իսրայելի՛ պիտի վերածվի այրող կրակի»:

Ի

Դարձյալ այլ խոսքով է նկարագրվում նույն պատկերը այս հայտնություն Յուզի, որովհետև որ չմոռանամ իմ նողկությունն անձի, որ



Քո Գթությամբ քաղցրացավ ինձ՝ նորից խոսքերի օրհնյալ գովեստով: Որովհետև որ թեպետև «Մեռա»-ն մեկնաբանվում է որպես դառնություն, նշանակը այն բացատրություն, որ հարմարվում է իմ տաժանելի ու չար կրքերի նկարագրին, որից Մյուռոնն է ստուգաբանվում, ըստ մեզ՝ ա՛յս խոսքով, թե՛ ազգակից է մեռելության հետ: Քանզի այս Յուդով, երբ որ Օծվում է դասը հոգևոր, այդժամ նրանից՝ հատվո՛ւմ է, խզվո՛ւմ՝ սնոտիասեր, մահակերպարան, տաղտկազգրական հեշտությունները հակառակորդի, ինչպես որ օդի խոնավությունն է մեղկալի դարձնում ձայնը քնարի, և կամ, ինչպես որ մորթու մշակմամբ, ուժգնաբարբա՛ռ, խրոխտահնչյո՛ւն թմբուկը, ասենք, թե թրժվում է իմ գիջության պես, ապա և ձայնն է անվայել դառնում իր թուլլ դաշնությամբ՝ ցույց տալով այդպես կորստյան ընկած օրինակումը մեր իսկ գոյություն, - բայց այս Սուրբ Յուդով, դարձյա՛լ, վերստի՛ն մենք կապվում ենք Քո ինչի ինքնորդին, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, մկրտվելով Քո Կենդանի՛ Մահվամբ, որով որ արդեն հաղորդ ենք դառնում անվայե՛ծա՛ն Կյանքիդ՝ Քե՛զ իսկ, այսինքն՝ Աստծո՛ւդ համայնի, խրախուսվելով մնալու Քեզնից իսպա՛ռ անբաժան:

### ԻԱ

Այս Յուդն Անվամբ Քո, որ դրոշված է չորեք կողմերով և հաստատվել է ինչիդ Նշանին Հավասարադաս, Տէ՛ր Հիսուս Քրիստոս, Նա ընձեռված է Քո Նշանի հետ զուգափառորեն առանձին շնորհ, Արյանդ պարեցնող նո՛ւյն կերպարն ունի, նո՛ւյն անվանելի փառքով պսակված՝ և այդպիսով, Տէ՛ր, Քո մեծությունն է առավելացնում: Ինչպե՛ս անվանվում է նաև «Յուդափայտ՝ օրհնության համար», ըստ մարգարեի կանխաձայնության, որովհետև որ, ինչպե՛ս անտանների հասարակ բույսից կազմված լինելով գորավորվո՛ւմ է և ուղղվո՛ւմ արդեն՝ Յուդի օծություն, ու արկածներից չարի խակություն այդպես՝ մաքրվո՛ւմ, և Ստեղծողիդ հանդեպ ունեցած կարծիքներն օտար՝ կյանքի կենդանի հասուն ներագրի իր ներգործություն՝ վանո՛ւմ մի կողմի: Եվ մեր մտքերի պատուհանները միշտ բաց է պահում ու թափանցելի՝ Ահավորիդ մեծ Անունի առաջ, ահեղ գորություն՝ խոհակաշնություն համեստ դառնալուն տյառնագրելով՝ դեպի օթևանը ըզձակերտ հոգևոր, որ անազդելի դառնամ այլևս խարդախող չարի խավար

հողմերին ու պատրանքներին: Եվ այս իսկ Լույսով արդեն զբաղված, երբ երեկոյան պաշտոնների ժամին, երբ ճրագներն են երկնքում վառվում, որ օրինակն են Շնորհիդ փայլի մեր մեջ լինելու, մենք ամփոփվում ենք նվագների մեջ գոհաբանության: Եվ գոհաբանման հիշատակումով, տունկերի նման՝ Քո բարիների փրկություններն են այս Յուդով ծագում, և ծաղկավետ են դառնում տունկերն այդ՝ պտուղներ տալով: Ի ծառայություն Մեծիդ Գալստյան վերջին գիշերվա ընթրիքի համար նախապատրաստման՝ ահա այս Յուդի ճրագի լույսն ենք մշտավառ պահում:

### ԻԲ

Եվ դարձյալ, ասենք, որ ըստ գրքերի գունարկություն՝ չորս անգամ քսան շարակարգի մեջ, որից սկսած՝ մեր Այբուբենի վերաթվարկմամբ հասնում ենք մինչև քսաներկուսի արժեքի կարգին, այստեղ իսկ արդեն թարգմանվում է և խորհուրդը խորին. «Հեշտալի ճաշակ, որին դյուրություն դառնում են հաղորդ, որ առաքվել է մեզ պատրաստելու ամենակազմող Իր հարմարություն»: Որովհետև որ՝ գրի արժեքի ութսուներորդից հետևից եկող քսան և երկուերորդի բերած արժեքով է, որ չորս հարյուր թիվն է՝ փոխաբերորեն, ստուգաբանված վիճակով, երբ որ քննության առնենք և «ձյութ» անունը «նյութ» անվամբ գրենք, այդժամ կըստանանք և կերպարանքը արդյունք-խմորի, որ ինքն իրենով ողջ զանգվածն է ամբողջ գորություն, որ սակավ մաս չէ իրավիճակի հղովումի մեջ, այլ իրենը նա վերագտնելով՝ վերցնում է իրեն, և մասն է այդպես վերագրաճնում նա իր մայր ամբողջին, ինչպես այդ մասին Ավետարանի առակն է ասում. «Նրանք բոլորը, ովքեր Իրենն են, նրանց է միայն գտնում-աճեցնում»:

### ԻԳ

Յուդն այս հեգություն օրինակ է միշտ համբարձման մասին, օրինակ է Նա և խոնարհություն, և նման է Նա մեկին մատուցված փափուկ պատառի, հարթակչիռ և բարեհարմարուն խոսքի կերպարանք, համայնից առած մի հեղուկ է Նա, հոսանուտ է և՛ ներքև ծորող նյութ, գերափառ է և վերաշրջական, և հրաշափառ խորհրդին պատկեր, չի նմանվում ո՛չ գիշուր, ո՛չ ջրի, որոնք լցվում են մորթե ամանում և թացացնելով նրան մեղկացնում, սակայն երբ

յուզն է նրանց փոխարեն ամանը լցվում, այդ-  
ժամ մնում է նա պատշաճորեն: Եվ ճիշտ այդ-  
պիսի անհավասարության ըմբռնումով է տար-  
բերվում մեզնից առավելությունը Բարի լինե-  
լուք, Կենդանի Աստծո Միածին Որդի: Եվ  
սրբանվեր այս օծումը մենք մեր ճակատին ենք  
գրում Քո Արյամբ, և տպավորվում, կնքվում  
է և մեր շունչը բնություն՝ Քո՛ Իսկ Սուրբ Հոգով  
ու Կենդանություն՝ Հավատացյալ մեր մտքե-  
րում դրված Քո խորհուրդներով, որոնցով ահա  
հավիտյաններն են հայտնի դառնում մեզ և նոր-  
ոգելով փայլեցնում այդպես, որ տարածվում է՝  
բազմաճանհ իր ծայրարձակությունամբ, հոգնա-  
տեսիլ և զարմանահարչ ընդարձակությունամբ, և  
պտտուն Յուզի ընծայված Լույս է ի փառս  
նրանց, ովքեր պիտի գան ապագաներո՛ւմ: Այս  
ճարպն Հոգևոր վերանաշույլ ու երջանիկ ազդ-  
մամբ՝ նկարագրվում է իմ երեսներին և ջահա-  
վորվում Քո իսկ Նշանով:

### Ի Գ

Եվ քանզի որպես անհասանելի՝ չի՛ էլ  
քննվում զորությունն այս մեծ՝ մտքիս թուխքի  
իր թեթևաթև արագ սլացմամբ, և ինքն անդին  
է ուշադրության մեր կարծիքներից, որոնք ի-  
մասսոի անհունությունը հետևման պահին՝ փա-  
խու՛ստ են տալիս՝ իսպա՛ռ փակվելով, որով-  
հետև որ լայն պայմանների սովորությունների մեջ  
գտնվելով՝ մեր մի՛տքն է տկար՝ առավելա-  
գույնս առաջ ընթանալ: Եվ այսպես Յուզն այս՝  
ո՛չ օրինակվեց իր կցորդումով, ո՛չ էլ նմանվեց  
զուգամասնություն, ո՛չ էլ սահմանվեց ձևա-  
կերպության բանաձևումով, ո՛չ էլ ընկերոջ չա-  
փով կշռվեց, սակայն լինելով Քո Աստվածային  
Խաչի՛դ նշանին հավասարադաս, Արյա՛մբ Կե-  
ցուցչի՛դ՝ այլևս արդեն գերազանց դարձավ  
հոգևորություն: Եվ արդ, Խաչովդ ու Յուզիդ  
զորությունամբ, Օրհնի՛ր մեզ, ո՛վ Տէր: Եվ թող  
սրանցով Ան՛ունդ ահավոր և լուսապայծառ և  
երկնավոր զարմանահարչ՝ լինի գովեստի ու  
փառքերի մեջ և մաքրակրոն բուրվառո՛ով  
մարդկանց միշտ խնկվի՛ Նա, Սո՛ւրբ, Սո՛ւրբ  
անքնին, անպատո՛ւմ Բարձրյալ, անհո՛ւն ո-  
ղորմած և վերերգյալ՝ Տէր, որ ձշմարի՛տ ես,  
Բարերա՛ր Սիրով, արա՛ փրկություն այս իսկ  
մյուռոտով, բե՛ր քավություններ և պարգևի՛ր  
մեզ բշխություններ, և շնորհներով՝ զգեստա-  
վորի՛ր, առատաձեռնի՛ր մեզ երանությունն ան-  
ժամանակյա:

Թող որ այս ձեթի երկնաանձրև լուսե  
օծումով՝ դառնամ անարա՛տ: Եվ թող Յուզի-  
լով բանավորությունամբ Պարգևատուի՛դ՝ չգրա-  
վե՛ն ինձ այլևս արդեն ախտը մեղքերի՛ իրենց  
տխրաբեր հետևանքներով և նրանց համար  
անհնա՛ր դառնա կրկին շաղախել կերպա-  
րանքն հոգևու: Եվ նրանք, ովքեր Օծվեն Սրա-  
նո՛վ, թող լինի որպես զարդարանքն Հարսի՛  
գեղարվեստական պարճանքո՛վ պճնված,  
սուրբ վայելչությունամբ և երջանկորեն՝ հոգի  
զարդարող: Եվ թող որ լինի՛ Հուրն այս Լուսա-  
փա՛ռ և աստվածածիր՝ Յուզի ընտրությունամբ  
մերձեցողներին կրկնակիտո՛վ՝ նրանց բորբո-  
քող, ըստ Հին ու Նորի, և բարեփափազ Ջեր-  
մությունամբ իր լի՛ հոգի մշակող Իր պարգևու-  
մո՛վ, որով ամենքի՛ համար է պատրաստ առա-  
վելապես հարակցելու՝ կարծր ու անասան  
Քո՛ Վեմի՛դ վրա, Որին որ նրանք պիտի հաս-  
տատվեն աներկմտելի՛ կատարելությունամբ: Եվ  
այս թող լինի վերնամրցանակ խորհրդանշան,  
որով պարգև է այս Յուզի վառմամբ: Եվ այս  
սուրբ Յուզով օրհնված հոգին՝ ո՛չ հորդ ջրերի  
մեջ է խեղդելվում, և ո՛չ այրվում կրակների  
մեջ, ո՛չ սառցակալում խիստ ցրտությունից,  
ո՛չ վնասակար հողմերից հանգչում, ո՛չ աղ-  
տեղվում է ուրվականների պղծություններից,  
և ո՛չ էլ մատնում պահուստն իր չարին, ո՛չ իր  
կենսական մթերումներն է հիմարամտամբ  
անձից դուրս հանում, ո՛չ Քո թեևերի օգնութ-  
յունների պատսպարանը կորցնում երբեք, և  
ո՛չ մեր ներսում էականացված Օծյալու՛թյու-  
նից՝ անմաքուր վարքով մերկանում կրկին: Այլ  
դառնում է այդ հոգին Քեզ համար՝ Սրանո՛վ  
որպես կրակ ճառագող, և պարարտացա՛ծ ար-  
դեն Սրանով, և Լուսավորվա՛ծ արդեն Սրանով,  
և Արդարացվա՛ծ արդեն Սրանով, ազատագր-  
վա՛ծ, պսակվա՛ծ արդեն՝ որպես թագավո՛ր: Եվ  
Քե՛զ, Միակի՛դ, ամենքի՛ համար Օծյալի՛դ  
Միակ՝ ամենքի՛ կողմից օրհնության երգե՛ր  
բարձրանան երկինք, այլու՛րիանե՛ր ամենայն  
լեզվով, ձայների հնչո՛ւմ և գովեստների՛ հաղ-  
թականությունն, բարեբանությունն՝ մեր  
չթթունքներից՝ սրբաբանություն սաղմոսերգե-  
րով՝ ուղղված Հորդդ հետ՝ Սրբությունն Հոգուդ,  
հավիտյա՛նս: Ամէ՛ն:

Ա՛յն՝ ձեռնարկն էր իմ սրբություն համար,  
և այս՝ արդեն իմ սրբությունների  
սրբության մասին՝ արձանագրո՛ւմ



**Հծծծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ՂԴ**

Ա

Հասվիտենական Աստված Բարերար և Ամենակալ, Ստեղծիչ Լույսի և Հորինողը մի՞ին գիշերի, մահվան ներսում կյանք և Լո՛ւյս՝ խավարում, ակնկալողի համար՝ Հույսի՛ պլան, և Հեռատես՝ միտք՝ տարակուսածին, որ ամենարվեստ իմաստությունը Քո՛ այգի՛ ես փոխում ստվերը մահվան: Աննվա՛ց ծագում, Միակ Արեգակ, որ մայր չի՛ մտնում, քանզի անգոր է փառքը Տէրութեան խավար գիշերը երբեք ծածկել, որովհետև Քեզ ծնրադրելով երկրպագում են արարածներդ ամեն-ամենայն՝ երկնավորներն ու երկրավորները, գտնվողները սանդարամետում: Եվ կապվածների հծծծանքները այդ Դո՛ւ ես լսում Հայացքըդ ուղղած ա՛յն աղոթքներին, որ խոնարհներն են կարդում Քո առաջ: Աստված իմ, Աստված, և Թագավոր իմ, կյանքն իմ և չո՛ւյան իմ, միակ Ապավեն, Վստահություն իմ՝ Հիսո՛ւս Քրիստոս՝ Աստվածը ամենքի, Սո՛ւրբը՝ սրբերի հոգում բնակվող, Մխիթարություն վշտացածներին և Քավարանըդ մեղսագործներին, որ ամենայն բան ավելի առաջ գիտես, քան դրանք ապագայի մեջ նոր պիտի լինեն: Առաքի՛ր Պահող Աջը գորավոր, Փրկի՛ր գիշերվա երկյուղի միջից, նաև՝ չար դեկից, որ հիշատակը Քո սուրբ Անունի համբուրեմ՝ հավետ շուրթերով՝ հոգուս, չնչո՛վս ըղձություն, և այդպես հավե՛րժ պահպանված ապրեմ նրա՛նց հետ մեկտեղ, ովքեր ո՛ղջ սրտով աղոթում են Քեզ:

Բ

Եվ թող գրոշմից Խաչիդ Նշանի, որ Նորոգեցի՛ր Քո աստվածային Արյամբ ներկելով, և Նո՛ւյն Ենորհով մեզ մկրտեցի՛ր որդեգրությունը՝ Փառքիդ պատկերը վերստեղծելով ու նկարելով նաև մե՛զ վրա, այդ պարզեանքով աստվածադրվածք՝ թող որ ամաչի՛ սատանան խաբող. մեքենայական որոգայթները նրա՛ քանդվեն, հեռացվեն իսպառ, պարտվի՛ նրա զորքը մարտնչող, պակասեն նրա զենքերը սուրսայր, մեզը մերժվի՛, փարատվի՛ արդեն խավարը ճնշող, իսկ մա-

ռախուղը մեկնի՛ մեկընդմիջտ, Բազուկը հովանի՛ թող որ կանգնի մեզ, և Աջը՝ Կնքի՛, որովհետև որ Գթառա՛տ ես Դու Քո Ողորմությունը, և ծառաների վրա Քո բոլոր՝ Անո՛ւնը է կոչված: Եվ Քեզ՝ Քո Հո՛ր հետ, Հոգուդ Սրբությունը՝ Փա՛նք, Իշխանություն հավիտյանս հավետ: Ամէ՛ն:



**Հծծծանքների մի նոր հավելված  
նույն իսկ հսկողից, նույն  
աղերսներով և մաղթանքների  
խոսքով միջնորդված**

**ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՍՏՈՒՆ  
ԲԱՆ ՂԵ**

Ա

Արեգա՛կ արդար, Օրհնյա՛լ ճառագայթ, Լույսի՛ կերպարան, Անձկություն փափազ, Բարձրյա՛լ անքննին, Անպատճա՛ր գորեղ, Բարո՛ւ բերկրություն, Տեսություն չույսի, Գույա՛լ երկնավոր, Փառքերի՛ արքա, Քրիստո՛ս Արարիչ, կյանք խոստովանված: Բազմասխալ է ձայնը եղկելու՛ վրիպումներով, խոսքերով թերի, ձայնս Ի՛նքը լցրու, Կատարելացրո՛ւ, Բա՛նդ ամենագոր, որ այդպես միայն, Բարձրյալ Քո Հորն հաճելի կերպով իմ աղերսները նրան մատուցես, որովհետև որ իմ նմանության կերպարանքն առար և հանուն կյանքիս մտար երկրի անեծքների մեջ, Ի՛նքը՞՝ ամենքին կյանքի օրհնություն՝ վերնոց ու ներքնոց բարեխնամող Տեսո՛ւնը համայնի: Որովհետև երբ Աստվածը ու Տէրը՞դ ողջ տիեզերքի՛ հանուն իմ կյանքի հանձն առար մեռնել, այժմ տեսնելով ինձ վտանգավոր կրքերից գերված՝ որչա՛փ առավել պիտի հաճենաս կարեկից լինել՝ պարտավորիս հետ միջտ աղոթելով՝ Հո՛րդ համապատիվ, ինձ ազգակցորեն տեղ տալու Քո մեջ:

Բ

Եվ հանուն Արյանդ թանկ ու պատվական, որ մատուցում ես անընդհատորեն՝ Առաքչիդ կամքին որպես հաճություն, պիտի հեռացվեն վտանգները ողջ՝ արդեն մեղք գործած դատապարտյալիս, պարտքս ի՛նձ թողնվի և ապաքինվի ամոթանքս հիվանդ, պատկառանքներս մոռացվեն, չքվեն, դատակնիքը ինձ բարեգործի՛, որդունքը սատկեն, լալը վերանա՛ և ատամներիս կճրտումները՝ հանդարտվեն արդեն, ող-

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

բերս՝ սպառվեն, արտասուքս՝ հատնի՛, սուգս՝ մերժվի՛, խավարս՝ հալածվի՛, վատնվի՛ և հուրը սաստկության, և տանջանքները իմ բազմօրինակ հերքվեն՝ լրիվ:

Գ.

Որ՝ ամենքին՝ Ես Դու կյանքի՛ պարզև, թող Կամեցողիդ Գիծությունները ինձ չըջափակեն, թող Լո՛ւյսդ ծագի և արագանա՛ փրկությունը իմ, օգնությունդ համարի, այցելությունդ ժամանի՛ փութով, ողորմությանդ ցողն իջնի կանուխ, և առաջանա՛ լիառատորեն, Այցիդ ծարաված անդաստանը իմ հագեցնի՛ լրիվ, ինձ, որ թշվառված իմ ոսկորներով մահվան վիճերն եմ այսքան խորն ընկել: Ի՛նձ էլ ծաղկեցնես, դարձնես պտղաբեր՝ և լույսի օրվա տարվող խնամքդ Կենդանագործես իմ վրա էլ, Տե՛ր: Բաժակդ Երկնավոր, որ Կենարարիդ Արյամբ է լեցուն, որ անծախորեն պատարագվո՛ւմ է մշտնջենապես որպես կենդանի, գործուն հիշատակ փրկության համար ա՛յն հոգիների, որ՝ ննջեցյալ են: Իմ հոգին էլ է մահվան մեջ ննջում մարմնիս մեղքերով, բայց շնորհով Քո, Գիթառատ Աստված, Քե՛զ է զորանում, Նորոգվում Քեզնո՛վ, մեղքերից զատվում և լցվում անմահ Քո Կենդանությամբ՝ Քո արդարների հարություն ժամին դարձած մասնակից՝ Հորո՛վդ Օրհնված: Նրա հետ Փա՛ռք Քեզ, և Քո Սուրբ Հոգուդ բարեբանություն՝ վայելչական վե՛հ գոհությունք հանդերձ այժմ և հավիտյան հավիտենից: Ամէ՛ն:



Ժամանակների հյուսվածքն ընթացքի առաջ շարժման մեջ, լրահաղորդ, նշույլագեղ, արփիաճաճանջ Լույսը կրողը, օրվա կշռույթը Սահմանողը և մղկտություններ Փարատողը, աչքեր պարարող Աչքն Արեգակի և Արուսյակը ստեղծաբանված՝ հաշվո՛ւմ, հորվո՛ւմ և կուտակո՛ւմ է՝ տարիների շարժը դարերի չափով, և շնչասպառ ընթացքը նրանց՝ կենդանանորոգ Իր ուղեկցությամբ տանում է դեպի հավիտենություն:

Հաբեթական մեր տոհմի տոմարով ինչպե՛ս հոբելյանի լրացման ավարտին և տասնյակի պսակի մեջ մտնելու սկզբում, այն ժամանակ, երբ Հոռոմի մեծ և հաղթող կայսր Վասիլը հյուսիսարևելքից մեր երկիրը մտավ, այդ արշավանքից երեք տարի անց, երբ որ կայսրը սահմաններն սկսեց անխտորեն ընդարձակել և նոր սահմանների վրա հիմնել ստվերակարկառ, ժայռեղեն կարծր կոթողներ ու արձաններ և ձեռքն երկարեց, ինչպես անխելի պարանի լարերով կապելու երկրագնդի երկրներն իրար՝ վերև-ներքևով, աջով և ձախով, բոլոր կողմերով սեփականելու աշխարհում եղած այլ երկրների նորանոր խմբեր՝ վերցնելու իր իշխանություն տակ: Արդ, նույն այդ անդորր ժամանակի մեջ, երբ եկեղեցու թշնամիները ոտնատակ եղան, իմ աշխատությունք հիմնադրեցի, կառուցեցի, կարգավորեցի, կուտակեցի, արձանագրեցի, դիզեցի, մեկը մյուսի վրա բարդեցի, կանգնեցի, ցուցադրեցի, հաստատելով այս հրաշակերտությունը՝ բազմաստեղյան դրվագների մեջ՝ մեկ իսկ գոյությունք ընդհանրացնելով, որ արգասավոր լինի առավել:

Ես՝ Գրիգորս, կրոնավոր մի քահանա, հետինս բանահյուսների մեջ և կրտսերս վարժապետներից, գործակցությունք իմ ընտրյալ եղբոր, որ Հովհաննես է կոչվում՝ Նարեկա վանքի մեծափառ և բարձրապատիվ ուխտի վանական, երկուսով՝ մեկ բանական մարմին դառած, միասին կենցաղակցելով, ո՛չ միայն հարազատներ էինք, այլ միաշունչ, միակրոն, համապատիվ, նո՛ւյն բանն հավանող, մեր չորս աչքերը մեկ աչքի նման՝ նո՛ւյն սուրբ խորհրդի շավիղին հառած:

Արդ, այս սեղանից, որ պատրաստեցինք մինչ ի հոգնություն և լցրեցինք ախորժ ու համեղ ուտելիքներով, ճաշակողներիցդ, հայցում ենք, որ մեր անունները և՛ս հիշատակեք ձեր ուղիղ աղոթքում և պատվական, սո՛ւրբ խնդրվածքներում սիրո՛վ և բարի մտքերով, որոնցով էլ դուք գրված լինեք՝ Վերին դպրություն կյանքի Սատյանում: Ամէ՛ն:

# «ՆՈՐ-ԴԱՐ»

ԵՐԵՎԱՆԻ  
ԳՐՈՂՆԵՐԻ  
ՄԻՈՒԹՅԱՆ  
ԳՐԱԿԱՆ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ՀԱՆԴԵՍ

**N 1-2  
2015**

“NOR-DAR”

A LITERARY  
QUARTERLY

“НОР-ДАР”

ЖУРНАЛ  
СОЮЗА  
ПИСАТЕЛЕЙ  
ЕРЕВАНА

**ԵՐԵՎԱՆ**

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է  
ՊԵՏԱԿԱՆ  
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հեռ. (091) 509-501  
(099) 002-573

E-mail: abgar.apinyan@mail.ru

Դասիչ՝ 430

Չափսը՝ А 4

«Նոր-Դար», 2015թ.

*Խմբագրական խորհրդի նախագահ՝*

ԱԲԳԱՐ ԱՓԻՆՅԱՆ

*Խմբագրական խորհուրդ՝*

ՈԱԶՄԻԿ ԴԱՎՈՅԱՆ, ՀՐԱԶՅԱ ՍԱՐՈՒԽՄԱՆ, ՀՐԱԶՅԱ

ԹԱՄՐԱԶՅԱՆ, ԳՈՒՐԳԵՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ, ՅՈՒՐԻ

ԴԱՎԹՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, ԿԱՐԵՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՅՈՒՐԻ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ,

ՄԱՐՏԻՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔՈԶՈՐՅԱՆ,

ՄԱՐՏԻՆ ԳԻԼԱԿՅԱՆ,

ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ,

ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Այս թարգմանության մասին մեր նշանավոր բանաստեղծներից Ռազմիկ Դավոյանը մասնավորապես գրում է. «Թարգմանությունը ոգեկոչված է բնագրին առավելագույնս հարազատ մնալու միտումով՝ թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ»: Իսկ գրականագետ Աբգար Ափինյանը ավելացնում. «Բանաստեղծ, հոգևորական / Գրիգոր Նարեկացին/ մեզ սովորեցրեց խոնարհությունը Աստծո հետ խոսելու: Ակնհայտ է, որ եկել էր Նարեկացու /Մատյանին/ կրկին անդրադառնալու ժամանակը»:

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի պաշտոնական

Գերկայացուցիչներ՝ ԱԼԲԵՐՏ ՆՈՒՐԻԶԱՆՅԱՆ

(ԲԵԼԳԻԱ) ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԱՆ (ՏՈՐՈՆՏՈ)

ԹԱՄՐԱԶ ՀՈՎՍԵՓՅԱՆ (ՄԻԴԵՅ)

ՊԵՊՈ ՍԻՍՈՆՅԱՆ (ԲԵՅՐՈՒԹ) ԱՐԱ

ՍԻՍՈՆՅԱՆ (ԻՍՊԱՆԻԱ) ՎԱՐԴԳԵՍ

ԽԱՆՈՅԱՆ (ՋԵՐՍՈՒԿ)



Казанскѣ Пресвѣдѣ